

ՉԱԿԱՎԱԾ ԵՎ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Եղբայրական խորունկ սիրով
այս գիրքը նվիրում եմ
Արցախյան պատերազմի մասնակից
մերօրյա բոլոր-բոլոր Գարիբալդիականներին

Նախանձեցեք նրանց, ովքեր կրում են Հայրենիքն իրենց ոտքերի տակ՝ որպես պայթյունից ցնցվող հող, որպես ձյուն, որպես ջրափոս, որպես զառիթափ, որպես ողբերգական պատահականությամբ տրորված ական:

Նախանձեցեք նրանց, ովքեր կրում են Հայրենիքն իրենց ոտքերի մեջ՝ որպես տնքացող մկան, որպես փամփուշտի բացած անցք, որպես ուռած երակ, ովքեր կրում են Հայրենիքն իրենց մաշկի տակ ու մսերի մեջ՝ որպես արկերի ու նռնակների բեկորներ:

Նախանձեցեք նրանց, ովքեր կրում են Հայրենիքն իրենց կրծքի վրա՝ որպես քրքրված փամփշտակալ, որպես մեռած ընկերների ու անմեռ դրոշների առաջ պատվի առնող ինքնաձիգ:

Նախանձեցեք նրանց, ովքեր կրում են Հայրենիքն իրենց ափերի մեջ՝ որպես հրասայլերի ու զրահամեքենաների լծակներ, որպես պատգարակների բռնակներ, որպես պատանդ վերցվող գաղութարարների և մարտի դաշտում անձնատուր լինող թշնամիների վզակոթեր:

Նախանձեցեք նրանց, ովքեր դռան աննշան ճռռոցից վեր են թռչում, որովհետև Հայրենիքը կրում են քրքրված ջղերի մեջ ու կոնտուզիա ստացած ուղեղներում՝ որպես չընդհատվող դրժժժժժժ...

Նախանձեցեք նրանց, ովքեր կրում են Հայրենիքն իրենց ուսերի վրա՝ որպես ալյուրի պարկ, որպես խղճի լուծ, որպես «ստինգեր», որպես ընկերոջ դագաղ...

Արմեն ԴԱՎԹՅԱՆ

9(47.925)
Դ-41

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՉՍԿՍՎԱԾ ԵՎ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկրորդ՝ լրացված հրատարակություն

5025

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

Տպագրվել է «Ֆյունիկ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)
Դ 418

Խմբագիր՝ Վանուհի Եղիշյան

Դևրիկյան, Վարդան
Դ 418 ՉՍԿՍՎԱԾ ԵՎ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Երկրորդ՝ լրաց. հրատ./ Վ. Դևրիկյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2014.— 432 էջ:

Գրքի լրացված այս վերահրատարակությունում ներկայացված են հեղինակի՝ Արցախյան պատերազմի տարիներին գրված հոդվածները, որոնք բաժանվում են երկու խմբի: Առաջին՝ տեղի ունեցած մարտական գործողությունների և ժամանակի տարբեր իրադարձությունների նկարագրություններ՝ գրված ականատեսի և մասնակցի կողմից: Երկրորդ՝ տեսական-վերլուծական բնույթի հոդվածներ՝ գրված Արցախի ներքին կյանքի քաջիմացությամբ և ժամանակի ռազմաքաղաքական իրավիճակի հաշվառմամբ, շնորհիվ որի ժամանակի կենդանի կյանքի արձագանքը ներկայացնելով՝ այս գիրքը մեծապես կարևորվում է ընթացած պատերազմի տարբեր դրվագների և պատերազմական այդ տարիների կյանքի և կենցաղի ուսումնասիրման տեսանկյունից:

Գիրքը կառուցվածքային առումով բաժանվում է երեք շերտի: Ժամանակային հետահայաց հայացքով նախ բերվում են զինադադարի հաստատումից քսան տարի անց գրված հոդվածները, երկրորդ՝ զինադադարի հաստատումից տասը տարի անց գրված առաջին հրատարակության նախաբանը և երրորդը, որ բուն գիրքն է՝ պատերազմի տարիներին «Երկրի» էջերում և մի շարք այլ պարբերականներում լույս տեսած հոդվածները:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)

ISBN 978-9939-68-274-7

© Դևրիկյան Վ. Գ., 2014
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2014

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բոլոր նրանց, ովքեր ընկան զինադադարի հաստատման ճանապարհին:
Եվ բոլոր նրանց, ովքեր անցնող քսան տարիների ընթացքում առաջնային գծում պահում են զինադադարը:

Ընթացող մարտական գործողությունների ժամանակ գրել պատերազմի մասին, նշանակում էր գրել արկի հարվածի ու պայթյունի մասին:

Զինադադարից տասը տարի հետո գրել, նշանակում էր գրել արկի պայթյունից առաջ եկած ավերների, նրա բացած ձագարի դեռևս չլցված լինելու և պայթյունից տարածված բեկորների՝ շրջակա շինությունների պատերին ու ծառերի բներին դեռ տեսանելի ու նշմարվող հետքերի մասին:

Գրել քսան տարի անց, նշանակում է նախևառաջ գրել, թե այդ պայթյունները ինչպես են շարունակում արձագանքել պատերազմը վերապրողների հոգիներում և երկրի ողջ կյանքում:

Անցյալի անցած պատմությունը կարելի է ուսումնասիրել, ներկայի և ապագայի համար կարևոր դասեր քաղել, սակայն հնարավոր չէ փոխել արդեն վերջակետված պատմությունը: Դեռևս կենդանի անցյալը, սակայն, այն յուրահատկությունն ունի, որ կարելի է հասցնել փոխել նրա արդյունքները և կամ էլ պաշտպանել այդ արդյունքները:

Վերահրատարակվող այս գրքով աշխատել եմ ներկայացնել կենդանի այդ պատմությունն իր ժամանակային հետևյալ երեք ընթացքներով՝ առաջին՝ պատերազմական տարիներին ականատեսի գրած հոդվածներով, երկրորդ՝ զինադադարից տասը տարի անց

նետված հայացքով և, վերջապես, զինադադարին հաջորդող քսան տարիների հեռավորությունից ծնված տողերով:

Տրամաբանորեն թերևս ճիշտ կլիներ ըստ ժամանակային ընթացքի ներկայացնել նախ՝ պատերազմի տարիներին գրվածները, ապա՝ զինադադարից հետո՝ տասը և այնուհետև՝ քսան տարի անց գրվածները: Տպագրվող այս գործերը, սակայն, ներկայացրել եմ ժամանակագրական հետադարձ ընթացքով, որով անցյալի հեռավորությունից է բացվում տեղի ունեցած պատերազմը՝ պատերազմական տարիներով ու մարտական գործողություններով և այդ պատերազմի ծանրությունը կրած մեր ժողովրդով:

Ըստ այդմ, գրքի առաջին մասում, մասնակի փոփոխություններով, զետեղել եմ վերջին տարիների իմ գրածները, որոնց մի մասը, «Ազատության և տառապանքի ճամփաներով» խորագրի ներքո, որպես մի հոդվածաշար, տպագրվել է «Երկիր» օրաթերթում 2011 թ.՝ նվիրված ԼՂՀ հռչակման քսանամյակին: Մի շարք այլ նյութեր տպագրվել են «Հայոց աշխարհում»: Գրքի հիմնական մասը, սակայն, վերահրատարակությունն է 2004 թ. զինադադարի տասնամյակի օրերին լույս տեսած «Չսկսված և չավարտված պատերազմը» գրքի, որի մեջ դրված հոդվածների ընտրության սկզբունքների մասին մանրամասն գրել եմ այդ հրատարակության առաջաբանում, որով սկսվում է և այս գրքի երկրորդ և հիմնական մասը՝ 2004 թ. տպագրության վերահրատարակությունը: Այդ առաջաբանը նաև համեստ մի փորձ էր Արցախյան պատերազմին ետադարձ հայացք նետելու տասնամյա հեռավորությունից:

Զինադադարից տասը տարի անց՝ 2004 թ. մայիսին, պատերազմը դեռ կենդանիորեն ներկա էր մեր կյանքում, իսկ այսօր՝ քսան տարի անց, արդեն դարձել է կենդանի անցյալ: Արցախյան պատերազմն այնքանով է սակայն անցյալ դարձել, որքանով որ կարող է անցյալ համարվել չսպիացած վերքը, որն ամեն մի շփման ժամանակ հիշեցնում է իրեն:

Այնուամենայնիվ, զինադադարը մնում է զինադադար. և որքանով էլ այն խախտվի, միևնույնն է, տարբերվում է պատերազմից, թեկուզ և պահանջի բանակային ծառայության մարդկային լարման

և նյութատեխնիկական ծախսերի ահռելի միջոցներ: Ուստի անցնող այս քսան տարիները հայ ժողովրդի պատմության ընթացքում պետք է դիտարկել որպես խաղաղության քսան տարիներ, որով նրանք առանձնահատուկ նշանակություն են ստանում հայոց մի քանի հազարամյա պատմության ողջ ընթացքի շրջանակում:

Իր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովրդին միայն մեկ անգամ է բախտ վիճակվել ունենալու հարյուրամյա խաղաղության մի շրջան՝ 930–1030–ական թվականները, որոնք ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանն անվանում է մեր պատմության հարյուրամյա խաղաղ շինարարության դարը: Այն դարձավ հայ ստեղծագործ ոգու բարձրագույն ցոլացման շրջանը՝ հայ և համաշխարհային մշակույթին պարգևելով Անին, Աղթամարը, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը և ամբողջացրեց մեր ազգային էպոսը՝ «Սասնա ծռերը»:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի տիրապետության ներքո, ապա ԽՍՀՄ կազմում անցկացրած տարիները եթե հանենք, ինչպես երևում է մեր պատմության ժամանակագրությունից, մենք չենք ունեցել խաղաղության անգամ քսան անընդմեջ տարիներ հարյուրամյա խաղաղության շրջանից հետո:

Այս իրողությունը մեզ պետք է մղի իմաստավորելու մեր ապրած ժամանակը, այն հարստացնելու նորանոր իրագործումներով և արարումներով: Քսանամյա այս ընթացքի ձեռքբերումների և թերացումների, մեր երկիրն ամայացնել սպառնացող արտագաղթի պատճառների քննությունը թողնելով քաղաքագետներին՝ այս գրքի վերահրատարակությամբ մենք փորձել ենք ետադարձ մի հայացք նետել Արցախյան պատերազմին քսանամյա հեռավորությունից:

Այս գրքի գրության նպատակն ու սկզբունքները շարադրված են 2004 թ. առաջաբանում: Այստեղ միայն ասեմ, որ այդ հրատարակությունում ի մի եմ հավաքել պատերազմի տարիներին «Երկիր», «Հայ զինվոր» և մի քանի այլ թերթերում տպագրված հոդվածներիս մի մասը: Այդ հոդվածները տպագրել եմ այնպես, ինչպես որ լույս են տեսել ժամանակի մամուլում այդ օրերին: Չեմ վերականգնել այն հատվածները, որոնք խմբագիրները թեև ինչ–ինչ պատ-

ճառներով դուրս էին թողել, սակայն հաջորդող տարիներն ապացուցեցին, որ այդտեղ եղած հարցադրումները կամ մտահոգությունները ճիշտ էին և առավել սրությամբ արտահայտվեցին զինադադարին հաջորդած տարիներին:

Նաև չեմ կրճատել այն հատվածները, որոնք անցնող տարիների ընթացքում պարզվեց, որ ճիշտ չեն իրենց մի շարք հարցադրումներով և կամ էլ խիստ ու, թերևս, անհիմն մեղադրանքներ են պարունակում Հայաստանի Հանրապետության 1991–94 թթ. քաղաքական ղեկավարների հանդեպ, որի համար տարիների հեռավորությունից հայցում եմ իրենց ներողամտությունը:

Այդ հատվածները չեմ կրճատել, որովհետև դրանք միայն իմ մտածումները չեն եղել, այլ ներկայացնում են ժամանակի կենդանի պատկերը: Քանի որ այս հոդվածները թե՛ 2004 թ. և թե՛ հիմա տպագրվում են որպես Արցախյան տարիներին վերաբերող սկզբնաղբյուրային նյութ, որպես ժամանակի նկարագրություններ և դեպքերի նկարագրական արձանագրում, ինչպիսին որ էին «Ազգագրական հանդեսի»՝ ժողովրդի կյանքին ու կենցաղին վերաբերող նկարագրությունները, ուստի հրատարակել եմ անփոփոխ:

Այս մոտեցումն էլ պայմանավորեց նաև 1991–1994 թթ. գրված բազմաթիվ հոդվածներիցս համապատասխան ընտրություն կատարելու սկզբունքը: Ասում են՝ ամենամեծ դատավորը ժամանակն է: Եվ 2004 թվականին տասնամյա ու ավելի տարիների հեռավորությունից նայելով Արցախյան շարժման և ապա պատերազմի տարիներին տպագրված հոդվածներիս, ամբողջովին դուրս թողեցի 1988–90 թթ. գրված չորս տասնյակի հասնող հոդվածներս, որոնց այդ ժամանակին բնորոշ խանդավառությունն ու հուզումնալիցությունը ծիծաղելի և սենտիմենտալ թվացին պատերազմական դաժան և արյունալից ճանապարհներով անցնելուց հետո: Դուրս թողեցի նաև վերլուծական և խոհական բնույթի հոդվածները: Պատերազմից տասը տարի անց զարմանքով պարզեցի, որ ժամանակի քննությանը դիմացել են միայն այն հոդվածները, որոնց գրության հիմքում ընկած էին մեր ժողովրդի կրած տառապանքի, հերոսականության և հայրենիքի հանդեպ նվիրվածության արտահայտություն եղող դրվագները:

Զինադադարից քսան տարի անց, ցանկանալով վերահրատարակել այս գիրքը՝ ներքին մի վախով սկսեցի վերընթերցել այն, թե արդյոք ժամանակը՝ նույն դաժան դատավորը, 2004 թվականից տասը տարի անց առավել չի խստացրել իր վճիռը՝ պարտադրելով և դուրս թողնել այս գրքի էջերից շատերը: Բարեբախտաբար, գոնե ինձ համար 2004 թ. վճիռը մնաց նույնը, որովհետև այդ էջերի հիմքում ընկած էր մեր ժողովրդի և մեր կյանքի բաբախյունը, ուստի այդ էջերը վերստին հանձնում եմ ընթերցողի ուշադրությանը:

Գեղարվեստական գրականության, ինչպես նաև որոշակի գրական շունչ ունեցող գործերի կարևորագույն խնդիրներից մեկը գլխավոր հերոսի ընտրության հարցն է: Այս հարցն առանձնակի սրությամբ զգաց Խաչատուր Աբովյանը՝ որպես սկզբնավորողը հայ նոր վիպագրության: Անմահ «Վերք Հայաստանի»–ի առաջաբանում իր ժամանակի մեծ լուսավորիչը գրելով, որ չնայած ունենք նշանավոր հոգևորականներ, զինվորականներ ու տարբեր մեծահարուստներ, ինքը առանց որևէ մեկին կեղծավորություն անելու ընտրում է վաղուց մոռացված Աղասուն:

Տասնհինգ տարիների ընթացքում գրված տարբեր հոդվածներ ընդգրկող այս գիրքը, որպես հավաքական մի երրորդություն, ունի գլխավոր մի հերոս՝ մեր նորօրյա պատմության հայ զինվորը, հայկական բանակը և մեր ժողովուրդը:

Ամեն հեղինակ վախ և գուրգուրանք ունի իր հերոսի հանդեպ: Եվ այսօր իմ վախն այս գրքի հավաքական հերոսի՝ մեր ժողովրդի հանդեպ այն է, որ սահմանամերձ վայրերի ռազմական սպառնալիքների, շրջափակման պարտադրած դժվարությունների, իշխանության տարբեր օղակների պաշտոնյաների և քրեա–օլիգարխիկ կերպարների անպատիժ կամայականությունների և լպիրշության պայմաններում հանկարծ ճաք չտա մեր ժողովրդի անասելի և հաճախ անգամ ուղղակի անընկալելիության հասնող նվիրվածությունը և սերը մեր երկրի և առաջնային գծի հանդեպ: Բոլոր այն պատճառները, որոնք ահագնացող ալիքի են վերածում արտագաղթը,

հանկարծ չփոխվեն երկիրն ամայացնող խուճապի, այլ առաջ բերեն ժողովուրդների ինքնապաշտպանական բնազդի վրա հիմնված հակազդեցությունը:

Եվ այս գիրքը, անկախ իր հետապնդած բոլոր մյուս նպատակներից, նախ և առաջ մի հավաքական հիշեցում, խնդրանք և պահանջ է ոչ միայն խոնարհվելու մեր ժողովրդի առջև, այլև առաջին հերթին մտածելու նրա ցավերի և հոգսերի մասին: Անկախ արտաքին զարգացումներից և միջազգային բարենպաստ ու անբարենպաստ վճռորոշ պայմաններից՝ նախ և առաջ մեր ժողովրդով ու նրա զավակներով կազմված բանակով է, որ այսօր իրենց անկախության ընթացքն են շարունակում Հայաստանի և Լեռնային Արցախի հանրապետությունները, և շարունակվում է հարյուրամյա խաղաղությունից հետո իր նմանը չունեցող քսանամյա զինադադարը՝ հայ զինվորների բռնած զենքով:

Այս զինադադարը ոչ թե մի շնորհ է՝ մեր հակառակորդից մեզ տրված, այլ մեր ժողովրդի զավակների կողմից պահվող ճակատային գիծ, մշտարթուն մի հերթապահություն, որը մեզ շարունակ հիշեցնում է Գարեգին Նժդեհի «Խաղաղություն ես ուզում, պատրաստվի՛ր պատերազմի» խոսքերը:

Եվ այս գիրքը նվիրված է պատերազմում նվաճված խաղաղությանը ու զինադադարին, և տպագրվում է զինադադարի շարունակմանը չնչին մի լումայով նպաստելու ակնկալիքով:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

ՔՍԱՆԱՄՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նայեցեք միշտ դեպի երկիր
և հավատացեք նրա ապագային:
ԱԿՆՈՒՆԻ

Քսան տարի առաջ՝ 1991 թվականի սեպտեմբերի երկուսին, հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ժողովուրդների ու երկրների պատմության մեջ անկախության հռչակումը, սովորաբար, հանրագումարն է դառնում անցած ճանապարհի և նվաճված ազատության: Արցախյան ազատամարտի յուրահատկություններից էր սակայն և այն, որ ԼՂՀ հռչակումը ոչ թե հաջորդեց, այլ նախորդեց անցնելիք այդ ճանապարհին, և դա ոչ թե ժամանակից շուտ կատարված մի քայլ էր, այլ թելադրված էր ԽՍՀՄ փլուզմանը զուգահեռ՝ Արցախի դեմ գնալով ծավալվող պատերազմով:

ԼՂՀ–ն քանի որ հռչակվեց ոչ թե հաղթանակից հետո, այլ հաղթանակից առաջ, ուստի հաջորդող երեք տարիներին պետք է նվաճեր այդ հաղթանակը պատերազմական դժվարին ճանապարհներին, որոնք 1991 թ. սեպտեմբերի երկուսից հետո նախ պետք է հանգեին մինչ այդ ԽՍՀՄ ներքին զորքերի աջակցությամբ Ադրբեջանի ՕՄՕՆ–ի կողմից բռնազավթված և հայաթափված Հյուսիսային Արցախի ու Հադրութի շրջանի գյուղերի ազատագրմանը, ապա հաջորդելու էին Շուշիից՝ Ստեփանակերտի և Ադրբեջանի մի շարք կրակակետերից՝ Արցախի շրջանների դժոխային գնդակոծմանը տարբեր տրամաչափերի զինտեխնիկայից, որից հետո գալու էր

1992 թ. հաղթական մայիսը: Զոհվածների կորուստը սրտում և ավերված հարկերը վերաշինելով՝ Արցախահայությունն ապրեց մեկամյա խաղաղության մի շրջան՝ ներքուստ զգալով, որ հակառակորդի չկրակելն իսկ իր մեջ մի նենգություն է կրում, և չսխալվեց:

1992 թ. հունիսին ադրբեջանական բանակի սկսած զանգվածային հարձակմամբ գրավվեցին Շահումյանի շրջանը, ինչպես նաև Մարտակերտի զգալի մասը, և ռազմաճակատի գիծը Վաղուհաս–Առաջաձոր–Կիչան աղեղով եկավ հասավ Գանձասար: 1993 թ. փետրվարից, սակայն, նույն այս ուղղությամբ սկսվեց ԼՂՀ Պաշտպանական բանակի հակահարձակումը, որն ավարտվելու էր Դրմբոն–Գետավան–Հաթերք, ապա և դեպ Մարտակերտ շրջկենտրոնի ուղղությամբ գտնվող բնակավայրերի ազատագրմամբ:

1993 թ. վերջին և 1994 թ. սկզբին հակառակորդը ողջ ուժգնությամբ վերսկսեց իր հարձակումները, և մի պահ վերստին երերաց ռազմաճակատի գիծը, որին սակայն, այնուհետև հաջորդելու էր հայկական ուժերի թեև դանդաղ, սակայն անկասելի ու հետևողական առաջխաղացումը, և 1994 թ. մայիսին կնքվեց այն զինադադարը, որը հավասարապես հեռու է թե՛ պատերազմ և թե՛ խաղաղություն լինելուց:

Ովքեր չեն տեսել, թե ինչ է պատերազմը, նրանք կասեն, որ այժմյան վիճակը խաղաղություն չէ, և ովքեր որ տեսել են, թե ինչ է պատերազմը, կասեն, որ հիմա պատերազմ չէ: Ահա այսպես, պատերազմի ու խաղաղության սահմանագծին ԼՂՀ–ն սկսեց կերտել իր պետականությունը՝ դառնալով ոչ մեկի կողմից չճանաչված, բայց և բոլորի կողմից ընդունված պետական մի միավորում:

Ահա այս պատճառով գրել ԼՂՀ հռչակման մասին, նշանակում է գրել ոչ թե 1991 թվականի մասին, այլ 1991 թ. հետ հարաբերվող երեք ժամանակահատվածների՝ 1988 թ. փետրվարից մինչև 1991 թ. սեպտեմբեր, 1991 թ. սեպտեմբերից մինչև 1994 թ. մայիս և 1994 թ. մայիսից հետո շարունակվող քսան տարիների մասին:

Արցախին վերաբերվող ցանկացած հարց շարունակ հարաբերվում է այս երեք ժամանակահատվածների հետ: Այնպես որ, ԼՂՀ 20–ամյակ ասելով պետք է հասկանանք 1988–ով սկսված մի ճանապարհ, որի մինչև 1994 թ. մայիս ձգվող առաջին վեց տարիները, լինելով ազատության և տառապանքի ուղիներ, կանխորոշեցին ԼՂՀ հաջորդող տարիների այժմյան ընթացքը:

Ճակատագրի ինքնակամ բերումով այդ վեց տարիները դարձան նաև իմ կյանքի ճանապարհը, որով անցնելով արցախահայությանը և Արցախին ապավեն լինելու եկած բազմահազարների հետ՝ ականատեսը դարձա Ստեփանակերտի ու ողջ երկրամասի 1988–89 թթ. ազգային վերազարթոնքից ալիքմանը, 1990–1991 թվականներին Բաքվի սաֆոնովա–պոլյանիչկոյական դրածո ռեժիմի պարետային դրության քողի ներքո իրականացվող հայաթափման ծրագրին, որն ի դերև ելավ արցախյան կամքի շնորհիվ, և ապա սկսված պատերազմին, որի պարտադրած թելադրանքով նախ ծնվեցին կամավորական ջոկատները, և հետո վերջիններիս հիմքի վրա ձևավորվեց հայկական կանոնավոր բանակը:

Գրել ԼՂՀ–ի և զինադադարի 20–ամյակի մասին, նշանակում է գրել այդ ջոկատների ու այդ բանակի մասին:

Գրել քսան տարի առաջ հաստատված զինադադարի մասին, նշանակում է գրել այդ ջոկատների ու հայկական բանակի անցած ճանապարհի մասին, պատերազմական բոլոր տարիների բոլոր ամառների ու բոլոր ձմեռների մասին, բոլոր գետանցումների, լեռնային կածաններով ելնելու և ձորամիջյան ճանապարհներով իջնելու, պայթեցված կամուրջների ու կառուցված պաշտպանական դիրքերի, այդ դիրքերից առաջ գնացող զինվորների ու այդ դիրքերից ետ տարվող զոհվածների ու վիրավորների, նրանց թիկունքային գիծ հասցնող բուժքույրերի ու բուժող բժիշկների, կրակային բաց տարածության ներքո գտնվող ճանապարհներով դիրքերի ռազմատեխնիկական մատակարարումն ապահովող վարորդների, Արցախի լաչինյան շրջափակումը ճեղքող օդաչուների և վերջա-

պես՝ այս ամենը հերոսաբար կրող և հաղթանակի հավատով ու սպասումով ապրող մեր ժողովրդի մասին:

Բոլոր նրանց մասին, ովքեր պատերազմական տարիներին չթողեցին Երևանն ու Ստեփանակերտը, Հայաստանի ու Լեռնային Արցախի հանրապետությունները և Հայրենիքում իրենց լինելությամբ իրական դարձրին ՀՀ և ԼՂՀ անկախության զույգ քսանամյակները և հաջորդող տարիները:

ԱՐՑԱԽԸ ՊԱՇՏՊԱՆԱԾ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Պետականության կարևոր բաղադրիչներից է բանակը: Կան երկրներ, որոնք հիմանակում այս պատճառով է, որ ունեն խորհրդանշական բանակ:

Ի տարբերություն նման երկրների՝ Արցախի համար քաղաքական ատրիբուտը դարձավ պետականության հռչակումը, իսկ իրական անկախությունը ձեռք բերվեց բանակի ստեղծմամբ:

Պատահական չէ, որ ԼՂՀ բանակը անվանվում է Պաշտպանական: Հետադարձ մի հայացք նետելով ԼՂՀ անցած քսան տարիներին՝ տեսնում ենք, որ Պաշտպանական բանակի ձևավորման ու զարգացման ընթացքի յուրաքանչյուր փուլը ուղիղ համեմատական է Արցախի դեմ Ադրբեջանի ծավալած ագրեսիայի աստիճանին:

Եթե նայենք 1988–89 թթ. հայկական մամուլը և տարբեր հրատարակություններ, ապա նրանցում գերիշխում են «Պատմական արդարություն», «Աշխարհին ճանաչելի դարձնենք մեր արդար պահանջը», «Մեր պայքարը սահմանադրական է» և համանման արտահայությունները:

1990 թ. կեսերից, սակայն, իր տարբեր ձևակերպումներով սկսեց գերիշխել մեկ արտահայտություն՝ «Ի պաշտպանություն Արցախի»: Պաշտպանության այդ թելադրանքով էլ ստեղծվեցին կամավորական առաջին ջոկատները:

Հայրենիքի պաշտպանության այս գաղափարն էր, որ միավորեց ու իրար միաձուլեց ամենատարբեր մասնագիտություններ, աշխարհայացք, նկարագիր, տարիք և կրթական աստիճան ունեցող մարդկանց, ովքեր, սակայն, ունեին միավորող բնորոշ մի հատկանիշ. նրանք չհամակերպվողներն էին: Նրանք չհամակերպվեցին

Արցախին պարտադրվող կարգավիճակին և Արցախում փոխեցին Արցախին պարտադրվող համակերպումի ընթացքը:

Քսանամյա հեռավորությունից ետադարձ մի հայացք նետելով՝ կարող ենք ասել, որ ԼՂՀ Պաշտպանական բանակն ստեղծվեց, երբ դիրքերում չէին հերիքում զինվորներն ու փամփուշտները, հաշվի մեջ էր հրետանային ամեն մի միավորն ու արկը, պաշտպանական ամեն մի ենթաշրջանի ապավենն էին ձեռք բերված զրահատեխնիկայի մեկական միավորները, և իրապես հեղուկ սև ոսկի ու ավելին էր զինտեխնիկայի տեղաշարժի ապահովման համար անհրաժեշտ ամեն մի լիտր վառելիքը:

ԼՂՀ Պաշտպանական բանակն ստեղծվեց, երբ պաշտպանական առաջին դիրքերն էին երկրամասի բնական ամրությունները, երբ ջրառատ Արցախում պաշտպանական տարբեր բնագծերում ծարավից ճաքճքում էին զինվորների շրթունքները, մինչև կստեղծվեին բանակային կենսապահովման համակարգերը:

ԼՂՀ Պաշտպանական բանակը ստեղծվեց, երբ առաջին կամավորական ջոկատների մարտիկների ձեռքերը լեռնային բարձունքներում ձմեռային ճքճքան ցրտերին այրվում էին կրակող զենքի շիկացած մետաղից և հարթավայրերի ամառային տապին սառչում նույն այդ զենքերի նույն մետաղյա սառնությունից:

Այս ամենը աստիճանաբար հաղթահարվեց Պաշտպանական բանակի ռազմերթի ճանապարհին, և եկավ չավարտված պատերազմի զինադադարի շրջանը՝ իր պատերազմական որոգայթներով և դրանց հակազդելուն ուղղված բանակաշինության նոր աստիճանով, ուր մերն են այս ճանապարհի թե՛ հաջողությունները և թե՛ հայ ընտանիքներում որպես բոթ ու ողբերգություն պայթող ամեն վրիպումը, ինչպես որ մերն են Արցախյան պատերազմի թե՛ նահանջների դառնալից օրերը և թե՛ տարված փայլուն հաղթանակները:

Պատերազմին հաջորդող տարիներին, ցավոք, աստիճանաբար սկսեց փոխվել հասարակության կամ նրա մի մասի վերաբերմունքը բանակի հանդեպ: Այս հանգամանքը, սակայն, կարծում ենք ոչ թե ինքնին պայմանավորված էր բանակի ներսում առկա որոշակի բացասական միտումների ուժեղացմամբ, այլ առաջին հերթին այն

հանգամանքով, որ ներքաղաքական կյանքում ինչ-ինչ ուժերի կողմից բանակն սկսեց քաղաքականացվել՝ դիտվելով ոչ թե պետության, այլ իշխանության մի մաս, և ընթացիկ ներքաղաքական պայքարի թիրախ դարձավ:

Նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ ողբերգական ելքով ոչ կանոնադրական հարաբերությունների պատճառների բուն էության մեջ խորանալու փոխարեն դրանք սկսեցին ներկայացվել որպես բանակին բնորոշ համակարգային երևույթ:

Այնինչ բանակը այսօր ակամա պատասխան է տալիս և վճարում մեր իրականությունում առկա սոցիալական ու բարոյահոգեբանական վիճակի համար:

Պատերազմի տարիներին զինվոր լինելը հպարտություն էր թե՛ բանակում գտնվողի և թե՛ նրա մերձավորների համար, որ նա հայրենիքն է պաշտպանում և չի վախենում պատերազմական վտանգներից: Նման հոգեբանությանը նպաստում էր և այն, որ մինչև 1993 թ. վերջը և ինչ-որ տեղ նաև 1994 թ.՝ մինչև զինադադարը, հայրենիքի պաշտպանությունը ավելի շատ հիմնված էր կամավորության, ինքնակամ ռազմաճակատ մեկնելու, հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի գիտակցման և ոչ թե պարտադիր զինվորական ծառայության վրա:

Պատերազմից հետո վիճակն աստիճանաբար սկսեց փոխվել, և բանակում ծառայելը, առավել ևս սահմանամերձ շրջաններում, սկսեց ընկալվել որպես սոցիալական անապահովության արտահայտություններից մեկը, որ ոչ ունևորների ու աղքատների երեխաներն են այնտեղ տարվում: Այս գաղափարի աստիճանական ու հետևողականորեն սրացումը հայրենիքի պաշտպանությունը հպարտությունից սկսեց վերածել այլ հնարավորություն չունենալու սոցիալական բարդույթի, որին գումարվեցին բազմաթիվ նորակոչիկների ընտանիքների, իրապես, ոչ բարվոք սոցիալական վիճակը և պատանիների՝ այս վիճակի հանդեպ մտատանջությամբ բանակ գալը: Նման հոգեվիճակը, ընտանեկան և առողջական տարբեր խնդիրները ողբերգական իրենց անդրադարձն են ունենում բանա-

կային կյանքին այնքան բնորոշ տարբեր արտակարգ իրավիճակներում:

Ողբերգական այս հետևանքների մեջ մեծ տեղ ունի և զորակոչիկների միջավայրի ու նրանց մեջ առկա հասարակական գիտակցության յուրօրինակ քրեականացումը: Նորակոչիկների մի զգալի մասը բանակ է գնում ձևախեղված արժեքային համակարգով՝ սերիալներից մինչև իր տեսած իրականությունը, ուր արժանիք և հարգվածության չափանիշ է համարվում բռնության կիրառումը, դիմացինին ստորացմամբ ու ճնշելով ինքնահաստատման հասնելը:

Ասվածի տխուր հավաստումն են տարբեր դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մոտ առավոտյան կամ դասերից հետո շարունակաբար տեղի ունեցող ծեծկռտուքները, առավել թույլերին նվաստացնելով՝ իշխող դիրք գրավելը: Պատկերացրեք այս խմբերին զորանոցի պատերից ներս, գիշեր–ցերեկ միասին փակված և կամ հեռավոր դիրքերում զենքը ձեռքներին, իսկ բանակը պարբերաբար համալրվում է այս միջավայրից, և աստիճանաբար առավել լուրջ վտանգ են դառնալու զինվոր–զինվոր, քան թե զինվոր–հրամանատար փոխհարաբերությունները:

Իհարկե, ինչ փաստարկներ էլ բերվեն, միևնույնն է, զինվորի կյանքի պատասխանատուն նրան ընդունած բանակը և զորամասն են՝ բոլոր օղակների հրամանատարներով: Ինչպես, սակայն, հիվանդությունների դեպքում դրանց բուժմանը զուգահեռ կամ ավելի կարևորվում է հիվանդությունների կանխարգելումը, այնպես էլ բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների կանխմանը զուգահեռ պետք է փորձել դպրոցում և բուհերում ձևավորել բանակ զորակոչվող նորակոչիկների արժեքային մի այլ համակարգ, որ սպայի գործը հիմնականում լինի մարտական և շարային պատրաստականության ուսուցումը և ոչ թե զինվորների միջև անվերջանալի հարաբերությունների պարզումը:

Հրամանատարական անձնակազմի դեպքում նաև պետք է հաշվի առնենք մի երևույթ, որն ըստ էության բնորոշ է շատ երկրների բանակների, առավել ևս այն տեղերում, ուր իրականացվում է մարտական հերթապահությունը, քանի որ ով զենքով դիրքերում կանգնել է, գիտի, որ զենքը և դիրքերը ինչ–որ տեղ վայրենացնում են մարդուն, առավել ևս՝ լեռնային հեռավոր վայրերում տևական ծառայության դեպքում:

Բանակի մասին գրելիս և այն քննադատելիս նաև փորձենք պարզել, թե մենք ինքներս մեղքի և թերացման ինչ–որ բաժին ունենք, թե՞ ոչ: Ասվածը որպեսզի վերացական բարոյախոսություն չթվա, բերեմ հետևյալ օրինակը: Պատերազմից հետո՝ զինադադարի հաստատումից մի քանի ամիս անց, երբ պետք է զորացրվեի գործող բանակից, մեր երջանկահիշատակ Սպարապետը՝ Վազգեն Սարգսյանը, այսօրվա մի քանի բարձրաստիճան ղեկավարների և զինվորականների ներկայությամբ ինձ համոզում էր, որ բանակում մնամ և չզորացրվեմ: Ես հրաժարվեցի՝ ասելով, որ պատերազմական հարկադրանքով եմ բանակում եղել և որ պատերազմից հետո զինվորական ծառայությունը ինձ համար անպատկերացնելի է, քանի որ կյանքս կապված է հայագիտության ու մշակույթի հետ: Սպարապետը հանդիմանական մի ժպիտով նայեց ինձ ու ասաց, թե՝ «Քեզ մի բան պատմեմ, և հետո ինչպես ցանկանում ես՝ վարվիր»: Պատմեց, թե ինչպես մի քանի ամիս առաջ հանդիպել էր ժամանակի իր գրչակից ընկերներից մի քանիսին, և նրանք իր հետ ունեցած մտերմությամբ, որպես քննադատություն՝ ասել են, թե մի շարք անցակետերում և տարբեր տեղերում իրենց հանդիպած զինվորականները կոպիտ են եղել իրենց պահվածքում, պատշաճ բառապաշար չեն օգտագործել և որ ժողովուրդը բողոքում է նրանցից: Ողբերգական մի հումորով ասաց, որ ինքը նրանց միանգամայն լրջորեն պատասխանել է, որ մատնանշված տեղերից որ մեկում նրանցից ով կցանկանա, ինքը նրան պատասխանատու կնշանակի, որ վիճակը փոխվի: Բնականաբար, ոչ ոք հանձն չէր առել, ինքն էլ ասել էր, որ մեր ունեցած մարդիկ այսօր նրանք են, դուք եկեք, որ մի բան փոխվի:

Երբ ասացի, որ այդ խնդիրը լավ եմ հասկանում և առանց իրական կյանքի հաշվառման երբեք չեմ քննադատել, նա ասաց. «Քննադատես, չքննադատես, մեղավոր ես, որ չես մնում բանա-

կում, որ մտավորականի քո նկարագրով ինչ-որ բան էլ դու փոխես»:

Մեղավորության այդ գիտակցմամբ այսօր դիմում եմ բոլոր նրանց, ովքեր զբաղվում են բանակային կյանքի լուսաբանմամբ և հիմնախնդիրներով: Այդ ամենը իրենց նպատակին կծառայեն և հակադարձ արդյունք չեն տա միայն այն դեպքում, եթե բանակային կյանքը ներսից իմանանք և հասկանանք:

Այսօր բանակն ինքն է ձգտում փակ համակարգ չդառնալ, որքանով որ, իհարկե, հնարավոր է, որ պաշտպանական համակարգը փակ չլինի: Ուստի առաջարկում եմ բանակային խնդիրներով զբաղվող բոլոր լրագրողներին, փորձագետներին և իրավապաշտպաններին, եթե նրանք ցանկանում են ճիշտ հասկանալ բանակում կատարվող իրադարձությունները, դրանք անաչառ վերլուծությամբ ներկայացնել հասարակությանը և նպաստել առկա հիվանդագին երևույթների առողջացմանը, պաշտպանության նախարարության հետ համատեղ մշակված մի ծրագրով ու համապատասխան ձևերով որոշակի ժամանակ՝ մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ, լինել գործող բանակում և հասկանալ եռաստիճան այն հարաբերակցությունը, որը կոչվում է զորանոց-բլինդաժ-դիրքեր: Տեսնել, թե այս երեք իրավիճակներից յուրաքանչյուրում ոչ միայն զինվորը, այլև հենց իրենք ինչպես են զգում իրենց, ինչ փոփոխությունների են ենթարկվում և նոր համապատասխան եզրահանգումներ կատարեն:

Ի դեպ, նման ներկայությունը որոշակի դրական ազդեցություն կունենա նաև զորամասի ներսում՝ սպայական անձնակազմի համար դառնալով մտավորականների հետ շփման, խորհրդածությունների և անգամ ինչ-որ տեղ հասարակական վերահսկողության առիթ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ

Տապարն է ջախջախ դռանը կուրծքին.
— Ջարդն է, դուռդ բաց...
ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

Ներքին մի կանխատեսությամբ Հայաստանի պատկերը ջարդով է ներկայացնում Ռուբեն Սևակը 1909 թ. գրված «Հայաստան» բանաստեղծությունում:

Դժվար է գտնել ուրիշ մի ժողովուրդ, որի կյանքի մասը դեռևս 1915 թվականից առաջ դարձած լիներ «ջարդ» հասկացությունը՝ վերածվելով թե՛ ժամանակ և թե՛ աշխարհագրական որևէ վայր ցույց տվող բառի՝ «ջարդի տարի», «ջարդի ձոր» և այսպես շարունակ:

Ջարդը՝ որպես հավաքական մի հասկացություն, դարձել էր անգամ գրական կերպար ու պատկեր: Տարբեր ժողովուրդների գրականությունում ու արվեստում սարսռազդու ձևով եթե հանդես են գալիս գերանդիավոր մահը, ժանտախտը և սովը, ապա հայ կյանքում նման մի կերպարի էր վերածվել հենց ջարդը:

Նույն այս պատճառով եթե ուրիշ ժողովուրդներ ու երկրներ որևէ քայլ ձեռնարկելիս մտահոգվում էին հնարավոր քաղաքական անհաջողության կամ ռազմական պարտության համար, ապա մեր ազգային գիտակցությունում այն արտահայտվում էր «Հանկարծ մի նոր ջարդ չլինի» գրեթե բնազդական դարձած վախով:

Ջարդի հոգեբանությունը ձևավորել էր զոհի կերպարը՝ զենքը թողնելով մեր հարևաններին, իսկ մեզ վերապահելով աշխատանքի գործիքները՝ ստեղծելով հայ հողագործի գութանա-արորային մշակույթը՝ աշխատանքի երգերով:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, մենք դեռ կրում էինք անցյալի ողբերգական հիշողության այս ծանր բեռը: Համազգային ոգևորությանն ու խանդավառությանը զուգընթաց կար նաև ներքին այն տագնապը, թե հանկարծ մի նոր ջարդ չլինի, և Սումգայիթից հետո արագորեն ձևավորվեց զոհի ավանդական կերպարը:

Խորհրդային Հայաստանի քարտեզը, պայմանավորված սահմանների գծագրմամբ, գեղարվեստորեն ներկայացվում էր հայուհու տեսքով: Արցախյան շարժումից հետո այն արդեն որպես տագնապած մի մայր սկսեց պատկերվել, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչական տարածքը՝ որպես մի մանուկ:

Արցախյան պատերազմի ռազմերթերի ճանապարհին ոչ միայն ձևավորվեց ԼՂՀ Պաշտպանական բանակը, այլև փոխվեց զոհի ավանդական մեր հոգեբանությունը: Ինքնապաշտպանության ճանապարհին պարզվեց, որ կարող ես լինել հաղթող կամ պարտվող, բայց ոչ երբեք զոհ, որովհետև զոհից կամ խլում են և կամ էլ որպես օգնություն՝ ինչ–որ բան նվիրում, բայց զոհն ինքը ի վիճակի չէ որևէ բան նվաճելու: Եվ նվաճված ամեն մի բարձունք և ետ մղված ամեն մի գրոհ, հակառակորդի խփված ամեն մի տանկ ու գերի վերցված ամեն մի զինվոր մեր միջից վանեցին մեր մեջ նստած զոհին:

Տարված ամեն մի հաղթանակով ոչ միայն մերօրյա պատմությունն էր գրվում, այլև ինչ–որ տեղ վերանայվում էր անցյալի մեր ընկալումը: Ասվածը փորձեմ ներկայացնել 1993 թ. Քելբաջարի մարտերում ռազմավար վերցված մի քանի տանկերի օրինակով: Նախ ասենք, որ.1990–ական թթ. առաջին կեսին Արցախի ինքնապաշտպանության ուժերի ունեցած զրահատեխնիկայի զգալի մասի անցած պատմությունը արտացոլվում էր նրանց վրա դաջված զինանշաններով և դրոշներով: Այս շարքում բոլորից հինն ու խունացածը և Արցախում ու Ադրբեջանում գտնվող ողջ զրահատեխնիկայի ընդհանուր ծագումը ցույց տվողը կարմիր աստղն էր, որը խորհրդանշում էր նրանց բոլորի սկզբնական պատկանելությունը խորհրդային բանակին:

Կարմիր աստղի կողքին Ադրբեջանն այնուհետև ավելացրեց իր դրոշը, որի կողքին հաճախ պատկերվում էր նաև թուրանական անապատներից եկած և լուսնի մահիկի տակ ոռնացող գայլը՝ պանթուրքիզմի գաղափարների խորհրդանիշը:

Արցախի դիրքերի վրա հարձակումներից և կամ ԼՂՀ Պաշտպանական բանակի հակահարձակումներից հետո այս զրահատեխնիկայի մի որոշ մասն անցնում էր հայկական ուժերին, որոնք ոչ միայն վերանորոգում և համալրում էին մեր զինված ուժերի զրահամեքենաների թիվը, այլև ջնջելով կարմիր աստղով սկսված և Ադրբեջանի դրոշով ու գայլով շարունակվող շղթան՝ ավելացնում էին այդ շղթայի վերջին և նոր օղակը՝ հայկական եռագույնը՝ խորհրդանշելով այդ զրահատեխնիկայի նոր պատկանելությունը:

Քելբաջարի կրակակետերը լռեցնելուց հետո Օմարի լեռնանցքից վար իջած Մարդակերտի գնդի մի քանի վաշտեր, դիրքային հերթափոխի ընդունված կարգով, Հաթերք վերադառնալիս իրենց հետ բերեցին նաև գրավված մի քանի տանկ: Ջնջելու գիծը քաշեցին տանկերի նախորդ նշանների վրա և նրանց կողքին ավելացրեցին մեր ազգային եռագույնը, որը 1993 թ. ապրիլյան այդ օրերին լեռնային զմրուխտյա կանաչի մեջ հուրհրում էր նոր ներկված գույների փայլով:

Այդ ժամանակ Հաթերքում էր գտնվում մի պատվիրակություն, որի կազմում կային մի քանի սփյուռքահայեր: Նրանցից մի կին, տեսնելով ջնջված նշանների կողքին փայլող հայկական եռագույնը, մեկեն ճչաց և հեկեկալով սկսեց կրնկնել. «Մեծ մամա, դու ճիշտ չէիր»: Երբ անցավ նրա այս առաջին պոռթկումը, փորձեցի հարցնել, թե ինչով կարող էր այս տանկերի հարցում ճիշտ լինել կամ չլինել հեռավոր Ամերիկայում ապաստանած նրա մեծ մայրը:

Այս կինն ասաց, որ իր տատն ամեն անգամ Եղեռնի ու գաղթի մասին պատմելիս նաև ասել է, որ թուրքը ուժեղ էր, և պետք է լիներ այնպես, ինչպես որ եղավ: Եվ հիմա այս կինը, նայելով զինվորների հնամաշ հանդերձանքին, նրանց ուժասպառ ու հոգնած հայացքներին և Օմարի լեռնանցքի՝ արևի տակ փայլող ձյունների կուրացնող

սպիտակից բորբոքված աչքերին և նույն այդ զինվորների՝ հակառակորդից վերցված տանկերի վրա դրոշմվող հայկական եռագույնին, մտքում կայծակել էր, որ իր մեծ մայրը սխալվում էր՝ ասելով, թե 1915 թվականին այլ կերպ չէր կարող լինել:

Եվ սա հոգեբանական մի շրջադարձ էր, որը կատարվեց մեր ողջ ժողովրդի հետ՝ մեզ մեծապես ազատելով զոհի կեղեքող բարդույթից, մեզ դարձնելով պաշտպանը մեր արդար իրավունքների:

ԱՌԱՋԻՆ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՏԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Սահման քաջաց զէնն իւրեանց
(Քաջերի սահմանը իրենց զենքն է):
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Պատմության զոհի բարդույթի հաղթահարումից հետո արցախյան հաղթանակների հոգեբանական երկրորդ մեծ նվաճումը դարձավ ԼՂՀ և Հայաստանի հանրապետությունների սահմանամերձ շրջաններում վերջին տան վախի զգացումը առաջին տան վճռականությամբ փոխարինելը:

Երբ ետադարձ մի հայացք ենք նետում մեր պատմությանը, տեսնում ենք բնորոշ այն օրինաչափությունը, որ մենք ապրել ենք վերջին տան վախի, իսկ մեր հայրենիքը յուրացնողները՝ առաջին տանը լինելու հոգեբանությամբ: Սահմանակից, դեմ դիմաց գտնվող երկու տներից հայկականում այն մտավախությունն է եղել, որ առաջին հարվածը, թալանը ու սրածությունը առաջին այդ տունն է կրելու, որի համար թողել են այն և մի այլ տեղ ապաստանել: Նման ձևով ապա ընկել է հաջորդ տունը, հետո՝ թաղը, այնուհետև՝ ողջ շենը, որին հաջորդել է գավառը, և այսպես շարունակ:

Մեր հայրենիքը յուրացնողները, սակայն, ապրել են առաջին տան հոգեբանությամբ, թե առաջինը իրենք են առաջ գնալու և տեր դառնալու իրենց դիմաց գտնվող վերջին տանը, և այսպես առաջ են շարժվել դեպ վերջին տունը, թաղը, շենը ու գավառը...

Վերջին տան այս հոգեբանությունն այնքան ողբերգականորեն արտահայտվեց նաև արցախյան շարժման սկզբում, երբ սահմանամերձ գյուղերի եզրային տների յուրաքանչյուր բնակչի թվում էր, թե առաջինն ի՛ր տունն են մտնելու: Իրենց իսկ բնորոշմամբ՝ մի գիշեր ներս են մտնելու և «կըտորելու»՝ կոտորելու:

Ճակատագրի բերումով արցախյան պատերազմի տարիների օրերի երկայն շարանի մի զգալի մասն անցկացնելով Արցախում՝ ինքս ևս վերապրել եմ վերջին տան՝ սարսափի հասնող վախը և պատերազմական երկար ու ձիգ տարիների ընթացքում մնացյալի հետ կաթիլ առ կաթիլ քամել այդ վախը և ապա այն պարտադրել հակառակորդին:

Վերջին տան վախն այն վախն էր, որը իջնող երեկոյին վառվող ճրագի լույսի ստվերը զինված մարդու դաժան մի պատկեր էր գծագրում դիմացի պատին, և այդ «մարդու» ներս եկող ոտնաձայնն էր բերում քամու աղմուկը, և դավադիր ձայնը՝ պատուհանի բացված փեղկը:

Այդ վախն էր պարտադրում հագուստով քնել՝ ձեռքը բնազդաբար պահելով սկզբում մետաղյա որևէ իրի վրա, ապա սկսված պատերազմի ժամանակ նախ՝ հրացանին և հետո՝ ավտոմատին:

Այդ վախն էր, որ գումարվելով գերի ընկնելու վախին, գծագրում էր այդ վերջին տնից դեպ գյուղի ներսն ընկած մոտակա տան ամենակարճ ճանապարհը, որ վերջին տանն սպառնացող հարվածը միայնակ չկրես:

1990–91 թթ. սաֆոնովյան բռնությունների և տեղահանությունների շրջանում առաջինը այդ վերջին տունը, թաղը և գյուղն էր հայաթափվում, և տեղահանվածները բռնում էին նախավերջինից վերջինը դարձած հարևան գյուղի ճանապարհը, և այս գյուղի վերջին տնից էին առաջինը երևում եկողների կորացած հասակը և դանդաղ ու դողդոջուն քայլերը: Սկսված գաղթի ճանապարհին նրանք առաջին ջուրը այս վերջին տունը դարձած տան բակի աղբյուրից էին խմում և շարունակում իրենց դանդաղ քայլերը դեպի թիկունք՝ վերջին տան զգացողությունն ունենալու փորձությունը հանձնելով արդեն այս տանը, որը երկար չէր կարողանում պահել այն, և ինքն էլ իր հերթին բռնում էր արցախցիների ասած «քոչի ճանապարհը»:

Քոչի այս ճանապարհին, սակայն, վերջ տրվեց ԼՂՀ հռչակմամբ: Ազատությունը և անկախությունը դարձան մոգական այն հասկացությունները, որոնք վերջին տան հոգեբանությունը փոխելու էին առաջին տան պատասխանատվության:

Ամեն մի վերջին տուն ասես անտեսանելի թելերով ու նյարդերով կապված էր դիրքերի հետ: Այնտեղ կատարվող ամեն մի շարժում արձագանքվում էր այս վերջին տան պատերին, հատակին ու առաստաղին, հրետանային ամեն մի հարվածից ոչ միայն հողն էր ցնցվում դիրքերում, այլև վերջին տան պատերը, և արագանում կամ դանդաղանում էին այնտեղ ապրողների սրտի զարկերը:

Պատերազմը վերջին տներով գծագրեց ճակատի առաջին գիծը՝ դիմացից եկողի հանդեպ վախը փոխարինելով թիկունքի ուժով: Անկախության նվաճման ճանապարհին ճակատի գիծը շարժվեց դեպ տեղահան եղած ու կորսված վերջին գյուղերի վերջին տները:

Ազատագրվող ամեն մի գյուղի համար մղվող կռիվների մարտական հաղորդագրություններում նախ հիշվում էր այդ բնակավայրի առաջին և ապա՝ վերջին տունը: Այդ ճանապարհին նախ երևում էր գյուղեզերյա առաջին տունը, և առաջ շարժվող զրահատեխնիկայի կամ հետևակի կապավորը հաղորդում էր, որ դիմացից արդեն երևում են այսինչ գյուղի առաջին տները, և գործողության ավարտին ասվում էր, որ գյուղի վերջին տնից այն կողմ անցանք:

Մեր պատմության կորուստների անիվի շրջված այս ընթացքը շրջեց նաև գյուղի առաջին ու վերջին տների, գյուղի սկզբի ու վերջի տեղերը:

Մինչ այդ գյուղն սկսվում էր «ներսից» գյուղ մտնող ճանապարհով: Սկսված պատերազմով, սակայն, գյուղն սկսեց սկսվել այնտեղից, որտեղ վերջանում էին դիրքերը, և ըստ այդմ առաջին տունը դարձավ դիրքերին ամենամոտիկ տունը, և վերջին տունը՝ դիրքերից ամենահեռու՝ գյուղի՝ դեպ Արցախի ներսն ընկած ճանապարհի առաջին տունը:

Երբեմնի վերջին տները անճանաչելիորեն փոխվեցին՝ առաջին տները դառնալով: Նրանցից շատերը մինչ այդ ավերվեցին հրետանային հարվածներից, այրվեցին ու թալանվեցին հակառակորդի ձեռքն ընկնելով և հետո նորոգվեցին:

Պատերազմի ավարտից հետո վերստին բախտ եմ ունեցել լինելու նման վերջին տներից մի քանիսում, որոնք պատերազմի ընթաց-

քում թե՛ մարդկային անդառնալի կորուստներ էին ունեցել և թե՛ նյութական մեծ վնասներ կրել:

Լուռ խմել ենք նրանց կենացը, ովքեր իրենց կյանքը տվեցին այս տների վերստին հայկական շնչով լցվելու համար: Մի պահ վերապրել ենք Թարթառի կիրճով Հյուսիսային Արցախը թողնելու՝ 1992 թ. հունիսյան սև օրերը և բոլոր այն օրերը, երբ որպես միրաժ երևում էր այն օրը, երբ նորից իջնելու էինք այդ կիրճով, որը եկավ 1994 թ. ապրիլին:

Նայել եմ շուրջս, մտովի հիշել այդ տների հին կահկարասին, որոնց ջարդուփշուր եղած կամ կիսաայրված մնացորդների հետքերը դեռ նկատելի են այդ տների բակերում, և հնի փոխարեն շատ քիչ բան է ավելացվել, փոխարենը, սակայն, տեղի է ունեցել անճանաչելի մի փոփոխություն: Այդ տներն իրապես դարձել են ավելի լուսավոր, անցել է վախից կծկված նստելը, և պատուհանների բացված փեղկերից ներս հորդացող լեռնային բնակավայրերին բնորոշ ուժեղ քամիներից ճոճվող էլեկտրական լամպերի կամ ապակյա ճրագների պատրույգների կրակե լեզվակների թրթիռն այլևս պատերի վրա չի գծում արցախյան շարժման առաջին տարիների՝ ջարդի զգացում առաջ բերող զարհուրելի ստվերները, որովհետև երբեմնի այս վերջին տների դիմաց գտնվող դիրքերը պահում է Արցախի Պաշտպանական բանակը, որի թիկունքն են դարձել այս տները:

ԱՐՑԱԽԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ

Արցախյան հարցի կարգավորման շրջանակում հայության և միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է նաև Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման հարցը, որը հաճախ դառնում է ընթացիկ դիվանագիտական մարտերի հերթական թիրախը:

Տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրար հակասող սկզբունքները յուրօրինակ ձևով բեկվում են Արցախի օդանավակայանում՝ դառնալով կոնցեպտուալ մի հարց. ո՞րն է ճիշտը, որ արցախահայությունը մնացյալ մարդկության նման իրավունք ունի՞ օգտվելու այսօրվա կեցության կերպի մաս կազմող փոխադրումներից, թե՞ այդ իրավունքը պետք է ստորադասվի Ադրբեջանի Ֆորմալ քարտեզի նման Արցախի երկնքի հանդեպ Ադրբեջանի ունեցած իրավունքին:

Այս հարցը, սակայն, նոր չէ, որ ծագել է: Այս հարցն ինքնաբերաբար ծագեց և զարգացավ նախ Արցախյան շարժմանը զուգահեռ, և ապա արյունոտ մի հարցականի վերածվեց Արցախյան պատերազմի ընթացքում և մնացյալ մի շարք այլ հարցականների հետ լուծվեց Շուշիի ազատագրմամբ և Լաչինի ճանապարհի բացմամբ:

Մինչ Լաչինի ճանապարհի բացվելը Ստեփանակերտի օդանավակայանը ոչ թե ուշադրության կենտրոնում էր, այլ նրան կենտրոնական դիրք էր վերապահված ընթացող ռազմաքաղաքական զարգացումներում:

Արցախի օդանավակայանի պատմությամբ կարելի է գրել 1988 թ. փետրվարից մինչև 1992 թ. մայիս ձգվող ժամանակահատվածի՝ Արցախի պատմությունը:

1988 թ. փետրվարին թվում էր, թե Արցախը կպած է Հայաստանին: Անգամ Լաչին–Շուշի բաժանարար գիծը էական չէր թվում,

որովհետև Կոռնիձորից ուղիղ գծով կարելի էր անցնել Բերդաձոր և այնտեղից էլ Շուշիի տակով հասնել Ստեփանակերտ: Իրավաքաղաքական առումով ամեն ինչ ճիշտ էր՝ դիտարկված եվրոպական արժեքային համակարգի տեսանկյունից, միակ սխալն այն էր, որ, ինչպես սուլթան Համիդի օրոք, ինչպես երիտթուրքերի ու Աթաթուրքի և ապա Արցախյան շարժման ժամանակ, արժեքային այդ համակարգը չգործեց Հայկական լեռնաշխարհում:

Բարեբախտաբար, սակայն, ի տարբերություն առաջին երեք դեպքերի, Արցախում հնարավոր եղավ կիրառել այլ համակարգ, որում առանցքային դեր էր վերապահվելու Արցախի օդանավակայանին:

Վերջինս այդ դերը ստանձնեց, երբ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերի տեղահանմամբ Արցախը Գորիսից և ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետությունից «հեռացավ» մոտ 90 կիլոմետրով:

Գորիս–Ստեփանակերտ ճանապարհը դարձավ այնպիսի մի խորհրդանիշ, ինչպիսին էր խորհրդային շրջանում «Դեպի լյառն Մասիս» տանող ճանապարհը: 1988 թ. գարնանից Արցախի համար սկսվեց «ՅԱԿ»–երի ժամանակաշրջանը: Սկզբում, երբ ողջ իշխանությունը գտնվում էր խորհրդային զինվորական պարետության ձեռքին և թռիչքները անխափան իրականացվում էին «Էրեբունի» օդանավակայանից, այնտեղ արցախցիների կուտակումը և Ստեփանակերտ գնալու հերթերն ուղիղ համեմատական էին թռիչքային եղանակին:

ԽՍՀՄ քայքայմանը և Ադրբեջանի ինքնիշխանության մեծացմանը, ինչպես նաև այս շրջանում վարվող հակահայ քաղաքականությանը զուգընթաց ադրբեջանական ՕՄՕՆ–ը որոշակիորեն կարողացավ հաստատվել օդանավակայանում՝ պարետային զորքերի հետ համատեղ սկսելով հերթապահություն իրականացնել այստեղ, որով օդանավակայանը մեծապես հսկելի դարձավ նրանց համար:

Ստեփանակերտի օդանավակայանում հաստատվելու հաջողությունը նրանք կարողացան ամրապնդել Արցախի օդանավակայնի անվանումն անգամ փոխելով, երբ խորհրդային ու միջազգային

մամուլում սկսեց շրջանառվել Խոջալուի օդանավակայան անվանումը:

Արցախի օդանավակայանն այսպիսով հայտնվեց Ստեփանակերտ–Խոջալու–Շուշի եռանկյունու մեջ:

Խորհրդային ներքին զորքերի հեռացմամբ, բնականաբար, հեռացավ նաև ադրբեջանական ՕՄՕՆ–ը, ապա սկսվեց պատերազմը: Կիրառվող զինտեխնիկայի կրակային հզորությունների մեծացմամբ Խոջալուից անմիջական սպառնալիք ստեղծվեց՝ իջնող օդանավերը թե՛ տեղում գնդակոծելու և թե՛ թռիչքուղու վրա հրետակոծելու:

Մինչև Խոջալուի կրակակետերի լռեցումը մի որոշակի շրջան, այսպիսով, Արցախի օդանավակայանը դադարեց գործելուց, և Շուշիի պարտադրած շրջափակման պայմաններում ինքնաթիռներին փոխարինեցին ուղղաթիռները՝ Արցախի օդանավակայան հասկացությունը Արցախի մի շարք բնակավայրերում փոխարինելով «ուղղաթիռի իջնելու տեղ» արտահայտությամբ:

Շուշին իր թիկունքը եղող Լաչինի հետ ահա այսպես պարտադրեց, որ չորս տարի շարունակ ուղղաթիռները փոխարինեն մեքենաներին և ավտոբուսներին, իսկ «Յակ–40» ինքնաթիռները՝ բեռնատարներին:

Շուշին պարտադրեց, որ Երևանից Ստեփանակերտ տանող ճանապարհին չորս տարի շարունակ մենք երկնքից նայենք մեր հայրենիքին, ավելի սիրենք այն և ավելի փարվենք նրան:

Չորս տարի շարունակ բարձրացող ուղղաթիռներից վար է հակվել մեր հայացքը, գնալով մեծացող բարձրությունից աստիճանաբար քաղաքի հատակագծի և 1:15000 հարաբերակցությամբ տեղագրական քարտեզի վերածվող Երևանում որոնել է այն ամենը, ինչ որ յուրաքանչյուր նման թռիչքից առաջ նաև քոնն էր, դեռ քո կյանքի մի մասնիկն էր, և չգիտեիր՝ էլի քոնը կլինի՞, թե՞ մի վերջին անգամ ոչ թե գալու, այլ բերվելու և տարվելու ես Երևանի փողոցներով:

Հաճախ որպես ստեղծագործական շարադրության թեմա՝ հարց է տրվում, թե ինչպե՞ս սիրել Հայաստանը: Ես կարծում եմ՝ Հայաս-

տանը պետք է սիրել այն հայացքով, որով ուղղաթիռի տարուբերվող պատուհաններից համակ մի կենտրոնացմամբ աստիճանաբար փոքրացող Երևանին էին նայում մեր կամավորական առաջին ջոկատների ազատամարտիկները, որոնցից շատերը, դժբախտաբար, օրեր, շաբաթներ, ամիսներ կամ տարիներ անց ոչ թե ետ եկան, այլ բերվեցին...

Ծանրածանր այդ տարիներին նույն ձևով ամեն անգամ ետ վերադառնալիս ներքին մի մտավախությամբ էիր նայում ներքևում տարածվող և աստիճանաբար հեռվում մնացող Արցախին, թե արդյոք չի՞ ընկրկի, կհարատևի՞, կկարողանա՞ պահել ռազմաճակատի և գծային պաշտպանության վերածված իր սահմանները, թե արդյոք մի անգամ էլ կհասցնե՞ս տեսնել այն: Նույն այս մտավախությամբ էիր հրաժեշտ տալիս դիրքերում հարազատացած տղաներին՝ չիմանալով՝ էլի կհանդիպե՞նք, թե՞ պարզապես կմասնակցենք նրանցից էլի մեկի հուղարկավորությանը՝ նայելով հոգնատանջ, բայց արդեն հանգստացած դեմքին՝ մտովի փորձելով վերականգնել նրա մարած ժպիտը և այն կեցվածքը, որով դիրքավորվել էր այսինչ լեռնալանջին և կամ այնինչ գյուղի մատույցներում:

Շուշին այսպիսով մեզ պարտադրեց, որ զոհվածներն իսկ մայր հողում ամփոփվեն օդային ճանապարհով բերվելով: Եվ լեռնային որևէ ձորակում կամ դաշտամասում իջնող ուղղաթիռի դուռը երբ բացվում էր, հնչում էր տեղի պարետային պատասխանատուի հերթական անգամ զգուշացնող ձայնը՝ սկզբից դիակները, հետո՝ մարդիկ, ու Երևանին մոտենալիս ուղղաթիռի պատուհանների երկայնքով արդեն խաղաղ հանգչողի վրայով նորից ներքև՝ Հայաստանի Հանրապետության և համայն հայության մայրաքաղաքին նայելը դառնում էր խեղված ուրախություն, մի տեսակ թաքուն գողություն նրանց հանդեպ, ովքեր արդեն գլուխներն էլ չէին բարձրացնելու նայելու համար:

Շուշին մեզ նաև պարտադրեց Արցախում հաշվի առնել ամեն մի փամփուշտն ու հեղուկ վառելիքի ամեն մի կաթիլը:

Ուղղաթիռի բացվող դռնից իրար փոխանցվող ԱԿՄ–ի ու ԱԿՀ–ի փամփուշտների թիթեղյա արկղերը (ցինկերը) ուղղաթիռի դեռևս

պտտվող պտուտակի աղմուկի տակ զինվորներն այնպես էին բացում և ավտոմատների պահունակները (մագազինները) լիցքավորում, ինչպես գանձախույզներն են հողից հանված արկղերի մեջ եղող զարդերն ագահությամբ պարկերը լցնում՝ մի կողմ գցած այն բահերը, որոնց վրայի հողի փոշին բարակ շիթերով դեռ շարունակում է վար ծորալ:

Այս ամենը արդեն պատերազմական հերոսական ու դաժան անցյալ է: Եվ այդ անցյալի կրկնությամբ չէ, որ պարտադրված է Արցախի օդանավակայանի՝ քաղաքացիական ինքնաթիռների համար վերագործարկումը:

Ավելին, մեր հաղթանակի այսօրվա ամենամեծ նվաճումն այն է, որ մեզ համար ոչ թե հաղթանակ կարող է լինել Արցախի օդանավակայանի վերագործարկումը, այլ այն, որ նրա գործարկումը դադարել է մեզ համար կենսական նշանակություն ունենալուց և մեզ համար տևական ու մնայուն հաղթանակը կլինի այն, որ Արցախի օդանավակայանն այլևս երբեք չունենա այն նշանակությունը, ինչ որ ուներ մինչև 1992 թվականի մայիսի ութը...

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լրատվական պատերազմը իրար դեմ կռվող երկրները պատերազմի ընթացքում և հետո էլ մինչև հակամարտության քաղաքական կարգավորումը մղում են միմյանց դեմ արտաքին ճակատում, որով լրատվական պատերազմը դառնում է վարվող արտաքին քաղաքականության մի բաղադրիչը, յուրօրինակ մի դիվանագիտություն, որն արտահայտվում է լրատվության և քարոզչության միջոցով:

Միանգամայն այլ է, սակայն, պատերազմական լրատվությունը: Այն ոչ թե արտաքին աշխարհին է ուղղված, այլ իր երկրին ու ժողովրդին:

Պատերազմի հետ հարաբերվող այս երկու լրատվություններն իրենց բնորոշ արտահայտությունը գտան Արցախյան պատերազմի ընթացքում և ապա շարունակվեցին զինադադարից հետո և կշարունակվեն մինչև Արցախյան հարցի քաղաքական հնարավոր կարգավորումը:

Լրատվության այս երկու տեսակներն էլ, քարոզչական ձևերի կիրառման առումով, անցնելու էին հոգեբանական այն շրջադարձերի միջով, որոնցով անցավ մեր ժողովրդի ազգային քաղաքական գիտակցությունը Արցախյան շարժմանը հաջորդող տարիների ընթացքում: 1915 թ. ջարդի ու գաղթի շարժման սկզբում հիշվող պատկերներից 1991 թ. սեպտեմբերին ԼՂՀ հռչակմամբ անցում կատարվեց ազգային ինքնապաշտպանության գաղափարին, և ադրբեջանական վայրագությունների մասին լրատվությանը զուգահեռ, սկսեցին գերակշռել հայկական զինված ուժերի մարտունակության և հակառակորդի հարվածները ետ մղելուն ի զորու լինելու մասին հրապարակումները:

Լրատվական պատերազմի նպատակն է վեր հանել հակառակորդի վայրագությունները և դրանք ներկայացնել որպես քաղաքական մեղադրանք դիվանագիտական ճակատում՝ հիմնավորելով յուրային կողմի մարտական գործողությունները:

Լրատվական պատերազմի դժվարությունը նրա քաղաքական–դիվանագիտական բնույթի այս յուրահատկության մեջ է: Պատերազմական լրատվությունը, սակայն, չունենալով նման խնդիր, արդեն դժվարին է դառնում թե՛ ազգային–բարոյական առումով և թե՛ ստեղծագործական, քանի որ այն հնարավորինս ճշմարտացի պետք է ներկայացներ ընթացող մարտական գործողությունները, ինչպես նաև դրանց հետևանքները ռազմաճակատային գծի բնակչության համար, և որպես ողջ երկրին ու հայությանն ուղղված ահազանգ հնչեցներ պատերազմական վտանգը: Միաժամանակ այս ամենը պետք էր կատարել այնպես, որ ո՛չ վերածվեր կեղծ հերոսականության և ո՛չ էլ վախեցներ կամ հուսալքեր ու բարոյալքեր ժողովրդին:

Պատերազմական լրատվությունը նաև չպետք է նույնանար ամենօրյա մարտական ամփոփագրերի հետ՝ թե ինչ գյուղ ազատագրվեց և կամ էլ դիրքային մարտերի ընթաքում մեր դիրքերը հակառակորդի կողմից ինչպիսի զինատեսակներով և քանի անգամ գնդակոծվեցին:

Պատերազմական լրատվությունն այսպիսով, օպերատիվ ամփոփագրերից տարբերվում է նրանով, որ ոչ թե անմիջականորեն լրատվություն է հաղորդում ընթացող մարտական գործողությունների մասին, այլ թե ինչպես է կյանքը հարաբերվում այդ գործողությունների հետ, որով պատերազմական լրատվությունը դառնում է պատերազմական կյանքի լուսաբանում:

Մարտական ամփոփագրերի սեղմ լրատվության և պատերազմական կյանքի լուսաբանման միջև եղած ահռելի տարբերությունն ինքս Արցախի ճակատային տարբեր գծերում զգացել եմ պատերազմի առաջին իսկ օրերից՝ այնտեղ կենդանիորեն ապրածից և ապա կատարվածի մասին հաջորդող օրերի մարտական ամփոփագրերի ընթերցումից:

Պատերազմական միջավայրը, կյանքը և նրանցով պայմանավորված հոգեվիճակը ներկայացնելուց բացի, պատերազմական լրատվությունը բախվեց երեք խնդրի, որոնք, կարծում ենք, պատվով հաղթահարվեցին պատերազմական տարիներին:

Այդ խնդիրներից առաջինն ու թերևս ամենադժվարինը Շուշիից հետո 1992 թ. ամռանը սկսված պարտությունների և 1993 թ. հաջորդած հակահարձակման և 1994 թ. ապրիլ–մայիսյան մարտական գործողությունների պատկերումն էր:

Պատերազմը ցույց տվեց, թե որքան հեշտ է հաղթանակները ներկայացնելը և որքան դժվարին ու նուրբ՝ պարտության մասին գրելը: Ինչպես որ ամենակատաղի հրետանային ու գնդացրային կրակի ներքո հոգեբանորեն ավելի հեշտ է առաջ գնալը, և անասելի ծանր՝ թեկուզ և «անկրակ» նահանջը, այնպես էլ հաղթանակի տողերն ինքնաբերաբար են գրվում, իսկ պարտությանը վերաբերող ամեն մի տողն անասելի դժվարությամբ է առաջ գնում՝ որպես միջնադարյան գուժկանի մի խոսք: Պարտությունների դեպքում, սակայն, ամենադժվարինը ճշմարտության և մարդկանց չընկճելու միջև եղած ոսկե միջինը գտնելն էր, կորստյան ցավը ներկայացնելը և առաջիկա հաղթանակներին հոգեբանորեն նախապատրաստելը, որը պատվով կատարեցին մարտական գործողությունների բովով անցած մեր լրագրողները:

Երկրորդ յուրահատկությունն այն էր, որ պատերազմական լրատվությունն արտահայտվում էր լրագրության, լուսանկարչության և կինովավերագրության միջոցով: Պատերազմական պայմաններում դժվար է ասել, այս երեքից որն էր ավելի կենդանիորեն ներկայացնում իրականությունը: Լրագրությունը կյանքի ամբողջական պատկերն էր փոխանցում ընդգրկուն իրականությամբ, երբ դիրքից դիրք ու գյուղամիջյան ճանապարհից ճանապարհ աչքերիդ առջևով անցնում են զինվորներն ու զրահատեխնիկան և ճակատային գծի հետ առաջ ու ետ են տարուբերվում շրջակա գյուղերի բնակիչները՝ տող առ տող գծագրելով պատերազմական իրականությունը:

Լուսանկարիչը կրակային բաց գծում որսում էր մի կադր, որը հետո զինվորի հավաքական խորհրդանիշն էր դառնում հերոսականության կենդանի ապրումով, կամ նույն գյուղամիջյան ճանապարհներին լուսանկարչական ժապավենին հանձնում ժողովրդի կրած պատերազմական տառապանքը: Նույնը վերաբերվում է և կինովավերագրողներին, ովքեր երբեմն ստեղծագործական խելահեղ նվիրմամբ, անգամ խրամատներից էին առաջ անցնում ու խաչաձև կրակի ներքո արդեն ոչ թե թիկունքից, այլ դիմահայաց նկարում առաջ գնացող մեր զինվորներին:

Եվ վերջապես, երրորդ բարդությունը տեխնիկական պայմաններն էին, որոնք այսօր պատկերացնելն իսկ դժվար է հեռահաղորդակցման այժմյան հնարավորություններում, երբ ականատեսի գրառումներդ մարտական գործողություններից հետո պետք է փորձեիր հոդվածի վերածել և ապա հասցնել Երևան՝ այստեղ կամ աշխարհի որևէ անկյունում տպագրելու համար: Այդ պայմաններում լրագրողների համար մեծագույն հարստություն էին Ստեփանակերտ բերված առաջին ֆաքսերը, որոնք ձեռագրային էջերդ հեռապատճենման սկզբունքով, հաճախ գրեթե անընթեռնելիության հասնող ջնջվածությամբ էին փոխանցում երևանյան հասցեներով, ուր դառնում էին էլեկտրոնային շարվածք և հանձնվում տպագրվող թերթի էջերին:

Նույնը վերաբերվում է և ֆոտո ու կինոլրագրողներին, որոնց տեսախցիկները անհոսանք ճակատային գծում շարունակաբար լիցքավորում էին «պահանջում» իրենց տերերից, ուր զրահամեքենաներն ու մարտական «Վիլիսներն» իրենց մարտկոցներով նրանց համար ընկալվում էին որպես հոսանքի աղբյուր և լիցքավորման միջոց:

Եվ ինչպես հաղթանակը ձեռք բերվեց անասելիորեն ծանր ձևով, այնպես էլ պատերազմական լրատվությունը և պատերազմական տարիների ամեն մի վավերական տողն ու կադրը ծնվեցին նույն այդ անասելի դժվարությամբ:

Պատերազմական տարիների լրատվությունն այսօր պատմություն է դարձել, փոխարենը, սակայն, շարունակվում է լրատվական

պատերազմը, և այս պատերազմում իր կարևոր դերն ունի նաև պատերազմական անցած լրատվությունը ճիշտ և վարպետորեն ներկայացնելը:

Ճիշտ ներկայացնելը այն լրատվության, որի տողերն ու կադրերը գալիս են վկայելու, թե ինչ ճանապարհ անցավ արցախահայությունը, և թե հայաթափման ինչ վախճան էր սպառնում նրան, եթե դատապարտված չլիներ հաղթելու:

Ադրբեջանի այսրօրվա լայնածավալ քարոզչական պատերազմի ստին ու կեղծիքին որպես պատասխան պետք է ներկայացնել լրատվական մեզ ավանդված այս պատմությունը, որի միջոցով մեզ հասած կենդանի վավերագրությունը պետք է լինի այսօրվա լրատվական պատերազմի գլխավոր զենքերից մեկը՝ դիվանագիտական հմտությունների, Արցախի տեղագրության և ռազմատեխնիկական գիտելիքների հմուտ զուգակցմամբ:

ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արցախյան պատերազմը եկավ ևս մեկ անգամ հավաստելու այն օրինաչափությունը, որ բոլոր պատերազմներում առաջին հերթին տուժում են երեխաները:

Տարիքային ամեն մի խմբի համար պատերազմը մի ձևով էր բեկվելու: Մինչև երկու–երեք տարեկանների համար՝ որպես պայթյունի չգիտակցված մի սարսուռ և հոգնեցնող ընթացք ծնողների գրկում գաղթի ճամփաներին: Չորսից վեց տարեկաններին փոխանցվելու էր դարերի ընթացքում սերունդների մեջ խորը նստվածք տված սարսափը գաղթի ու կոտորածի հանդեպ: Յոթից տասը տարեկանները փորձելու էին հասկանալ, թե ինչ էին ուզում իրենցից, իրենց ծնողներից ու հարևաններից, և որն է իրենց բոլորի մեղքը: Տասից բարձր եղող երեխաներն արդեն հասկանում էին, որ իրենց մեղքը հայ լինելն է, որից կամ պետք է հրաժարվել և կամ էլ կռվով տեր կանգնել իրենց հայությանը: Այս իրողության գիտակցումն ուղեկցվելու էր նաև հոգեբանական այն շրջադարձով, որն իրենց ծնողներն ապրեցին 1988–90 թթ., երբ ԽՍՀՄ–ի՝ որպես միասնական մի երկրի քաղաքացուց դարձան իրենց երկրամասի համար պայքարող զինվորներ: Նման ձևով իրենք պիոներներից ու կոմերիտականներից էին դառնալու ապագա զինվորներ՝ իրենց գիտակցության մեջ ազգային վերահմաստավորման ենթարկելով Խորհրդային Միության ռազմահայրենասիրական այն դաստիարակությունը, որն ստացել էին մինչ այդ:

Պատերազմական տարիների ամեն մի օրը, շաբաթը և ամիսը նրանց մոտեցնելու էր զինվոր դառնալուն՝ արժեքային յուրօրինակ մի համակարգ ձևավորելով թե՛ տղաների մոտ և թե՛ տղաների հանդեպ համապատասխան չափանիշներ մշակելով՝ աղջիկների մոտ:

Պատերազմական տարիներին «կռիվ–կռիվը» խաղից վերածվեց իրականության, և խաղ դարձավ հենց խաղաղ կյանքի պատրանքը ստեղծելը, գրեթե վերացական մի պատրանք, որովհետև շատ դժվար էր ռմբակոծվող տների նկուղներում ապրելով տուն–տունիկ խաղալը, երբ նկուղներում հաճախ տեղ չէր լինում տուն–տունիկի «իրերի» և տիկնիկների համար, որոնք մնացել էին վերևում՝ տների ու բնակարանների սենյակներում և կամ էլ նրանց փլատակներում:

Պատերազմն իր կնիքը դրեց նաև դպրոցական կյանքի վրա: Արցախում 1990–1994 թթ. դպրոցների գործունեությունն ուղիղ համեմատական էր ընդլայնվող պատերազմի պայմաններում կիրառվող զինտեխնիկայի կրակային հզորությունների և կրակի ընդգրկման շառավղի ընդլայնմանը: Ահա այս պատճառով է, որ սկզբնապես հրացանի և անգամ «ավտոմատի կռվի» շրջանում, երբ մարտերը ծավալվում էին սահմանամերձ բնակավայրերի հանդերում, դպրոցներում պարապմունքները չէին դադարեցվում, որովհետև ավտոմատի հարվածային ուժի ընդգրկած շառավիղն իր հեռահարությամբ մինչև դպրոց չէր հասնի:

Իրավիճակն էականորեն փոխվեց հրետանու կիրառումից հետո, որն անհամեմատ ընդլայնելու էր թե՛ հարվածի ընդգրկման շառավիղը և թե՛ հարվածի ավերիչ ուժը: Քանի որ հրետանային տարբեր կայանքներն ավելի նպատակային են հարվածում հատկապես բարձունքներից, բարձունքների համար մղվող պատերազմն Արցախում յուրօրինակ ձևով վերածվելու էր նաև դպրոցական պարապմունքների փակվելու և վերսկսվելու պարբերական մի ընթացքի:

Ինչպես երկրաշարժից հետո աղետի գոտու բնակիչներին երկար ժամանակ սարսափ էր պատճառում անգամ անցնող տրամվայից գետնի ցնցվելը, այնպես էլ պատերազմական տարիներին Ստեփանակերտի երեխաների աչքերի բիբերը սկսում էին անբնականորեն խոշորանալ երկնքից եկող յուրաքանչյուր օդային ալիքից ու տատանումից՝ լիներ դա ամպրոպ, մինչև Շուշիի ազատագրումը օդային ճանապարհով օգնություն բերող ուղղաթիռի հոնդյուն թե ուժեղ քամի:

1993 թ. մայիսի վերջին, երբ հեռահար հրետանին դեռևս ավերում էր Ստեփանակերտը, ուր կենտրոնացել էին Շահումյանի ու Մարտակերտի գրավյալ մասի գաղթականները, զարմանալի մի լավատեսությամբ և ասես խաղաղ կյանքի տարիների վերհուշով ստեփանակերտցիներից մեկը հառաչելով ասաց, որ գոնե հունիսի մեկին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը չկրակեն: Հունիսի մեկին, ասես չար մի զուգադիպությամբ թե դժբախտ օրինաչափությամբ, կույր ռմբակոծումների ալիքը քաղաքի բակերից մեկում խլեց ևս երկու մանկական կյանք, որով կյանքը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ թե՛ երեխաների պաշտպանության միջազգային օրը և թե՛ տարբեր այլ միջազգային օրեր չեն կարող երաշխիք լինել երեխաների պաշտպանության համար, և որ գլխավոր երաշխիքը կարող է լինել հակառակորդի կրակակետերի լռեցումը և Արցախի շուրջ անվտանգության գոտու ստեղծումը, որն իրականացվեց մինչև հաջորդ տարվա՝ 1994 թվականի մայիսը, երբ կնքվեց զինադադարը:

«ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՋՈՒՐԸ»

Ասում են՝ հայրենիքի ջուրն առավել քաղցր է օտարությունից վերադառնալուց հետո: Հայրենիքի ջուրը, սակայն, անպատմելի կենարար մի քաղցրություն ունի, երբ այն խմում ես կորստյան ամիսների սրտամաշ սպասումից և այդ սպասմանը հաջորդած ազատագրական դաժան մարտերից հետո:

1992 թ. ամռան պարտությունից հետո Մարտակերտի գրավյալ շրջանի ազատագրման յուրօրինակ մի խորհրդանիշն էր դարձել Կիչան–Չլդրան ճանապարհին Չլդրանի մոտ գտնվող աղբյուրը:

Մարտակերտի ազատագրումը քանի որ պետք է սկսվեր Կիչան–Չլդրան ուղղությամբ առաջ շարժվելով, ուստի այս աղբյուրին հասնելը դարձել էր ճակատի գիծը առաջ տալու և առաջ գնալու խորհրդանիշը:

Մարտակերտի ընկած բնակավայրերի բնակչությունը որպեսզի չցրվի, բավականին յուրօրինակ ձևով էր պահում իր հավաքական ամբողջությունը: Ապահով բնակավայրերի դպրոցներում, նրանք որպես ներքին մի ամբողջություն, առանձին դասարաններ էին կազմում, գյուղատնտեսական փրկված տեխնիկան ևս առանձին էր պահվում: Փորձ էր արվում կազմակերպել վարչական շրջանային միավորների գործունեությունը:

Նույն այս համաբանությամբ Մարտակերտի գունդն էր հիշեցնում ընկած շրջանը, քանի որ գնդի գումարտակների վաշտերից յուրաքանչյուրը կազմված էր ընկած այդ բնակավայրերի բնակիչ–զինվորներից:

Փետրվարին սկսված հակահարձակման նախօրեին այս գնդի՝ Չլդրանի վաշտի զինվորներից մեկը Կիչանի առաջին դիրքերում լռության պահերին որքան էլ փորձում էր լսել Չլդրանի աղբյուրի ջրի խշշոցը, այնուամենայնիվ չէր կարողանում և չէր կարողանում

իրեն ներշնչել, թե լսում է, որովհետև ասում էր, թե այդ աղբյուրի ջրի ձայնն անգամ ուրիշ է:

Սկսվելիք հակահարձակման տանջալիորեն ձգվող օրերին նա մի անգամ ասաց, եթե իրենց աղբյուրից չի խմելու, գոնե մի անգամ տեսնի այն:

Բարեբախտաբար, թե՛ նա և թե՛ Մարտակերտի գնդի մյուս զինվորները, ովքեր վերապրեցին և հասան գոնե Չլդրան–Դրմբոն ճանապարհին, նրանք խմեցին Չլդրանի աղբյուրից:

Աղբյուրը քիչ այն կողմ էր գտնվում մարտական գործողությունների ճանապարհից, և մարտերով առաջ ընթանալիս, բնականաբար, հնարավոր չէր ճանապարհը թեքել դեպ աղբյուրը: Փետրվարի սկզբին, երբ Չլդրանն ամբողջապես ազատագրվել էր, ճակատի գիծն առաջ շարժվելուց առաջ կանգ առավ Դրմբոնի դիմաց, ու թեկուզ և կարճատև ժամանակի համար, սակայն նոր դիրքեր հաստատվեցին դիրքային հերթապահությամբ, և Կիչան–Չլդրան–Դրմբոն ճանապարհին զորային նոր տեղաշարժին ու վերադիրքավորմանը զուգընթաց սկսվեց յուրօրինակ մի ուխտագնացություն՝ ուխտագնացություն «հայրենիքիս ջրին»՝ Չլդրանի աղբյուրին: Աղբյուրի մոտ բեռնատարների արագ ընթացքը մի պահ ահռելի ճռինչով կանգնեցնում և թափքից ներքև թռչելով խմում էին Մարտակերտի գնդի զինվորները:

Դիրքերում մարդիկ արագորեն ոչ թե բարեկամանում են, այլ հարազատանում: Կիչանի դիրքերում այսպես հարազատացած չլդրանցի զինվորի մասին էի մտածում Մարտակերտի շրջանի նորից սկսված պատմության առաջին օրվա՝ գյուղի ազատագրման առաջին օրվա այդ երեկոյին, որպես այդ ուխտագնացության մի մասնակից, երբ տեսա այդ զինվորին:

Ետ էր դարձել Դրմբոնի դիմացի դիրքերից «հայրենիքիս ջուրը» խմելու ու նորից նոր դիրքերը վերադառնալու համար:

Մյուսների նման նա ևս հուզմունքից գրեթե դողդողալով թռավ բեռնատարից ու միանգամից ծնկի եկավ աղբյուրի առջև և սկսեց անհագորեն խմել: Ջուրը խմողին թեև չեն խանգարում, սակայն Կիչանում անցկացրած օրերի իրավունքով մեղմորեն փորձեցի ընդ-

հատել, ասելով, որ այդքան պետք չէ խմել: Զայրացած գլուխը վեր բարձրացրեց և տեսնելով, որ ես եմ, հանդարտվեց ու ասաց. «Ես խմում եմ այսօր այստեղ չեղող մեր բոլոր չլդրանցիների ու մարտակերտցիների տեղը, որ նրանք էլ ետ վերադառնան»:

Ռազմաճակատի առաջ շարժվող գծի ճանապարհին ես այլևս չտեսա Չլդրանից եղող այդ զինվորին: Դժբախտաբար, անգամ անունը մոռացա և երբ առիթներ եղան անցնելու Մարտակերտի շրջանով, ծանոթ ու անծանոթ հայացքների մեջ որոնել եմ նրան: Մի անգամ հեռավոր ծանոթ մի դեմք տեսնելով, ներքին մի հույսով ենթադրելով, թե նա է, ասացի կարող է ինքը Չլդրանի ազատագրման օրը ջուր է խմել այդ աղբյուրից: Յուրօրինակ մի ընդհանրացմամբ նա ասաց, որ այդ օրը բոլորս էլ խմեցինք այդ աղբյուրից և կատակախառն հանդիմանանքով խոսքն ինձ ուղղեց. «Իսկ դու միայն կանգնած էիր, փոխանակ խմելու»: Պարզվեց, որ թեև նա իմ որոնած զինվորը չէ, բայց այդ օրը տեսել եմ նրան այդ աղբյուրի մոտ, և ինքն էլ հիշում էր ինձ:

Արդեն հեռավոր դարձած այդ օրը, երբ սկսվեց Մարտակերտի շրջանի ազատագրումը, հակառակորդն իր հետախույզների միջոցով կամ էլ մեքենաների վառված լույսերից իմացավ, որ այստեղ մարդկային մեծ կուտակումներ կան և հրետանին սկսեց աշխատել այս ուղղությամբ: Արկերի բեկորները, դիպչելով դիմացի ժայռերին, կայծկլտալով թռչում էին, իրենց հրե ցոլքը հաղորդելով լուսնի գունատ լույսի տակ հազիվ փայլող ձյանը և ընկնելով ներքև՝ իրենց շիկացածության թշշոցով սառած ձյունը մի ակնթարթում վերածում էին եռացող ջրի, ապա դառնում մետաղյա սառած բեկորներ:

Չլդրանին հաջորդեց Դրմբոնի ազատագրումը: Հակահարձակումից առաջ զինվորները կատակելով ասում էին, որ Դրմբոնի ազատագրումն առանձնակի միջազգային նշանակություն ունի: Տեղացի չլինելով և չհասկանալով այդ կատակի իմաստը՝ կարծում էի, թե այդպես են ասում Դրմբոնի ունեցած ռազմավարական նշանակության համար: Պարզվեց սակայն, որ պատճառը միանգամայն այլ էր: Ինչպես արցախցիներն են ասում, աշխարում երեք Բոն կա՝ Բոնը, Լիսաբոնը և Դրմբոնը: Եվ ինչպես իրենք էին ասում, ու գոնե

այն ժամանակ իրապես անկեղծորեն էր ինչում ասվածը, թե վերջին Բոնը իրենք երբեք չեն փոխի առաջին երկուսի հետ:

Հիմա անճանաչելիորեն փոխվել և բարեկարգվել են Կիչան–Չլդան–Դրմբոն ճանապարհը և նրա շրջակայքը: Վերջերս Մատաղիս գնալով՝ ետ դառնալիս դարձյալ այս աղբյուրի մոտ եկա, ուր հավաքվել էին մի խումբ գործարարներ և զբոսաշրջիկներ:

Երևանից եկած մի երիտասարդ տղա, ով երևի թե իրապես ժամանակակից փայլուն կրթություն էր ստացել և խոսում էր Արցախում զբոսաշրջությունը նոր որակով կազմակերպելու մասին, շրջվելով դեպ այս աղբյուրը, ասաց, թե ինչպես կարելի է անել, որ այն զբոսաշրջիկների համար առավել գրավիչ դառնա: Երբ ասաց, որ այն հարկավոր է առավել գրավիչ դարձնել զբոսաշրջիկների համար, սիրտս ուղղակի կուչ եկավ: Կինոժապավենի արագացված ընթացքով աչքերիս առջևով անցան այս աղբյուրին խոնարհվող զինվորները, շրջակայքում թափված բենզինի ու դիզվառելիքի մեջ շուռ եկած դեղորայքի արկղը՝ թափված դեղահաբերով, այս ու այնկողմ ընկած արյունոտ վիրակապերը բեռնատարների մեծ անիվներից ակոսված արցախյան սևահողում, լուսնի լույսի տակ փայլող կրակված պարկուճներն ու պայթած արկերի բեկորները, և անակնկալորեն շուրջս լցվեց հրետանային համազարկերի միջից հնչող «հայաստանցիների» գրական հայերենով ու տեղացիների բարբառով: Ներքին ալեկոծման հաջորդ պահին, սակայն, հասկացա, որ մեր տարած հաղթանակի և հայոց մեր զույգ պետականությունների անկախության հռչակման և զինադադարի ամենամեծ նվաճումներից մեկը կլինի այն, որ Արցախի սահմանները այսուհետ ևս այնպես աներեր մնան, որ Չլդրանի աղբյուրը շարունակի «հայրենիքիս ջուրը» մնալ միայն անցած այդ օրերը վերապրածների համար, իսկ նոր սերունդը որոնի այն ուղիները, որոնք այս աղբյուրը առավել գրավիչ դարձնեն զբոսաշրջիկների համար...

ԱՐՑԱԽԻ «ՏԱՏԻԿՆ ՈՒ ՊԱՊԻԿԸ»

Արտաքուստ կարող է թվալ, որ իրար հետ անհամատեղելի են պատերազմ և մշակույթ հասկացությունները: Արցախյան պատերազմը, սակայն, եկավ վկայելու, որ պատերազմը մշակույթի հետ հարաբերվում է երեք ձևերով: Առաջին՝ ոչնչացնում է մշակույթը, երկրորդ՝ նոր մշակույթ է ստեղծում, և վերջապես երրորդ՝ հարաբերվելով պատերազմի արդյունքի՝ հաղթանակի կամ պարտության հետ, հաղթանակի կամ պարտության առաջ բերած հոգեվիճակի տեսանկյունից են ժողովուրդներն ու անհատներն իմաստավորում ու արժևորում մինչ այդ ստեղծված մշակույթը, հաղթանակի դեպքում՝ իրենց տերը զգում պատմության ու մշակույթի, իսկ պարտության դեպքում՝ պարտվածության ժխտողական հոգեբանությունը տարածում պատմության ընթացքում ստեղծված արժեքների վրա:

Այսպիսով, ինչպես որ պատմական կատարված որևէ իրադարձություն, նույնը մնալով հանդերձ, պատմական տարբեր իրավիճակներին համահունչ ձևով է գնահատվում ու վերաիմաստավորվում, այնպես էլ մշակույթի տարբեր կոթողներ, իրենց ամբողջանալուց հետո նույնը մնալով դարերի հոլովույթում, միանգամայն տարբեր ընկալումների ու բնորոշումների են ենթարկվում պատմական–աշխարհայացքային տարբեր իրավիճակներում:

1983 թ., երբ ընկերներիս հետ Արցախում բնակավայրից բնակավայր էինք գնում, Քոլատակից կոլտնտեսության վարորդը, Կաչաղակաբերդի կողմից մեզ «Վիլիսով» գյուղ իջեցնելիս ցույց տալով լեռնային ճանապարհի երկայնքով տարածված մատուռները և խաչքարերը, դառնությամբ ասաց, որ մեր պապերը եթե այս ամենի փոխարեն բերդեր ու աշտարակներ կառուցած լինեին և զենք առնեին, ապա Ադրբեջանը մեզ այսօր չէր կարողանա պարտադրել այն, ինչ որ արեց Նախիջևանում:

Ուղիղ տասը տարի հետո ես նրան հանդիպեցի Մարտակերտի ճակատում՝ ձեռքի գնդացիրը ուսին դրած առաջ գնալիս: Երբ հիշեցինք իրար, ասաց, որ 1988–ից վարորդությունը թողել է և զենք վերցրել, որպեսզի զենքով պաշտպանի մեր պապերի կառուցածը:

Այդ տասը տարիների ընթացքում ոչ վանքերը և ոչ էլ խաչքարերը որևէ ձևով չէին փոխվել: Փոխվել էր պատմության և մշակույթի արցախյան ընկալումը: 1980–ական թթ. առաջին կեսին Արցախին իրապես սպառնացող նախիջևանյան տարբերակը դառնության այն զգացումն էր առաջ բերել, թե ում համար են մեր պապերը ստեղծել այս ամենը, եթե մենք չենք մնալու մեր հողի ու այդ հողի վրա ստեղծվածի տերը:

1988 թվականից հետո, երբ արցախահայությունը պատմաքաղաքական նոր իրավիճակում հնարավորություն ստացավ տեր կանգնելու իր երկրին, նույն այդ կոթողներն արդեն դարձան անցյալի այն ժառանգությունը, որը պետք է զենքով պաշտպանվեր ներկայի հետ միասին:

Բոլոր ժամանակներում պատմության բազմաշերտ ընկալման ամենախոսուն արտահայտությունները դառնում են քարեղեն կոթողները, որոնց խտացած լռությունն ավելի խոսուն ու հնչուն է դառնում, քան անգամ երգը: Այս իրողությունը Արցախում հավաստվեց երկրամասի հավաքական խորհրդանիշը դարձած «Մենք ենք մեր սարերը» տուֆե քանդակով, որը հեղինակել է Սարգիս Բաղդասարյանը 1967 թ.: Ժողովուրդն ի սկզբանե այն անվանեց նաև «Տատիկ ու պապիկ» և կամ էլ արցախյան բարբառով՝ «Բաբոն ու պապիկը»:

Նայելով այս կոթողին՝ ակամայից հիշում ես Գյոթեի նշանավոր այն խոսքերը, թե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է:

Եվ այս կոթողն իրապես քարացած մի երգ է, որը միանգամայն տարբեր ելևէջումներով հնչեց իր կառուցման օրից մինչև այսօր ընկած համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Մինչև 1988 թվականը «Տատիկի և պապիկի» հայացքում խտացած էր այն ողբերգական լուռ ցասումը, որը կար ամեն արցախցու

սրտում Արցախին պարտադրված ապագայի համար, և պատահական չէ, որ «Տատիկն ու պապիկը» համեմատվում էր Արարատի մեծ ու փոքր գագաթների հետ, որը միաժամանակ խորհրդանշում էր թե՛ Արցախի հարատևումը մեր բիբլիական լեռան նման և թե՝ ենթագիտակցական այն վախը, որ հանկարծ մի օր էլ նա չարժանանա մեր Մայր լեռան ճակատագրին:

Քարացած այդ ցասումը պայթեց 1988 թվականի փետրվարին Ստեփանակերտի հրապարակում, ուր «Մի՛-ա՛-ցո՛ւմ» վանկարկող ժողովուրդն ասես գծագրում էր «Տատիկին ու պապիկին»:

Փետրվարյան այդ օրերին հաջորդող շրջանում՝ մինչև 1992 թ. մայիսի ութը, նա դարձավ նախ ոգեղեն մի պատվար Խոջալուից դեպ Ստեփանակերտին սպառնացող ճանապարհին և ապա՝ Շուշիին ուղղված զսպիչ մի հայացք:

1992 թվականի հաղթական գարնանը հաջորդած ամառային ծանր պարտություններին և այս կոթողի մոտով դանդաղորեն քայլելով Ստեփանակերտ մտնող գաղթականների քարավանին դեմ հանդիման՝ վերստին բնազդական այն վախը ծնվեց, թե արդյոք «Տատիկն ու պապիկը» չի՞ դառնալու կարոտի ու մորմոքի և կորսվածության արցախյան խորհրդանիշը՝ արարատաձև իր գծագրմամբ:

Մեր ժողովրդի հավաքական կամքով, սակայն, երբ ռազմաճակատում սկսվեց բեկումը, 1993 և 1994 թվականների պատերազմական դաժան ձմեռներին «Տատիկն ու պապիկը» մեր լեռների նման հանդարտ ու աներեր հայացքով ուղեկցում էին Ստեփանակերտից Մարտակերտի ճակատ մեկնող Պաշտպանության բանակի զորամիավորումներին:

1994 թվականի մայիսից հետո նրանք վերստին դարձան Արարատաձև՝ բայց արդեն հաղթական ու վերագտնված հավերժության խորհրդանիշը՝ իրենց հայացքներով մարմնավորելով արցախահայության ապագան:

Եվ բոլոր նրանք, ովքեր դժվար է ասել, բա՞խտը, թե՞ դժբախտությունն են ունեցել տեսնելու Արցախի «Տատիկի ու պապիկի» հայացքի իրարահաջորդ հնչուն այս ելևէջումները, նրանց կյանքը վերածվել է անտեսանելի քարեղեն մի երդումի՝ ապրել հայրենիքի հանդեպ այնպիսի մի նվիրումով, որ այլևս էլ երբեք չփոխվի Արցախի «Տատիկի ու պապիկի» դեմքի արտահայտությունը: Եվ եթե յուրաքանչյուր հոբելյան իմաստավորումն է նաև տեղի ունեցած իրադարձության, զինադադարի հաստատման 20-րդ տարեդարձի կարևորագույն պարտականություններից մեկը պետք է լինի հետպատերազմյան այսօրվա և հաջորդող սերունդներին հիշեցնել, թե ինչ գնով է ձեռք բերվել «Տատիկի ու պապիկի» այսօրվա հայացքը, և այդ հանդիսությունները պետք է դառնան հավաքական մի երդում՝ արցախյան կապույտ ու մաքրամաքուր երկնքին հանդիման միշտ անխոով ու հաստատուն պահել «Տատիկի ու պապիկի» այսօրվա հայացքը:

ԹԻԿՈՒՆՔ ԵՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

Մինչ Արցախյան պատերազմի սկսվելը մենք արդեն ունեինք թիկունքի մեր ձևավորված ընկալումը եռաստիճան բաժանմամբ՝ մերձճակատային գոտի, թիկունք և խորը թիկունք: Նման ընկալումը փոխանցվել էր ոչ թե ռազմական արվեստի պատմությանը նվիրված գործերից, այլ մեր ավագներից, նրանց ապրած կյանքից և Մեծ հայրենականին նվիրված ստեղծագործություններից, որոնք ընթերցելիս կամ դիտելիս անպատկերացնելի էր մտածել, որ թիկունք և ռազմաճակատ հասկացությունները մի օր վերակենդանանալու են մեր կյանքում: Անգամ Արցախյան շարժման սկզբում էր դժվարհավատալի:

Շարժման՝ աստիճանաբար պատերազմի վերածվելուն զուգընթաց, «սահմանամերձ գյուղեր» հասկացությունն սկսեց երկատվել՝ բաժանվելով դիրքերի ու թիկունքի:

Արցախյան պատերազմի գլխավոր յուրահատկություններից մեկն այն էր, որ պատերազմի ընթացքում պարզվեց, որ թիկունքն ավելի շատ բաժանվում է ոչ թե մերձճակատային և խորը թիկունքների, այլ խիտ և նոսր բնակեցված: Պարզվեց, որ այնտեղ, ուր կա ժողովուրդ, այնտեղ դիրքերի թիկունքում կենդանի հայրենիքն է, և ուր չկա կամ քիչ է ժողովուրդը, այնտեղ հայրենի տարածքներն են:

Մեծ և ուսանելի խորհուրդ կա այն իրողությունում, որ թե՛ պարետային բռնությունների և թե՛ հաջորդող պատերազմի տարիներին, եթե չհաշվենք Շահումյանի ու Մարտակերտի հյուսիսի անկումը, մնացյալ բոլոր դեպքերում թե՛ պարետային իշխանությունների ու ՕՄՕՆ–ի կողմից հայաթափվել և թե՛ պատերազմի ժամանակ գրավվել են ոչ թե այն բնակավայրերը, որոնք առավել ճակատային ու սահմանային են եղել, այլ նրանք, որոնք սակավամարդ կամ անբնակ էին:

Թիկունքն այսպիսով՝ դիրքերին առաջին հերթին թիկունք է լինում իր տներին տեր կանգնող ժողովրդով: Դիրքերում զինվորները դիմահայաց գծում գտնվող հակառակորդից եթե պաշտպանվում են խորը և ամուր փորված խրամատների ինժեներատեխնիկական կառույցներով, որոնց մեջ բացված դիտակետերից իրենց հայացքն ու կրակային հզորությունների փողերն են ուղղում դեպ հակառակորդը, ապա իրենց թիկունքում էլ զգում են մերձակա բնակավայրերի բնակչության հավաքական շնչառությունը, որը վերածվում է դիրքերը պահելու թիկունքային պատվարի:

Արցախյան պատերազմը եկավ հավաստելու այն իրողությունը, որ դիրքերը ետուառաջ են տրվում ամայի բնակավայրերում, տակտիկական նահանջները և կամ էլ հակառակորդին ներս քաշելով՝ ծուղակի մեջ առնելն իրականացվում են դարձյալ ամայի բնակավայրերում:

Պատերազմի ժամանակ, սակայն, թիկունքից մի հատված հանձնելը հավասարազոր է դառնում հայրենիքի այդ հատվածը ազատագրումից հետո վերահսկվող տարածք դարձնելուն, որովհետև ռազմաճակատի գիծը թիկունքի վրայով այնպես է անցնում, ինչպես զրահատեխնիկայի թրթուրները մարդկային մարմնի վրայով:

Ռազմաճակատի գիծը ետ ու առաջ է տանում բանակը, իսկ թիկունքի գիծը՝ ժողովուրդը:

Թիկունքը, սակայն, միայն մերձճակատային տարածություն չէ, այլև տեղահան եղած ու գաղթական դարձած ժողովուրդը: Ազատագրված բնակավայրերը ազատագրված հայրենի տարածքից վերստին հայրենիք են դառնում, երբ նորից իրար են գտնում ազատագրված այդ բնակավայրերն ու այնտեղ վերադարձած ժողովուրդը:

Այդ բնակավայրերում երեկոյան վառված յուրաքանչյուր ճրագ, քամուց թրթռացող պատրույգ ու բոցեղեն լեզվակ հայրենիքի լույսն էր պատից պատ գցում և ապա տարածում դրսում՝ հասնելով մինչև դիրքերը:

Մարտակերտի հյուսիսում, երբ մեր դիրքերն անցնելով Թալիշից այն կողմ՝ հասան Միր Բաշիրի դիմահայաց բարձունքներին, հաջորդած զինադադարի սկզբում բնազդական ներքին մի վախ էր առաջանում, երբ նայում էիր Միր Բաշիրի վառվող լույսերին, ապա շրջվելով տեսնում մեր թիկունքում տարածվող խավարը, որի մեջ առկայծում էին մի քանի լույսեր Թալիշում ու Մատաղիսում, որոնք վառվում էին այս բնակավայրերի՝ զորամասերի վերածված մի քանի տներում:

Դիրքերից առավել հեռու, ըստ այդմ և ավելի ապահով էր Մատաղիսը, և դիրքերում անպատմելի մի զգացում առաջացրեց այն գիշերը, երբ նկատեցինք, որ գյուղի տուն–զորանոցներից դուրս ևս մեկ լույս է վառվում: Մի կարճ քննարկումից հետո, որ միգուցե բանակային ստորաբաժանման մի որևէ նոր միավոր է, որոշեցինք ռացիայով ճշտել, և պարզվեց, որ առաջին բնակիչն է վերադարձել Մատաղիս: Այդ գիշերվանից Մատաղիսը մեզ համար համապատասխան կոորդինատներ ունեցող ստրատեգիական կետից վերստին վերածվեց բնակավայրի:

Ինչպես անսովոր ուրախության պահերին է լինում, անակնկալ կերպով գտնվեց նաև օդին, և մաղթեցինք, որ Մատաղիսի այդ մի լույսը տասը ու ավելի դառնա և ապա հասնի նաև Թալիշ: Զինվորներից մեկը կատակով ասաց, թե էլեկտրիկ էլ դարձանք, և, այնուամենայնիվ, մեծ խորհուրդ կար այդ խոսքերում, որովհետև ամայացած տարածքներում վերստին հայրենիքն էր դանդաղորեն առաջանում՝ իր լույսերը տարածելով:

Այդ գիշերվանից մարտական ամենօրյա ամփոփագրերի խաղաղության հավելվածը դարձավ ավելացող լույսերը հաշվելը: Այդ լույսերը կարծես տարբերվում էին զորանոցային լույսերից իրենց ջերմությամբ՝ դիրքերից թիկունք տարածության վրա ստեղծելով ընտանեկան հարկի պատրանքը:

Զինադադարի սկսված շրջանում՝ մինչ զորացրվելս, Մարտակերտի ճակատում բախտ եմ ունեցել լինելու ռազմաճակատի առաջ գնացած գծի ողջ երկայնքով գտնվող դիրքերում և գիշերները նայելու դիրքերի թիկունքում վառվող լույսերին, այն լույսերին,

որոնք մեծագույն գնահատանքն ու վարձատրությունն են դարձել պատերազմական ճանապարհներին անցկացրած մեր բոլոր օրերի, շաբաթների, ամիսների և տարիների:

Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո էլի նույն ձևով նայել եմ սահմանամերձ բնակավայրերի լույսերին և տարիների հեռվից ներքին մի վախով մտածում եմ, որ եթե վերստին առիթն ունենամ այդ բարձունքներից նայելու նրանց թիկունքում գտնվող բնակավայրերին, այդ լույսերը որքանով ավելացած կամ պակասած կգտնեմ:

Զինադադարին հաջորդող այս շրջանի գլխավոր ողբերգությունը դարձավ այն, որ պատերազմի ժամանակ ռազմաճակատի գծին զուգահեռ առաջ շարժված թիկունքի գիծն այսօր գնալով նոսրանում է, և աստիճանաբար մեր Հայրենիքից դուրս են սկսում վառվել նաև նրանց լույսերը, ովքեր 1991–1994 թվականների պատերազմական ձմեռներն անցկացրեցին Հայաստանի և Լեռնային Արցախի հանրապետություններում:

Ինչպես որ պատերազմական տարիների մարտական ամփոփագրերում նշվում էին ռազմաճակատի այս կամ այն հատվածի առաջ կամ ետ գնալը, այնպես էլ այսօր մենք պետք է կազմենք թիկունքի գծի ամենօրյա վիճակագրությունը, եթե վաղը ցանկանում ենք պահել այսօրվա դիրքերը:

Պատերազմի ժամանակ դատում են դասալիքներին: Խաղաղության ժամանակ, սակայն, ոչ թե պետք է մեղադրել արտագաղթողներին, այլ մտածել երկիրն այս վիճակից հանելու մասին:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԻՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Խորհրդային տարիներին, երբ առիթներ էին լինում քննարկելու Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը, բնականաբար, ենթադրվում էր, որ ինքնավար մարզի շրջաններից յուրաքանչյուրը նույն ձևով առանձին մի շրջան կդառնար Խորհրդային Հայաստանի կազմում, որովհետև որքան անհեթեթ էր Հայաստանին կից հայկական ինքնավար մարզ ստեղծելը, կրկնակի անհեթեթ կլիներ ՀԽՍՀ–ի կազմում հայկական ինքնավար մարզի գոյությունը:

Սակայն այստեղ առաջանում էր մի էական հարց, իսկ ինչ կլինի Ստեփանակերտը: Մի մասը գտնում էր, որ նա շրջակա մի շարք բնակավայրերի հետ կդառնա մի նոր շրջկենտրոն, մյուսները կարծում էին՝ հանրապետական նշանակության քաղաք՝ Գյումրիի ու Վանաձորի նման:

Յուրաքանչյուր տարբերակի համար որոշակի հիմնավորումներ էին փորձում գտնել և ներկայացնել ԽՍՀՄ ղեկավարությանը՝ ապացուցելու համար նման ծրագրի տնտեսական նպատակահարմարությունն ու համապատասխանությունը «լենինյան ազգային քաղաքականությանը»:

1983 թվականին, երբ ընկերներիս հետ Արցախում էի և զգուշորեն խոսում էինք այս մասին տարբեր տեղերում, անկեղծ մի ոգևորությամբ շատերը նույնիսկ ասում էին, որ թող գյուղ դառնանք, բայց Հայաստանին միանանք:

Այն ժամանակ հնարավոր իրական և անիրական բոլոր տարբերակներից որևէ մեկի փոխարեն պատմության անիմանալի ընթացքը, սակայն, Ստեփանակերտին վերապահելու էր միանգամայն մի այլ տարբերակ, որը չէին կարող պատկերացնել անգամ ամենաշքեղ երազողները:

Եվ նրանք, ովքեր այդ տարիներին ապրել են Արցախի ապագայի մտատանջություններով ու շքեղ երազներով, նրանց համար ԼՂՀ հռչակումից անգամ ավելի քան քսան տարի անց, թերևս, դարձյալ մի երազ է թվում այն, որ Ստեփանակերտին վիճակված էր դառնալու Հայոց երկրորդ պետականության մայրաքաղաքը:

Բոլոր պատերազմներում գլխավոր հարվածը փորձում են հասցնել մայրաքաղաքներին: Արցախում, սակայն, այդ հարվածը միանգամից սկսվեց հենց Ստեփանակերտից, և այն դարձավ պաշարված հանրապետության պաշարված մայրաքաղաքը՝ որպես ներքևում տարածված մի թիրախ Շուշիի համար:

Շուշիի ազատագրմանը հաջորդած ադրբեջանական բանակի ամառային հարձակումից հետո սկսվեցին օդային ռմբակոծությունները, որոնք մոռացնել տվեցին անգամ Շուշիի ազատագրմանը նախորդող մղձավանջային շաբաթները:

Հակաօդային պաշտպանության համակարգի հստակ կիրառումից հետո Ստեփանակերտն սկսեց փլատակների վերածվել հրետանուց՝ ողջ քաղաքն իր փողոցներով և շենքերով վերածելով մահվան միջանցքների, երբ չգիտեիր, թե քաղաքի որ կետում քեզ կհարվածի հրետանային արկի բեկորը և կամ պայթյունի ավերիչ ալիքը:

Շուշիից և օդային ռմբակոծություններից հետո երրորդ անգամ ստեղծված օրհասական այդ վիճակը հաղթահարվեց հակառակորդի կրակակետերը հեռահար հրետանու ընդգրկած շառավիղի չափ տարածությամբ լռեցնելուց հետո:

Ստեփանակերտն այնուհետև 1993–1994 թվականներին, երբ այլևս ռմբակոծությունների ենթարկվող քաղաք չէր, լիովին դարձավ պատերազմող հանրապետության մայրաքաղաք՝ իր ռազմական հևքով և բանակային հրամանատարական կետերով:

1994 թ. հուլիսի վերջին՝ զինադադարից երեք ամիս անց, երբ զորացրվեցի և Մարտակերտից եկա Ստեփանակերտ՝ զորացրվելուս թղթերը լրացնելու ու Երևան վերադառնալու համար, մի անսովորություն, գրեթե գլխապտույտի զգացողություն ունեցա, որն առավել խորացավ, երբ մտա Պաշտպանության բանակի շտաբ և

այստեղի զինվորական խիստ կարգապահության ու հանդարտության մեջ, ուր այլևս չէին հնչում ռացիաների ձայները, լռել էին այս կամ այն կողմ շտապ համալրում ուղարկելու մասին հրամանները, տագնապալից հաղորդագրությունները, մեկեն հասկացա, որ այս անսովորության զգացումը գալիս է նրանից, որ լռել էին պատերազմի աղմուկն ու որոտը, և լսելի էր դարձել խաղաղության լռության ձայնը: Կենդանացող ու աշխուժացող քաղաքում ուրախությանը միախառնված մի անսովորությամբ էր հնչում խաղաղության լռության ձայնը:

Վերջին քսան տարիներին խաղաղության այդ լռությունն արդեն լցվեց նոր բովանդակությամբ՝ կենդանության ու վերահառնումի հնչի ձայներով:

Այս տարիներին ոչ միայն խլացավ պատերազմի աղմուկը, այլև ջնջվեցին նրա հետքերը: Այսօր, նայելով Ստեփանակերտին, դժվար է պատկերացնել, թե ինչ ճանապարհ անցավ պատերազմող հանրապետության մայրաքաղաքը: Այդ ճանապարհի կենդանի հիշողությունն է Ազատամարտիկների պողոտան՝ Ստեփանակերտի հրապարակից դեպ Օղակաձև հրապարակ ձգվող ճանապարհը, այն ճանապարհը, որով Շարժման սկզբին ընթանում էին ցուցարարների խմբերը դեպ մարզային իշխանությունների կենտրոնատեղին և երբ հրապարակը փակվեց պարետային իշխանությունների կողմից, Օղակաձև հրապարակը դարձավ Ստեփանակերտի բաբախող զարկերակը: Պատերազմական տարիներին Ստեփանակերտի հրապարակից այս փողոցով էր իջնում ռազմական տեխնիկան ու Օղակաձև հրապարակի տարբեր կողմերից գնում ռազմաճակատի այս կամ այն ուղղությամբ:

Պատերազմական տարիների կենդանի խտացումն է այս փողոցին տրված «Ազատամարտիկների պողոտա» անվանումը: Այն աշխարհի թերևս ամենաերկար անվանումներից մեկն է, որովհետև թեև կազմված է ընդամենը մեկ բառից, այդ բառը սակայն, իր հերթին կազմված է մի քանի հազար Անուն Ազգանուններից, որոնք կրողները չհասցրեցին տեսնել հաղթանակը: Ստեփանակերտի հրապարակից երբ Ազատամարտիկների պողոտայով իջնում ես դեպ Օղակաձև հրապարակը, շրջակա անցորդների միջից թվում է, թե ակնթարթորեն փայլում ու չքանում են զինվորական ռազմերթերից հոգնած դեմքերը, փողոցների, ավտոմեքենաների կողքից կարծես անցնում են զինվորական «Վիլիսները», և բեռնատարների թափքերից, զրահատեխնիկայի աշտարակների վրայից ու անցնող տանկերի բացվող կափարիչներից վեր բարձրացվող ավտոմատներով ու ողջույնի ուրախ ձայներով կարծես մեկ անգամ ևս քեզ են կանչում, և այդ ձայները մարում են զրահատեխնիկայի հոնդյունի մեջ:

Ակամայից հիշում ես Թումանյանի «Պատրանք» բանաստեղծության հետևյալ տողերը.

Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թվում է, թե կրգան...

Ջուր... վաղուց են, ախ նրանք
Մեր սարերից գընացել.
Էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել...

Մի պատրանք, որը թեև անցել ու գնացել է, սակայն որպես մնայուն իրականություն՝ մեզ է ավանդել Լեռնային Արցախի հանրապետությունը՝ մայրաքաղաք Ստեփանակերտով և Ազատամարտիկների պողոտայով:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՐՕՐՅԱ ԳԱՐԻԲԱԼԴԻԱԿԱՆՆԵՐԸ

Ո՞վ գիտե, ուր է նա հիմա. արդյոք նորից՝ հոգին շքեղ երազների մեջ՝ գրկել է և ամուր սեղմել մանր ու չնչին մարդկանց կոշիկները իր առնացի, հերոսական սրտի վրա և համբերությամբ կարկատում՝ իր վերջին պարտքը կատարելով թոռնիկի հանդեպ, թե գոյության կռվի դաժան ալիքները, որ այնպես զորեղ են աղքատներին փշրելու, որ այնպես գոեհիկ են դեպի մեծություններն ու գեղեցկությունները, վերջնականապես խորտակել են այդ չքնաղ բեկորը և հողերին հավասարեցրել ու որբուկին թողել ապերախտ հայրենիքից դուրս, նյութապաշտ մարդկանց մեջ՝ խեղճ ու անօգնական...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Պատերազմների մասնակիցները պատերազմների ավարտից հետո միջազգային ընդհանրացված անվանմամբ կոչվում են «պատերազմի վետերաններ»:

Անկախությանը նախորդող շրջանի խորհրդային իրականությունում կար վետերանների երեք բնորոշում՝ Հայրենական մեծ պատերազմի, Վիետնամական պատերազմի և Աֆղանական պատերազմի:

Արցախյան շարժմանը հաջորդած պատերազմը ընդունված ռազմական հասկացությունների փոխարեն գրականացված հերոսական բնորոշումներով սկսեց արտահայտվել, որովհետև բանակային հասկացությունները հոգեբանորեն դեռևս կապվում էին խորհրդային իրականության հետ, իսկ մեր պայքարինը հարաբերվում էր 19–րդ դարավերջի ազգային–ազատագրական շարժման հետ:

Ահա այս պատճառով զինվորի փոխարեն ավելի ընկալելի էր ազատամարտիկը, զորամասի փոխարեն՝ ջոկատը, պատերազմի ու կռվի փոխարեն՝ ազատամարտն ու հերոսամարտը:

Մտածողության հոգեբանական այս ընթացքը շարունակվեց նաև զինադադարի հաստատումից հետո, երբ հարց առաջացավ, թե ինչպես ենք անվանելու պատերազմական գործողությունների մասնակիցներին նրանց զորացրումից հետո:

Իրապես, հոգեբանորեն անսովոր էր նրանց պատերազմի վետերան անվանելը, և մինչև հիմա էլ նրանց բնորոշում ենք որպես ազատամարտիկ, ազատամարտի մասնակից: Մինչ սակայն բոլոր այս բնորոշումները համապատասխան պատմահրավական ձևակերպումներ կստանան, հայկական մերօրյա իրականությունում, որքան էլ տխուր ու ցավալի է, կարծում ենք, ճիշտ կլինի նրանց կոչել Արցախյան պատերազմի գարիբալդիականներ:

Սովորաբար զուգահեռի մեջ են դիտվում տարբեր ժողովուրդների մղած ազգային–ազատագրական պայքարի դրվագները: Այս տեսանկյունից 19–րդ դարի վերջին տասնամյակներից հայկական ազատագրական պայքարի համար խորհրդանշական հասկացություն են եղել Իտալիան և Գարիբալդին՝ համահունչ մնալով նաև Արցախյան պատերազմին:

Գարիբալդու հավատարիմ զինվորի՝ 19–րդ դարավերջին խորին դառնությամբ արտաբերված և հայ գրականության մեծ Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի շքեղ փոխանցմամբ հետևյալ խոսքերը, դժվար է ասել, ավելի շատ իր պաշտած Իտալիայի՞ն, թե՞ «յուր քաջ որդոց սուրբ արյունով» ազատ ու անկախ դարձած նվիրական Մեր Հայրենիքին են վերաբերում. «Այնքան թանկ արյուններով՝ դրսի թշնամիներից, օտար տերերից ազատված Իտալիան ընկավ մի նոր տեսակի գերության մեջ–մեր արյունակից տերերի ճանկն ընկավ, հարուստների և կառավարության պաշտոնյաների: Հարուստները ոսկի շղթայով կապեցին–կաշկանդեցին Իտալիան և իրենց ծանր թաթը դրեցին իտալական չարքաշ ժողովրդի սրտին և ճնշեցին»:

Մանր ու չնչին մարդկանց կոշիկները իր հերոսական սրտին սեղմած Ջիովանիի կերպարն եմ ամեն անգամ հիշում, երբ տեսնում եմ մերօրյա գարիբալդիականներին ֆիզիկական այլևայլ դժվարին աշխատանքներ կատարելիս: Մի անգամ կառուցվող մի շքեղ առանձնատան վեր բարձրացող պարսպի մոտով անցնելիս տեսա նրանցից մեկին՝ շինանյութով լի ծանր մի պարկ ուսին, որը պահել էր բավականին անբնական ձևով: Չգիտեի որն էր ճիշտ՝ մոտենա՞լը, թե՞ չճանաչելու տալով անցնելը: Մինչ այս մասին էի մտածում, ինքը ձեռքով արեց ու նույն անբնական ձևով ուսից իջեցրեց պարկը, որը նման ձևով պահելու համար հայացքիս մեջ զարմանք տեսնելով՝ կատակելով ասաց. «Բա գոնե դու պետք է հասկանաս, որ պարկը այնպես եմ պահում, որ վզիցս ուսիս հասնող վերքը շատ չցավեցնի»: Այդ վերքը 1994 թվականի ապրիլին ստացել էր Թալիշի դիմահայաց բարձունքների ազատագրման ժամանակ, հրետանային արկի բեկորից: Արցախյան ազատամարտից իր հետ միայն բերել էր սպիացած, բայց չփակված այդ վերքը, որի վրա հենված պարկերով էր հոգում իր ընտանիքի հացը:

Պարկը գետնին դնելով՝ ցանկացավ ողջագուրվել, բայց մտածեց, որ փոշոտ շորերով փաթաթվելը երևի ճիշտ չի լինի: Մինչ այդպես կմտածեր, ես իրեն փաթաթվեցի, և սկսեցինք հիշել դիրքերն ու մեր ընկերներին, և ապա անցանք երկրի հոգսերին, ու ապշանքով նկատեցի, որ միակ բանը, որից նա չի խոսում, առօրյա կյանքի հոգսերն են: Եվ մեկեն նրա շորերի շինարարական փոշին մի այլ փայլ ու գույն ստացավ՝ խրամատների գետնի Մայր հողի գույնը, այն հողի, որը հրետանային ամեն պայթյունից հետո խուլ մի տնքոցով թափվում էր վրադ՝ ասես քեզնից ներողություն խնդրելով: Եվ Մայր հողի այդ գույնն ու վառոդախառն բույրն են, որ հայրենիքի հանդեպ անմեկնելի մի սիրով ու պատասխանատվությամբ թրծեցին և օծեցին մերօրյա գարիբալդիականներին:

Նրանց բոլորի համար Հայրենիքի ճակատագիրը նման է իրենց չսպիացած վերքերին, որոնք անկախ նրանից, ուզես թե չուզես,

շարունակ հիշեցնել են տալիս իրենց: Եվ ամեն մի վերհուշ նրանց աչքերում ցոլացնում է մեր հայրենիքի լուրթ երկինքը, զմրուխտյա մարգագետիններին ու արևակեզ լեռնալանջերին դարձյալ չսպիացած վերքերի նման փորված խրամատները և նահանջի փոշեխոռիվ ու ցեխից ծանրացած, ինչպես նաև հակահարձակման հրացայտ ճամփաները:

ԳԱՆՁԱՍԱՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԴԱՎԱՌՆԵՐԸ

Վարդավառի վարդերը վառ...
ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

1918 թվականին թուրքական բանակը, գրավելով Էրզրումի ու Կարսի նման բերդաքաղաքները և մի շարք բնական ամրություններ, պարտություն կրեց Արարատյան դաշտում՝ Մայր Արաքսի ափերի մոտ, ուր հայկական բանակը թեև պաշտպանական որևէ հենակետ չուներ, փոխարենը, սակայն, հայ զինվորների թիկունքում արդեն Սուրբ Էջմիածնի պարիսպներն էին:

Թիկունքում Էջմիածինը ունեցող Սարդարապատի խորհուրդը մեկ այլ անդրադարձմամբ 72 տարի անց կրկնվեց Արցախում, որը ևս ունի իր փոքր Արարատը՝ Մռավը, իր Արաքսը՝ Խաչենագետը, ու Արարատյան դաշտը հիշեցնող Խաչենագետի հովիտը և վերջապես ունի իր հոգևոր կենտրոնը՝ Գանձասարը:

Ահա այս պատճառով հակառակորդի 1992 թ. հունիս–հուլիսյան հարձակումը, որի ընթացքում գրավվեց Շահումյանը և Մարտակերտի շրջանի մի զգալի մասը, կասեցվեց Վաղուհասի ու Կիչանի դիմաց, որովհետև այս երկու բնակավայրերից ճանապարհը ուղիղ տանում էր դեպ Գանձասար:

Հայոց Արևելյան կողմերի հոգևոր կենտրոնը, որ դարերի ընթացքում ականատեսն էր եղել արցախահայության հաղթանակների ու կրած արհավիրքների, հիմա էլ պետք է տեսներ Կիչանից Ստեփանակերտ տանող խճուղով իր պատմական բնօրրանից դեպ անհայտ հեռուները ընթացող Հյուսիսային Արցախի գաղթականության քարավանները:

Գանձասարի վանքը նվիրված է Հովհաննես Մկրտչին, և ինչպես Հովհաննես Մկրտչին նվիրված բոլոր վանքերի, այդ թվում և

Մշո Սուրբ Կարապետի ուխտագնացությունը և տոնը կատարվում են Վարդավառի տոնին:

1990–94 թթ. Վարդավառի բոլոր տոներին եղել եմ Արցախում, և ամեն տարի այդ օրը ցողվող ջրի մեջ ասես բեկվել են արցախյան այդ օրերի իրականությունն ու հոգեվիճակը:

Վարդավառը քանի որ նաև Գանձասարի ուխտի օրն է, ուստի խորհրդանշական ձևով նրա վերաօծումը 1990 թ. կատարվեց հենց այս տոնին, և վերաօծմանը հաջորդած ժողովրդական տոնախմբությունն ուղեկցվեց իրար վրա ջուր լցնելով:

Թեև դեռևս անպատկերացնելի էր թվում սկսվելիք պատերազմը, սակայն օդում և մարդկանց հոգիներում գնալով ծանրանում էին տագնապը և մռայլ կանխազգացումները, որոնք մի պահ ասես ցրվում էին վանքի աղբյուրի ջրի ցայտերից՝ հաջորդ պահերին ավելի ուժեղ ու մռայլ ծանրանալու համար:

1991 թ. ամռանը Արցախի վրա սև ամպի նման իջել էր տեղահանություն բառը, և մոլեգնում էին անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով անցկացվող ձերբակալությունները: Այդ օրերին մահացու մի հանցանք էր համարվում Հայաստանի գրանցմամբ անձնագիր ունենալը, և անգամ անձնագրի ցույց չտալը հավասարազոր էր հայաստանցի լինելուն:

«Հայաստանցի» ու «արցախցի» մի քանի ընկերներով այդ օրերին որոշեցինք Շահումյանից գալ Գանձասար: Մեզնից որևէ մեկը թեև առանձնապես չէր փայլում իր հավատացյալ լինելով, սակայն ներքին հավատն ունեինք, որ Վարդավառին Գանձասար գնալիս չենք բռնվի: Գյուլիստանի անտառներով հասնելով Հաթերք և այստեղից մինչև Վաղուհաս ընկած բաց տարածությունը գիշերով մի կերպ անցնելով ու նորից անտառ մտնելով՝ Վարդավառին հասանք Գանձասար՝ այդ մի գիշերվա մեջ, Վարդավառի ընդունված ծիսակարգով, «յոթն աղբյուրից ջուր խմելով», սակայն ոչ մեր անձնական ցանկությունների իրականացման, այլ Արցախի ապագայի համար: Այս յոթ աղբյուրներից վերջինը վանքի պարսպի մոտի աղբյուրն էր, որը թեև կարկաչելով, սակայն այդ օրն ասես հոսում էր միայնակ ու անօգնական:

Գրեթե ամայի ու դատարկ վանքում ընթանում էր Սուրբ Պատարագը, որին ներկա էին մի քանի հոգի շրջակա գյուղերից: Երբ լուր եկավ, որ ներքևում գտնվող Վանք գյուղ են հասել զինվորական պարետատան զինծառայողներից և շարժվում են դեպի վանք ելնող ճանապարհը, վանքի աղբյուրից մի–մի բուռ ջուր վերցրինք, արագ նորից դարպասից ներս մտանք ու ջուրը ցողեցինք եկեղեցու դարավոր հաստահեղույս որմերին, և մեզ ապավեն ունենալով վանքի գմբեթը՝ մաղթեցինք, որ հաջորդ տարի ևս Վարդավառի տոնին այս աղբյուրի ջրի ցոլքերը տարածվեն Գանձասարում, և Հայաստանի մեր անձնագրերով նորից անտառ շտապեցինք:

Հաջորդ տարի՝ 1992 թվականին՝ Վարդավառը հուլիսի քսանութին էր, երբ Գանձասարի դիմացով անցնող ռազմաճակատի գծում մարտական գործողությունները ընթանում էին փոփոխական հաջողություններով: Այդ օրը ջուր ցողելու ժամանակ չկար: Ջուրը ցայտում էր ոչ թե դույլերից ու ամաններից, այլ Թարթառով գետանցում իրականացնող զրահատեխնիկայի թրթուրներից ու անիվներից:

1993 թվականի Վարդավառին, բարեբախտաբար, Գանձասարը վերստին թիկունք էր դարձել, և այդ տարվա Վարդավառը թեև զինվորների կողմից, սակայն նշվեց դրանից օրեր առաջ ազատագրված Մարտակերտում, ուր դեռ խցանված էին արցախյան անկրկնելի աղբյուրներից շատերը, իսկ ճանապարհների մի զգալի մասը ականապատված էր այնպես, որ Վարդավառի ցողվող ջրից խուսափելու համար այս կամ այն կողմ վազելը կարող էր ճակատագրական լինել:

Մարտակերտի գնդի զինվորներից մեկը հիշեց, որ նախկինում իրենք ջրոցին՝ Վարդավառը, քաղաքի զբոսայգում են արել, և անգամ այստեղի նշանավոր անիվից ջուրը ներքև լցրել: Այս զբոսայգին թեև հակառակորդի հրետանային կրակի համար ավելի բաց և տեսանելի դիրքում էր, սակայն խաղաղ օրերի պատրանքը վերստեղծելու գայթակղությունն այնքան մեծ էր, որ դիրքային հերթապահությունից ազատ եղողների քայլերը ինքնաբերաբար ուղղվեցին այնտեղ: Անցած օրերը առավել շոշափելի զգալու համար

նրանցից մեկն անգամ սկսեց վեր ելնել անշարժ կանգնած անիվի մետաղյա շրջանագծով, որպեսզի վերևից ջուր լցնի: Մինչ բոլորը ոգևորված այդ պահին էին սպասում, հաջորդեց հակառակորդի «Գրադի» համազարկը, որի արկերը, բարեբախտաբար, հեռվում պայթեցին, և հարվածի մահաբեր ուժը կորցրած բեկորները պարզապես մետաղյա զրնգոցով ներքև թափվեցին՝ հիշեցնելով, որ Վարդավառի ժամանակը դեռ չի եկել: Զինվորներից մեկն ուժ գտավ կատակելու, թե անձրևից հետո երբեմն նաև կարկուտ է գալիս:

Ապա հիշեցինք նախորդ տարվա Վարդավառը, որը 1992–ին ողջ օրվա մարտական ընթացած գործողությունների պատճառով թեև հնարավոր չեղավ կատարել, սակայն երեկոյան բուռն մի քննարկում գնաց, որ եթե 1993 թ. Վարդավառին ողջ լինենք, որտեղ ենք լինելու: Բոլորը ենթագիտակցաբար մտածում էին, թե մեր դիրքերը տեսնես Գանձասարից առաջ կլինեն, թե՞ ետ, բայց ոչ ոք դա բարձրաձայն չասաց: Լռությունը խզած լավատեսներից մեկն ասաց, որ 1993–ի Վարդավառը Մարտակերտ շրջկենտրոնում ենք անելու: Այդ պահին քչերը հավատացին այդ խոսքերին, սակայն բոլորը միաբերան ասացին «Աստված ձենդ լսի»: Եվ ահա 1993–ի Վարդավառին իրապես Մարտակերտում ենք, այն էլ՝ անիվի մոտ: Պատսպարվելով «Գրադի» հնարավոր երկրորդ համազարկից՝ մեկեն բոլորս իրար նայեցինք և առանց խոսելու աչքերով իրար ուղղեցինք այն հարցը, որ եթե դարձյալ ողջ մնանք, 1994–ի Վարդավառին ո՞ւր ենք լինելու: Չտրված այս հարցին ի պատասխան մեկը նախ ասաց՝ Շահումյանում: Սկսված հակահարձակման ընդհանուր ոգևորության պայմաններում, սակայն, անգամ դա քիչ թվաց, ու ավելի լավատես մեկն ասաց՝ Գետաշենում: Համընդհանուր այս խանդավառության մեջ մռայլ մի գուշակություն թվաց և համընդհանուր պարսավանքի արժանացավ հաջորդ տարվա Վարդավառին Թալիշում լինելու տարբերակը:

Բարեբախտաբար թե դժբախտաբար, հաջորդ մեկ տարվա ընթացքում ռազմաճակատի գիծն անցավ Թալիշը, սակայն չհասավ Շահումյանին և կանգ առավ Գյուլիստանի դիմաց:

1994–ի Վարդավառն ամենալիաթոքն ու իրապես նվաճվածն էր Արցախյան շարժման ու պատերազմական երկար ու ձիգ տարիներին հաջորդած Վարդավառներից հետո, որը ջրով պատվեց թե՛ դիրքերում, թե՛ զորանոցներում և թե՛ վերստին բնակչության կենդանի շնչով լցվող Թալիշում և Մատաղիսում: Կրակված արկերի պարկուճներից ու զինվորական տափաշշերից հորդացող ջուրը ասես զվարթ կարկաչում էր՝ ավետելով սկսվելիք խաղաղ կյանքի մասին:

Այդ օրը ջուրն անսովոր կերպով վճիտ ու պայծառ կապույտ էր թվում: Պարզվեց, որ խաղաղությունը ոչ միայն երկինքն է առավել կապույտ դարձնում, այլև ջուրը:

1994 թ. Վարդավառից կարճ ժամանակ անց հերթով սկսեցինք զորացրվել, և հետո առիթ չեմ ունեցել անցած տարիների Վարդավառներից որևէ մեկին վերստին Արցախում լինել, ու չեմ կարող ասել, թե անցնող այս տարիներին ինչպես է ջուրը ցողվել այդ օրը, բայց հավատացած եմ, որ մենք ազգովին այսուհետ այնպես կգործենք և կարարենք, որ գալիք էլ ոչ մի Վարդավառ չհիշեցնի Գանձասարի մատույցներում 1992–ին անցկացրած Վարդավառի օրը:

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՉՏԵՍԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Եվ ձգվում էր մեր ընկերների անվերջանալի չուն:
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Արցախյան շարժումը երբ փոխվեց Արցախյան պատերազմի, Ծիծեռնակաբերդի բարձունքի դիմաց հառնեց Եռաբլուրը: Այն մինչ այդ էլ կար որպես բլուրների մի շարք, որը սակայն, Արցախյան հերոսամարտով է, որ բլրաշարից հավաքական մի բարձունքի վերածվեց և դարձավ վերջին նվաճված բարձունքը այնտեղ բերվողների:

Եռաբլուրն իր մեջ ժամանակային ու տեղանքային տարբեր շերտեր ունի, որոնք իրենցում ընդգրկում են 1990–1994 թվականները և ՀՀ ու ԼՂՀ սահմանների ողջ երկայնքի պաշտպանական գիծը: Եռաբլուրի տարածաժամանակային տարբեր այս շերտերում իրար կողք կողքի են գտնվում նրանք, ովքեր կողք կողքի առաջ գնացին իրենց կյանքի վերջին մարտական գործողության ժամանակ և կամ էլ վերջին անգամ պահեցին իրենց վստահված դիրքերը, չթողնելով ու խփվելով այդ դիրքերում և հիմա, դարձյալ միասին, հանգչում են կողք կողքի:

Տապանաքարերից նայող հայացքները եթե իրենց հարազատների համար կենդանանում են իրենց ապրած ընտանեկան կյանքով, ապա նրանց մարտական ընկերների համար, ռազմաճակատային տարբեր դրվագներով, և նայող հայացքը վերածվում է այս կամ այն լեռնալանջին դրքավորված կեցվածքի, ջոկատային ցրիվ քայլերի կամ զրահատեխնիկայի առաջ շարժվող ընթացքի:

Հայաստանում և Արցախում գրեթե ամեն բնակավայր ունեցավ իր Եռաբլուրը, որոնք հիմնականում, որպես կանոն, ձևավորվեցին Հայրենական մեծ պատերազմի հուշարձանների շուրջ: Նույն կերպ Արցախի Եռաբլուրը դարձավ Ստեփանակերտի Հաղթանակի հու-

շահամալիրը, ուր նախ դրվելու էր Արցախի Այայի (Մեծ մայր) սգացող հուշարձանը՝ նվիրված 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակին, ապա և Արցախի՝ դիրքերի վերածվող սահմաններից այստեղ էին բերելու զոհվածներին:

Այստեղ էին ամփոփվում նաև այն զինվորները, ովքեր ծնվել էին Մարտակերտի շրջանի գրավյալ բնակավայրերում: Նրանց համար ասում էին, որ նրանք ժամանակավոր են այստեղ ամփոփված, մինչև կազատագրվեն այդ բնակավայրերը: Դժվարին այդ օրերին Ստեփանակերտում ապաստանած որդեկորույս մի մայր անհուն կսկիծով ասաց. «Թոռանս հետ ժամանակավոր մի տան ենք մնում, իսկ տղաս էլ ժամանակավոր մի գերեզմանում է թաղված»:

Զոհվածներին՝ իրենց արդեն ազատագրված բնակավայրերում ամփոփելը այդ ժամանակ դարձել էր նրանց ապրած կյանքի վերահիմաստավորումը: Մեր զոհված ընկերներից մեկի հայրը, ով Հաթերքից էր, որդու զոհվելուց հետո մտել էր Մարտակերտի գունդը, և Հաթերքի ազատագրումից հետո հանդիպեցինք իր հայրենի գյուղում: Լուռ նայեցինք իրար, և նա սկսեց կենտրոնացած ծխել այնպիսի մի մտատանջությամբ, որով ծուխը ներս են քաշում վճռորոշ մի որոշումից առաջ: Մի հերթական անգամ ծուխը ներս քաշելով՝ նետեց ծխախոտը, կանգնեց, ու հայացքը ուղղելով ազատագրված լեռներին՝ ասաց. «Տղայիս բերելու եմ Հաթերք»:

Կանխելով այն հարցս, թե երբ այս բնակավայրը ճակատի առաջին գիծ է դեռ, և մարտերն ընթանում են փոփոխական հաջողություններով, ինչ երաշխիք ունի, որ Հաթերքը պահվելու է և իր տղայի շիրիմը հակառակորդի ձեռքում չի մնալու, մանավանդ որ մի շարք բնակավայրերի ազատագրումից հետո պարզվել էր՝ հակառակորդն առանձնակի ծաղրուծանակի էր ենթարկել մինչև գրավվելն այնտեղ ամփոփված ազատամարտիկների շիրիմները:

Նա, սակայն, նույնքան անթարթ հայացքով և վճռականությամբ ասաց, որ քանի ինքը ողջ է, Հաթերքը մերն է լինելու: Մի պահ զարմացա այս ինքնավստահության վրա, սակայն իր միտքն այսպես բացատրեց, թե հակառակորդի Հաթերք մտնելիք ճանապարհին ինքը դիրքավորվելու է տղայի շիրմի դիմաց և միայն իրեն

խփելուց և իր վրայով անցնելուց հետո հակառակորդը կարող է գյուղ մտնել, որով և իր կենդանության օրոք Հաթերքը կմնա ազատ և հայկական: Միգուցե Ֆրանց Վերֆելի անունն իսկ չլսած և զինվոր դարձած այս շինականը իր կյանքի միջով անդրադարձրեց «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի այն վերջին նախադասությունը, թե որդու խաչն ընկավ հոր սրտին:

Դժբախտաբար, նա ևս չհասցրեց տեսնել հաղթանակը, ու թեև հիմա հանգչում է որդու կողքին, սակայն ոչ թե խփվեց որդու շիրիմի դիմաց, այլ շատ ավելի հեռվում՝ ռազմաճակատի գծի առաջ շարժվելու ճանապարհին և ապա նոր բերվեց որդու մոտ:

Տարեցտարի ավելի ու ավելի դժվար է լինում մտովի զրուցել բոլոր նրանց հետ, ովքեր չհասցրին տեսնել հաղթանակը, ոչ միայն այն պատճառով, որ գնալով նյութականացող կյանքը հոգեբանական մի անջրպետ է ստեղծում մեր և իրենց միջև, այլև այն պատճառով, որ անցնող ամեն մի տարին մեզ իրենցից հեռացնում է ևս մեկ տարով՝ արդեն դարձնելով իրենց գրեթե երկու տարիքին: Ամեն մի մտովի զրույց, սակայն, ոչ թե նրանց է տարիքով մեծացնում, այլ մեզ քսանից երեսուն տարեկան դարձնում՝ այդ տարիների մեր ունեցած պատասխանատվությամբ ու նվիրումով, որն էլ իր հերթին, դժբախտաբար, առաջ է բերում դիրքերում եղածներից յուրաքանչյուրի համար կյանքում ամենաամոթալին ու քստմնելին համարվող զգացումը՝ դասալքության զգացումը, որովհետև Հայրենիքին միայն դիրքերում չէ, որ պետք է տեր կանգնել և պաշտպանել...

Բոլոր նրանք, ովքեր չտեսան հաղթանակը, դարձան մի–մի շիրմաթումբ, մի–մի հուշարձան ու աղբյուր–հուշարձան, իրենց ընտանեկան հարկերի ներքո դարձան պատերից նայող լուսանկար, դարձան իրենց ծննդավայրերի դպրոցների ու փողոցների անվանումներ, դարձան զինվորականների հավաքույթներին բարձրացվող երրորդ բաժակի կենաց, դարձան գրական ու վավերագրական ստեղծագործություններ ու ֆիլմեր և հիշատակի էլի ուրիշ շատ արտահայտություններ, սակայն նրանց կենդանի ու հավաքական միակ հուշարձանը, որով իմաստավորվելու է նրանց կյանքի ընդհատ-

ված ընթացքը, եղել է, կա ու մնալու է Ազատ ու Անկախ Արցախը՝ Մայր Հայաստանի հետ իր ցամաքային կապով:

Նույն կերպ, Ձեր հիշատակի առջև, որպես միակ ու վավերական երդում, նախ խաղաղություն մաղթենք Ձեզ և ասենք՝ տոկունություն մեզ, որ արժանի լինենք Ձեզ և Հայաստանի ու Լեռնային Արցախի հանրապետությունների հռչակումից քսան տարի անց վերստին կամքը, նվիրումն ու վճռականությունն ունենանք ապրելով մեր երկրում՝ տեր կանգնելու հայոց զույգ պետականություններին:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍԵՐՆԴԻՆ

Լսում ես՝ այդտեղ իմ սիրտն է թաղած,
Կոխոտիր նրան քայլերով քո լույս...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1991 թ. սեպտեմբերի 2–ին ԼՂՀ հռչակմամբ մի նոր փուլ մտավ արցախահայության այն պայքարը, որը դժվար է ասել, թե քանի տարի առաջ էր սկսվել:

Երբ, երբ 1988 թվականի փետրվարյան վերազարթոնքի ժամանակ Ստեփանակերտից մինչև Երևան վանկարկվում էր «Միացում» բառը:

Յոթանասուն, երբ արցախահայությունը տասնամյակներ շարունակ խուլ մի պայքար էր մղում կովկասյան ու մյուս բյուրոների՝ Արցախը Հայաստանից անջատելու որոշման դեմ:

Երեք հարյուր, երբ հայոց պետականության պահպանված վերջին բեկորները եղող Խամսայի մելիքություններն սկսեցին անհավասար մի պայքար մղել Արցախ թափանցող ու նենգաբար երկրամասի սրտում հաստատվել փորձող քոչվոր ցեղերի դեմ:

Անկախ նրանից, թե քանի տասնամյակ կամ հարյուրամյակ տևեց այդ պայքարը, այն ավարտվեց 1991 թվականի սեպտեմբերի 2–ին, որից հետո սկսվեց ազատությունը պաշտպանելու շրջանը, որն էլ իր հերթին, մինչև 1994 թվականի մայիսի 14–ը ազատությունը կռվով պաշտպանելու շրջանն էր, իսկ մինչև մեր օրերը ձգվող հաջորդող շրջանը՝ զենքով զինադադարը պաշտպանելու շրջանը:

Քսան տարին բավական է պատմական իմաստավորման համար, եթե վերաբերում է արդեն պատմությանը պատկանող մի իրադարձության, սակայն շատ դժվար է բնորոշելը, եթե դա շարունակվող մի ընթացք է, առավել ևս մեր կյանքին իր տառա-

պանքն ու հերոսականությունը միախառնած ու հաղորդած ընթացք, որը մեզ պարտադրում է ամեն օրն սկսել ու ավարտել դիրքերից եկած ամփոփագրերով, որոնք անընդհատ հիշեցնում են մեծ ու փոքր տրամաչափերի տարբեր զինատեսակների գոյությունը ու որոշակի հաճախականությամբ դրանց կիրառումը մեր Հայրենիքի սահմաններում:

Ամեն մի իրականություն և պատմական իրավիճակ ունի իր սերունդը և այդ սերնդի անվանումը: 1988–ի սերնդին, սակայն, վիճակված էր մի քանի անվանում և բնորոշում ունենալ: 1988–1990 թվականներին նա ազատության սերունդն էր և 1991–ին դարձավ անկախության սերունդը, ապա մինչև 1994 թվականի մայիսը եղավ պատերազմի սերունդը, որ հետո դառնար զինադադարի սերունդը:

Նրանք, ովքեր աչք բացեցին 1988–ին, նախ բնազդաբար ապրեցին իրենց ծնողներից փոխանցված լարմամբ ու սպասմամբ, ծնողների գրկում սեղմվեցին պարետային խուզարկությունների ու տեղահանությունների օրերին, ապա 1991 թվականին իրենց ծնողների հետ մենակ մնացին հակառակորդի դեմ, և սկսված պատերազմը եթե հեղաբեկեց նրանց ծնողների կյանքը, իրենց սկսվող կյանքն էլ գլխիվայր շրջեց՝ դարձնելով մի սերունդ, ով աշխարհին սկսեց նայել նկուղների՝ դեպ վերև բացված պատուհաններից:

Մի սերունդ, որն իր առջև բացվող տեսարանով աշխարհի վրա զարմանալու և այն ընկալելու փոխարեն սկսեց զգուշանալ դիմացից եկող կրակոցներից ու պայթյուններից:

Մի սերունդ, որը կռիվ–կռիվ խաղալու փոխարեն խաղաղությունը երազեց:

Մի սերունդ, ում համար կինոների սարսափներն իրականություն դարձան, իսկ մարդկային խաղաղ կյանքը կինոյի ոչ իրական տեսարան թվաց:

Մի սերունդ, որը մանկության անկրկնելի գույների փոխարեն տեսավ գունաքողարկիչ համազգեստ ու տեխնիկա, մի կյանք, ուր գույնը կենդանի թիրախ էր, իսկ գունաքողարկումը՝ պաշտպանություն թիրախ դառնալուց:

Ինչպես որ իրենց ծնողների համար էր անսովոր սկսված պատերազմը, նրանց համար էլ անսովոր դարձավ ավարտված պատերազմը: Նրանք, սակայն, ի հաշիվ իրենց խեղված մանկության, իրենց աչքերով տեսան, թե ինչպես է ձեռք բերվում և նվաճվում ազատությունը:

Բարեբախտաբար, մի քանի տարի է, ինչ դպրոցն ավարտող այժմյան սերունդն արդեն ծնվել է զինադադարից հետո: Այս սերնդի համար պատերազմը և՛ անցյալ է, և՛ ներկա: Անցյալ է մի ժամանակ բնակավայրերում պայթած արկերով և օդից նետված ռումբերով, դպրոցական կրճատված պարապմունքներով և այսպես շարունակ:

Պատերազմը Ձեզ համար անցյալ է Ձեր բնակավայրերից դեպ Ստեփանակերտ և այնտեղից Երևան ու Երևանից աշխարհին բացվող ճանապարհներին:

Պատերազմը, սակայն, ներկա է ոչ միայն զոհվածների չսպիացած կորստյան ցավերով, այլև գյուղամիջյան ճանապարհներից դեպ հանդերը գնալիս, որտեղից երևում են մեր ու հակառակորդի դիրքերը:

Պատերազմը ներկա է խաղաղության առերևույթ հանգստի ներքին լարմամբ, ուր ամեն դիրքի ուղղությամբ արձակված կրակոցը արձագանքվում է ողջ սահմանի երկայնքով:

Պատերազմը ոչ թե վերհուշ, այլ կենդանի մի արձագանք՝ ներկա է ազատագրված բնակավայրերի ճանապարհներին՝ որպես խփված զինվորների հուշաքարեր և այնտեղ անշարժացած այրված զրահատեխնիկա:

Պատերազմը Ձեր կյանքում ներկա է նաև մեր՝ ողջերիս ապրած կյանքի պատերազմական տարիներով:

Հիմա ամեն ուսումնական տարվա ավարտին կյանք եք մտնում Դուք, որ թեև չեք տեսել պատերազմը, սակայն ծնունդն եք պատերազմական սերնդի:

Պատերազմական սերունդը Երևանից մինչև Ստեփանակերտ, Ճամբարակից մինչև Թալիշ գիտեր, թե որն է իր անելիքը և խնդիրները:

Արդյոք նույնը գիտեք Դուք, արդյոք Արցախին և մեր ողջ Մայր Հայրենիքին ունեք այն կապվածությունը, ինչ որ Ձեր ծնողների սերունդը:

Արդյոք Արցախ ու Հայրենիք բառերը Ձեր հոգում ևս առաջ բերում են այն զգացումը, որով զրահավորված Ձեր ծնողները զրահատեխնիկայից առավել ամուր մի զրահ դարձան Արցախի պաշտպանության դիրքերում:

Արդյոք Ձեզ համար ևս անկրկնելի մի տարբերություն կլինի Մայր Արաքսի, Թարթառի, Խաչենագետի և աշխարհի մյուս գետերի միջև:

Արդյոք Ձեզ համար ևս «Արարատի նման ճերմակ գագաթ չկա», և Քիրսի ու Մռավի նման ադամանդյա փայլ ուրիշ որևէ լեռ չունի:

Արդյոք Դուք միայն ազատության, թե՞ նաև ազատության պաշտպանության սերունդն եք:

Այսօրվա հայկական իրականությամբ պայմանավորված տանջալից այս հարցերի շարքը դեռ կարելի է երկար շարունակել՝ հաղթանակած ժողովրդի պատերազմական և հետպատերազմական սերունդների զուգահեռով:

Դուք, սակայն, ինչ էլ որ պատասխանեք, իրական պատասխանը կերևա անցնող տարիների ընթացքում: Իսկ թե ինչպիսին կլինի այդ պատասխանը, մեծապես պայմանավորված է նրանով, թե գալիք այդ տարիներին որքանով Ձեր կյանքի անբաժանելի մասը կշարունակեն մնալ Արցախի ամեն քարն ու թուփը, ճանապարհն ու հանդամիջյան կածանը՝ իրենց պատմական հիշատակներով ու դեռևս պատմություն չդարձած պատերազմական դրվագներով, և թե որքանով Ձեր կյանքը պատկերացնելի կամ անպատկերացնելի կլինի այս ամենի հավաքական ամբողջությունը եղող մեր Հայրենիքով և մեր Հայրենիքի պաշտպանության գիտակցմամբ, կամքով ու վճռականությամբ:

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ

Շահումյանի օրինակով լավագույնս երևում է, թե ինչպես 1920-ական թվականներից Ադրբեջանը Արցախի բազմաստիճան կտրմամբ և յուրօրինակ ճանապարհային պայքարով տասնամյակներ շարունակ նախապատրաստվում էր Արցախյան պատերազմին և երկրամասը խաղաղ ձևով կուլ տալուն ու յուրացնելուն:

Քաջ գիտակցելով, որ անգամ Արցախի բռնակցումը չի կարող հայաթափել երկրամասը՝ Ադրբեջանը դիմեց բազմաստիճան կտրտումների քաղաքականությանը, երբ նորաստեղծ ինքնավար մարզից նախ դուրս թողնվեցին հոծ և հավաքական հայկական բնակչություն ունեցող մի շարք շրջաններ և հատկապես Շահումյանը: Ադրբեջանը կարողացավ անգամ շրջանցել այն սկզբունքը, որ սահմանները գծվում էին ըստ լեռնաշխարհագրական բաժանման, որով Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը գծվեց Ախուրյան գետով, և նույն այդ մոտեցմամբ փորձվեց նաև պատճառաբանել Արցախը Հայաստանից կտրելը և հայ–ադրբեջանական սահմանագծումը լեռներից դեպ հարթավայր:

Խորհրդային Հայաստանի համար աղետալի դարձած այս մոտեցումն իսկ չբավարարեց Ադրբեջանին, և նորակազմ մարզից դուրս մնացած հայկական շրջաններն այնպես կտրտվեցին և միացվեցին Ադրբեջանին կից շրջաններին, որ հայերը նման շրջաններում հնարավորինս քիչ մեծամասնություն կազմեին:

Այս քաղաքականության գլխավոր թիրախը դարձավ հենց Հյուսիսային Արցախը: ԼՂԻՄ–ից կտրվեց Շահումյանը: Նրանից անջատվեց վերջինիս բնական մասը կազմող Գետաշենի ենթաշրջանը, որն էլ իր հերթին Արցախյան շարժման սկզբում տրոհվեց երեք

մասերի՝ Գետաշեն–Մարտունաշեն, Ազատ–Կամո և Գետաշենի ենթաշրջանը Շահումյանին կապող Կուշչի–Արմավիր:

1988–89 թթ. բռնագաղթի ժամանակ Ադրբեջանի գլխավոր ձեռքբերումներից մեկը դարձավ Կուշչի–Արմավիրի հայաթափմամբ Գետաշենը Շահումյանից կտրելը, ապա հայաթափվեցին նաև Գետաշեն–Մարտունաշենի վրա իշխող Ազատ և Կամո գյուղերը: Այսքանից հետո միայն, և այն էլ Ադրբեջանում տեղակայված Խորհրդային չորրորդ բանակի զորամիավորումների միջոցով, վերջին վճռական հարվածը հասցվեց Գետաշենին ու Մարտունաշենին:

Հայկական տարածքների վարչական այս կտրտվածությունն ուղեկցվում էր հաղորդակցության ճանապարհների և տնտեսական ենթակառուցվածքների կտրտվածությամբ: Արցախում միտումնավոր կերպով չէին կառուցվում միջգյուղական ճանապարհներ, որպեսզի հայկական երկու կից շրջաններ և անգամ բնակավայրեր իրար կապվեին ադրբեջանական շրջաններով:

Արցախյան շարժման սկզբում չկար Շահումյանը ԼՂԻՄ–ին կապող որևէ ճանապարհ, և Կարաչինար–Թալիշ ճանապարհը կառուցվեց տեղի բնակչության ջանքերով՝ Շարժումից հետո:

Արտաքուստ խորհրդային կենտրոնացման ոչ ճկուն քաղաքականության արտահայտություն թվացող այն հանգամանքը, որ մարզում և կից հայկական շրջաններում չկար և ոչ մի մեծ էլեկտրական ալրաղաց և ցորենը տարվում էր Ադրբեջանի մյուս շրջաններում աղվում և ապա ետ բերվում, և կամ էլ որ էլեկտրաէներգիայի մեծ հանգույցները դարձյալ մարզից դուրս էին, թեև հիդրոէլեկտրակայանների համար անհրաժեշտ ջրային ռեսուրսները և հատկապես Սարսանգի ջրամբարը մարզում էին, բացատրվում էր նույն այս քաղաքականությամբ:

Շարժման հենց սկզբում՝ շրջափակման առաջին իսկ օրերից, միանգամից ի հայտ եկավ արցախահայության շուրջը հյուսված այս ցանցը:

Նաև հենց Շահումյանի շրջանի օրինակով ավելի հստակ երևաց դեպքերի զարգացման ընթացքը Արցախ – Հայաստանում: Փոխհրաձգությունների աստիճանաբար վերածվելը մարտական գործողությունների առաջինը արտահայտվեց հենց այստեղ և հենց Մանաշիդում, որով Շահումյանը կապվում էր Գետաշենի հետ: Այսինքն՝ որպես թիրախ պարզապես որևէ գյուղ չէր ընտրվել, այլ ստրատեգիական նշանակություն ունեցող մի կետ:

Շահումյանում էր, որ առաջինն ի հայտ եկան շրջափակման հետևանքները, և ժողովուրդն ստիպված դիմեց ազգագրական կենցաղի տարբեր միջոցներին, որոնք այնուհետև նախ տարածվեցին Արցախում, հետո Հայաստանի սահմանամերձ շրջաններում և այնուհետև հասան Երևան: Սկզբում այս «վերադարձը» ինչ–որ տեղ անգամ հետաքրքիր էր թվում, երբ վարսավիրանոցների միակ գործիքը դարձավ մկրատը, տներում նկուղներից և գյուղերի անցյալին նվիրված դպրոցական թանգարանային անկյուններից հանվելով ձեռքից ձեռք սկսեցին անցնել ածուխով տաքացվող արդուկները, ապա՝ հին պատրույգներով լամպերը, մինչև որ շրջափակումը պարտադրեց նաև տնտեսական ենթակառուցվածքների փոփոխություն, որն սկսվեց էլեկտրաղացներին փոխարինելու եկած ջրաղացներով:

Նույն այս շրջանում կատարվեց ևս մեկ էական փոփոխություն. պապենական հին իրերի հետ հանվեցին և նորոգվեցին որսորդական հրացաններն ու մյուս հին զենքերը:

Առաջինը Շահումյանում էր, որ սկսված շրջափակումը և ուրվագծվող պատերազմը կենցաղային բարդություններից բացի նաև հոգեբանական ցնցումներ սկսեցին պատճառել, երբ թշնամական օղակի մեջ գտնվող գյուղերում լամպի պատրույգի թրթռացող լույսը շրջակա խավարի մեջ դարանակալ հակառակորդի վախն ու զգացողությունն էր առաջ բերում:

1992 թվականի հունիսի 12–ից Ադրբեջանը, զինված այնտեղ տեղակայված նախկին խորհրդային չորրորդ բանակի ծանր տեխնիկայով, հարձակվեց և մեկը մյուսի ետևից գրավեց Շահումյանի շրջանի բոլոր բնակավայրերը:

Երևանում մի պահ անհավատալի ու անհեթեթ թվաց այս լուրը, բայց այն, դժբախտաբար, ոչ միայն ճիշտ էր, այլև Գյուլիստանի

անտառներով ու Կարաչինարի ճանապարհով հունիսի 14–ին ու 15–ին Հաթերք ու Թալիշ հասան հերոսական այս շրջանից տեղահան եղած առաջին գաղթականները, և Շահումյանը Մարտակերտին միացնող ճանապարհը վերածվեց գաղթի ճանապարհի:

Շահումյանը վերջանում էր այնտեղ, ուր անտառն էր վերջանում, և անտառից ելնելուց թվում էր, թե մարդիկ մի աշխարհից մի այլ աշխարհ են գնում կամ դուրս գալիս, որովհետև անտառից դուրս գալը թե՛ փրկություն էր և թե՛ հայրենիքը թողնել, ու անտառի եզրագծի ծառերին հենվելիս մի խոր շունչ քաշելով, ասես Շահումյանի օդը մի վերջին անգամ շնչելով, դժվար է ասել՝ փրկության ուրախությունն էր ավելի շատ լինում, թե՛ չորսամյա իրապես հերոսական պայքարից հետո հայրենի երկրամասը թողնելու խորունկ ցավը:

Անտառից դուրս եկողների քարավանում ծանոթ դեմքերի հայացքներով ասես գծագրվում էր Շահումյանի արդեն փշրված խճանկարը Կարաչինարից, Մանասաշենից ու Գաղթուտից մինչև Վերիշեն ու Գյուլիստան:

Արցախյան շարժման ու պատերազմի ամենաողբերգական և ճգնաժամային ամիսները դարձան 1992 թ. հուլիս–օգոստոսը, երբ 1988 թվականի փետրվարին «Մի–ա–ցո՛ւմ» վանկարկումից ալիքվող Ստեփանակերտի հրապարակը վերածվեց գաղթականության մի ճամբարի: Օգոստոսին Ստեփանակերտում կար քառասուն հազարից ավելի գաղթական, և քաղաքում կյանքը կանգ առավ ցավից ու վշտից, և կյանքի զարկերակը բաբախում էր միայն ռազմաճակատի գծի տարբեր ուղղություններով գնացող տեխնիկայի և զրահատեխնիկայի հոնդյունով:

1993 թ. ապրիլին, երբ արդեն ազատագրվել էր Հաթերքը և ուղիղ կապ էր հաստատվել Գյուլիստանի դիմահայաց բարձունքներում գտնվող Շահումյանի պարտիզանների՝ «Եղնիկների» հետ, անտառային մի բարձունքից Շահեն Մեղրյանի հետ նայում էինք մշուշում կորած ու դեռևս լուռ ու ամայի Հաթերքին: Իր ողբերգական մահից օրեր առաջ մտախոհ էր Շահենը: Լուռ և երկար նայեց Հաթերքին ու ասես որպես կտակ և պատգամ ասաց, թե մենք այլևս ոչ մի գնով չպետք է թողնենք Հաթերքը: Ինձ թվաց, թե այդպես է

ասում, որովհետև Հաթերքով ավարտվում է Մարտակերտը և սկսվում Շահումյանը: Պարզվեց, որ պատճառը դա չէր: Ասաց, որ Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Բաղիրովը, ստալինա–բերիական դարաշրջանի ավարտից հետո մինչև գնդակահարվելը, Բաքվում իր հետնորդներին ասել էր, թե Արցախը հիմնված է չորս սյուների վրա՝ Չարդախլու, Գետաշեն, Վերին Շեն և Հաթերք, ու Արցախին տիրելու համար հարկավոր է կոտրել այդ չորս սյուները: Այսօր չկա Շահեն Մեղրյանը, չկան և իր ու մեր մարտական ընկերներից շատերը: Արցախի այս չորս սյուներից էլ այսօր կանգուն է միայն մեկը՝ Հաթերքը, և Հաթերքի շուրջը բոլորած բնակավայրերում են ապաստանել Շահումյանի շրջանի՝ Արցախում վերապրող բեկորները՝ իրենց թիկունքում զգալով Հայոց արծվաբույն Հաթերքը և նայելով Մռավի փեշերին ուրվագծվող և իրենց սպասող Վերին Շենին:

ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՆՑ

1

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ

Նվիրում եմ բոլոր Նրանց հիշատակին,
Ովքեր Իրենց կյանքի կտրված
թելերով հյուսեցին Հաղթանակը:

1992 թ. Շուշիի մայիսյան փայլուն հաղթանակից հետո բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի Գետաշեն: Մոտ մեկ ամիս տևած անսովոր խաղաղության ընթացքում օր օրի ավելի առարկայական էր դառնում այն ազատագրելու սպասումը, սակայն կատարվեց անսպասելին՝ ավելի ճիշտ՝ անհավատալին: Մեկամսյա խաղաղությունն ավարտվեց Շահումյանի շրջանում Կարաչինար–Հայբարիս ուղղությամբ հակառակորդի ծանր զրահատեխնիկայի միջոցով ռազմաճակատի գծի ճեղքմամբ, և երկու օրվա ընթացում ընկավ անառիկ համարվող Շահումյանը:

Մարտակերտը Շահումյանին կապող երկու կետերի՝ Հաթերքի և Թալիշի ուղղությամբ հակառակորդը, զարգացնելով հաջողությունը, հուլիս–օգոստոս ամիսներին կարողացավ գրավել նաև գրեթե ողջ Մարտակերտի շրջանը: Վերջինից մնաց միայն Առաջաձոր–Կիչան–Մեհմանա ուղղությունը: Այստեղ՝ Գանձասարի դիմաց, սեպտեմբերից սկսեց անցնել ռազմաճակատի բաժանարար, բայց և ժամանակավոր գիծը: Ժամանակավոր, որովհետև հակառակորդը ձգտում էր այն ճեղքել՝ դուրս գալու Մարտակերտ–Ստեփանակերտ ավտոմայրուղու՝ Ասկերան–Ստեփանակերտ հատվածը:

Նույն ձևով Արցախյան բանակի խնդիրն էր պաշտպանական գիծը կայունացնել և ուժերը վերախմբավորելուց հետո անցնել հակահարձակման Չլդրան–Դրմբոն ուղղությամբ՝ վերահսկողություն հաստատելով Քելբաջար–Մարտակերտ ավտոմայրուղու վրա, և ապա Դրմբոնից ավտոմայրուղու երկայնքով զարգացնել հակահարձակումը երկու ուղղությամբ՝ դեպի Հաթերք և Մարտակերտ շրջկենտրոն:

Շահումյանի և Մարտակերտի անկմանը հաջորդած համընդհանուր խուճապի և հուսալքության, իրենց գաղթող ընտանիքներին տեր կանգնելու և նրանց մինչև Ստեփանակերտ հասցնելու այնքան մարդկային մտահոգությամբ կազմալուծված տեղային ինքնապաշտպանության ջոկատների պայմաններում անգամ, այնուամենայնիվ, գործեց ժողովրդի հավաքական ինքնապաշտպանության բնազդը, երբ ընկան Դրմբոնն ու Չլդրանը և հաշվված կիլոմետրեր մնացին հակառակորդի զրահատեխնիկայի՝ ուղիղ Ստեփանակերտ տանող ավտոմայրուղին դուրս գալու:

Երկու շրջանների գյուղախմբերն իրար ետևից հանձնելուց, տասնյակ կիլոմետրեր նահանջելուց հետո մարտերը կենտրոնացան մի քանի կիլոմետրի ամեն մի մետրի, շրջակա անտառի պաշտպանական գծերի վերածված ծառերի շարքերի շուրջը:

Հին բնապաշտական հավատալիքներով բազմաթիվ զուգահեռներ էին անցկացվում մարդկանց և կանգնած ծառերի միջև: Ճակատի Առաջաձոր–Կիչան գծում 1992 թ. սեպտեմբեր – 1993 թ. փետրվար ամիսներին այդ զուգահեռներին գումարվեցին ծառերի՝ մարդկանց նման հրետանային արկերից կտրտվելու, ֆուգասային բեկորներից այրվելու և գնդակներից ծակծկվելու մասին զուգահեռները: Հավաքական մի ամրության վերածված անտառի բզկտված ծառերն իրենցում պահում են հիշողությունը Արցախի Պաշտպանական բանակի դեմ հակառակորդի՝ այդ ամիսներին կիրառած բոլոր զինատեսակների հարվածների:

Ծառերի նման չընկրկեցին և Պաշտպանական բանակի զինվորները: Կրակային հզորությունների հարվածները ոչ թե բազմապատկեցին խուճապի և պարտվողականության ալիքը, այլ ցրեցին այն, որովհետև անցել էր ռազմական անհաջողությունների և պարտությունների ժամանակը, և եկել էր Հայրենիքի լինելության պա-

հը, երբ տեղի են տալիս փոխադարձ մեղադրանքներն ու անվստահությունը և հավաքական մի հասկացություն է դառնում ինքնապաշտպանության կազմակերպումը:

1992 թ. աշնանը, չնայած ռազմաճակատի պաշտպանական փխրուն գծին, օդային ռմբակոծություններին, ապա և հեռահար հրետանու հարվածներով Ստեփանակերտի ավերվելուն և Շուշի–Լաչին–Գորիս ճանապարհով սկսված գաղթին, տեղի ունեցավ հոգեբանական այն բեկումը, որը գլխավոր գործոնն էր դառնալու ռազմական փայլուն և իրապես անօրինակ հաղթանակների:

Հոգեբանական այդ բեկումը տեղի ունեցավ, երբ նահանջի առջևն առնելուն կոչված «Ետևում Ստեփանակերտն է» կարգախոսը բոլորի համար անսպասելի կերպով սկսեց փոխվել «Առջևում Մարտակերտն է» կարգախոսով:

Անկումների սարսափից, պարտությունների դառնություններից, կարոտից և վրեժից լեռնացած սպասումը պոռթկալու էր 1993 թ. փետրվարին, և սկսվելու էր այնքան սպասված հակահարձակումը, որի առաջին խորհրդանշական կետը դարձավ Չլդրանի աղբյուրը: Մարտակերտցիների համար այն վերածվել էր «հայրենիքիս ջրի», որից խմում էին Մարտակերտի գնդի զինվորները՝ ասելով, թե իրենք այդ պահին այս աղբյուրից խմում են նաև տարբեր անկյուններում ցրված մարտակերտցիների փոխարեն, որ նրանք ևս հեռավոր մի զգացողությամբ իրենց կարոտն առնեն:

Գիշերային այդ պահին, երբ առաջ գնացող ռազմաճակատի գծի երկայնքով հողը ցնցվում էր հրետանային հարվածներից և արկերի հրաշեկ բեկորները հալված լճակների էին վերածում գետինը պատած սառույցը, պայթյունների ցոլքերի տակ միմյանց նայելով՝ բոլորս ակամա հանգեցինք մի ավելի խոր ընդհանրացման, որ մեզնից բոլոր նրանք, ովքեր ողջ կմնան, պետք է ապրեն և մեր հայրենիքի վերաշինությանը ծառայեն նաև մեր զոհված ընկերների փոխարեն:

Որքան քաղցր էր «հայրենիքի ջուրը» խմելը, այնքան դառն էր Մեհմանայի լանջերից Մարտակերտին նայելը, երբ յուրաքանչյուրի սրտից ու հոգուց անխեղդելի և խեղդող մի «ա՜խ» էր բարձրանում՝

բացվող ոլորաններից այն կողմ տեսնելով լույսերի մեջ տարածված քաղաքը: *Դաժան մարտերի ևս չորս ամիսներ էին հարկավոր, որ* կտրվեին Միր–Բաշիրից եկող այդ լույսերը, ապա հատիկ–հատիկ վառվեին տների ճրագների պատրույգները և հետո քաղաքը ողողվեր Արցախյան գետերի սրընթաց հոսանքից ծնված լույսերով:

Մինչ այդ, սակայն, Արցախի Պաշտպանական բանակն իր անցած նահանջի նույն ճանապարհով նորից պետք է ետ դառնար և հասներ մինչև Կուսապատ ու Ներքին Հոռաթաղ, որից հետո ամեն օրն անցնում էր Մարտակերտ մտնելու սպասմամբ:

Մարտակերտին իշխող երկու բարձունքներն էին հեռուստաաշտարակի բարձունքը՝ «Վիշկի յալը», և այն բարձունքը, որի վրա խորհրդային տարիներին կարկտացիր հրետանային կայանք էր տեղադրված՝ «Պուշկի յալը»:

1992 թ. հուլիսի 26–27–ին ԼՂՀ Պաշտպանական բանակը կարողացավ թշնամուն ետ շպրտել այս երկու բարձունքներից, ինչպես նաև քաղաքի մոտ գտնվող քարհանքից, որից հետո բացվեց Մարտակերտ տանող ճանապարհը:

Հակառակորդն ավելի շուտ հարձակում ակնկալելով Ներքին Հոռաթաղից, ականապատել էր այնտեղից քաղաք մտնող ավտոճանապարհը, փշալարերով պատել և մետաղյա կոնստրուկցիաներ շարել՝ խոչընդոտելու համար հետևակի և զրահատեխնիկայի մուտքը քաղաք:

Երկու բարձունքների գրավումից հետո, սակայն, քանի որ ադրբեջանցիները թողեցին քաղաքը, Ներքին Հոռաթաղի կողմից այլևս ճակատային գրոհի կարիք չեղավ, և Արցախի բանակի սակրավորները ադրբեջանական բանակի երբեմնի դիրքերի կողմից սկսեցին ականազերծել ճանապարհը:

Ափսոս, որ չնկարահանվեցին անկրկնելի այդ պահերը, որոնց հետ չեն կարող համեմատվել ռազմական ֆիլմերի համանման տեսարանները, իսկ գրիչն ի զորու չէ նկարագրելու լարված այդ պահերը, երբ իրար էին միահյուսվել անզգույշ մի շարժմամբ ականի վրա պայթելու վտանգը, որպես առաջ ճանապարհը բացելու ռազմական թելադրանքի պատասխանատվությունը և վերջապես դի-

մացից ակնկալվող հարձակման վտանգը, որի դեպքում պետք է հայտնվեինք թշնամու և ականապատված փշալարերի միջև: Վերջապես ավարտվեցին թե՛ մի հավերժության և թե՛ մի ակնթարթ թվացող այս ժամերը, և բացված ճանապարհով իրար ընդառաջ եկան ու գրկախանվեցին մի կողմից՝ Ներքին Հոռաթաղից և մյուս կողմից՝ քաղաք թիկունքից մտած զինվորները:

2

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԴԱՍԵՐԸ

Նվիրում եմ բոլոր նրանց, ովքեր 1992 թ. դեկտեմբեր – 1993 թ. փետրվարի դաժանագույն ձմեռը անցկացրին Հայաստանի և Լեռնային Արցախի հանրապետություններում:

Մարտակերտի ազատագրումը շրջադարձային եղավ ոչ միայն Արցախի պաշտպանության, սահմանային տարբեր կրակակետերի ոչնչացման առումով, այլև վստահություն ներշնչեց ազատագրված բնակավայրերի ավելի մեծ թվով բնակիչների վերադառնալու իրենց հարազատ վայրերը, քանի որ մինչ այդ քաղաքը ճակատային մի սպառնալիք էր ավտոմայրուղու երկու կողմերում գտնվող բնակավայրերի համար, իսկ այժմ Մարտակերտը ինքը դարձավ ապահով թիկունք նրանց համար:

Կարելի է ականատեսի շատ վկայություններ, հերոսական և հուզիչ պատմություններ բերել կամ ցույց տալ ռազմաստրատեգիական այն բեկումնային նշանակությունը, որն ունեցավ Մարտակերտի ազատագրումը ԼՂՀ անվտանգության և մարտական գործողությունների հետագա ընթացքի վրա: Քսանամյա հեռավորությունից այսօր, սակայն, պակաս կարևոր չեն Մարտակերտի պարտությունների և հաջողությունների դասերը, որոնք որքան ծանր ու ողբերգական են, այնքան ուսանելի են և զարմանալի մի զուգահեռ են գծում մեր օրերի հետ:

Նախ, վերհիշելով 1992 թ. ամռան և աշնան հասարակաքաղաքական ընդհանուր իրավիճակը Հայաստանում, ցավով և որպես զգուշացում կարող ենք արձանագրել, որ ընդդիմության և իշխանության մի ընդհանուր հայտարարի չգալու, պաշտոնների բաժանման սակարկմամբ զբաղվելու համար ո՛չ ընդդիմության և ո՛չ էլ իշխանության ներկայացուցիչներն են տուժում, այլ մեր ժողովուրդը՝ ռազմաճակատից բերվող իր զավակների դիակներով և գաղթական դարձած բնակչությամբ:

Շուշի–Մարտակերտ զուգահեռը հիշեցնում է ժողովրդական այն խոսքը, թե պարտությունները որբի գլխի նման անտեր են, իսկ հաղթանակները բազում տերեր են ունենում: Շուշին բարձրակետն էր տարված հաղթանակների, իսկ Մարտակերտի հաղթանակը ծնվեց պարտությունների շարանից: Ահա այս պատճառով Շուշիից և Մարտակերտից քսան տարի անց դարձյալ վեճ է գնում Շուշիի դափնիները բաժանելու և վերաբաժանելու համար, իսկ Մարտակերտի հաղթանակն անգամ տեր չունի, որովհետև ով տեր կանգնի այդ հաղթանակին, ինչ–որ տեղ տեր է կանգնելու նաև նախորդող պարտություններին:

Շուշի–Մարտակերտ զուգահեռը նաև մի տխուր իրողություն է բացահայտում, թե որքան դժվար է հայը ետ վերադառնում տեր կանգնելու իր հայրենական տանը, այնքան հեշտությամբ են մեր հարևանները առաջ գալիս տեր կանգնելու նույն այդ տներին: Մարտակերտի ազատագրումից հետո, երբ քաղաքը թողնելուց ընդամենը մեկ տարի էր անցել, ետ գալը նկատելի հոգեբանական մի պատնեշի էր դեմ առնում, այնինչ նույն այդ մեկ տարվա ընթացում ադրբեջանցիները հասցրել էին որոշակիորեն վերաբնակեցնել քաղաքը և շրջակա գրավված հայկական բնակավայրերը: Պատճառը միայն անվտանգության երաշխիքները չէին կամ տնտեսական վիճակը, այլ մեր հարևանների՝ մեր երկրին տիրելու և մեր՝ աստիճանաբար երկիրը թողնելու դարերով նստվածք տվող հոգեբանությունը: Փոփոխական հաջողություններով ընթացող ռազմական գործողությունների պայմաններում դեպքերի զարգացումը ցույց տվեց, որ ադրբեջանցիները անվտանգության շատ ավելի քիչ երաշխիքներ

ունեին Մարտակերտում, որտեղ և որևէ արմատ չունեին, սակայն առանց որևէ նպատակահարմարություն քննելու եկան և բնակեցրեցին թողնված և ամայի տները:

Շուշի–Մարտակերտ զուգահեռը, սակայն, հաղթական մեկ այլ խորհուրդ ունի: Շուշին լեռնային բերդ էր, և դարեր շարունակ կորցնելով մեր հարթավայրերն ու հովիտները, մենք ամրացել ենք լեռներում: Լեռները դարձել են մեր պետական միավորումների անվանումների մի մասը՝ Կիլիկիայի հայկական պետությունը աշխարհագրորեն Լեռնային Կիլիկիան էր: Վերջինիս անկումից հետո հայկական պետականության բեկորները եղող մելիքական իշխանությունները պահպանվեցին Սյունիքի լեռներում: Առաջին հանրապետության շրջանը խորհրդանշական ձևով ավարտվեց Լեռնահայաստանով, իսկ Արցախի պետական կազմավորումն անվանվեց Լեռնային Ղարաբաղ:

Լեռնային այս շարքում Մարտակերտի դաշտային հատվածի մի մասը եղող Մարտակերտ քաղաքը ազատագրելը խորհրդանշեց վերադարձը հարթավայր և հարթավայրին տեր կանգնելու հոգեբանությունը:

Մարտակերտ–Կիչան–Չլդրան–Դրմբոն–Կուսապատ–Ներքին Հոռաթաղ լեռնային ճանապարհը նաև սովորեցրեց, թե նույն ճանապարհը որքան տարբեր է նահանջելու և հարձակվելու ճանապարհներին: Նահանջը և փախուստը խոչընդոտներ չունեն: Այն որքան էլ կսկծալից, այնուամենայնիվ, մի հարթ ընթացք ունի: Նույն ճանապարհը, սակայն բազում պատնեշներ ունի հարձակման ճանապարհին, երբ յուրաքանչյուր ոլորանը մի դարանակալ որոգայթ է թվում:

Մարտակերտը եկավ սովորեցնելու, որ հայրենիքին կապվածությունը մեծապես հայրենի հիշատակներին կապվածության միջոցով է արտահայտվում: Մարտակերտի նահանջի և վերադարձի ճանապարհին խորհրդանշական մի դարձակետ էր Գանձասարը: Գաղթող ժողովուրդը խորաձայն մի հառաչանքով էր հայացք նետում վանքի երևացող գմբեթին՝ անցնելով Մարտակերտի վերջին

հատվածը, և ոչ պակաս ալեկոծումներ էր ունենում հաղթանակից հետո՝ ետդարձի ճանապարհին:

Մեծ խորհուրդ ունի այն իրողությունը, որ 1918 թ. ռազմաճակատի գիծը կանգնեց Ս. Էջմիածնի, իսկ 1992 թ. հուլիս–օգոստոսին՝ Գանձասարի դիմաց: Որքան խամրում է ազգային–հոգևոր նվիրական այս հիշատակների զգացողությունը, այնքան հայրենիքը վերածվում է անհիշողություն մի տարածքի, և քննարկվում է, թե տնտեսապես որքանով է ձեռնտու ապրել այնտեղ որպես գործարար նպաստավոր մի միջավայրում:

Քսանամյա հեռավորությունից, սակայն, Մարտակերտի դասերի դասը այն իրողության ընդգծումն է, թե որքան հեշտ է հայրենիքի որևէ մաս հանձնելը, բազմապատիկ ավելի դժվար է այն ետ բերելը: Երկու ամսում տրվածի մի մասը ետ բերվեց մինչև 1994 թ. մայիսը ձգվող տառապանքով և արյունահեղ մարտերով, ու պատահական չէ, որ ժողովուրդը դաժան մի բառախաղով հանել էր Մարտակերտի վերջին տ–ն, իսկ առաջինը փոխել դ–ի:

Դասերի այս դասը մեզ թելադրում է մի զուգահեռ գծել քսան տարի առաջվա ռազմաքաղաքական իրավիճակի և այսօրվա քաղաքական կյանքի միջև: Այն մեզ սովորեցնում է, որ չպետք է թույլ տալ պարտությունից ծնված նահանջը խուճապի վերածվի: Մարտակերտի նահանջի օրերին, երբ ամենահզոր զենքը հեռահար հրետանին էր, ինչպես ժողովուրդն էր ասում, խուճապը նրանից ավելի հզոր զենք դարձավ և ավելի մեծ ավերներ գործեց: Նաև խուճապն էր, որ կազմալուծեց ռազմաճակատի գիծը:

Խուճապի, հոգեբանական ընկճվածության, անգամ չհիմնավորված վախի զգացմամբ թողնել փախչելու գրեթե բնազդական դարձած զգացումը հաղթահարելու այն ժամանակվա փորձը այնքան ուսանելի է նաև այսօրվա արտագաղթելու տրամադրությունների ուժգնացման պայմաններում, երբ մեր երկրի վիճակը, այնուամենայնիվ, համարժեք չէ առկա որոշակի անկումային տրամադրությանը:

1992–ի ամռանը խուճապի և նահանջի պայմաններում հնարավոր եղավ հասնել հոգեբանական բեկման ոչ թե կեղծ հերոսական

լուրեր տարածելով, չեղած հաղթանակները տարփողելով, որովհետև, միևնույնն է, սուտը կարճ ժամանակ անց պարզվում է, և առաջ եկած հուսալքությունը անհամեմատ մեծ ավերներ է գործում, այլ ճշմարտությունից քամելով հնարավոր դրականը, թեկուզև չնչին, բայց և իրական հաջողությունը: Ռազմաճակատի հյուսիսային գծում հակառակորդի որևէ հարձակման հետ մղելը, որի լուրը տարածվում էր դիրքերով և նահանջի ճանապարհին, զինվորներին տոգորում էր այն գաղափարով, որ այնուամենայնիվ հնարավոր է կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը:

Հոգեբանական բեկման կարևոր բաղադրիչն էր դառնում հակառակորդի ոչ միայն զրահատեխնիկաո խոցելն ու այրելը, այլև անգամ տանկի աշտարակը վնասելո ու անշարժացնելը և կամ նռնականետի հարվածով թրթուրավոր տեխնիկայի շղթան կտրելը և տեղում անշարժացնելը:

Խնդիր էր դրված իմաստավորել ամենաչնչին իսկ ռազմական հաջողությունները, չթողնել, որ նահանջը փոխվի խուճապահար փախուստի, դանդաղեցնել և ապա կանգնեցնել այդ ընթացքը, ֆիքսել խոր վերքի նման Արցախի մեջ մտած ռազմաճակատի նոր գիծը, ապա դիրքավորվել, հավաքել ուժերը և պատրաստվել պատասխան հակահարձակմանը:

Պատերազմական պայմաններում սրվում և ամենաանսովոր արտահայտությունն են ստանում նաև մարդկային ողբերգությունները: Սկսված հոգեբանական բեկումը և ռազմաճակատում տարված հաղթանակները պարտադրեցին ոչ միայն ողջերի, այլև զոհվածների վերադարձը, որը դարձավ Արցախի ապագայի հանդեպ հավատի բարձրագույն արտահայտությունը: Մարտակերտի գնդի զոհված զինվորները հիմնականում ամփոփվում էին Ստեփանակերտի զոհվածների պանթեոնում: Նրանց հարազատները, որպես մի յուրօրինակ մխիթարություն, ասում էին, որ եթե հաղթանակ լինի, տանելու ենք մեր գյուղերը: Ռազմաճակատի գծի միայն առաջ գնալու հանդեպ աներեր հավատի պայմաններում կարող էին մարդիկ նման ձևով մտածել, որովհետև Աստված մի արասցե, եթե այն

ճեղքվեր, ողջերը կարող էին նահանջել, իսկ զոհվածների շիրիմները կպղծվեին թշնամու կողմից:

Եվ այսօր Մարտակերտի հաղթանակի դասերը ավելի քան քսանամյա հեռավորությունից մեզ սովորեցնում են, որ պարտություններից ոչ թե պետք է հուսահատվել, թևաթափ լինել ու թողնել հեռանալ, այլ համախմբել ուժերը, հասնել ներքին կարգուկանոնի և ինքնակազմակերպվածության, ֆիքսել այսօրվա իրական վիճակը, բայց ոչ նրան համակերպվելու, այլ այն դարձնելու սկսվելիք փոփոխությունների ելակետը:

Մարտակերտի նահանջին հաջորդած բեկումը մեզ սովորեցնում է վերջ տալ արտագաղթի մասին վայնասունին, այն օրերի ռազմական փոքր հաղթանակների նման վեր հանել ամենափոքր իսկ դրականը, ոգևորիչը: Ոչ թե հուսալքել ժողովրդին՝ շարունակ կրկնելով և անգամ հուշելով, թե մարդիկ անկարելի վիճակից թողնում գնում են, այլ համախմբվել անելանելի վիճակներից ելքեր գտնելու և մեր կյանքի այլանդակությունները իրար հետևից վերացնելու համար:

Վերջապես, ինչքան էլ խոսենք բնակչության սպառնալի արտահոսքի մասին, այնուամենայնիվ կա և լինելու է իր հանդերին կառչած և բանակ զորակոչված իր որդիներով այդ հանդերը պահող մեր ժողովուրդը և վստահաբար նա իր միջից ծնելու է այն նվիրյալներին, ովքեր հայրենի հողը պահելու վճռականությամբ սկսելու են այսօրվա հոգեբանական այն բեկումը, որը ժամանակին տեղի ունեցավ Մարտակերտի ճակատում:

ՔՍԱՆԱՄՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նվիրում եմ լեգենդար հինգերորդ բրիգադի
բոլոր մարտիկներին:

Ուղիղ քսան տարի առաջ՝ 1994 թ. ապրիլի 12-ին, ազատագրվեց Մատաղիսը, և ռազմաճակատի գիծն սկսեց շարժվել դեպի հյուսիս՝ դեպի Թալիշ և նրանից վեր գտնվող լեռնաշղթայի Միր Բաշիրի վրա իշխող բարձունքները:

Մատաղիսն ազատագրվեց մինչ այդ տեղի ունեցած Շահումյանի և Մարտակերտի՝ 1992 թ. հունիս-հուլիսյան նահանջին ու գաղթին հաջորդած այս շրջանից հետո: 1993 թ. վերջին՝ Ամանորին նախորդող օրերին, ադրբեջանական բանակն անցավ ընդհանուր հարձակման՝ մոտենալով Մարտակերտ քաղաքին, ինչպես նաև փորձելով գրավել Հաթերքը և փակել Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը՝ շրջապատման օղակի մեջ առնելով Թարթառի երկայնքով ձգվող հայկական պաշտպանական ուժերի դիրքերը:

Այս իրավիճակում բառացիորեն մեկ-երկու օրվա ընթացքում Մարտակերտի ճակատ փոխադրվեց և ընթացքից պաշտպանական բնագծեր գրավելով՝ հակառակորդի առաջխաղացումը նախ կասեցրեց և ապա հունվար-մարտ ամիսներին, հետևողականորեն բնակավայր առ բնակավայր ազատագրելով, դեպ Մատաղիս շարժվեց Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի գլխավորած հինգերորդ բրիգադը:

Հունվարի վերջին և փետրվարի սկզբին Մաղավուզի և Հակոբ Կամարիի ազատագրումը վերջնականապես վերացրեցին Մարտակերտ շրջկենտրոնին այս ուղղությամբ սպառնացող վտանգը, և անմիջական նախադրյալներ ստեղծվեցին առաջանալու Մատաղիսի ուղղությամբ:

Այս ճանապարհի հաջորդ կարևոր քայլը դարձավ բրիգադի համար թիկունքային սպառնալիք եղող և անմիջականորեն Մատաղիսի հետ կապված Տոնաշենի գյուղախմբերի ազատագրումը մարտին: Մաղավուզը Տոնաշենից բաժանող պայթեցված կամրջի փոխարեն սակրավորական բացված կամրջով իրականացվեց մի անհավատալի գետանցում, և բրիգադի ուժերը գրավեցին Տոնաշենը ու մոտեցան Մատաղիսի ջրամբարին, որի կողքով տարածվում էր գյուղը:

Դիրքային ձեռք բերված այս առավելությունը մինչև իրականացնելը Մանվել Գրիգորյանի գլխավորությամբ բրիգադը ձեռնամուխ եղավ նախ ռազմատեխնիկական ապահովման ենթակառուցվածքներ ստեղծելուն՝ ապահովելու համար զինամթերքի անխափան մատակարարումը, զինտեխնիկայի առաջխաղացումը, վիրավորներին շուտափույթ օգնության համար ճակատային գծից ետ բերելը, որն իսկապես փրկեց արյունաքամ եղող բազմաթիվ զինվորների կյանքը, միաժամանակ օգնության շտապող ուժերին հնարավորություն տալով արագ տեղաշարժվելու:

Հյուսիսային Արցախի սառնաշունչ ձմռանը՝ փետրվար-մարտ ամիսներին, փորվեցին և ընդարձակվեցին դեպ Մատաղիս տանող լեռնային նեղ կածաններն ու ճանապարհները: Սառած և քարացած հողի հետ կռիվ էր տրվում գիշեր ու ցերեկ, և արդյունքում կառուցվեցին այնպիսի ճանապարհներ, որոնք բանակին և բնակչությանը ծառայեցին նաև զինադադարից հետո:

1992 թ. հուլիսին Մատաղիսից դեպ Մարտակերտ տանող բոլոր ճանապարհները վերածվել էին գաղթող ժողովրդի մարդկային մի կենդանի գետի: Պարզվեց, սակայն, որ այս ճանապարհներից և ոչ մեկով հնարավոր չէր իրականացնել Մատաղիսի ազատագրման գրոհը: Պատճառը միայն այն չէր, որ այդ ճանապարհները գտնվում էին ուղիղ կրակի տակ, այլ որ գյուղը ջրամբարի հետ գոգավորության մեջ էր, քանի որ ջրամբարները կառուցվում են նման գոգավորություններում, որպես բնական քարե ամաններ, որ այնտեղ ջուր կուտակվի:

Նման պայմաններում Հակոբ Կամարիից կամ Տոնաշենից իջնել այդ գոգավորության մեջ, նշանակում էր կենդանի թիրախ դառնալ գյուղի վերևում գտնվող հակառակորդի գնդացրային և հրետանային կրակի համար: Նման ձևով, քանի որ հայկական ուժերի ձեռքին գտնվող Հակոբ Կամարիի կողմից ևս Մատաղիսը տեսանելի նշանառության ներքո էր, ուստի ադրբեջանցիները ևս այնտեղ գրեթե մուտք չէին գործում, որով այս բնակավայրը գտնվում էր համարյա չեզոք գոտում:

Մատաղիսի նման դիրքը բացառում էր ճակատային գրոհը՝ առաջնությունը տալով նապոլեոնյան «Գլխավորը տեղաշարժերն են (մանյովրները)» մոտեցմանը: Ահա այս պատճառով թևերի աջակցությամբ ճակատային գրոհի փոխարեն ընտրվեց թևային բարդ տեղաշարժերով հարձակումը, որի նպատակն էր լեռնային անցմամբ խորանալ թշնամու թիկունքը և այնտեղից հարվածել Մատաղիսը կրակային նշանառության տակ պահող կետերին, որին զուգահեռ զարգացնել հաջողությունը Տոնաշենի ամբարտակի ուղղությամբ, իսկ Հակոբ Կամարիից լեռնային ոլորապտույտ ճանապարհով իջնել և ջրամբարի ջրակարգավորիչ պատնեշի վրա կառուցված ճանապարհով մտնել գյուղ: Այնուհետև թե՛ գրավված Արեգասարի լեռնային ճանապարհով և թե՛ ուղղակիորեն Մատաղիսից բրիգադի երկու թևերում գտնվող Մարտակերտի գնդի և Շահումյանի պարտիզանների հետ շարժվել դեպի Թալիշ:

1992 թ. ամռան գաղթի սև օրերին, երբ թվում էր, թե Շահումյանի ու Մարտակերտի ժողովրդի հետ այստեղից նաև հայկական շունչն է հեռանում, Թարթառի կիրճը անդնդասույզ մի ձոր էր հիշեցնում, իսկ հիմա թվում էր, թե ժպտում է զմրուխտյա թավիշ իր զույգ ափերով:

Բոլոր նրանց, ովքեր դժբախտություն էին ունեցել այստեղով անցնելու 1992 թ. գաղթի օրերին, մինչև 1994 թ. ապրիլի 12-ը Թարթառի կիրճի ու Մատաղիսի ջրամբարի պատկերները հանգիստ չէին տալիս՝ երևալով որպես ցնորք, տեսիլք ու միրաժ, և վերջապես եկավ վերստին իրականության վերածվելու պահը:

Թալիշ–Մատաղիսյան գործողության մասնակիցների անունները կամ մեկ առ մեկ պետք է նշել, որը հնարավոր չէ, կամ էլ հավասարաբար հիշել նրանց բոլորին: Բրիգադի հրամանատար Մանվել Գրիգորյանի կողքին, սակայն, պարզապես հնարավոր չէ չհիշել շտաբի պետ, գնդապետ Ֆրունզե Ավագյանին՝ մեր սիրելի Պալկովնիկին, ով սկզբից մինչև վերջ իր հսկայական ավանդն ունեցավ այս գործողության ծրագրմանը և իրականացմանը: Բարեբախտաբար, այսօր ևս նույն նվիրվածությամբ և եռանդով նա շարունակում է իր նպաստը բերել մեր բանակաշինությանը:

Նաև անհնար է չհիշել երկու գլխավոր ուղղությունների՝ Արեգասարի և Հակոբ Կամարիի հրամանատարներ Մեխակ Մեխակյանին և Արայիկ Ավագյանին՝ Գժին, ովքեր, ավա՜ղ, այլևս մեզ հետ չեն: Այսօր նրանք և բրիգադի ընկած մյուս մարտիկները ոչ միայն կենդանիորեն հիշվում են, այլև ներկա են որպես Մեխակի և Գժի պոստեր ու որպես հիշատակի խաչքարեր, որոնք տարածվում են դիրքերի երկայնքով մեկ:

Մատաղիսի ազատագրումից մի քանի օր անց թշնամին, ուշքի գալով կրած պարտությունից և վերախմբավորելով ուժերը, փորձեց անցնել ընդհանուր հակահարձակման, և ջրամբարի կապույտ հայելին սկսեց ցնցվել տագնապած ալիքներով, սակայն պատնեշը, բարեբախտաբար, ճաքեր չտվեց:

Պահպանել գրաված դիրքերը՝ նշանակում էր թշնամուն՝ մեծ շառավիղ ընդգրկող հրետանային վերահսկողությամբ սեփական կամքը պարտադրել և մեզ ընդունելի խաղաղություն հաստատել: Հակառակորդը չէր հաշտվում այս մտքի հետ, և ապրիլի 22-ից սկսած՝ ամեն օրը անցնում էր հրետանային կրակի ներքո, երբ գրեթե հնարավոր չէր լինում տեղաշարժը, իսկ սնունդն էլ ձեռքով էին հասցնում դիրքերը, հասցնելուց հետո էլ այն ուտում էին ոչ թե ըստ օրվա ժամերի, այլ այն կարճ պահերին, երբ նվազում էր հրետանային կրակը:

Ավելի քան չորս տարի շարունակված պատերազմի ավարտին Մատաղիսի ազատագրումից հետո մնալու էր ուղիղ մեկ ամիս՝ պատերազմի դաժանագույն ամիսը: Մինչ այդ Ադրբեջանը, չհամաձայնելով զինադադար հաստատելու Ռուսաստանի և Արևմտյան միջնորդների խաղաղարար առաջարկներին, այնուամենայնիվ գիտակցում էր, որ առաջիկայում պետք է զինադարար հաստատվի: Վերջին այս մեկ ամսվա ընթացքում հակառակորդն ամեն ինչ արեց, որ այն կնքվի իր համար ավելի նպաստավոր պայմաններով: Օգտվելով զորքի թվաքանակի և զինտեխնիկայի անհամեմատ գերակշռությունից՝ միաժամանակ ընդհանուր հարձակման անցավ թե՛ հարավում՝ Ֆիզուլի–Հորադիս ուղղությամբ, և թե՛ հյուսիսում՝ Մարտակերտի ողջ ուղղությամբ:

Ապրիլի քսանից հետո մարտական գործողությունների սաստկացումն ուներ նաև հոգեբանական մի այլ կարևոր պատճառ: Արցախյան շարժման սկզբից ադրբեջանցիները ամեն տարի ասում էին, որ մի նոր ապրիլի քսանչորս են բերելու հայերի գլխին, իսկ ամեն ապրիլի քսանչորսի նախօրեին հայկական կողմն ասում էր, որ հայկական բանակն է այն երաշխիքը, որն այսուհետ բացառելու է մի նոր ապրիլի 24–ի կրկնությունը:

Ադրբեջանական կողմի չիրականանալիք այս մտայնությանը վստահաբար ամեն տարի առավել զգոնությամբ կդիմավորեն մեր ուժերը ապրիլյան ոգեկոչման օրերին:

Պատմական բախտորոշ իրադարձությունների ժամանակ տեղի ունեցած թերացումների և հուսալքության համար մի տևական ժամանակ վճարում են հաջորդ սերունդները:

1994 թ. ապրիլի 12–ին Մատաղիսի ազատագրման վերջին փուլ մտած մարտական գործողությունները պատասխանելու էին այն հարցին, թե հակամարտող ուժերը ինչ պայմաններում են զինադադար հաստատելու և վերահսկելու ու հակազդելու ինչ մեխանիզմներ են ունենալու: Երկու կողմերն էլ, թեև տարբեր տեսանկյուններից, սակայն իրենց առջև դրել էին միևնույն խնդիրը: Հայկական կողմի նպատակն էր պահել Թալիշի դիմահայաց բարձունքները և ձգտել ազատագրել Մարտակերտի դաշտային հատվածը, իսկ Ադրբեջանի նպատակն էր պահել դաշտային հատվածը և աշխատել ետ գրավել Թալիշի դիմացի լեռնաշղթան: Հայկական ուժերը, պահելով այս բարձունքները, հոթիոահրետանային վերահսկողություն էին սահմանում ողջ Միր Բաշիրի, այդ թվում և քաղաքի վրա և իշխում ներքևում տարածվող հարթավայրին: Ադրբեջանական ուժերը եթե կարողանային ետ վերցնել այս լեռնաշղթան, ապա կվերանար դեպի հարթավայր տարածվող սպառնալիքը: Միաժամանակ հետադարձ ընթացքով նրանք կկարողանային ետ վերցնել Թալիշն ու Մատաղիսը և իրենց համար այնքան կենսական նշանակություն ունեցող ջրակարգավորիչ ջրամբարը:

Հայկական ուժերը և հատկապես հինգերորդ բրիգադը եթե ընկրկեին, ապա այսօր մեր կորուստների շղթան ավելացած կլիներ ևս մեկ թանկ ու նվիրական օղակով: Մենք նաև կկորցնեինք հակառակորդի վրա իշխող դիրքերը և կհայտնվեինք արդեն նրա անհամեմատ ավելի նպաստավոր դիրքերի թելադրանքի և ճնշման ներքո, ինչպիսին որ էր իրավիճակը ապրիլի 12–ից առաջ:

Հարթավայրային աննպաստ տեղանքի և մի շարք այլ գործոնների պատճառով թեև հնարավոր չեղավ ետ բերել Մարտակերտի դաշտային հատվածը, փոխարենը, սակայն, որպես այսօրվա առաջնային գծի հյուսիսային վահան՝ պահպանվեցին Թալիշ–Մատաղիսյան գործողության ընթացքում հաստատված դիրքերը:

Մատաղիսի ազատագրումը քսանամյա հեռավորությունից որպես մի դաս մեզ սովորեցնում է.

Առաջին՝ արտաքուստ անակնկալ և անբացատրելի կորուստներին նախորդում է անտեսանելի նահանջը երկրի կյանքում և տարբեր բնագավառներում, և այս իրավիճակով պայմանավորված հուսալքումը: Նաև հակառակը՝ նույնքան անակնկալ և կայծակնային թվացող հաղթանակներին նախորդում է երկրի ուժերի ողջ լարումը ու տևական նախապատրաստական աշխատանքը ռազմաճակատի գծում համապատասխան ինժեներա–տեխնիկական կառուցվածք-

ների ստեղծմամբ և ռազմա–տեխնիկական հանդերձավորմամբ ու մատակարարմամբ:

Երկրորդ՝ 1994 թ. միջնորդ երկրների կողմից գարնանային բանակցային գործընթացի ժամանակ իրականացված Մատաղիսի ազատագրումը եկավ ապացուցելու, որ ժողովրդի համապատասխան ռազմա–քաղաքական կամքը կարող է և ի զորու է վերախմբագրելու արտաքին ուժերի ներկայացվող ծրագրերը:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Երգը չթողեց որ մարտիկ դառնամ,
Մարտը չթողեց որ երգիչ դառնամ:
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ

Ամեն պատերազմ ունի իր սկիզբը և ավարտը: Արցախյան պատերազմը, սակայն, ոչ սկսվեց և ոչ էլ ավարտվեց, այլ զինադադարով ընդհատվեց, և այսպես շարունակվում է արդեն տասը տարի:

Դժվար է ասել, թե երբ սկսվեց այդ պատերազմը. 1988–ի փետրվարին Ստեփանակերտում գումարված մարզխորհրդի նիստով, Սումգայիթով, այնուհետև Բաքվի, Գանձակի և մի քանի տասնյակ հայկական բնակավայրերի նույն հոկտեմբեր–դեկտեմբերյան տեղահանություններով, 1988–89 թթ. Արցախում բնակավայրերի և ֆերմաների շուրջը կազմակերպված զինված հերթապահությամբ, թե 1990 թ. հունվարին Երասխավանի կռիվներով, Գետաշենով և կամ 1991 թ. գարնանը և ամռանը խորհրդային բանակի միջոցով Ադրբեջանի ներքին զորքերի իրականացրած՝ Հադրութի, Բերդաձորի և Շահումյանի շրջանի երկու տասնյակ գյուղերի բռնի գրավմամբ և հայաթափմամբ, սակայն 1991 թ. սեպտեմբերին, երբ ընթանում էին այս գյուղերի ազատագրման գործողությունները, արդեն սկսվել էր պատերազմը:

Պատերազմները ունենում են ոչ միայն սկսվելու օրը, այլև այն ուղղությունը և կետը, որտեղից հարձակմամբ սկսվում է այն: Արցախյան պատերազմը, սակայն, չունեցավ նաև այդ կետը, և չենք կարող ասել՝ որտեղից սկսվեց այն. 1988 թ. փետրվարին Աղդամից Ասկերանի վրա հարձակմամբ, Խոջալուով դեպ հայկական բնակավայրերը գնացող ճանապարհի գնդակոծությամբ,

թե 1991 թ. Կրկժանից Ստեփանակերտի կից թաղամասերի վրա բացված կրակով, սակայն 1991 թ. աշնանը արդեն ռազմաճակատի գծի էին վերածվել Արցախի սահմանները:

Այս պատերազմի երրորդ յուրահատկությունն այն էր, որ պատերազմները թեև սկսվում են բանակների բախմամբ, այս պատերազմը, սակայն, սկսվեց ոչ թե բանակների կռվով, այլ բանակների ստեղծմամբ, ոչ թե հակառակորդ բանակներով սկսվեց պատերազմը, այլ վերջինս ստեղծեց իրար դեմ կռվող բանակներ:

Այս գրքում բերված են այդ պատերազմին նվիրված և այդ պատերազմի օրերին գրված հոդվածներս: Միայն Արցախին նվիրված ավելի քան 120 հոդված եմ գրել 1988–93 թթ.: Այս գրքում, սակայն, ներկայացրել եմ այն հոդվածները, որոնցում արդեն արտացոլված է 1991 թ. կեսերից սկսված բուն պատերազմը: 10–13 տարի անց հրատարակելով այդ հոդվածները՝ որևէ բառ իսկ չեմ ավելացրել, այլ բերել եմ այնպես, ինչպես որ ժամանակին լույս են տեսել թերթերում:

Այն տարիներին գրելիս իմ գլխավոր խնդիրն է եղել ներկայացնել ծավալվող պատերազմի ընթացքը, որպես ականատես՝ թղթին և պատմությանը հանձնել մարտական գործողությունների՝ աչքիս առջևով անցած դրվագները՝ կենդանի կյանքի տարբեր պատկերներով, ինչպես նաև դրանց հիման վրա վերլուծական ինչ-ինչ եզրահանգումներ կատարել:

Գրքի գերակշիռ մասը «Երկիրում» հրատարակված հոդվածներն են: Առանձին մի խումբ են կազմում և «Հայ զինվոր», ինչպես նաև «Լուսավորիչ», որի խմբագիրն եմ եղել 1991–92 թթ., «Ար», «Հայրենիքի ձայն», «Դպրություն» և «Խոսք» թերթերում տպագրվածները:

Ավելի քան վեց տասնյակից անցնող այս հոդվածները դասավորել եմ ըստ գրության և հրատարակության ժամանակային ընթացքի: Լինելով անմիջական ականատեսն ու մասնակիցը նկարագրված իրադարձությունների՝ իմ առջև խնդիր էի դնում որպես առաջ հրատարակել դրանք: Ինչպես հոդվածների տպագրության ամսաթվերից իսկ երևում է, դրանք «Երկիրում» լույս

են տեսել նկարագրվող իրադարձությունների տեղի ունենալուց ընդամենը մի քանի օր անց, և այդպես՝ մի քանի տարի շարունակ...

1988–89 թթ., երբ 24–25 տարեկանում, լինելով Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի ասպիրանտ, առաջին հուզական տպավորություններս էի հանձնում թղթին, անպատկերացնելի էր, թե այդ ամենը ինչպես և պատերազմական ինչ զարգացումներով էր ձգվելու մինչ 1994 թ. մայիսը: Այս գրքում տեղ գտած հոդվածները ներկայացնում են մինչև 1993 թվականի վերջը ընկած իրադարձությունները: 1994 թ. մարտական գործողությունների մասին ընդամենը մի քանի հոդված կա, որոնք էլ, սակայն, գրվել և տպագրվել են ոչ թե այդ գործողություններից մի քանի օր անց, ինչպես նախորդ տարիներին, այլ մի որոշ ժամանակ անց:

Պատճառն այն է, որ 1994 թ. փետրվարից գտնվել եմ այժմ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի գլխավորած բրիգադում, որի հաղթական երթի հետ եմ անցել այն ճանապարհով, որով 1992-ի ամռանը Մարտակերտի ու Շահումյանի իրար խառնված գաղթի ժամանակ մտածել եմ, թե այս վերջին անգամ է, որ դուրս ենք գալիս Թալիշից, ապա և Մատաղիսից, Թարթառի կիրճից ու ընդհանրապես՝ Մարտակերտի հյուսիսից:

1992-ի ամառային պարտությունների և 1994 թ. մեր բրիգադի գարնանային հաղթանակների զուգահեռների վրա խարսխված տողերը թեև կլինեին լավագույնները մինչ այդ գրվածների մեջ, սակայն ընթացող մարտական գործողությունները դրանք գրելու հնարավորությունը չտվեցին: Դժբախտաբար, հնարավոր չեղավ և զինադադարին հաջորդող ընդհանուր ուժասպառության և սկսված զինադադարի պայմաններում բրիգադի ուժերը վերախմբավորելու և ընթացող մարտերից մարտական հերթապահությանը անցնելու լարված երեք ամիսների ընթացքում:

1994 թ. ապրիլին դեռևս ռազմաճակատի դիրքային առաջին գիծ եղող Մատաղիս-Թալիշ ճանապարհին մայիսի 18-ին ռազմադաշտային սեղանների մոտ Մանվել Գրիգորյանի գլխավորությամբ մեր բրիգադում նշվեց չորս օր առաջ Բիշքեկում

հաստատված զինադադարը և նույն մայիսի 18–ին լրացած իմ 30–ամյակը:

Տասն օր անց՝ մայիսի 28–ին, Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր–Պետրոսյանի հրամանագրով պարգևատրվեցի երկրորդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով, որի մասին օրեր անց պատահաբար իմացա նույն Թալիշ–Մատաղիս ճանապարհի Թալիշի աղբյուրի մոտ՝ մինչ զինվորական վիլիսի վարորդը հովացնում էր մեքենայի շարժիչը, թերթելով նույն այս նպատակով այստեղ կանգնած դիմացի մեքենայի՝ Երևանից բերված թերթերը: Այնուհետև հուլիսի վերջին զորացրվեցի և վերադարձա Երևան:

Նախորդ տարիների չարվածը լրացնելու համար ամբողջովին նվիրվեցի իմ բանասիրական և խմբագրական աշխատանքներին Մատենադարանում ու Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում: Ահա այսպես իրար հաջորդող տարիների ընթացքում այնպես էլ չստացվեց ամբողջացնել 1994–ը: Ինչ էլ գրվեց, գրվեց մի էական տարբերությամբ: Մինչև 1993–ի վերջը ինչ գրել էի, գրել էի անմիջական տպավորությամբ, ավելի շուտ ինքնաբուխ սրտով, որպես կենդանի մի թրթիռը տեղի ունեցածի: Պատերազմից վերադառնալուց հետո ինչ գրեցի, գրվեց մտքով՝ ակամա վերլուծության ենթարկելով անգամ տասը մետր այն կողմ պայթած արկի օդային ալիքի հարվածը:

Այս հանգամանքը պայմանավորված էր երկու պատճառով: Նախ, որ արդեն ամիսներով հաշվվող ժամանակ էր անցել, և երկրորդ, պարզվեց, որ պատերազմը միանգամայն այլ գույներ ունի՝ թեկուզև զինվորների հետ առաջ շարժվող, բայց այնուամենայնիվ ականատեսի, և միանգամայն այլ՝ մասնակցի՝ զինվորի համար: Երկրորդ այս գույնը առ այսօր ես չեմ կարողացել այնպես պատկերել, որ ճիշտ տեսանելի լինի նրանց համար, ովքեր չեն տեսել պատերազմի գույները: Կարծում եմ, սա ավելի շատ ստեղծագործական մի խնդիր է, որը կիրականացնեմ ժամանակի ընթացքում:

Ինչ վերաբերում է այս գրքի հոդվածներին, ապա դրանք ոչ միայն ներկայացնում են պատերազմը, այլև դրանց գրությունն իսկ կրում է պատերազմի կնիքը: Հասկանալու համար, թե ինչպես են գրվել դրանք, հարկավոր է հիշել 1991–93 թթ. և հատկապես մինչև 1992 թ. մայիսը՝ Լաչինի ճանապարհի բացվելը ընկած շրջանը:

Քանի որ պատերազմական այդ տարիներին մարտական օպերատիվ հաղորդագրություններին զուգընթաց կարևորվում էր նաև օպերատիվ հոդվածագրությունը, գոնե «Երկիրի» պարագայում, ուստի ավելի նախընտրելի էր համարվում թեև ոչ լիարժեք ավարտուն, բայց մեկ օր շուտ լույս տեսած հոդվածը, քան օրեր անց առավել ամբողջական ընդգրկմամբ տպագրվածը: Նման պայմաններում գրվածի որակը պայմանավորող կարևորագույն գործոններ էին դառնում հետևյալ հանգամանքները՝ ուղղաթիռի թռչելը, թե տվյալ գործողությունից որքան ժամանակ անց կարող էիր ուղղաթիռով Արցախից գալ. երկրորդ. ուր կիջներ ուղղաթիռը՝ Երևանում, թե Կամոյում կամ Վարդենիսում: Կամոյից եթե էլի հնարավոր էր ինչ–որ ձևով մեքենայով հասնել Երևան, ապա Վարդենիսից հիմնական հույսը էլեկտրագնացքն էր, որն էլ ճանապարհի որևէ հատվածում կանգնում էր հոսանք չլինելու պատճառով և խլում այն րոպեները, որոնք պետք է հատկացվեին հոդվածիդ գրությանը: Այսպես ուղղաթիռ, գնացք ու մեքենա փոխելով՝ ճանապարհային գրառումները երեկոները հոդվածների եմ վերածել «Երկիրի» խմբագրությունում մինչև գիշերվա ժամը երկուսը, արագության համար ինքս թելադրել շարվածք անող աղջիկներին, նրանց հետ միասին սրբագրել ու խմբագրել և այդպես գիշերվա երեքի կողմերը ուղարկել տպարան, որտեղից աշխատող ու չաշխատող հեռախոսներով շտապեցնում էին թերթը տպագրել հասցնելու համար, որից հետո ճանապարհների փոշին վրադ, ոստիկանների կասկածոտ հայացքների ներքո, թե ով է և որտեղից է գալիս, հոգնատանջությունից ճոճվելով՝ պետք է հասնեիր տուն գիշերային ու խավար Երևանով, սակայն, ոչ մի անգամ չեմ զգացել երևանյան խավարը, որովհետև մութը ինքը տեղ չուներ մեր հոգիներում այդ տարիներին, որոնք մեր պատմության ու պայքարի

աստեղային ժամն էին և միայն այդ պայքարին անհաղորդ եղողների կողմից այնուհետև տարիներ անց պետք է բնորոշվեին որպես «ցրտի և խավարի տարիներ»:

Այդ օրերն ու տարիները, երբ օրերը տարիների երկարությունն ունեին և տարիները թռան օրերի նման, հիշելիս անհնար է չհիշել Վազգեն Սարգսյանին:

1991 թ. գարնան վերջից գործնականում անհնար դարձավ ինքնաթիռով Ստեփանակերտ գնալը, եթե արցախյան գրանցում չունեիր: Պարետային բռնությունների լարված այդ օրերին պետք է գնայի Շահումյանի շրջան, ուր արդեն իսկ հայտարարվել էր Մանաշիդ, Բուզլուխ և Էրքեջ գյուղերի տեղահանության մասին: Շահումյան գնալուս օրը Վազգենը անձամբ էր «Էրեբունի» օդանավակայանում կարգավորում տարբեր ուղղություններով գրեթե կիսագաղտնի թռչող ուղղաթիռների գնալը: Երբ արդեն ելել էի այն ուղղաթիռը, որը պետք է իջներ Շահումյանի անտառային բացատներից մեկում, օդաչուի հետ համբուրվելուց հետո Վազգենը, հուզմունքը կատակի վերածելով, օդաչուի խցիկից ներս գոռաց, թե՝ Վարդան, զգույշ կլինես, ուղղաթիռը քեզ համար Ստեփանակերտում իջնող «Յակ» չի:

Մեկ շաբաթ անց՝ այս երեք գյուղերի տեղահանությանը հաջորդող գիշերը, մեր ջոկատների հետ դուրս գալով Էրքեջից, ուր խորհրդային ներքին զորքերի աջակցությամբ մտել էին ադրբեջանական միլիցիայի հատուկ ջոկատայինները, Վերի Շենի դիմահայաց բարձունքում տեսա օրվա տեղաշարժին հետևող Վազգենին: Եկել էր շրջանի զինվորական հրամանատարության հետ միասին ճշտելու հետագա քայլերը՝ պարետային իշխանությունների հետ բանակցություններից մինչև ինքնապաշտպանության հնարավոր տարբերակները: Ինձ տեսնելով, ասես երևի մի րոպե ցրվելու համար օրվա տանջալից տպավորություններից ու լարվածությունից՝ ասաց. «Հիմա զգացի՞ր «Յակի» և ուղղաթիռի տարբերությունը»: Երբ ասացի՝ զգացի՝ ակնարկելով պատերազմի արդեն տեսանելի դարձող ծավալումը, ասաց. «Դեռ շատ կզգաս»:

Խոջալուի կրակակետերի լռեցումից հետո նորից հնարավոր դարձավ ինքնաթիռների՝ Ստեփանակերտում իջնելը, սակայն շարունակական վտանգը կար, որ Աղդամից օդում կխփեն, ուստի օդաչուները, ավիացիայի բոլոր կանոններին հակառակ՝ օդում կտրուկ մի շրջադարձով, որից օդանավի ներսում ամեն ինչ այնպես էր իրար խառնվում, ինչպես ավտոբուսի ուժեղ արգելակումից հետո, միանգամից փոխում էին ուղղությունը՝ դուրս թռչելով հնարավոր հարվածի ընդգրկման շառավղից:

Նման առաջին իսկ թռիչքներից մեկով նաև ես եմ գնացել և էլի շնորհիվ Վազգենի: «Էրեբունի» օդանավակայանում լարված ու դժվարին այդ օրերին նա անձամբ հրահանգեց և անունս մտցրեց նրանց ցանկում, ովքեր առանց որևէ լրացուցիչ գրության «Յակ»-երով կարող էին գնալ Ստեփանակերտ: Թռիչքուղում երբ շնորհակալություն հայտնեցի և գնացի բառի բուն իմաստով բարձվող ինքնաթիռը, ետևիցս դարձյալ նույն հուզումնախառն կատակով, հիմա էլ ասաց. «Զգույշ կլինես, ինքնաթիռը քեզ համար ուղղաթիռ չի»:

Ընդհանրապես զարմանահրաշ, ֆենոմենալ երևույթ է այն իրողությունը, որ ստանալով մարզաշխարհի հետ կապվող կրթություն, իր ներքին էությամբ լինելով ստեղծագործող՝ պատմության մեջ նա մնաց որպես Սպարապետ Հայոց:

1988-ից մաս կազմելով Հայոց համազգային շարժմանը, ընտրվելով ՀՀՇ առաջին և երկրորդ համագումարների պատգամավոր՝ 1991 թ. վերջից բառի բուն իմաստով զինվորագրվեցի Հայ Յեղափոխական Դաշնակցությանը:

Այս հոդվածները գրելու տարիներին, այսպիսով, ես եղել եմ Հայ Յեղափոխական Դաշնակցության շարքերում: Գրել և ապրել եմ դաշնակցական այն նվիրումով ու ոգով, որի ավանդական ընկալումն ուներ մեր սերունդը իմ համալսարանական ուսումնառության տարիներին, որը մի նոր հմայք ստացավ «Դեպի Երկիր» կարգախոսի արցախյան վերարձագանքմամբ, որի ճանապարհի առաջին նահատակներից դարձան համալսարանական մեր ընկերներ Թաթուլ Կրպեյանը և Վարդան Բախշյանը:

Չլիներ այդ տարիներին բնորոշ անկրկնելի այդ նվիրումը, չէին լինի և այս հոդվածները: Այդ տարիները խոսուն վկայությունն են այն իրողության, որ մեծ ծրագրերի հավաքական իրականացման համար առաջնայինը ազգային գաղափարն ու նպատակն են, և որքան խամրում են այդ երկուսը, այնքան գնալով կարևորվում են մնացյալ պայմանները և նյութական գործոնները:

«Երկիրում» տպագրված հոդվածներիս համար մեծապես շնորհակալ եմ թերթի այն ժամանակվա խմբագիր Աղվան Վարդանյանին: Նա հաճախ ինքն էր անձամբ գրեթե վերծանում Արցախից եկողների հետ կամ Դաշնակցության Արցախի կոմիտեի ֆաքսով ուղարկած թղթակցություններս, որոնք երբեմն անընթեռնելի էին միջգյուղական ճանապարհներին գրված լինելու, ապա և կապի այն ժամանակվա պայմաններում ուղարկվող ֆաքսի համարյա սպիտակ էջերի պատճառով: Իսկ եթե ինքս էի գրածներս երեկոյան կամ գիշերը հասցնում խմբագրություն, Աղվանը կանչում էր աշխատողներին և մեղավոր մեղմ ժպիտով ասում, թե ստիպված ենք թերթի երրորդ-չորրորդ էջերի մակետը քանդել: Աչքաչափով հաշվում էր, թե էջում կամ էջերում ինչքան տեղ կգրավեն ձեռագրիս տողերը, և շարվող նյութին զուգընթաց կազմվում էր այդ էջերի նոր մակետը: Թե որքանով են ժամանակի քննությանը դիմացել նման պայմաններում և արագությամբ գրված տողերը, ընթերցողը թող ինքը որոշի և ընդհանրապես նկատի ունենա, որ ծավալվող պատերազմի ոչ միայն արյունոտ դրոշմը, այլև հևասպառ ընթացքի կնիքն են կրում և մեր մյուս հեղինակների բուն արցախյան թղթակցությունները:

Եվ վերջապես այս հոդվածները չէին լինի, եթե չլինեին այս պատերազմում հաղթած զինվորները: Չլինեին նրանք, կամ նրանց փոխարեն լինեին նրանք, ովքեր իրենց նման չէին, չէին լինի և հաղթանակների, պարտության ու հաղթանակի տևական ընթացքը ներկայացնող նման հոդվածները, և փոխարենը կլինեին տարիներ անց գրված հուշագրությունները՝ պտտվելով որևէ ամսաթիվ ունեցող խորհրդանշական սև այնպիսի մի թվականի շուրջ, ինչպիսին որ ժառանգեցինք անցյալ դարասկզբին:

Իմ գրածներում, բացառությամբ զոհվածներին նվիրվածներից, գրեթե անուններ չկան, որովհետև տարբերը ոչ թե ռազմաճակատի ողջ երկայնքով դիրքավորված զինվորներն էին, այլ նրանց անուն ազգանունները: Ինչ տարբերություններ էլ որ կային, ջնջեց ռազմաճակատի գիծը, որով մտավորականը աշխարհին ինչ-որ տեղ սկսեց նայել «բերթի» օրենքներով, իսկ այնտեղից եկածը պատվի իր ընկալմամբ դիրքերը պահելու «երդում կերավ» և ավելի շուտ իր կյանքից հրաժարվեց, քան երդումից: Նույն կերպ քաղաքից եկածը վերագտավ իր պապերի հանդերի բույրը, դաշտերի ու ֆերմաների ճանապարհը, իսկ այդ ճանապարհների հողագործները քաղաքի հետ շփվեցին այնտեղից բերված ռազմական հանդերձանքի ու տեխնիկայի միջոցով: Պոստերում ձեռքից ձեռք փոխանցվող ջրի տափաշիշը, կպցվող ծխախոտի կրակը, մարտական մեծ թերմոսների և կրակված արկերի պարկուճների մեջ լցվող շիլան մեկից մյուսին փոխանցեց բնավորության մի-մի գիծ ու հատկանիշ:

1991-92 թվականների այս ջոկատները քաղաքակիրթ աշխարհում նույնիսկ պարտվել չէին կարող, որովհետև նման զորամիավորումները տանկերի, ծանր հրետանու և ռմբակոծիչների առջև անձնատուր կլինեին մինչև կռվի սկսվելը, Արցախում, սակայն, նրանցով 1992 թ. կեսերից սկսվեց ձևավորվել 1993-94 թվականներով անցած այսօրվա բանակը, և այս գիրքը այդ ճանապարհին ընկածների, այդ ճանապարհը բացածների և այսօր էլ այդ ճանապարհով անցնողների մասին է:

Այդ ճանապարհն սկսվեց Երասխավանով, շարունակվեց 1991 թ. գարնան և ամռան՝ Բերդաձորից մինչև Շահումյան ձգվող տեղահանության ալիքով՝ 1991-ի աշնանից վերածվելով կորցրածը ետ բերելու, Արցախի ներսի կրակակետերի լռեցման անկասելի մի ընթացքի, որի բարձրակետն էր դառնալու Շուշիի ազատագրումը, որտեղից ճանապարհը տանելու էր մինչև Գորիս: 1992 թ. մայիսյան հաղթական այս երթին, սակայն, մեկ ամիս անց հաջորդելու էր Հյուսիսային Արցախի գրավումը, չարենցյան բնորոշմամբ՝ «անկումների սարսափից» ցնցելով ողջ Հայաստանը և Արցախը:

Ռազմաճակատի գիծը, սակայն, կայունանալու էր երկու ամիս անց, ապա և սկսվելու էր հոգեբանական բեկումը Մաճկալաշենի մոտ թշնամու ետ շպրտմամբ, ու կորուստների շղթային հաջորդելու էին հաղթական առաջին համազարկերը՝ Մարտունի շրջկենտրոնը կրակային օղակի մեջ առած երեք կրակակետերի ոչնչացմամբ և Արցախի աղդամյան Աբդալ-Գյուլափլու կոյրաղիքի կտրմամբ: Մարտակերտի շրջանից մնացած վերջին՝ Առաջաձոր-Կիչան հատվածից էլ 1993 թ. փետրվարից սկսվելու էր ԼՂՀ պաշտպանության բանակի այն հակահարձակումը, որն 1993-ի ամռանը ավարտվելու էր մի կողմից Մարտակերտ շրջկենտրոն հասնելով և մյուս կողմից՝ Մայր Արաքսի արտասուքը սրբելով: 1993 թ. դեկտեմբերին և 1994-ի հունվարին վերստին մի պահ երերաց ռազմաճակատի գիծը, սակայն պատասխան հակահարձակմամբ այդ գիծը անցավ Թարթառը՝ 1994 թ. մայիսին հասնելով Ինջա գետին և Հյուսիսային Արցախի մատույցներին՝ Գյուլիստանի մոտից մինչև Թալիշ, ապա և հաստատվեց տասնամյա այն զինադադարը, որը շարունակվում է մինչև այսօր:

Զինադադարի հաստատումից հետո Հայաստանից լուրեր իմանալու և այնքան ձգող խաղաղ կյանքի սրտամաշ կարոտը ցրելու համար մարտկոցներով աշխատող մի քանի ռադիոընդունիչներ էինք ճարել օրվա լուրերը լսելու համար: Լեռնային իշխող բարձունքներում, հուրախություն մեզ, պարզվեց, որ լսելի է նաև Երևանը: Հայկական ռադիոյի հաղորդումները ավարտվում էին ժամը 12-ին՝ «Մեր Հայրենիքի» հնչյուններով:

Որպես հիմն՝ այն երբեմն քննադատվում է կատարողական առումով ոչ այնքան բարդ ստեղծագործություն լինելու համար, բայց դիրքերում դիմացից լուսնի լույսի ներքո ծխախոտի մի կայծ կամ զինական հանդերձանքի մետաղյա մի փայլ որոնող սնայպերի նշանառու կրակի սպառնալիքի ներքո զգում էիր, որ ճակատագրով մեզ վիճակված այս հայրենիքում որպես հիմն ապրեցնողն ու գնդի դրոշից մինչև հայրենիքի դրոշը բարձր պահողը «Մեր Հայրենիքն» է: Անկախ պետական օրենքով կանոնակարգված այն պահանջից,

որ նրա կատարման ժամանակ պետք է ոտքի կանգնած լինել, այն հնարավոր չէ նստած լսել: Գոնե դիրքերում հնարավոր չէր:

Միաժամանակ սնայպերական կրակոցների սպառնալիքի պատճառով հնարավոր չէր նաև կանգնելը, և ելքը գտնվեց՝ ծնկաչոք ձգվելով, որով և ավարտվում էր անցնող օրը երեկոյան ժամը 12-ին:

Եվ այս գիրքը նվիրված է նրանց, ովքեր «Մեր Հայրենիքը» հնչելիս ոչ թե կանգնելով կոստյումների փողկապներն են ուղղում, այլ «Մեր Հայրենիքից» հետո թափ տալիս ծնկների կամուֆլյաժի փոշին:

Երասխավանից մինչև Թալիշ ձգված տևական ճանապարհին եղող գետերը՝ պայթեցված կամուրջներով, բացված և չբացված գցովի լաստակամուրջներով ու հոսող ջրերի ընթացքը կտրելով անցած և ծնկների փոշին թափ տվող զինվորներն են այս գրքի հավաքական հերոսը, որի կերպարի ուրվագծման փորձերն են նրանց նվիրված այս հոդվածների տողերը:

Այդ տողերը գրելու պահերին իսկ արդեն զգում էի, որ մեր հասարակությունը մեծ պարտք ունի նրանց հանդեպ, և այդ պարտքը, դժբախտաբար, ավելի մեծացավ պատերազմից հետո:

Նրանք տեր կանգնեցին մեր երկրին, բայց մեր հասարակությունը տեր չկանգնեց նրանց: Ոչ միայն տեր չկանգնեց, այլև չհասկացավ, ավելի ճիշտ չուզեց հասկանալ՝ այսպես սքողելով իր ներքին ոչնչությունը նրանց առջև, ում ինքն այնքան պարտական էր:

Այս գիրքը նվիրելով Արցախյան պատերազմի հատկապես այս մասնակիցներին՝ նրանց անվանել եմ «գարիբալդիականներ» հետևյալ չորս պատճառներով:

Առաջին՝ պատմական այն մեծ ընդհանրության համար, որ կար մասնատված և անկախությունը կորցրած Իտալիայում բռնկված ապստամբության և Արցախյան պատերազմի միջև: Երկրորդ՝ երկու դեպքում էլ այն ավարտվեց հաղթանակով, որով առավել է մեծանում պատմական ընդհանրությունը: Երրորդ՝ երկու դեպքում էլ այնքան շուտ մոռացվեցին պատերազմի ծանրությունը կրած զինվորները, և վերջապես չորրորդ՝ այն պատճառով, որ

համեմատության համար սովորաբար ընտրում են գրական ընդհանրացված հասկացություններ:

Պայմանավորված այն հանգամանքով, որ մեր պետականությունը մնացել էր դարերի խորքում և հայ գրականությունը հայկական կյանքից չէր կարող այս թեմային վերաբերող բնորոշ որևէ օրինակ վերցնել, մեր գրականությունում հայրենիքի ազատության համար մարտնչած և այնուհետև անկախացած հայրենիքի կողմից անտեսված հերոսի թերևս միակ խորհրդանիշը Ավետիք Իսահակյանի «Գարիբալդիականը» պատմվածքի հերոսը՝ իտալացի ծերունի Ջիովանին է: Նա, ով երիտասարդական տարիներին հաղթական մարտերով անցնելով Լոմբարդիայի ծաղկավետ դաշտերով, այնուհետև իր երազած Իտալիայում հողին էր հանձնելու բանվորական ցույցի ժամանակ գնդակահարված որդուն և վշտից ու թոքախտից մահացած հարսին, ապա թոռանը գրկած և սրտի վրա կրելով Ջուզեպպե Գարիբալդիի նկարը՝ գլխիկոր անցնելու էր նույն Լոմբարդիայի դաշտերով դեպ օտարություն, որքան հնարավոր է՝ հեռու Իտալիայից. և հեռավոր Օդեսայում, դառնալով կոշկակար, «հոգին շքեղ երազների մեջ՝ գրկել էր և ամուր սեղմել մանր ու չնչին մարդկանց կոշիկները իր հերոսական սրտի վրա»:

Այս պատմվածքը մարգարեական մի կանխատեսությամբ Վարպետն, ասես, գրել էր մեր օրերի համար: Նույն այս պատմվածքը, սակայն, նաև մեկ անգամ ևս սովորեցնում է, որ հայրենիքի զինվորի ամենամեծ հպարտությունը և հարստությունը հայրենիքի նվաճված ազատությունն է:

Ուշադիր նայեք Արցախյան պատերազմի մասնակից մերօրյա բոլոր գարիբալդիականների աչքերին, և անկախ նրանից, թե որտեղ և ինչ վիճակում նրանք կլինեն՝ դուք նրանց հայացքի խորքում կգտնեք վերևից տեղացող գնդացրային կրակի ներքո բարձունքները գրավելիս և հրետանային հարվածներից ակոսվող բաց դաշտերում առաջ շարժվելով հակառակորդի խրամատները թռչելիս նվաճված այն հպարտությունը և հարստությունը, որը հնարավոր չէ ձեռք բերել որևէ կարողությամբ, դիրքով ու աստիճանով:

Եվ այս գիրքը ես հրատարակում եմ երեք նպատակով.

Առաջին, որպես ժամանակի կենդանի շունչը կրող նկարագրական մի սկզբնաղբյուր՝ Արցախյան պատերազմը պատմական զարգացման իր ընթացքում, ռազմագիտական, մշակութաբանական, գրական ընկալման և այլևայլ տեսանկյուններից ուսումնասիրողների համար:

Երկրորդ՝ զինադադարի հաստատումից տասը տարի անց՝ որպես մի հիշեցում մեր հասարակությանը, թե ում շնորհիվ և ինչ գնով նվաճվեց այս խաղաղությունը:

Եվ վերջապես երրորդ՝ այս գիրքը ես հրատարակում եմ Արցախյան պատերազմի մասնակիցների երեխաների համար, որ եթե նրանք իրենց հասակակիցների մոտ ինչ-որ տեղ ճնշվեն իրենց հայրերի և իրենց այսօրվա ընդհանուր վիճակի համար, իրենց հայրերի հայացքում որոնեն գտնեն կյանքում նրանց անկորնչելի հարստությունը եղող այդ հպարտությունը և այդ նույն հպարտությամբ իրենք նայեն ու քայլեն իրենց հայրենիքում:

Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ
10-ը ապրիլի, 2004 թ.
Երևան

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽՆ ԱՆՆԿՈՒՆ Է

Ընդամենը երկու ամիս առաջ՝ օգոստոսյան ծանր օրերին, երբ Հյուսիսային Արցախում խորհրդային բանակի գործուն մասնակցությամբ ժողովուրդը գաղթական էր դառնում իր իսկ հայրենիքում և հարկադրաբար գյուղից գյուղ ապաստան գտնում, անպատկերացնելի էր, թե վերստին հնարավոր է լինել Մանաշիդում, Բուզլուխում և Էրքեջում ու թե այնտեղ նորից կհնչի արցախյան բարբառը:

Ազատագրական կռիվներում տված ծանր ու թանկ կորուստների և ժողովրդի դիմադրական ոգու շնորհիվ, սակայն, հնարավոր դարձավ այդ հրաշքը, և ետ գրավված գյուղերը ազգային հպարտություն ներշնչելուց բացի ցույց են տալիս, թե մեր հարևանը գրաված յուրաքանչյուր թիզ հողում ինչպես է ջնջում հայոց պատմությունը: Ջնջելու այս քաղաքականությամբ Մանաշիդում առաջին հարվածը հասցվել էր տեղի եկեղեցուն: Փշրված բեկորների էր վերածվել եկեղեցու ներսի քարե սրբատաշ մեծ խաչը, եղծվել էր մուտքի վերևի վիմագիր արձանագրությունը, որում ասվում է, թե ինչպես է Խրիմյան Հայրիկի կաթողիկոսության սկզբում կառուցվել այս եկեղեցին, որը գյուղը զավթողները մի քանի օրվա ընթացքում հասցրել էին գոմ դարձնել: Իսկ բակերում ընկած էին այրված և պատառոտված հայերեն գրքեր: Պոկված էին տների դարպասների բոլոր հասցեները, և տեղը նոր «տանտերերի» անուններն էին:

Եթե մի քանի ամիս առաջ Մանաշիդը հիմնականում ծերերի գյուղ էր (չնայած գնալով ավելանում էին փողոցներում վազվզող երեխաները), ապա հիմա այն երիտասարդների գյուղ է դարձել, առանց ծերերի, կանանց և երեխաների: Տեղի ինքնապաշտպանության ջոկատի տղաները, որոնք դեռ երեկ հերկում էին հայրենի դաշտերը, այսօր իրենց օգնության եկած մարտիկների հետ այդ դաշտերն են պաշտպանում և հրետանակոծությունից վնասված

տները նորոգում, որ վաղը նաև կանայք, ծերերը և երեխաները վերադառնան: Նույն ծանր վիճակն է և Էրքեջում, ուր գյուղի հայ բնակչությանը իր պապենական օջախներից տեղահանելուց հետո «սեփականաշնորհման» իրենց գործընթացով փորձել էին տեր կանգնել ոչ միայն տներին, այլև անգամ բաժանել էին գյուղի և շրջակայքի ընկուզենիները՝ դրանց վրա էլ փակցնելով իրենց անունները: Այստեղ, սակայն, փորձել էին ոչ միայն ներկան յուրացնել, այլև անցյալը ջնջել, որ տեր դառնան ապագային: Գյուղի եկեղեցին պղծելուց բացի ավերել էին և դիմացի լանջին գտնվող գերեզմանոցը՝ հին քարերը շրջելով, իսկ նորերը տանելով շինարարությունում օգտագործելու: Երևանում ապրող նախկին էրքեջցիները, որոնք շարժման ընթացքում միայն օպերայի հրապարակում էին տեր կանգնում իրենց ծննդավայրին, թող իմանան, որ իրենց ծնողների շիրմաքարերը տեղացող կրակի տակ նորից գերեզմանոց են հասցրել գյուղը պաշտպանող մարտիկները, և հիմա մնում է, որ հարազատները դրանք իրենց նախկին տեղերում դնեն:

Տեսնելով, որ գյուղը, միևնույն է, չեն կարող գրավել և պահել, բարբարոսները փորձում են հեռվից այն արկերով ավերել՝ միաժամանակ խոչընդոտելով բերքահավաքին, որ ժողովուրդն ընկճվի առաջիկա ձմռանը: Իսկ ծառերի ճյուղերը ճկվել են ծանրությունից, բայց բերքը հնարավոր չէ հավաքել: Այն թափվում է կամ շատ հասնելուց, կամ գյուղի վրա արձակված արկերի առաջ բերած ցնցումներից:

Այս ռմբակոծումների պատճառով է, որ առայժմ վերադարձել են հիմնականում տղամարդիկ: Նրանք էլ ստիպված գիշերում են որպես ռմբապաստարան ծառայող նկուղներում: Իսկ հաց նրանց համար բերում են դրսից: Բայց քանի որ արցախյան գյուղը գյուղ է նաև այնտեղ թխվող հացով, վտանգն անտեսելով՝ վերադառնում են և կանայք, ու թոնիրում սկսում է բոցկլտալ կրակը՝ այրելով իր պատերին նստած լքվածության փոշին և տեղահանության դառը հիշողությունները:

Հյուրընկալվում ենք նման մի տանը, ուր երկամսյա ընդմիջումից հետո երդիկից նորից ծուխ էր ելնում, իսկ մի քիչ ներքև

դեռևս ծխում էին կռիվների ժամանակ այրված մի ուրիշ տան ավերակները: Բնորոշ մի պատկեր է սա Հյուսիսային Արցախի համար. մահվան մոխիրների միջից էլ ծխացնել կյանքի ու կենդանության կրակը:

Բուզլուխում էլ հայերի ունեցվածքը «սեփականացնելուց» բացի հասցրել էին և անվանումները ազգայնացնել՝ տեղի կոլտնտեսությունը կոչելով Բախտիար Վահապ Զադեի անունով, բայց, բարեբախտաբար, այս «գործընթացն» էլ էր կիսատ մնացել, և դարձյալ հայ խոսքն է հնչում գյուղում: Այստեղ վիճակը համեմատաբար բարվոք է, քանի որ տները և դաշտերը դիմացի դիրքերից ուղիղ նշանառությամբ հնարավոր չէ գնդակոծել: Ահա ինչու արդեն ետ է վերադարձել բնակչության կեսը, և մինչև ուշ երեկո դաշտերում չի դադարում լարված աշխատանքը: Նրանց օգնության են գալիս հարևան գյուղերից՝ օգնելով հավաքել կարտոֆիլի ողջ բերքը, որը շրջափակման և կռիվների պատճառով դարձել է համարյա միակ սննդամթերքը՝ անգամ հացին փոխարինելով:

Սահմանային հաջորդ գյուղը Կարաչինարն է: Այն ևս գրոհով գրավել չկարողանալով՝ փորձում են ավերել ռմբակոծությամբ: Կարաչինարի բարձրադիր մասի բնակիչները ստիպված քնում են նկուղներում կամ էլ մահճակալները այնպես տեղադրում, որ արկի դիպչելու դեպքում չմնան փլատակների տակ:

Եվ չնայած այս վիճակին, ոչ միայն գյուղացիները դուրս չեն եկել, այլև երեխաներին անգամ չեն փոխադրել հարևան համեմատաբար ապահով մի քանի գյուղերը: Փոքրերի համար այս ամենը մի շքեղ հրավառություն է թվում: Ծնողներից թաքուն դուրս են գալիս և հիացած նայում սլացող կրակե գնդակներին և կյանքով վճարում այդ հիացքի համար: Գյուղը, սակայն, չի ընկճվում: Գյուղը հավաքական մի բռունցք է դարձել, և այդ բռունցքը տունը ամրություն է դարձնում, տան պատուհանը աղյուսով շարում, դիրքի վերածում և շարունակում ապրել:

Օգոստոսյան ծանր օրերին սահմանը դարձել էր Վերիշենը, և սահմանային իր վերքերը գյուղը պահում է մինչև այսօր էլ, չնայած ազատագրվել են ոչ միայն Շամփրապտուկի բարձունքը, այլև երեք

գյուղերը: Շամփրապտուկ նշանակում է շամփուրի պտուկ՝ շամփուրի վերին սուր մասը: Այսինքն՝ այդ բարձունքը վեր է ցցված շամփուրի սուր ծայրի նման, իսկ ներքևում փռված է գյուղը: Այդ բարձունքում տեղադրված տեխնիկայով օրեր շարունակ ավերվել էր գյուղը: Թե ինչ օրեր են եղել դրանք, կարելի է պատկերացնել՝ նայելով տների մաղ դարձած դարպասներին, այրված շրջանակներին, փշրված կտուրներին, փլված պատերին, անգամ բակերում տեղադրված ջրի ծակծկված բաքերին և... այն մի քանի տներից շարունակ լսվող խուլ հեկեկոցներից, որտեղից դուրս էին եկել և խփվել երեխաները:

Վերիշենը, նրանց և գյուղի համար ընկած մարտիկների կորուստը սգալով, ձգտում է ամրանալ, բուժել իր վերքերն ու ավելի անառիկ դառնալ, վերագտնել վստահությունն ու հավատը վաղվա հայաշունչ Հյուսիսային Արցախի հանդեպ:

Օրերի ամպամածությունից հետո սեպտեմբերի քսանին արևային պայծառ եղանակ էր Վերիշենում, և շնորհիվ վերագտնվող վստահության, տներում սկսեցին արձակել պարտադրվելիք տեղահանության ահից մինչ այդ կապկած անկողինները, գորգերը՝ այս անգամ էլ անցած համարելով պապենական տները թողնելու սպառնացող սև օրը: Եվ մի քանի ժամվա ընթացքում դրսում և կտուրներին փռված գորգերից գյուղը նախշազարդ, բազմագույն կախարդական մի կտավ էր հիշեցնում:

Շահումյանը Արցախի վահանն է, առանց որի երկրամասը դառնում է թույլ և խոցելի, իսկ Մարտակերտն էլ Շահումյանի թիկունքն է, և այստեղ, չնայած շարունակ ծանրացող վիճակին, շարունակվում են շինարարական աշխատանքները: Իսկ Արցախի այսօրվա պայմաններում կառուցել՝ նշանակում է հավատալ, որ կարող ես պաշտպանել կառուցածդ: Անկախ նրանից, թե ինչ գործով ես եկել, Արցախում քայլերդ, միևնույն է, ակամա տանում են Հայոց արևելյան կողմանց հոգևոր կենտրոնը՝ Գանձասար: Թեև վանքի շրջակա գյուղերը «չարժանացան» Էրքեջի, Բուզլուխի և Մանաշիդի ճակատագրին, սակայն այդ սև օրերի արձագանքը այստեղ հասավ օմօնական ստուգումների ձևով, որոնց թիկունքին կանգնած էր

չորրորդ բանակը: Հիմա ՕՄՕՆ–ը չի համարձակվում ներխուժել, քանի որ մենակ է, և դաշտերում աշխատողների վրա դավադիր կրակոցներից այն կողմ չի անցնում: Սակայն գյուղերում մնում են նրանց թողած հետքերը: Առաջաձորում ցույց տվեցին զենք որոնելու պատրվակով խուզարկելիս ամբողջովին պատառոտած շորեր ու սպիտակեղեն, փշրված ապակյա ամաններ, կարծես փամփուշտներն ու ատրճանակը պահածոների մեջ են թաքցնում: Անձնագրային ռեժիմի նման ստուգումները Շահումյանի ռմբակոծումների իրավական քող ունեցող համարժեքներն են: Նպատակն է զենք գտնելու պատրվակով սարսափ տարածել, թալանել, փչացնել գյուղացիների ունեցվածքը, քայքայել կեցության տնտեսական հիմքերը՝ մարդկանց ստիպելով լքել հարազատ օջախները:

Նման ծանր խոհերով և տպավորություններով Խաչենագետի հովտով շարժվում ենք առաջ, և վեր տանող ոլորապտույտ ճանապարհի դիմացի լեռնալանջերի միջից, ասես բացվող մի արեգակ, երևում է Գանձասարի մայր գմբեթը: Նախորդ ամիսների փորձություններից հետո դժվար էր հավատալ, թե վերստին բախտ կվիճակվի տեսնել հոյակերտ այս տաճարը, որն Ալեքսանդր Յակոբսոնի բնորոշմամբ՝ «հայկական ճարտարապետության հանրագիտարանն է»:

Վերելքի ճանապարհին էջ առ էջ բացվում են այդ հանրագիտարանի էջերը, երևում են գավիթը, զանգակատունը, պատկերաքանդակները: Վերևում իրիկնային ժամերգություն է, և այլայլված հոգով բարձրանում ու խաղաղված իջնում են ուխտավորները:

Վանք գյուղում ենք դիմավորում սեպտեմբերի քսանմեկը: Հաջորդ օրը երեկոյան «Ժամանակ» ծրագրից իմանում ենք հանրաքվեի մասին: Մի պահ լուռ իրար ենք նայում, և ժապավենի նման աչքներիս առջևից անցնում են մեր ժողովրդի մղած այս վերջին ազգային–ազատագրական պայքարի դրվագները:

Արցախում, անկախ նրանից, ուրախության թե տխրության սեղան է, երկրորդ բաժակը միշտ խմում են մեր գործի հաջողության, իսկ երրորդը՝ ընկած տղաների հիշատակի կենացը: Հիմա այս երկրորդ ու երրորդ բաժակներն իրար են միանում և դառնում առաջին

ու բարձրանում մեր ժողովրդի ոգու միասնական դրսևորման և այն տղաների հիշատակի համար, ովքեր Հայաստանի Հանրապետության ու Արցախի սահմանների պաշտպանությունում իրենց կյանքի գնով և թափված արյամբ հնարավոր դարձրին այս օրը:

Սեպտեմբերի քսաներեքի երեկոյան նիստը դիմավորում ենք Մարտակերտի շրջկենտրոնում: Ռադիոյին միացված բարձրախոսներից ժողովուրդը լսում է Հայաստանի անկախության հռչակումը, որին հաջորդած «Մեր Հայրենիքը» հնչում, արձագանքում է Արցախի լեռներում:

Մի պահ մոռացվում են բոլոր հոգսերը, առօրյա և ընդհանուր մտահոգությունները, լռում են վեճերը, դադարում են հրմշտոցները հացի սրտամաշ հերթերում, ու թեև այստեղ սպասում են Չափար գյուղի ինքնապաշտպանական կռիվներում զոհված չորս հայորդիների մարմիններին, ու չնայած անկախության հռչակումով ավելի է անորոշ դառնում իրենց վիճակը, այնուամենայնիվ, բոլորին պատում է հպարտության այն գիտակցումը, թե Մայր երկիրն ինքն է դառնում տերը իր ճակատագրի:

Արցախն այսօր ծանր, բայց հերոսական օրեր է ապրում: Ժողովուրդը թրծվում է ինքնապաշտպանական կռիվներում մեկին տասը պատասխանելու և իր հանդերին, պատմությանն ու ապագային տեր կանգնելու վճռականությամբ:

Հյուսիսային Արցախը հարուստ է եղել իր ձեռագրերով, մելիքական և ծխական մատյաններով, որոնք անխնա ոչնչացվել են երեսնական թվականներին, սակայն Գյուլիստան գյուղում պահվել է ընտիր մի Ավետարան՝ խորանով, լուսանցազարդերով և կանոնավոր ու հատու գրերով: Սերնդեսերունդ անցած այս ձեռագիրը տեղացիները հնության համար անվանում են «Ծեր Ավետարան» և համարում իրենց գյուղի պահապան Սուրբը: Հիշատակարանը չի պահպանվել, սակայն գրչության ոճից կարելի է եզրակացնել, որ գրվել է XVI դարում:

Երբ աթեիզմի քողի ներքո ոչնչացնում էին ամեն հայկականը, 1938 թվականին Մելիք–Բեգլարյանների ընտանիքից, ուր պահվել է Ավետարանը, պահանջել են այն իրենց հանձնել: Քանի որ այն

թվերին հնարավոր չէր հրաժարվել, ստիպված դիմել են հետևյալ քայլին: Գոնե մի մասը ոչնչացումից փրկելու համար կտրել հանել են Մատթեոսի Ավետարանը, իսկ մնացած ձեռագիրը ստիպված հանձնել: Այս մեկ չորրորդը այնուհետև մետաքսե կտորի մեջ փաթաթած պահել են աչքից հեռու՝ նկուղում և այլ տեղերում, որի պատճառով ձեռագրին պատել է սնկային հիվանդությունը՝ քայքայելով էջերն ու սպառնալով մանրանկարներին: Ձեռագիրն ակամա զուգահեռներ է գծում Արցախի այսօրվա ճակատագրի հետ: Հայկական այս երկրամասը ևս ուժով ու խաբեությամբ կտրեցին Մայր երկրից և այնուհետև էլ մասնատեցին ներսից՝ նրանից դուրս թողնելով իր պատմական հայաբնակ տարածքների մի մասը: Եվ այն, ինչ այսօր փրկվել է և գտնվում է ազգային–ազատագրական դրոշի ներքո, Արցախի հայկական ապագայի նվիրյալներն ու հավատավորները պատել են մետաքսե պահպանիչ կտորներ հիշեցնող սիրով ու ջերմությամբ և պահպանելու վճռականությամբ:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 3–ը հոկտեմբերի, թիվ 28
Հեղինակի խնդրանքով հոնորարը փոխանցվում է
Հայաստանի Հանրապետության պաշտպանության 609901
հաշվեհամարին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՀՈԳՍԵՐԸ

Չնայած այսօր Հյուսիսային Արցախում հարցերի հարցը ինքնապաշտպանության կազմակերպումն է, սակայն մղվող յուրաքանչյուր մարտ կռիվ է հանուն շարունակվելիք կյանքի: Իսկ կյանքը՝ անգամ բնականոն հունից դուրս եկած, անպատկերացնելի է առանց տնտեսության, կրթության և մշակույթի, որոնցով է մեծապես պայմանավորված ժողովրդի դիմադրական ոգին ու մարտունակությունը:

Շահումյանում, բացի շրջափակումից և ռազմական գործողությունների պատճառով անօգտագործելի դարձող դաշտերից ու այգիներից, տնտեսությունը քայքայվում է արդեն ութ ամիս տևող էլեկտրաէներգիայի բացակայության հետևանքով: Եթե ժամանակին երկրամասի ներքին յուրահատկությունները ըմբռնողներին լսելով՝ Արցախի համար արվող գոնե մեկ միտինգի կամ գործադուլի վրա ծախսված ժամանակը լարված աշխատանքով փոխարինվեր և միջոցներ տրամադրվեին փոքր, վառելիքով աշխատող շարժական էլեկտրակայանների ձեռք բերման համար, ապա Ադրբեջանը այսօր ճնշման մի հզոր մեխանիզմ պակաս կունենար, իսկ շրջանի վիճակը համեմատաբար բարվոք կլիներ: Հիշեցնենք, որ հեղուկ վառելիքով աշխատող ամենափոքր շարժական կայանը լույս է պարգևում հարյուրից ավելի տների:

Հիմա, սակայն, էլեկտրականության լիակատար բացակայությունը հանգեցրել է ներտնտեսական մի շարք կառուցվածքների քայքայման և դրանից բխող գործազրկությանը հավասար անգործության: Կյանքի վտանգմամբ դաշտերից հավաքված բերքը չի մշակվում և փչանում է, որովհետև պահածոների գործարանը չի աշխատում:

Կրկնակիորեն բարդանում է բնակչությանը հացով ապահովելը, քանի որ շրջափակման պատճառով ալյուր չի ստացվում: Հիմնականում օգտագործվում է տեղի հացահատիկը: Էլեկտրաղացները չեն աշխատում, ցորենը պարկերով դարսված է, իսկ հացի փոխարեն հաճախ կարտոֆիլ են գործածում: Հաջորդ դժվարությունն էլ մի կերպ ստացվող ալյուրից հաց թխելն է դառնում:

Չեն աշխատում կենցաղսպասարկման ծառայությունները, կամ էլ, հնարավորության դեպքում, վերադառնում են անցյալի ավանդական միջոցներին: Օրինակ, վարսավիրանոցներում գործածվում է միայն մկրատը: Տներում նկուղներից և գյուղերի անցյալին նվիրված դպրոցական թանգարանային անկյուններից հանվել և ձեռքից ձեռք են անցնում ածուխով տաքացվող արդուկները: Հնության փոշիներից մաքրվել են նաև պատրույգով աշխատող լամպերը, որոնց ապակե մասի խիստ պակաս է զգացվում, և մարդիկ չեն կարողանում անգամ այս ձևով տներում լուսավորություն ապահովել: Սա էլ կարևոր մի հարց է Շահումյանի համար, որի լուծումը որոշ չափով կթեթևացնի առօրյա հոգսերը:

Վաղուց նաև գազից զրկված շրջանում էլեկտրականության բացակայությունը կենցաղային բարդություններից բացի առաջ է բերում և հոգեբանական ցնցումներ: Թշնամական օղակի մեջ գտնվող գյուղերում մթությունը նաև դարանակալ վախի մի զգացողություն է առաջ բերում և, շատերի խոստովանությամբ, դիրքերում հերթապահելիս իրենց ավելի վստահ են զգում, քան տան խավար սենյակներում ու մթին բակերում:

Հարկադրված հատում են Արցախի դարավոր անտառները: Բնության հետ դաշնություն կազմող տեղի ժողովուրդը ամեն օր խուլ տնքոցով դիտում է, թե շրջակա բարձունքներից ինչպես են գյուղերն իջնում բեռնատարները՝ բարձված հավասարաչափ կտորների վերածված հաստաբուն ծառերով, որոնց ճյուղերի դեռևս կանաչ սաղարթները ասես նրանց հուղարկավորության պսակները լինեն: Արցախի զարդ այս անտառները, սակայն, կտրվում են ոչ միայն սրտի կսկիծով, այլև մեծ դժվարությամբ, որովհետև շարժիչով աշխատող սղոցների և տեղափոխելու համար այստեղ գրեթե չճարվող հեղուկ վառելիք է հարկավոր:

Էներգիայի բացակայությամբ ամբողջանում է շրջանի լրատվական շրջափակումը, որովհետև միութենական ու հայաստանյան թերթերը վաղուց արդեն այստեղ չեն հասնում, հիմա էլ հեռուստատեսությունից են զրկվել: Մարտկոցներ չլինելու պատճառով հնարավոր չի նաև ռադիո լսելը: Իսկ թե ինչ է նշանակում լույսից և լրատվությունից զրկված լինելը թշնամական օղակում սեղմված ժողովրդի համար, միայն այստեղ կարելի է հասկանալ:

Զարմանալի մի հետևողականությամբ շրջան չի ուղարկվում և ոչ մի թերթ, չնայած չկա մի ընտանիք, որ բաժանորդագրված չլինի հայաստանյան թերթեր: Իհարկե, բոլորը կանոնավոր առաքել այժմ հնարավոր չէ, սակայն գոնե յուրաքանչյուր գյուղի գրադարանին մի քանի օրինակ ուղարկելը թերևս դժվար չէ: Զմոռանանք, որ Բաքվից հետևողականորեն փորձում են թույն կաթեցնել մարդկանց հոգիներում, և ժողովրդին շատ է հուզում, թե ինչ են գրում Հայաստանում իրենց մասին: Կարաչինարում մի ուսուցչուհի ասաց, որ չմոռանալու համար, թե Հայաստանում ինչ թերթեր են լույս տեսնում, ստիպված երբեմն սկսում է կարդալ... բաժանորդագրված թերթերի անդորրագրերը: Իսկ պատմության փորձը և դեպքերի այսօրվա զարգացումը վկայում են, որ Արցախին փամփուշտից և ալյուրից հետո գիր է հարկավոր: Հայ գրի բացակայությունը հոգեբանորեն ավելի է մեծացնում կտրվածությունը Մայր Երկրից, այնինչ յուրաքանչյուր ինքնապաշտպանություն ռազմականից բացի հոգևոր հիմք ունի նաև, որովհետև հայրենիքի պաշտպանության գաղափարը ինքնին հոգևոր հասկացություն է: Քաղաքականությունը քաղաքականություն, բայց իրական մտահոգության դեպքում կարելի էր Արցախի յուրաքանչյուր դպրոց Հայաստանի որևէ դպրոցի հետ կապել: Հասկանալի է, որ շրջափակման պատճառով դպրոցական կահավորանք տեղ հասցնել հնարավոր չէր, բայց հնարավոր էր ուսումնատեսողական նյութեր և հայոց պատմության ու ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագներն արտացոլող պատկերներ ուղարկել, որ Արցախի դպրոցներում պոկված հին

կարգախոսների տեղ ազգային նկարներ փակցվեին և ոչ թե մինչև այսօր էլ մեր թերացումները մարմնավորող մութ ակնախոռոչների նման աչք ծակող խունացած ու գունաթափ հատվածներ մնային: Եվ մարդիկ ստիպված փորձում են պակասը իրենց ջանքերով լրացնել, բայց դա էլ չի հաջողվում, որովհետև զուրկ են ամենատարրական միջոցներից: Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղում կրթական գործի տեղի նվիրյալներից մեկը ցույց տվեց Մաշտոցի կիսատ մնացած դիմանկարը: Արդեն կար ընդհանուր համապատկերը (ֆոնը), ուրվագծել էր դեմքը, ու յուղաներկը վերջացել էր, շրջանում հնարավոր չէր եղել նորը ճարել, ու կիսատ մնացած կտավից մեղադրանքով նայում էին Մեծ Ուսուցչապետի աչքերը:

Դրա համար պետք է ֆոնդային հատկացմամբ տրամադրել նույն յուղաներկն ու գրենական պիտույքները, ինչպես դա արվում է Հայաստանի մյուս շրջանների համար, այլապես երկար կշարունակվի ներկա տխուր վիճակը:

Շահումյանում չդադարող հրետանակոծության պատճառով դեռ չի սկսվել նոր ուսումնական տարին, իսկ երեխաները անցածը չմոռանալու համար գրավոր աշխատանքներ են կատարում իրենց նախորդ տարիների տետրերի լուսանցքներում: Այս ամոթալի իրողությունը շրջափակմամբ բացատրել՝ նշանակում է արդարացնել պարզապես սեփական մեղքն ու թերացումները:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 12-ը հոկտեմբերի, թիվ 35
Հեղինակի խնդրանքով հոնորարը փոխանցվում է Բուզլուխ, Էրքեջ և Մանաշիդ գյուղերի վերականգնման համար Հայ Յեղափոխական Դաշնակցության բացած հաշվեհամարին:

ԱՐՑԱԽՅԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի քսանի վթարի օրը մառախլապատ էր ոչ միայն Մարտունու, այլ նաև Մարտակերտի և Շահումյանի շրջաններում: Ամպերի քուլաներով էին լցվել հովիտ ու լեռնանցք, տեսանելիությունը վատ էր անգամ մեքենա վարելու համար: Նույնն էր և նախորդ օրերին, որի պատճառով մոտ մեկ շաբաթ թռիչքները Շահումյանի շրջան դադարել էին: Մառախլապատության բարձրակետը դարձավ պատահարի օրը, իսկ երեկոյան երկինքն սկսեց պարզվել, և պայծառ ու ջինջ առավոտը բացվեց Հյուսիսային Արցախի վրա, ու ամպերից ազատված Մռավի ձյունապատ գագաթը սպիտակ թագի նման սկսեց շողշողալ արցախյան երկնակամարում: Բնությունը թոթափեց նախորդ օրերի մռայլությունը, բայց մտահոգությունն առավել կուտակվեց մարդկային հոգիներում, որովհետև աղետի մասին հաղորդումից անմիջապես հետո սկսվել էր Շահումյանը Մարտակերտին կապող Կարաչինար գյուղի ռմբակոծումը: Գիշերը, երբ Մարտակերտից հասանք այստեղ, գյուղի շրջակայքում դեռևս պայթում էին արկերը: Առավոտյան էլ պարզ դարձավ, որ սպասվում է հերթական հարվածը, և սկսեցին ձեռք առնվել համապատասխան միջոցներ՝ այն ետ մղելու և կրակի գոտում բնակչության կյանքն ապահովելու համար:

Տեսնելով, թե ինչպես է շրջանը պատրաստվում պաշտպանության, հիշում ես, թե նախորդ տարիներին, երբ յուրաքանչյուր կրակոցը խուճապի ալիք էր բարձրացնում և սկսվում էր բաց նամակների հոսքը, նոր ես հասկանում, թե որքան է փոխվել արցախահայությունը, թոթափել բոլոր պատրանքները և հասկացել, որ գնդակին գնդակով են պատասխանում և մինչև չլսեն քո արձակած գնդակի ձայնը՝ գրածդ նամակը կարդացող ու հաշվի առնող չի լինի:

Այսօր, երբ առաջնահերթ խնդիրը Արցախի պաշտպանությունն է, փորձենք մի քանի գյուղերի օրինակով ներկայացնել, թե ինչպիսին է վիճակը և թե այդ վիճակն ինչպես է ազդում ժողովրդի ընդհանուր ոգու, մարտունակության և հայրենիքը պաշտպանելու վճռականության վրա: Արցախի ամենամեծ և ամուր գյուղերից է Հաթերքը, որն իշխող դիրք ունի ողջ Մարտակերտում: Մինչև զինվորներին զրահամեքենաների հետ գերի վերցնելը արտաքուստ ոչնչի չմիջամտող, խաղաղ գյուղ էր թվում Հաթերքը: Նույնիսկ ասում էին, թե գյուղն ապրում է իր պապերի կատարած քաջագործությունների հռչակով, սակայն, երբ սկսվեց տարածվել տեղահանության ալիքը, հաթերքցիները ապացուցեցին, որ մելիքական արյունը չի կորչում և ոչ էլ կորսվում է այդ արյան հիշողությունը, և իրենք իսկապես քնած առյուծ են և արթնացան գյուղը շրջապատած զրահամեքենաների աղմուկից:

Հիմա էլ Հաթերքը կանգնած է խաղաղ և աներեր, լավ հարաբերություններ ունի տեղի ներքին զորքերի հետ, 80%–ով իրեն ապահովում է հացահատիկով: Եկամտի գլխավոր աղբյուրն անասնապահությունն է, և շուրջօրյա հերթապահություն է սահմանված արոտավայրեր տարվող հոտերի պաշտպանության համար: Յուրաքանչյուր բնակչի բաժին է ընկնում մինչև 1500մ տնամերձ: Այսօր մոտ երեք հազար հաթերքցիներ ապրում են հայրենի երկրամասից դուրս: 1989 թ. նրանք դանդաղորեն հետ էին վերադառնում, բայց 1990–ի կեսերից, ինչպես ողջ Արցախում, այստեղ ևս դադարեց այդ շարժումը, և հարյուրից ավելի դատարկ տներ սպասում են իրենց տերերին: Սակայն մինչ նրանց գալն էլ գյուղը շարունակում է աճել: Հինգ հարյուր աշակերտ ունեցող դպրոցին և տեղի ուսումնարանին շուտով կհավելվի հարյուր քառասուն տեղանոց մանկապարտեզը: Որոշված է այն շահագործման հանձնել դեկտեմբերի վերջին, որ այնքան վախ ու բռնություն տեսած երեխաները նոր տարին դիմավորեն այս կառույցում: Շինարարությունը շարունակվում է անգամ գիշերները: Տեսնել է պետք, թե պարբերաբար կտրվող էլեկտրականության պայմաններում տրակտորների և բեռնատարների լույսի ներքո ինչպես են տանիքը կապում շինարարները: Արդեն ձեռք են բերված մահճակալներ ու մնացած կահկարասին, սակայն գլխավոր մտահոգությունը երեխաներին անհրաժեշտ խաղալիքներով և տեսադիտողական նյութերով ապահովելն է: Ուզում ենք հավատալ, որ կգտնվի որևէ կազմակերպություն, որը միջոցներ կտրամադրի այս ամենը ձեռք բերելու համար:

Պատմական հիշատակներով հարուստ է Քոլատակը: Գյուղի մի լանջին է գտնվում Սուրբ Հակոբա վանքը, ուր, համաձայն ավանդության, ամփոփված է Մծբնա Սուրբ Հակոբ հայրապետի աջը: Ըստ միջնադարյան աղբյուրների, նա հռչակված է այլազան ցավեր բուժելու իր զորությամբ, և ամենադժնդակ տարիներին էլ ժողովուրդը չի մոռացել իր սիրելի սրբին, փորձել է նրա միջոցով բուժել իր ցավերը: Հիմա կիսավեր, եղինջներով ու մացառով պատված մենաստան, չնայած վտանգին, շարունակվում է ուխտավորների հոսքը: Դիմացի լեռան գագաթին վեր է խոյանում Կաչաղակաբերդը, ուր ներքևից թշնամին չէր կարող մուտք գործել, իսկ վերևից էլ միայն թռչուններն էին իջնում: Գյուղի դիմացի խիտ անտառով էլ ճանապարհը տանում է երրորդ բարձունքը, որտեղ գտնվում է մեկ այլ մենաստան՝ Կոշիկ անապատը, արցախյան բարբառով՝ Նապաթը: Մթին անտառում մեկեն բացվում է խաչքարերի մի զարմանահրաշ անտառ:

Պատմությունն է դարձել գյուղի թիկունքը՝ հայկական ճարտարապետության արցախյան ինքնահատուկ այս դրսևորումներով: Գյուղի դպրոցի տնօրենն ասում էր, թե առանց Կաչաղակաբերդի չեն կարող ապրել, կպել են էս քերծերին ու պոկ չեն գալիս: Բայց պոկվողներ եղել էին, որոնք ծննդավայրի անցյալը փոխարինել էին Բաքվի նավթով ու մազութով, և գյուղը մինչ Արցախյան շարժումը տարեցտարի նվազում էր: Եթե 1975 թ. դպրոցն ուներ 280 աշակերտ, ապա 1988 թ. այս թիվն իջավ 64–ի: Վերջին տարիներին աշակերտների թիվն ավելացել է տասով և հասել ութսունի: Առաջին և երկրորդ միացյալ դասարաններում սովորում են ութ հոգի, բոլորն էլ աղջիկներ, նրանցից ոչ մեկն «Այբբենարան» չունի, իսկ ուսուցչուհին կավճի փշուրներով գրատախտակին գրում է հայոց գրերը: Բայց հաճախ աշակերտուհիները դրանք տետրերում ընդո-

ինակելու հնարավորություն էլ չունեն, որովհետև աշակերտական տետրեր էլ չկան: Մարտակերտում և Շահումյանում 12 թերթանոց մեկ տետրը վաճառվում է 4 ռուբլով:

Սեպտեմբերյան մարտերից հետո, երկու ամիս ուշացումով պարապմունքները վերսկսվել են Վերիշենում, սակայն տետրեր չլինելու պատճառով կիսով չափ ձախողվել են: Գեղեցիկ գրելու փոխարեն երեխաներից պահանջում են ազատ տողեր չթողնել: Դպրոցներից մեկում ավելի ծանր տեսարան էր. յուրաքանչյուր տետրում գրում էին երկու աշակերտ՝ մեկը առաջին էջից, մյուսը՝ յոթերորդ: Դա հանրապետության կրթական գործի պատասխանատուներին ուղղված խարան է:

Ման եկեք Արցախի գյուղերով և չեք գտնի մի արցախցու, որը բողոքի, թե Հայաստանից ինչու շաքար չի ստացվում, որովհետև գիտեն, որ դա ընդհանուր պակասից է: Մյուս չճարվող ապրանքների համար էլ բողոք չկա, բայց երբ տեսնում են այսպիսի անտարբերություն երեխաների հանդեպ և հատկապես այն հարցերում, որոնք կարելի է լուծել, մարդիկ պարզապես հուսահատվում են և մտածում, թե Հայաստանն իրենցից ձեռք է քաշել:

Փորձենք հասկանալ այն մարդկանց հոգեվիճակը, ովքեր իրենց կյանքն ամեն օր վտանգում են գյուղերի սահմաններին հերթապահելիս, անասունները հանդերը տանելիս ու դաշտերում աշխատելիս և վերադառնալով տուն՝ տեսնում են երեխաները դաս չեն սովորել դասագրքերի, գրենական պիտույքների պակասի պատճառով: Ի դեպ, եթե Շահումյանում այսօր երեխաներին շրջանից հանելու միտում կա, կյանքի անապահովությունից բացի մի պատճառն էլ սա է:

Արցախում ընդհանրապես ամաչում ես երկրորդ անգամ նույն գյուղն այցելել, որովհետև նրանց ոչ մի խնդրանքը չես կարողանում կատարել, քանի որ Երևանում այդ ամենն անտեսում են: Իսկ դրանք սննդամթերք և չճարվող ապրանքներ ձեռք բերելու խնդրանք չեն, այլ Հայաստանի կյանքով ապրելու ցանկությունն է: Ուսուցիչը մեթոդական հրահանգ ու գրականություն է խնդրում, կուլտուրայի տան վարիչը՝ հարցնում հոգևոր կյանքի նորություններից: Հիմա

մասնակիորեն կարգավորվել է կապն Արցախի հետ, և մարդիկ ոչ մի կերպ չեն հասկանում, թե ինչու այսքան զոհեր տալուց հետո իրենք դատապարտված են կարդալու միայն լենինյան «Պրավդան», «Բակինսկի ռաբոչին»: Այս թերթերը և Ադրբեջանի հեռուստատեսությունն աննկատելիորեն ամեն օր լարվածությունից հոգնած մարդկանց սրտերում և հոգիներում թույն են կաթեցնում Հայաստանի հանդեպ, իսկ այստեղից յուրաքանչյուր գյուղի համար գոնե մեկական օրինակ թերթ չի առաքվում, չնայած դրա հնարավորությանը: Այնինչ շրջափակման և վառելիքի բացակայության պայմաններում, երբ անգամ հարևան գյուղերը դժվարությամբ են կապվում իրար, թերթերի բացակայության պատճառով արցախահայությունը չգիտի, թե ինչ արձագանք է գտնում իր հերթական պայքարը Հայաստանում և կամ արդյոք ընդհանրապես գտնում է: Միայն կարողանում են ռադիոյով լսել հայոց խորհրդարանի նիստերը, թե պատերազմական այս ամիսների ընթացքում ազգի ընտրյալներն ինչպես են զբաղված իրար միս ուտելով և ստորակետերի տեղը ճշտելով:

Գանձասարի վանքը քարեղեն մի սլացք է թվում՝ ազգային հպարտություն ներշնչելով յուրաքանչյուր հայի: Բայց այս անգամ ամոթի զգացումն էր պատել նրա հովանու ներքո գտնվող գյուղի բնակիչներին, ընդհանրապես ողջ արցախահայությանը: Ադրբեջանի լրատվական «Քսանչորս ժամ» ամենօրյա հեռուստածրագրով ցույց էին տալիս գազի մատակարարման դադարեցումից հետո հացի հերթերը Երևանում: Եթե խանութների առջև պատկերված հերթերն առաջին օրը ցավ և մտահոգություն էին առաջացնում, ապա երկրորդ օրը, երբ չարախնդությամբ սկսեցին ցուցադրել, թե մի քանի հաց փախցնելու համար ինչպես էին ոմանք կոխկռտում շուռ տված արկղերից թափված հացը, բոլորին պատեց ամոթի զգացումը: Շատերը, որ այս երեք տարիների ընթացքում դուրս չէին եկել գյուղից և ունեին Մայր Հայաստանի տեսլականը, շփոթված իրար էին նայում: Մտածում էին. միթե տոկունության նման մակարդակով ենք դիմագրավելու առաջիկա ձմեռը՝ հանուն ազգային մեծ իղձերի իրագործման: Երեք տարի շարունակ հացի սրտա-

մաշ հերթերի կանգնող և հաճախ օրվա հաց չունեցող արցախահայի համար մեծ անակնկալ էր նման ամոթալի խուճապը, և մեր ժողովուրդը հոգեպես այնքան պետք է ուժեղանա, որ հասկանա, որ այս պայքարը այսօրվա ու վաղվա համար չէ, այլ՝ սերունդների:

Երբ Երևանում պատմում էի այդ պատկերների մասին, պարզվեց, որ սրանց մի մասը ցույց է տրվել հայկական հեռուստատեսությամբ: Այսինքն՝ հաճախ այն, ինչ մենք ցույց ենք տալիս, մտածելով, թե աշխարհի գութն ենք շարժում մեր ծանր վիճակի պատկերմամբ, մեր հանանների մոտ անդրադարձվում է որպես անարգանք, և այս իրողության հաշվառմամբ պետք է ցուցադրվի հանրապետության ներքին կյանքին առնչվող ամեն մի պատկեր:

Մինչ տարբեր մակարդակներում քննվում էր Շահումյանի միացումը Արցախին կամ էլ այն լուծարվում էր Բաքվում, շրջանը վաղուց արդեն միացել էր Մարտակերտին, նրա հետ միաձուլվելով տնտեսության և մյուս բնագավառներում՝ դառնալով մեկ մարմին, առանց որի թե՛ տնտեսական և թե՛ ռազմագիտական տեսանկյունից չի կարող հարատևել Մարտակերտը: Իրար միացած երկու շրջանների միջև ֆինանսատնտեսական օղակների կազմալուծման ներկա պայմաններում կատարվում է պարզ ապրանքափոխանակություն: Մարտակերտի հացահատիկը բերվում է Շահումյան և փոխանակվում կարտոֆիլի հետ, իրենց հացահատիկն այնտեղ են աղում շահումյանցիները: Նրանց մոտ բացված արտադրական մի քանի ձեռնարկություններին հումք են մատակարարում Մարտակերտից, այստեղ է նորոգվում Շահումյանի գյուղատնտեսական տեխնիկան, Հյուսիսային Արցախի մանկավարժական ուսումնարանում են սովորում Մարտակերտի աղջիկները: Իսկ օգոստոսյան օրերին Մարտակերտը նաև ապաստան դարձավ կրակի տակ գտնվող գյուղերի կանանց ու երեխաների համար, այստեղ պահ տրվեց գյուղերի ունեցվածքը: Սեպտեմբերից սկսվեց վերադարձը հայրենի օջախներ, որը շարունակվում է մինչև այսօր: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումով նրա մեջ ներառվեց նաև Շահումյանի շրջանը:

Ահա ճանապարհը Թալիշով տանում է այնտեղ: Ինջա գետի մոտ ավարտվում են Թալիշի աշնանային ոսկեդեղին հանդերձներ հագած այգիները և լեռնալանջերի անտառները, ու սկսվում են Կարաչինարի ցորենի արտերը: Արդեն Շահումյանում ենք...

ԵՐԿԻՐ, 1991 թ., 26-ը նոյեմբերի, թիվ 65

ԿՅԱՆՔԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Դեպի Շահումյան տանող ճանապարհի աշնանային ոսկեդեղին այս պայծառությունը միանգամից փոխվում է ճնշող մի պատկերի, երբ մտնում ես իրար միացած Կարաչինար, Մանասաշեն և Գաղթութ գյուղերը: Շուրջդ փլված տներ են, բակերում՝ արկերի բեկորներ: Կրակի առաջին գծում գտնվող տները չեն հասցնում նորոգել, երբ դրանք վերստին ավերվում են մեկ այլ հարվածից: Տներից մեկի պատը արկը փլել էր: Փլվածքը տանտերը ծածկել էր այստեղ վաղուց անգործածական դարձած թերթի կրպակով, և նոր արկը այրել էր փայտե տնակը, սակայն գյուղը լքել չցանկացող բնակիչները դիմացի՝ տարիներ առաջ լքված մի տան դարպասն էին բերել ու ամրացրել ճեղքվածքին, և, ինչպես իրենք էին դառը հեգնանքով ասում, ապրում են զրահապատ տանը: Այս երեք գյուղերում գնալով ավելանում են կիսաքանդ տները, այրված կտուրները ու երեխաների խաղալիքները՝ տարբեր տրամաչափերի հրանոթներից արձակված արկերի բեկորները, հրթիռների կիսահալ թևերը:

Անգամ ավանդական անեծքներն են նոր տարազավորում ստանում: Երբ սկսվում է ռմբակոծումը, բնակելի պարիսպների տակ, տան անկյուններում կուչ եկած պառավները, գյուղի վրա ընկնող հրթիռներն անիծելով, ասում են՝ «օդո՛ւմ չորանաս», «ինքդ քեզ պայթես», «թևերդ չբացվեն» և այսպես շարունակ: Ասես արկերը դարձել են չար ուժի մարմնավորումը, և պատահական չէ, որ սկսել է հնչել անգամ «ալազանի ծնունդ» արտահայտությունը՝ փոխարինելով նախկինում թունավոր զեռունների հետ կապվող համանման կապակցություններին:

Արկերի հարվածային ուժը զգացվում է ոչ միայն դրանց պայթյունի աղմուկից, որն այս լեռնաշխարհում արձագանքվում է անգամ հարևան գյուղերում, այլև առաջին հերթին այն տներում, որտեղ, ճեղքելով պատը, պայթել է սենյակում, կոտորակվելով՝ փշրել կահկարասին ու ջարդելով սենյակների միջնորմները՝ խրվել հիմնապատերում: Գյուղը, չնայած բոլոր փորձություններին, չի դատարկվում: Թեև ավերվելու վտանգից չի գործում դպրոցը, բայց երեխաների գերակշիռ մասը գյուղից չեն հանվել, և ամեն առավոտյան տներից, ավելի ճիշտ՝ տների նկուղներից դեպի գյուղամեջ են շտապում երեխաները՝ հարևան գյուղերի դպրոցները գնալու համար: Ողջ շրջանում գործում է միայն մեկ ավտոբուս Կարաչինար–Վերիշեն երթուղով՝ դպրոցական պարապմունքները սկսվելուց ու ավարտվելուց առաջ, վառելիքի գրեթե բացակայության պայմաններում, որը մեկ անգամ ևս վկայում է, թե ինչ կարևորություն է տրվում այստեղ երեխաների կրթությանը: Եթե Երևանում ծնողները դպրոց գնացող երեխաներին զգուշացնում են փողոցն անցնելիս զգուշանան մեքենաներից, ապա այստեղ, ուր դպրոց գնալն էլ դիրքերը գնալու աշակերտական համարժեքն է դարձել, մայրերը արցախյան բարբառի իրենց ինքնահատուկ խոսքով երեխաներին ասում են, թե մինչև ավտոբուսի ճանապարհը զգույշ եղեք՝ հանկարծ արկերի բեկոր չդիպչի:

Ռազմական միջոցառումներ են հիշեցնում անգամ գյուղերի կենսապահովման գործողությունները: Այսպես, Մանասաշենի ռազմական խորհրդի՝ գյուղում տարածված հայտարարությունում ասվում է. «Ռազմական շտաբում կազմակերպվում է ցորենի ջրաղաց տանելու ցուցակագրումը: Հայտնվում է գյուղի այն բնակիչներին, ովքեր չեն հասցրել ձմեռվա վառելիքի փայտը ձեռք բերել, դիմեն ռազմական խորհրդին: Մեր հասցեն՝ Հյուսիսային Արցախ, Շահումյանի շրջան, գյուղ Մանասաշեն»:

Հակառակ պարագայում, եթե անգամ մեքենայի վառելիք էլ լիներ, գյուղացիները միայն իրենց ուժերով անկարող կլինեին տեղացող կրակի ներքո կատարել անհրաժեշտ այս բոլոր փոխադրումները:

Ասում են՝ մարդ Աստծուն հիշում է ամենածանր պահերին: Տասնամյակներ շարունակ հարկադրյալ հոգևոր կյանքից կտրված կամ անտարբեր դարձած մարդիկ օգոստոսյան օրերին, երբ վտանգված

էր անգամ շրջանի ապագան, նորոգեցին և վերաբացեցին գյուղի եկեղեցին: Կողքի մի քանի տներն ավերվել են, բայց եկեղեցուն զարմանալի մի զորությամբ դեռևս ոչ մի արկ չի դիպել: Ավերվել են նաև դպրոցն, ու 200 աշակերտի համար նախատեսված նոր դպրոցը, որի նախագիծն արդեն պատրաստ է, որոշել են կառուցել եկեղեցու թիկունքում, նրա հովանու ներքո: Իսկ եկեղեցին ինքն էլ կարոտ է հոգևոր հանդերձների ու հարդարանքների: Չկա ոչ մի սրբապատկեր, և վառվող մոմերի լույսը ցոլցլում է քարե մերկ պատերին: Երևի գիտակցորեն կամ ենթագիտակցորեն զգալով խաղողի որթատունկի կապը քրիստոնեական խորհրդանիշների հետ՝ եկեղեցու բեմում կախել են մի հին պաստառ, որի վրա գրված է. «Խաղողի հյութը համեղ է և օգտակար»: Դեռ չեն տեղադրվել մեր եկեղեցու հայրերի դիմանկարները, սակայն կա միայն մի լուսանկար, որի առջև երկյուղածորեն խոնարհվում են գյուղի բնակիչները և ինքնապաշտպանության ջոկատների մարտիկները: Դա Սամվել Վարդանյանի լուսանկարն է, որի ջանքերով այդ ծանր օրերին բացվեց եկեղեցին, և որտեղից նա մեկնեց մարտի դաշտ ու ընկավ Վերիշենի մատույցներում մղվող կռիվներում:

Կարաչինարում էլ գնդակոծությունների ներքո հասցրեցին նորոգել ջրաղացը, որը օրական աղում է մեկ տոննա ցորեն՝ զգալապես թեթևացնելով հացամթերման գործը: Ճանապարհն այստեղից տանում է Խարխափուտ, ուր համեմատաբար ապահով է, և որտեղ ապաստան են գտել շատ բռնագաղթածներ, ինչպես նաև տեղի դպրոցն են հաճախում Կարաչինարի երեխաների մի մասը: Խարխափուտի առջև անմիջական ռազմական խնդիրներ ծառացած չեն: Բայց ընդհանուր վիճակն իր կնիքն է թողել գյուղի վրա: Էլեկտրականության բացակայության պատճառով չի աշխատում շրջանի եկամտի գլխավոր աղբյուրը՝ պահածոների գործարանը, և գյուղացիների զգալի մասն աշխատանք չունի: Կարելի է այսպես երկար շարունակել, բայց մարդիկ մի կերպ ապրում են, հույսները դեռ չեն կորցրել և այդ հույսով էլ վերջերս իրենց ուժերով վերաբացեցին գյուղի եկեղեցին: Հայոց միջնադարյան ավանդները նոր շրջանի ճարտարապետական միտումներին զուգակցած XVII դարի կեսերի

գեղեցիկ մի կառույց է այն, որի մի կողմում բացված խորանում գտնվում է նաև մկրտության ավազանը:

Արտաքուստ ռազմական գործողություններից հեռու խաղաղ մի բնակավայր է շրջկենտրոնը՝ Ներքին Շենը, սակայն այստեղ են խտացված շրջանի բոլոր ցավերը, որոնց ականատեսն ես դառնում շրջգործկոմում, թռիչքադաշտում, փոստում և մյուս տեղերում:

Նաև զարմանալի մի օրինաչափություն է նկատվում. թե՛ այստեղ և թե՛ Արցախի այն գյուղերում, որոնք սահմանամերձ չեն, ավելի անհանգիստ են, քան բուն կրակի գոտում, ուր վտանգն անմիջականորեն ես զգում, իսկ թիկունքում անորոշ է, և շարունակ լուրերի են սպասում:

Վերիշենը շարունակում է բուժել իր վերքերը: Մարտակերտից շարունակում են վերադառնալ տնային իրերով բեռնված մեքենաները, և էլի մի տան դուռ է բացվում գյուղում: Բայց օգոստոսյան գնդակների հետքերը դեռ շատ երկար կմնան թե՛ մարդկանց հոգիներում և թե՛ գյուղի շրջակայքում՝ մետաղյա տեղացած կարկուտի ձևով: Հանկարծ չխկալով անակնկալ կանգ է առնում դաշտում աշնանացան կատարող տրակտորը, և պարզվում է, որ դեմ է առել արկի բեկորի: Ընդհանուր ողբերգականության մեջ կան նաև զավեշտական տխուր դեպքեր: Բոլոր բակերում սփռված են գյուղի վրա կրակված գնդացիրների և ավտոմատների փամփուշտները: Հնդուհավերը շարունակ կուլ են տալիս դրանք: Տանտիրուհիները հենց նկատում են, որ թռչունները անբնական են պահում իրենց, իսկույն մորթում են:

Վերիշենը, չնայած իր ծանր վիճակին, այսօր թիկունք է Բուզլուխին, Մանաշիդին և Էրքեջին: Այստեղ են պատսպարվել շատ կարաչինարցիներ, որոնց տներն ավերվել են ռմբակոծությունից: Այստեղ են պահվում նաև այդ երեք գյուղերի տեխնիկան, և հավատում են, որ մի օր դրանք վերստին վար կանեն հայրենի գյուղի դաշտերում:

Ի տարբերություն աստիճանաբար կենդանացող Բուզլուխի, որն անմիջականորեն կրակի գոտում չէ և ուր արդեն վերադարձել է 25 ընտանիք, Մանաշիդում և Էրքեջում տխուր լռություն է: Այս

գյուղերը հռչակված են իրենց գինիով և օղիով: Հիմա, սակայն, միրգը ինքն իրեն է խմորվում, և նրան մարդկային ձեռք չի դիպչում, որովհետև գյուղի կեսը Թոդանի կողմից անմիջականորեն գտնվում է ուղիղ նշանառության տակ, իսկ մյուս կեսում մարդիկ հնարավորին չափ հասցրեցին մինչև նոյեմբերի կեսը հավաքել բերքը, որ գոնե մասնակիորեն թեթևացնեն իրենց և իրենց հյուրընկալած տների բնակիչների հոգսերն առաջիկա ձմռանը, թեև, իհարկե, ամիսներով անմշակ մնացած այգիներից մեծ ակնկալիքներ չպետք է ունենալ:

Վերիշենի դաշտերի նման Էրքեջի շրջակա անտառները ևս ծածկված են արկերի բեկորներով, չպայթած մի քանի արկեր էլ խրվել են դարավոր հաստաբուն ծառերի մեջ, իրար վրա թափված ճյուղերի և այրված ծառերի պատճառով խառնվել են ճանապարհ ու կածան: Գյուղն ու անտառը միայն տարածք ու բնական հարստություններ չեն, այլ մեր ժողովրդի պատմությունը, որի հետ կապված ավանդություններին հանդիպում ես յուրաքանչյուր քայլափոխին, և կրկնվող պատմությունում դրանք այնքան համահունչ են դեռևս չլռած ռմբակոծումների արձագանքին: Էրքեջից Վերիշեն տանող լեռնային կածանի թեք լանջին, որի կողքով հոսում է Հայ Պարիս գյուղը սնուցող ջուրը, կա մի աղբյուր: Այն կոչվում է Աղջկա աղբյուր: Դեռևս հնուց աղբյուրի մոտի հողը և ջուրը հռչակված են եղել բուժիչ հատկությամբ: Դրանք խառնելով իրար՝ քսել են վերքերին, և աստիճանաբար այնքան հող է վերցվել, որ գոյացել է մի ողջ քարանձավ: 1918 թ., երբ գյուղը վերստին հերոսական կռիվ էր մղում իրեն շրջապատած թշնամիների դեմ, վերջիններս հետապնդում են մի աղջկա: Նա, չցանկանալով ընկնել հետապնդողների ձեռքը, իրեն ժայռից նետում է ցած և ջախջախվում այս աղբյուրի մոտ: Այդ տեղում մեկ տարի անց գյուղի տեր Սարգիս քահանան կանգնեցնում է մի տապանաքար՝ այս դեպքը պատկերող եռակամար պատկերաքանդակներով, որի մյուս կողմում էլ գրված է. «Այս է տապան Եպրաքսեայ կույսին»: Ժողովուրդը սրբացրել է այս վայրը, և մինչև հիմա էլ, հին հավատալիքներից եկող սովորությամբ, շորերի կտորներ են կապվում շրջակա ծառերի ճյուղերից, որ այնտեղ մնան իրենց ցավերը: Նույն սովորությամբ այստեղ այսպես էին վարվել նաև տեղի ինքնապաշտպանության ջոկատի տղաները, բայց, դժբախտաբար, նրանցից մի քանիսը Վերիշենի կռիվերի ժամանակ այստեղ թողեցին ոչ թե իրենց ցավերը, այլ երիտասարդ կյանքերը:

Մանաշիդում էլ գյուղը գրավողները մի առանձին կրքով են վնասել գյուղի եկեղեցին և երբեմնի մեծ գրադարանը՝ ասես մեկ անգամ ևս հիշեցնելով, թե ինչ կարևորություն ունեն հայ գիրն ու եկեղեցին մեր ժողովրդի կյանքում: Գյուղից փախչելուց առաջ գրքերը դուրս են թափել: Ցեխերի միջից հավաքելով՝ հիմա դրանք նորից իրենց տեղերում են շարված: Գրքերին փակցված գրադարանային թերթիկների վրա վերջին նշումներն արվել են այս տարվա հունիսի վերջին: Դրանից հետո էլ նշումներ չկան, կան միայն չգրված, պատառոտված և կիսայրված թերթեր:

Գյուղերի ներկա վիճակը երկար կարելի է նկարագրել: Սակայն այսօր կարևորն ու առաջնահերթը առաջիկա ձմռան մասին մտածելն է: Եթե մեր մտահոգությունը ձմեռը չջեռուցվող բնակարաններում դիմավորելն է, ապա Շահումյանում, Կարաչինարում, Գաղթութում և Մանասաշենում շատերն այն անց են կացնելու նկուղներում, իսկ Բուզլուխում հանված լուսամուտների տեղը ստիպված տախտակ են խփում: Ինքնապաշտպանությանը համազոր, երբեմն առավել դժվար կռիվ է ամենօրյա կենսապահովումը, բայց մարդիկ էլի ինչ–որ ելքեր են ման գալիս: Անջատված էլեկտրականության փոխարեն, արհամարհելով վտանգը, էլեկտրական գիծ են անցկացնում Մարտակերտից, արդեն բերվել են հենասյուները, և գյուղեգյուղ ժողովուրդը աշխատելու է այստեղ: Պատրաստվում է այն նախագիծը, որով վերստին աշխատելու է տարիներ առաջ լքված Վերիշենի էլեկտրակայանը:

Այնուամենայնիվ, վերստին չեմ կարող չնշել միանգամայն լուծելի շատ հարցերում մեր համապատասխան նախարարությունների պարզապես անտարբեր վերաբերմունքը: Օրինակ՝ թե՛ այստեղ և թե՛ ընդհանրապես Արցախում շարունակ հարցնում են, թե ինչո՞ւ Հայաստանից չեն ստացվում ազգային կինոնկարներ:

Գաղտնիք չէ, որ գյուղերի ավերումների և ռազմական գործողությունների ընթացքում շատ ընտանիքներ տարբեր ճանապարհներով կարողացան այստեղ գտնվող իրենց հարազատների մոտ փոխադրել երեխաներին: Երևանում, կռվից հեռու հեշտ է մեղադրել այդ ծնողներին, որոնք իրենք էլ տանջվում են երեխաների կարոտից: Ամեն երեկո, երբ վերականգնվում է կապը Երևանի հետ, նրանք փորձում են գոնե մի քանի րոպեով լսել երեխաների ձայնը, որը շատ քիչ է հաջողվում, և կարոտն առավել է ուժեղացնում դուրս գալու տրամադրությունները: Շահումյանի հետ վատ կապի պատճառն այսօր տեխնիկական անսարքությունն է, հնացած սարքավորումները, որոնք ցանկության դեպքում կապի նախարարությունը կարող էր կարգի բերել: Իսկ շարունակական ընդհատումը բարոյալքիչ գործոններից մեկն է, որը շահումյանցիներին շարունակ հիշեցնում է, որ իրենք կտրված և օտարված են այս աշխարհից: Մենք մի քանի շաբաթը մեկ հպարտությամբ ասում ենք, թե Երևանը կապվեց միջազգային կապի համակարգի նաև այսինչ գծին, բայց չենք մտահոգվում՝ ինչպիսին է կապը մեր պատմական հայրենիքի տարբեր անկյունների հետ:

Շահումյանում ընդհանուր հերոսականության կողքին կյանքի դժվարություններից, Հայաստանի ոչ ուշադիր և ոչ պետական մոտեցումից բխող շատ մտահոգիչ հարցեր կան, որոնք սպառնում են քայքայել շրջանը՝ այն դատապարտելով խաղաղ դատարկման:

Որոշել էի վերադառնալուց հետո գրել այդ բոլոր հարցերի մասին, սակայն այժմ, երբ իրավիճակը կտրուկ փոխվել է, և առաջնահերթ խնդիրը դարձյալ ինքնապաշտպանությունն է, հուսանք, որ այս փորձությանն էլ դիմակայելուց հետո համապատասխան օղակներում վերջապես այդ հարցերը համակողմանիորեն կքննարկվեն բոլոր նրանց հետ, ովքեր քաջածանոթ են գործերի իրական վիճակին, այլապես կարող է կրկնվել հին պատմությունը՝ հաղթել կռվում և պարտվել կյանքում: Հիշենք, որ այդպես եղավ Կուշչի–Արմավիրում, երբ 1988 թ. դեկտեմբերյան տեղահանության ալիքին դիմագրաված գյուղի ժողովուրդը 1989 թ. աշնանը վաճառեց տները և հեռացավ՝ սեպ խրելով Շահումյանի ու Գետաշենի միջև: Կամ էլ

1990 թ. հունվարին, երբ, չնայած ետ շպրտվեցին Կամո և Ազատ գյուղերի վրա հարձակվողները, սակայն ընդամենը երկու ամիս անց երկու գյուղերն էլ խաղաղ լքվեցին: Նման տխուր օրինակներ էլի կարելի է թվարկել, սակայն չպետք է թույլ տալ, որ Հյուսիսային Արցախը հավելի դրանց թիվը, այլապես այդ հավելումը կարող է ճակատագրական դառնալ մեր ժողովրդի համար:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 28–ը նոյեմբերի, թիվ 67
Հեղինակի խնդրանքով հոնորարը փոխանցվում է
Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերի
վերականգնման ՀՅԴ հաշվեհամարին:

ԱՐՑԱԽՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր ընթացող բանակցություններում Արցախի ինքնավարության վերականգնումը Ադրբեջանի կազմում հարցի լուծում համարելու դեպքում հարկավոր է նկատի ունենալ, որ այն Արևմտյան Եվրոպայի երկու պետությունների միջև ընկած վիճելի տարածք չէ, ուր գործում են միջազգային օրենքները և բարոյական չափանիշները, այլ լեռնաշղթաներով աշխարհից մեկուսացած մի երկրամաս՝ նախորդ տասնամյակների դառը փորձով, երբ 1923 թ. համանման ինքնավարության շնորհիմամբ դարասկզբի արյունալի ընդհարումներին և հերոսական ինքնապաշտպանությանը փոխարինեց խաղաղ նվաճումը ժողովուրդների բարեկամության դրոշի ներքո՝ դրսևորվելով թե՛ լաչինյան անջրպետի ստեղծմամբ և թե՛ մեր հանրապետության հետ տնտեսական ու հոգևոր կապերի խզմամբ ու Հայաստանին մոտակա գյուղերը ադրբեջանականացնելով, ինչպես Բերդաձորի ենթաշրջանի օղակումը Լիսագորով, Կանաչ Թալայով և Շուշիի շրջանի մի քանի այլ գյուղերով, կամ էլ հայկական շրջաններն իրար կապող ճանապարհների հանգույցներին նման գյուղերի հիմնումն ու մեծացումը՝ Խոջալուն՝ Ստեփանակերտի ու Ասկերանի միջև, Հադրութի շրջանը Մարտունիին կապող հայկական Տող գյուղում ադրբեջանական բնակչությունը արհեստականորեն ավելացնելու ձգտումը: Խաչմերուկային նման մի քանի գյուղերը բավական էին Արցախին տիրելու համար: Հետևողականորեն իրագործվող այդ ծրագիրը, բարեբախտաբար, կանխվեց 1988–ին, սակայն վերստին հնարավոր չի լինի հակազդել Ադրբեջանի գերիշխանության ընդունումից հետո, երբ պետական քաղաքականությանը գումարվում է այն իրագործող ժողովրդի անասնապահական կացութաձևից բխող արոտավայրերի խնդիրը՝ մարզի շրջակա չոր

տափարակների խաշնարածների մղումը դեպի երկրամասի կանաչավետ լեռնալանջերը: Արևմտյան Հայաստանի ողբերգությանը ժամանակին նպաստեց տևական արյունալի այս պայքարը: Նույն եղանակով էր իրագործվում մարզի ժողովրդագրական հաշվեկշիռը փոխելու քաղաքականությունը: Հայկական գյուղերի անասնապահական ֆերմաներում աշխատելու համար գալիս էին մի քանի ընտանիքներ, և աննկատելիորեն ադրբեջանական մի գյուղ էր ձևավորվում տեղի արոտավայրերի մոտ:

Արցախն ինչպես ապագա չունի Ադրբեջանի կազմում, այնպես էլ առանց Շահումյանի շրջանի: Ժամանակին այն կտրվեց մարզից իր բացառիկ կարևորության համար՝ նրանից էլ իր հերթին դուրս թողնելով Գետաշենի ենթաշրջանը: Այս եռաստիճանությունը տարբեր մակարդակի բանակցություններում քննարկվելիք հարց լինելուց առաջ ճակատագրական մի աշխարհաքաղաքականություն է:

Սրանից մեկ տարի առաջ մի գետաշենցի, հայրենի գյուղի վերին բարձունքից ցույց տալով Հյուսիսային Արցախը և մյուս կողմի երբեմնի հայկական գյուղերը, ազգային աշխարհաքաղաքականություն կոչվող բարդ հասկացությանը հարաբերվող այս եռաստիճանությունը բնորոշեց Հայաստանի հետ կապվող ընդամենը մեկ նախադասությամբ. «Գետաշենը բանալին է, Շահումյանը՝ կողպեքը, Արցախը՝ դարպասը, և Մայր Հայաստանը՝ շենքը»: Գետաշենի անկումով բանալին մտավ կողպեքը՝ ավերելով Մանաշիդը, Բուզլուխը, Էրքեջը ու կշարունակեր մինչև Երևան ձգվելիք իր պտույտը, եթե այն չկանգնեցվեր «Դեպի Երկիր» կարգախոսի նվիրյալ մարտիկների և տեղի ինքնապաշտպանության ջոկատների միացյալ ուժերով:

Շահումյանը, լինելով մեր պատմական հայրենիքի նվիրական հիշատակներով ու ազգային ավանդություններով օծուն մի հատվածը, նաև Արցախի թիկունքն ու վահանն է, առանց որի անպաշտպան է դառնում երկրամասի սիրտը՝ Մարտակերտը: Շահումյանի հանձնումը կնշանակի առանց ավելորդ աղմուկի ու հոյզերի, «սթափ հայացքով» հանձնել ողջ Արցախը, և կվերահսկվեն թի-

կունքից նրան իշխող բարձունքները, միանգամից կբացվեն Կարաչինարից Թալիշ և Գյուլիստանից Հաթերք տանող ճանապարհները, իսկ մնացածը, ինչպես ասում են, տեխնիկայի գործ է:

Բանակցությունների հաջորդ հարցը զինված սպառազեն կազմավորումների խնդիրն է: Արցախից զինված կազմավորումների հանման ներքո ՕՄՕՆ–ը ևս նկատի ունենալը, միևնույն է, կյանքի ապահովության և երկրամասի պաշտպանության որևէ երաշխիք չի ստեղծում: Օրինակ՝ Ասկերան շրջկենտրոնի վրա պարտադիր չէ հարձակվել մարզի ներսից՝ նրան մոտ գտնվող Խոջալուից, ավելի հարմար է Աղդամից, իսկ ամենամեծ գյուղերից մեկին՝ Լենինավանին, ներսից որևէ բնակավայր չի սպառնում, այլ Միր Բաշիրի շրջանը: Առանց ինքնապաշտպանական ջոկատների հնարավոր չեն լինի գյուղատնտեսական աշխատանքները սահմանամերձ ցանքատարածություններում, որովհետև դրանք կավերվեն կամ կհրդեհվեն, ինչպես այս տարի:

Ջոկատների ցրման դեպքում, եթե անգամ նաև ՕՄՕՆ–ը հանվի ողջ ԼՂՀ–ից, միևնույն է, վիճակը լավանալու փոխարեն էականորեն կվատանա, որովհետև հարևան շրջաններից ցանկացած պահի վերստին կարելի է ներս մտնել և հաշվեհարդար տեսնել անպաշտպան ժողովրդի հետ: Այս պատճառով էր, որ ժամանակին հատուկ դրություն մտցվեց ոչ միայն մարզում, այլև նրան հարակից ադրբեջանական շրջաններում՝ «նրա շուրջը», ինչպես ասվում էր հաղորդագրություններում:

Խոստովանենք, որ Արցախի կարևորագույն բոլոր կետերը հիմնականում պահպանվել և գյուղատնտեսական աշխատանքները հնարավոր են եղել միայն ներքին զորքերի միջոցով, և նրանց շնորհիվ է պահպանվել համեմատական կայուն վիճակը, որքան էլ շատ լինեն նրանց գործած կամայականությունները: Այսպես օրինակ, Առաջաձորի ճանապարհին՝ հայկական Կիչան և ադրբեջանական Սրխավենդ գյուղերի հարևանությամբ գտնվող զինվորական պահակակետում, տարբեր պատրվակներով դրամ էին վերցնում անցնողներից, ծխախոտ կամ խմիչք: Ինձ էլ են այստեղ մի քանի անգամ ժամանակին նույն պատրվակով ենթարկել ձգձգվող անիմաստ հարցումների և թողել միայն հանդիպած գյուղացիների միջնորդությամբ, ավելի ճիշտ՝ նրանց տված գյուղատնտեսական բարիքների շնորհիվ: Հիմա այդ պահակակետը չկա, և անցնողները թվարկվածների փոխարեն իրենց կյանքով են վճարում: Ընդամենը մի քանի ամսում այն հանվելուց հետո այս հատվածում զոհվել է երեք տասնյակից ավելի հայ, և ամեն անգամ Կիչանի մոտ դրությունը լարվելուց միանգամից կտրվում է Շահումյանի ու Մարտակերտի կապը Ստեփանակերտի հետ:

Որտեղից դուրս են գալիս ներքին զորքերը, այնտեղ տեղահան է լինում և հայությունը: Այսպես եղավ Գետաշենում, Շահումյանի երեք գյուղերը ընկան միայն այն ժամանակ, երբ վերացվեց Շահումյանի պարետատունը, որը վկայում է, որ Արցախից ներքին զորքերի հանելու դեպքում ստեղծված զինական դատարկ տարածությունը կլցվի չորրորդ բանակով, որը կարող է չմասնակցել ռազմական գործողությունների: Չորրորդ բանակի մասնակցությունը բավականին հարաբերական հասկացություն է հիմա, երբ մարտերի ընթացքում ոչ միայն մոսինը ու կարաբինը, այլև անգամ ավտոմատը էական դեր չեն խաղում: Բանակի մասնակցությունը պարտադիր չէ դրսևորվի ավտոմատավոր զինվորների գրոհով և ուղղաթիռներից տեղացող գնդացրային կրակով: Ջորքը այժմ չի միջամտում, սակայն Էրքեջի և Մանաշիդի դիրքերից հեռադիտակով պարզ երևում է, թե ինչպես հսկայական բեռնատարներով բերում են զորամասերից դուրս հանված արկերը, և հրանոթների ուղիղ նշանառությունն էլ կարգավորում են կադրային զինվորականները: Խորհրդային Միության քաղաքական այս խառնակ վիճակում Մոսկվայի կարգադրություններից առավել հստակ գործում է մեծ գումարներ տալու մեխանիզմը, որին հակազդող ինքնապաշտպանությունը իրականացվում է թանկ կորուստների և մեծ ավերների գնով, ինչպես օրինակ՝ Կարաչինարում:

Քաղաքական կարգավորման առավել արդյունավետ ճանապարհը ոչ թե Ադրբեջանի գերիշխանության հաստատումն է, այլ

ներքին զորքերի տեղակայումը, ինչպես վերջինիս հովանու ներքո 1989 թ. գործում էին տեղական իշխանությունները:

Հիմա, որպես ելք ստեղծված վիճակից, շատ է խոսվում ազգային բանակի ստեղծման մասին և վկայակոչվում է Ադրբեջանը, թե այսօր նա ինչ վճռական քայլեր է ձեռնարկում, սակայն ճիշտ կլինի նախ նայել, թե ինչ քայլեր էր երեկ կատարում Ադրբեջանը: Նա զինակոչ կատարեց իր մոտ տեղակայված խորհրդային բանակի զորամասերում, որի շնորհիվ հնարավոր դարձավ վերահսկել զինվորական տեխնիկան, կադրային զինվորականներից այն օգտագործելու նրբությունները սովորել և, որ ամենավտանգավորն է, ադրբեջանականացվող անձնակազմերով ճնշում գործադրել հրամանատարական կազմի վրա, կամ էլ մի որևէ պատեհ առիթով զրահամեքենաների և ուղղաթիռների թեկուզ ժամանակավոր զավթումն ու օգտագործումը Արցախի ստրատեգիական կարևոր կետերի դեմ: Ի դեպ, ՕՄՕՆ–ը ևս հիմնականում զինված է զորակոչի միջոցով զորամասերից դուրս հանված զենքով: Այսինքն՝ ազգային բանակի ստեղծումը այնտեղ ընթանում է երկաստիճան՝ զորակոչի միջոցով վերահսկել զենքը և այն հանձնել ՕՄՕՆ–ին:

Օգոստոսին Արցախում ծավալված բռնությունների օրերին Շահումյանում առիթ եղավ հանդիպելու բարձրաստիճան մի սպայի: Խոսակցության ժամանակ նա ասաց, որ մենք զարմանալի ժողովուրդ ենք: Կատարում ենք Մոսկվայի շահերին խփող և մեծ առճակատումների տանող այնպիսի քայլեր, որոնցից վերջնական արդյունքում օգտվում է Ադրբեջանը: Այդպիսի քայլերից մեկն էլ զորակոչն էր: Սպան հիշեցրեց, որ դեռևս անցյալ տարվա մայիսին Հայաստանը առաջինը ընդունեց զորակոչը հանրապետության տարածքում անցկացնելու որոշումը, նպաստեց դրա իրագործմանը ողջ Միությունում: Նրա խոստովանությամբ՝ այն շարժեց իրենց՝ զինվորականների զայրույթն ու ատելությունը, որովհետև իրենք կողմ են միասնական Միությանը և զինված ուժերին, սակայն երբ հնարավոր դարձավ զորակոչը հանրապետություններում կատարելը, այդ գործին առաջինը ձեռնամուխ եղավ Ադրբեջանը, իսկ Հայաստանում մինչ այժմ զորակոչ չի հայտարարվել:

Այո՛, Հայաստանում, չնայած հանրապետության ղեկավարների մտահոգությանը, հորդորներին, թեև հարկավոր էր ավելի խիստ և վճռական լինել, որոշ քաղաքական գործիչներ, չգիտես ինչ խելքով, թե ում թելադրանքով պարզապես վիժեցրին զորակոչը: Իսկ բանակ չգնալու պատրվակով, «չենք ծառայի զավթիչ բանակին» կարգախոսով Երևանում ցույց անող 17–18 տարեկանները այսօր, բնականաբար, ազգային բանակի փոխարեն, ծամոնները բերաններին, հերթապահում են ոչ թե զինապահեստների, այլ արտասահմանյան գարեջրի ու ծխախոտի սեղանիկների մոտ:

Եթե այսօր մի ողջ սերունդ փողոցա–փողային ամենակեղտոտ հոգեբանությամբ է մեծանում, իսկ Արցախի ու Հայաստանի մյուս շրջանների սահմանները և մեր ժողովրդի կյանքն ու պատիվը պաշտպանող մարտիկները հաճախ չունեն այն զենքը, որը ունի ՕՄՕՆ–ը, և ծանր կորուստներ ենք կրում, մեղավորները զորակոչը տապալած և խորհրդային բանակը անվանարկող գործիչներն են:

Հիմա երկրամասի հայաթափումը թույլ չտալու համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու իրողություն. առաջին՝ Արցախը Ադրբեջանին ենթարկել՝ նշանակում է այն խաղաղ ճանապարհով հայաթափել: Երկրորդ՝ Արցախից այսօր հանել ներքին զորքերը՝ նույնն է, ինչ ասենք երեք տարի առաջ Մոսկվայում քաղաքական որոշում ընդունելը՝ մարզը բռնի հայաթափելու մասին: Ներքին զորքերը, որքան էլ վատը լինեն, նրանց երանությամբ են հիշում, երբ փոխարինելու են գալիս օմօնականները: Բնորոշ օրինակներից է օդակայանը: Որքան էլ բողոքենք զինվորականների կամայականություններից ու դրամ պահանջելուց, միևնույն է, այն երբեք չի կարելի համեմատել ՕՄՕՆ–ի բռնությունների ու ծաղրուծանակի հետ, որոնց թվարկումն իսկ վիրավորում է ազգային արժանապատվությունը:

Այս պատճառով առաջին հերթին բանակցելով և զիջումներով հարկավոր է հստակեցնել մեր դիրքը Մոսկվայի հետ, որը դեռ երկար կպահպանի իր ուժն ու հզորությունը և կարգավորողի դերը՝

անկախ նրանից, կցանկանանք դա մենք, թե չենք ցանկանա, այլ ոչ թե հարևան հանրապետության, որի դիրքը վաղուց արդեն հստակ է իր նախնիների՝ Հայկական լեռնաշխարհ մտնելուց հետո, և այդ դիրքը կարող է փոխվել միայն Հայաստանի հզորացմամբ, որն այսօրվա պայմաններում հնարավոր կարող է դառնալ Խորհրդային Միության դեռևս առկա զինական, տնտեսական և մտավոր բոլոր կառուցվածքները առավելագույն օգտագործելուց հետո:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 5-ը նոյեմբերի, թիվ 50
Հեղինակի խնդրանքով հոդվածը փոխանցվում է
Հայաստանի Հանրապետության պաշտպանության 609901
հաշվեհամարին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.

Հայաստանում տիրապետող Շարժման ղեկավարներն ու գաղափարախոսները վերջապես ուժ են գտել խոստովանելու, որ միաժամանակ անհամատեղելի և անգամ իրար փոխբացասող են անկախությունը և Արցախի վերամիավորումը Մայր Հայաստանին, ու, համաձայն անկախության իրենց ըմբռնման, ելքը Արցախը Ադրբեջանի կազմում թողնելն է, որը, իրենց կարծիքով, կդյուրացնի և անկախության ճանաչումը մեր հարևանների կողմից, և միաժամանակ կնվազեցնի Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում ու ընդհանրապես տարածաշրջանում:

Միաժամանակ նրանք բարոյական ուժ պետք է ունենան խոստովանելու, որ 1989 թ. սկզբին, երբ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծմամբ հայերին տրվել էր հնարավոր առավելագույնը, Թատերական հրապարակից մինչև նախկին խորհրդարան ձգվող ճանապարհին հարցի անհաշվարկ սրումից հետո կարճ ժամանակում ստեղծվեց այնպիսի մի վիճակ, որ հիմա Արցախը թողնել Ադրբեջանի կազմում՝ նշանակում է այն դատապարտել խաղաղ հայաթափման՝ արժանացնելով Նախիջևանի ճակատագրին:

Շարժման սկզբից Ռաֆայել Իշխանյանը, բազմիցս զգուշացնելով Արցախյան հարցի սրման հնարավոր հետևանքների մասին, հիշեցնում էր Ղևոնդ Ալիշանի նշանավոր խոսքերը. «Մի՛ արթնացրեք թուրքերի մոնղոլական արյունը»:

Սումգայիթը դեռևս այդ արյան կանչը չէր: Այն հրահրվեց ու իրագործվեց կենտրոնական իշխանությունների թելադրանքով: Նույնիսկ 1989 թ. սկզբին դեռևս ընդգծված հակասություններ չկային

մարզի ադրբեջանական գյուղերի և անգամ սահմանակից շրջանների հետ, և Արցախը տնտեսությամբ ու մշակույթով Հայաստանի մեջ ներառելու բացառիկ հնարավորությունն օգտագործելու փոխարեն մեր հարևանների երակներում նիրհող այդ արյունը արթնացվեց Թատերական հրապարակից: Այս շրջանում, չնայած առանձին քարկոծումներին, լիովին բաց էր անգամ Խոջալուով Ստեփանակերտից Ասկերան տանող ճանապարհը, որտեղից անցնելով ամեն երկու–երեք ամիսը մեկ՝ ներքին մի վախով նկատել եմ, թե անցնող հայկական մեքենաներին ուղղված տեղի բնակիչների հայացքներում ինչպես է կուտակվում աստիճանաբար արթնացող այդ արյունը:

Եթե մինչ այդ հիմնական ճնշումը Բաքվի կողմից ընդունվող որոշումներից էր բխում և դրսևորվում օմօնական բռնություններով, այնուհետև անասնագողության ծավալմամբ արթնացավ այդ արյունը՝ իր ազգագրական բնորոշ տարբերակիչ հատկանիշներով:

Այս գարնանը, երբ դեռևս զինվորական զրահամեքենաների ուղեկցությամբ առանձին ավտոշարասյուներ Ստեփանակերտից Մարտակերտ էին անցնում, նման մի շարասյան հետ առիթ եղավ անցնելու Աղդամով: Գյուղերից մեկում բեռնատարներից մեկը փչացավ, ու շարասյունը կանգ առավ: Մինչ զինվորականների օղակում վարորդը վերացնում էր անսարքությունը, դանդաղորեն սկսեց հավաքվել տեղի բնակչությունը: Երեխաներն սկսեցին ցատկոտել վայրի մի հրճվանքով: Նրանց՝ ձեռքերով գլուխը կտրելու և աչքերը հանելու շարժումներն ապշեցուցիչ մի նմանություն ունեին 1915 թ. տարագիրների տարբեր քարավաններին ջարդից առաջ ենթարկած ծաղրուծանակի նկարագրությունների հետ:

Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերի հայաթափման ժամանակ զորքի և օմօնի հետևից գալիս էին շրջակա գյուղերի բնակիչները այնպես, ինչպես այն տարիներին զորքի հետևից սայլերով գնում էր խուժանը: Միակ տարբերությունը սայլերին փոխարինած բեռնատարներն էին, որով հիմա փոխադրում էին թալանը: Երբ հեռադիտակով դիտում էինք, թե ինչպես է ադրբեջանցի խուժանը իրար մեջ բաժանում ունեցվածքը, հիշում էինք գրականությունից մեզ

ծանոթ նկարագրությունները: Այդ երկու օրերին հայերը մտածում էին աղջիկների ու ջահել կանանց փրկության, զինված ջոկատների ուղեկցությամբ նրանց հայկական առավել ապահով գյուղերը հասցնելու, հետո նոր տների ունեցվածքը փոխադրելու մասին: Ճանապարհի ցեխի մեջ, ընդհանուր շտապողականության և սարսափի մեջ ժամանակից շուտ ծննդաբերեցին մի քանի կանայք: Եթե 1915–ին տեղահանությունը նկարագրում էին գերմանական սպաները, ապա հիմա էլ գաղթի ճանապարհին իրար խառնված գյուղերի ժողովրդին նկարում էին խորհրդային և օտար լրագրողներ:

«Զուլումի» ընդհանուր սարսափը կասեցվում է միայն պատասխան արժանի հարվածից հետո, և պատահական չէ, որ օգոստոսի ընդհանուր խուճապն անմիջապես մարտական ոգու փոխվեց երեք գյուղերի հետգրավմամբ: Բանակցությունների ժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ արցախահայությունը կարող է կռվել անգամ զրահամեքենաներով եկող օմօնի դեմ, բայց չի կարող ապրել նրանց իշխանության ներքո:

Ժողովուրդը ոչ թե չի կարող ներել այս վերջին տարիներին տեղի ունեցածը, այլ ոչ մի երաշխիք չունի, որ այդ ամենը վերստին չի կրկնվի առաջին իսկ պատեհ առիթի դեպքում, երբ ժամանակի ընթացքում աստիճանաբար կարդիականանան ադրբեջանական ուժերը, իսկ ԼՂՀ–ն, ընդունելով նրա գերիշխանությունը, կզրկվի ինքնապաշտպանության ներկա համակարգից: Արցախի լեռնային պայմաններում գյուղ գրավելու համար բավական է տիրել նրան իշխող մի բարձունքի և այնտեղից միջին ու մեծ տրամաչափի հրափողերով հերթով հանգիստ ավերել տները: Հիմա ամեն նման բարձունք պաշտպանված է ինքնապաշտպանության ուժերի կողմից, բայց Բաքվի գերիշխանության ընդունումից հետո Ադրբեջանն իրավական բոլոր հիմքերը կունենա երկրամասում «կարգ ու կանոն» հաստատելու:

Ադրբեջանի օրենքները ընդունելուց հետո, երբ, բնականաբար, կլուծարվի ինքնապաշտպանության համակարգը, հայկական գյուղերը կարելի է հայաթափել անգամ առանց զինական ուժի գոր-

ծադրման, այլ լոկ դրա ցուցադրմամբ: Պաշտպանական կրակակետերի հանումից հետո մարզային միլիցիան, եթե նույնիսկ հանդուրժվի նրա գոյությունը, ոչինչ չի կարող ձեռնարկել, երբ ասենք, Ադրբեջանը սկսի հայկական որևէ գյուղի շրջակայքում զորախաղեր անցկացնել: Ի դեպ, եթե Էրքեջը գրավվեց կատաղի մարտերից հետո միայն, ապա Բուզլուխն ու Մանաշիդը ավելի հեշտ տեղի տվեցին: Տեղահանության նախորդ օրը զրահամեքենաները բռնեցին գյուղերի իշխող բարձունքները, որին հաջորդեց բնակչության տեղահանությունը, քանի որ բանակի հետ գյուղ էր մտնելու օմօնը: Վաղն էլ նույն ձևով գյուղերը թողնվելու են Ադրբեջանի կողմից այդ դիրքերը բռնելուց հետո, որովհետև հոգեբանորեն հնարավոր չի լինի անգամ երկու գիշեր անցկացնել կուտակված այդ ուժերի հարևանությամբ: Նաև մի քանի հանգուցակետերում միլիցիայի պահակակետեր հաստատելով՝ մարզը կխեղդեն երկաթյա բռունցքում՝ առանց հակասելու միջազգային օրենքներին:

Նրանք այդպես վարվեցին և Ստեփանակերտի օդակայանում: Այնտեղ երեք անգամ «բախտ» եմ ունեցել հանդիպելու օմօնականներին: Առաջին անգամ, երբ նրանք, նոր հաստատվելով, ձգտում էին ամրացնել իրենց տեղը, ժպտուն ու բարեկիրթ ջենտլմենների տպավորություն էին թողնում, որոնց միայն սպիտակ ձեռնոցներն էին պակասում: Երկու ամիս անց չքացել էր այդ ամենը, և նրանք դարձել էին այստեղի տերերը, իսկ թե ինչ էր կատարվում մի քանի ամիս հետո, ավելի լավ է չգրել: Ի դեպ, նրանց ներկայությունը ոչ միայն միջազգային իրավունքի որևէ խախտում չէ, այլև բնական ու անհրաժեշտ կարող է դիտվել, եթե հաշվի առնենք օդակայանի կարևորությունը:

Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու դեպքում ճիշտը միշտ նրանք են դուրս գալու, և իրավական ու զինական որևէ հակազդեցություն լինել չի կարող: Արցախահայության գլխավոր դժբախտությունն այն է, որ Շարժման երկրորդ փուլում նրանց ճակատագիրը սկսեցին տնօրինել մարդիկ, ովքեր անտեղյակ էին երկրամասի ներքին յուրահատկություններին, իսկ առանց դրանք հաշվի առնելու տեսական ցանկացած լուծում ու միջազգայնորեն ընդունելի յուրաքանչյուր տարբերակ գործնականում կամ անկիրառելի է, կամ էլ գործում է հօգուտ Ադրբեջանի:

Խոստովանենք, որ Շարժման ողջ ընթացքում Հայաստանը երբեք չունեցավ ազգային պետական ծրագիր Արցախի հարցում, իսկ Ադրբեջանը հետևողականորեն իրագործում է իր ծրագիրը: Արցախի հանդեպ մեր պահվածքը կարելի է բնորոշել իբրև կենսաբանական հակազդեցության քաղաքականություն: Ինչպես օրգանիզմի որևէ կետին երբ հարվածում են, մարմինը տարերայնորեն կծկվում է, այդպես էլ երբ խփում էին մի գյուղի, մենք լոկ արձագանքում էինք համապատասխան այդ հարվածին՝ առանց դեպքերի զարգացման ընթացքը հասկանալու ունակության: Չկար տեղային աշխարհաքաղաքականությունից բխող ստրատեգիական և տնտեսական ամրացման ծրագիր, իսկ Ադրբեջանը հրաշալիորեն գիտի թե՛ Արցախը Հայաստանին կապող և թե՛ երկրամասի ներքին ամրությունը պայմանավորող կետերի կարևորությունը և ուժերը կենտրոնացնում է միայն դրանց խփելու համար: Նա անգամ ուժ չի ծախսում այդ կետերից դուրս որևէ գյուղ հայաթափելու վրա:

Մայիսին, օգտվելով Կենտրոնի հետ Հայաստանի առճակատման անմիտ քաղաքականությունից, իր հավատարմության համար որպես վարձ Ադրբեջանը բանակի միջոցով գրավեց Արցախը Հայաստանին կապող պորտալարը՝ Բերդաձորը, և Հադրութի շրջանի հենց այն գյուղերը, որոնք գտնվում էին Գորիսի դիմաց՝ մարզը առավել կտրելով Հայաստանից:

Ժամանակին նույն սկզբունքով Բաղիրովն էր ցանկանում Ստալինի համաձայնությամբ բռնագաղթեցնել Արցախի հայությանը: Երբ այդ ծրագիրը չի հաջողվում, որպես կտակ իր հաջորդներին՝ նա պատգամում է, որ Արցախին տիրելու համար հարկավոր է տիրել չորս գյուղի՝ Չարդախլուին, Գետաշենին, Վերիշենին և Հաթերքին: Չարդախլուն գնաց 1988–ին, գարնանը Գետաշենն էլ հաստրեցին վերացնել, իսկ օգոստոսյան խռովության օրերին պատահական չէ, որ դրությունը շիկացավ հենց Վերիշենի մատույցներում և

Հաթերքում, երբ Ադրբեջանը տենդագին ձգտում էր օգտվել խառնակ վիճակից՝ դարձյալ բանակի օգնությամբ դատարկելու այս երկու գյուղը: Պետական հստակ ծրագրով բազմաբնույթ զինական ճնշումից բացի հայաթափմանը նպաստելու է նաև բոլոր ձեռնարկությունների և հաստատությունների ենթարկումը Բաքվի համապատասխան նախարարություններին, որը տնտեսական անելանելի վիճակ կստեղծի, և այն հանգիստ կարդարացվի տիրող ընդհանուր ծանր կացությամբ: Ադրբեջանի կազմում Արցախի խաղաղ հայաթափման մոտ մեկ տասնյակ տարբերակ կարող եմ բերել, որոնք չեն հակասում միջազգային օրենքներին և մարդու իրավունքներին, բայց դրանք հարմար չէ տպագրել այսօրվա ազգային–ազատագրական պայքարի դրոշակակիր թերթում, այլ առավել պատշաճում է ի հաշիվ մեր ազգային շահերի և ԽՍՀՄ–ում արմատական դեմոկրատական վերափոխումների առաջամարտիկ և հայ–թուրքական հարաբերություններում «պահանջատերի կեցվածքից» հրաժարված մեկ այլ թերթի: Նաև հավատացած եմ, որ Ադրբեջանը գիտի խաղաղ հայաթափման երկու տասնյակից ավելի տարբերակ, և պետք չէ գործածել «Արցախը Ադրբեջանի կազմում թողնել» զզվելի ու փարիսեցիական արտահայտությունը՝ հանգստացնելով թե՛ իրենց և թե՛ աստիճանաբար հոգնող ժողովրդի խիղճը, այլ խոստովանել, որ հանուն ԽՍՀՄ–ից անջատվելու և ռուսական կողմնորոշումից հրաժարվելու, մենք պետք է հրաժարվենք և Արցախից՝ այն հանձնելով Ադրբեջանի հաշվեհարդարին: Այսպես մի քիչ ավելի բարոյական կլինի:

Եթե Արցախը ապագա չունի Ադրբեջանի կազմում, իսկ Հայաստանն էլ կզրկվի դարերի ընթացքում պատմա–աշխարհագրորեն ձևավորված իր ողնաշարից, փորձենք տեսնել, թե որքանով է իրական այսօր Արցախի վերամիավորումը Մայր Հայաստանին, և կա՛մ, արդյոք, Արցախի փրկության և հարատևման մեկ այլ տարբերակ, ու որքանո՞վ է այն կիրառելի կամ ինչ գնով կարող է իրականանալ:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 11–ը դեկտեմբերի, թիվ 76

2.

Մակերեսային մոտեցմամբ թվում է, թե խորհրդային պատժիչ մեքենայի թուլացմամբ կմեղմանան տեղի ունեցած բռնությունները, սակայն դեպքերի զարգացումն ապացուցեց, որ Արցախը թե՛ անվտանգության երաշխիքների և թե՛ տնտեսության զարգացման ու կենսապահովման առումով կարող է ապագա ունենալ միայն ուժեղ կենտրոնացված պետությունում, որի վերստեղծման ներկա փորձերն էլ կարող են դառնալ նրա փրկության վերջին հնարավորությունը:

Մինչև օգոստոսյան ճգնաժամը, երբ դեռ կար համեմատաբար ուժեղ Միությունը, Արցախում չէին կարող հանդուրժվել մեծածավալ ռազմական գործողությունները, որովհետև դրանք կա՛մ կվկայեին կենտրոնական իշխանությունների անօգնականությունը, կա՛մ էլ կհաստատեին հարցի սրման նրա շահագրգռվածությունը: Երկրամասում ընթանում էր «ներքին» պատերազմ, որն ադրբեջանական կողմից դրսևորվում էր անասնագողությամբ, դավադիր սպանություններով ու պատանդների առևանգմամբ, հայերին իրենց բնակավայրերը թողնել պարտադրող հոգեբանական ահաբեկչությամբ:

Ճիշտ է, հիմա զորքը գրեթե չի միջամտում, սակայն հենց այս պատճառով էլ դրությունը ավելի ու ավելի մտահոգիչ է դառնում: Ներքին այդ պատերազմը, երբ փոխադարձ հրաձգությամբ զինված ընդհարումներ էին տեղի ունենում օմոնականների և հայկական ուժերի միջև, աստիճանաբար փոխարինվում է դիրքային հեռահար հրետակոծությամբ: Եթե մինչ այս պատերազմը Մանաշիդ մտնելու համար հարևան Թոդան և Կուշչի–Արմավիր գյուղերից մի քանի դիրքեր պետք է հաղթահարեին ու գրավեին, ապա հիշյալ երկու գյուղերից այժմ հնարավոր է ռմբակոծել Մանաշիդի տները՝ գործնականում անհնար դարձնելով նրա և Էրքեջի վերաբնակեցումը ազատագրումից հետո: Իսկ բազում հարձակումներ կրած Կարաչինարը ավերվում է Շեֆեկից ու Ջեյվայից: Իսկ եթե մինչ հրետակոծությունները Քարինտակ գյուղը կարող էր սպառնալիք լինել

Շուշիի համար, ապա այժմ այն դարձել է թիրախ: Բարձունքում գտնվող Շուշիից հեշտ է հրթիռակոծել նաև Ստեփանակերտը՝ հնարավորություն ունենալով հարվածել շինությունների հիմքերին: Իսկ ներքևում գտնվող հայկական կրակակետերից կարող են վնասվել լոկ Շուշիի շենքերի տանիքներն ու բարձր հարկերը: Դիրքային հրետակոծումների այս պատերազմը աստիճանաբար ամայության մի յուրօրինակ գոտի է ստեղծում ԼՂՀ–ի և Ադրբեջանի միջև՝ ամբողջ սահմանի երկայնքով ավերելով թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական գյուղերը, բնակչությանը ստիպելով լքել տները: Մնում են միայն երկու կողմերի կրակակետերը: Այս պայմաններում միակ ելքը, նայած քաղաքական իրադարձությունների հետագա զարգացմանը, խորհրդային կամ միջազգային զսպիչ ուժերի ներկայությունն է, առանց որի չի կարող ապահովվել և ԼՂՀ–ի կենսագործունեությունը: Մինչ այժմ այն իրականացվում էր զինվորականների կողմից, որոնք տեղ էին հասցնում անհրաժեշտ վառելիքը, հումքը և սննդամթերքը: Այժմ, քանի որ զորքը չի կարող ազատ տեղաշարժվել անկախացող հանրապետությունների տարածքով, դժվարանում է և բեռնափոխադրումը: Արցախցին որքան էլ զենքը ձեռքին հերթապահի ու դիմանա կյանքի դժվարություններին, եթե չապահովվի վառելքի և հումքի մատակարարումը, ծավալվող գործազրկությունը ժողովրդի մի ստվար մասին կպարտադրի թողնել հարազատ երկրամասը: Այսինքն՝ եթե չգան զսպիչ ուժերը, շարունակվող ավերներն ու տնտեսության կազմալուծումը աստիճանաբար Արցախը հայրենիքից կվերածեն լոկ Ադրբեջանի համար անմատչելի ու աննվաճ մի տարածքի: Այսինքն՝ հայկական ուժերով կարելի է Արցախը պահել, բայց հնարավոր չէ կանգնեցնել այնտեղ սկզբնավորված և տարածվող ներքին քայքայումը:

Զորքերի ներկայությունն անհրաժեշտ է նաև հոգեբանական առումով: Այսօր Արցախում ընկճվածությունը ավելի է, քան տեղահանության ալիքի օրերին, չնայած գյուղերի մեծ մասը հետ են գրավվել: Այն ժամանակ, որքան էլ Մոսկվան հարվածում էր նրան, այնուամենայնիվ, վստահ էին, որ Կենտրոնն ինչքան էլ ձգի օղակը,

միևնույն է, չի խեղդի, իսկ վաղը կարող է վերջ տալ հակահայ պահվածքին: Իսկ Կենտրոնի աստիճանական վերացմամբ Արցախը որքան հանձնվի Բաքվի տնօրինությանը, այնքան կնվազի հարցի լուծման գոնե միջանկյալ տարբերակը, և չի մնա ապագայի և ոչ մի հեռանկար: Այսինքն՝ վատ Կենտրոնն իր հաստատած զինվորական իշխանությամբ անհամեմատ նախընտրելի է Ադրբեջանի կազմում ցանկացած ինքնավարությունից: Փաստորեն, ստեղծվում է արատավոր մի շրջան. Արցախն ապագա չի կարող ունենալ Ադրբեջանի կազմում, Հայաստանն այսօր կարող է պաշտպանել Արցախը, սակայն չի կարող հասնել իրական վերամիավորման, և միաժամանակ առանց Արցախի կվտանգվի ընդհանրապես Հայաստանի ապագան: Արատավոր այս շրջանը ճեղքող միակ հնարավորությունն ու հույսը վերստին Մոսկվա տանող ճանապարհն է:

Իհարկե, կարող է բերվել կիսագրագետ այն փաստարկը, որ վերջին դարերում մենք շատ ենք դիմել Ռուսաստանին և ամեն անգամ պատժվել դրա համար: Այդպես եղավ նաև 1988–ին, սակայն հիշենք, թե ինչ ծաղկում էր ապրում Արցախը Վոլսկու կոմիտեի օրոք, իսկ ինչ վերաբերում է 1990 թ.–ից վիճակի կտրուկ փոխվելուն, Մոսկվա–Բաքու դաշինքից առավել այն հարկավոր է փնտրել մեր սխալ քաղաքականության մեջ, որը տխուր շատ զուգահեռներ ունի դարասկզբի և մասնավորապես դրանցից ամենագլխավորի հետ՝ Բաքվում, Գանձակում և ընդհանրապես Անդրկովկասում ծավալված հայկական ջարդերի հետ: Արտաքին նմանություններից առավել կարևոր ու էական է դրանք ծնող գլխավոր պատճառը՝ հայերն իրենց հեղափոխականությամբ ցնցում էին կայսրության հիմքերը, որի պատճառով էլ կազմակերպվեցին ու հրահրվեցին այդ ջարդերը:

Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման և հայկական դպրոցների փակման դեմ ծավալված՝ մինչ այդ կայսրությունում նմանը չունեցող շարժումը վախեցրեց ցարին, սակայն այդ շարժումը հանդուրժելի էր մինչև այն պահը, երբ հետապնդում էր ազգային խնդիրներ, սակայն երբ դուրս եկավ այդ շրջանակից՝ ներառվելով

Ռուսաստանի ներքաղաքական կյանքում՝ դառնալով համառուսական հեղափոխության կովկասյան ուժը, հայությանը թուլացնելու նպատակով էլ կազմակերպվեցին ջարդերը: Հատկանշական է, որ ընդհարումներն առավել արյունալի տեսք ընդունեցին Արցախում՝ ասես շեշտելով վերջինիս կարևորությունը Հայաստանի համար և զգուշացնելով, թե մեր ազգային գործիչների յուրաքանչյուր սխալի համար վճարելու է արցախահայությունը:

Պատմությունը, դժբախտաբար, կրկնվեց: Մոսկվան հնարավորություն էր ընձեռել ազգային ներքին հարցերով զբաղվելու, միայն թե չհարվածեինք կայսրության ներքին հիմքերին: Արցախում դրության կտրուկ վատացման պատճառը ոչ թե դեկտեմբերի 1-ի որոշումն էր, այլ դրան զուգահեռ խորհրդարանում ներկայացված Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումների ծրագիրը, որի դրույթները սպառնում էին քայքայել խորհրդային կայսրության հիմքերը: Եվ այդ պահից համազգային շարժումը, դուրս գալով ազգային ոլորտից, ընկավ Մոսկվայում Արցախի ճակատագիրը տնօրինողների համար խորապես ատելի համամիութենական դեմոկրատական շարժման շրջանակները, իսկ հետո էլ պետական մակարդակում շարունակվեց առճակատման քաղաքականության ձևով, որն իր տրամաբանական ավարտին հանգեց Արցախի աշխարհաքաղաքական երկու կետերի՝ Գետաշենի ու Բերդաձորի անկմամբ:

Որքան էլ ԽՍՀՄ-ը լուծարվի, միևնույն է, երկար ժամանակ Կենտրոնի կամ նրան փոխարինող մեկ այլ ուժի դիրքորոշումն է ճակատագրական լինելու մեզ համար: Փլուզվող նախկին պետության փոխարեն, ամենայն հավանականությամբ, կստեղծվի մի նոր միություն կամ կայսրություն (անվանումն էական չէ), որի հիմքում նախկին իրավահավասարների դաշինքի փոխարեն ընկած կլինի համասլավոնականության և ռուսական մեծապետականության գաղափարը:

Այս իրողությունը մեզ վախեցնելու փոխարեն պետք է հուսադրի, որովհետև Ռուսաստանի հեռահար ստրատեգիական ծրագրերում

Կովկասը կվերգտնի իր նախկին կարևորությունը, և ընդհանրապես Կովկասը նա հեշտորեն դուրս չի թողնի իր ազդեցության ոլորտից: Այն արտահայտվում է անգամ պատմամշակութաբանական դրսևորումներով, որի վկայություններից է Կովկասին մերձ Ստավրոպոլում և հարևան երկրամասերում կազակային միավորումների կազմակերպումը, նրանց հավատարմության երդումները ավանդական արժեքներին և հասկացություններին, իսկ կազակությունը Կովկասը պահող հարվածային ուժն էր, և այս մասին էլ է հիշվում նրանց երթերում ու հավաքներում:

Հայ-ադրբեջանական բանակցություններում էլ Ռուսաստանը ոչ թե միջնորդ, այլ շահագրգռված կողմ է: Արցախը երբեք չի կարող լինել լոկ երկու հանրապետությունների ներքին քննարկման առարկան, եթե նրանք անգամ անկեղծորեն ցանկանան էլ: Ռուսաստանը միշտ էլ կարող է բանակցություններին հաղորդել իրեն ցանկալի ուղղությունը՝ երկու հանրապետությունների միջև քննարկումից այն վերածելով հայ-ռուսականի ու ադրբեջանա-ռուսականի, և կողմերից ով պնդի, թե Արցախի հարցը մեր՝ հարևաններիս ներքին գործն է, Ռուսաստանը չարաչար կպատժի նրան՝ իր այլազան լծակների գործադրմամբ օգնելով մյուս կողմին:

Մինչ իր քաղաքականության կտրուկ փոփոխումը Ադրբեջանը «քամեց» խորհրդային համակարգի ողջ հնարավորությունները, Արցախի դեմ օգտագործեց խորհրդային բանակի ռազմական հզորությունը և նոր միայն կապերն սկսեց խզել նախկին դարձող Միության հետ: Այդ խզումը նա արագացրեց, որովհետև ունի Թուրքիայի նման բնական դաշնակից, որի հետ քայլ առ քայլ ուժեղացնում է տնտեսական, կրթական ու մշակութային կապերը, իսկ հեռուստատեսային եթերն էլ պարզապես լցված է Թուրքիայով: Այս պայմաններում նա, իհարկե, կարող է չմտնել նոր կազմավորվելիք միության մեջ, իսկ Հայաստանը: Անկախ աշխարհագրական դիրքի ու տնտեսական նպատակահարմարության շուրջ ընթացող անվերջանալի վեճերից, միևնույն է, ծառանալու է կարևորագույնը՝ Արցախի

հարցը՝ ճակատագրական երկընտրանքի առջև կանգնեցնելով Հայաստանին:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, թե ռուսները, միևնույն է, հեռանալու են Կովկասից, ավելի շատ ենթադրություն է՝ հիմնված մի քանի խաբուսիկ հայտարարությունների վրա: Բայց եթե անգամ ռուսները հեռանում էլ են Կովկասից, այդ հեռանալուց առավել էական է, թե ինչպես և ինչ դիրքորոշմամբ են հեռանում: 1917 թ. նրանք հեռանալով մեզ թողեցին իրենց բոլոր զինապահեստները, իսկ 1918–20 թթ., երբ Մոսկվան կտրված էր անգամ բուն ռուսական շատ նահանգներից, նա դարձյալ կարողանում էր Կովկասում վարել ակտիվ քաղաքականություն և անդրկովկասյան երեք հանրապետությունների ու Թուրքիայի հանդեպ իր դիրքորոշմամբ մեծապես ազդում դեպքերի ընթացքի վրա, որը, դժբախտաբար, ճակատագրական եղավ մեզ համար:

Նույն վիճակն է նաև այսօր: Ջորքը կարող է հեռանալ այնպես, որ նույնիսկ առանց իր միջամտության հետ գրավվի Բերդաձորը, կամ էլ այնպես, որ տեղահանվի Շահումյանը:

Մենք շարունակ պետք է հիշենք, որ Ադրբեջանն ունի իր բնական դաշնակիցը՝ Թուրքիան, և նրանք երկուսով պարզապես կճզմեն Արցախը, եթե մենք չապավինենք Ռուսաստանին: Արցախի փրկության այլ ելք չկա ու չի կարող լինել:

Իհարկե, կարող է ստեղծվել այնպիսի տարբերակ, երբ Հայաստանը, եթե ցանկանա էլ մտնել նոր ստեղծվելիք միության մեջ, չկարողանա՝ Ռուսաստանից կտրված լինելու պատճառով: Բայց դա ապագայի խնդիր է: Քաղաքական բոլոր ճգնաժամերից բազմաձև գունավորումներով միշտ էլ օգտվել է Ադրբեջանը: Հիմա մեզ բարենպաստ հնարավորություն է տրված քաղաքական նոր իրավիճակից օգտվելու և Արցախի ամրացմանը նպատակամիտված կարևորագույն ընթացիկ հարցեր լուծելու, և մենք իրավունք չունենք կորցնելու թանկ ժամանակը: Հարկավոր է հստակություն. Արցախը զոհում ենք Բաքվի ու Անկարայի կողմից ճանաչվելու համար, թե՞ հանուն Արցախի միանալու ենք նոր ստեղծվելիք միությանը: Երկրորդ տարբերակի ընտրության դեպքում Հայաստանը պետք է շուտափույթ ճանաչի ԼՂ Հանրապետությունը՝ միայն այս տարբերակով հրաժարվելով իր համար անմարսելի դարձած դեկտեմբերի 1-ից, ԼՂՀ-ն էլ, հիմք ընդունելով 1813 թ. Ռուսաստանին միանալու դաշնագիրը, իրեն հռչակի կամ Ռուսաստանի կազմում և կամ էլ մտնի նոր կազմվելիք միության մեջ:

Պետք է կատարել ճակատագրական ընտրությունը. կամ հանուն շուտափույթ անկախության դուրս թռչել խորհրդային քայքայված կայսրության գնացքից, կամ էլ հանուն Արցախի փրկության, որը Հայաստանի իրական անկախության և ապագայի միակ երաշխիքն է, հնարավորին չափ կառչած մնալ կայսրության այդ գնացքն առաջ տանող ռուսական լոկոմոտիվից:

ԵՐԿԻՐ, 1991 թ., 12-ը դեկտեմբերի, թիվ 77

ԵՐԱՍԽԱՎԱՆԻՑ ԵՌԱԲԼՈՒՐ

Երասխավանի մարտն այսօրվա Հայաստանի մանրակերտն էր: Այն խորհրդանշեց, թե ավարտվում է Արցախյան շարժման քաղաքական փուլը, և սկսվում ազգային ինքնապաշտպանության շրջանը: Հարատև Կռվի շրջանը, որն իրենում ներառելու է մեր ժողովրդի զինական, մտավոր, բարոյական ու տնտեսական ողջ կարողունակությունը, և այդ կռվի խորհրդանիշը դարձավ Երասխավանում ընկած Մովսես Գորգիսյանը:

Մովսեսի համար անկախությունը քաղաքական ծրագիր լինելուց առավել հոգևոր լինելություն էր, ազգային ապրեցնող գաղափար: Երկյուղածություն ուներ Անկախություն բառի հանդեպ: Շատերս այն ժամանակ չէինք հավատում կամ վախենում էինք անգամ այն մտքից, թե մեր հայրենիքը կարող է մի օր անկախ լինել: Ինքը հավատաց ու չվախեցավ ու դրա համար էլ վճարեց իր կյանքով:

Անհունորեն հավատում էր խոսքի ուժին և անգամ ինքնահրատ մամուլով ձգտում էր ազդել ժողովրդի գիտակցության վրա: Մահվանից ոչ շատ առաջ էր, երբ թերթերի ու ամսագրերի տպարանում տեսնելով տպագրական մեքենաների հզորությունն ու դրանք համեմատելով ինքնահրատի հետ, հիացած բացականչեց. «Տվե՛ք ինձ տպագրական մի մեքենա, և ես ձեզ կտամ Անկախ Հայաստան»: Այն ժամանակ դեռևս չէր վարկաբեկվել խոսքը, դեռ վառ էին ազգային գաղափարները, մամուլը հանուն ժողովրդավարության դեռ կուսակցական տրոհումների չէր ենթարկվել, ու ինքը հավատում էր, թե ճշմարիտ մամուլն իր բերած խոսքով կարող է դառնալ բազմացվող հաց ու մանանա անապատից դեռևս անկախության ափը չհասած ժողովրդի համար:

Ինչպես Մովսես նահապետը չհասցրեց անցնել վերջին այն լեռնաշղթան, որից այն կողմ վերջանում էր անապատը և սկսվում

Ավետյաց երկիրը, այնպես էլ ինքը չհասցրեց տեսնել իր երազած Հայաստանը:

Ու միայն Մովսեսը չէր:

Երասխավանը արձագանքվելու էր մեր հայրենիքի սահմանների ողջ երկայնքով՝ առավել դաժանորեն հնչելով Արցախում, և Ծիծեռնակաբերդի բարձունքի դիմաց վեր էր հառնելու Եռաբլուրի բարձունքը և դանդաղորեն ընդարձակվելու ցավից տնքացող հողում, որն իրենում էր առնում բերվող տղաներին: Այն տղաներին, ովքեր զենքով պաշտպանեցին մեր իրավունքը և իրենց արյամբ վճարեցին շարժման սխալների համար: Եթե տպագրական սխալներն ուղղվում են թանաքով, ապա մեր քաղաքական սխալները սրբագրվեցին այս տղաների արյամբ: Չլինեին այդ սխալները, այսօր անհամեմատ փոքր կլիներ Եռաբլրի այդ հատվածը, ու փոխարենը կլինեին այդ տղաները՝ մեր ժողովրդի ազգային արժանապատվության ու բարոյականության սերուցքը:

Զարմանալի տղաներ էին նրանք, բայց առավել զարմանալին նրանց ծնունդն էր առօրյա նյութականությունից լլկվող այս կյանքում:

Խաչիկ Դաշտենցը անցյալ դարի ֆիդայական շարժման հերոսների մասին ասում է, թե նրանք «իրենց սրտի մեջ «չաթալ օսկոր» և «չորս պլոճիկ» ունեցող» սերունդ էին, և թե՝ «Այդպիսի սերունդ եղավ, այդպիսի սերունդ դժվար թե կրկնվի»:

Բայց երբ ազգը համախումբ մի կամք ու մի բռունցք դարձավ և զգացվեց այդ սերնդի կարիքը, ծնվեց այդ սերունդը ու իր մեծ նախորդների ճանապարհով գնաց դեպի Երկիր:

Նրանք հեռու էին քաղաքական վեճերից ու կրքերից, սահմաններում իրենց գործն էին անում, որ այստեղ կյանքը շարունակվեր, ու հիմա էլ հեռու այս աշխարհի աղմուկից՝ հավաքվել են Եռաբլուրում: Տարբեր կուսակցությունների զինվորագրվելով նրանք մեկնեցին Երկիր՝ մնալով միշտ զինվորները մեկ գաղափարի՝ Հայ երկրի ինքնապաշտպանության գործի:

Ամեն անգամ Արցախից վերադառնալիս, ինչպես ներքին մի վախով ուղղաթիռից նայում ես ներքևում տարածվող երկրամասին,

կասկածելով, թե արդյոք կհարատևի այն, մի անգամ էլ կհասցնեմ տեսնել, նույն այս մտավախությամբ հրաժեշտ ես տալիս այնտեղ հարազատացած մարտիկներին՝ չիմանալով՝ էլ կհանդիպեմ, թե այստեղ պարզապես կմասնակցես նրանցից էլի մեկի հուղարկավորությանը՝ մտքումդ փորձելով վերականգնել նրա ժպիտը, կեցվածքը, որով դիրք էր մտել այս լեռնալանջին կամ էլ հսկում էր այն գյուղը: Հրաժեշտ տալիս ուզում ես ասել, թե զգույշ եղեք, դուք էլ մի սերունդ էիք, որ հարյուր տարի անց մեր ազգին բնորոշ մի երկունքով ծնվեցիք, ինչ կաք՝ դուք եք մնացել ազգային նկարագրի ու բարոյականության խաթարվող չափանիշների այս տխուր օրերում, երբ մարդկանց մեջ սկսել է բթանալ անգամ ընկնողների հանդեպ կորստի ցավը: Մեր լեռները ձեզնով վերագտան իրենց հպարտությունը, ու ձեր կորստի ցավը ձեր մերձավորներից բացի կարող են հասկանալ մեկ էլ այդ լեռներում եղողները, թե դուք ով էիք, ով եք մնացել և ինչպես եք կանգնած նաև ձեր ընկած ընկերների փոխարեն, երբ արդեն վաղուց ամայի է Ազատության հրապարակը, ու այնտեղ իջած լռությունը խախտվում է միայն նրա շուրջը ծավալված ազատ շուկայական գներով ընթացող առևտրի աղմուկից:

Բայց կանցնի այդ աղմուկը, կվերահիմաստավորվեն այս անցած տարիները, ու նոր կհասկացվի, որ դուք Եռաբլրի ճանապարհին շրջեցիք հայոց պատմության ընթացքը, վերջ տվեցիք խաղաղ նահանջի այն ընթացքին, որով դատարկվեց Նախիջևանը, պատմական Արցախի մի զգալի մասը՝ օղակն աննկատելիորեն սեղմելով Երևանի շուրջը:

Տարբեր տարիների էին նրանք ծնվել, բայց նրանց գրթե բոլորի կյանքը ավարտվում է ճակատագրական ու բեկումնային 1991 թվականով: Գետաշենյան ողբերգությամբ սկսված տեղահանության ալիքով և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների ավերումով ասես այն մեր ժողովրդի՝ վիհը ընկնելու տարին էր, բայց ինչպես խոր հորի միջից Դավիթը գոչեց՝ կենդանի եմ, այնպես էլ այս տղաները իրենց կյանքի գնով մեր ժողովրդին հնարավորություն տվեցին ազդարարելու իր նորոգվող կենդանությունը Հայոց զույգ պետականությունների ծնունդով:

Մովսեսի ժամանակ այդ ծնունդը դեռևս տեսիլ էր իր ու իր նման սակավաթիվ հավատավորների համար: Տղաների մի մասը ընկավ այդ տեսիլը մարմնավորելու ճանապարհին, իսկ անցյալ տարվա դեկտեմբերից Եռաբլուր են բերում մարմնավորված տեսիլի պաշտպաններին:

Խաղաղություն ձեզ ու համբերություն մեզ, որ արժանի լինենք ձեզ:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1992 թ., 24-ը հունվարի, թիվ 2

ՄԵՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԸ

> Ինչ է անզեն ժողովուրդը ժամանակակից աշխարհում՝ մի ողբալի փալաս, մի անճար ու զզվելի խամաճիկ, որին բռնավորները դրսից կամ ներսից կարող են միշտ թելադրել իրենց անսանձ քմահաճույքը:
>
> *ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱՆԴՅԱՆ, 1919 Թ.*

Մենք սիրում ենք շարունակ խոսել անիրականանալի խնդիրների մասին՝ ասես խուսափելով զբաղվելու ամենօրյա տքնաջան աշխատանքով: Այս տխուր իրողության արտացոլումն ենք գտնում նաև բանակի ու զորակոչի մասին վերջերս հաճախ հնչող կոչերում: Նայած Արցախից եկող լուրերի բնույթին՝ խեղդող ցավով կամ էլ էլեկտրականացող ոգևորությամբ բացականչում ենք, թե հարկավոր է անհապաղ ստեղծել ազգային բանակ ու անցկացնել համընդհանուր զորահավաք՝ զենքի կոչելով թե՛ մեծի և թե՛ փոքրի: Մարում է սակայն հերթական բռնկումը, և մինչ նոր ոգևորությունը, ազգային բանակն ու համընդհանուր զորակոչը, համալրելով անիրականանալի խնդիրների շարքը, վերածվում են հանրահավաքների ու փողոցային երթերի կարգախոսների, իսկ իրագործել նվազագույն խնդիրը՝ զորակոչը խորհրդային բանակ, որի հիմքի վրա են խարսխվելու վաղվա ազգային զորամիավորումները, տեղի չի ունենում: Իսկ այդ ընթացքում ադրբեջանականացող չորրորդ բանակի ուժերով մեր հայրենիքի սահմաններն են շրջապատվում:

Եթե անգամ մեզ հանձնվի մեր տարածքում գտնվող մարտական ողջ տեխնիկան, միևնույն է, դարձյալ ազգային բանակ չի ստեղծվի, որովհետև կրակել որևէ զինատեսակից, դեռևս չի նշանակում կարողանալ այդ զենքով կռվել: Այսօր տեխնիկային տիրապետող ու տակտիկական տեղաշարժերի ունակ ուժեր կարելի է ստեղծել միայն զորամասերում:

Ադրբեջանում հարյուր և ավելի տոկոսով իրականացած զորակոչի նպատակը ոչ միայն տեխնիկային տիրելն էր, այլև կադրային զինվորականների միջոցով այդ տեխնիկային տիրապետել սովորելը: Արցախում մարտական գործողությունների ընթացքը վկայում է, որ այդ ծրագիրը հետևողականորեն իրագործվում է: Բանակային ծառայությունը աստիճանաբար վարժեցնում է օմօնականներին, և նրանք արդեն կարողանում են մի քանի կիլոմետրից ուղիղ նշանառությամբ հրետանակոծել հայկական բնակավայրերը: Արցախում պարբերաբար լինողները կվկայեն, թե ինչպես գյուղերի շրջակա հանդերում և լեռնալանջերին աննպատակ պայթող արկերն աստիճանաբար ուղղում են իրենց ընթացքը՝ հարվածելով գյուղերին: Նույն ձևով էլ տիրապետում են և զրահամեքենաներ վարելու արվեստին: Երբ նոր էին սկսվել ծանր տեխնիկայով առաջին հարձակումները, իրար կողքի առաջ շարժվող մի քանի զրահամեքենաներից իսկույն առանձնանում էին նրանք, որոնց մեջ վարձու բերված զինվորներ էին: Այդ մեքենաներն ասես վերածվում էին սփռվող մահվան խորհրդանիշի, իսկ ադրբեջանցիների վարածները ավելի շատ թողնում էին մեծածավալ մետաղե ջարդոնի տպավորություն: Հիմա մարտի ընթացքում նրանց «ձեռագիրն» էլ աստիճանաբար նմանվում է բանակայինի, թեև տարբերությունը դեռևս զգացվում է, իսկ «Ոչ մի զինվոր զավթիչ բանակին» երևանյան կարգախոսների պատճառով այս ուժին, առանց համարժեք տեխնիկական հագեցվածության, շարունակում են ջոկատային ինքնազոհ նվիրումով դիմագրավել մեր ազատամարտիկները:

Զորակոչի պարբերական տապալմամբ մենք հարուցեցինք բանակային ղեկավարության թշնամանքը, մեծապես զրկվեցինք զենք ու զինամթերք ձեռք բերելուց, անհրաժեշտ մարտական պատրաստականությունից: Իսկ ինչ ստացանք արդյունքում. զորանոցների փոխարեն սեղանիկների շուրջ ռիմակային հոգեբանությամբ խռնված պատանիներ և ուրիշ ոչինչ:

Սրա ռազմագիտական ու ազգային–բարոյական ողջ ավերը հասկանալու համար վերստին դիմենք Արցախին, ուր կազմավորվող ազգային բանակը ոչ միայն պաշտպանում է նորաստեղծ հան-

բապետության սահմանները, այլև կատարում ներքին բարոյակարգավորիչ դեր՝ նորոգում ռմբակոծությունից ավերված ճանապարհները, ջուր և վառելափայտ հասցնում կենսապահովման անհրաժեշտ օղակներին, զբաղվում համանման այլ աշխատանքներով՝ վկայելով, թե ազգային–ազատագրական պայքար մղող փոքր ժողովրդի կեցության ձևը ազատ ձեռներեցությունը չէ, այլ ազգային գաղափարախոսությամբ կենտրոնացված արտադրությունը, ուր աշխատում են ոչ թե ըստ շուկայական պահանջարկի, այլ ազգային պահանջի:

Արցախցիներն, ինչպես իրենք են ասում, ազգային բովանդակություն են հաղորդել անգամ «Բանակն ու ժողովուրդը միասնական են» ու համանման խորհրդային այլ կարգախոսների: Ի տարբերություն Հայաստանի, ուր հակաբանակային թույնով վարակված շատ ուղեղներ ավերեցին Երկրորդ աշխարհամարտում զոհված իրենց պապերի հուշարձանները, Արցախի շատ գյուղերում այդտեղ են հավատարմության երդում տալիս դիրքեր գնալուց առաջ: Ժողովրդի հոգում ստեղծվում է զինվորի կերպարը, ու Արցախում այսօր կա պաշտամունքը հայ զինվորի: Հպարտանալու չափանիշը նյութական բարեկեցությունը չէ, այլ՝ թե ընտանիքը քանի զինվոր է տվել զորանոցներին:

Արցախն այսօր ունի իր ազգային բանակը, բայց այն ստեղծվեց հարկադրաբար, այլ ընտրություն չունենալուց, քանի որ բացառությամբ Ստեփանակերտի գնդից, այստեղ խորհրդային բանակի այլ զորամասեր չկան: Նաև հիշենք, թե ամիսներ շարունակ Ադրբեջանն ինչ աղմուկ էր բարձրացրել, բացառելու համար այդ գնդի համալրումը հայ զորակոչիկներով՝ պահանջելով անգամ այնտեղ ծառայող հայերին տեղափոխել այլ վայրեր՝ սեփական փորձից գիտենալով, թե այդ զորամասերի ազգայնացումն ինչ վտանգ է ներկայացնում: Ի տարբերություն Արցախի, Հայաստանն ունի այդ հնարավորությունը, սակայն այս բնագավառում ևս մենք կորցնում ենք մեզ տրված այնքան թանկ ժամանակը, որը կարող է սպառվել յուրաքանչյուր պահի՝ ԱՊՀ միացյալ զինված ուժերի քայքայմամբ: Այսօր չօգտվել նախկին Միության դեռևս պահպանվող հնարավորություններից, նշանակում է վաղը դրանք իրականացնել սեփական նյութական միջոցների ծախսմամբ:

Ինչպես անկախության ճանապարհին, եթե մենք անմտորեն առաջ չընկնեինք Խորհրդային Միության քայքայման գործընթացից՝ բազում տառապանքներ պատճառելով Արցախին, միևնույն է՝ տիրանալու էինք մեր երազած անկախությանը, այնպես էլ եթե օրենքի խստագույն կիրառմամբ գարնանային զորակոչը իրականացվի մեր հանրապետությունում տեղաբաշխված ԱՊՀ զորամասերում, ապա վաղը «ռուսների հեռանալու» դեպքում էլ կունենանք որոշակի ռազմական պատրաստվածությամբ ազգային բանակ, իսկ եթե այն փորձենք ստեղծել այդ զորանոցներից դուրս, ապա վաղը, ամենայն հավանականությամբ, կունենանք լոկ շարային պատրաստականությամբ ընթացող հայրենասիրական երգեր կատարողներ, բայց ոչ երբեք սահման պահողներ:

Արցախի նման Հայաստանում ևս զորակոչը պետք է ունենա ոչ միայն ռազմական, այլև բարոյադաստիարակչական նշանակություն, որպեսզի նոր սերունդը ոչ թե ձմռանը մասնագիտանա մոմ ու լամպ, իսկ ամռանը պաղպաղակ վաճառելու մեջ՝ նախանձով արդեն նայելով սեփական սեղանիկներ ունեցող ավագներին, այլ բանակային ծառայությամբ պատասխանատվություն կրի հայրենիքի ու դարերի ընթացքում այն պաշտպանած բոլոր սերունդների առջև:

Ազգային բանակի ստեղծումը պետք է ընթանա իրար զուգահեռ երկու ճանապարհներով. Հայաստանի տարածքում տեղաբաշխված ԱՊՀ զորամասերի համալրում՝ ռազմական արվեստին ու դրանցում եղած տեխնիկային տիրապետելու նպատակով, իսկ սահմանների պաշտպանությունը համապատասխան համակարգի մշակմամբ վստահել հատուկ գնդի վաշտերին և այն ջոկատներին, որոնք այս անցնող տարիների ընթացքում հավաստել են իրենց նվիրվածությունը ինքնապաշտպանության գործին: Վերջիններիս մարտական փորձին վաղը պետք է գումարվեն այսօրվա զորակոչիկների ձեռք բերած գիտելիքները՝ կազմելով ներդաշնակ մի ամբողջություն:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 29–ը փետրվարի, թիվ 37

ԱՐՑԱԽԸ ԾՆԿԻ ՉԻ ԳԱ

Ստեփանակերտն այսօր ոչ միայն Լեռնային Արցախի հանրապետության մայրաքաղաքն է, այլև ռազմաճակատային մի քաղաք՝ մարտական կարգապահությամբ ու լուսաքողարկմամբ, ուր Շուշիին նայող թաղամասերն առաջին գիծ են: Քաղաքն ապրում է ռազմական կարգապահությամբ: Պետական շատ հաստատություններ վերածվում են զորանոցների, ուր տեղի բնակչությունից աստիճանաբար կազմավորվում է Արցախի ազգային բանակը, և այս ամենը՝ կյանքի անասելի ծանր պայմաններում:

Քաղաք հասնող ալյուրի աղքատիկ պաշարներն էլ հատկացվում են միայն զորանոցներին և դիրքերը հերթապահության գնացողներին: Զինվորներից շատերը հավաքում են իրենց հասանելիք հացը և տանում տուն՝ կանանց ու երեխաներին: Հրամանատարները ստիպված պարտադրում են իրենց աչքի առջև ուտել տրված հացը՝ ասելով, թե ուժասպառ զինվորը չի կարող պաշտպանել հայրենիքն ու ընտանիքը:

Մննդամթերքի բացակայությունից առաջ եկած հյուծվածությունն առավել է ծանրացնում շենքերի նկուղներում ցրտին դիմանալը: Նկուղային այս կյանքը սարսափելի է հատկապես երեխաների համար: Ցրտից ու թերսնումից սարսափելի չափեր են ընդունում թոքերի հիվանդություններն ու շնչարգելությունը՝ գետնահարկերի խոնավությունից ու վառարանների ծխից: Շնչարգելության բռնկումները երբեմն սկսվում են ռմբակոծումների պահերին, և ծնողները երեխաներին ճարահատյալ մաքուր օդի են հանում հրետանակոծության ներքո՝ թիկունքով դառնալով դեպի եկող արկերը և իրենց մարմնով ծածկելով փոքրիկներին բեկորների հարվածներից:

Ջուրը նույնպես ձեռք է բերվում անասելի մեծ դժվարությամբ: Քաղաքի ծայրամասերից և անգամ մոտակա գյուղերից ջուրը փոխադրում են ձեռքի ինքնաշեն սայլակներով ու մանկասայլակներով: Աղբյուրներն էլ ունեն իրենց հերթապահությունը: Երբ վերջիններիս ուղղությամբ սկսում են արկերով խփել, ջրի հերթը ցրվում է, սակայն ամեն անգամ, մի քանի հոգի, իրենց կյանքը վտանգելով, շարունակում են լցնել դույլերն ու ամանները, և Ստեփանակերտում գիշեր թե ցերեկ, բառի բուն իմաստով, ջուրը ոչ մի ծորակից իզուր չի հոսում:

Քաղաքը, սակայն, շարունակում է ապրել ներքին կարգ ու կանոնով: Ամեն առավոտ փողոցները և վնասված շինությունների շրջակայքը մաքրվում են: Երեխաները տնից դուրս են գալիս մաքուր, էլեկտրականության բացակայության պատճառով պապենական հին երկաթյա արդուկներով արդուկված շորերով: Մարդիկ նախանձախնդիր են քաղաքի մաքրությանը, պատվին և երբեք չեն բողոքում իրենց վիճակից, այլ մտահոգ հետաքրքրվում են երկրամասի ապագայով: Քաղաքն ապրում է հոգևոր կյանքով: Ստեփանակերտի թատրոնի շենքը, որը նախկինում եկեղեցի է եղել, այժմ հատկացվել է Արցախի թեմին և շուտով օծվելուց հետո կվերաբացի իր դռները, իսկ մինչ այդ շարունակվում են ընդհանրական մկրտությունները:

Ստեփանակերտում այսօր ամեն ինչ հարաբերվում է «ալազանների» հետ և պայմանավորված է նրանցով: Շատ տների մուտքերին «չարը խափանող» երկաթյա պայտեր են խփված: Տներից դուրս նայող պատուհաններին կախում են անգամ Տիրամոր ու Հիսուսի պատկերները՝ մի թույլ հույս ունենալով, թե նրանց զորությունից արկերը կշեղեն իրենց ուղղությունը:

Ռմբակոծություններից պաշտպանվելուց հետո այստեղ երկրորդ մտահոգությունը երեխաների կրթության հարցն է: Եթե Ստեփանակերտում դադարեցված են պարապմունքները, ապա շրջանների ոչ սահմանային գյուղերում դրանք կանոնավոր ընթանում են, իսկ Ասկերանի շրջանի սահմանային գյուղերում և անգամ անմիջականորեն կրակի տակ գտնվող Նախիջևանիկում նկուղային պայ-

մաններում շաբաթը մի քանի անգամ հավաքվում են 6–10–րդ դասարանցիները և ստանում հանձնարարություններ: Տեսնել է պետք, թե ամեն րոպե, երբ դիմացդ մի արկ կարող է պայթել, ինչպես են զանգի ղողանջով հավաքվում դպրոցականները:

Այստեղ առիթ եղավ հանդիպելու օմօնական մի 19–ամյա գերու, որին իր ընկերների հետ բռնել էին Կրկժանի գրոհի ժամանակ և ցանկանում էին փոխանակել: Հարցին, թե ինչպես եղավ, որ Բաքվում ծնված ուսանողը ընկերների հետ գերի ընկավ Ստեփանակերտում, խուսափողական և վախվորած պատասխաններ էր տալիս. պարզվեց, որ ժողովրդական ճակատից են և կողոպուտի ակնկալիքով են եկել Արցախ, բայց ինքնապաշտպանության ուժերի պատասխան գործողություններից հետո վախեցել են, փախել և խրամատում կուչ եկած՝ գերի ընկել:

Անգլիացի մի հեռուստալրագրող էլ իր իմացած կցկտուր ռուսերենով և տեղացիների ու գերու անգլերենի աղքատիկ իմացությամբ էր փորձում հասկանալ, թե դիմացինը ինչո՞ւ է եկել այս հողում կռվելու և հետո էլ այսպես խայտառակորեն հանձնվելու: Լեզվական արգելքը նրան խանգարում էր հաղորդակցվել: Ցավով պետք է նշել, որ այստեղ եկող օտարերկրացիները որևէ վերաբերմունքի չեն արժանանում Հայաստանում: Անգլիացի մեկ այլ լրագրող, որին հանդիպեցի Մարտակերտում, ձեռքի ու դեմքի շարժումներով էր փորձում իմանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները և մոտավորապես նույն ձևով էլ լսում պատասխանները: Երբ սկսեցինք զրուցել, ներքին վիրավորվածությամբ ասաց, թե մի քանի ամիս առաջ իրեն հրավիրել են Բաքու, ապա տարել Արցախին սահմանամերձ շրջանները՝ մի քանի թարգմանիչների ուղեկցությամբ: Իսկ հիմա իր միջոցներով եկել է Երևան, ապա Արցախ հասել առանց որևէ թարգմանչի և ոչինչ չի հասկանում, որևէ հարցի բացատրություն չի լսում, այլ միայն տեսնում է ժողովրդի տառապանքը: Երևանյան մեր նորահայտ պարոնները Արցախյան հարցը միջազգային հանրությանը ներկայացնելու պատրվակով հանրապետության վայրուտային սուղ միջոցների հաշվին շրջագայում են աշխարհում, իսկ միջազգային հասարակական կարծիքը ձևավորողները Բաքվից համապատասխան նենգափոխումներով պատասխաններ ստանալուց հետո առանց որևէ թարգմանչի են շրջում Արցախում...

Ասկերանը, ուր ռազմաճակատային դարձած սահմանային գիծն անցնում է շրջկենտրոնից ընդամենը մի քանի կիլոմետր այն կողմ, ի տարբերություն Ստեփանակերտի, հեռահար հրետանակոծությունից բացի ենթարկվում է նաև անմիջական գրոհների: Խաղողի այգիները վերածվել են խրամատային գծերի ու դիրքերի, Աղդամին դիմահայաց շենքերն էլ՝ պաշտպանական ամրությունների, որոնց շուրջբոլորն ավազե պարկեր են, աղյուսե շարքեր, և դրանց միջից բարձրանում են նկուղներից ելնող ծխնելույզների խողովակները, իսկ տանիքներում տեղադրված են գնդացիրները:

Փետրվարի 1–ի ուժեղ հարձակումից հետո բնակչության մի մասը հեռացել էր շրջակա գյուղերը: Մի քանի օրվա համեմատական խաղաղությունից հետո նրանք հետ էին վերադարձել: Ավանի ղեկավարության ջանքերով փետրվարի 4–ին յուրաքանչյուր բնակչի բաժանվեց 10–ական կիլոգրամ ցորեն: Երեկոյան երկանքով աղացված ցորենից կերակուր էին պատրաստում, երբ վերսկսվեց հակառակորդի գրոհը: Հրետանային նախապատրաստությունից հետո 8 զրահամեքենաների աջակցությամբ թշնամին գրեթե մոտեցավ շրջկենտրոնին, բայց ավելի առաջանալ չկարողացավ և հիշյալ շենքերից տեղացող գնդացրային կրակի ներքո նահանջեց. վառարաններից բարձրացող հացի բույրը խառնվում էր տանիքից իջնող վառոդի ծխին:

Ահա այսպես ամեն օր կյանքի և մահվան մեջ է ապրում ու իր սահմանները պաշտպանում Լեռնային Արցախի հանրապետությունը, ուր յուրաքանչյուր շինություն ու կենսապահովման կետ վերածվում է պաշտպանական ամրության: Դիրքեր են փորված անգամ գյուղերի շրջակայքում գտնվող անասնապահական ֆերմաների շուրջ, որ անակնկալ գրոհով հանկարծ չավերվեն ու չթալանվեն դրանք: Ռազմական ներկա պայմաններում գործում և կենսունակ է միայն արտադրության կենտրոնացված համակարգը, երբ ֆերմաները միս են մատակարարում զորանոցներին և կաթ՝ երեխաներին:

Գործի ավարտից հետո աշխատողներին ջոկատների մարտիկներն իրենց գյուղերն են հասցնում և ապա առավոտյան դարձյալ բերում: Երբ շրջափակմանը գումարվում են ռազմական գործողությունները, կյանքը վերածվում է հավաքական մի հոգսի, իսկ աշխատելն էլ հավասարազոր է մարտական առաջադրանք կատարելուն:

Եթե երկու–երեք տարի է շրջափակման պատճառով չկա համակցված կեր, ապա այժմ էլ, երբ ողջ սահմանի երկայնքով դաշտերը կրակի տակ են, չի բավականացնում անգամ սովորական անասնակերը: Պատահական չէ, որ յուրաքանչյուր հնձվոր մինչ հնձի գնալը գերանդու սրությունից առաջ նախ իր զենքն է ստուգում:

Միևնույն հոգսերով է ապրում և Մարտունու շրջանը: Այն կարելի է անվանել Արցախի հացահատիկի շտեմարանը, ուր գլխավոր խնդիրը ամբարված ցորենը պահելն է ու հնարավորության դեպքում աղալն ու Ստեփանակերտ հասցնելը: Այստեղ վերստին ծառանում է հեղուկ վառելիքի խնդիրը. նախ՝ ալյուրը քաղաք փոխադրելու համար և ապա՝ ցորենը աղալու, որովհետև էլեկտրաղացները գործում են դիզելային շարժիչներով. մեկ տոննա հացահատիկ աղալու համար հարկավոր է 80 լիտր վառելիք, որն այսօր ձեռք բերելը գործնականում գրեթե անհնար է: Մարդիկ ցավով են նայում, թե շարքից դուրս եկած երբեմնի տեղական էլեկտրաղացների կողքով ինչպես են հոսում անցնում լեռնային գետերը, որոնց ափին լուռ կանգնած են վաղուց ավերված ջրաղացները: Դրանց անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, սակայն ներքին մտավախություն կար, թե արդյոք վնաս էլ են ապրելու այս հողում: Թշնամու հետ շպրտվող գրոհները ցրեցին այդ մտավախությունը, և այսօր Սոս գյուղի օրինակով կարգի են բերում և մյուս գյուղերի լքված ջրաղացները:

Փետրվարյան տեղացող ձյան միջից էլ այսօր ուրվագծվում է գարունը: Կիլոմետրեր կտրելով՝ մարդիկ ոտքով գնում են դաշտերը՝ ավարտելու գարնանացանի նախապատրաստական աշխատանքները, ուժեղացնում հերթապահությունը դիրքերում, որ անակնկալ հարձակման չենթարկվեն դաշտերում աշխատողները,

իսկ դաշտային աշխատանքներն էլ, ինչպես միշտ, պատերազմի ծանր տարիների նման վերստին կանանց ուսերին են ծանրացել՝ միայն այն տարբերությամբ, որ նրանց ամուսիններն այսօր կռվում են ոչ թե հեռավոր երկրներում, այլ իրենց հայրենի գյուղերն են պաշտպանում:

Նայած հերթապահության ընթացքին, առավոտյան կամ միասին են դաշտ գնում՝ ամուսինը՝ հրացանով, կինը՝ բահով, կամ էլ առավոտյան դիրքերից վերադարձող ամուսինը հանդիպում է դաշտ գնացող կնոջը:

Այսօր Հայաստանն անում է հնարավորը Արցախի համար, սակայն հարկավոր է նույնիսկ անհնարինն անել, այլապես կարող է փշրվել անգամ արցախյան ամրությունը...

ԵՐԿԻՐ, 1992 թ., 19–ը փետրվարի

ԱՐՑԱԽԻ ԱՐՅՈՒՆՈՏ ԳԱՐՈՒՆԸ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ստեփանակերտի օդակայանը Հայաստանի հետ կապվող օդային կամրջից քաղաքական ելևէջումների պատճառով նախ վերածվեց պարետային իշխանությունների թիրախի, բայց երբ այստեղ հաստատվեց ադրբեջանական օմօնը, վերջինիս վայրագություններն ու ծաղրուծանակը պարտադրեցին, որ մարդիկ երանությամբ հիշեն խորհրդային «զավթիչ բանակին»: Այնուհետև ընդհանրապես արգելվեց հայերի մուտքը այստեղ, իսկ այս ընթացքում էլ Խոջալուն, օձի նման աղյուսաշեն նորակառույց տներով գալար-գալար պատելով օդակայանը, շարժվում էր առաջ՝ օձի կոպեր իր դիրքերով նայելով Ստեփանակերտին, և տեղացող հրետանային կրակով թույն էր թափում քաղաքի վրա:

Հայ ազատամարտիկների անձնազոհ ջանքերով ջախջախվեց այդ գլուխը, և հիմա օդակայանում հերթապահում են միայն Արցախի նորաստեղծ բանակի զինվորները: Վառելիք չլինելու պատճառով մարդիկ քաղաք են հասնում կամ ոտքով, կամ էլ ժամերով ապարդյուն սպասում անցնող պատահական որևէ բեռնատարի: Արցախյան շարժման այս վերջին տարիներից յուրաքանչյուրը իր կնիքն է թողել քաղաք տանող ճանապարհին: Ժամանակային առումով դրանցից առաջինը ճանապարհի տարբեր հատվածների երկայնքով հանդիպող ավազաթմբերն են, որոնց շուրջ հերթապահող զինվորներն իրականացնում էին փոխվող պարետների գրեթե միանման հրամանները: Զինվորների գնալով Արցախը մենակ մնաց իր ճակատագրի ու հարևանների հետ, ու այս թմբերի կողքին փորվեցին Ստեփանակերտը պաշտպանող խրամատներ, որոնք

Խոջալուի գրավմամբ կորցրեցին իրենց պաշտպանական նշանակությունը:

Քանդված ճանապարհի ավարտով սկսվում է ավերված քաղաքը: Նայում ես ու չես հավատում, թե գտնվում ես երբեմնի գեղեցիկ ու շեն Ստեփանակերտում: Հիմա երանությամբ ես հիշում այս տարվա փետրվարը, երբ բավականին տներ ավերվել էին ռմբակոծությունից, սակայն դեռևս զանգվածային չէին գրադից տեղացող հարվածները: Ընդհանրապես այս վերջին տարիներին ամեն անգամ երանությամբ ես մտաբերում նախորդ այցելությունդ ու մի ներքին վախով մտածում, թե հանկարծ այնպես չլինի, որ հաջորդ անգամ էլ երանի տաս այսօրվան:

Եթե տեղացող ռումբերի բեկորները չեն էլ դիպչում շինություններին, ապա միևնույն է՝ նրանց հարվածային ուժից բարձրացած ալիքից փշրվում են ապակիները, ինչը դեռևս չանցած ցրտի պայմաններում հավասարազոր է առանց տան մնալուն: Այդ պատճառով էլ բոլոր շենքերի պատուհաններին շերտ-շերտ մեկուսիչ ժապավեներ են փակցնում, որպեսզի օդային հարվածից ապակիները չփշրվեն կամ էլ կոտրվելուց վայր չթափվեն, այլ, թեկուզ ճաքճքած, մնան տեղերում: Իսկ որտեղ չեն հասցրել այս ժապավեններից փակցնել, հիմա ակնախոռոչներ հիշեցնող պատուհանների շրջանակներն են միայն: Հինգհարկանի մի շենքի առաջին հարկում գտնվող կահույքի խանութից մնացել էին մի քանի կիսապայրված աթոռներ և պահարանի ջարդոտած դուռը: Ապակիների երկաթյա բաց շրջանակներից քամին քշում ու տանում էր կուտակված մոխիրը:

Նախկին ծաղկուն քաղաքից մնացել են միայն ցուցանակները՝ «թեյ», «սուրճ», «համեղ խմորեղեն» ու համանման այլ մակագրություններով: Այստեղ, ուր անգամ խմելու ջուր ունենալը ժամերով հերթերի հետ է կապված, իսկ ընտանիքների մեծ մասը արդեն մոռացել է, թե հաց վերջին անգամ երբ է կերել, նայելով այս ցուցանակներին՝ ակամայից զգում ես սուրճի համը և թեյի տաքությունը, սակայն չես հասցնում մտովի կուլ տալ ցուցանակից քեզ նայող խմորեղենը, երբ պայթող հերթական արկը ցրում է պատրանքներդ

ու հասկանում ես, թե ցուցանակները հիշողությունն են անցած ժամանակների: Զովացուցիչ ջրերի ու պաղպաղակի կրպակների ապակիները, որոնք ձևավորված էին մանուկներին սիրելի հերոսների պատկերներով, այժմ փշրված, ներքև են թափված, ու երբ ոտքով փորձում ես գետնի կտորները իրար կպցնելով վերականգնել, ապակե մի խճանկար է ստացվում, բայց արդեն հերոսների ծռմռված ժպիտներով, ինչպես խաթարված են անգամ ուրախության կարճատև պահերին Արցախի երեխաների ժպիտները, իսկ նրանց հայացքները չսպիացող վերքի նման պետք է դաջվեն համայն հայության սրտին, որից առաջ եկած ցավը շարունակ հիշեցնելու է, թե վտանգված է մեր ժողովրդի մեկ հատվածի ֆիզիկական գոյությունը:

Կարելի է անվերջ շարունակել թվարկումների շարանը, սակայն երբ անցնում է առաջին տպավորության ճնշող ալիքը, զգում ես, որ քաղաքը ավերված է, սակայն մեռյալ չէ, կյանքը շարունակվում է:

Գարունը, ցրելով ձմռան ցուրտը, միաժամանակ նոր հոգսեր բերեց: Ճիշտ է, այժմ ձնհալի ջրերի և տեղացող անձրևների շնորհիվ վարարել են Ստեփանակերտի աղբյուրները, սակայն մոտեցող ամռանը դրանք նվազելով ոչ միայն կենցաղային բարդություններ են առաջացնելու, այլև համաճարակների վտանգ է ստեղծվելու: Այն կանխելու համար այժմ էլ աշխատանքներ են տարվում, և այս ամենը ձեռքով է արվում: Պարզապես ապշել կարելի է, թե այս պատերազմական պայմաններում ինչ հստակությամբ է գործում քաղաքային տնտեսությունը: Շարունակ կրակի ներքո գտնվող շուկայի փոխարեն հիմա դեռևս շարունակվող աղքատիկ առևտուրը ընթանում է քաղաքի տարբեր փողոցներում ու հրապարակներում, և որքան էլ տարօրինակ է, համընդհանուր ավերումի մեջ մարդիկ անգամ ավել են գնում: Այսօր Արցախի և մեր հանրապետության միջև եղած ամենաէական տարբերությունն այն է, որ Հայաստանում յուրաքանչյուր պաշտոնյա փորձում է սեփական ապիկարությունն արդարացնել շրջափակմամբ ու մյուս արտաքին պատճառներով, իսկ Արցախում հնարավոր ամեն ինչ անում են՝ մեղմելու արտաքին պատճառներից ծնվող բարդությունները:

Արցախն այսօր դիմանում է այդպիսի կարգապահության շնորհիվ, և այդ կարգապահությամբ էլ պայմանավորված է իր ստորաբաժանումներն ունեցող բանակի ծնունդը: Հնարավոր խախտումներն ու անօրինականությունները կանխելու նպատակով ստեղծվել է պաշտպանության ուժերին կից զինվորական ավտոտեսչություն: Չնայած նյութատեխնիկական աղքատիկ միջոցներին՝ նորաստեղծ հանրապետության համարանիշներ են տրվում մեքենաներին:

Զինվորներից հետո Արցախը բոլորից շատ զգում է բժիշկների կարիք, և պատահական չէ, որ դեռևս կանգուն պետական հաստատությունների շենքերը կամ զորանոցներ են, կամ էլ հիվանդանոցներ, իսկ վերջիններս էլ հիմնականում վիրահատարաններ են, ուր բերում են արկի բեկորներից կամ էլ գնդակներից վիրավորներին՝ լինեն տնքացող զինվորներ թե ցավից ու սարսափից անզոր կուչ եկած երեխաներ: Նման վիրահատարանի է վերածվել անգամ կուսակցության մարզային կոմիտեի նախկին շենքը: Այն դռների մոտ, ուր նախկինում վախով կանգնում էին որևէ հրահանգչի կամ ավելի «վերևների» հետ հանդիպման սպասողները, հիմա առավոտից մինչև գիշեր խռնված են վիրավորների հարազատները: Նախկին կառավարական մեքենաներին փոխարինել են վիրավորներին տեղ հասցնող մարտական վիլիսներն ու շտապօգնության մեքենաները: Նախկին փայլեցված հատակն էլ այժմ ծածկված է արյան բծերով, ու միջանցքը լցված է դեղորայքի խեղդող ու սուր հոտով:

Հրետակոծությունից ավերվել է երկրորդ հարկը: Միջանցքներում թափված են շուռ եկած անկիզելի պահարանները, իսկ նրանցում պահված որոշումները լցված են տարբեր անկյուններում: Այս երկրորդ հարկում, ուր տարիներ շարունակ մեր ժողովրդի արցախյան հատվածի ազգային ինքնագիտակցությունը ջնջելու նպատակով բազում որոշումներ են ընդունվել՝ որոշումներ ազգային մտածողության դեմ, Դաշնակցության դեմ, ճակատագրի բերումով այժմ գտնվում է Հայ Յեղափոխական Դաշնակցության Արցախի մամլո և տեղեկատվության գրասենյակը: Օրվա բոլոր ժամերին Արցախի տարբեր անկյուններից հասնում են լուրեր տեղի ունեցող

դեպքերի մասին, որպեսզի այնուհետև էլ այստեղից սփռվեն ողջ աշխարհով:

Վերջին տարիներին այս շենքում իրար փոխարինելով կամ իրար գրկախառնվելով բարձրանում էին ԽՍՀՄ-ի ու Ադրբեջանի դրոշները: Արցախում հիմա դրանք պատմություն են դարձել, դեռևս չսպիացած վերքով արյունոտ պատմություն, ու այդ վերքին սպեղանի դառնալ է փորձում հարյուրամյա կուսակցության դրոշը: Շենքի առջևի հրապարակում էլ դեռևս կանգուն է գիպսե առաջնորդը, չնայած նրան շրջապատող բոլոր շենքերը ավերվել կամ վնասվել են: Համաձայն մի հին իմաստության՝ մահը մահին չի հարվածում, ու երևի այդ պատճառով է, որ նրան դեռևս արկի որևէ հարված չի դիպել: Արցախը դեռևս գտնվում է «առաջնորդի» չարաշուք ստվերի ներքո, և այս արձանն ինքն իրեն կփշրի ու գետին կտապալվի միայն այն ժամանակ, երբ ազատության արեգակը վերջնականորեն կփայլի Արցախի երկնակամարում... Իսկ մինչ այդ շարունակվում է պատերազմը: Երկրի ինքնապաշտպանության գործը պարտադրում է ոչ միայն համապատասխան կառուցվածքների ստեղծում, այլև իրենով է պայմանավորում անգամ բարոյական արժեքների ու չափանիշների ձևավորումն ու գնահատումը: Միշտ մեծերին նմանվել ձգտող երեխաներն էլ են ցանկանում զինվորական համազգեստ հագնել, իսկ աղջիկները տիկնիկների փոխարեն հին լաթերով վիրակապություն են խաղում: Մի ծնող, ցանկանալով ուրախացնել երեխային ու մոռացնել տալ առօրյա սարսափները, Երևանում հարազատների նյութական օժանդակությամբ մի կոստյում էր գնել ու բերել, սակայն երբ երեխան այն հագած դուրս էր եկել, աղջիկները սկսել էին ծաղրել, թե էլ ինչ տղա, որ զինվորական չէ, և երեխան, գտնելով գունաքողարկման կանաչ մի մեծ կտոր, խնդրել էր, որ այն կարեն կոստյումի վրա:

Ստեփանակերտից երբ վերադառնում ես Երևան, նոր ես զգում, թե բարոյական արժեքների ու ազգային չափանիշների ինչ ահռելի տարբերություն կա, ու ուզում ես հավատալ, որ ինչպես 1988 թ. Արցախյան շարժմամբ մեր ժողովուրդն արթնացավ ապազգայնացման մահաբեր թմբիրից, այնպես էլ այսօր վերստին Արցախով է վերածնվելու մեր հանրապետությունը, ու սեղանիկային գարշ հոգեբանությամբ մեծացող սերունդը արցախցի իր հասակակիցների նման գիտակցելու է իր պատասխանատվությունը հայրենիքի հանդեպ:

Զարմանալի քաղաք է Ստեփանակերտը: Մի կողմում Շուշիի, Ջանհասանի ու Քյոսալարի դիմաց մի քանի գծերով անցնող պաշտպանական խրամատներն են, իսկ մյուս կողմում, ուր արդեն որևէ վտանգ չեն սպառնում Խոջալուն ու Մալիբեյլին, ձգվում են կանոնավոր մշակված հողակտորները: Կյանքը պարտադրում է, որ մարդիկ մշակեն քաղաքի շրջակայքի հողերը, այլապես հնարավոր չի լինի ապրելը: Բայց քանի որ սերմացու չկա, հիմնականում ցանել են կանաչի ու Ղարաբաղի գլխավոր հարստություններից մեկը՝ լոբի: Իսկ առայժմ ողջ քաղաքը սնվում է միայն կանաչեղենով, ինչպես իրենք են ասում՝ բանջարով, մշակովի կամ դաշտերից հավաքած: Կրկժանի կողմում մարտեր են ընթանում, իսկ այստեղ շրջակա վտակներից ջուր են բերում մարգերը, որովհետև ներքուստ համոզված են, որ թշնամին, այնուամենայնիվ, չի կարող ճեղքել պաշտպանությունը և քաղաք մտնել: Օրավուր աճող ճնշման պայմաններում դժվարը ոչ միայն դիրքերը պահելն է, այլև ամեն օր այդ դիրքերը սննդամթերք ու կռվողներին սնունդ հասցնելը, կրակի տակ գտնվող բաց հատվածներով մի քանի կիլոմետր անցնելը: Վառելիքի բացակայության պատճառով հնարավոր չի լինում անգամ վիրավորներին փոխադրելը, և ստիպված մշտապես հերթապահող բժիշկները վիրահատական շատ գործողություններ կատարում են հենց տեղի խրամատներում:

«Ռոյթր» գործակալության թղթակիցներից մեկը շատ էր ցանկանում տեսնել քաղաքի պաշտպաններին, և երբ Կրկժանի ամենավերին բարձունքներն էինք ելնում, նա զարմանքով էր դիտում, թե ինչպես են կարողանում քաղաքից մինչև դիրքերը չխզվող կապ պահպանել ձիերով ու պարզապես հետիոտն ընթացող մարտիկները: Նրան որքան էլ բացատրեինք, միևնույն է, չէր պատկերացնելու ու ընկալելու, թե ընդամենը մի քանի ամիս առաջ ինչպես ոչնչացվեցին իր անցած ճանապարհին գտնվող թշնամական

կրակակետերը, թե ինչպես ճքճքան սառնամանիքին, երբ ցրտից ոտքերն արյունոտվում էին կոշիկներում, հնարավոր եղավ բահերով փորել ու ամբողջացնել պաշտպանական գիծը ռազմաճակատի աղեղնաձև այս հատվածում, թե այն ժամանակ դեռ սառած էին իր տեսած աղբյուրները, քաղաքից հնարավոր չէր ջուր բերել, ու այս նույն տղաները ջուր խմելու փոխարեն ձյուն էին ուտում, որ այդ պատճառով էլ մինչև հիմա ճաքճքված են նրանց շրթունքները: Պատմում ես այս ամենը, ու ժապավենի նման աչքիդ առջևից անցնում են արդեն անցած օրերը, այն տղաները, որոնցից շատերը արդեն չկան: Խոսակիցդ մեկ զարմանում է, մեկ ցավում է, իսկ ճանապարհը տանում է առաջ:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 15-ը ապրիլի, թիվ 69

2. ՄԱՐՏՈՒՆԻ, ՀԱԴՐՈՒԹ

Հասնելով դիրքերին՝ «Ռոյթրի» թղթակիցն անակնկալի եկավ: Իր տեսած արևմտյան բանակների համաբանությամբ նա երևի կարծում էր, թե կհանդիպի համապատասխան հանդերձանքով ու տեխնիկական հագեցվածությամբ բանակի, բայց դիրքերում տեսավ հնամաշ զինվորական շորերով ու զենքից առավել աննկուն կամք ունեցող, կյանքի պարտադրանքով զենք վերցրած մարդկանց: Երբ բաժանում էինք Երևանից հասցված ծխախոտը, նրանք չէին հավատում, որ իրենց տրվում է մեկ տուփ՝ այն էլ ֆիլտրով: Ուղեկիցս կարծում էր, թե այս ամենը բեմադրվում է, որ ինքը խղճահարություն առաջացնող մի նյութ գրի արևմտյան մամուլում, բայց երբ տեսավ, թե ինչպիսի ագահությամբ սկսեցին ծխել և անգամ մարդիկ ուղարկեցին հարևան դիրքերը՝ յուրաքանչյուրի համար մի քանի հատիկ տանելու, իսկապես հուզվեց:

Դրսից եկողի համար այս ամենը իսկապես հուզիչ է, սակայն մենք պետք է ամաչենք, որ մեր պատմական հայրենիքի այս հատվածի ու Հայաստանի Հանրապետության դարպասի պաշտպանները նման վիճակում են, որ ծխախոտն անգամ խնայվում է նրանց,

ովքեր ամեն օր չեն խնայում իրենց կյանքը: Սա դեռ Ստեփանակերտի շրջակայքում, իսկ շրջաններում վիճակն ավելի վատ է. թղթերում և անգամ լաթի կտորներում փաթաթում են ծխախոտի տերևը և որպեսզի չխեղդվեն ներս քաշվող ծխից՝ ինքնաշեն ծխախոտներին հագցնում են տարբեր տեսակի ստվարաթղթերից պատրաստված ինքնաշեն ֆիլտրեր: Երևանում հայ ազատամարտիկներին ներբողներ հղելու փոխարեն լավ կլինի թեթևացնենք նրանց գոնե այս հոգսը. ծխախոտը մետաղ չէ, որ ծանր լինի փոխադրելը: Ինչևէ, դա մեր խղճի ու բարոյականության գործն է, իսկ Արցախը շարունակում է կռվել ու ապրելու ելքեր որոնել:

Քանի որ միակ սնունդը մնացել է կանաչեղենը, մարդիկ ստիպված փրկություն են որոնում գյուղերում, մշակում լքված տնամերձերը: Ոչ սահմանային գյուղերում շարունակվում են նաև ուսումնական պարապմունքները, և այս հանգամանքն էլ է որոշիչ դեր խաղում քաղաքից տեղափոխվելու գործում, որովհետև այստեղ ոչ մի կերպ չեն հաշտվում այն մտքի հետ, թե երեխաները կարող են առանց դպրոց գնալու մնալ:

Անհրաժեշտ նվազագույն հագուստներն ու իրերը մի քանի կապոցում հավաքած և պատահական բեռնատարներով գյուղից գյուղ անցնելու ակնկալիքով Ստեփանակերտից Գիշի փոխադրվող մի ընտանիքի հետ գնում ենք Մարտունու շրջան: Ճանապարհին Մալիբեյլի գյուղն է: Ընդամենը մի քանի ամիս առաջ այն չարիք էր Ստեփանակերտի և շրջակայքի հայկական գյուղերի համար: Հայ ազատամարտիկների շնորհիվ հիմա խաղաղ է այստեղ: Մշակվում են հողը, խաղողի այգիները: Ամեն օր ոտքով այստեղ հասնում և գյուղական աշխատանքներով են զբաղվում անգամ Ստեփանակերտի շատ բնակիչներ: Ճանապարհին ընկած հաջորդ գյուղը Կրասնին է: Մի քանի ամիս ամայություն է տիրել ֆերմայում, մինչև Մալիբեյլիի ազատագրումը, որտեղից հավաքել ու հետ են բերել գողացված անասունները:

Այս գյուղը ևս հարուստ է հացահատիկով, որը նաև դրամական ամենաբարձր միավորն է Արցախում: Այստեղ ընդհանրապես վաղուց արդեն ոչ խորհրդային, ոչ էլ անգամ արտասահմանյան դրա-

մով առևտուր չեն անում. անցել են ապրանքափոխանակման, և հացահատիկի հետ հարաբերվող մյուս միավորներն են վառելիքը, յուղն ու շաքարը: Երբ հասանք այս ճանապարհի մյուս գյուղը՝ Նն-գին, նկատելի էր մի համընդհանուր տագնապ: Առաջին պահին թվաց, թե հերթական հարձակումն է սկսվել շրջանի վրա: Սակայն պարզվեց, որ այստեղ էլ է արդեն հասել Բալահովտի զինապահեստում տեղի ունեցած պայթյունի լուրը, և իրենց հոգսը թողած՝ արցախցիները ապրում էին Մայր երկրի ցավով: Երեկոյան մի կերպ հասնում ենք Գիշի: Գյուղում ևս մեկ տան դուռ է բացվում՝ Ստեփանակերտում ավերվածի փոխարեն: Հարևանները վառելափայտ են բերում, որ ծխա տարիներով հանգած օջախը: Տնավորված տանտերը պատմում է իր կյանքը՝ տխուր և բնորոշ մի պատմություն: Այս տունը կառուցել է իր պապը: Հայրը փոխադրվել է Ստեփանակերտ, ինքը թողել գնացել է Բաքու, որտեղից տեղահանված եկել է Ստեփանակերտ, ուր ավերվել է հայրական տունը, և հիմա վերադարձել է գյուղ ու չգիտի, թե ինչ է լինելու վաղը: Իսկ մինչ կպարզվի լինելիքը, ապրել է հարկավոր, և հարևանները խորհուրդ են տալիս, թե անմշակ մնացած որ հողամասը կարելի մշակել ու ինչ ցանել:

Դեպի գյուղերը նկատելի հոսք կա ոչ միայն Ստեփանակերտից, այլև շրջկենտրոններից, ինչի շնորհիվ ավելանում են գյուղի դիրքերում հերթապահողների և դաշտերը մշակողների թիվը: Հնուց պահեստավորված վառելիքի շնորհիվ շատ տեղերում գարնանային դաշտային աշխատանքները կատարվել են ոչ միայն տնամերձերում, այլև կոլտնտեսային դաշտերում:

Մարտունին բազմաթիվ տխուր ընդհանրություններ ունի Ստեփանակերտի հետ: Եթե մայրաքաղաքի կյանքը կազմալուծում էր Կրկժանը, ապա այստեղ՝ Խոջավենդը, որը փակել էր նաև շրջկենտրոն տանող ճանապարհը և կրակի տակ էր պահում շրջակա խաղողի այգիներն ու գինու գործարանը: Ստեփանակերտի մի շարք թաղամասերում շենքերի միջև ընկած բաց տարածությունն անցնելիս եթե նայում ես Շուշիի կողմը, թե արդյոք այնտեղից ծխի քուլաներ չեն երևում՝ ազդարարելով հերթական ալազանի «գալուստը», այստեղ էլ նայում ես Ամիրանլարին: Երկու տեղերում էլ բնակ-

չությունն ապրում է նկուղներում: Երկու տեղերում էլ հակառակորդի նպատակը նույնն է՝ հնարավորին չափ շատ ավերել բնակելի շենքերը, որպեսզի եթե զենքի ուժով էլ չհաջողվի հայաթափել Արցախը, ապա խաղաղության հաստատումից հետո էլ ստեղծված անելանելի վիճակում կյանքը անօթևան մնացած մարդկանց պարտադրի բախտ որոնել հայրենի երկրամասից դուրս:

Հադրութում ևս նույն վիճակն է, միայն այն տարբերությամբ, որ այստեղ շրջկենտրոնը հիմնականում գնդակոծվում է դեռևս անցյալ տարվա գարնանը հայկական եղած գյուղերից: 1923 թ. արդեն ձևված սահմանները 1991–ին այնպես վերաձևվեցին, որ մնացած տեղային աշխարհաքաղաքական կետերն էլ անցան հակառակորդի հսկողության ներքո:

Չնայած պարբերական գնդակոծումներին՝ Հադրութում ևս կյանքը շարունակվում է: Վերջերս գործարկվել էր մի ջրաղաց, և այն փրկություն է դարձել շրջակա գյուղերի համար. վառելիք հարկավոր չէ: Առայժմ նրա հզորությունը օրական 400կգ է, սակայն ջրաղացի տերը, ցանկանալով թեթևացնել ժողովրդի հոգսերը, ձգտում է այն հասցնել 800–ի և, օգտագործելով ջրի հզորությունը, սկսել է պատրաստել մի փոքրիկ էլեկտրական, որը հնարավորություն կտա էլեկտրականությամբ ապահովել տեղի հիվանդանոցը:

Մինչ ջրաղացի տերը ոգևորված ցույց էր տալիս իր կատարած աշխատանքը ու պատմում անելիքների մասին, հավաքված գյուղացիներն արդեն աղացված իրենց աղքատիկ ցորենից բուռ–բուռ հավաքեցին, որպեսզի ջրաղացին կից թոնրում բաղարջ պատրաստեն, ինչպես իրենք էին ասում, «հայաստանցի հյուրի» համար:

Նայելով նրանց՝ մտածում ես, թե որքան մեծ ու հյուրընկալ է մեր ժողովրդի սիրտը, որ չի քարանում անգամ այս պայմաններում: Երբ արդեն պատրաստ էր բաղարջը, մինչ այն կիսելը բաժակ բարձրացրին ազգային–ազատագրական այս պայքարում զոհվածների հոգու խաղաղության և վիրավորների ապաքինման համար: Իսկ Հադրութում վերքերը շատ են՝ փլված տներ, տեղահան ժողովուրդ ու նրա գլխավերևում աստիճանաբար մարմնավորվող սովի ուրվական: Ժողովուրդը ճարահատյալ վաճառում է ամենանվիրա-

կան իրերը, անգամ ամուսնական մատանիները, որպեսզի կարողանա մի քանի կիլոգրամ ալյուր գնել երեխաների համար: Այս պայմաններում էլ պետք է դիմագրավեն հակառակորդի օրավուր ահագնացող ճնշմանը:

Հայ մշակույթն ու դպրոցը միշտ էլ կիսել են մեր ժողովրդի ճակատագիրը, և տեղահան դարձած ու դեռևս թշնամու վերահսկողության ներքո գտնվող Բանազուր և Խանձաձոր գյուղերի բնակիչների նման Հադրութի շրջկենտրոնում են հաստատվել նաև նրանց դպրոցները, որոնց գումարվել է և վերջերս ավերված Քոչբեկ գյուղի դպրոցը: Փոքր են դրանք, և կարելի է միացնել ու միջին մեծությամբ դպրոց ունենալ, բայց ժողովուրդը դեռևս չի կորցրել վերադառնալու հույսը, ու առայժմ հայրենի գյուղերից որպես հոգևոր մի ամբողջություն մնացել են այս երեք դպրոցները:

Երբ Հադրութ էինք գնում, ռազմաճակատի Դրախտիկից մինչև շրջկենտրոն ընկած գծում հակառակորդը, հերթական անգամ խախտելով զինադադարը, անցել էր ընդհանուր հարձակման՝ գլխավոր թիրախ ընտրելով Դրախտիկը՝ նպատակ ունենալով վերջինիս գրավմամբ վերահսկել Ստեփանակերտ ու Մարտունի տանող ճանապարհները և Հադրութը կտրել մայրաքաղաքից: Հակառակորդի տեղաշարժը նկատելով՝ առջևում գտնվող հերթապահողները կրակ էին բացել, միացել էին և դիրքերում գտնվողները, ու մարտն արդեն սկսվել էր: Ֆիզուլու կողմից տեսնելով, որ չեն կարողանում կտրել ու վեր բարձրանալ դիրքերը բաժանող ձորակով՝ հետ քաշվեցին ու սկսեցին արկերով խփել դիրքերին: Հետո վերստին առաջ եկան: Ընդհանրապես նրանք այնքան զինամթերք ունեն, որ առանց հրետանային նախապատրաստության և զրահատեխնիկայի մասնակցության ոչ մի գրոհ չեն ձեռնարկում, իսկ ինքնապաշտպանության մեր ուժերը առանց վառելիքի, նայած թե որտեղ է ճնշումն առավել մեծ, այնտեղ են տեղափոխում մեր ունեցած այնքան քիչ ծանր զենքերը:

Արդեն պարզ էր, որ գյուղի պաշտպանությունը ցանկանում են ճեղքել այս կետից, ու մինչ կավարտվեր սկսված հրետանային նախապատրաստությունը, գյուղի պաշտպանները տեղ հասցրեցին

մեծ տրամաչափի գնդացիրը, որից տեղացող կրակը հարձակվողներին վերադարձրեց իրենց դիրքերը: Օգնության եկած տղաների հետ գիշերը հասանք Դրախտիկ: Ջինվորի իրենց գործը այդ օրը նրանք արդեն կատարել էին և հաջորդ օրը դառնալու էին հողագործներ, այսինքն՝ թիկունք, որպեսզի մյուս օրը վերստին ճակատի գիծը պահող դառնան ու սպասեն թիկունքի օգնությանը: Եվ այսպես ամեն օր:

Առավել անհանգիստ էր շրջկենտրոնում, ուր իրենց դիրքերից բացի պատասխանատվություն են կրում նաև ողջ շրջանի համար: Հակառակորդի վերահսկողության ներքո գտնվող Բանազուրից հարձակում էր սպասվում Ցոր գյուղի վրա, և ինքնապաշտպանության ջոկատի մարտիկների հետ մի զրահամեքենայով հասնում ենք գյուղ: Այստեղ ևս մի քանի ժամ տևած փոխհրաձգությունից հետո թշնամին խաղաղվում է: Առավոտյան բացվում է լույսը, ու սրտի ցավով ես նայում ընդամենը երկու տարի առաջ վերածնված այս գյուղին, որը հետո նախ ենթարկվեց տեղահանության ալիքին, ապա կրակի գոտում գտնվելու պատճառով վերստին չբնավորվեց ու հիմա լոկ իբրև դիրք է ծառայում:

Հայկական հինավուրց այս գյուղի դպրոցը, համաձայն ավանդության, արցախյան իր առաքելության ընթացքում հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը, և երբ տարիներով փակ դպրոցը երեք տարի առաջ վերաբացվեց, այն անվանվեց հայոց մեծ ուսուցչապետի անունով: Հիմա վերստին ամայի է այն: Դասարանների նստարանների լքվածության փոշուն գումարվել են և ռմբակոծություններից ներս թափված մետաղյա բեկորները: Նույն վիճակն է ողջ գյուղում:

Բայց հողը գարնանային իր կենդանարար զորությամբ ձգում է մարդկանց, ու գյուղի ներքին կողմում գտնվող դաշտերը սկսել են մշակել հարևան Վանք գյուղում ապաստանած ցորեցիները:

...Ծանր ու ճնշող տպավորություններով վերստին բռնում ենք Ստեփանակերտի ճանապարհը, որտեղից արդեն առաջին լուրերն են գալիս Մարաղայի ողբերգության մասին:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 16-ը ապրիլի, թիվ 70

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

Արցախից վերադառնալուց հետո, երբ աստիճանաբար փորձում ես ձերբազատվել մահվան ու ավերի և գարնան ծաղկած ծառերի ճերմակ համապատկերում առավել կարմիր ցոլացող թափվող արյան շարունակ հալածող պատկերներից, քննական հայացքով իմաստավորել դեպքերի զարգացման ընթացքը և՝ թե վերջինիս որքանով է համարժեք Հայաստանի Հանրապետության արձագանքը, աչքերիդ առջև ակամա ուրվագծվում են առավել ճնշող պատկերներ: Երբ Երևանում արդեն ընթերցում ես անցկացրածդ օրերի մասին հրապարակված հաղորդագրությունները, մեկ անգամ ևս համոզվում ես, որ լրատվությունը անկարող է հաղորդել արցախյան տառապանքը: Մենք թեթևացած շունչ ենք քաշում, երբ լսում ենք, թե անցնող օրը համեմատաբար խաղաղ է եղել՝ գնդակոծումներից զոհեր և ավերածություններ չկան, այնինչ արտաքուստ հանգստություն ներշնչող այս տողերի հետևում էլ մարդկային խտացված տառապանք է, որովհետև առանց զոհերի ու ավերածությունների ընթացած գնդակոծումը նշանակում է, որ մարդիկ էլի մեկ օր նկուղներից են նայել վերևում բացվող երկնքին, տեղացող կրակահերթերի չափով էլ մայրերը բնազդորեն կծկվել ու ծածկել են նորածիններին կամ ձգվել դեպի մի քիչ հեռվում գտնվող երեխաները, կրակոցների ձայնից նկուղներից աղբյուր ջրի ճանապարհին մի քանի մազ ավելի է ճերմակել, և այսպես շարունակ... Իսկ զինադադարի հազվագյուտ օրերին խաղաղությունը վայելելու ժամանակ չկա, որովհետև ոտքով կիլոմետրեր ճանապարհ կտրելով՝ հարկավոր է սայլակով փայտ բերել անտառներից, գյուղերից մի պարկ հացահատիկ փորձել ճարել ու մտածել, թե ինչպես կարելի է այն աղալ, արդեն փլատակ դարձած շինություններից բերված բեկորներով մի

քիչ ավելի «հուսալի» դարձնել նկուղների վերին մասը ու անթվելի մյուս հոգսերով զբաղվել:

Դժվար է ասել՝ անզորությունից, թե շարունակ նույն սրտամաշ լուրերը լսելուց մենք ասես համակերպվել ենք արցախահայության այս վիճակին, այնինչ վերջին տարիների փորձը վկայում է, որ Արցախում երեկվա տեղի ունեցածն այսօր արձագանքվում է Հայաստանում. ինչ հիմա այնտեղ է կատարվում, եթե չկանխվի, վաղն էլ Հայաստանում է կրկնվելու: Պատմությունը ցույց տվեց, որ Հայաստանի վարած քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի արցախահայության շահերի հաշվառումը և տնտեսական զարգացման շրջանակներում ներառվի ԼՂՀ-ն:

Ռազմական բնագավառում էլ նույն կապակցվածությունն է: Գնդացրային առաջին կրակոցները տեղացին Գետաշենի վրա, առաջինը Շահումյանին հարվածեցին չկառավարվող «ՆՈՒՌՍ» կոչվող հրթիռներով, ապա Ստեփանակերտում պայթեցին «Գրադի» արկերը, որի դղրդյունը արձագանքվում է արդեն մեր սահմաններում՝ նկուղները բնակության համար կարգի բերել պարտադրելով սահմանամերձ շրջանների բնակիչներին: Դեպքերի նման զարգացումը ոչ թե հարկադրելու է Արցախը թողնել ճակատագրի քմահաճույքին, որից հետո Ադրբեջանը կրկնապատկված ախորժակով հայացքը հառելու է Զանգեզուրին, այլ ապրել և գործել արցախյան մտասևեռմամբ:

Չորս կողմից շրջապատված Գետաշենը մինչև հնարավոր վերջին սահմանագիծը պայքարեց, որովհետև գիտակցում էր, որ իր անկումը բացելու է Շահումյան տանող ճանապարհը, և շրջանին ժամանակ տվեց ստեղծելու ինքնապաշտպանական իր համակարգը: Այսօր նույն կռիվն է մղում Շահումյանը, որովհետև վերջինիս անկմամբ Գյուլիստան–Կարաչինար գծով՝ Ինջա գետի հոսանքով ու Մարտակերտի անտառներով բացվում է թիկունքից անպաշտպան դարձող Արցախի ճանապարհը, իսկ ողջ Արցախն էլ հավաքական առաջին գծի պատասխանատվություն է զգում Հայաստանի Հանրապետության առջև, և ԼՂՀ-ի հանդեպ նույն պատասխանատվությամբ է ապրելու ոչ միայն մեր հանրապետությունը, այլև

համայն հայությունը՝ Արցախին հասցվող յուրաքանչյուր հարվածին հակազդելով այնպես, ինչպես արտաքին միջավայրից իր որևէ հյուսվածքին հասցված ցավը խեղդել է փորձում համապատասխան ուղղությամբ կծկվող նյարդային համակարգը: Հակառակ պարագայում, եթե մենք համակերպվենք այն մտքին, թե ստեփանակերտցին կարող է ամիսներով հաց չուտել և նկուղներից դուրս չգալ, վաղը նույն վիճակում մենք ենք հայտնվելու, իսկ մի որոշ ժամանակ անց աշխարհում հայի տեղը նկուղն է համարվելու, և անգամ երկնաքերերից դուրս են քշելու յուրաքանչյուր հայի՝ ցույց տալով ներքևում նրան «վերապահված» տեղը, ասելով, թե վերին հարկերը քեզ համար չեն:

Այսօր վիճակն օրհասական է թե՛ ինքնապաշտպանության առումով և թե՛ ապրելու համար նվազագույնի բացակայությամբ: Արցախը ոչ միայն առաջինն ու առավել ցավագնորեն զգաց ԽՍՀՄ-ի փլուզումը և միացյալ զինված ուժերի տրոհումը, ինչը հնարավոր դարձրեց ծանր զինատեսակներով բացահայտ մարտական գործողությունները, այլև ինքը կրեց միասնական տնտեսական համակարգի փլուզման և ռուբլու արժեզրկման ամենածանր հարվածն արդեն նախկին դարձած Միությունում:

Հայաստանում, եթե ոչ գների աճին համարժեք, գոնե որոշ չափով բարձրանում է աշխատավարձը, առայժմ բավականացնում է թեկուզ միայն հացով սնվելու համար, Արցախում ո՛չ հաց կա և ո՛չ էլ աշխատավարձ են ստանում, այնինչ ազատ արձակված գները, բնականաբար, աճում են նաև այնտեղ, իսկ ժողովրդի խնայողությունները վաղուց արդեն սպառվել են: Եթե զրահամեքենաները դրսից են փորձում ճեղքել Արցախի պաշտպանությունը, ապա տնտեսական այս վիճակն էլ ներսից կարող է քանդել նորաստեղծ հանրապետությունը. որքան էլ երեխաների թերսնումը ու մայրերի՝ դրանից առաջ եկող հոգեվիճակը նկարագրվի, միևնույն է, այդ ամենը անպատկերացնելի է անգամ մեր ներկա կացությունում:

Այս պայմաններում բավական ուսանելի է Հայ Յեղափոխական Դաշնակցության որդեգրած գործելակերպը՝ հանգանակությամբ հավաքված դրամը հանձնել Արցախի իշխանություններին, որպես-

զի որպես աշխատավարձ ու կենսաթոշակ բաժանվի ժողովրդին, քանի որ տեղի սոցիալական ապահովության մարմինները ֆինանսավորման համապատասխան միջոցներ չունեն: Նաև հարկավոր է խոստովանել, որ չնայած արվող աշխատանքին, այնուամենայնիվ, առավելագույնս չեն օգտագործվում փոխադրման հնարավորությունները: Այսպես շարունակվելու դեպքում Արցախի համար Երևանում պատասխանատվություն կրողները շուտով կհատեն այն սահմանը, ուր ավարտվում է անփութությունն ու անտարբերությունը, և սկսվում է ազգային դավաճանությունը: Ասելիք շատ կա, պարզապես այդ ամենը մամուլով չէ, որ պետք է ասել:

Նաև ակամա մտածում ես, թե շատ միությունների կազմակերպած հանգանակություններն օգտագործվում են այնպես, ինչպես Հայաստանի համար նախատեսված միջազգային օգնությունը, որը մեր պետական այրերի չգիտես՝ անճարակության, թե գործակցության պատճառով օդակայանից փոխադրվում է սեղանիկների վրա: Եթե չենք ցանկանում, որ Արցախի համար հավաքված դրամը, հագուստեղենն ու սննդամթերքը «ձեռքի հետ» գործածվի նաև այլ նպատակներով, ապա, իմ խորին համոզմամբ, պետական երկու կառույցներից՝ պաշտպանության նախարարությունից և հատուկ ծրագրերի պետական վարչությունից դուրս դրանք հարկավոր է հանձնել բացառապես Հայ Յեղափոխական Դաշնակցությանը:

Մարաղայի ողբերգությունից մի քանի օր անց, երբ վերադարձա Երևան, մտածում էի, թե հարկավոր է սփոփել ամեն հանդիպողի, ասել, որ ինչքան էլ ծանր լինի կորուստը, այնուամենայնիվ, Արցախը դեռ կանգուն է, պայքարը շարունակվում է: Շուտով, սակայն, ցավով համոզվում ես, որ աշխարհից առավել արդեն մեզ համար են սովորական դարձել Արցախից եկող ծանր լուրերը, հայկական կոչվող մեր հեռուստատեսությամբ շարունակվում է առևտրական կրքերի բորբոքումը՝ դրամով գնված շնորհավորանքների ու ապրանքային ծանուցումների միջև ընկած ժամանակահատվածում մի երկու տողով հիշելով Արցախի ու Հայաստանի սահմանամերձ շրջանների մասին, ու հասկանում ես, որ ժողովրդի ողնաշարը ուղիղ պահող լեռներն ու նրանց շուրջը փորված

դիրքերը մնացին հեռվում և արդեն սկսվել է սեղանիկային հանրապետությունը: Չեմ ուզում ասել Հայաստանը, որովհետև այն ավելի մեծ ու նվիրական մի հասկացություն է, և մեր ժողովուրդն էլ ուժ կգտնի մաքրվել իրեն պատող և առավել ևս պարտադրվող վերասերման ալիքից: Իսկ մինչ այդ, ցավոք, զգում ես, որ այսօրվա հոգեբանությամբ ոչ միայն Արցախին չենք կարող թիկունք լինել, այլև անհրաժեշտության դեպքում հազիվ թե կարողանանք ճակատի գիծ դառնալ ճակատագրի քմահաճույքին թողնված սահմանամերձ շրջանների համար:

Երբ դիտում ես Ադրբեջանի հեռուստատեսությունը, սարսռում ես մինչև Ջանգեզուր ձգվող նրանց ախորժակից: Գյուղից գյուղ անցնելիս պատահաբար մարտական գործողություններում հայտնվելով ու մտովի իրար հարաբերելով դիմացից եկող կրակոցները, հակառակորդի զրահատեխնիկայի ու հետևակի տեղաշարժը՝ տեսնում ես, որ Ադրբեջանը արդեն ստեղծել է արագ տեղաշարժերի ունակ մի բանակ, որը օրը մի կետից փորձում է ճեղքել Արցախի պաշտպանական գիծը: Իսկ ինչ է արվում Հայաստանում խորհրդային գեներալների դեմ ուղղված հոխորտանքներից բացի...

Լճացման կոչվող տարիներին, երբ Հայաստանը, լինելով լոկ ԽՍՀՄ-ի մի մասնիկը, հուսալիորեն պաշտպանված էր, կային քաղաքացիական պաշտպանության և ԴՕՍԱԱՖ-ի գործող համակարգերը, որոնք բնակչությանը գոնե տարրական ինչ-որ գիտելիքներ էին հաղորդում, իսկ այժմ, կանգնած լինելով իրական վտանգի առջև, ազատ ձեռներեցություն կոչվող առևտրական քարոզներից բացի ուրիշ ոչինչ չենք լսում, այնինչ այս պայմաններում հեռուստատեսությունը սկսվելու և ավարտվելու էր զորակոչին նվիրված հաղորդումներով: Գոնե Բալահովիտի դեպքը իմաստնացներ, ամեն օր փողոցային երաժշտական ծեքծեքումների փոխարեն մի քանի րոպե հատկացնեին ռազմական և արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու գիտելիքներ հաղորդելուն, սակայն ամեն ինչ հանգեց պայթած արկերի բեկորներ ցույց տալուն և արհամարհանքով այս ու այն կողմ շպրտելուն: Այնինչ Ադրբեջանում արկերը հավաքում են բավական խնամքով ու հետևողականորեն, առանց

Ռուցկոյին և մնացյալին քննադատելու, որովհետև հերոս-հերոս խաղալու փոխարեն ցանկանում են նվաճել Արցախը: Իսկ մեր ազգային ջոջերը հերթական արտասահմանյան շրջագայությունից առաջ այնպիսի «համարձակությամբ» են քննադատում այն քաղաքական գործիչներին, որոնց մասին զգուշությամբ է արտահայտվում անգամ Արևմուտքը...

Ինչի՞ է հանգեցնելու այս անիմաստասեր ընթացքը, ո՞ւմ վրա ենք հույսներս դնելու, ո՞րն է լինելու սրա վերջը: Ասելիք ու մտածելիք շատ կա, իսկ մինչ այդ Արցախը շարունակում է արյունաքամ լինել:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 21-ը ապրիլի, թիվ 73

ԲԱՑՎՈՂ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Ազատությունից ծնված խաղաղությունն է տիրում այժմ Ստեփանակերտի փողոցներում: Շուշիի գրավմամբ քաղաքը խաղաղվեց, սակայն այն ողջ Արցախի հետ միասին տենդագին մի սպասման մեջ էր, քանի որ նորաստեղծ հանրապետությունը ներսից ազատ, իսկ դրսից թշնամական հրե օղակում էր դեռևս: Շուշին էլ չէր որոտում, այլ Ստեփանակերտ էր փոխանցում արդեն իրենից քիչ այն կողմ ընթացող մարտերի արձագանքը, որոնք գնալով ավելի էին հեռանում և մոտենում ճակատագրական այն գծին, որով ժամանակին երկրամասը կտրվեց մայր երկրից: Եթե նախկինում Ստեփանակերտից շրջաններն էիր գնում, յուրաքանչյուր գյուղում հարցնում էին քաղաքի վնասվածությունից, թե աշխարհում և Արցախի հարցից ինչ նորություն կա, ապա հիմա ամենուր մեկ հարց էր՝ դեռ չբացվեց ճանապարհը: Տանջալից հարցը աչքերիդ մեջ էր դրոշմվում դիմացինների հայացքից, երբ գյուղամիջում հավաքված ժողովրդի մոտ իջնում էիր բեռնատարից, գյուղի ճանապարհին հանդիպում դաշտ ու դիրք գնացող հողագործին ու զինվորին: Սերունդների սպասումն ու ընդվզումն էր խտացված տրվող ու չտրվող այդ հարցում, որի «այո»-ն լսելու համար այսքան տառապեց Արցախը:

Սովորաբար բոլորից արագ տարածվում են չստուգված ու անճիշտ լուրերը: Նախկինում, երբ մարդկանց պատում էր հուսահատությունն ու հուսալքությունը, նման լուրերը խուճապ էին տարածում, թե հակառակորդը գրավել է այսինչ բնակավայրը կամ ռազմակետը: Հիմա էլ հակառակն էր: Շարունակ լուրեր էին գալիս, որ առաջին ջոկատները արդեն հասել են Գորիս, ու երբ պարզվում էր, թե դեռևս չի եկել այնքան սպասված այդ պահը, մարդիկ կատակով ասում էին՝ ավելի լավ, թող վաղը լինի, որ էլի ուրախանանք: Ամենահեռավոր գյուղերում անգամ վառելիքի բացակայության պատճառով առաջացած միջգյուղական կտրվածությունն այնքան նկատելի չէր, ինչքան զգալի էր խզվածությունը մայր երկրից:

Շուշիի ազատագրմամբ մի մեծ շառավղով խաղաղություն էր հաստատվել, և առավել հեռավոր ու ապահով գյուղերում ապաստանած ընտանիքները հետ էին վերադառնում իրենց տները, որովհետև անգամ դեռևս երեկ դժոխային կրակի ներքո գտնվող Շոշ ու Դաշուշեն գյուղերը, որ, ի դեպ, առանձնանում են իրենց անկրկնելի գեղեցկությամբ ու բնական հարստությամբ, հիմա դարձել են ամենախաղաղ անկյունները: Վերադարձողների շնչով են լցվում այս երկու գյուղերը: Բացվող դռները ջնջում են տների վրա ծանրացող դատապարտվածության կնիքը, մերկացած մահճակալները վերստին ծածկվում են անկողիններով: Նկուղներից վեր են հանվում պահված կահկարասիները: Երեխաները, բակ դուրս գալով, նախ վախվխելով, ապա ուրախ աղմուկով տարածվում են գյուղում: Շրջակա բնակավայրերի ֆերմաներից բերում են այնտեղ պահ տված անասունները, ու մարդիկ սկսում են, ավելի ճիշտ՝ փորձում են սկսել ապրել բնականոն կյանքով, որքանով դա հնարավոր է կիսավեր գյուղերում, ուր կանայք դեռ սարսափով են հիշում, թե ինչպես փրկվեցին ու փրկեցին երեխաներին, իսկ տղամարդիկ՝ թե ինչպես էին պաշտպանում ու հետ մղում Շուշիից դեպի իրենց դիրքերը իջնող թշնամական զրահատեխնիկայի ու կենդանի ուժի հեղեղը: Փողոցներում ու բակերում թափված արկերի միջուկներն ու բեկորները չեն շտապում հավաքել: Ասես դրանք էլ դարձել են գյուղի պատմության մի մասնիկը: Նրանցով է կազմվում նույնիսկ վերջին ամիսների ժամանակագրությունը: Ցույց տալով բակերում ընկած արկերից որևէ մեկը՝ ասում են, թե նրա պայթյունից այսքան օր առաջ կամ հետո եղավ այսինչ դեպքը:

Մի քանի ճանապարհներ են խաչվում Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի մոտ: Հունվարի սկզբից մինչև վերջերս շարունակական հոսքով այստեղից էին անցնում ավելի ապահով գյուղերում ապաստան որոնողները: Գյուղի եզրին կառուցված «Հանքավան» անունը կրող ճաշարանը վաղուց փակվել է: Երկու քարերի վրա

դրված թիթեղյա ցուցանակը նստարանի տեղ էր ծառայում անցնող որևէ պատահական բեռնատարի սպասողների համար: Այստեղ եթե ընդամենը մեկ ամիս առաջ իրար էին հանդիպում թե՛ Ստեփանակերտից և թե՛ հակառակ կողմից՝ Մարգուշավանից, Մարաղայից, Մարտակերտ շրջկենտրոնից մինչև Թալիշ ընկած սահմանամերձ վայրերի բնակիչները՝ իրար փոխանցելով ճնշիչ լուրերը, ապա այժմ ռազմաճակատի տարբեր հատվածներում թշնամական կրակակետերի վերացումից հետո նրանք, բռնած տունդարձի ուղին, վերստին իրար են հանդիպում՝ միմյանց մաղթելով բարի վերադարձ:

Դրմբոնից ոլորապտույտ ճանապարհը տանում է դեպի Մարտակերտի շրջկենտրոն: Մինչ այնտեղ հասնելը կան երկու ծաղկուն ու շեն գյուղեր՝ Կուսապատն ու Ներքին Հոռաթաղը, որոնց երիզող լեռները չեն թողնում, որ այստեղ որևէ արկ ընկնի, և տեղի ինքնապաշտպանության ջոկատների խնդիրն է՝ ամեն գնով պահպանել ողջ շրջանի վրա իշխող այս բարձունքները, իսկ ներքևում տարածվող տները, որոնք չեն վնասվել կրակից, տնքում են այստեղ ապաստանածների ցավից ու ծանրությունից: Գրեթե յուրաքանչյուր սենյակում մի ընտանիք է ապրում: Բայց միևնույն է, բոլորը չէ, որ ծածկ են կարողացել գտնել այստեղ:

Դարերի ընթացքում, երբ Արցախին սպառնացել են թշնամիները, սովն ու համաճարակները, ժողովուրդը մինչև արհավիրքի անցնելը փրկություն է որոնել անտառներում: Պատմությունը վերստին կրկնվում է, և հրետակոծությունից փրկվելու համար, օգտվելով արդեն տաքացող եղանակից, մարդիկ ապաստանել էին անտառներում գտնվող նախկին պիոներական ճամբարներում, բացատներում վրան խփել, անգամ հողափոր կացարաններ պատրաստել՝ տրորված ճանապարհների վերածելով երեկվա անտառային կածանները: Թեև Մարտակերտի շրջկենտրոնը, համեմատած մյուսների հետ, քիչ է տուժել, սակայն այստեղ մարտական գործողություններն ու հրետակոծությունը ավելի ուշ և անակնկալ էր սկսվել, և հոգեբանորեն դեռևս պատրաստ չէին: Իր ճնշող ազդեցությունն ունեցավ նաև Մարաղայի ողբերգությունը: Իրար կից այս

և Մարգուշավան գյուղերում մեկ անգամ ևս համոզվում ես, թե որքան քիչ բան են ասում մեր ընթերցած մարտական ամենօրյա ամփոփագրերը: Մենք թեթևացած շունչ ենք քաշում՝ լսելով, որ թշնամին հետ է շպրտվել այսինչ բնակավայրից, իսկ թե ինչ է տեղի ունենում մինչև հետ շպրտվելը, լավագույնս արտացոլված է Մարաղայի այրված ու կիսաքանդ տներում, որոնց բնակիչների՝ տասնամյակների աշխատանքն այրվել է մի քանի տանկային համազարկերից և այրվող փամփուշտներով ավտոմատային կրակահերթերից:

Հիմա անհամեմատ ուժեղացվել է գյուղի պաշտպանությունը: Թե՛ Մարաղա և թե՛ Մարգուշավան են վերադարձել մի քանի ընտանիքներ: Հանդիպում են հատուկենտ երեխաներ, որոնք փորձում են խաղալ և աղմկել նախկինի նման, սակայն մի տեսակ անբնական է ստացվում: Ընդհանրապես նկատելի է, որ իրենց բնակավայրերին բոլորից շատ երեխաներն են կարոտում: Ապահովության համար Արցախի ներսում էլ որևէ այլ տեղ փոխադրվելիս նրանք անտարբեր շուրջներն են նայում ու ասես Գիքորի նման իրենց աղբյուրի ջուրն են ցանկանում...

Տարբեր պտղատու ծառերով հարուստ հարթավայրային այս տեղում, ուր մերձարևադարձային բույսեր էլ են աճում, ժամանակին հիմնադրվել է բուսաբանական գիտափորձարարական կայան, ուր ամենազարմանալի ծառատեսակների ես հանդիպում: Այս ծառուղիներով հիմա հոնդալով մարտական տեխնիկան է ընթանում: Գյուղի տարբեր շինություններ վերածվել են զորանոցների, ուր ննջում են հերթապահությունից վերադարձած զինվորները: Անկողիններից մի քանիսը պատված են այստեղ աճող զարմանահրաշ բույսերի ճյուղերով և բացվող ծաղիկներով: Այդ մահճակալներին դեռևս երեք շաբաթ առաջ պառկում էին նրանք, ովքեր չվերադարձան հակառակորդին երկրորդ անգամ գյուղից ետ շպրտելիս...

Շահումյանի ճանապարհին Մարաղային հաջորդող մյուս գյուղը Չայլուն է, որը Արցախյան շարժումից հետո վերանվանվեց Այգեստան, և ուր յուրաքանչյուր տան բակ իսկապես ասես մի այգեստան լինի: Հրետակոծության պատճառով հիմա այստեղ էլ չկա նախկին աշխուժությունը: Ի տարբերություն Մարաղայի, ուր թշնամին երկու

անգամ կարողացել է մտնել, այստեղ անգամ մի քանի կիլոմետր չեն կարողացել մոտենալ գյուղի մատույցներին, սակայն մինչև երեսուն կիլոմետր հարվածող «Գրադ» կայանքից արկերը ավերում են գյուղի բարձրադիր մասը: Հակառակորդը դիրքերից առավել տներին է հարվածում՝ քաջ գիտակցելով՝ որևէ բնակավայրի պաշտպանության կարևորագույն երաշխիքը վերջինիս կենդանությունն է:

Ընդհանրապես արցախյան պատերազմի յուրահատկությունն այն է, որ մարտական գործողություններն ավելի շատ ուղղված են բնակչության ու բնակավայրերի դեմ, որովհետև նպատակը «ծայրահեղականներին պատժելն ու Ադրբեջանի սահմանադրության հաստատումը» չէ, ինչպես իրենք էին ճգնում ներկայացնել, այլ արցախահայության տեղահանությունը: Այս պատճառով էլ ընտրվել է հեռահար հրետակոծության գործելակերպը՝ հնարավորին չափ շատ ավերել, որպեսզի խաղաղության հաստատումից հետո էլ բնակչությունը հարկադրված լինի թողնել երկրամասը: Եթե մեկ տարի առաջ խորհրդային բանակի աջակցությամբ տեղահանելով Շահումյանի շրջանի երեք գյուղերը՝ դրանք իսկույն բնակեցրին ադրբեջանցիներով, ապա այժմ եթե հաջողվում է մտնել որևէ գյուղ, իսկույն այն այրում են՝ քաջ գիտակցելով, որ չեն կարող պահել: Ադրբեջանի քաղաքականությունն է՝ կտոր–կտոր վառել Արցախը: Քանի որ արցախահայությունը ամուր է կառչած իր հողին, բարեբախտաբար, այս գործելակերպն էլ իրենց ակնկալած արդյունքը չի տալիս: Ավելին, այժմ ձեռնարկվող տարբեր կրակակետերի լռեցման գործողությունները նպաստում են մի քանի հատվածներում անվտանգության գոտիների ստեղծմանը:

Այգեստանին հաջորդում է Թալիշը, որը մինչև այս դեպքերը Արցախի ամենահարուստ գյուղերից էր, իսկ հիմա ցորենի արտերը կրակի տակ են: Գյուղն ունի նաև անասնապահական խոշոր համալիր: Կաթի սղության պատճառով գլխաքանակը չեն ցանկանում կրճատել և մի կերպ պահում են:

Թալիշը շարունակ ենթարկվում է թե՛ հրետակոծության, թե՛ զրահատեխնիկայի ու հետևակի հարձակմանը, որովհետև ունի

կրկնակի կարևորություն: Մի կողմից նրանով է ողջ Շահումյանի շրջանը կապվում Արցախին, մյուս կողմից՝ Մարտակերտի թիկունքն է, և ընկնելու դեպքում կքանդվի պաշտպանական ողջ գիծը: Բարեբախտաբար, վստահորեն կարելի է ասել, որ Թալիշն առանձնանում է իր մարտունակությամբ: Այն ունի նաև մի շատ էական առավելություն. դիրքերը փորված են այնտեղ, ուր ավարտվում են գյուղի հանդերը, և այս պատճառով էլ շարունակ բորբոքվող մարտական գործողությունները միշտ ընթանում են հակառակորդի տարածքում, որքան էլ նախահարձակը ինքն է լինում:

Այստեղ ականատես եղանք ժողովրդական հնօրյա մի ծեսի յուրօրինակ նորովի կատարմանը: Համաձայն հնուց եկող հավատալիքի, արյունը ունի նաև ամրացնող շաղախի ուժ: Գյուղի պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով այստեղ էր ուղարկվել ևս մի զրահամեքենա, և երբ այն, մտնելով գյուղ, հանդիսավոր առաջ էր շարժվում ուրախության համընդհանուր աղաղակների ներքո, մի կին ոչխար մորթեց զրահամեքենայի առջև և արյունը ցողեց մեքենայի մետաղյա թրթուրներին: Նա զոհաբերվող կենդանու արյամբ ցանկանում էր ամրացնել շղթան, որ այն երբեք չկտրվի: Այս յուրօրինակ զոհաբերության տպավորության ներքո շարժվում ենք առաջ՝ դեպի Շահումյանի շրջան:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 27-ը մայիսի, թիվ 99

ԱՌԱՋԻՆ ԳԾԻՑ ԱՌԱՋ

Շահումյանը Արցախին է կապվում միայն մեկ ճանապարհով, որը ձգվելով մինչև Ինջա գետը՝ ճյուղավորվում է դեպի շրջանի երկու գյուղերը՝ Կարաչինար և Գյուլիստան: Հիմա այն կրակի տակ է, և վարորդները ստիպված գնում են դժվարանցանելի, բայց ապահով լեռնալանջերով: Ապահով, որովհետև Թալիշից մինչև Կարաչինար ձգվող բոլոր բարձունքները հուսալիորեն պաշտպանված են: Եվ դրանք այնպես են երիզում մնացած տարածությունը, որ դիրքերի շուրջն ընթացող իսկական պատերազմի դեպքում էլ ներքևում հովիվները կարող են հանգիստ արածեցնել իրենց հոտերը, իսկ ժողովուրդը՝ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել:

Այստեղ հնարավոր առավելագույն չափով մոտեցած են ռազմաճակատն ու թիկունքը, որոնք իրարից բաժանվում են պարզապես փորված պաշտպանական գծով: Այս գիծը տանում հասցնում է մինչև իրար միաձուլված Կարաչինար, Գաղթութ և Մանասաշեն գյուղերը, ուր ապրում էր շրջանի բնակչության մոտ կեսը, և որոնք այժմ գրեթե հիմնահատակ ավերվել են հրետանային հարվածներից՝ բնակավայրերից վերածվելով դիրքերի: Այստեղ հիմա բնակիչներ համարյա չկան: Նրանք պատսպարվել են շրջակա գյուղերում և խաղաղության կարճատև պահերին շտապում են հետ՝ տնամերձերը մշակելու: Այստեղ մի ողջ համակարգ է ստեղծվել, թե ինչպես կարելի է բակից բակ անցնել կամ քայլել փողոցով, որպեսզի հնարավոր լինի խուսափել եկող արկից: Կյանքի պարտադրանքով ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության կարաչինարյան յուրօրինակ տարբերակը: Երբ հասանք գյուղ, իսկույն զգացինք վերջինիս ոչ բնորոշ աշխուժություն: Միանգամից ասես չքացել էր զգուշությունն ու վախվորածությունը: Եթե չլիներ տիրող համեմատական խաղաղությունը, որն ընդմիջարկվում էր պարզապես գիշերային սովորական փոխհրաձգությամբ, կարելի էր կարծել, թե հարձակում է սկսվել, և բնակչությունը պատրաստվում է փախուստի, բայց աղմուկն այլ էր, կենարար ու արբեցնող: Պարզվեց, որ միանգամից մի քանի տներում ռադիոյով արդեն լսել էին ճանապարհի բացվելու մասին: Անբացատրելի ու անպատմելի զգացում էր պատել բոլորին: Արցախի երբեմնի ամենաածաղկուն ու շեն գյուղերից մեկում, ուր այժմ յուրաքանչյուր քարե շարվածք և թիթեղյա դարպաս փորված ու ծակծկված է բեկորներով, որոնք անհաշվելի են ու անչափելի, ինչպես վերջին տարիներին կրած մեր կորուստները, իմանում ես Միացման մասին: Այն միացման, որը որոնեցինք աշխարհի բոլոր մայրաքաղաքներում ու համաժողովներում, բայց որը, պարզվեց, մեզ են պարգևելու հայ զինվորները: Մի միացում, որը քաղաքական որոշում չէր, այլ ռազմաճակատի ողջ երկայնքով փորված դիրքեր, որոնք ձգվելով հասան Գորիս ու կապվեցին Մայր Երկրին:

Մի կողմ թողնելով կարաչինարյան քաղպաշտպանության բոլոր կանոնները՝ ելնում ենք բարձրադիր մի վայր՝ նայելու Հայաստանին միացած Արցախին: Հանկարծ բոլորը միանգամից հիշում են, թե ութսունութին իրենցից յուրաքանչյուրն ինչպես էր ծրագրել նշել այս օրը և ինչ սեղան էր գցելու, իսկ հիմա ո՛չ սեղան կա և ո՛չ էլ գցելիք, բայց իրականացել էր միացումը, ու չէր կարելի այն չնշել: Քանի որ նախկինի նման էլ որևէ մեկը ի վիճակի չէր հյուրասիրել բոլորին, մարդիկ մի պահ ցրվում են տները, ապա հավաքվում են իրենց բերածով, և գցվում է միացման սեղանը:

Այնուհետև մինչ լուսանալը, շրջանցելով գնդակոծվող ճանապարհը, շրջակա խաղողի այգիներով գնում ենք դեպի շրջկենտրոն: Այս այգիներն ու հողամասը ժողովրդին բաժանվեցին երկու տարի առաջ, և ինչ հույսերով ու ոգևորությամբ սկսեցին մշակել դրանք: Հիմա էլ, անտեսելով մահվան վտանգը, շարունակում են մշակել, որովհետև առջևը աշուն ու ձմեռ կա, սպասվող առավել ծանր գարուն, ու ապրել է հարկավոր:

Ճանապարհն անցնում է Խարխափուտի մոտով: Նախկինում վաղ առավոտյան այս ժամին արդեն բազմամարդ էին լինում փո-

ղոցները, իսկ հիմա հանդիպում ես միայն զինվորական համազգեստներով տղաների: Հեռահար հրետանին, փաստորեն, ջնջել է սահմանամերձ գյուղ հասկացությունը և մի մեծ շառավղով ավեր է տարածում: Այն հասնում է մինչև շրջկենտրոն, և բնակիչները կամ պատսպարվել են այլ գյուղերում, կամ էլ շրջկենտրոնի՝ վերջին տարիներին չավարտված կիսակառույցներում: Ի դեպ, ըստ բնակիչների վկայության, պարզվում է, պատերազմական այս պայմաններում նման կիսակառույցները տներից ավելի «հարմարավետ» են: Ոմանք էլ հեռացել են մերձակա լեռնալանջերը և ապրում են նորաստեղծ քարանձավներում: Լեռնալանջերի այդ հատվածներին նշաններ են արված, որպեսզի մարդիկ կամ մեքենաներ չանցնեն. ցնցումներից «բնակարանի» ներսում հող է թափվում: Երկար կարելի է նկարագրել, թե մարդիկ ինչպես են ապրում հողափոր այս կացարաններում, երբ եկող անձրևից հետո վերևից սկսում է կաթել «առաստաղը», կամ էլ նորահյուս հյուղակներում. պարզապես հասկանանք, որ պատերազմական պայմաններում խաղաղ օրեր չկան, այդ օրերն էլ անցնում են անարյուն տառապանքով:

Համեմատաբար ապահով է շրջկենտրոնից Վերի Շեն տանող ճանապարհը և նրանց միջև ընկած հատվածը, ուր դարձյալ գրեթե մի թիզ անմշակ հող չկա: Կառչում են հողին ու այդպես կառչած էլ ապրում: Հիմա ամենածանր շրջանն է երեք գյուղերի տեղահանություն ու թալան տեսած Շահումյանի համար: Սննդի պաշարները սպառվել էին դեռևս ձմռանը, և մինչև նոր բերքը մարդիկ սնվում են պարզապես ուտելի կանաչով՝ բանջարով: Ինչպես դառը հեգնանքով իրենք են ասում՝ սեղան նստելիս առաջինը խաշած կանաչեղենն է, երկրորդը՝ թարմը և երրորդը՝ թթու դրածը:

Թշնամական կրակակետերի ոչնչացումից հետո, հիմա, ի տարբերություն Էրքեջի և Մանաշիդի, Բուզլուխում համեմատաբար խաղաղ է: Շատ ընտանիքներ են վերադարձել, իսկ նրանք, ում տներն ավերվել են կամ թալանվել, գրեթե ամեն օր Վերի Շենից բարձրանում են այստեղ, մշակում տնամերձերը:

Այսօր Շահումյանի մանրակերտն է դարձել Գյուլիստանը, ուր ապաստանել են ընտանիքներ շրջանի մնացած գյուղերից: Ջբաղեցվել են ոչ միայն վաղուց լքված տները, այլև պետական շինությունները, բայց դարձյալ հրետակոծությունից բոլոր պատսպարվողներին տեղ չի հասնում, և հարկադրաբար բնակվում են նույնիսկ լքված գոմերում ու ֆերմաներում: Գյուղը կարելի է անվանել փախստականների ճամբար, ուր ակամայից հիշում ես Դոստոևսկու խոսքերը. «Ես խոնարհվում եմ մարդկային տառապանքի առջև»: Հրետակոծության սարսափներին գումարվում է նաև թերսնումը, որի հետևանքները, դժբախտաբար, արդեն դրսևորվում են երեխաների թե՛ դիմագծերում և թե՛ պահվածքում: Ինչքան ամուր ու հուսալի է Շահումյանի ինքնապաշտպանությունը, այնքան էլ ծանր է մնացած ընդհանուր վիճակը. բազմիցս ասվել է, որ այն սոցիալական ու նվազագույն կենսապահովման առումով բարձիթողի վիճակում է և ներսից է քայքայվում, քանի որ կրկնակիորեն է կտրված թե՛ Հայաստանից և թե՛ Արցախից:

Այդ կտրվածությունն արտացոլվում է նույնիսկ հոգևոր, եկեղեցական ոլորտում: Չնայած բոլոր դժվարություններին՝ արդեն երկու տարի է՝ վերականգնվել են Գյուլիստանի, Խարխափուտի և Վերի Շենի եկեղեցիները, սակայն քահանա ուղարկելու բնակչության խնդրանքը մինչև այժմ չի հարգվել:

Քանի որ Արցախի ճանապարհն այժմ բաց է, հարկավոր է առանձին շարասյուներ շտապ ուղարկել Շահումյան, որը մի փոքր ամոքելով մարդկանց կարիքները՝ միաժամանակ կլինի բարոյական անասելի օժանդակություն ընդհանուր ուշադրությունից դուրս մնացած այս շրջանի համար: Տեղի հերոսական ժողովուրդը շարունակում է հետ մղել հակառակորդի պարբերական գրոհները...

ԵՐԿԻՐ, 1992 թ., 2-ը հունիսի, թիվ 102

ՈՐ ՀԱՍՑՆԵՄ «ԵՐԿԻՐ»

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԸ ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ԳԱՂԹԻ ՃԱՄՓԱՆԵՐԻՑ

Ընդամենը երկու–երեք օրում Շահումյանի ողբերգությանը գումարվեց նաև Մարտակերտինը. Հաթերքում և Գետավանում մինչ շփոթված մտածում էին, թե ինչպես տեղավորեն մի քանի օրվա գաղթից հետո այստեղ հասած շահումյանցիներին, ականատես եղան նաև իրենց հարազատ շրջանի հարևան գյուղերից բարձրացող տեղահանության ալիքին: Գյուղի շրջակայքը բռնած ժողովրդին խառնվեց նաև Ջագլիկից, Մատաղիսից, Մոխրաթաղից, Հասան Ղալայից, Թալիշից ու Չայլուից այստեղ հասած բնակչությունը: Իսկ շահումյանցիների հոսքը դեռ շարունակվում էր:

Հունիսի 16–ին գյուղի վերին կողմով մոտ քսան կիլոմետր բարձրանալով՝ հանդիպում էիր դեռևս չավարտվող քարավանին, որն անցնում էր Երից մանկանց վանքի մոտով: Վանքն այսպես է կոչվում, որովհետև կառուցվել է ի հիշատակ Աստվածաշնչում հիշատակված այն երեք մանուկների, որոնք հնոցը գցվեցին՝ իրենց հավատը չուրանալու համար և աստվածային մի զորությամբ ողջ մնացին կրակի ալիքներում: Նայում ես վանքին ու մտածում, թե արդյոք արցախահայությունն էլ Հայաստանից այնքան ուժ և զորություն կստանա, որ դիմագրավի կրակե այս հնոցին: Իսկ առայժմ առանց որևէ օգնության, անգամ նվազագույն սննդի և որևէ հագուստի մնացած ժողովուրդն այրվում է գիշերային ցրտից ու այս քանի օրը շարունակ տեղացող անձրևից: Գոնե վերջինս չլիներ: Այն անտառից Հաթերք իջնող ճանապարհը դարձրեց կպչուն ցեխ, և ծերերն ու երեխաները այլևս անկարող եղան առաջ գնալ: Ժողովրդին ընդառաջ եկող բեռնատարները կարողանում են հասնել մինչև ճանապարհի կեսը, դրանից այն կողմ անտառներում և շրջակա մարգագետիններում ընկած ուժասպառներին մինչև բեռնատարները հասցնում էին ձիերով և էշերով:

Շահումյանից եկած գաղթ–քարավանի հետագիծը երևում է ոչ միայն կոխկռտված ցեխից, այլև ճամփեզրին թափված անկողիններից ու տնային կահկարասուց: Ճանապարհի կեսից այլևս հնարավոր չի եղել դրանք բերել, երբ սպառվել են ծերերի ու երեխաներին գրկած կանանց ուժերը, և նրանց փրկելու համար տղամարդիկ բարձած ձիերից ու էշերից թափել են բոլոր իրերը և նստեցրել ուժասպառներին:

Մարդկանց տառապանքը կիսելու և նրանց ողբերգությունն ինչ–որ չափով ընկալելու համար գիշերը նրանց հետ մնում ենք այստեղ: Չսառչելու համար մարդիկ փաթաթվում են իրար և գրկում անասուններին: Գիշերային դադարը մարդիկ օգտագործում են ոչ թե հանգստանալու, այլ կորցրած հարազատներին որոնելու համար, որովհետև ծառերի ու մացառների միջով անցնելիս շարունակ կորցնում էին իրար: Տեղացող անձրևի, լացի և իրար որոնելու աղաղակների մեջ, ընդհանուր գիշերային խավարում այս անտառն ասես լիներ մութ աշխարհի մի անհեթեթ մանրակերտ:

Առավոտյան ճանապարհ ընկնելով՝ ոչ պակաս աղետալի վիճակի ականատես ենք դառնում Հաթերքում, ուր տեղացիները փախստականների մի մասին օթևանելուց բացի ուրիշ ոչնչով ի վիճակի չեն օգնել, որովհետև մինչև բերքի դուրս գալը իրենք էլ են կիսաքաղց կյանք վարում՝ դաշտից հավաքելով կանաչեղեն: Փրկության միակ միջոցը դարձել է Շահումյանից բերված մանր ու խոշոր անասունների մորթը:

Քանի որ շահումյանցիներին գումարվել են նաև Մարտակերտի մի քանի գյուղերից եկած փախստականները, նրանց բոլորին պարզապես հնարավոր չէ տեղավորել Հաթերքի և Գետավանի տներում, ու մարդիկ ապաստանել են գյուղխորհրդի, դպրոցի, մանկապարտեզի, պետական մյուս հաստատությունների շենքերում, որոնցից յուրաքանչյուրը վերածվել է մի փոքրիկ գաղթականյանի: Անպաշտպանվածության զգացումը գրեթե խուճապի փոխվեց Թա-

լիշի, Չայլուի ու Լենինավանի գրավմամբ. ռազմաճակատի գիծը հիմա հասել է մինչև Մարտակերտի շրջկենտրոնի մատույցներին՝ պարտադրելով իրենց տները թողնել Ներքին Հոռաթաղ, Կուսապատ, Չլդրան և Դրմբոն գյուղերի բնակիչներին: Հաթերքից և Մարտակերտից այս երկու հոծ քարավանները միանում և շարժվում են Ստեփանակերտ: Շահումյանի անկումը նման խուճապ չէր առաջացնի, եթե մեր հանրապետության ղեկավարները, արագ արձագանքելով, գոնե կազմակերպեին մի քիչ ալյուրի ու վառելիքի ուղարկումը Հաթերք. հնարավոր կլիներ նախ կերակրել մի քանի օրվա լարումից ու սարսափներից ուժասպառ ժողովրդին, իսկ հեղուկ վառելիք լինելու դեպքում հնարավոր կլիներ շրջակա ապահով գյուղեր տեղափոխել շահումյանցիներին, և վերջիններս հարկադրաբար չէին բռնի Ստեփանակերտի ճանապարհը:

Առաջնահերթ խնդիրը թշնամու առաջխաղացումը կանգնեցնելն է: Այսօր (18 հունիսի) կեսօրին, երբ հասանք Մարտակերտի շրջկենտրոն, այն արդեն ամայի էր: Ճանապարհին հանդիպում էին անկողիններով ու մնացած ամենակարևոր իրերով բեռնված մեքենաներ, տրակտորներ, տաք հագուստներ ու գիշերը ծածկվելու համար մի քանի վերմակ իրար կապած մանկասայլակներ, որոնցով ժամանակին պաշարված Ստեփանակերտում ջուր էին փոխադրում: Շրջկենտրոնում վերջին հուսահատ կռվի համար մնացել են իրենց նահատակությանն ընդառաջ գնացող տղաները: Հրաժեշտ տալով նրանց՝ հունիսի 18-ի երեկոյան բռնում եմ Ստեփանակերտի ճանապարհը՝ ընթացքից գրի առնելով այս ամենը, որ հասցնեմ ուղարկել «Երկիր»:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 20-ը հունիսի, թիվ 116

ԹԱՐԹԱՌԸ ՓՈԽԵԼ ԷՐ ՀՈՒՆԸ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԸ ԵՐԵԿ՝ ԺԱՄԸ 20-ԻՆ, ԱՐՑԱԽԻՑ ՄԵԶ ՀԱՂՈՐԴԵՑ

Հաթերքի անկումից հետո թվում էր՝ ճակատագրի անիվը, ինչպես ջաղացի քար, իր անշրջելի պտույտով շրջան առ շրջան, գյուղ առ գյուղ աղալու է Արցախը, բայց Թարթառը այն գետը չէր, որ պտտեցներ այդ անիվը՝ իր սնուցած դաշտերը զրկելով բնիկ տերերից: Հակառակորդի զրահատեխնիկայի անիվը եկավ ու բախվեց Թարթառին, և գետը դարձավ ջրե մի պատնեշ երկաթե հեղեղի դեմ: Հնուց մեզ ավանդված զրույցներում ու լեգենդներում պատմվող հրաշքի պես շրջեց իր ընթացքը՝ հոսելով դեպի վեր, դեպ Գետավան, Չափար ու Հաթերք գյուղերը: Գետին խառնած իրենց արյամբ հայ զինվորները մեկ անգամ ևս շրջեցին հայոց պատմության ճակատագրական անիվը:

Ռազմաճակատի գիծը, առաջանալով Վաղուհասից մինչև Դրմբոն ընկած գյուղերը, որոնց երկայնքով մի քանի օր շարունակ կատաղի մարտեր էին ընթանում, վերստին դարձավ համեմատաբար ապահով: Հայկական ինքնապաշտպանության ուժերի մարտիկների ետևից մինչև ասֆալտապատ ու ոլորուն ճանապարհով Կուսապատ հասնելը մտովի պատկերացնում ես, թե մի քանի շաբաթ առաջ ինչպես էր շրջկենտրոնից և կողքի գյուղերից այստեղով գաղթել ժողովուրդը: Լենինավանի անկումից հետո, քանի որ հնարավոր չէր շրջկենտրոնում ապրել, տեղի բնակիչները ապաստանել էին հիշյալ ճանապարհի երկայնքով տարածվող անտառներում և ներքևի ձորերում խփված վրաններում, հողափոր կացարաններում,

փայտե հյուղակներում ու բրեզենտապատ բեռնատարների թափքերում՝ ցանկանալով միաժամանակ մոտ լինել թե՛ իրենց տներին և թե՛ հեռու՝ կրակի գծից: Մինչև Դրմբոն ընկած տարածքը գրավելուց հետո հակառակորդը զարմանալի մի ջանասիրությամբ, ավելի ճիշտ՝ չարասիրությամբ, չէր զլացել ավերել ու այրել անգամ այս խեղճուկրակ կացարանները: Հիմա, անցնելով հազարավոր մարդկանց համար նահանջի ճանապարհ դարձած այս ոլորաններով, ողջ ճնշող տեսարանում միակ մխիթարությունը, եթե դա մխիթարություն է, հակառակորդի դեռևս ծխացող զրահատեխնիկան է ու շուրջբոլորը թափված դիակները:

Ենթադրվում էր, թե վերցված գյուղերը մոխրի ու ավերակի վերածված կլինեն, սակայն հասցված վնասն ու թալանը ակնկալվածից անհամեմատ քիչ էր երկու պատճառով: Նախ՝ թշնամու թիկունքում պարտիզանական ջոկատների ահից գյուղերը մտնողները այնքան էլ շատ չեն եղել, իսկ մի մասի համար էլ հայերի հաշվին հարստանալու ձգտումը ճակատագրական դարձավ, որովհետև վախի հաղթահարմամբ թալանի սկիզբը համընկավ հայկական ուժերի հակահարձակման հետ: Նրանցից մեկն էլ՝ մի վարորդ, հետամուտ արժեքավոր թալանին, տնետուն ընկած գորգեր ու կարպետներ էր հավաքել, Մաղավուզ գյուղի ազատագրման ժամանակ չէր հասցրել փախչել. մեքենայի տակ էր թաքնվել և գերի ընկել: Երբ զրուցում էինք, զարմանալի պատկերավոր մի շողոքորթությամբ ճգնում էր համոզել, թե ինքն այնքան է սիրում հայերին, որ գորգերը հավաքել էր տան պատից կախելու և դրանցով հայերի կարոտը առնելու համար: Խոսքը առավել համոզիչ դարձնելու համար այնուհետև սկսեց ասել, թե ինքը մեր գրականությամբ է դաստիարակվել: Երբ խնդրեցինք մի քանիսի գոնե անունները թվել, ասաց, որ վախից բոլորինը մոռացել է:

Տներն էլ հիմնականում չէին այրել՝ մտածելով, թե արդեն իրենցն է: Բոլոր գերիները թեև գիտեին, որ իրենց կյանքին վտանգ չի սպառնում և պետք է փոխանակվեն մեր պատանդների հետ,

ճգնում էին համոզել, թե ոչ մի գնդակ չեն արձակել, բռնությամբ են բերվել ճակատ: Օմօնական համազգեստով քսանամյա մի տղա բավականին պատկերավոր պատմում էր, թե հայրը ինչպես իրենց ունեցած բոլոր ոչխարները իբրև կաշառք տարել է շրջանի զինկոմին, բայց վերջինս մերժել է և իրեն բռնությամբ ճակատ ուղարկել:

Որպեսզի թշնամին չկարողանա անցնել Թարթառի այս ափը, պայթեցվել էր Գետավանի մոտի կամուրջը, և հիմա Հաթերքի գրավումից հետո գետն անցնելու խնդիրն էր ծառացել արդեն մեր ուժերի առջև: Գրավման հաջորդ առավոտյան մեծ քանակով մեքենաներ և ժողովուրդ էր կուտակվել գետի երկու ափերին: Մի ափին գյուղերը ազատագրած մարտիկներն էին, մյուսին՝ իրենց տների վիճակը տեսնելու եկած առաջին գյուղացիները: Քանի որ զինվորների զգալի մասը նույն այդ գյուղերի երեկվա բնակիչներն էին, մյուս ափին եղողները նրանց էին ձայնում, հարցնելով, թե ինչ վիճակում են իրենց տները: Համընդհանուր ցնծությունը առժամանակ ընդմիջվում էր բերվող զոհված ազատամարտիկների մարմիններով ու վիրավորների խուլ տնքոցներով:

Նրանցից մեկին փոխադրող շտապօգնության մեքենայով գետի ճակատային ափից վերադառնում ենք թիկունքայինը:

Կյանքը շարունակելու համար ետ էր վերադառնում ժողովուրդը: Պատգարակին անօգնական կապված այս տղայի ու նրա ընկերների արյան շնորհիվ է, որ հազարավոր մարդկանց համար այսօր իրենց հարազատ վայրերը չեն վերածվել պատմական հիշողության:

Այսօր Արցախի յուրաքանչյուր գյուղ ու տուն անտեսանելի նյարդերով կապված է ռազմաճակատի գծի հետ: Ետ ու առաջ տարուբերվող այդ գիծը տեղահան է անում մարդկանց, ապա՝ ետ բերում, թեև վերջերս պարբերաբար կրկնվող օդային հարվածները, փաստորեն, վերջ տվեցին թիկունքային գյուղ հասկացությանը: Ինքնաթիռների նետած ռումբերի ավերներից առավել մեծ էր տարածվող հոգեբանական սարսափը, որը հասկանալու համար հարկավոր է

լսել, զգալ ներսդ ալեկոծող հոնդյունը, որ տարածվում է վերևից թռչող ու այս լեռների երկնքին տեր կանգնել փորձող ինքնաթիռներից: Մինչև չզգաս այդ սարսափը, չես կարող վերապրել նաև այն ուրախությունը, որը պատել էր տասնյակ գյուղերի բնակիչներին՝ խփված ինքնաթիռից հետո, երբ ցրվեց դրա ամենազորության և անխոցելիության առասպելը:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 25-ը հուլիսի, թիվ 141

ՎԱՐԴԱՎԱՌԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Ինչպես 1918 թ. թուրքական բանակը, գրավելով մեր հայրենիքի ռազմագիտական գրեթե բոլոր կարևոր կետերն ու բերդաքաղաքները, եկավ հասավ Արարատյան դաշտ, ուր հայ զինվորները և գաղթական դարձած ժողովուրդը էլ չնահանջեցին, որովհետև թիկունքում Էջմիածինն էր ու Երևանը, այդպես էլ վերջերս Հյուսիսային Արցախը գյուղ առ գյուղ գրավող հակառակորդը հասավ մինչև Վաղուհաս, սակայն չկարողացավ առաջանալ, որովհետև Վաղուհասի թիկունքում Գանձասարն էր ու Ստեփանակերտ տանող խճուղին, որով օրեր շարունակ գալարաձև ալիքներով ընթանում էր իր գրավված պատմական բնօրրանից դեպի անհայտ հեռուները ձգվող գաղթականության ճանապարհը: Տնավեր դարձած ժողովուրդը, Առաջաձորի մոտից անցնելով, գլխիկոր իր հայացքը մի պահ բարձրացնում էր վեր, նայում հեռվում երևացող Գանձասարին՝ Արցախ աշխարհի հոգևոր թագ նրա գմբեթին, սոսկում հնարավոր կորստյան համար, իր անզոր ցավի հեծեծանքներն ու անեծքը խառնում Խաչենագետի աղմուկին ու շարունակում ճանապարհը: Կորստյան այս ցավը մարմնավորվելով՝ Վաղուհասից մինչև Դրմբոն ձգվող ռազմաճակատի աղեղնաձև գիծ դարձավ, ու վանքը չպղծվեց: Գանձասարի աներերության հավատն այնքան մեծ էր, որ երբ անգամ ընթացող մարտերի որոտը արձագանքվում էր իր կամարների ներքո, այստեղից չհանվեցին նույնիսկ վանքի սրբությունները: Հակառակորդը չկարողացավ մտնել Խաչենագետի հովիտը, որովհետև լեռնալանջն ի վեր ընթացող ուխտավորների ոտնահետքերը հրոսակների համար չէին գծել տաճար տանող ճանապարհը: Հանուն այդ ճանապարհի անտրորելիության հայ զինվորները շարժվեցին առաջ երկու ճակատով՝ դեպի Հաթերք ու Կուսապատ:

Մինչ այդ հակառակորդի առաջխաղացումը կանգնեցնելու համար պայթեցվել էր Գետավանի մոտի կամուրջը, և հակառակորդի զրահամեքենաները չկարողացան անցնել Թարթառը: Գետի այն հատվածը, որը չհաղթահարեցին հակառակորդի զրահամեքենաները, տեղացող կրակի ներքո անցան հայ զինվորները:

Հեռվից եկող մարտական ամփոփագրերը ոգևորիչ մի հերոսականությամբ են լցնում մեր սրտերը, սակայն մարտական գործողությունների թատերաբեմում սիրտդ ոչ թե ուռչում է հպարտությունից, այլ կծկվում ողբերգականությունից, երբ տեսնում ես բերվող վիրավոր զինվորների սառչող մարմինները, և թե ինչպես է աչքերում խամրում իր մայրամուտն ապրող նրանց կյանքի արեգակը:

Թարթառի մի ափին դեռևս կռիվ էր ու դարանակալ մահ, իսկ թիկունք դարձած մյուս ափին արդեն կարգավորվում էր կյանքը: Հաթերքից ու ազատագրված մյուս գյուղերից, մի կերպ ճեղքելով վարարած Թարթառը, շտապօգնության մեքենաները փոխադրում էին վիրավորներին: Նման մի մեքենայով ռազմաճակատի գծից ետ ենք վերադառնում: Գետի մյուս՝ «խաղաղ» ափին մեքենայում վիրավոր պառկած գետավանցի տղային գտնում է մայրը: Մինչ բնազդական մի մղումով կցանկանար գրկել որդուն, վիրավորին ուղեկցող բուժքույրը ճչաց, թե չդիպչես, որովհետև մարմնի ներսի բեկորները ուժեղ շփումից կկտրեն հյուսվածքները: Մայրը տեղավորվում է տղայի կողքին, մեկ իր անկապ խոսքերով փորձում գիտակցության բերել նրան, մեկ աղերսալից նայում բուժքրոջը: Ճանապարհին վիրավորի շնչառությունը ծանրանում է, և մեքենան կանգնում է: Մինչ անհրաժեշտ ներարկումները կարվեին, վարորդը ճանապարհին փռված լեռնային կակաչներից մի փունջ է կազմում և նվիրում բուժքրոջը: Վերջինս նախ զարմացած հարցնում է, թե ինչպե՞ս կարելի է այդ պահին սպեղանի պատրաստել կակաչներից, ապա հիշում, որ իրենց լեռներից այն կողմ շարունակվող կյանքում աղջիկներին ծաղիկներ են նվիրում, մի պահ շփոթվում է, կարմրում, կյանքի մի դող է անցնում դեսանտայինի իր շորերով, ակամա իրեն է նայում արկի բեկորից բացված ձագարում գոյացած ջրափոսի «հայելում», հաջորդ պահին, սակայն, վիրավորի տնքոցը նրան

էլի վերադարձնում է լեռներից այս կողմ: Վարորդի հետ պատգարակը տեղավորում է մեքենայում և նվիրած կակաչներով սկսում քշել տղայի վերքի արյան շուրջը հավաքվող ճանճերին: Վիրավորը, սակայն, հանգչում է՝ չհասած մինչև առաջիկա հոսպիտալը: Ոչ այնքան հեռու գտնվող հարազատ գյուղը տեղափոխելու համար մարմինը մեքենայից հանում են, որ արդեն մայրը ազատորեն կարողանա գրկել նրան, իսկ շտապօգնությունը շտապում է ետ՝ դեպի Թարթառի մյուս ափը՝ փոխադրելու նրանց, ովքեր իրենց մարմնում դեռևս զգում են ցավը մեր հայրենիքը ծվատող արկերի բեկորների:

Ներքևում կռիվ ու մահ է հանուն շարունակվելիք կյանքի, իսկ վերևում՝ Գանձասարի գմբեթի ներքո, հոգևոր երգն ու խոսքն է տարածվում առավոտյան և երեկոյան ժամերգությունների ընթացքում՝ որպես ոգեղեն մի պատնեշ՝ ընթացող վայրիվերումների, հուսալքության և կյանքի դժվարություններից ծնվող ձևախեղումների դեմ: Տասնամյակների ընդմիջումից հետո վանքի կամարների ներքո հայոց պատարագը վերստին հնչեց 1990 թ. Պայծառակերպության տոնին, երբ վերաօծվեց այս տաճարը: Երկու տարի անց, Արցախին վիճակված բազում փորձություններից հետո, հուլիսի քսանութին Գանձասարում վերստին տեղի ունեցավ կատարումը Պայծառակերպության տոնի: Պատարագիչ քահանան՝ Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Պարգև սրբազանը, դիմելով հավաքված ժողովրդին, ասաց, թե ինչպես Հիսուս, երեք աշակերտների հետ բարձրանալով լեռն ի վեր, այլակերպվեց, լույսով ու զորությամբ լցվեց խաչելությունից առաջ, որպեսզի դիմագրավի սպասվող փորձություններին, այնպես էլ թող մենք, ծանր այս օրերին հավատով լցվելով, պայծառակերպվենք, արթուն մնանք, վիճատությամբ ու հոգնությամբ չնիրհենք Հիսուսի հետ եղող երեք առաքյալների նման, այլ համբերելով դիմանանք ու արժանի դառնանք՝ տեսնելու փրկության պայծառակերպ լույսերում շողշողացող Արցախ աշխարհը:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1992 թ., 13-ը օգոստոսի, թիվ 22

ՌՈՒՄԲԵՐԻ ՏԱԿ

Արցախյան պատերազմում այսօր իրար են խառնվել երկինք ու երկիր: Անգամ արցախյան հողը պատառող արկերն ու հրթիռները հիմա խաղալիք են թվում տեղացող ռումբերի առջև: Վերջիններիս համար միևնույն է՝ անկման կետում և տարածված ավերի շառավղում հանդիպելու են մարդո՞ւ, բացվող ծաղկի՞, քար ու թփի՞, արվեստի քարահյուս գործի՞, թե՞ բնակելի շինության: Մինչև ռումբը «կընկղմվի» գետնի մեջ, այս ամենը նախ մի քանի վայրկյան առաջ ցնցվում է, ապա պայթյունից հետո գորշ զանգվածի վերածված վեր բարձրանում երկինք և մահաբեր մոխրի նման տարածվում երկրի վրա: Մի քանի րոպե մարդիկ կարկամում են սարսափից, շուրջդ ծածկվում է անթափանց փոշով, ու եթե կարողանում ես գլուխդ թեքել և հակառակ ուղղությամբ նայել երկնքին, միևնույն է՝ արեգակը փոքրացած ու խեղճ է երևում: Կարծես այս մոլորակի ուղեծրից դուրս գտնվող մեկ այլ համաստեղության համար է ուղարկում իր ճառագայթները: Մի քանի րոպե անց մարդկանց պատերին ծեփող, ապակիները փշրող և մեքենաները շուռ տվող օդային ալիքի հարվածի հետ աստիճանաբար անցնում է ներսդ ալեկոծող սարսափը, ու պարզվում է, որ շուրջդ կյանքը ավերակների կույտ է դարձել: Լսվում են դեկտեմբերյան երկրաշարժից մեզ այնքան ծանոթ փրկություն աղերսող աղաղակները, փլատակների փոշին արյան մածուցիկ ցեխի վերածող բարակ վտակներ են գոյանում, որոնց ակունքները արդեն անշնչացող մարմիններն են: Խելակորույս վազքով նախ այստեղ են նետվում հարազատներին որոնողները, սլանում են շտապօգնության մեքենաները և «լավ կադրերը» ձեռքից բաց չթողնելու ու րոպե առաջ նկարահանելու մտահոգություն ունեցող օտարերկրյա հեռուստալրագրողները: Վերջիններիս

Արցախը հնարավորություն է տալիս մոտեցող մահը որոնել ոչ թե դերասանների ծամածռվող դիմագծերում, այլ վիրավորների ջղաձիգ ցնցումներում:

Ինչպես երկրաշարժը վերապրածներին երկար ժամանակ սարսափ էր պատճառում անգամ անցնող տրամվայից գետնի ցնցվելը, այնպես էլ այսօր Արցախի երեխաների աչքերի բիբերը սկսում են անբնականորեն խոշորանալ երկնքից եկող օդային յուրաքանչյուր ալիքից ու տատանումից՝ լինի դա ամպրոպ, եկող ուղղաթիռի հոնդյուն թե ուժեղ քամի: Արցախում այսօր մարդիկ անգամ կորուստն ու ավերը ողբալու ժամանակ չունեն: Մեկը ալյուր է որոնում սովից ու վախից ուժասպառ երեխաների համար, մյուսը շրջակա անտառից սայլակով փայտ է քարշ տալիս բերում, երրորդը շտապում դիրքերը՝ հերթապահության: Ու մահվան սպասումը կյանքի առօրյա դարձրած՝ ապրում են մարդիկ, եթե, իհարկե, այդպես ապրելը կարելի է կյանք համարել:

Որքան մոտ ես պայթյունի վայրին, այնքան ուժեղ ես զգում հարվածային ուժը, որքան հեռանում ես, այնքան խորն ես ընկալում հողի խուլ տնքոցը: Այն զգալի է անգամ մեքենայում: Օգոստոսի 22–ին, երբ «Վիլիսով» մեկնում էինք Զլդրան ու Դրմբոն, դեռևս Խոջալու չմտած՝ հանկարծ վարորդը միանգամից արգելակեց՝ ասելով՝ հողը ցնցվեց, երևի Ստեփանակերտին էլի խփեցին: Ետ դարձանք ու քաղաք չհասած՝ նկատեցինք փոշու արդեն ցրվող սյունը: Այդ սյան և Մարտակերտից դեպի Ստեփանակերտ առաջ սողալ ձգտող ռազմաճակատի գծի միջև մոլորված կանգնած իրենց ճակատագիրն էին անիծում տնավեր դարձած փախստականները, որոնց համար առջևում ռմբակոծվող քաղաքն էր, ետևում՝ թշնամին: Մի քանի գյուղեր ընդգրկող տեղահանության այս դժբախտաբար սովորական դարձող հերթական ալիքը կապված էր Դրմբոնի վրա ծավալված հարձակման հետ: Այդ գյուղը այսօր ռազմաճակատի առաջին գիծն է և կարևորագույն կետը այժմյան մարտական գործողություններում: Պատահական չէ, որ Ադրբեջանը ամեն գնով ձգտում է գրավել այն: Վերջինիս տիրա-

նալը լոկ դեպի Արցախի ներսը ևս մի քանի կիլոմետրով խորանալ չի նշանակում, այլ ունի ռազմավարական անչափ կարևոր նշանակություն, որը հասկանալու համար պետք է հիշել Աբուլֆազ Էլչիբեյի՝ Սևանում լողանալու ցանկությունը: Ադրբեջանի նախագահի «փափագը» կարող է կատարվել լճին հասնելով Վարդենիսից, որ սահմանակից է Քելբաջարին: Վերջինս մի կողմից սահմանակից է Մարտակերտին, որի հյուսիսային մասը թեև հայաթափված, սակայն դեռևս մարտական գործողությունների վայր է, հարավից՝ մարդասիրական միջանցքի վերածված Լաչինն է, և միայն հյուսիսից է կապվում Գետաբեկի ու Դաշքեսանի շրջաններին՝ մնալով ռազմաաշխարհագրական որոշակի կտրվածության մեջ: Այդ կտրվածությունից այն կարող է դուրս գալ միայն Գետավան–Դրմբոն–Կուսապատ–Մարտակերտ–Լենինավան ու այնտեղից էլ՝ դեպի նախկին Միր Բաշիրի՝ այժմյան Թարթառի շրջանի հետ կապվելով: Մայրուղուց հյուսիս ընկած ողջ տարածքը այժմ հակառակորդի ձեռքին է, և բացվող գնդացրային կրակով ու հրետակոծությամբ այնտեղից անցնող մեքենաներին կարող էին խոչընդոտել միայն Վաղուհաս և Դրմբոն գյուղերից: Այս պատճառով էլ հաջորդ հարվածը հասցվեց Վաղուհասին: Հիմա նրանք ամեն գնով ձգտում են տիրանալ Դրմբոնին, որից հետո միանգամից կբացվի Քելբաջար–Թարթառ մայրուղին: Դժվար չէ պատկերացնել, որ դրանից հետո պարբերական գնդակոծումների կենթարկվի Վարդենիսը: Անհրաժեշտության դեպքում էլ նույն ձևով կարող ենք ցույց տալ, թե ինչպես Արծվաշենի անկմանը նախորդեցին համապատասխան գործողությունները Արցախում: Այս ամենը մեկ անգամ ևս վկայում են, որ թեև վարչաքաղաքականորեն ԼՂՀ–ն կտրված է մեր հանրապետությունից, սակայն լեռնաաշխարհագրական առումով մենք ունենք միասնական մեկ հայրենիք, և Արցախում յուրաքանչյուր կորուստ որոշ ժամանակ անց իր համարժեք անդրադարձն է ունենում մեր հանրապետության սահմանամերձ որևէ կետում:

Մինչ մենք կփորձենք հասկանալ այս պարզ իրողությունը, այնտեղ՝ Արցախի լեռներում, հայ ազատամարտիկները շարունակում են մարտական գործողությունները հիշյալ մայրուղու երկայնքով: Դրմբոնի վրա ծավալված ուժեղ հարձակումը մեր զինվորներին պարտադրեց մեկ օրով թողնել գյուղը և ուժերը վերախմբավորելով վերստին ետ շպրտել թշնամուն: Կռիվներն այժմ այնպիսի ծավալ են ընդունել, որ անմիջապես ճակատային գծում գտնվող գյուղերում ապրել հնարավոր չէ: Այնտեղ մնում են միայն զինվորներն ու տեղային աշխարհազորը: Մերձճակատային գծից հանում են կանանց ու երեխաներին, սակայն հասակավորներն ու տղամարդիկ մնում են: Գյուղում չմնացողներն էլ պարբերաբար այցելում են իրենց տները, մշակում հողամասերը, հավաքում հասած բերքը: Արդեն դուրս եկած կարտոֆիլն է հիմա Արցախում հիմնական սնունդը, և կանայք ու տղամարդիկ շարունակ գալիս, երեխաների համար պարկերով կարտոֆիլ են հանում–տանում տնամերձերից: Մարտերը երբ սկսեցին մղվել Դրմբոնի մերձակայքում, շտապ սկսեցին փոխադրել այստեղի և Չլդրանի բնակիչներին: Այս էլ որերորդ անգամ հարկադրված հարազատ գյուղերը թողած՝ մարդիկ, կիսով չափ լցված կարտոֆիլի պարկերը շալակած, որովհետև շատերը միայն այդքանն էին հասցրել հավաքել, բարձրանում էին բեռնատարների թափքերը և տրակտորների քարշակները: Չիմանալով՝ էլի կտեսնեն իրենց տները, թե ոչ, նրանք գուրգուրում էին հարազատ տների պատերը, հավատով և աղերսանքով նայում դրանք պաշտպանելու մնացող զինվորներին և հեռանում: Չլդրանից վերջին բնակիչների դուրս գալուց կարճ ժամանակ անց այստեղ սկսեցին բերել Դրմբոնում ընթացող մարտերի առաջին վիրավորներին՝ ընթացքից արագ վիրակապելու և թիկունք ուղարկելու համար: Տանկերից, հրանոթներից և երկու «Գրադ» կայանքներից տեղացող արկերի ներքո դժոխային մեկ օր անցկացնելուց հետո, հաջորդ առավոտը խաղաղությամբ բացվեց Չլդրանի վրա, որովհետև հակառակորդը, չկարողանալով պահել դիրքերը, Դրմբոնից նահանջել էր ետ՝ մայրուղուց այն կողմ: Սկսեցին ետ վերադառնալ

գյուղի բնակիչները: Ընդհանրապես զարմանալի մի առեղծված է հողի կապվածության արցախյան զգացումը: Այն ոչ մի կերպ չի բթանում՝ չնայած այս վերջին տարիներին նրանց քաշած տանջանքներին:

Այս կապվածությունը, սակայն, երերաց, շատ դեպքերում էլ կտրվեց վերջին երկու շաբաթների կույր ռմբակոծություններից հետո, որոնցով Բաքուն մեկ անգամ ևս ապացուցեց, որ իր իրական նպատակը ոչ թե Ադրբեջանի սահմանադրության հաստատումն է երկրամասում, այլ խաղաղ բնակչությանը ոչնչացնելն ու տեղահան անելը և հարցը հայաթափմամբ լուծելը:

Հրետակոծության և օդային ռմբակոծության միջև տարբերությունն այն է, որ հրետակոծությունից խուսափելու համար յուրաքանչյուր տան բակում բնակիչները ռմբապաստարան էին փորել և այդտեղ էին պատսպարվում տեղացող արկերից: Օդային ռմբակոծության դեպքում չի փրկում ոչ միայն հողափոր ապաստարանը, այլև անգամ պետական ցանկացած շինության նկուղը, որովհետև կեստոննանոց ռումբը այդ ամենը փլուզում է՝ ինչպես ավազե տնակ: Այս պատճառով է, որ երբ Ստեփանակերտի երկնքում պտտվում է ՍՈՒ–25–ը, մարդիկ հաճախ թաքնվելու տեղ չեն էլ որոնում, այլ պարզապես, ինչպես վիճակախաղում, սպասում են. այս անգամ ում բախտը կբերի, ում գլխին չի ընկնի սոսկալի ավերիչ ուժ ունեցող ռումբը: Արցախում այս իրողությունը նմանը չունեցող մի խուճապ առաջացրեց, որի առաջին ալիքի անցնելուց հետո բնակչության մեջ ուրվագծվեց երկու միտում. առաջինը՝ ամեն գնով հասնել Հայաստան և փրկվել, անկախ այն բանից՝ այստեղ հարազատ ունեն, թե ոչ, և երկրորդը՝ թողնել Ստեփանակերտը ու բնակվել ոչ ճակատային այն բոլոր վայրերում, ուր թեկուզ և բացօթյա հնարավոր է ապրել մինչև ձմեռ:

Ավտոբուսներով, բեռնատարներով, տրակտորների քարշակներին կառչած և խուճապի հորձանուտը ընկած ժողովրդի մի հատվածը սկսեց հեռանալ Արցախից: Նրանք, ովքեր տեսել են, թե երկինքն ինչպես են ակոսում ՍՈՒ–երը՝ մինչև պայթյունի պահը տանջալից մի սպասումի մեջ պահելով ժողովրդին, չեն մեղադրի հեռացողներին, որովհետև եթե չունես պաշտպանական համապատասխան հակազդող մեխանիզմ, բարոյական իրավունք էլ չունես մարդկանց ստիպելու մնալ տեղացող ռումբերի ներքո: Այս հարցի վերաբերյալ ասելիք շատ կա, բայց այն թերթերում քննարկելիք նյութ չէ: Պարզապես, եթե այսպես շարունակվի, Արցախը կարող է մնալ լոկ գաղթական դարձած ժողովրդի աչքերում ծովացած կարոտ:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 29–ը օգոստոսի, թիվ 166

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ

ԼՂՀ-ի ստեղծումը նախորդեց Հայաստանի երրորդ հանրապետության ծննդյանը: Արցախն է մեր ազգային շարժման այն միակ փարոսը, որը մթին ալեկոծություններից տարուբերվող մեր նավը ապագա լինելիության ափերն է հանելու: Յուրաքանչյուր շեղում լեռնաշխարհի փարոսից տարածվող այդ լույսից մեր նավին դատապարտելու է ջախջախվել նենգապատիր խոչուխութերում կամ էլ նետելու է օտար արժեքների վերասերվող այն ափը, ուր հայրենիքի գաղափարը ճզմվում է ազատ շուկայի գործարար հևքում:

Լեռնային Արցախի Հանրապետությունը ծնվեց մեր հույսերից ու հիասթափություններից: Այս աշխարհի հզորների քաղաքական դավերին հակազդելու արցախահայության կամքից: Մինչ նորաստեղծ հանրապետության ծնունդը գրվեցին բոլոր բաց նամակները, հայհոյվեցին քաղբյուրոյի բոլոր անդամները և նախկին կայսրության ղեկավարները, ու ներբողվեցին ազատամիտ դեմոկրատները, ընդունվեցին հակահայ բոլոր որոշումները, և արվեցին աշխարհի ազնիվ մարդկանց հայանպաստ հայտարարությունները: Այնուհետև 1991 թ. օգոստոսին փլուզվեց աշխարհի վերջին կայսրությունը, որի հոգեվարքի ալիքները տարածվեցին Արևելքից Արևմուտք՝ իրար խառնելով երկրներ ու ժողովուրդներ: Ընդհանուր այս խառնակությունում չխառնակվելու համար իր լեռներում ազգային անկախության իր դրոշը պարզեց արցախահայությունը:

Ոչ ոքի կողմից չճանաչված, բայց բոլորի կողմից շարունակ հիշատակվող այս զարմանալի հանրապետությունը ստեղծեցին Արցախի գյուղացիները՝ իրենց գյուղերի հանդերի վերջն էլ վերածելով հանրապետության սահմանների: Գյուղացիական ինքնապաշտպանությամբ ստեղծվեց ԼՂՀ ազգային բանակը:

Դաշտերից մինչև անասնագոմերը ձգվող ճանապարհին այնքան ոգեղեն էր այդ հանրապետությունը, որ երկար ժամանակ մնացյալ աշխարհին կապվում էր միայն օդային ճանապարհով: Եթե մի օր հրաշքով հաղթի ազգային-ազատագրական այս պայքարը և ստեղծվի նրա խորհրդանշական հուշարձանը, ապա կենտրոնում պետք է լինի հայ օդաչուն, մյուս կողմում՝ այդ օդաչուի՝ մեր աշխարհից երկաթյա կռունկով բերված «խապրիկը» տեղ հասցնող վարորդը, մյուս կողմը՝ հայ զինվորը և նրան թիկունք եղող բուժքույրը:

Օդաչուն, որ ունեցավ մեր լեռները վերևից տեսնելու և այդ լեռների առջև վերևից խոնարհվելու երջանկությունը՝ այդ երջանկության համար կամ օդում այրվելով, կամ էլ թռիչքի համար վճարելով տարիների կյանք արժեցող ժամերի լարվածությամբ:

Արցախի վարորդները, որոնք գյուտարարական հրաշքներ էին գործում՝ մեքենաների շարժիչները անվառելիք աշխատեցնելով և դեպի դիրքեր ճանապարհին շարունակ դիմագրավում դարանակալ մահվանը:

Արցախի զինվորները, որ ճակատագրի պարտադրանքով զենք վերցրին, շփոթված նայեցին այդ զենքերին, վախվորած ժպտացին, որպես ինքնամխիթարանք՝ իրենց բարբառով ասացին՝ լավ կինի, ու եղավ ազգային ինքնապաշտպանություն: Նրանց միացան Մայր հայրենիքից եկած բոլոր այն տղաները, որոնց ունեցած հարստությունը ոչ թե սեղանիկներն ու մնացյալն էր, այլ հայ ժողովրդի ազգային հպարտությունը և հայրենիքի կորստյան ցավը: Աշխարհն սպասում էր, որ մեր պատմությունը էլի կգրվի լացով, ողբով, աղերսագրերով, բաց նամակներով ու քաղաքական համարձակ հայհոյանքներով, բայց Արցախի լեռներում հայոց պատմությունը սկսեց գրվել Թաթուլ Կրպեյանի ու Վարդան Բախշյանի և մեր մյուս նահատակների ավտոմատներով:

Մեկ տարի է անցել ԼՂՀ-ի ստեղծումից: Այդ ընթացքում Արցախը դարձավ ետուառաջ տարուբերվող ռազմաճակատի գիծ: Ավերվեցին Ստեփանակերտը, շրջկենտրոնները, շատ գյուղեր: Անխա-

թար մնացին միայն ազգային անկախության գաղափարը ու իրենց լեռների նման իրենց մեջքը չծռելու վճռականությունը:

Այսօր, հավատարիմ իրենց պապերի մեծ երազից բխող այդ գաղափարին, Արցախին կառչած մնացած արցախցին գնում է այն ճանապարհով, որը լուսավորելու համար իր կյանքով այրվեց ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԸ:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1992 թ., 9-ը սեպտեմբերի, թիվ 25

ԱՐՑԱԽԻ ԵՌԱԳՈՒՅՆԸ

Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության բախտորոշ պահերին գտնում է իր միայնակ հերոսին, որը կամ հաղթում է չար վիշապին, կամ էլ հափշտակվելով նրանից՝ մութ աշխարհ է տարվում, սակայն ժողովրդի սրտում ապրում է իբրև ոգեղեն մի հուշ՝ լույսի ակունքին՝ ազգային անկախությանը հասնելու ճանապարհին: Արցախյան շարժման այդ գլխավոր հերոսը դարձավ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ հանգուցյալ Արթուր Մկրտչյանը, որից այս աշխարհում մնացած ոգեղեն հուշն էլ մարմնավորվեց իր իսկ մտահղացմամբ ստեղծված Արցախի եռագույնում:

Հասկանալու համար, թե ինչպես մտահղացվեց այդ եռագույնը և ինչ պայմաններում ծնվեց ու ինչ է խորհրդանշում, հարկավոր է հիշել Արթուրի կյանքի վերջին երեք ամիսները, որոնք համընկան Արցախի դաժանագույն ձմռան հետ: Դեկտեմբերին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Նոր տարվա նախաշեմին քայքայված կայսրությունը, լվանալով իր ձեռքերը և բորբոքելով պատերազմի հրդեհը, մի կողմ քաշվեց՝ Արցախը թողնելով լիակատար ցամաքային շրջափակման, իսկ Ստեփանակերտն էլ՝ կրակե օղակի մեջ, և ավերվող քաղաքում ու աշխարհի փարիսեցիական ցավակցության մեջ Դու մարմնավորում էիր պետականությունը ոչ մեկի կողմից չճանաչված և բոլորի քաղաքական հաշիվներում որպես զոհ ընդունված պետական մի միավորի: Ծանրագույն բեռ էր ընկած ուսերիդ՝ կրել պատասխանատվությունը իր լեռները իր բնական սահմանները դարձրած ժողովրդիդ, որը, հակառակ աշխարհի հզորների կողմից միջազգային չափանիշ ընդունած սահմանների անխախտելիության սկզբունքի, ձգտում էր ջնջելով վարչաքաղաքական բաժանումները, լեռնաաշխարհագրական իր միասնությունը հաստատել Մայր երկրի հետ:

Դրոշները և զինանշանները ժողովուրդների ամենավերացարկված խորհրդանիշներն են, և Քո գծագրած դրոշում էլ մեր եռագույնն է, որի արևելյան հատվածը, սակայն, բուն դրոշից անջրպետված, գտնվում է ընդհանուր եռագույնին ձգտող եռանկյան մի սպիտակ հատվածում՝ խորհրդանշելով բուն եռագույնին՝ Մայր Հայաստանին միանալու արցախահայության ձգտումը:

Այն ծանր օրերին սոսկ գեղեցիկ մի երազ էր թվում նման մտահղացումը, բայց Դու հավատում էիր այդ երազին ու կյանքիդ վերջին օրերին մենակ էիր մնացել այդ երազիդ հետ: Մահվանիցդ երկու օր առաջ մի խեղճ ժպիտով ասացիր՝ լավ ենք մտածել, չէ՞: Նախագահական Քո սենյակում վերահաս դատապարտվածության կնիքն էիր կրում: Բացվող պատուհանից երևում էր Շուշիից ավերվող քաղաքը, դիմացը՝ հրդեհված և փլատակների վերածված հինգհարկանի բնակելի մի շենք էր, մյուս կողմը՝ երբեմնի մարզխորհուրդը, որը նախկին տարիներին իշխանությունը մարմնավորող փայլից հիմա վերածվել էր արցախյան վերքի կիզակետի՝ կենտրոնական հիվանդանոցի, ուր բերված վիրավորների տնքոցին, հողին հանձնվելու համար իրար կողքի շարված մարմինների մոտ հարազատների բարձրացրած ողբին միախառնվել էին լրագրողների լուսանկարչական սարքերի չխկչխկոցը, իրավապաշտպանների մտորումները: Լրագրողները մի «լավ կադր» էին գտել՝ նախորդ օրվա հրետակոծությունից հետո Շոշ գյուղից այստեղ փոխադրված երկու երեխաների հոշոտված մարմինները, և առանց թույլտվության նրանց ծածկող սպիտակ սավանը մի կողմ էին նետել ու հիմա տարբեր դիրքերից նկարում էին այս աշխարհում էլ ո՛չ վախեցող և ո՛չ էլ զարմացող երեխաներին: Ժողովրդիդ ցավը նրանց չէր հետաքրքրում, թերթերի տպաքանակը սպառելու համար առաջին էջերին զետեղված արյուն էր հարկավոր, շատ արյուն՝ սենսացիոն աղմուկ: Հիվանդանոցում իրենց գործն ավարտելուց հետո նրանք եկան Քեզ մոտ և հեղուկ վառելիք էին պահանջում, որ գնան–հասնեն Լենինավան, ուր նախորդ օրը տեղի էր ունեցել Մարաղայի ողբերգությունը, երբ թշնամին, ճեղքելով պաշտպանությունը, մտել էր գյուղ և սպանել մի քանի տասնյակ հայերի: Մոտդ

եկածները վախենում էին, թե կարող է հանկարծ ուշանան և մինչ իրենց նկարահանումները արդեն հողին հանձնած լինեն ողբերգության զոհերին: Դառը մի հեգնանքով ասացիր, թե այնպես են խոսում, ասես դրսում կարտոֆիլ է փչանում:

Ժողովրդիդ ողբերգության մեջ նրանք «լավ կադրեր» էին որոնում, աշխարհը՝ իր շահը՝ ավելի խորացնելով այդ ողբերգությունը, իսկ քաղաքական գործիչ ազգակիցներդ էլ՝ իրենց կուսակցական–քաղաքական հաշիվները: Քո ցավը, սակայն, ուրիշ էր, և դա Քեզ չներվեց: Քեզ չներվեց, որ օրդ անցնում էր Արցախի տարբեր գյուղերը գնալով և ոչ թե միջազգային շրջագայություններով, որ Քո միակ կողմնորոշումը հայրենիքդ չվտանգելու քաղաքականություն վարելն էր և որ Դու ո՛չ որևէ կուսակցության հավատարիմ զինվորն էիր և ո՛չ էլ որևէ շարժման պիոները: Այս պատճառով էլ հայոց Արշակ և Պապ թագավորների նման Դու էլ, շարժելով արևելքի ու արևմուտքի զայրույթը, միայնակ մնացիր՝ լքվելով նաև սեփական հաշիվներն ունեցող նախարարներից՝ այսօրվա մեր քաղաքական կազմակերպություններից:

Դժվար է ասել՝ ավերվող ու հրդեհվող քաղաքում ռազմաճակատից եկող ամենօրյա ծանր լուրերի ազդեցությամբ դողաց ձեռքդ, թե դիմացից խփողի ձեռքն էր ամուր և հարվածը՝ անվրեպ, սակայն Դու գնացիր այս աշխարհից՝ Քեզ հետ տանելով մարմնիդ բացված մի վերք և մեզ թողնելով հոգուդ երազը՝ հայրենիքիդ կոտորակված եռագույնի միացումը մայր եռագույնին:

Դու չտեսար Շուշիի ազատագրումը, մուտքը Բերդաձոր և չտեսար երազիդ իրականացումը՝ հայոց երկու եռագույններն իրար միացնող միջնորմի ջնջումը մեր զինվորների թափած նվիրական արյամբ: Բարեբախտաբար չտեսար նաև Հյուսիսային Արցախի անկումը, որի ողբերգության հնարավոր հետևանքները մինչև այժմ էլ չենք ընկալել, այլ բավարարվել ենք լոկ Մարտակերտից դեպի Ստեփանակերտ ձգվող ճանապարհին «լավ կադրերի» նկարահանմամբ:

Հիմա հեռահար հրետանուց էլի հրետակոծվում է Ստեփանակերտը, ռազմաճակատային կնիքն իր փողոցներում կրող քաղա-

քում քայլում են տանջված բնակիչները, գրավյալ վայրերից տեղահան եղածները, ճակատներում հարազատ կորցրածները, և ծանր հևքով ապրող նորաստեղծ հանրապետության մայրաքաղաքի վրա ծածանվում է Արցախի եռագույնը, և արցախահայության ու համայն մեր ժողովրդի կամքով է պայմանավորված, թե արդյոք մի օր ընդմիշտ կջնջվի՞ մայր եռագույնից արցախյան հատվածը անջրպետող սպիտակ եռանկյունին:

ԱՐ, 1992 թ., 18 դեկտեմբերի, թիվ 6

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արծվաշենի ողբերգությունը հանրապետությունում առկա քաղաքական ճգնաժամին հավելեց նաև ռազմականը: Ելք որոնելու ճանապարհին ուրվագծվում է երկու տարբերակ՝ ազգային և միջազգային: Ազգայինն ընտրելու դեպքում հարկավոր է ջոկատային–տողերքային մակարդակից անցում կատարել կանոնավոր բանակի, հանրապետությունում կարգ ու կանոնի հաստատմամբ վերջ տալ ազատ ձեռներեցությամբ ծավալված գործարար թալանին ու վարել այնպիսի մի քաղաքականություն, որը լինի ոչ թե ամերիկյան շահերի կովկասյան հավելվածը, այլ բխի մեր ազգային շահերից: Այս տարբերակը, վերածվելով հոգևոր վերածնության նախադռան, կպահանջի համայն հայության մտավոր, բարոյական և ֆիզիկական ուժերի ողջ լարումը: Երկրորդ տարբերակը արցախյան հակամարտության միջազգայնացումն է: Այն հնարավորություն կտա ավանդաբար ռուսական ազդեցության ոլորտ համարվող Այսրկովկասի գործերին միջամտել ազգային հատկանիշի հաշվառմամբ տարածքային որևէ փոփոխություն չընդունող արևմուտքին: Այս երկրորդ տարբերակից է բխում ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի նիստ գումարելու պահանջը: Այն կործանարար կարող է լինել մեզ համար, քանի որ հայանպաստ որևէ որոշման չհանգեցնելով՝ կբազմապատկի նաև Ռուսաստանի թշնամանքը: Վերջինս իր տնտեսական և քաղաքական այլազան լծակների օգտագործմամբ և Ադրբեջանի միջոցով հասցվող տարբեր հարվածներով շարունակ հասկացնելու է, թե նախկին կայսրությունը որքան էլ քանդվի, մենք դեռ երկար ժամանակ գտնվելու ենք իր ազդեցության ոլորտում: Եվ դուրս գալու յուրաքանչյուր փորձ ավարտվելու է նորանոր կորուստներով: Դրանք կանխելու համար նախ հարկավոր է հաս-

կանալ, թե ինչ տրամաբանությամբ են ընթացել վերջին այս չորս տարիների տեղահանությունները՝ Սումգայիթից սկսած: Տեղի հայությունը ավելի շատ դարձավ քայքայվող կայսրության ընդերքում ընթացող խարդավանքների, քան արցախյան հակամարտության զոհը, և ջարդերն ու դրանց հաջորդած փրկությունն էլ տեղի ունեցան քաղաքական համապատասխան սցենարով: 1988 թ. Բաքվից ու պատմական Արցախի տարբեր շրջաններից կատարված տեղահանությունն էլ դարձյալ տեղի չէր ունենում սոսկ էթնիկական հստակ սահմանագծումներ չունեցող այսրկովկասյան մի տարածքում, այլ խորհրդային կայսրությունում, և ցանկացած ջարդ ու հրկիզում երկու ժողովուրդներից առավել վտանգում էր այդ կայսրության վարկը: 1988 թ. դեկտեմբերյան դեպքերից հետո Հայաստանի ու Ադրբեջանի էթնիկական միատարրացումը ընթացավ ոչ թե երկու ժողովուրդների մղած պայքարով, այլ Մոսկվայի գծած սահմաններով:

Շահումյանում ԼՂԻՄ-ի զինվորական պարետության իրավասությունների տարածմամբ, փաստորեն, առանց որևէ վարչատարածքային փոփոխության, շրջանը միացվեց մարզին, իսկ պատմությունից Հայոց արևելյան կողմանք անվանմամբ հայտնի մնացած ողջ տարածքը, բացառությամբ Գետաշենի, հայաթափվեց: Վերջինս չընկավ ոչ միայն տեղի ժողովրդի հերոսականության շնորհիվ, այլև տեղահանության սահմանները գծողների գիտությամբ:

Գետաշենի պահպանության պատճառը մի քանի եկեղեցիներով, ինքնօրինակ խաչքարերով և ընդօրինակված գեղեցիկ ձեռագրերով հինավուրց գյուղ լինելը չէր, այլ Արցախի համար ունեցած ռազմաքաղաքական կարևորությունը: Միաժամանակ Մեղրիում էլ պահպանվեց ադրբեջանաբնակ Նյուվադին: Այս երկու գյուղերը անհրաժեշտ էին իբրև լարվածության օջախներ: Գետաշենը՝ որպես պատվար Շահումյանի շրջանին, իսկ Նյուվադին՝ վերից իշխող մի սպառնալիք մեր հանրապետությանը՝ Մեղրիով Իրանին կապվելու ճանապարհին: Կայսրության փլուզման նախօրեին Արցախի կողքին ավելորդ դարձան լարվածության այդ երկու մանրակերտերը, և Ադրբեջանին զոհաբերվեց Գետաշենը: Ամենազոր կենտրոնի թուլացումից հետո էլ, քանի որ Մեղրիի թուլացմամբ Ադրբեջանը անկառավարելի կդառնար Ռուսաստանի համար, ընդամենը մի երկու օրվա ընթացքում ադրբեջանցիները «անակնկալ» լքեցին գյուղը:

Դեռևս 1989-ին Կուշչի-Արմավիրի հայաթափվելու գլխավոր պատճառը բնակիչների դավաճան լինելը չէր: Պարզապես այս գյուղով էր ենթաշրջանը կապվում Շահումյանին: Իրադարձությունների զարգացման նույն՝ մոսկովյան վերահսկողությամբ էլ ապա իրենց տները վաճառելով՝ հեռացան Գետաշենին վերևից իշխող Ազատ և Կամո գյուղերի բնակիչները: Այսինքն՝ Մոսկվան, սեղմելով օղակը Գետաշենի շուրջը, պահպանում էր այն՝ միաժամանակ տարածքային նվիրաբերումներով ամրապնդելով Ադրբեջանի ղեկավարության հեղինակությունը ժողովրդի աչքում: Անցյալ տարվա ամռանը, այս և մեր հանրապետությանը առճակատման քաղաքականություն վարելու պատճառով պատժելու համար զոհաբերվեցին նաև Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը:

Խնդիրը միանգամայն այլ էր Բերդաձորի ենթաշրջանի և Հադրութի մի շարք գյուղերի հայաթափման պարագայում: Հիշյալ գյուղերը պատահականորեն չէին ընտրվել: Իր ներքին էությունը չփոխող կայսրության քաղաքականության նպատակը հիշյալ գյուղերի հայաթափմամբ երկրամասը առավել մեծ տարածքով Հայաստանից կտրելն էր, այնուհետև էլ մարզի ներքին հայացմանը նպաստելը: Այսինքն՝ կտրելով Հայաստանից, Արցախը դարձնել անմարսելի մի կտոր Ադրբեջանի կոկորդում:

Մոսկովյան վերահսկողությամբ էին ընթանում անգամ երկրամասում կատարվող ժողովրդագրական փոփոխությունները: Սկզբում թույլ տվեցին Բաքվից և մյուս քաղաքներից բռնագաղթածներին տեղավորվել Արցախում, իսկ Հայաստանից հեռացած ադրբեջանցիներին սկզբում արգելված էր տեղավորվելը ոչ միայն մարզում, այլև անգամ նրան հարող ադրբեջանական շրջաններում: Միայն հետո, երբ խորացան քաղաքական հակասությունները «անկախության գործընթացի ուղին» բռնած մեր հանրապետության հետ, Արցախում սկսեցին բնակվել ոչ միայն Հայաստանից հեռա-

ցած ադրբեջանցիները, այլև անգամ Միջին Ասիայից քշված թուրք–մեսխեթցիները: Մինչև 1991 թ. մայիսը բոլոր տեղահանությունները, չնայած եղած դաժանություններին, ընթանում էին Խորհրդային Միությանը բնորոշ «պետական բարձր մակարդակով», անգամ տներն էին փոխանակվում: Գետաշենից հետո պատկերը փոխվեց: Եթե մինչ այդ անձնագրային բոլոր ստուգումները և բռնությունները իրականացնում էր զինվորական պարետությունը, այնուամենայնիվ, օրինականության ինչ–որ շրջանակում, ապա Գետաշենի և այնուհետև Բերդաձորի ու Հադրութի գյուղերի տեղահանության գործողություններին սկսեց մասնակցել նաև ադրբեջանական ՕՄՕՆ–ը, և տեղահանության սպառնալիքին գումարվեց նաև ջարդերի ուրվականը: Որքան քայքայվում էր կայսրությունը, այնքան արցախահայությունն էր դառնում իր ճակատագրի տերը, բայց միաժամանակ Արցախի հարցն էլ դառնում էր ինքնիշխան Ադրբեջանի ներքին գործը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ժողովրդին այլևս չէր կարող սպառնալ և ոչ մի հայատյաց Սաֆոնով, սակայն նաև նա ու մյուս պարետները արդեն պատասխանատվություն չէին կրելու Արցախում սպասվելիք հնարավոր վայրագությունների համար: Այս իրողությունը իր նկատելի կնիքը թողեց ժողովրդի ընդհանուր հոգեբանության վրա: Երբ կար կենտրոնը, թեկուզ և հայահալած, կարելի էր նրան քննադատել տարբեր ամբիոններից, գործադուլներ անել, քաղաքացիական անհնազանդության տարբեր ձևեր ընդունել կամ փորձել հօգուտ հայերի փոխել կենտրոնական իշխանությունների վերաբերմունքը, իսկ Բաքվի պարագայում կենսունակ դարձավ միայն «ազատություն կամ մահ» կարգախոսը, որն այսօր էլ ուժի մեջ է և նշանակում է կա՛մ հաղթական ինքնապաշտպանություն, կա՛մ էլ ջարդ ու կոտորած ինքնապաշտպանության գծի ճեղքվող յուրաքանչյուր հատվածում: Այս իրողության առաջին դաժան հավաստումը դարձավ Լենինավանը, երբ Մարաղա մտած հակառակորդը սպանեց գյուղի ծայրամասային տների բոլոր բնակիչներին՝ մոտ 100 հոգու:

Խորհրդային ու ադրբեջանական լծից ազատվելու բերկրանքին գումարվեց կյանքի ու կայքի անապահովության զգացումը՝ առաջ

բերելով սպասողական մի վիճակ, որն աստիճանաբար գաղթականի հոգեբանություն էր ներարկելու իրենց տներում նստած մարդկանց: Արցախահայությունը ընդգծված ձևով այս զգացումը առաջին անգամ ապրեց Գետաշենից հետո, երբ յուրաքանչյուրը ակամա սկսեց մտածել, թե այսպես մի օր էլ իրենց են տեղահան անելու: Գրեթե դադարեց անհատական բնակարանային շինարարությունը: Այս զգացումը առավել խորացավ անցյալ տարվա ամռանը Շահումյանի երեք գյուղերի տեղահանությունից հետո, երբ գյուղացիներից շատերը չկարողացան անգամ իրենց անկողինները փրկել և նրանց մնում էր Բուզլուխին շրջակա Վերի Շենի բարձունքներից հեռադիտակներով նայել, թե խուժանը ինչպես է թալանում իրենց տները:

Համանման վիճակից խուսափելու համար Շահումյանի մյուս գյուղերում սկսեցին կապկպել թանկարժեք իրերը ու մի քանի զույգ հագուստեղեն՝ հնարավոր տեղահանության դեպքում գոնե դրանք փրկելու հույսով: Ներս մտնողին յուրաքանչյուր տուն դիմավորում էր նախասենյակում կապկպված արցախյան անկրկնելի գորգերով և կարպետներով, որոնք մեր ռազմական հաջողություններից հետո վերստին բարձրացվում և խփվում էին պատերին ու իջեցվում վիճակի հերթական սրումից հետո: Փաստորեն, մարդիկ իրենց տներում ապրելու փոխարեն այնտեղ սպասում էին, թե ինչ է կատարվելու հաջորդ պահին: Անցյալ աշնանից ավտոմատային ու գնդացրային կրակահերթերին փոխարինեց ծանր հրետանին՝ առաջ բերելով մի նոր ներքին տեղահանություն: Ժողովուրդը հարկադրաբար ապաստան գտավ համեմատաբար ապահով գյուղերում:

Սպասողական այս ծանր վիճակը իր կնիքը թողեց անգամ արթնացած պատմական հիշողության վրա, և ներկա հերոսամարտում անցյալի հերոսական դրվագների հետ զուգահեռների որոնումը փոխարինվեց գաղթի ճանապարհների վերհիշմամբ ու տարբեր սգերգերի կատարմամբ: Ասես ժողովուրդը պատրաստ էր իրեն սպասվելիք ողբերգությանը: Երբ սկսվեց ողբերգությունը, Շահումյանից Հաթերք ճանապարհին ով բեռնակիր կենդանի ուներ, կա-

րողացավ դրանց բարձած փրկել ունեցվածքի մի չնչին մասը, ով չուներ՝ տեղ հասավ երեխաներին գրկած:

Նայելով անտառից անմռունչ, իրենց ճակատագրին համակերպված դուրս եկողներին՝ զգում էիր, որ այս մարդիկ գալիս էին ոչ թե մի քանի տասնյակ կիլոմետրերից, այլ հայոց պատմության խորքերից՝ ջարդի ու փախի ճամփաներից: Եղած անասուններին էլ բարձված էր ամենաանհրաժեշտն ու նվիրականը: Ճանապարհի հացից ու անկողնուց բացի, մնացյալը գորգերը, նախշազարդ ակոսավոր պապենական հրացաններն ու դրվագազարդ իրերն էին: Գաղթի ճամփաներին հայը էլի փրկում էր իր մշակույթը և հայրենիքից մնացած հիշողությունը՝ կիրառական արվեստը: Նայելով, թե ինչ վարպետությամբ են կապկված ու իրար վրա շարված այդ ամենը, զգում էիր, որ ճանապարհ է ընկել գաղթելու հարյուրամյակների փորձ ու ավանդույթ ունեցող ժողովրդի մեկ հատվածը: Հավատարիմ իրենց խաչին՝ նրանք եկան ու տարածվեցին Ստեփանակերտի կիսավեր շինություններում, հրապարակներում: Հայրենի օջախների պատշգամբներում պտտվող իլիկը ավանդույթի ուժով իր ընթացքը շարունակեց Ստեփանակերտի հյուրանոցի միջանցքներում, մինչև կտրված թելի մի վերջին պտույտով մի կողմ ընկավ Արցախից Երևան ու այստեղից էլ նախկին Միության տարբեր կողմերը ձգվող ճանապարհին:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 13-ը օգոստոսի, թիվ 154

ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

Թե Բալկաններից մինչև Մերձավոր ու Միջին Արևելք ծավալվող ներկա խմորումներում Թուրքիան ինչ կարևորություն է ստանում ԱՄՆ-ի և Արևմուտքի համար և ինչ դեր է վիճակված նրան՝ հակազդելու միջինասիական հանրապետություններում իսլամական արմատականության տարածմանը և իր այս կարևորությամբ Արցախի խնդրում ինչպես է կարողանում ադրբեջանամետ դիրքորոշում պարտադրել Արևմուտքին ու Ռուսաստանին, արտաքին քաղաքականության նրբին ոլորտների հարց է: Այն թողնելով քաղաքագետների վերլուծությանը՝ փորձենք ցույց տալ մեր վերջին անհաջողությունների ներքին, մեզանից բխող գլխավոր պատճառը, այն է՝ ազգային բանակի կազմավորման ձգձգումը: Վերջինիս կարևորությունը ճիշտ հասկանալու համար հետադարձ մի հայացք նետենք Արցախում մարտական գործողությունների զարգացման ընթացքին: Այնտեղ քաղաքական հակամարտության աստիճանական փոխարինումը ռազմականով նախ դրսևորվեց անասնագողությամբ, բերքի փչացմամբ ու տարբեր շինությունների հրկիզմամբ և ապա՝ մարդորսությամբ: Այս փուլը կարելի է անվանել ավազակային զինված հարձակումների շրջան, երբ զինվորական պարետությունը ինչ-ինչ պատճառներով կարող էր աչք փակել կատարվածի վրա, սակայն չէր հանդուրժի նման զինված խմբերի կողմից որևէ գյուղի տեղահանություն, քանի որ դա կարող էր կատարվել բացառապես Մոսկվայի գիտությամբ՝ համապատասխան քաղաքական նկատառումներով կամ շարժառիթներով: Օգոստոսյան խռովության ճախողմանը անմիջապես հաջորդեցին իսկական մարտական գործողությունները Շահումյանում: Դրանք ծավալվեցին ոչ թե ասենք Հադրութում, ուր տեղահանված գյուղերի թիվը հասնում էր երկու տասնյակի, այլ հենց Շահումյանում՝ հայաթափված Բուզլուխ, Մա-

նաշիդ և Էրքեջ գյուղերի հետգրավմամբ, որովհետև մինչ խռովությունը այստեղ էր լուծարվել զինվորական պարետատունը և փլուզվող կայսրության բանակին այլևս ոչ ոք չէր կարող մեղադրել արյունահեղությունը չզսպելու համար: Մի քանի օրվա ընթացքում Շեֆեկ ու Ջեյվա գյուղերից սկսված հրետակոծությամբ ավերակ դարձան Կարաչինարը, Գաղթութը և Մանասաշենը: Հակառակորդի հետևակի հարձակումը սկսեց ընթանալ զրահատեխնիկայի աջակցությամբ, որին էլ նախորդում էր հրետանային նախապատրաստությունը: Նախկին կենտրոնը, թեև ելնելով իր քաղաքական շահերից, զենքի մատակարարմամբ կարող էր խեղճացնել հակամարտ կողմերից որևէ մեկին, սակայն իրենց վարած գործողություններում հիմա երկու կողմերն էլ ազատ էին: Այսինքն՝ կայսրության քայքայումը հասել էր այն աստիճանին, երբ հանդուրժելի էր ազգային մեկ միատարր շրջանի հանձնումը նրան կլանել ձգտող հանրապետությանը, սակայն այդ կայսրությունը դեռևս չէր կարող հանդուրժել իր պետական ֆեդերատիվ կառուցվածքի թեկուզ և հանրապետական մեկ միավորի՝ ԼՂԻՄ-ի լուծարումը:

Այս պատճառով էլ եթե Շահումյանում ամեն ինչ որոշվում էր փոխադարձ մարտական գործողություններով, որոնք վարողների միջև որևէ միջնորդ չկար, ապա բուն մարզում այդ միջնորդն է զինվորական պարետությունը, և վերջինիս հետ էին հարաբերվում երկու կողմերի գործողությունները: Մարզի սահմանները հսկում էին զինվորականները, և պաշտպանական գիծը դեռևս չէր վերածվել հետ ու առաջ ձգվող ռազմաճակատի գծի: Այս պայմաններում հակառակորդի խնդիրը որևէ գյուղ գրավելը ու պահելը չէր, այլ անակնկալ հարվածով հնարավորին չափ շատ մարդ սպանելը, տները հրկիզելը ու արագ հետ քաշվելը մինչև զինվորականների հասնելը:

Երկու կողմերն էլ իրենց մարտական գործողությունների ծրագրերը կազմելիս հաշվարկում էին, թե շրջկենտրոններից երբ կհասնեն զինվորական զրահամեքենաները և պատասխան կրակ կբացեն իրենց վրա: Եթե քաղաքական նկատառումներով հակամարտությունը առավել սրելու նպատակով պարետությանը երբեմն հանձնարարվում էր չմիջամտել, ապա միևնույն է՝ վերջինիս գոյությունն իսկ զսպիչ գործոն էր մեծամասշտաբ գործողությունների դեմ:

Մինչ 1990 թ. կեսերը կողմերից որևէ մեկին պատժելու համար կենտրոնական իշխանությունները պիտի փոխեին ժողովրդագրական հաշվեկշիռը Արցախում, առավել դաժան դարձնեին տնտեսական շրջափակումը կամ էլ պարբերաբար անձնագրային ռեժիմի ստուգումներով և ահաբեկումներով պարտադրեին, որ հանգուցակետային որևէ գյուղի բնակիչները թողնեն իրենց տները, իսկ տեղահանությանը օրինականություն հաղորդելու համար հարկավոր էր ձևակերպել լքվող տների «կամավոր» վաճառքը ադրբեջանցիներին, ինչպես դա արվեց նույնիսկ բացահայտ հարձակման ենթարկված Գետաշենում: 1991 թ. երկրորդ կեսից, սակայն, համանման որևէ գյուղ վերացնելու համար այդ ամենի փոխարեն բավական էր հակառակորդին տրամադրել զենիթային մեկ հրանոթ: Այն, ինչ անթույլատրելի և անպատկերացնելի էր «սովետական երկրում», միանգամայն բնական էր վերակառուցման ալիքներից տարուբերվող կայսրությունում: Անցյալ տարեվերջին էր, երբ փլվեց այն ու միաժամանակ լուծարվեց մարզային պարետությունը: Հանվեցին հակամարտ կողմերին թեկուզև խորհրդանշորեն սանձահարող Ստեփանակերտի գունդը ու Հադրութի շրջանի սահմանապահ ուղեկալը, և Արցախը միայնակ մնաց Ադրբեջանի դեմ՝ ապավինած իր լեռներին:

Սկսվեց իսկական պատերազմը, որի թեժանալը ուղիղ համեմատական էր նախկին Միության հանրապետությունների ձեռք բերվող առավել մեծ ինքնուրույնությանը: Արցախի սահմանները վերածվեցին ռազմաճակատի գծի: Հասկանալու համար, թե հակառակորդի բազում գրոհներ հետ մղած այդ գիծը, որը առաջ գնալով դարձավ Արցախը Հայաստանին կապող ճանապարհ, ինչու անակնկալորեն տեղի տվեց՝ թշնամուն հանձնելով Շահումյանն ու Մարտակերտի կեսը, հարկավոր է հետևել այս տարվա հունվարից հուլիս կատարված մարտական գործողություններին:

Կայսրության քայքայումը հանգեցրեց թե՛ բանակի հանմանը մարտական գործողությունների գոտուց և թե՛ այդ բանակի ռազմական տեխնիկայի օգտագործմանը երկու հակամարտ կողմերից, որն էականորեն փոխեց մարտական գործողությունների բնույթը: Բնակավայրերի իշխող պաշտպանական բարձունքները հրանոթների տեղադրմամբ վերածվեցին հեռահար ավերումների կետերի, որտեղից կարելի էր մինչև երեք տասնյակ կիլոմետր շառավղով հարվածել ցանկացած շինության:

Ադրբեջանը Արցախում վարում է հողը այրելու քաղաքականություն, որպեսզի ժողովրդին պարտադրի հեռանալ հայրենի երկրամասից: Այս պատճառով հրետանային պատերազմը, եթե անգամ հայկական կողմը ունենար զինական հագեցվածության միևնույն աստիճանը, ձեռնտու է բացառապես Ադրբեջանին, որովհետև եթե մինչ այդ կրակի տակ էին միայն սահմանային բնակավայրերը, և հակառակորդը զինված հարձակումներով չէր կարող ներս խորանալ, ապա այժմ ավերածությունների շառավիղը միանգամից բազմապատկվեց սլացող արկերի շնորհիվ: Իհարկե, համանման ավերածությունների սկսեցին ենթարկվել նաև Արցախի հետ սահմանամերձ շրջանները, բայց Ադրբեջանին շատ ավելի ձեռնտու էր ավերածությունների միևնույն աստիճանը ունենալ Ջաբրայիլի, Ֆիզուլու, Աղդամի, Թարթառի շրջաններում էլ, միայն թե փոխադարձ ավերումներով վերջնական արդյունքում ինքը դառնա հողի տերը:

Արցախահայությունը, սակայն, զարմանալի ու աննկարագրելի մի նվիրումով կառչեց հայրենի հողին, հողի գիրկը գնալը նախընտրեց հողը թողնելուց: Փլուզվող ու այրվող Ստեփանակերտը դարձավ խորհրդանիշը այն իրողության, թե քանի չի ճեղքվել ռազմաճակատի գիծը, Արցախը որքան էլ ավերակված, միևնույն է, կանգուն է մնալու: Երբ պարզվեց, որ այդ գիծը հնարավոր չէ ճեղքել անգամ զրահատեխնիկայի գերազանցությամբ, Ադրբեջանը հասկացավ, որ մահապարտների նվիրումով և անձնազոհությամբ կռվող ջոկատներին կարելի է հաղթել միայն տակտիկապես ունակ և գրագետ կանոնավոր բանակով:

Մինչ Շահումյանի ու Մարտակերտի անկումը, մեր ջոկատները փաստորեն հետ էին մղում հակառակորդի թեկուզև անհամեմատ լավ զինված, սակայն համանման ջոկատների հարձակումները, որոնք կռվող կողմերի դիրքերի միջև ընկած ճանապարհներով առաջ ձգվող ճակատային գրոհներ էին ու կատարվում էին մեկ կամ մի քանի ուղղություններով: Հարձակումների նման գործելակերպը ստեղծել էր պաշտպանական համանման կառույցներ՝ յուրաքանչյուրը կազմված մի քանի բնակավայր ընդգրկող գյուղախմբից:

Վարչականորեն լինելով մեկ ենթաշրջան՝ ժողովրդական բնորոշմամբ էլ այն անվանվում էր որևէ անուն կրող ձորակի գյուղեր: Ենթաշրջանը կամ ձորակը, ռազմաաշխարհագրական տեսանկյունից կազմելով մեկ ամբողջություն, որոշակի բնական կտրվածությամբ առանձնանում է հարևան ձորակից: Նրանցից յուրաքանչյուրը ուներ իր հրամանատարը և պաշտպանությունը ու լիովին արդարացնում էր իրեն ջոկատային կռվների ժամանակ: Սակայն հրավիրված զինվորական մասնագետների եռանդուն մասնակցությամբ Ադրբեջանը ստեղծեց ոչ միայն տեխնիկապես հագեցած, այլև մարտավարական ունակություններ ունեցող մի բանակ, ուր արդեն ոչ թե սոսկ կրակելով առաջ էին շարժվում մի խումբ տանկեր, այլ այդ տանկերը իրենց շարժմամբ ու տեղացող կրակի ուղղությամբ ապահովում էին հետևակի առաջխաղացումը: Հիմա ջոկատային մակարդակով հնարավոր չէր միասնական փոխկապակցված գործողություններ մղել մի քանի տասնյակ կիլոմետր երկարություն ունեցող ճակատի երկայնքով, ուր դիրքերը միաժամանակ հարձակման ենթարկվելով՝ վերածվեցին մի շղթայի: Պարզվեց, որ այնտեղ մեկ օղակի՝ դիրքի քանդումը ցրիվ է տալիս ամբողջ շղթան, ինչպես եղավ Հաթերքի ողջ ենթաշրջանի գրավման պարագայում, երբ մի տեղամասում տանկերը ճեղքեցին պաշտպանությունը, այդ ճեղքմանը հակազդող համապատասխան տեղաշարժ չեղավ, և Զարդախաչից մինչև Չափար ու Գետավան երկայն աղեղով, իրար հետևից ստիպված թողեցին դիրքերը:

Նաև երբ բանակ չկա, ռազմական պատիժները վերածվում են ինքնադատաստանի: Ջոկատների հրամանատարների հայեցողու-

թյանն է մնում որոշել, թե ինչ կերպ է հարկավոր վարվել դիրքը թողած զինվորի հետ: Այնինչ բանակում զինվորի յուրաքանչյուր քայլը կանոնակարգված է: Փորձը ցույց է տալիս, որ ամենանվիրված ջոկատներում էլ անխուսափելի են հակասությունները, տարաձայնությունները, իսկ բանակում, բնականաբար, չի կարող որևէ հակասություն լինել գնդերի կամ էլ գնդի վաշտերի միջև:

Բանակը բարձր կարգապահություն ունեցող միասնական օրգանիզմ է, որը մարտական գիտելիքներ է հաղորդում զինվորներին՝ միաժամանակ ապահովելով փոխկապակցված գործողությունները իր կազմում գտնվող բոլոր կարգի միավորների միջև՝ դասակից մինչև գունդ:

Արծվաշենի անկումը վկայում է, որ թե՛ ԼՂՀ–ն և թե՛ մեր հանրապետությունը չեն դիմանա ադրբեջանական բանակի հարվածներին, եթե, այժմ կռվող իսկական ջոկատներին զուգահեռ, զորակոչի խստագույն անցկացմամբ չդրվեն վաղվա կանոնավոր բանակի հիմքերը, ինչն այժմ ուժերի տենդագին լարմամբ փորձում են անել Արցախում: Պաշտպանության նախարարությունում ընթացող կառուցվածքային փոփոխությունները և նախարարության ղեկավարների ելույթները հույս են ներշնչում, որ թեև անչափ ուշացումով, բայց արդեն սկսվել է այս գործը, որի իրականացման համար հանրապետությունում հարկավոր է ստեղծել համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 21–ը օգոստոսի, թիվ 160

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲԻՉ ԴԵՐՆ Է

Արդարությունը այն խաչն է, որի վրա խաչում են արդարներին:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Վերջերս հաճախ է շեշտվում, թե մենք թերանում ենք լրատվական ճակատում, իսկ Ադրբեջանը կարողանում է արցախյան իրադարձությունները ներկայացնել իրեն ցանկալի ձևով և թե այս ամենը, վնասելով մեր պայքարին, նպաստում է հարևան հանրապետության քաղաքական վարկի բարձրացմանը: Մեր լրատվությունը, իհարկե, բավական կաղում է արցախյան իրադարձությունները ներկայացնելիս, սակայն մտածել, թե դրա հետևանքով է Ադրբեջանը հեղինակություն ձեռք բերում տարբեր ատյաններում՝ խոր մոլորություն է: Ոչ թե վատ լրագրությունն է արցախյան հարցում մեր միջազգային մեկուսացման պատճառը, այլ լրատվական անհաջողությունները բխում են մեր քաղաքական այդ մեկուսացումից: Արտաքին հաջող քաղաքականությունը կարող է նպաստել Արցախյան հարցի ճշմարիտ լուսաբանմանը, սակայն ճշմարիտ լրատվությունը ինքնին երբեք չի կարող վճռորոշ լինել արտաքին քաղաքականության հաջողությունների համար:

Արցախյան ողբերգությունը, որը դարձյալ ածանցյալ է մեր վարած արտաքին քաղաքականությունից, առանց վերլուծության, սոսկ նկարագրական ճշմարտացիությամբ աշխարհին ներկայացնելով ոչ միայն չենք վերականգնի արդարությունը, այլև ակամա կարող ենք ծառայել այն ուժերին, որոնք առավել շահագրգռված են նորաստեղծ հանրապետությունը Ադրբեջանին վերաենթարկելու: Այդ ուժերին ծառայող մոսկովյան հեղինակները միութենական դեմոկրատական մամուլում «Ողջ ճշմարտությունը Լեռնային Ղա-

բաբաղի մասին» վերտառությամբ տպագրված հոդվածներով մեզ վարպետորեն այն միտքը ներարկեցին, թե Արցախի հարցը կարող է լուծվել միայն խորհրդային կայսրության քայքայմամբ և Գորբաչովի հեռացմամբ: Իսկ երբ երկուսն էլ տեղի ունեցան, նրանք սկսեցին բացատրել, թե միջազգայնորեն ընդունված չափանիշներով սահմանները անձեռնմխելի են: Զինվորական իշխանությունների կատարած բռնությունների մասին գրվող հայանպաստ թվացող այդ հոդվածներում Արցախը միութենական դեմոկրատների համար միջոց էր՝ վարկաբեկելու բանակը՝ կայսրության հիմքը: Ազգային մտածողություն չունեցող և արևմտյան արժեքներով շլացած «բկլիկ ձկնիկների» նման մենք այնպես խոր կուլ տվեցինք այս խայծը, որ մեր հեռուստատեսությամբ և մամուլում իբրև բռնության խորհրդանիշ էին պատկերվում զրահաբաճկոններով և ավտոմատներով զինվորները, անգամ եթե նրանք հերթապահում էին հայկական գյուղերն իրար կապող կամուրջների մոտ, որպեսզի ադրբեջանցիները հանկարծ դրանք չպայթեցնեն:

Դժբախտաբար, մեր իրավապաշտպանները այդպես էլ չկարողացան հասկանալ, որ լեռներում զինվորական հերթապահությունն իրականացնում են ավտոմատներով ու ռետինե մահակներով և ոչ թե կոստյում հագած ու փողկապ կապած: Բոլոր նրանք, ովքեր հորդորում էին, թե վերջ տվեք հակաբանակային քարոզչությանը, թե դրանով ոչ մի մեղմացման չհասնելով՝ ավելի եք լարում զինվորականներին՝ արժանացան ՊԱԿ-ի գործակալ, կայսրության պաշտպան, անկախության թշնամի, ստրկամիտ և համանման այլ պիտակների:

Ի դեպ, մեր բարեկամներին ոչ միայն չէր հետաքրքրում մեր ժողովրդի ճակատագիրը, այլև նրանց հարկավոր էր հնարավորին չափ շատ թափվի արցախահայության արյունը, որպեսզի իրենք կարողանան ավելի վարկաբեկել բանակը: Անցյալ տարվա ամռանը, երբ Պուգոն ասաց, թե Շահումյանի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերում բնակչություն չկա, այլ միայն գրոհայիններն են, պարզ դարձավ, որ նոր տեղահանություն է սպասվում: Երբեք չեմ մոռանա, թե այդ հայտարարությունից երկու օր անց Շահումյանում իջած ուղղաթիռից ինչպես դուրս նետվեցին «Մոսկովսկիե նովոստի»-ի երկու թղթակիցները և իսկույն հարցրին՝ արդեն տեղահանությունն սկսվե՞լ է: Հավաքվածներով մի պահ հուզվեցինք՝ մտածելով, թե հանուն մեր ժողովրդի իրենց կյանքը վտանգելով եկել հասել են այստեղ, բայց շատ շուտ հասկացանք, որ նրանց հոգսը այլ է: Երկու օր խիստ անհանգիստ էին՝ ինչո՞ւ է ուշանում տեղահանությունը, իսկ երբ այն վերջապես սկսվեց, իրենց տարերքի մեջ էին: Նրբագույն սարքավորումների օգնությամբ Բուզլուխի դիմաց գտնվող Վերիշենի բարձունքներից նկարում էին գյուղ մտնող զրահատեխնիկան, երկնքում պտտվող «Կոկորդիլոս» կոչվող մարտական ուղղաթիռները և խորհրդային բանակի մնացյալ տեխնիկան: Երբ խնդրեցինք նկարել, թե ադրբեջանական ՕՄՕՆ-ը ինչպես է ծաղրուծանակի ենթարկում հեռանալ չհասցրածներին, ինչը բավական լավ տեսանելի էր մեր դիրքերից, սկսեցին տարբեր պատրվակներով խուսափել: Որոշ ժամանակ անց արդեն Երևանում կարդացի, թե՛ նրանց և թե՛ էլի մի քանի այլ դեմոկրատների տպագրած նյութերը, որոնցից կողմնակի ընթերցողն այն տպավորությունը կստանար, թե Մոսկվան զինվորների համար է գրավել այդ գյուղերը: Իսկ բուն ճշմարտության մասին, որ Բաքուն, օգտվելով առճակատման մեր սխալ քաղաքականությունից, վարպետորեն կարողացավ Մոսկվայի միջոցով իր շահերին ծառայեցնել բանակը, «մեր ժողովրդի բարեկամները», իհարկե, ոչ մի տող չգրեցին:

Համանման հոդվածներ գրեցին և մեր քաղաքական գործիչները, որոնցում արտահայտված «համարձակ» մտքերի համար, իհարկե, իրենք չվճարեցին, այլ պատասխան տվեց արցախահայությունը՝ լրացուցիչ թափված արյամբ:

Հետին թվով այս ամենը վերհիշելու կարիքը չէր լինի, եթե նման գործելակերպը չշարունակվեր նաև այսօր: Մամուլով և հեռուստատեսությամբ հիմա էլ շարունակ ասվում է, թե ԱՊՀ-ն և ռուսական բանակը նորագույն ռազմական տեխնիկա են տրամադրում Ադրբեջանին: Ո՞րն է մեղադրական այդ հայտարարությունների օգուտը: Ծիծաղելի է մտածել, թե նման փաստերից վրդովված միջազ-

գային հասարակայնությունը ճնշում կգործադրի Ռուսաստանի վրա: Աշխարհը առայժմ վախենում է միայն անկառավարելի դարձող նրա բանակից, և վերջինիս դեմ բերվող յուրաքանչյուր մերկացնող փաստ լոկ կարող է բազմապատկել մեր հանդեպ եղած ատելությունը և նախատեսվածից մի քանի ավելի ռումբ ու արկ տրամադրել Ադրբեջանին: Եթե մենք ոչ թե հակառուսական, այլ ազգային քաղաքականություն ենք վարում, հարկավոր է հասկանալ մի պարզ իրողություն. ռուսական բանակին և նրա հրամանատարությանը մենք ոչ մի կերպ չենք կարող խեղճացնել, այլ ներքին բանակցություններով և իրենց պահանջած զիջումներով լոկ կարող ենք փոխել մեր հանդեպ ունեցած վերաբերմունքը:

Միջազգային հասարակայնությանն ուղղված յուրաքանչյուր խոսքից առաջ հարկավոր է գիտակցել, որ Արցախի հարցը ո՛չ տարածքային փոփոխության և ո՛չ էլ ազգերի ազատ ինքնորոշման հարց է: Այդ երկուսն էլ սոսկ արտաքին քողարկում են: Արցախի հարցը իրականում ռուս–թուրքական շահերի ոլորտում գտնվող Հայկական հարցի մեկ մասնիկն է և շոշափում է այս տարածաշրջանի երկրների ու այս տարածաշրջանում շահ ունեցող երկրների շահերը:

Երևանում շատերը ազնիվ մի միամտությամբ կարծում են, որ եթե մենք կարողանանք աշխարհի տարբեր հեռուստածրագրերով ցուցադրել Արցախում տեղի ունեցած վայրագությունները, ապա Ադրբեջանը կտապալվի Հռոմի և համանման մյուս համաժողովներում: Այն, ինչ մենք չգիտենք կամ թաքցնում ենք ջայլամային հոգեբանությամբ ու ազգային կեղծ պատվախնդրությամբ, աշխարհը շատ լավ գիտե և գրանցած պահում է: Լաչինի ճանապարհի բացումից հետո ոչ մի տող չգրվեց, որ այդ ճանապարհը կյանքի ճանապարհ դառնալուց առաջ ամոթալի թալանի մի հրապարակի էր վերածվել անգամ Արարատյան դաշտի բնակիչների համար: Երևի մտածում էինք, թե թուրքերը մեր գրածները կթարգմանեն և կօգտագործեն: Մինչ մենք նման կենցաղային դիվանագիտություն էինք խաղում, այնտեղ արևմտյան հեռուստալրագրողները «անմահացրին» այդ թալանը՝ իր բոլոր քստմնելի մանրամասներով: Միաժամանակ նրանք նկարահանում էին Շուշիի շրջանի մնասված այն կամուրջը, որի մոտ խռնվել էին մարդասիրական օգնությունը տեղ հասցնող առաջին շարասյուների մեքենաները: Պատկերը առավել սրտաճմլիկ դարձնելու համար խնդրում էին ձեռքով հրել հսկայական բեռնատարները և պարանով քաշել բարձրացնել, որպեսզի երևա, թե ինչ տանջանքով է տեղ հասցվում օգնությունը: Երբ խոսում էի իրենց հետ, խոստովանեցին, թե միաժամանակ նկարահանում են այդ երկու հակադիր պատկերները, որովհետև չգիտեն, թե իրենց երկրները ինչ դիրք կգրավեն ճանապարհի բացման կապակցությամբ: Եթե այն լինի հայանպաստ՝ կցուցադրեն կամրջի տեսարանները, եթե բացասական՝ Լաչինի թալանը:

Երբ Անդրեյ Կոզիրևը Ստեփանակերտ էր եկել, օդակայանից ԼՂՀ ԳԽ–ի շենքը նրան ոտքով առաջնորդեցին՝ ասելով, թե բենզին չկա, որպեսզի իր աչքերով տեսնի ավերված քաղաքը: Այդ օրը երեկոյան նրա ուղեկիցներից մեկի հետ միասին, որը շրջում էր քաղաքում, պատահաբար ընկանք հրետակոծության տակ: Վերջինիս ավարտից հետո, երբ միմյանց հագուստ էինք թափ տալիս հողից և փոշուց, հարցրի. «Դուք օդակայանից գալուց երևի առավել լավ զգացիք այս ժողովրդի տառապանքը»: Արդեն անցել էին մահվան սարսափի մերձեցնող առաջին րոպեները, նա վերագտել էր իրեն և արհամարհանքով ասաց, թե իրենց հետաքրքրում է ոչ թե ստեփանակերտցիների տառապանքը, այլ Ստեփանակերտը երիզող լեռները և թե ով կլինի վաղը դրանց տերը: Ռուսական դիվանագիտությունը ում նախընտրի, նրա տառապանքն էլ կցուցադրվի հեռուստատեսության էկրաններից:

Համանման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, որոնք վկայում են, որ աշխարհը ոչ թե չգիտե մեր ցավը, այլ պարզապես մեր ցավը չի համընկնում աշխարհի շահի հետ:

Պարզապես մեր լրատվությունը արատավոր է մեր վարած քաղաքականության նման: Ինչպես վերջինս երկրի ներսում կարգուկանոն հաստատելու, ազգային բանակ ստեղծելու և կանոնավոր ազգային ինքնապաշտպանություն կազմակերպելու փոխարեն ընկղմվել է Հռոմ–Մինսկ–ՄԱԿ Բերմուդյան եռանկյունու մեջ, այնպես էլ

մեր քարոզչությունը երկրի ներքին կյանքը լուսաբանելու և ժողովրդին ազգային ոգի ներարկելու փոխարեն կամ Ադրբեջանին զենք մատակարարող բանակին է «մերկացնում», կամ էլ անիծում Արևմուտքի քար անտարբերությունը: Արտաքին քարոզչությունը, իհարկե, անհրաժեշտ է քաղաքական որոշակի նկատառումներով, սակայն լրատվության գլխավոր խնդիրը լինելու է ոչ թե աշխարհին ճշմարտությունը ներկայացնելը, այլ համայն հայությանը մեզ սպառնացող վտանգը ցույց տալը և ազգային համախմբիչ դեր կատարելով՝ Արցախի հանդեպ առավել մեծ պատասխանատվություն ներարկելը:

Վերջերս Ստեփանակերտի ռմբակոծությունից հետո քաղաքի զինվորական հոսպիտալում անվերջանալի հոսքով բերվող վիրավորներին նկարահանում էին մի քանի արևմտյան թղթակիցներ: Նկուղային հարկում է հոսպիտալը, ուր անբնական կուտակումներում իրար են խառնված լերդացած արյան, կեղտի ու եփվող ճաշերի հոտերը՝ գումարվելով մնացյալ խառնաշփոթությանը: Այնտեղ մի անգլիացի լրագրողուհու հարցրի, թե ինչ խոսքերով է այս ամենը հասկանալի դարձնելու իր հայրենակիցներին: Նա բավական սառնորեն ասաց՝ այն խոսքերով, որոնք կպահանջեն Մեծ Բրիտանիայի շահերը, իսկ այս ամենը տեսնելուց հետո ինքը մի որոշ ժամանակ զզվանքով հաց կուտի և որևէ հեղուկ կըմպի: Նա ոչ մեղավոր էր, ոչ անբարո և ոչ էլ բացառություն: Աշխարհը մեր հայրենիքից իր շահն է տանելու ու զզվանքը՝ մեզ թողնելով մեր հայրենիքի ցավը, և լրատվության խնդիրն է լինելու այդ ցավը շարունակ ներկայացնել համայն հայությանը՝ Երևանի փողոցներից մինչև աշխարհի մայրաքաղաքները:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 17-ը սեպտեմբերի, թիվ 179

ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

ՆՈՐ ՄԱՐՏԻԿԻ «ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐԸ»

Մինչև չճշտվի, թե անցյալ դարավերջին մեր ժողովրդի մղած ազգային–ազատագրական պայքարի փորձը որքանով և ինչպես է ներառվելու նորաստեղծ հայկական բանակում, մենք կամ մեր պատմությանն ենք հարվածելու՝ ժխտելով ֆիդայական շարժումը, կամ էլ այսօրվա հայկական բանակը պատմական տարազավորում է ունենալու՝ ի հաշիվ նրա տեխնիկատակտիկական ունակությունների:

Ակամա հակադրություն ծնող այս փոխհարաբերությունը քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել պատմական այն միջավայրը, ուր ծնվեց անցյալ դարավերջի շարժումը:

Այն պետականություն չունեցող ժողովրդի՝ հանուն անկախության մղվող պայքարն էր իր լեռներում, որոնք, սակայն, գտնվում էին Օսմանյան կայսրությունում, ի տարբերություն այսօրվա Հանրապետության, որը ունի թեկուզև առայժմ խոցելի, սակայն միջազգայնորեն ճանաչված սահմաններ: Անպետականության շրջանի հերոսականությունը պետականության ժամանակ կարող է վերածվել իր հակադրությանը. այսօր դրա վտանգավոր նախանշանները արդեն կան:

Հիշենք, որ ֆիդայիները լեռնալանջերին դիրքավորված վրիժառուներ էին, որոնց համախմբող միավորը հիմնականում որոշակի տեղանք վերահսկող ջոկատներն էին. անհատական–ջոկատային նման մարտավարությունը համապատասխանում էր թե՛ Արևմտյան Հայաստանի լեռնաաշխարհագրական պայմաններին և թե՛ իրենց դեմ կռվող օսմանյան բանակի զինվածության մակար-

դակին: Բնական ամրությունների վերածված լեռներում, երբ վերևից չէր սպառնում օդուժը, հրետանին նախնական վիճակում էր, ու հետևակի առաջխաղացումը ապահովող զրահատեխնիկա չկար, բարձունքներից կարելի էր դիմադրել առաջ շարժվել փորձող հակառակորդին:

Պայքարի հենց այս կերպն էլ մինչև անցյալ տարվա վերջը հաջողությամբ կիրառվում էր նաև Արցախում: Ինքնապաշտպանական այս համակարգը, սակայն, փլվեց, երբ հակառակորդը սկսեց կիրառել ծանր տեխնիկա, ու ԼՂՀ-ի վրա հարևան շրջաններից կատարվող ավազակաբարո հարձակումները փոխարինվեցին ադրբեջանական բանակի գրոհներով: Ի դեպ, Արևմտյան Հայաստանի նման այստեղ էլ պաշտպանական գիծը առաջինը ճեղքվեց հարթավայրում. այս տարվա գարնանը հակառակորդը կարողացավ մտնել Մարաղա և Մարգուշավան: Այս իրողությունն էլ Արցախին պարտադրեց ստեղծել ինքնապաշտպանության իր ուժերի կենտրոնացված համակարգը՝ զորանոցային կյանքով ապրող վաշտերով, որոնք արագ արձագանքման սկզբունքով իսկույն օգնության էին շտապում ռազմաճակատի անհրաժեշտ հատվածները: Բանակը կռվում է այնտեղ, ուր իրեն ուղարկում են, իսկ տեղային ինքնապաշտպանության ջոկատներն իրենց հայրենի գյուղերն են պահում, և պատահական չէ, որ այժմ ռազմաճակատի ողջ ծանրությունը իրենց ուսերին են կրում հենց Ստեփանակերտի հիշյալ վաշտերը, իսկ Շահումյանի և Մարտակերտի տեղային ջոկատների մի մասը պարզապես ցրիվ եկավ իրենց գյուղերի կորստից հետո:

Յուրաքանչյուր պայքար ստեղծում է իր ներքին յուրահատկություններով պայմանավորված համապատասխան հոգևոր-մշակութային արժեքներ և միջավայր: Ֆիդայական շարժումը ծնեց ժողովրդային ընկալմամբ անհատականացված հերոսների կերպարները: Ազգային պետականությունը, սակայն, պարտադրում է ստեղծել հայրենիքի զինվորի հավաքական կերպարը, և որքան ուժեղ է պետությունը, այնքան ավելի ընդհանրական է այդ կերպարը:

Երգն ու կռիվը անբաժան են իրարից, և մեր կռվի երգն էլ է եղել ֆիդայական շարժման նման անհատականացված: Այն ոչ միայն

նվիրվել է ընկած հերոսներին, այլև մեծամասամբ ստեղծվել անհատականորեն երգելու համար: Դրանք հերոսական, ազգային ապրեցնող ոգի ներարկող երգեր են, բայց ոչ բանակային, ու արհեստական են հնչում զինվորական շարային քայլքում: Խորհրդային բանակում անունների փոխարեն հիշվում էին բանակային տարբեր միավորների հրամանատարները, և յուրաքանչյուր զորամասում «Մեր վաշտի ավագը շքանշաններ ունի» և համանման տողերը անհատականացվում էին հանձին իրենց հրամանատարի: Վերացարկումը հասել էր այն աստիճանի, որ շնչավորվում էր անգամ «Կատյուշան»՝ ժամանակի հրետանային սարսափը:

Բանակի գաղափարական հենքը արտաքուստ հասարակ և ամենօրյա զինվորական պարապմունքների մղող նման գործերն են և ոչ թե հերոսական սգերգերը: Ի դեպ, ցարական բանակում ևս առաջնությունը տրվում էր զինվորի հավաքական կերպարը մարմնավորող երգերին: Հատկանշական է, որ ռուսական պետության կայացմանը զուգընթաց, նահատակված հերոսներին նվիրված պատմական սգերգերը փոխարինվեցին նոր հողեր նվաճող հերոս կազակի հավաքական կերպարով:

Հարկավոր է հաշվի առնել նաև, որ կռվի երգը բոլոր ժամանակներում ուղիղ համեմատական է եղել գործածվող զինատեսակների ռիթմին: Անցյալ դարավերջի մեր երգի չափը չախմախավոր հրացանի ու մոսինի հատ-հատ կրակոցների ռիթմն էր, որը չի համապատասխանում այսօրվա ինքնաձիգների կրակոցների հաճախականությանը, ու այսօրվա զինվորի համար երգերը գրվելու են այդ չափի հաշվառմամբ: Հատկանշական է, որ այս պատերազմում հատկապես միջին տարիքից վեր մարտիկները ինքնաձիգի փոխարեն միշտ նախընտրում էին կարաբինը, որովհետև վերջինիս հատ-հատ լիցքավորումը համընկնում էր իրենց ապրած գյուղական կյանքի ռիթմին ու պայքարի պատմական ընկալմանը: Իրենց հայրենի գյուղերի այդ պաշտպանները, երբ դրվագազարդ ակոսավոր հրացաններով դիրք էին մտնում, ասես տեղափոխվում էին անցյալ դարավերջ՝ դառնալով հին երգերի նորօրյա կրողները, ու ֆիդայա-

կան երգերը կենդանանում էին՝ տեղայնանալով ժողովրդական նոր միջավայրում:

Բանակային երգը, սակայն, որքան էլ սրտամոտ լինի ամեն զինվորի, ժողովրդական նման միջավայրից չի ծնվելու՝ զանազան շրջաններում համապատասխան տեղայնացումների ենթարկվելով, այլ նույնն է լինելու բոլոր զորանոցներում: Դժբախտաբար, այս ամենը չդիտարկվեց ու չուսումնասիրվեց ազգագրագետի, մշակութաբանի և մյուս մասնագետների աչքերով: Մեր երգահաններն էլ բանակային երգերը գրելիս, երաժշտական ավանդներից բացի, պիտի հաշվի առնեն ռազմական տեխնիկայի ու նրանով պայմանավորված բանակային ժամանակակից կառուցվածքների թելադրած յուրահատկությունները:

Երբ քննարկվում է, թե ինչպիսին է լինելու այսօրվա հայկական բանակը, հարկավոր է նախ հիշել, որ 1918 թ. հանրապետությունում այն ստեղծվեց ռուսական բանակի հիմքի վրա և հրամանատարական միջուկը կազմեցին այնտեղ ծառայած կադրային հայ զինվորականները, որոնցից շատերը թեև անգամ հայերեն չգիտեին, սակայն տիրապետում էին զինվորական գործին: Նույն համաբանությամբ էլ այսօրվա մեր բանակն է խարսխվելու նախկին կայսրության հիմքի վրա: Համաշխարհային փորձի ներառմամբ էր շարունակ կատարելագործվում վերջինիս բանակը, և այն Լենին պապիկի արձանը չէ, որ հեյ գոռալով հանենք պատվանդանից ու նետենք: Հարկավոր է օգտագործել ոչ միայն այդ բանակի տեխնիկան, կառուցած շինություններն ու հանդերձանքը, այլև ունենալ այդ բանակին բնորոշ համազգեստի պատվախնդրությունն ու պահվածքը: Միաժամանակ, անցյալ դարավերջին մղած ազգային–ազատագրական պայքարի ոգին էլ հարկավոր է ներարկել մեր բանակին՝ դարձնելով նրա ներքին էությունը, որպեսզի հայրենիքի համար ընկած ֆիդայիները լինեն այսօրվա զինվորի բարոյական չափանիշը:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 29-ը սեպտեմբերի, թիվ 187

ՄԱՐՏՈՒՆԻՆ ՄԻ ՔԻՉ ՇՈՒՆՉ ԿՔԱՇԻ

ԵՐԵԿ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ԱՐՑԱԽԻՑ

Այս տարվա գարնանը պարզ դարձավ, որ կամ Շուշին պետք է ընկնի, կամ էլ Ստեփանակերտը: Գնալով ակնհայտ էր դառնում նաև, որ կամ Մարտունի շրջկենտրոնը պետք է հարատևի, կամ էլ նրան կլանելու են Ամիրանլար, Կուրոպատկինո և Մուղանլու գյուղերը, եթե չլռեցվեն այնտեղի կրակակետերը: Ի տարբերություն Արցախի մյուս բնակավայրերի, որոնք պարբերաբար հրթիռակոծվում են հեռահար հրետանուց, Մարտունին ենթարկվում էր գնդացրային և անգամ ավտոմատային կրակի հիշյալ երեք գյուղերից, հատկապես Ամիրանլարից: Վերջինիս դիմահայաց Մարտունու բնակելի թաղամասերի տների երկաթյա դարպասները ծակծկված էին ոչ միայն պայթող արկերի բեկորներից, այլև ավտոմատային կրակահերթերից: Միաժամանակ, Ֆիզուլու կողմից այստեղ էին կենտրոնացվում շրջանին սպառնացող ուժերն ու ծանր տեխնիկան: Դրանից բացի, Մարտունու հարթավայրային շրջանի խաղողի և ցորենի լավագույն ցանքատարածությունները գտնվում էին շարունակական կրակի տակ, ու որքան ընդլայնվում է զինատեսակներից տեղացող կրակի շառավիղը, այնքան մեծանում են անմշակ հողատարածությունները: Շուշիի նման այստեղ էլ կյանքը պարտադրեց համապատասխան գործողությունների դիմել, և հոկտեմբերի 1–ին, երբ ավարտվեցին գիշերային հերթական վայրենի հրետակոծումները, հայկական ինքնապաշտպանության ջոկատներն անցան պատասխան հակահարձակման և ընդամենը երկու ժամվա ընթացքում իրենց վերահսկողությունը հաստատեցին այնտեղ: Կեսօրին, շրջելով երեք գյուղերում, դժվար էր հավատալ, որ այստեղից շա-

ռունակ մահ է սփռվել: Սակայն այդ էին հաստատում տարբեր տեղերում իրար վրա կուտակված ավտոմատի և գնդացրի կրակված պարկուճները և արկերի դատարկ արկղերը: Շուտով գտնվեց նաև մի քանի միավոր հեռահար և հակաօդային հրետանի, ինչպես նաև S–72 զրահապատ ծանր մի տանկ, որը «հրաժեշտի» համազարկ տալով այրված իր եղբոր մոտ՝ շարժվեց առաջ:

Արցախի ինքնապաշտպանության ուժերի ձեռքին գտնվող զրահատեխնիկայի զգալի մասի պատմությունը արտացոլում են նրանց վրա դաջած նշանները: Բոլորից հինը և արդեն խունացածը կարմիր աստղն է: Նրա հարևանությամբ արդեն ավելացել է ադրբեջանական եռագույնը, որի կողքին իր անբաժանելի տեղն է գրավել նաև լունի մահիկի ներքո թուրանական անապատներից եկող ոռնացող գայլը՝ խորհրդանիշը պանթուրքիզմի և համաթուրանականության: Աստղով սկսված և դրոշով ու լուսնով շարունակվող շղթան, որի վերջին երկու օղակների վրա երկայնքով ջնջման գծեր են քաշած, ավարտվում է հայկական Եռագույնով՝ խորհրդանշելով տանկերի վերջին պատկանելությունը: Վերցված այս տանկն էլ գնում էր Եռագույնով դրոշմվելու, ու մինչ այդ շղթայի նախորդ երեք օղակների վրա հաղթականորեն ծածանվում էր մեր ազգային դրոշը:

Մարտից դեռևս չհանգստացած զինվորներն սկսեցին պաշտպանական նոր դիրքեր փորել: Հայրենիքի ազատագրման և անկախության համար մղվող պայքարում թերևս մեծագույն բերկրանքներից մեկը դեպի առաջ շարժվող ռազմաճակատի գծում նոր բնագծերի ստեղծումն է, իսկ ամենասրտամաշը՝ նահանջելիս խրամատներ փորելը, երբ խրամատից դուրս թափվող հողը ասես հորդացող արյան շիթ լինի հայրենիքի մարմնի վրա բացվող վերքից: Հիմա վիճակն այլ է, ու հեշտ էին փորվում նոր դիրքերը: Դրանք դեռևս չավարտված՝ սկսվեցին օդային հարձակումները և հեռահար հրետակոծումները փորվող դիրքերի վրա: Թշնամին լռեցվեց հենց իրենից գրավված տեխնիկայով:

Մինչ այդ մութը ընկավ, և արդեն դժվար էր կողմնորոշվել՝ ճանապարհներից որն էր ականապատված և որը՝ ոչ, ու այս մեծ հաղթանակը անտեղի կորուստներով չմթագնելու համար որոշվեց. երեք գյուղերն իրար միացնող ճանապարհից հեռու գտնվողները կսպասեն մինչև առավոտ: Նման մի ջոկատի հետ մնացինք Մուղանլիում:

Ողջ օրվա ընթացքում նկատելի էր, որ թշնամին կրակը, դիրքերից բացի, կենտրոնացրել էր գյուղերում և շրջակայքում գտնվող մի քանի կետերի վրա: Դրանցից մեկը, պարզվեց, վառելիքի պահեստ է, մյուսում կար մեծ քանակությամբ զինամթերք, իսկ «Գրադի» այրող արկերից բոցավառվող երկհարկանի մի շինություն էլ Մուղանլուի շտաբն էր: Արդեն փլվում էր երկրորդ հարկի գերանակապ տանիքը, և հնարավոր չեղավ հանել այնտեղ պահվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև ընտրել առավել կարևորագույնները:

Եղածը հավաքելով՝ լույսը բացվելուն պես վերադարձանք Մարտունի: Այստեղ բերված S–72–ի շուրջ արդեն շրջան էին կազմել գրավված տարբեր տրամաչափի հրանոթները, իսկ առանձին երկու սենյակներում էլ հավաքվում էր բերվող զինամթերքը՝ ավտոմատները, հակատանկային նռնականետները և նրանց լիցքերը: Այստեղ նայելով բերված թղթերը՝ ադրբեջանական բանակի զինվորների ինքնակենսագրությունների, բնութագիրների, բժշկական քննությունների ընդհանուր խրձում գտնվեցին նաև մի քանի կարևոր ու հետաքրքիր փաստաթղթեր՝ ստորագրված Ադրբեջանի պաշտպանության նախարարի և Ֆիզուլու շրջանում տեղակայված 702 զորամասի հրամանատար Կասիմովի կողմից: Վերջինիս հունիսին ստորագրած մի փաստաթղթից պարզվում է, որ հաշվի առնելով այս գյուղերի բացառիկ կարևորությունը՝ Մարտունու շրջանը գրավելու համար, երեք բնակավայրերից էլ դուրս է բերվել քաղաքացիական բնակչությունը և կարգադրվել առանց մուտքի անցաթղթի ոչ ոքի չթողնել այնտեղ: Զորամասի զինվորներին ուղղված նույն Կասիմովի հունիսի 4–ի թիվ 84 հրամանում էլ ասվում է. «Մեր սկզբունքն է՝ ոչ մի քայլ հետ, և այդ պահանջը պետք է անխոս կատարվի»: «Հույժ գաղտնի» մակագրությունը կրող այս փաստաթղթերը Մարտունու շուրջ ծավալվող դեպքերն արտացոլող մի յուրօրինակ ժամանակագրություն ասես լինեն: Հուլիսի 14–ով թվա-

գրված հաջորդ հրամանում էլ գրված է, թե իրենց կողմից սպասվելիք մարտական գործողությունների պատճառով ևս 4 ամսով երկարաձգվում է այդ զորամասում գտնվող երկամսյա հավաքի մասնակիցների ծառայությունը: Օգոստոսի 5-ի հրամանագրում կարդում ենք, թե զորամասն անցնում է մարտական բարձր պատրաստության վիճակի, և երկարացվում են ժամանակավոր հավաքի կանչվածների ծառայության ժամկետները: «Առաջիկա հարձակումը», սակայն, տեղի չի ունենում զորամասում տիրող ընդհանուր բարոյալքության պատճառով: Այն կանխելու նպատակով զորամասի հրամանատարը ստիպված դիմում է նյութական «խթանիչների»՝ հրամայելով ծառայության համար նախատեսված ողջ գումարից զրկել զորամասից առանց թույլտվության հեռացողներին: Այս, ինչպես նաև պաշտպանության նախարարի ներքին փակ օգտագործման համար տրված փաստաթղթերը, կարծում ենք, անգնահատելի արժեք ունեն, որոնց ամբողջական հրապարակումը անչափ հետաքրքիր կլինի և ուսանելի՝ շատ հարցերում ճիշտ կողմնորոշվելու համար:

Այստեղ հանդիպեցինք նաև շտաբ բերված երեք գերու, որոնցից մեկը եղեգնաձորցի էր և ավելի լավ հայերեն էր խոսում, քան իր ընկերները՝ ռուսերեն: Ի տարբերություն նրանց, որոնք հայացքներին հրեշտակային անմեղություն հաղորդած՝ փորձում էին ապացուցել, որ իրենց զենքի ուժով են բերել, նա անկեղծորեն ասաց, թե Հայաստանից գնալուց հետո թափառականի կյանքով է ապրել: Դրամ է հավաքել ընդունված կարգով մինչ ամուսնանալը աղջկա գլխագինը տալու համար, բայց մինչ անհրաժեշտ գումարի գոյանալը դրամը արժեզրկվել է, ինքը հնարավորություն չի ունեցել նոր գինը տալու և որոշել է մի քանի ամսով գալ այստեղ ու կռվել, որի շնորհիվ հույս ուներ հավաքել թե՛ գլխագնի համար պակասած և թե՛ տնային իրերի համար անհրաժեշտ գումարը:

Մինչ նա ողբում էր ուրիշների ընտանիքները դժբախտացնելու հաշվին իր ընտանեկան երջանկությունը կառուցելու անհաջող փորձերը, մենք, հաղթահարելով վերջին երկու օրերի հոգնածությունը, դուրս եկանք շրջելու Մարտունու փողոցներում, որոնց անդորրը այլևս չէր խախտվում ռազմականացված այս երեք բնակավայրերից տեղացող կրակով, ու նայելով աստիճանաբար կենդանացող քաղաքին՝ ուզում ես հավատալ, որ մի օր ծագող արեգակի շողերի ներքո լույսը նման խաղաղությամբ կծագի ողջ Արցախ աշխարհում:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 7-ը հոկտեմբերի, թիվ 193

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՔԱՀԱՆԱՆ

1918 թվին բնական ամրություններ ունեցող բերդաքաղաքներ հանձնելուց հետո հայ ժողովուրդը կռվեց և հաղթեց բաց դաշտում՝ Սարդարապատում, որովհետև թիկունքում Էջմիածինն էր, որը միայն քառակուսի կիլոմետրեր ընդգրկող տարածություն չէր, այլ Արարատի հովանու ներքո փռված հայոց պատմություն և ճակատագիր:

Հայոց երկրորդ փոքր պետությունն էլ ունի իր փոքր Արարատը՝ Մռավը, իր Արաքսը՝ Խաչենագետը, և իր հոգևոր կենտրոնը՝ Գանձասարը: Պատմական նորօրյա անդրադարձումով էլ Հյուսիսային Արցախի անկումը, Մարտակերտի մայրուղով օձագալար ձգվելով, եկավ և հասավ մինչև Գանձասար: Վիշապի նման պատելով դիմացի անտառը՝ չկարողացավ առաջ գալ ու հիմա իր թույնն է թափում տեղացող հրետանային կրակով:

Յուրաքանչյուր հոգևոր կենտրոն բոլոր ժամանակներում ունեցել է իր նվիրյալը: Հանձինս տեր Հովհաննես քահանայի, Գանձասարն էլ ունի այսօրվա իր նվիրյալը: Ծնվել է 1963 թ.: Ավարտել է Վանք գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ գյուղատնտեսական տեխնիկումը և աշխատանքի անցել հարազատ գյուղի տնտեսությունում: Միշտ էլ մի ներքին երկյուղածությամբ ու ակնածանքով է նայել վերևից իր ծննդավայրին՝ Խաչենագետի հովտին ու ողջ Արցախ աշխարհին իշխող Գանձասարին, բայց չի մտածել, թե արցախյան շարժմամբ իր ճակատագիրը կապվելու է Հայոց Արևելյան կողմանց հոգևոր կենտրոնի հետ: Արցախի թեմի ստեղծումից հետո Գանձասարի վանահայր նշանակվեց Միքայել վարդապետը (2001 թվականից՝ Միքայել եպիսկոպոս Աջապահյան — հեղինակ): Ինքը հաճախ էր գալիս վանահոր մոտ, զրուցում:

Հետաքրքրվում այն ամենով, ինչից ինքն ու մեր ժողովուրդը զուրկ էին մնացել նախորդ տասնամյակներում: Զգալով նրա սերն ու նվիրումը՝ հայր Միքայելը խորհուրդ է տալիս անցնելու հոգևոր ծառայության՝ ասելով, թե առավել նպատակահարմար կլինի, որ վանքի քահանան տեղացի լինի: Անցնող երեք տարիները վկայեցին, որ վանահայրը չէր սխալվել իր ընտրությունում: Հրանտը 1990 թ. ընդունվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից լսարանը: 1992 թ. հունվարի 19–ին ձեռնադրվում է սարկավագ, իսկ փետրվարի 23–ին՝ քահանա՝ ընդունելով Հովհաննես անունը, որի ընտրությունը պատահական չէր: Համաձայն մեր եկեղեցու ավանդության՝ 1211 թ. Զալալ Դոլի իշխանը Արցախ է բերում Հովհաննես Մկրտչի հատած գլուխը և այն «ամփոփելով, վրան զարմանաշեն ու հրաշազան կաթողիկե եկեղեցի կառուցեց ի փառս Քրիստոս Աստծո և իր անվանակոչությանը, Գանձասարի Սուրբ Հովհաննես անվանակոչվեց»: Այս պատճառով էլ ձեռնադրվելուց հետո ինքն էլ է ընտրում Հովհաննես անունը: Քահանայական քառասնօրյա պահեցողությունից հետո հոգևոր ծառայության է անցնում Արցախի թեմում: Իր առաջին պատարագը մատուցում է ապրիլի քսանվեցին: Եթե հայ քահանա լինելը դժվար է և պարտավորեցնող, ապա կրկնակի պարտավորեցնող է քահանա լինելը Գանձասարում, ուր փայլատակել է մեր հոգևորականության մի ողջ համաստեղություն, ու եռակի դժվար և պարտավորեցնող է այսօր Գանձասարում քահանա լինելը, որովհետև պատերազմական ներկա պայմաններում հակառակորդը լավ է գիտակցում, թե այն ինչ կարևորություն ունի տեղի ժողովրդի համար:

Վանք գյուղը բազմիցս գնդակոծվել է հեռահար հրետանիով: Այս տարվա հունիսյան ծանր օրերին մի քանի ուղղությամբ հարձակվող հակառակորդը կարողացավ անգամ դուրս գալ Վանքի թիկունքը և փակել նահանջի ճանապարհը՝ Ստեփանակերտ տանող մայրուղին: Այս ենթաշրջանի գյուղերի կանանց ու երեխաներին ուղեկցող ջոկատներով բարձրացրին շրջակա լեռնալանջերի անտառները, ուր դարերի ընթացքում մեկ անգամ չէ, որ թշնամա-

կան հարձակումներից պաշտպանվել է ժողովուրդը, իսկ տղամարդիկ շարունակել են կռվել, և երեք ուղղությամբ ծավալված գրոհը ետ է մղվել: Հետագայում ևս կրկնվեցին նման գրոհները, պահեր եղան, երբ համարյա ամայացավ գյուղը, սակայն տեր Հովհաննեսը միշտ այնտեղ էր՝ Գանձասարի կամարների ներքո: Ինչպես ինքն է ասում, այդ ծանր պահերին իր կյանքից առավել իրեն մտահոգել է այստեղ եղող նվիրական շիրիմների ճակատագիրը, որ թշնամին հանկարծ չկոխկռտի դրանք՝ տրորելով այստեղ ամփոփված Աղվանից կաթողիկոսների՝ մեր եկեղեցու մեծ հայրերի և մասնավորապես հայոց պատմության նոր շրջանի ազգային ազատագրական պայքարի ջահակիր Եսայի Հասան-Ջալալյանի երազը՝ Արցախը միավորված տեսնել ռուսական մեծ պետության հետ: Գտնում է, որ պարտության դեպքում մենք ինքնարդարացումի ոչ մի խոսք չենք կարող գտնել յոթից ավելի դարեր կանգուն տաճարի առջև և որ յուրաքանչյուր ճշմարիտ քահանա իրավունք չունի թողնելու իրեն վիճակված վանքն ու եկեղեցին, այլ նահատակվելու է նրանց մուտքի կամ բեմի առջև, որովհետև խոսքը գործ է դառնում թափվող արյամբ:

Մարտակերտի շրջանի մի զգալի մասի անկումից հետո ռազմաճակատի գիծն այժմ անցնում է Վանքից ընդամենը մի քանի կիլոմետր այն կողմով՝ Առաջաձորի ենթաշրջանի բոլոր գյուղերը դարձնելով ռմբակոծության ենթարկվող ճակատային գիծ: Բնակչությունը տեղաբաշխված է առավել ապահով վայրերում, իսկ բնակավայրերում մնացել են միայն զենք վերցրած իրենց ծննդավայրի պաշտպանները: Ծանր է շրջել դեռևս մի քանի ամիս առաջ ծաղկուն ու շեն այս գյուղում: Ամայի է նաև Վանքից դեպի Գանձասար ձգվող այս ճանապարհը: Արցախյան շարժումից հետո, երբ վերաբացվեց Գանձասարը, կիրակնօրյա պատարագներին այստեղ էին հավաքվում Արցախ աշխարհի բոլոր կողմերից: Հիմա գրեթե դատարկ է վեր բերող ճանապարհը, սակայն յուրաքանչյուր կիրակի տեր Հովհաննեսը հագնում է պատարագիչ քահանայի հանդերձները: Ինչպես ինքն է ասում. «Անկախ ժողովրդի

ներկայությունից մենք պատարագ ենք մատուցում առ Աստված ժողովրդի համար և մենք ժողովրդի տեղն էլ ենք աղոթում»: Երեկոյան ժամերգություններին գմբեթի ներքո արձագանքում է ոչ միայն տեր Հովհաննեսի ձայնը, այլև գնդացրային և ավտոմատային կրակի ճարճատյունը: Բարեբախտաբար, հեռավորությունը այնքան է, որ եկող փամփուշտները տեղ չեն հասնում, այլ անզոր թափվում են վանքի պարսպից այն կողմ: Սակայն Վանքը հանգիստ չունի տեղացող արկերից: Հակառակորդի թիրախն է դարձել Գանձասարի գմբեթը, որի կողքից սուրալով անցնում են արկերը: Նույն բարեբախտությամբ էլ նրանցից ոչ մեկը չի դիպել Արցախի մայր գմբեթին: Տեր Հովհաննեսի բնորոշմամբ՝ կարծես Աստծու հրեշտակները շեղում են եկող արկերը: Յուրաքանչյուր նման պայթյունից հետո ցիրուցան եղող ծառերի կոտրատյունով ոչ միայն անտառն է տնքում, այլև Գանձասարն է խուլ արձագանքում: Ասես դողում են տաճարի սրբատաշ պատերն ու սալահատակը, բայց վանքը չի խոնարհում գլուխը՝ գմբեթը իր ճառագող խաչով: Հրետակոծությունից վնասվել է լոկ վանքը երիզող պարիսպը, բայց պատմական բուն համալիրին ոչինչ չի եղել, ու վանքի պաշտպանները վստահեցնում են, որ ռազմաճակատի գիծը այնքան առաջ կմղեն դեպի նորաստեղծ հանրապետության սահմանները, որ էլ ոչ մի արկ չի խախտի այստեղի իմաստալից լռությունը:

Այսօր Արցախում մնացած տղամարդկանց, անկախ իրենց զբաղմունքից, ճակատագիրը դարձնում է հայրենիքի զինվորներ: Այս նույն պարտադրանքով տեր Հովհաննեսը դարձավ թե՛ քահանա և թե՛ զինվոր. առավոտյան ժամերգությունից՝ դիրքերը և դիրքերից՝ դեպի երեկոյան ժամերգություն ու հսկում, և այսպես շարունակ: Գանձասարի աներերության հանդեպ հավատն այնքան մեծ է, որ այստեղից չեն հանվել անգամ վանքի սրբությունները: «Հայոց գետերն օտար կամուրջներ չեն հանդուրժում» թևավոր դարձած խոսքի համաբանությամբ էլ նա ասում է, թե Գանձասարի գմբեթը օտարի հովանի չի հանդուրժի և օտարի առջև չի խոնարհվի:

Վստահ է, որ եթե անգամ մենք չկարողանանք պահպանել Գանձասարը, ապա վանքը կպահի մեզ, ու որքան էլ, չդիմանալով նեղություններին, հեռանանք, միևնույն է, յուրաքանչյուր կոթող աղոթում է մեզ համար, և այդ աղոթքից ծնված կարոտը ետ է բերելու բոլոր հեռացածներին ու բոլորիս դարձնելու է Արցախը պահող մի բռունցք թշնամու դեմ:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1992 թ., 21-ը հոկտեմբերի, թիվ 30

ՄԱՀՎԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

Շուշիի գրավմանը հաջորդած համեմատական խաղաղության մի քանի շաբաթներին թվում էր, թե չար երազի նման անցել են նկուղային կյանքի օրերը, և այս աշխարհի արևը նաև Ստեփանակերտի երեխաների համար է: Սակայն շուտով քաղաքի երկինքը լցվեց ռմբակոծող ինքնաթիռների ոռնոցով: Հակաօդային պաշտպանության հստակ համակարգի ստեղծումից հետո, երբ հնարավոր դարձավ խփել Արցախի տարածքը ներխուժող թշնամական ինքնաթիռները, հակառակորդը դիմեց 152 միլիմետրանոց հեռահար հրետանուն. սկսվեցին կույր ռմբակոծումներ, որոնք առանձնակի ուժգնությամբ շարունակվեցին անցյալ շաբաթվա ընթացքում: Ռազմաճակատի ողջ երկայնքով, ընկրկելով Արցախի բանակի ստորաբաժանումների առջև, հաջողության հասնելու իր վերջին հնարավորությունն է սա համարում թշնամին, և Աշոտ Բլեյանին այնքան սիրելի «լույսի աշխարհից» եկող արկերը ակոսում են «խավար աշխարհի» հողը:

Մինչ պայթելը մոտ տասը վայրկյան, որ մի հավիտենություն է թվում, լսվում է օդը ճեղքող սուլոցը, ապա հաջորդում է պայթյունը: Այդ վայրկյաններին բնազդային մի լարումով պետք է հասցնես ճիշտ կողմնորոշվել՝ մոտակա շինության մեջ նետվել կամ գետնին պառկել: Եթե շենքի ներսում ես, հողի ցավը զգում ես ցնցվող պատերից, իսկ եթե դրսում պառկած ես՝ անգամ ասֆալտի տակ զգալի է ներսից եկող հողի տնքոցը, որից մեկ անգամ ևս ցնցվում ու փշրվում են նախորդ հրետակոծությունների ժամանակ շենքերի պատուհաններից վայր թափված ապակիները: Անկախ նրանից, թե

ռումբերը քաղաքի որ մասում են պայթում, միևնույն է՝ շրջակա բոլոր թաղամասերում էլ փշրվում են մնացյալ վերջին ապակիները: Դրանց տեղը նորերը չեն գցում, այլ պատուհաններին թափանցիկ մոմլաթ են խփում: Վերջիններս թեև պայթյունին հաջորդող օդային հարվածից ուռչում են, սակայն չեն պատռվում:

Յուրաքանչյուր նոր զինատեսակի կիրառումը բազմաթիվ նոր զոհեր է տանում, մինչև ժողովուրդը յուրացնում է պաշտպանվելու հնարավոր արդյունավետ եղանակը: Այդպես սովորեցին զրահատեխնիկայի աշտարակներց խփվող արկերին, «Ալազանին», «Գրադին», օդային ռմբակոծություններին: Հիմա էլ 152 միլիմետրանոց հեռահար հրանոթների արկերի բացած ձագարաձև փոսերն ու ցրվող բեկորների շառավիղն են հուշում, թե պաշտպանական ինչ միջոցների է հարկավոր դիմել: Արդեն փլատակների վերածված շենքերի երկաթբետոնե կառուցվածքներով, հողե ու ավազե պարկերով ծածկում են մայթերը՝ որպես հարվածն իր վրա կրող պաշտպանական շերտ՝ դեռևս կանգուն տների համար: Այդ շերտի մեջ մխրճվելով՝ արկերի ավերիչ ուժը փոքրանում է: Դրսում գտնվողներն էլ, որ չզոհվեն պայթյունի պահին, ողջ քաղաքում փողոցների երկայնքով ու հատկապես բանուկ հատվածներում լայն փոսեր են փորել կամ, ինչպես այստեղ են ասում, խրամատ են կտրել:

Նոյեմբերի 27-ին բացվող օրը դիմավորեցի նման մի խրամատում, երբ առաջին արկը պայթեց այնպես անակնկալ, որ չհասցրեցինք կողմնորոշվել պայթյունին նախորդող սուլոցից: Մինչ կծանոթանայինք մեր նոր կացարանին, հաշվված վայրկյանների ընթացքում այն բազմամարդ դարձավ, ու խրամատն սկսեց ցնցվել կույր տարերքից: Արկերից մեկը հարվածեց դիմացի շենքին և ոչ թե քանդեց, այլ պարզապես աղաց պատը: Այս հարվածը պատսպարվածներիս կանգնեցրեց բարոյական ծանր երկընտրանքի առջև՝ ավելի սեղմվել գետնին, թե՞ ելնել վերև. գուցե ավերված սենյակներում արյունաքամ եղողներ կան: Իրար սիրտ տալով և մահվան սարսափը հաղթահարելով՝ դուրս նետվեցինք, սկսեցինք բարձրանալ շքամուտքի աստիճաններով: Երրորդ հարկ դեռ չէինք հասել, երբ վնասված շենքը վերստին դղրդաց հերթական պայթյունից.

այս անգամ արկը ընկել էր հարևան բակը: Մինչ վիրավոր էինք փնտրում փոշու և գաջի մեջ կորած սենյակներում, կից բնակարանի ապրողներից մեկը ձայնեց՝ շտապ իջեք, այդտեղի բնակիչները երեկ մեկնել են իրենց հայրենի գյուղը: Եթե ճակատագրական այդ որոշման կայացումը ընտանիքի հայրը հետաձգեր թեկուզ մեկ օրով, ապա երեկոյան տրվող օպերատիվ հաղորդագրությունում երկու վիրավորին կհավելվեր ևս վեց զոհ:

Իջանք չորրորդ հարկից և հաջորդ պայթյուններն արդեն դիմավորեցինք շենքի նկուղում, ուր երեխաների վախվորած անօգնականությունը երևում էր անգամ լամպի լույսի ներքո պատին թրթռացող նրանց ստվերներից: Հրետանին լռեց, ու նկուղներից, խրամատներից սկսեցին դուրս գալ մարդիկ՝ քննարկելով, թե որքան կարող է արժենալ քաղաքին հարվածող արկերից յուրաքանչյուրը: Արկի գինը կամաց-կամաց բարձրացավ և հասավ կես միլիոնի: Լսելով արկերի ենթադրյալ արժեքը՝ մի կին զարմացած բացականչեց. «Ախր ես կյանքում ո՞ւմ եմ ինչ արել, որ ինձ սպանելու համար կես միլիոն են ծախսում»: Անպատասխան մնացած այդ հարցին պատասխանեց միայն Աղդամից Ասկերանին հարվածող հրետանին: Ստեփանակերտի շուրջ դիրքեր չկան, մարտական գործողություններ չեն ընթանում, այն ռազմաճակատի գիծ չէ, և լավ կլիներ «խավարի» մեջ խարխափող այդ կնոջը պատասխանեին «լույսի աշխարհի» ջատագովները:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 1-ը դեկտեմբերի, թիվ 232

ԱՌԱՋԻՆ ԳԾՈՒՄ ԳԱՆՁԱՍԱՐՆ Է

1918 թ. թուրքական բանակը, գրավելով մի շարք բերդաքաղաքներ և բնական ամրություններ, պարտություն կրեց Արարատյան դաշտում, որովհետև հայ զինվորների թիկունքում արդեն Էջմիածնի պարիսպներն էին: Հիմա էլ թշնամին, գրավելով Շահումյանը, Մարտակերտի մի զգալի մասը, անցնելով անգամ Թարթառի այս ափը և իր վերահսկողության տակ վերցնելով ավտոմայրուղին ու նրա երկայնքով ձգվող գյուղերը՝ Վաղուհասից մինչև Դրմբոն, և կարողանալով տիրել դեռևս մի քանի ամիս առաջ խոր թիկունքային գյուղ համարվող Չլդրանին, այլևս չկարողացավ շարժվել առաջ, որովհետև պաշտպանական գծի յուրաքանչյուր ճեղքում նրան տանելու էր Գանձասար:

Հայոց արևելյան կողմանց հոգևոր կենտրոն հակառակորդը կարող է հասնել Վաղուհասի կամ Կիչանի ուղղությամբ: Քանի որ Վաղուհասից Վանք ճանապարհը անցնում է անտառով և բարձունքներով, ուր ծանր տեխնիկան չի կարող գործել, թշնամին իր ողջ ուժը կենտրոնացնում է Կիչանի ուղղությամբ: Մի քանի անգամ մտնելով գյուղ՝ թշնամին չի կարողացել հաստատվել այնտեղ թեկուզ մեկ օր և իր ցամաքային անհաջողությունները փորձել է փոխհատուցել օդային կույր կատաղությամբ՝ մարտական ինքնաթիռների չորս տասնյակ արկ արձակելով Գանձասարի վրա:

Խաչենագետի հովտից վեր տանող ոլորապտույտ ճանապարհի յուրաքանչյուր կեռմանում դիմացից երևում է վանքը: Հեռվից վանքի վերքերը չեն երևում, ու Գանձասարը թվում է տեղային ընդհանուր գունային համանվագի ցոլացումներց մեկը: Մինչ պարսպին հասնելը ամբողջական կերպավորում է ստանում գմբեթը: Քեզ զգալով նրա վեհաշուք հովանու ներքո՝ դարպասից ներս ես մտնում

ու միանգամից կարկամում ցավից. գմբեթը իրենց ուսերին պահող պատերը բզկտվել են մաղե ցանցի նման:

Գանձասարի երկհարկանի հյուրատան շինությունը հրթիռակոծությունից ամբողջովին այրվել է: Մնացել են միայն սևացած պատերը, որոնց տակ հավաքել–շարել են պայթյունից տձևորեն ծռմռված հրթիռները: Բեկորները ցրված են գետնին: Դրանք հարվածել են պատերին, շերտ–շերտ կտորներ պոկել սրբատաշ քարերից, ապա խրվել հողի մեջ: Ուղիղ վանքին դիպել է մի հրթիռ՝ մխրճվելով զանգակատան ներքո գտնվող գավթի տանիքում, սակայն ասեղնաչափ ճեղք իսկ չի առաջացել ընդհանուր շարվածքում և այն պատող շաղախում: Հայոց միջնադարը կարողացել է դիմագրավել ավերիչ ուժի ժամանակակից զինատեսակներին:

Խորհրդային տասնամյակների մեծագույն հոգևոր ձևախեղումներից մեկն էլ այն է, որ ռուսական բանակի կադրային զինվորականը անհայրենիք վարձու մանկուրդի է վերածվել և մահ է տարածում Արցախի երկնքից: Եթե չլիներ մեր քարգործների զարմանահրաշ վարպետությունը, վանքին հարվածած այս հրթիռը ոչ թե սեպի նման խրվելու էր զանգակատան ներքո, այլ ճեղքելով անցնելու էր ներս և ուղիղ հարվածելու էր գավթի սալահատակի այն հատվածին, ուր ամփոփված է Հայոց արևելյան կողմանց կաթողիկոս, XVIII դարի մեր ազգային–նվիրական մեծագույն գործիչներից մեկը՝ Եսայի Հասան–Ջալալյանը, և փշրելու էր հայրապետական գավազանի փորագրությունը կրող նրա տապանաքարը: Հարվածելու էր շիրմին մի հոգևոր գործչի, որի երազանքն էր իր հայրենիքը տեսնել ռուսական միասնական մեծ պետության կազմում:

Հրթիռներից մի քանիսն էլ խրվել են վանքի պարսպի մեջ, սակայն վերստին չեն կարողացել փշրել այն: Վնասվել են նաև Գանձասարի հարևանությամբ գտնվող գերեզմանոցի բազմաթիվ շիրմաքարեր:

Այստեղ այնքան մեծ է հավատը Գանձասարի աներերության հանդեպ, որ ամենածանր պահերին անգամ դուրս չեն հանվել վանքի սրբությունները, հոգևոր հանդերձները և ծիսական–արարողական հնատիպ գրականությունը: Այս ամենը եղել են հրդեհ-

ված հյուրատանը և այրվելուց փրկվել միայն վանքի նվիրյալ քահանայի՝ տեր Հովհաննեսի ջանքերով, որը այրվող շինությունից հասցրել է հանել պատմական-ավանդական արժեքները: Մնացյալը մոխրացել է:

Չնայած այս ամենին, վանքում պարբերաբար կատարվում է ժամերգություն, մատուցվում է պատարագը: Երգեցողությունը և Սուրբ Գրքի հատվածների ընթերցումը հաճախ ընդհատվում է մեծ տրամաչափի գնդացիրների կրակահերթերի ճարճատյունից, շարունակ հիշեցնելով՝ Արցախական աշխարհի հոգևոր կենտրոնը այժմ ռազմաճակատի գիծ է դարձել: Այս իրողությունը առավել սուր ես զգում իջնելով ներքև՝ Վանք գյուղը: Դարձյալ ավերված տներ և պայթյունի օդային ալիքից փշրված պատուհաններ: Հիմա, սակայն, գյուղը աստիճանաբար կենդանանում է: Ետ են բերում անգամ երեխաներին, որոնք, ծնողների վկայությամբ, տանջվում են հարազատ քերծերի և ծմակի կարոտից: Այժմ գյուղի նվիրյալները ամեն երեկո սրտի ներքին թրթիռով հաշվում են, թե նախորդ օրվա համեմատությամբ քանի նոր ճրագ է վառվում տներում: Առավոտյան էլ նայում, թե քանի երդիկից է ծուխ բարձրանում:

Պատերազմը ոչ միայն բարոյական փորձությունների է ենթարկում մարդկանց, այլև պարտադրում քայլեր, որոնք դաժան, անգամ անմարդկային կարող են թվալ մարտական գործողությունների տարածքից հեռու գտնվողներիս: Այսպես. Ստեփանակերտում սկսված և Վանքում շարունակված ժողովում որոշվեց. յուրաքանչյուր տուն պարտավոր է նվազագույնը մեկ զինվոր տալ գյուղի ինքնապաշտպանության ջոկատին, իսկ այն ընտանիքները, որոնք գյուղում չեն և որոշված ժամկետում չեն ուղարկի, նրանց տները կհրդեհվեն: Գյուղի տերերը կմնան նրանք, ովքեր գյուղին տեր են կանգնում հենց այս օրերին: Երկու շաբաթ առաջ թշնամին կարողացավ մեկ անգամ ևս տիրանալ Կիչանին ու դուրս գալ դեպի Ասկերանի շրջան և Ստեփանակերտ ձգվող ավտոմայրուղին՝ գրեթե հասել էր մինչև այն կամուրջը, որի գրավմամբ շրջապատման օղակում կհայտնվեին Առաջաձորի ենթաշրջանի գյուղերը՝ Ծմակահողը, Շահմասուրը, Գառնաքարը, Քոլատակը, Վանքը և Առաջաձորը: Այս ամռան ծանր օրերին թշնամին դարձյալ գրեթե հասել էր մինչև կամուրջը: Այն ժամանակ վերջինիս շուրջ փորված պաշտպանական դիրքերը դեռևս չէին ամբողջացել, և տեղացող հրետանային կրակի տակ մեր զինվորների համար պաշտպանական դիրքեր փորելիս զոհվեց չորս երեխայի հայր, տրակտորավար Էռնեստ Բաբայանը: Գյուղի նվիրյալներից էր նա, ու թաղման ժամանակ սգում էին բոլորը: Երեկոյան նրա երեխաներին տարան տարբեր տներ, որ գոնե մի քիչ ցրվեն: Մեծին՝ 16-ամյա Արմենին, ընկերս բերեց իրենց տուն: Խոսում էինք ամեն ինչից, բայց այնպես զգուշորեն, որ տղայի միտքը ցրվի ընդհանուր խոսակցությունում: Անզգուշորեն հանկարծ սկսեցինք քննարկել ճիշտ դիրքեր ընտրելու և պահելու հարցը, և տղան հեկեկալով մեկեն փլվեց՝ ասելով. «Բա հիմա ո՞վ է տրակտորով խրամատ բացելու, իմ հայրը էլ չկա»: Սա էլ պատերազմական միջավայրում ձևավորվող հոգեբանություն ու հոգեվիճակ է, երբ տղան հոր մահը առարկայորեն զգաց և ընկալեց կիսատ մնացած խրամատներին անդրադառնալով:

Արմենին վերջին անգամ հանդիպեցի օրերս, երբ գյուղի ջոկատի հիմքի վրա կազմավորվում էր Արցախի ազգային բանակի տեղային վաշտը: Զորանոցում հրամանատարին փորձում էր համոզել, թե ինքը տասնյոթ տարեկան է, ծննդյան վկայականում նշված թվականը սխալ է: Երբ հրամանատարը պատասխանեց, թե միևնույն է՝ դիրքեր ուղարկում ենք միայն տասնութ տարին լրացածներին, նա ասաց. «Մի տարի էլ գումարեք հորս հիշատակի համար»:

Այսպես են ապրում Հայաստանի Հանրապետության դարպասը պահողները՝ աչքերը հառած Հյուսիսային Արցախի բարձունքներին և հավատարիմ իրենց պապերի երազին ու նորօրյա հերոսամարտի նահատակների հիշատակին:

ԵՐԿԻՐ, 1992 թ., 2-ը դեկտեմբերի, թիվ 233

ԴԱՍ... «ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ» ԾՐԱԳՐԵՐՈՎ

Եթե մեր հանրապետությունում դպրոցական կյանքը և ուսումնական գործընթացը պայմանավորված են օրավուր ծանրացող սոցիալ–տնտեսական վիճակով, ապա Արցախում, ուր կյանքը վաղուց դուրս է եկել իր բնականոն հունից, կախված է մարտական գործողությունների ծավալից և կիրառվող զինատեսակների բնույթից:

Սկսյալ անցյալ ուսումնական տարվանից՝ փաստորեն, դպրոցական յուրաքանչյուր օր աշակերտները դիմավորում են ընդլայնվող պատերազմի պայմաններում, որը նախ սկսվեց երկփողանի հրացանների ու ավտոմատների և զրահատեխնիկայից հանված մեծ տրամաչափի գնդացիրների կիրառմամբ: Այս շրջանում, երբ մարտերը ծավալվում էին անգամ գյուղերի մերձակա հանդերում, դպրոցներում պարապմունքները չէին դադարեցվում, որովհետև հրազենից արձակված գնդակը մինչև երեք կիլոմետրի վրա էր հարվածում ու դպրոցներին չէր հասնի, իսկ երեխաներն ու ծնողները վստահ էին, որ թշնամին չի կարող ճեղքել ռազմաճակատի գիծը: Անցյալ դեկտեմբերից, սակայն, հակառակորդն սկսեց կիրառել նաև ականանետներ ու հրետանի, որոնց հարվածային ուժն արդեն ավերիչ էր անհամեմատ մեծ տարածությունների վրա, և հարկադրված պարապմունքները ճակատային գյուղերից տեղափոխվեցին մերձճակատայինները: Բուն մարտական գործողությունները քանի որ սկսվեցին Հյուսիսային Արցախում՝ Շահումյանի շրջանում, արցախյան շարժման ընթացքում հրետակոծությունից ավերված առաջին դպրոցն էլ դարձավ Կարաչինարինը: Չնայած ռմբակոծություններին՝ գյուղը չլքեցին անգամ երեխաները, բայց քանի որ վտանգավոր էր տեղացող արկերի ներքո բոլորին ի մի հավաքելը, ամեն օր առավոտյան նրանք, զգուշորեն անցնելով միջգյուղական փողոցներով և տների բակերով, հավաքվում էին գյուղի ծայրում և

իրենց համար նախատեսված ավտոբուսով գնում Վերի Շեն՝ այնտեղ անցկացնելու իրենց պարապմունքները, ու երեկոյան վերադառնում էին: Ինչպես Երևանում մայրերը երեխաներին ասում են, թե դպրոց գնալիս փողոցը զգույշ անցեք, այնպես էլ այստեղ ասում են, թե՝ փողոցը անցնելիս ուշադիր կլինես և պայթյունի ձայնը լսելով՝ կպառկես, որ բեկորը չհարվածի:

Հետո մարտական գործողություններն ավելի ընդլայնվեցին. Շուշիից սկսեցին հարվածել Ստեփանակերտին, հարևան ադրբեջանական շրջաններից էլ՝ Արցախի սահմանային բնակավայրերին, ու նորաստեղծ հանրապետության մայրաքաղաքում, կրակի տակ գտնվող շրջկենտրոններում և տարբեր գյուղերում փակվեցին դպրոցները:

Կյանքի ապահովությունից բացի, երկրորդ կարևոր հանգամանքը պարապմունքների դադարեցումն էր, որ բնակչությանը պարտադրեց Ստեփանակերտից ու շրջկենտրոնից դիմել առավել ապահով գյուղերը, ուր գործում էին դպրոցները, որովհետև արցախցին չէր պատկերացնում, թե երեխան ինչպես կարող է դասի չգնալ, անգամ, եթե նույնիսկ պատերազմ է կամ էլ ցուրտ ձմեռ: Նման անօրինակ մաքառման պայմաններում անցավ ուսումնական տարին:

Շուշիի ազատագրումից հետո մի պահ թվում էր, թե արցախահայությունը գոնե հիմա շունչ կքաշի, կսկսի ապրել բնականոն կյանքով, սակայն կարճ ժամանակ անց գրվեցին արցախյան ողբերգության նոր էջերը: Ադրբեջանական բանակի մեծածավալ հարձակումներից ընկան Շահումյանը, Մարտակերտի մի զգալի մասը, ու հարյուրավոր երեխաներ, իրենց լեռների և ծննդավայրերի կարոտը սրտներում, ապաստանեցին Ստեփանակերտում, ուր հիմա իրենց տարեկիցների հետ դասերն անցնում են մի յուրահատուկ պատերազմական ծրագրով:

Օդային ռմբակոծությունները և հեռահար հրետանին, փաստորեն, ջնջել են ճակատային և թիկունքային գյուղ հասկացությունները, և գրեթե ամենուր հիմա անցնում են այն ծրագրով, որը պայմանականորեն կարելի է անվանել «ռազմաճակատային մեթոդիկա»,

համաձայն որի՝ դպրոցական պարապմունքները հասցվում են նվազագույնի և առավելագույնի բարձրացվում տնային հանձնարարությունները: Ստեղծված պայմանները հարկադրում են առժամանակ դադարեցնել ֆիզկուլտուրայի, աշխատանքի ուսուցման, երաժշտության, նկարչության դասավանդումը և դասարանային հավաքների կարճատև ընթացքում ուշադրությունը բևեռել հանրակրթական գլխավոր առարկաների վրա, որովհետև կյանքը ֆիզկուլտուրայի և աշխատանքի ուսուցման ամենօրյա դասավանդման է վերածվել պատերազմական պայմաններում բազմապատկված կենցաղային հոգսերի պատճառով, երաժշտությունը տեղի է տվել կրակոցների ճարճատյունի առջև, իսկ նկարչությանը փոխարինել են հոգիներում դրոշմվող պատերազմական պատկերները:

Մարտական ընթացիկ գործողություններն էլ ամենազգայուն ձևով են անդրադառնում ուսումնական կյանքի վրա: Լեռնաշխարհագրական բնականոն կտրտվածությամբ համախումբ մի քանի գյուղեր այստեղ ձորակ են անվանվում, և բավական է, որ թշնամին գրավի որևէ իշխող բարձունք՝ կրակի տակ առնելով ողջ ձորակը, ապա իսկույն կյանքը կազմալուծվում է, այդ թվում դադարում են և պարապմունքները:

Նույն ձևով էլ, եթե մեր զինվորներն են գրավում որևէ կարևոր մի բարձունք կամ լռեցնում թշնամու կրակակետերը, ապա իսկույն աշխուժանում է կյանքը՝ միաժամանակ հնարավորություն ստեղծելով, որ պարապմունքներն անցկացվեն դպրոցներում: Օրինակ, հիմա ժողովուրդը հետ է վերադառնում Վանք, Քոլատակ և Առաջաձորի ենթաշրջանի մյուս գյուղերը: Կարող են բերել նաև երեխաներին, քանի որ մարդիկ վստահ են, թե թշնամին այլևս չի կարող ճեղքել ռազմաճակատի գիծը, սակայն դպրոցներն այս ենթաշրջանում չեն գործում, որովհետև դեռևս գրավված է Մարտակերտի լեռնային և դաշտային հատվածներին իշխող բարձրադիր Հաթերքը, որտեղից, ասես ափի միջից, երևում է ողջ շրջանը, և գյուղերը ենթարկվում են հրթիռահրետանային հրետակոծության: Այս պատճառով էլ հիշյալ գյուղերում կարելի է հանդիպել նախադպրոցական տարիքի երեխաների, իսկ դպրոցականներ չկան, քանի որ հա-

մեմատաբար ապահով վայրում գործող դպրոցներն են փոխադրվել նրանք՝ սովորելու:

Մարտական գործողություններից հետո ուսումնական գործընթացի կազմակերպման առջև ծառացած հաջորդ բարդությունը մեր հանրապետության և Արցախի միջև գոյություն ունեցող գնային անհամամասնությունն է և արցախահայության անգնողունակությունը: Օրավուր թանկացող դասագրքերը և գրենական պիտույքները, եթե դժվարամատչելի են մեզ համար, ապա պարզապես անմատչելի են Արցախում, ուր բնակչությունը դեռևս չի ստացել անգամ հին չափերով տրվող աշխատավարձը: Նախորդ տարում շրջափակման օղակում գտնվող երկրամաս հնարավոր չէր լինում հասցնել ուսումնական անհրաժեշտ պիտույքները, իսկ այս տարի էլ դրանք գնելու միջոցներ չկան:

Լինելով այն գյուղերում, որոնք պարբերաբար ենթարկվում են ռմբակոծությունների և շարունակ հիշատակվում ամենօրյա մարտական ամփոփագրերում, հիանալով ժողովրդի աննահանջ կամքով՝ միաժամանակ ամոթից խեղդվում ես՝ տեսնելով, որ գետնափոր ու նկուղային դպրոցներում աշակերտները գրում են տարբեր տարիների տետրերից պոկված և իրար կարված մաքուր էջերով նոր տետրերում: Այս երեխաների ծնողները քանի որ «գործարար մարդիկ» չեն, այլ «ընդամենը» հայրենիքի պաշտպաններ, որևէ միջոց չունեն ներկա գներով գրենական պիտույքներ ձեռք բերելու:

Այս և համանման մյուս դժվարությունները, ցրտերի ընկնելը ոչ թե պատճառ են դառնում պարապմունքների դադարեցմանը, այլ պարտադրում դասերը շարունակելու տենդագին ելքեր որոնելու, որովհետև արցախահայության համար դպրոցը ընկալվում է իբրև չափանիշն այն բանի, թե ինչպես է կազմակերպվում կյանքը, և ուսումնական գործընթացի քայքայումն ուղիղ համեմատական է դիտվում պետական իշխանության թուլացմանն ու կազմալուծմանը: Այս պատճառով էլ, չնայած անցնող պատերազմական օրերի ծանր կնիքն է կրում յուրաքանչյուր դասարան, անհավատալի է, թե դեռևս ինչպես են կարողանում այստեղ գործել դպրոցները:

Հիմա գրավյալ շրջանների և վտանգավոր մի շարք բնակավայրերի երեխաների զգալի մասը ապաստանել են Հայաստանի տարբեր շրջաններում գործող ճամբարներում, հանգստյան տներում: Մոտ լինելով մեզ՝ առավել առարկայորեն ենք զգում, թե ինչ սարսափների են ենթարկվել նրանք, և մի նվազագույն չափով ձգտում են օգնել տարբեր կազմակերպություններ: Մարդկայնորեն միանգամայն ընկալելի այս ձեռնարկումները, սակայն, եթե սահմանափակվեն միայն մեր հանրապետությունում ապաստանած երեխաներին օգնելով՝ անտեսելով Արցախում գործող դպրոցները, կարող են հանգեցնել շատ վտանգավոր հետևանքների, որովհետև տարբեր գյուղերում իրենց երեխաներին հերոսաբար պահող ծնողները շարունակ լսելով, որ Հայաստանում ապաստանած երեխաներին պարբերական օգնություն է ցույց տրվում, կազմակերպվում է նրանց դպրոցական կյանքը, բնականաբար, մտածում են, թե լավ կլինի՝ մենք էլ մեր երեխաներին տանենք, որ ազատվեն թե՛ ռմբակոծություններից և թե՛ մի քիչ կանոնավոր ապրեն: Երեխաներին տանելուց հետո էլ արդեն մտածում են, թե ինչպես են հիմա, ինչ են անում, և բռնում են գյուղերից դուրս տանող ճամփաները:

Իհարկե, անմարդկայնորեն անհեթեթ է մտածել, թե այս պատճառով չպետք է մտահոգվել այստեղ ապաստանած երեխաներով, այլ պարզապես նրանց հանդեպ ունեցած վերաբերմունքը հարկավոր է դրսևորվել Արցախի դպրոցներին և դպրոցականներին ցուցաբերվող ընդհանուր օգնության և մատակարարման շրջանակներում, այլապես ստեղծվող անհամամասնությունը նպաստելու է արտահոսքի ուժեղացմանը:

Ամփոփելով՝ դարձյալ կրկնենք, որ Արցախում չեն պատկերացնում, թե ինչպես երեխան կարող է դպրոց չգնալ, և հնարավոր յուրաքանչյուր ապահով ու կիսապահով վայրում կազմակերպվում է ուսումնական գործընթացը, որի կազմալուծումը այնպես է ազդում նորաստեղծ հանրապետությունից արտահոսքի վրա, ինչպես

թշնամու ռազմական հաջողությունները, և այս պատճառով էլ ճիշտ կլիներ Արցախում դպրոցական կյանքի կազմակերպումը դիտել ինքնապաշտպանության ընդհանուր գործի շրջանակներում:

ԴՊՐՈՒԹՅՈՒՆ, 1992 թ., 17–23-ը դեկտեմբերի, թիվ 49

ԵՂԵՎՆԻՆԵՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

1992 թ. վերջին օրերին արցախահայությունը ներքին մի լարվածությամբ սպասում էր, թե հակառակորդն էլ ինչ նոր զինատեսակ կկիրառի մոտեցող Նոր տարվա շեմին, և հեռահար հրետանու հարվածներն իր վրա կրող Ստեփանակերտում «թարմացվում» էին շենքերի ցածր հարկերը և նկուղները պաշտպանող հողե և ավազե պարկերը, կարգի բերվում դրսում եղողների համար հրետակոծության պահին պատսպարան ծառայող ու գրեթե բոլոր բանուկ վայրերում փորված խրամատները, երեխաներին հիշեցնում, թե ինչպես պետք է իրենց պահեն «տրաքոցի» ձայնը լսելիս ու էլի ընկնում տանջող մտքերի մեջ. հաղթանակով կավարտվի նոր տարին, թե հայրենի երկրամասի աստիճանական կորստով:

Եղևնու կանաչ ճյուղն իր մշտադալարությամբ խորհրդանշում է կյանքի հարատևությունն ու շարունակական նորոգությունը: Ու երևի այս պատճառով է, որ պատերազմող հանրապետության մայրաքաղաքը ժողովուրդն ինքնաբուխ բնազդային մի մղումով զարդարում է եղևնու ճյուղերով, առանձնակի մի գուրգուրանքով փակցնելով պաշտպանական շերտերին, որոնց խփվելով պետք է բեկորվեր և փշրվեր մահը՝ չհասնելով մինչև նկուղներ ու բնակարաններ: Պարբերական ռմբակոծություններից ավերվող քաղաքի վրա իջնում էր ձյունը, և ձյան ճերմակության, ավազե պարկերի գորշության և փորված խրամատների սև թմբերի վրա օրորվում էին մշտադալար ճյուղերը:

Քաղաքի կենտրոնական զբոսայգում մի քանի մեծ եղևնիներ դեկտեմբերի 29-ին սկսեցին զարդարել բերված գեղեցիկ խաղալիքներով՝ վերածելով հավաքական մի տոնածառի: Փոքրիկ տոնածառեր դրվեցին նաև հոսպիտալում, դպրոցներում և մանկապարտեզներում՝ տոնական ուրախության շունչ հաղորդելով պատերազմական մտատանջությունների և լարման մեջ անցնող կյանքին: Ամեն մի տոնածառ, իր շուրջը բոլորվող մեծով ու փոքրով, յուրովի էր արտացոլում անցնող տարին, ու քաղաքի ամենատխուր եղևնին, թերևս, հյուրանոցինն էր: Այստեղ վաղուց արդեն հյուրեր չեն գալիս, փախստականներ են բնակվում: Ասում են՝ աշխարհում ամենածանր քայլերը գաղթածների քայլերն են, ու հիմա հյուրանոցում այդ ծանր քայլերից մաշված, գունաթափ ու իրարահան եղած հատակին դրված տոնածառի շուրջն են բոլորվել աչքերում կորցրած լեռների կարոտ և գաղթի ճանապարհների սարսափից ծնվող ցնորվածություն ունեցող երեխաներ: Հավաքվել են նրանք՝ մեծ քաղաքականության փոքրիկ զոհերը՝ ուրախանալու իրենց դահիճների երկրներից ուղարկված մարդասիրական օգնությամբ:

Ընդամենը մի քանի տարի առաջ Ստեփանակերտը ոչ թե մայրաքաղաքն էր Հայոց երկրորդ փոքր հանրապետության, այլ «լայն քայլերով առաջ ընթացող Ադրբեջանում» գտնվող մարզային մի փոքր կենտրոն էր և շատ թանկ վճարեց մարզային քաղաքից մայրաքաղաք դառնալու համար. փողոցներում մեքենաներին փոխարինեցին զրահամեքենաները, հիվանդանոցները վերածվեցին հոսպիտալների, ուր հիվանդների փոխարեն վիրավորների են բերում: Նույն ձևով քաղաքի դպրոցներից մեկը դարձավ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի առաջին գումարտակի զորանոցը: Այստեղ ուսման առաջավորների անկյանը փոխարինել է մարտական փառքի վահանակը, ուր զետեղված են առաջին գումարտակին և այս աշխարհին արդեն հրաժեշտ տված տղաների լուսանկարները: Նրանց տանջալիորեն երկար ձգվող շարքը սկսվում է գումարտակի հրամանատար Աշոտ Ղուլյանի, արդեն լեգենդ դարձած Բեկորի՝ Ասկոլկայի, մեզնից հեռացած ժպիտով ու շարունակվում մյուս տղաներով:

Պատմությունը կրկնվում է ամենազարմանալի մանրամասներով: Ինչպես նախորդ պատերազմներում էր տարածված «Չհասցրեց լուսանկարվել» արտահայտությունը, այնպես էլ այժմ զոհվածների վահանակում կան դատարկ շրջանակներ, որոնց տերերը Մարտակերտի ճակատ գնալուց առաջ չեն հասցրել լուսանկարվել,

և հիմա միայն անուն–ազգանուններն են գրված: Վահանակի առջև նույնպես եղևնու ճյուղ կա:

Ավարտվող տարվա հետ մեծանում է լարվածությունը, և որոշվում է ամրացնել դիրքերը: Գումարտակի զինվորները նայում են վահանակից իրենց նայող տղաներին ու զինվորական մեքենաներ նստելով՝ մեկնում Մարտակերտի ճակատ: Ճանապարհին հանդիպում ենք անհրաժեշտության դեպքում օգնության շտապելու պատրաստ S–72 ծանր տանկերին: Նրանց անձնակազմերն էլ են նշում մոտեցող Նոր տարվա գալուստը՝ զրահամեքենաների հրետանային և գնդացրային փողերից կախելով տոնածառի գույնզգույն խաղալիքներ:

ԳԱԼ ՏԱՐԻՆ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ

Անցնելով Խաչենագետի նշանավոր կամրջով՝ հասնում ենք Մարտակերտի ճակատի չգրավված վերջին հատվածը՝ Առաջաձորի ենթաշրջանը: Ռազմաճակատի գիծը ձգվում է անմիջապես այս գյուղի հարևանությամբ, որի պատճառով էլ այն ենթաշրջանի բնակավայրերից ամենասակավամարդն է այժմ: Երեսունի երեկոյան լարվածությունը հասնում է գագաթնակետին: Համաձայն ստացված տվյալների՝ մեծ աշխուժություն է նկատվում Մարտակերտի գրավյալ մայրուղում, և ենթադրվում է, որ նպատակը պաշտպանական գիծը ճեղքելով միաժամանակ թե՛ ենթաշրջանը օղակելն է և թե՛ Ստեփանակերտ տանող ճանապարհ դուրս գալը՝ կրակի տակ առնելով Ասկերանի գյուղերը: Դիրքային հերթապահությունից վերադարձած տղաներին պատվիրվում է չհեռանալ զորանոցից: Ստեփանակերտից շտապ գյուղ են հասցվում մարտական գործողությունների փորձ ունեցող բուժքույրեր: Բարեբախտաբար, հակառակորդը, բավարարվելով միայն դիրքային հրետակոծությամբ, կեսգիշերին խաղաղվում է: Տարվա վերջին օրն անգամ անցնում է էլի մեկ զինվոր հողին հանձնելով: Կեսօրին թողնելով ամանորյա պատրաստությունները՝ մարդիկ գնում են հրաժեշտ տալու ենթաշրջանի սիրված տղաներից Հրանտին, որ զոհվել էր երկու օր

առաջ Կիչանում: Նրա թարմ հողաթմբի մոտ վերջին խոսքերն ասելով մաղթում են, որ մինչ Նոր տարի մնացյալ ժամերի ընթացքում գոնե նոր զոհ չտա Արցախը: Այստեղից գնում ենք Գանձասարի հովանու ներքո գտնվող Վանք գյուղը: Ճակատային առաջին գծի համար անսովոր աշխուժություն է տիրում: Մարդիկ Գանձասարի քահանա տեր Հովհաննեսին խնդրում են գալ ու հերթով օրհնել իրենց բացվող սեղանները: Ստեփանակերտից և անգամ Երևանից ետ են բերել երեխաներին:

Այնուհետև գյուղից բարձրանում ենք վեր՝ դեպի Գանձասար, և այնտեղից էլ նվիրական այս վայրն օղակող դիրքերը, որոնք աղեղնաձև տարածվում են Վաղուհասից մինչև Չլդրան:

Դժվար է ասել, ցանկանալով Նոր տարին նշել, թե պարզապես վախենալով հնարավոր հարձակումից՝ հակառակորդն սկսում է գնդացիրներից և «Գրադ» կայանքներից խփել դիրքերին ու անտառին: Տեսնելով, որ սա աննպատակ կրակ է, տղաները հիշում են, որ տոնածառ և Ձմեռ պապ է հարկավոր: Տոնածառը զարդարում են մարտական խաղալիքներով՝ այլազան նռնակներով: Շուտով երեք ձնագնդերով կերպավորվում է Ձմեռ պապը, և վերջինս էլ կարճ ժամանակ անց ստանում մարտական դիմագծեր: ԱԿՄ երկու փամփուշտ աչքերով է սկսում նայել աշխարհին, շնչել քթի տեղ ծառայող մեծ տրամաչափի փամփուշտով և ժպտալ զրահատեխնիկայի աղեղնաձև մի մասով: Գլխարկն էլ փորձում են փոխարինել հակատանկային սրածայր մի արկով, բայց Ձմեռ պապը քիչ է մնում ծանրությունից փշրվի, և ստիպված գլխարկը հանում են ու գլխաբաց թողնում: Ավանդական գավազանին էլ փոխարինում է ավտոմատը: Լուրջ քննարկումներ է առաջացնում նվերների պարկը: Ամանորյա լարվածությունն ու ներքին ողբերգականությունը գոնե մի քանի ակնթարթ ցրելու համար ծավալված այս կատակախաղն ընդմիջվում է ցնցող մի տեսարանով. վերցնելով ավտոմատի դաշույնը, զինվորներից մեկը կտրում է մատը և ձյան վրա հոսող արյամբ գրում՝ Միացում: Ցրվում են արյան տաքությունից հալվող ձյան գոլորշու բարձրացող քուլաները, և մնում է կարմիր «Միացու-

մը»՝ Նոր տարվա հնարավոր մեծագույն նվերը, որ եթե Ձմեռ պապը բերի էլ, իրենց արյամբ է բերելու:

Հեռանում են հին տարվա վերջին րոպեները, և երկու կողմերի դիրքերից իրար վրա տեղացող և երկինք ձգվող կրակի ներքո գալիս է Նոր տարին:

Մարտակերտի ճակատի յուրահատկությունն այն է, որ այստեղ կռվող զինվորների զգալի մասը շրջանի գրավյալ գյուղերից են, և հիմա ամանորյա իրենց մաղթանքը «Գալ տարին Վանին մեջ» խոսքի համաբանությամբ դարձել է «Գալ տարին Մարտակերտի մեջ»:

ԱՐ, 1993 թ., 14–21 հունվար, թիվ 3

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ԽՍՀՄ–ի ուրվագծվող մոտալուտ քայքայումը և Արցախում իրադարձությունների զարգացման ընթացքը պարտադրեցին 1990 թ. Երասխավանի և Մանաշիդի հունվարյան դեպքերից հետո առավել լրջորեն մտածել ազգային ինքնապաշտպանության մասին, և ծնվեցին տարբեր անվանումներ կրող կամավորական ջոկատներ, որոնց զուգահեռ կանոնավոր բանակ ստեղծելը, այնուամենայնիվ, հնարավոր չէր, քանի որ քայքայվող, բայց դեռևս կանգուն կայսրությունը չէր հանդուրժի իր բանակային ստորաբաժանումներին զուգահեռ ազգային–պետական զորամիավորումների գոյությունը, ինչը միաժամանակ իրագործելի էլ չէր համապատասխան ռազմական տեխնիկայի և շինությունների բացակայության պատճառով: Դժբախտաբար, մի շարք գործիչների եռանդուն քարոզչությամբ մերժվեց և հանրապետության իշխանությունների ոչ վճռական կեցվածքի պատճառով չընտրվեց այն ժամանակ հնարավոր միակ տարբերակը՝ աստիճանական զորակոչով ազգայնացնել յոթերորդ բանակը, որից օգտվելով էլ ծառայությունից խուսափող և արդեն «սեղանիկային երազներ» փայփայող նորակոչիկները հայտարարեցին, թե ստորացուցիչ են համարում իրենց համազգեստների վրա կայսրության զինանիշը կրելը. ազգային բանակի ստեղծման գաղափարը վերածվեց ծավալված հակախորհրդային քարոզչության մի տխուր հավելվածի:

Երբ պաշտպանության պատասխանատուն դեռևս խորհրդային գեներալներն էին, մեր իրավապաշտպանները մեծ հումանիստի այրու մոսկովյան բնակարանում տարբեր դեմոկրատ գործիչների հանդիպելիս ցասումնալից դատապարտում էին «ուսադիրավոր դահիճներին» և երազում, թե երբ են գալու լուսավոր դեմոկրատա-

կան օրերը, Երևանում էլ այդ նույն ժամանակ տիրող ընդհանուր հայրենասիրական մթնոլորտում բոլորը այրվում էին «վասն հայրենյաց մարտնչելու» ցանկությամբ: Անցյալ դեկտեմբերին, երբ փլուզվեց այդ կայսրությունը, թվում էր, թե նրանք բոլորը «դեպ ռազմի դաշտ» կնետվեն՝ հեռացող «պատժիչներին» փոխարինելու, սակայն պարզվեց, որ գեներալներին ու տոտալիտար կայսրությանը այնպես ատող և սեփական ուժերին ապավինողները կամ զբաղված են միջազգային շրջագայություններով, կամ էլ՝ ազատ ձեռներեցությամբ դոլար աշխատելով և դիրքավորվել են ընդամենը սեղանիկների մոտ ծխախոտի գինը ազդարարող արկղերի հետևում: Արցախն էլ Հայաստանից եկած և տեղի իր նվիրյալ զավակների հետ միայնակ մնաց ռուսական բանակում պատրաստություն անցած և վերջինիս տեխնիկան հետևողականորեն յուրացնող ադրբեջանական ուժերի դեմ, քաղաքական գործիչների սխալներն իրենց թափվող արյամբ սկսեցին սրբագրել մեր զինվորները:

Հիմա պատմության գիրկն են անցել լուծարված յոթերորդ գվարդիական բանակը, քաղաքական բոլոր քննարկումներն ու կրակոտ ելույթները, և այդ ամենի փոխարեն ծառացել է մի խնդիր՝ պահել Գանձասարից մինչև Նոյեմբերյան ռազմաճակատի գծի վերածված սահմանը՝ այսօրվա հարցերի հարցը դարձնելով ազգային բանակի ստեղծումը: Մարտական գործողությունների ունակ լիարժեք ազգային բանակի գոյությունը, սակայն, պայմանավորված է ոչ միայն ռազմատեխնիկական բնույթի մասնագիտական գործոններով, այլև մեր հանրապետությունում տիրող ընդհանուր տնտեսական վիճակով, բարոյահոգեբանական մթնոլորտով և բանակային ավանդույթի ազգային յուրահատկությամբ:

Սովորաբար յուրաքանչյուր պետությունում բանակը համարվում է տվյալ երկրի տնտեսական վիճակի ռազմական ցուցիչը, քանի որ տնտեսությամբ է պայմանավորված բանակային հագեցվածությունը: Մեր հանրապետությունում, սակայն, ոչ միայն բանակի վիճակն է կապվում տնտեսության հետ, այլև վերջինիս առողջացմանը մեծապես կնպաստի կանոնավոր բանակի, հատկապես՝ ընթացող զորակոչին զուգահեռ կատարվող հատուկ հանձնարարությունների

գումարտակի ստեղծումը: Դրանում ներառվելով՝ պետական կարգավիճակ են ստանալու իսկապես հայրենիքի պաշտպանությանը նվիրված բոլոր տղաները, որից հետո զինվորական համազգեստ և զենք գնած ու մութ գործարքներով զբաղվող որևէ մեկը չի կարող ներկայանալ իբրև հայրենիքի զինվոր: Իսկ այսպես ներկայացողները, դժբախտաբար, քիչ չեն, որովհետև նախկին Միության փլուզմանը զուգընթաց տարածվող «ռեկետ» հասկացությունը մեզ մոտ համընկավ հանուն ազգային ինքնապաշտպանության կամավորական ջոկատների ստեղծմանը, և եթե մյուս հանրապետություններում նման հանցավոր խմբերը աշխատում են թաքնվել օրենքից, մեզ մոտ ցինիկորեն պատվեցին ազգային–հայրենասիրական շղարշով: Նման զինվորական համազգեստ հագած կամ «ջոկատ» ունեցողների կողմից է այսօր, փաստորեն, վերահսկվում նախկին ժողովրդական ունեցվածքի մեծ մասը, որի պատճառով վարկաբեկվում են թե՛ անցյալի նվիրական հասկացությունները և թե՛ այսօրվա պայքարը, երբ մարդիկ հաճախ ցույց տալով որևէ սեղանիկ կամ կրպակ՝ ասում են, թե տերը այսինչ ֆիդային է:

Ազդեցության ոլորտները՝ մետրոյի կայաններն ու շուկայի դիմացը, բանուկ հրապարակները և համանման «դիրքերը» պահելու համար էլ չարչրկվում է հայրենիքի տանջված զինվորի անունը: Հանրապետությունում ստեղծված քրեածին իրավիճակը և ամենաթողությունը հասել են այնտեղ, որ նման «ջոկատները» մեր ձևախեղված իրականությունում դարձել են մի յուրօրինակ «միջգերատեսչական միլիցիա»: Հիմա հիշյալ ինքնակոչ ջոկատները ստանձնել են սեփականաշնորհված հանրախանութների, կոմիսիոնների և համանման «օբյեկտների» պաշտպանությունը...

Հիշենք, որ նախկին Միության օրենսդրությամբ կարգավորված էր, թե անգամ տասնամյակներ շարունակ բանակում ծառայած և պաշտոնաթող եղած սպաները ինչպես և երբ իրավունք ունեն զինվորական համազգեստ կրելու, իսկ մեզ մոտ այն հագած շրջում է՝ ով ցանկանում է, և անգամ հանցագործությունները կատարվում են ֆիդայու անվան ներքո: Նման շահարկմամբ կատարված յուրաքանչյուր օրինախախտում պետք է պատժվի կրկնակիորեն՝ թե՛ որ-

պես քրեորեն հետապնդելի արարք, և թե՛ որպես հոգևոր դիակապտություն:

Հաջորդ խնդիրը այժմ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի և բանակային ավանդների հարցն է: Դեռևս մինչև վերջերս կամավորի ու զինվորի հանդեպ եղած սերն ու հարգանքը մեծապես խամրեց վերը հիշված շահարկման ու կյանքի առևտրականացման պատճառով, ինչը գլխիվայր շրջեց հասարակական արժեքների սանդղակը: Միաժամանակ, փլուզված կայսրության բանակի քայքայումը որոշակի շփոթ առաջացրեց, որովհետև մենք հոգեբանորեն պատրաստ չէինք մեր սահմանները պաշտպանող ազգային բանակ ստեղծելուն, քանի որ այն մեզ ավելի շատ ներկայանում էր իբրև հայրենասիրական կեցվածք ընդունած ծիսական մի արարողություն ազգային դրոշի ներքո, քան թե դիրք պահել և խրամատ փորել:

Այս շփոթվածությունը ունի նաև իր պատմական պատճառաբանվածությունը: Բոլոր հանրապետություններին մի լայնածավալ կայսրության մեջ միավորող խորհրդային բանակի փլուզումից հետո նրանցից յուրաքանչյուրի առջև ծառացավ սեփական տարածքում ազգային զինված ուժեր կազմավորելու հարցը: Նախկին Միության բանակը առանձնանում էր ոչ միայն իր զինական հագեցվածությամբ, այլև գաղափարականացվածությամբ, որը թե՛ զինվորներին և թե՛ մնացյալ քաղաքացիներին շարունակ ներշնչում էր հզոր մի գերտերության քաղաքացիները լինելու միտքը: Միասնական բանակի քայքայումից հետո հանրապետությունները բավականին հեշտությամբ տիրացան իրենց մոտ տեղաբաշխված ուժերի զինանոցներին, փոխարենը, սակայն, նրանց առջև ծառացավ զինվորական գաղափարաբանություն և հոգեբանություն ստեղծելու հարցը:

Ի տարբերություն ռուսների՝ մենք պետականություն ենք ունեցել դարեր առաջ, և հայոց թագավորության շրջանի այրուձին չի կարող լինել ազգային ավանդույթի այն հիմքը, որի վրա խարսխվեր այսօր կազմավորվող բանակը: Ֆիդայական շարժումն էլ, դառնալով հերոսական ոգի և ներքին էություն, միաժամանակ չի կարող ձևավորել հրամանատարի հրամանները ճշտորեն կատարող զինվորի մի այնպիսի հոգեբանություն, ինչպիսին ցարական բանակից փոխանցվեց խորհրդայինին:

Այսօր ստեղծվող ազգային բանակի առջև ծառացած կազմակերպական դժվարությունները և վերջին տարիներին պարբերաբար ձախողվող զորակոչը չի կարելի կապել սոսկ սահմաններում տիրող վիճակի հետ. դա մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ երեկ ծառայության մղող ուժը հավատարիմ հպատակի հոգեբանությունն էր, իսկ այսօր դեռևս չկա ազգային անկախության այն գաղափարը, որը մղեր բանակային ծառայության: Այս վերջին տարիներին ոչ միայն չներարկվեց այդ գաղափարը, այլև ավելին՝ ջնջվեց նախորդ տասնամյակներում թեկուզև խորհրդային կարգախոսների ներքո, բայցև սերունդներով փոխանցվող ազգային պատասխանատվության զգացումը՝ այն փոխարինելով շուկայական եսասիրությամբ:

Այս պատճառով էլ, կարծում ենք, անընդունելի է զորակոչով ձևավորվող բանակը սոսկ պրոֆեսիոնալով փոխարինելը, որովհետև շատ պետություններում, և հատկապես պետականության վերգտնմամբ ազգային ինքնահաստատման ճանապարհը բռնած երկրներում, եթե վտանգի ժամանակ բանակը հայրենիքի պաշտպանությանն է ծառայում, ապա մնացյալ ընթացքում էլ, զինական գիտելիքներ հաղորդելուց բացի, ունի բարոյադաստիարակչական անասելի կարևորություն:

Այսօր թե՛ Հայաստանի պաշտպանունակության ամրապնդումը և թե՛ հանրապետության ներքին կյանքը պայմանավորող մի շարք գործոնների պարտադրանքով առաջնահերթ կարևորություն է ստանում ազգային բանակի ստեղծման հետ կապված բոլոր հարցերի հստակ օրենսդրական կարգավորումը, ինչը կբացառի նաև ֆիդայու անվան ներքո գործվող բոլոր հանցանքները՝ միաժամանակ առողջացնելով ներքին տնտեսական փոխհարաբերությունները՝ հայրենիքի զինվորի կերպարի ձևավորմամբ էլ ստեղծելով ազգային արժեքների նոր սանդղակ:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 5-ը փետրվարի, թիվ 21

ՆՈՐԻՑ ՉԼԴՐԱՆՈՒՄ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԸ ԴԱՐՁՅԱԼ ԱՌԱՋԻՆ ԳԾՈՒՄ Է

Սովորաբար Արցախից եկող մարտական ամփոփագրերում բոլորից շատ երկու գյուղ էր հիշատակվում՝ Կիչանն ու Չլդրանը, որոնց միջև էր ձգվում ռազմաճակատի գիծը մինչև վերջին օրերը:

Եթե հակառակորդը Կիչանին տիրեր, ապա կտիրանար թե՛ Առաջաձորի ենթաշրջանին՝ Արցախի հոգևոր կենտրոն Գանձասարով, և թե՛ աքցանի մեջ առնելով Ղազանչին ու Սրխավենդը՝ կհայտնվեր Ասկերանի շրջակա մատույցներում և դուրս կգար ուղիղ Ստեփանակերտ տանող մայրուղին: Մեզ համար Չլդրանի ազատագրումը հնարավորություն էր ընձեռում հաջողությունը զարգացնել Հաթերքի և Մարտակերտ շրջկենտրոնի ուղղությամբ: Միաժամանակ ակնհայտ էր, որ այս վերջին ամիսներին համեմատաբար կայունացած ռազմաճակատի գիծը սահմանազատիչ չէր կարող լինել երկու կողմերի համար էլ. կամ նրանք առաջ շարժվելով կգրավեին մինչև Խաչենագետ ընկած տարածությունը, կամ մենք կազատագրեինք գոնե մինչև Թարթառ ընկած բնակավայրերը. լեռնային նման պայմաններում սահմանները գծվում են լեռնաշղթաների ճյուղավորմամբ և գետերի հունով:

Հիմա հակառակորդի երեկվա դիրքերից նայելով Կիչանի մոտով անցնող այն պաշտպանական գծին, որ կար մինչև Չլդրանի ազատագրումը՝ պարզապես ապշում ես՝ նման պայմաններում ինչպե՞ս էր հնարավոր եղել հետ մղել հրետանու և զրահատեխնիկայի աջակցությամբ պարբերաբար կրկնվող գրոհները: Ավելին, թողնելով իրենց անհամեմատ գերիշխող դիրքերը՝ նահանջող հակառակորդը չի հասցրել տանել այդ տեխնիկայի մի մասը, ու հիմա ճանապարհին և՛ խփված մեքենաներն են, և՛ սարքին Տ–72 ծանր տանկերը, որոնց աշտարակից երկար ժամանակ հրետանային ու գնդացրային կրակ է տեղացել Առաջաձորի ուղղությամբ: Վերջում, սակայն, թշնամին այնքան խուճապահար է փախել, որ տանկերի անձնակազմերը, չկարողանալով քշել սառած մեքենաները, չեն հասցրել անգամ շարքից հանել այդ հզոր տեխնիկան: Դրանք տաքացնող մեր զինվորները կատակով ասում էին, թե մեծաքանակ տեխնիկա ձեռք բերող Ադրբեջանը դրա մի մասը եղբայրաբար տալիս է իրենց:

Չլդրան տանող ճանապարհին անցնում է անտառի մեջ ձգվող ոլորաններով: Մինչ Սրխավենդի կրակակետերի լռեցումը անտառից դարանակալ դիմահար կրակոցներով խփում էին անցնող մեքենաներին: Հետո ճանապարհը խաղաղվեց, ծանրորեն նահանջող ճակատի գիծը եկավ հասավ Կիչան, և այս անտառն սկսեց ենթարկվել անօրինակ հրետակոծության: Այս օրերին համեմատաբար խաղաղ էր: Անտառը տնքում էր իր տապալված ծառերի համար: Վերջիններս արկերից այնպես են փշրվել, որ դիրքերում ռազմաճակատային տարբեր նպատակներով օգտագործելու համար շատ ավելի հեշտ է նորերը կտրել, քան առանձնացնել ջարդոտվածները: Զինվորները, սակայն, իրենց պետք եկածը հենց կոտրվածների մեջ էին փնտրում՝ ասելով. «Ընդհանուր այս կորուստների մեջ մենք մի ավել ծառ չկտրենք»: Ընդհանրապես Արցախը թշնամու անհամեմատ գերակշիռ ուժերի դեմ կարողանում է դիմանալ առաջին հերթին իր ներքին զարմանալի կարգուկանոնով և երկրամասի հանդեպ տածած զարմանալի սիրով: Այս երկու հատկանիշները որևէ ձևախեղման չեն ենթարկվում անգամ կյանքի ու մահվան միջև տարուբերվող այս սահմանագծում էլ:

Չլդրան գնում ենք Առաջաձորում այնքան հռչակված «Շիլկան» կրող մեքենայով: Հզոր այդ զենքը գործածող երկու տղաները, դժբախտաբար, զոհվել են շրջանի պաշտպանության համար մղվող մարտերում, և հիմա դրանից կրակում է 16–ամյա Սեյրանը: Ինչպես տեղացիներն են ասում՝ նոր շիլկիստը համեստ, ժպտուն տղա է: Հարազատները Ստեփանակերտում են, ինքը ավարտել է Առաջա-

ձորի դպրոցի 9–րդ դասարանը: Քանի որ մինչև վերջերս հակառակորդը դիրքավորված էր գյուղի մատույցներում, դպրոցը փոխադրվել էր համեմատաբար ապահով բնակավայր, և իր սովորելն էլ կիսատ էր մնացել: Հարազատները ապաստանել են Ստեփանակերտում: Իր տարիքի համար անսովոր մի վճռականությամբ, որն արդյունք է մարտական գործողությունների մեկամյա փորձի, ասում է. «Ճակատը այնքան ենք առաջ տանելու, որ մերոնք վերադառնան իրենց տները»:

Ջինվորներից մեկը, թռչելով մեքենայի թափքից, մեկեն փլվում է հոսող ջրին ու անհագաբար խմում: Հետո ասում է՝ ցանկանում է հովացնել բոլոր այն մարտակերտցիների սրտերը, ովքեր դեռ ապրում են վերադարձի սպասումով:

Գյուղ ենք մտնում երեկոյան, սակայն ընդհանուր մթության մեջ էլ երևում են հասցված վերքերն ու ավերները: Որևէ մեկը այլ բան տեսնելու պատրանքներ չուներ: Շարժվում ենք առաջ՝ դեպի Մեհմանա ու Դրմբոն: Հիմա արդեն պայթող արկերի որոտին գումարվում է նաև ցնցվող հողը: Սառած ձյան փայլը թույլ է տալիս վարորդին ճիշտ կողմնորոշվել. մեքենայի լույսը չես վառի. հրետանին իսկույն խփում է: Բայց ձորամիջով անցնող ցեխոտ ոլորաններին վարորդը հարկադրված միացնում է լույսերը, թե չէ ձորը կընկնենք: Եվ զարմանալի արագությամբ նախ հետևում է հրետանու հարվածը, ապա հաջորդում է «Գրադի» համազարկը: Արկերը դիպչում են դիմացի ժայռին և կայծկլտացող շիկացած բեկորներով թռչում մեր գլխավերևով: Հեռվից դիտելիս երևի անկրկնելի տեսարան է, բայց այսքան մոտիկ սոսկ մտածում ես՝ վարորդը կհասցնի՞ փախցնել մեքենան: Նա էլ՝ Թելմանը, ոչ միայն կարողանում է, այլև կատակում՝ թող խփեն, որ լույս լինի, ճանապարհը տեսնենք:

Վերստին մտնում ենք ձյուների գոտին: Իսկական հրավառությունը, սակայն, առջևում էր, երբ, շեղվելով բուն ճանապարհից, հանդիպեցինք մի «Կամազի»: Թելմանի բոլոր ազդանշաններին կանգնած մեքենան չարձագանքեց: Ստիպված իջավ, նստեց այդ մեքենան, որ մի կողմ քաշի, ճանապարհն ազատի: Մի քանի մետր էլ չէր անցել, երբ բոլորս ցնցվեցինք ահռելի պայթյունից: «Կամազը» անցել էր հակատանկային ականի վրայով: Նայեցինք իրար: Չգիտենք՝ ողջ է Թելմանը, մեքենան պատահականորեն պայթեց, թե առջևում դարան է: Ջինվորները թռան մեքենայի թափքից ու դիրքեր գրավեցին: Մենք էլ Սեյրանի հետ շարժվեցինք դեպի մի քսան մետր այն կողմ պայթած մեքենան: Որ հանկարծ չպայթենք ականի վրա, սկսեցինք քայլել «Կամազի» անիվների բացած նեղ ակոսով: Բարձրացանք թափքը և արդեն ձգվում էինք դեպի կիսված խցիկը, երբ լսեցինք Թելմանի՝ «Կամազի» վարորդի՝ իր բախտին, հակառակորդին ու մնացյալ աշխարհին ուղղված հայհոյանքները: Հայհոյելով հաստատում էր, որ ողջ է: Մոտակայքից հավաքվեցին զինվորներ տարբեր ջոկատներից, և որպեսզի չականազերծված ճանապարհին նոր պայթյունների չարժանանանք, մեքենայի համար անցանելի մեկ այլ ճանապարհով առաջ շարժվեցինք: Ջինվորները ցույց տվեցին հակառակորդի արդեն նախկին գետնափոր բլինդաժները, որոնք առանձնանում էին իրենց հարմարավետությամբ. անգամ գունավոր հեռուստացույց կար: Իսկ Մեհմանայի մոտ ընկած էին երեք տասնյակից ավելի դիակներ, որոնց մեծ մասի գրպաններից հանած ցածր կուրսերում սովորողների ուսանողական վկայականներից կարելի էր եզրակացնել, որ կամ ուսանողներին են կանչում բանակ, կամ էլ զորակոչվածներին միաժամանակ բուն են ընդունում: Հակառակորդը զարմանալիորեն խուսափում է կապի մեջ մտնել դիակները տանելու համար:

Մեհմանայից սև ժապավենի նման երևում էր Մարտակերտ տանող մայրուղին: Երբ առաջ էինք շարժվում, բոլոր զինվորների կրծքից մեկեն հառաչանք դուրս թռավ. անտառից այն կողմ հեռվում երևացին Մարտակերտի լույսերը: Հոսանք ստանում են Միր Բաշիրից: Դատարկեցինք մեզ հետ բերած բեռներն ու առավոտյան հետ դարձանք: Դրմբոնի շրջակա բարձունքներից մեկում էինք, երբ ծագող արեգակի շողերի ներքո երևաց ջրամբարի կապույտը, իսկ ավելի ձախ՝ հերոսների քանդված արծվաբույն Հաթերքը: Գրավյալ գյուղերի բնակչությունը ցրվել է տարբեր բնակավայրերում, հավաքական մի ամբողջությամբ մնացել են միայն գյուղերի ջոկատները և դիրքավորվել իրենց ծննդավայր տանող ճանապարհին:

Փոփոխվող հերթափոխի հետ Առաջաձոր հասնելու համար երբ իջնում էինք դժվարանցանելի մի քանի կիլոմետրանոց ճանապարհով, զինվորներից մեկը կատակեց՝ մի քանի օր առաջ լավ էր. Առաջաձորի զորանոցից իսկույն դիրքերն էինք հասնում, հիմա ճանապարհը երկարել է: Մյուսներն էլ կեսկատակ-կեսլուրջ ավելացրին՝ ոչինչ, դիրքերը թող Առաջաձորից շատ հեռու գնան, մենք տեղ կհասնենք, մենք կդիմանանք:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 16-ը փետրվարի, թիվ 27

«ՊՈՍՏԵՐԸ ԴԵՌ ՊԱՀՈՒՄ ԵՆՔ»

1990 թ. մայիսին, երբ խորհրդային բանակի օգնությամբ ադրբեջանական ՕՄՕՆ-ին հաջողվեց տեղահանել Հադրութի տասնյակից ավելի գյուղեր, թվում էր՝ շրջանը այլևս ոտքի չի կանգնի և չի կարողանա դիմակայել որևէ ճնշման և կդառնա Արցախի աքիլլեսյան գարշապարը: Բարեբախտաբար, հակառակը եղավ: Հնայած Ադրբեջանի հետ ամենամեծ ընդհանուր սահման Հադրութը ունի, սակայն շրջանը ոչ միայն դիմակայեց հակառակորդի բանակի մեծածավալ գրոհներին, այլև հետևողականորեն ու հմուտ ռազմավարական քայլերով կարողացավ ազատագրել ռազմագիտական կարևոր նշանակության բնակավայրերի մեծ մասը:

Ինչպես ողջ ԼՂՀ-ում, այստեղ էլ տեղային ինքնապաշտպանության ջոկատների հիմքի վրա ստեղծվել են ազգային բանակի ստորաբաժանումներ, ուր ընդգրկված են մինչև 45 տարեկան գրեթե բոլոր տղամարդիկ և ապրում են զորանոցային կյանքով: Բանակային այս համակարգը, ի տարբերություն մինչ այդ գործող ջոկատային ինքնապաշտպանության, արագ արձագանքման սկզբունքով հնարավորություն է տալիս իսկույն մեկնել այն կետերը, որտեղից հակառակորդը փորձում է ճեղքել ռազմաճակատի գիծը: Միաժամանակ, իբրև կանոնավոր բանակի զորամիավորումներ, գյուղական այս վաշտերը միայն իրենց տարածքում չեն իրականացնում դիրքային հերթապահությունը. ուժերը հավասարապես են բաշխվում ողջ ԼՂՀ տարածքում: Ընդհանուր այս զորակոչը ոչ միայն բանակն է դարձնում համաժողովրդական, այլև այն կապում առօրյա կյանքի բոլոր հոգսերին, որովհետև հայրենիքի զինվորը միաժամանակ իր տան տղամարդն է և պատասխանատու ընտանիքի առաջ: Սակայն պատերազմական փորձություններում և կյանքի հոգսերի ընդհանուր կծիկում էլ կատակելու ուժ են գտնում՝ ասելով,

թե կանայք ըմբռնումով են մոտենում զորանոցային կյանքին ու մեր տուն չգալուն:

Հադրութի շրջանը առանձնանում է ոչ միայն արտաքին վտանգին հակազդելու իր կարողությամբ, այլև ներքին կյանքի կազմակերպմամբ: Չնայած ընթացող պատերազմին՝ գործում են շրջանի գրեթե բոլոր դպրոցները: Դեռևս չազատագրված կամ պարբերական հրետակոծության գոտում գտնվող գյուղերի դպրոցներն էլ տեղաբաշխված են համեմատաբար ապահով բնակավայրերում: Ձմռան այս ցրտերին հրետակոծության վտանգին գումարվել է նաև ջեռուցման խնդիրը: Բնակչության ուժերով դասասենյակների համար վառարաններ են պատրաստվել, փայտ հասցնելն էլ հոգում են տեղի տնտեսությունները, եթե հնարավորություն ունեն, իսկ մնացյալ վայրերում՝ ծնողները: Տեսնել է պետք, թե ինչպես առավոտյան երեխաները դպրոց են գնում մի ձեռքին պայուսակը, մյուսին՝ մի քանի կտոր փայտ: Շրջանի ժողկրթբաժվար Աբրահամյանի վկայությամբ՝ հակաօդային պաշտպանության կայուն համակարգի ստեղծումից հետո դպրոցական կյանքի այս կազմակերպումն էր թերևս երկրորդ կարևորագույն գործոնը, որը հանրապետության տարբեր շրջաններից ժողովրդին հայրենի բնակավայրերը վերադարձրեց:

Պատերազմով է չափվում այսօր կյանքի յուրաքանչյուր ոլորտ, այդ թվում և տնտեսությունը: Հադրութը գերազանցապես գյուղատնտեսական շրջան է, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում: Ընթացող պատերազմը կրճատել է օգտագործվող հողատարածությունները, որոնք կամ հակառակորդի նշանառու կրակի տակ են, կամ էլ դեռևս չեն ազատագրվել 1990 թ. մայիսյան տեղահանության ալիքից հետո: Ժողովուրդը և տնտեսությունների ղեկավարները, սակայն, անգամ այս պայմաններում հնարավոր առավելագույնն են անում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար: Ցանքսերի կրճատումը պարտադրում է վերանայել ցորենին և խաղողին հատկացվող հողատարածությունները: Հացահատիկը այսօր ինքնաբավ կենսապահովման կարևորագույն պայմանն է, իսկ խաղողագործությունը՝ տնտեսությունների եկամտի գլխավոր աղբյուրը: Եվ որպեսզի հնարավոր լինի թե՛ ժողովրդին ցորենով ապահովել, և թե՛ գյուղի կարիքները հոգալու համար պահպանել տնտեսությունների եկամուտները, ցորենը ցանում են ամեն տեղ, ուր կաճի, անգամ լեռների արևահայաց լանջերին, իսկ առավել աշխատատար և որոշակի միջավայր պահանջող խաղողն աճեցնում են դաշտային հատվածներում: Այստեղ ևս վերջին տարիներին խիստ կրճատվել է անասնագլխաքանակը՝ կերի պակասի և ժամանակին ադրբեջանական ՕՄՕՆ–ի կատարած անպատիժ հափշտակումների պատճառով:

Ընդհանրապես Հադրութի շրջանը կարելի է համարել պատերազմական օղակում գտնվող և արտաքին աշխարհի հետ տնտեսական գրեթե բոլոր կապերը խզած ներփակ վարչական այն մեկ նվազագույն միավորը, որը հիմնականում ապավինում է իր ներքին ռեսուրսներին և հումքային բազային: Այս ամենի համար շրջանը մեծապես պարտական է Իգոր Մուրադյանին: Նրա գլխավորած «Թևան» հայրենակցական–բարեգործական միության ջանքերով շրջանի Մեծ Թաղլար գյուղում բացվել է գորգագործական արհեստանոց, իսկ շրջկենտրոնում՝ գործվածքային արտադրամաս: Բերված սարքավորումների շնորհիվ արցախյան ավանդական վարպետությանը գումարվել է ժամանակակից սարքավորումների արտադրողականությունը. մի նոր կենդանություն ու փայլ են ստացել Արցախի հինավուրց նախշերը:

Դազգահների վրա գործվող գորգերը դրսում են վաճառվում և մեծ պահանջարկ ունեն, իսկ գործվածքային արտադրամասի արտադրանքը՝ տարբեր գործվածքներ, արդեն իրացվում է ներքին շուկայում և վաճառվում է միայն ինքնարժեքով. միությունը եկամուտ չի ակնկալում, այլ հոգում է բնակչության կարիքները: Ապրանքափոխանակմամբ արտահանվող գորգերի դիմաց ներմուծվում են առաջին անհրաժեշտության ապրանքներ:

Թե՛ հիշյալ դազգահները և թե՛ գործելու մեքենաները տեղադրված են տներում: Բնականոն կյանքի դեպքում սովորաբար այդպես են վարվում, որպեսզի մայրերը թե՛ աշխատեն և թե՛ երեխաներին խնամեն: Պատերազմի պայմաններում ավելանում է ևս

մեկ կարևոր գործոն՝ հնարավորին չափ խուսափել մարդկանց մեծ շինություններում հավաքելուց. ամեն րոպե որևէ արկ կարող է պայթել:

Հադրութը ներքին տնտեսական կյանքի համեմատական կայունությամբ և կանոնավորությամբ շատ է պարտական շրջխորհրդի նախագահ Գրիշա Հայրապետյանին: Այս երիտասարդը համընդհանուր սեր և հարգանք է վայելում շրջանում: Ցուրտ ձմեռ է, բայց նախագահի սենյակում վառարան և պատուհան չկա: Ընդհանուր զբաղվածության և հոգսերի մեջ՝ չկորսված մեղմ հումորով ասում է. «Այսպես կրկնակի լավ է. ցրտի շնորհիվ թարմ եմ մնում, եթե պատուհան լիներ, ապա մոտակայքում պայթած յուրաքանչյուր արկից հետո անհանգստացած ներքև էի նայելու՝ արդյոք փշրված ապակու կտորները ներքևում որևէ մեկի գլխին չեն թափվել»: Ապա մեկեն լրջանալով ասում է. մարդիկ անասելի վատ են ապրում, գործկոմի բոլոր սենյակներում հնարավոր չէ վառարան տեղադրելը, իսկ եթե որևէ մեկի սենյակում չկա, ինքը բարոյական իրավունք չունի տեղադրել: Հետո դարձյալ կատակում է. ցուրտը նպաստում է, որ հաճախ գնա մյուսների սենյակները, բաժինների հետ կապը այժմ ավելի կենդանի է:

Հադրութը առավել ևս, քան մյուս շրջկենտրոնները, կտրված է Ստեփանակերտից ու մնացյալ աշխարհից: Թերթերը Արցախ չեն առաքվում, իսկ Հադրութ գրեթե չեն հասնում: Էլեկտրաէներգիայի բացակայությունն էլ գրեթե լիակատար է դարձնում լրատվական շրջափակումը: Գյուղերում առանձին մարդիկ, ովքեր մարտկոց ունեն, ամեն օր հաղորդվող լուրերը սղագրում են և հաջորդ առավոտյան կարդում՝ արցախյան բարբառի շեշտն ու կնիքը հաղորդելով համաշխարհային իրադարձություններին: Նորությունները իմանալու համար հավաքված մարդկանց թիվը սովորաբար գերակշռում է հացի հերթերին: Նույն կերպ էլ որևէ լուր ծանուցելու համար գրամեքենայով բազմաթիվ օրինակներով բազմացնում, փակցնում են բանուկ վայրերում և բաժանում տեղեկությունները հաղորդող մարդկանց: Փետրվարի 12-ին արցախյան պոռթկման 5-րդ տարելիցի առթիվ շրջանի ժողովրդին շնորհավորական խոսքով դիմել էր Գրիշա Հայրապետյանը: Այն ավարտվում էր հետևյալ տողերով. «Դաժան պաշարման պայմաններում պատերազմելու հետ մեկտեղ հայ ժողովուրդը կառուցում է իր պետականությունը: Ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում, բայց մենք համոզված ենք, որ կկառուցվի Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանը: Այս նպատակով մենք սկսեցինք պայքարը, որի երկունքը 1988 թ. փետրվարի 12-ն էր: Թող այդ օրվա մաքուր շունչը միշտ մեզ հետ լինի: Փետրվարի 12-ը ղարաբաղցու ոգու հաղթանակի տոնն է: Թող այդ օրը դառնա ազգային տոն: Կեցցե՛ փետրրվարի 12-ը՝ արցախյան ժողովրդի համազգային ապստամբության տարեդարձը: Թանկագին հայրենակիցներ, շնորհավորում եմ փետրվարի 12-ի լուսավոր օրվա առթիվ»:

Լուսավոր այդ օրը հակառակորդը «նշեց» հրետանային համազարկով: Դիրքերը ընկերներին փոխարինելու գնացող զինվորներից մեկն ասաց. «Հինգերորդ տարին է՝ էսպես տանջվում ենք, բայց պոստերը դեռ պահում ենք»:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 19-ը փետրվարի, թիվ 30

ԳԵՏԱՇԵՆ ԲԱՆԱԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՇԵՆՔԸ

1992 թ. ադրբեջանական բանակի հունիսյան մեծածավալ հարձակումից հետո ընկավ Շահումյանը: Շրջանի փախստական դարձած մոտ տասը հազարից անցնող ժողովուրդը ապաստանեց Մարտակերտում՝ խուճապի ընդհանուր ալիք առաջացնելով նաև այստեղ, որովհետև շարժման սկզբից ի վեր Շահումյանն էր համարվում լավագույն և կազմակերպված ինքնապաշտպանություն ունեցող շրջանը: Հուսալքության ծավալված ալիքը սոսկ հոգեբանական չէր, այլ կապվում էր Շահումյանի ունեցած ռազմաստրատեգիական կարևորության հետ, քանի որ այն լեռնաշխարհագրական մի միասնություն էր կազմում Մարտակերտի հետ:

Շատ է գրվել այս երկու շրջանների անկման մասին: Եղել են իրական քննադատություններ, սակայն, դժբախտաբար, առավել գերիշխել են քաղաքական նպատակներով կատարված էժանագին շահարկումները: Ցանկություն չունենալով խառնվել ո՛չ այդ քննարկումներին և ո՛չ էլ իրավունք վերապահելով՝ խորանալ միջազգային աշխարհաքաղաքական բարդ խաղերի մեջ կամ էլ անդրադառնալ մեր հանրապետությունում, ԼՂՀ–ում և Ադրբեջանում ընթացող այն ներքաղաքական պայքարին, որոնք իրենց կնիքն են դնում սահմանների գծագրման վրա՝ պարզապես փորձենք ցույց տալ, թե ինչպես լեռնային երկրամասում, որի տարբեր հատվածներից յուրաքանչյուրն ընդգրկելով բնակավայրերի մի ողջ շղթա՝ բնական ամբողջություն է կազմում, անգամ մեկ գյուղի կամ բարձունքի կորուստը կարող է քանդվող կծիկի համաբանությամբ առաջ բերել անկումների մի ողջ շղթա:

Վարչաքաղաքական տարբեր բաժանումների ենթարկված, բայց ռազմագիտական առումով լեռնաշխարհագրական մեկ

միասնություն կազմող մեր հայրենիքի այս փոխկապակցված ամբողջությունը լավագույնս թերևս բնորոշել են գետաշենցիները՝ ասելով. «Գետաշենը բանալին է, կողպեքը՝ Շահումյանը, դարպասը՝ Արցախը, շենքը՝ Հայաստանը»: Գետաշենին բոլորից մոտն էին Շահումյանի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը, որոնցից երկու անգամ շատ բնակչություն ուներ այս գյուղը, որը 1990 թ. հունվարյան հարձակման ժամանակ ոչ միայն թիկունք եղավ Ազատ և Կամո գյուղերին, այլև ստիպեց դադարեցնել հարձակումը Մանաշիդի վրա:

Գետաշենի ողբերգությունից մի քանի ամիս անց, դարձյալ խորհրդային բանակի աջակցությամբ, ՕՄՕՆ–ը հայաթափեց հենց Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը, որոնք կարճ ժամանակ անց վերստին ազատագրվեցին:

Շահումյանն էլ իր հերթին համանման մի պատվար էր Մարտակերտի համար, որոնք իրար կապվում էին Գյուլիստանով և Կարաչինարով: Առաջինով անտառային ճանապարհը ուղիղ տանում էր Հաթերք. ի դեպ, հենց այստեղով էլ հիմնականում Մարտակերտ հասավ տեղահանված ժողովուրդը, իսկ երկրորդով հասնում էր Մարտակերտի մյուս եզրային գյուղը՝ Թալիշը, և երկու շրջաններն իրարից անջրպետող ջրբաժանն էր Ինջա գետը: Շահումյանի անկ-

մամբ միանգամից մերկացավ Մարտակերտի հյուսիսը՝ անպաշտպան դարձնելով Հաթերք–Թալիշ երկայն աղեղով ձգվող բնակավայրերը, որովհետև մինչ այդ Մռավի հովանու ներքո գտնվող և դարեր շարունակ անառիկ մնացած Գյուլիստանի գրավմամբ լեռներին իշխող բարձրադիր անտառներով բացվեց ճանապարհը դեպի Հաթերք, որը մինչ այդ շրջապատված լինելով միայն հայկական բնակավայրերով՝ սոսկ ոչ նշանառու հրետակոծության էր ենթարկվում Քելբաջարից:

Նույնը վերաբերում է և Թալիշին: Լինելով Շահումյանն ու Մարտակերտը իրար կապող հանգուցակետային գյուղը՝ այն դարձել էր պարբերական հարձակումների թիրախ, սակայն երբ հակառակորդին հաջողվում էր առաջ գալով մոտենալ գյուղին, իսկույն իր թիկունքում զգում էր վերից՝ Կարաչինարից օգնության շտապած շահումյանցիների հուժկու հարվածը և մեծ կորուստներով նահանջում: Կարաչինարի անկմամբ օգնության ճանապարհը վերածվեց հարձակման ճանապարհի, և գրեթե շրջափակման թերակղզում հայտնված Թալիշի համար արդեն շատ դժվար կլիներ դիմակայել թե՛ Թարթառի շրջան վերանվանված Միր Բաշիրից և թե՛ հյուսիսից՝ Ինջա գետի կողմից եկող հակառակորդին, և գյուղը գրավվեց:

Միգուցե կային մեզ անհայտ այլ գործոններ ևս, որոնք, գումարվելով տիրող ընդհանուր խուճապին և հուսալքությանը, պատճառ դարձան անկումների նոր շղթային, սակայն ռազմագիտական առումով այն կանխորոշվեց Գյուլիստանի և Կարաչինարի անկմամբ: Թալիշի գրավմամբ բնական կապվածության շղթայով ընկան Չայլուն ու Լենինավանը և ընդհանրապես Մարտակերտի դաշտային հատվածը, և ճակատի նոր գիծը մի կարճ ժամանակով սկսեց անցնել Մարտակերտի շրջկենտրոնի մոտով: Երկու ուղղությամբ՝ դեպի շրջկենտրոն և Հաթերք առաջ շարժված հակառակորդը զինական գերակշռության և մինչև այժմ էլ չբացահայտված մի քանի այլ պատճառներով կարողացավ գրավել երկուսն էլ, որից հետո, անկախ մարտնչելու վճռականությունից, բնականորեն պետք է ընկնեին ևս մի քանի բնակավայրեր, և ձևավորվեր ռազմաճակատի նոր գիծը, ու գրավվեցին նաև շրջկենտրոնից վեր ձգվող մայրուղու կողքին գտնվող Ներքին Հոռաթաղ և Կուսապատ գյուղերը և մայրուղուց հյուսիս եղած բոլոր բնակավայրերը՝ երկու կողմերի համար էլ բնական սահմանազատիչ դարձնելով ճանապարհը և Թարթառ գետը:

Այս նոր գծի շուրջն էլ շուտով նոր մարտեր բորբոքվեցին, որոնց ընթացքում օգոստոսին Արցախի ազգային բանակի ուժերին հաջողվեց ազատագրել Հաթերքը և միաժամանակ մոտենալ Մարտակերտ շրջկենտրոնից ընդամենը կես կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ներքին Հոռաթաղին: Սակայն շուտով այս ամենը վերստին հանձնվեց հակառակորդին: Ավելին, Ադրբեջանը նոր հարձակման շնորհիվ կարողացավ անցնել Թարթառը և գրավել Վաղուհասը, իսկ մյուս ուղղությամբ էլ տիրանալով Մեհմանա գյուղին իշխող բարձունքներին՝ փաստորեն կանխորոշեց և Դրմբոնի ու Չլդրանի ճակատագիրը, որից հետո էլ քանդումների շղթայով ինքնաբերաբար տիրացավ Վաղուհասի և Դրմբոնի միջև գտնվող Վերին Հոռաթաղին, Հարությունագոմերին, Պողոսագոմերին և Կոճողուտին: Այս առաջխաղացումից հետո բավականին տևական ժամանակով (մինչև Չլդրանի ազատագրումը) հաստատվեց ռազմաճակատի նոր գիծ, որը տարանջատվեց Վաղուհասը և Գանձասարը երիզող բարձունքներով և շարունակվեց Առաջաձոր–Կիչան–Սրխավենդ–Ղազանչի գծով:

Այս գծի առժամանակ անփոփոխ մնալը բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ՝ Ադրբեջանը լուծեց միանգամից մի քանի խնդիր: Տիրելով բարձրադիր Հաթերքին՝ փաստորեն, հեռահար հրետանու նշանառությամբ վերահսկողություն սահմանեց ողջ շրջանի վրա, իսկ գրավելով Վաղուհասն ու Դրմբոնը՝ լիովին տիրեց մայրուղուն, որը Մարտակերտի գրավյալ բնակավայրերը ծանր տեխնիկայի տեղաշարժով իրար կապելուց առավել կարևորվում էր որպես Քելբաջար տանող ուղի: Լեռների կողերի հատմամբ ստեղծված այս մայրուղին Արցախի հանդեպ հոգատարության դրսևորում չէր, այլ Ադրբեջանի ղեկավարության՝ ժամանակին կատարած քաղաքական մեծ հեռատեսության արդյունք: Մինչ ճանապարհը վերահսկելը, Քելբաջարը երեք կողմերից մեկուսացված էր. մի կող-

մից սահմանակից էր մեր հանրապետությանը, մյուս կողմից՝ Մարտակերտին և երրորդը՝ Լաչինի միջանցքի հյուսիսային հատվածին, որը դժվարանցանելի ճանապարհով էր կապվում Ադրբեջանին: Մեր հանրապետության սահմանները գնդակոծելու, Լաչինի միջանցքի վրա ճնշումը ուժեղացնելու, ինչպես նաև Մարտակերտում ընթացող գործողությունների վրա ազդելու նպատակով, ձմեռային պայմաններում հարկավոր էր փոխադրումների անխափանությունը ապահովելու համար լիովին տիրել մայրուղուն և ոչ թե այն թողնել սոսկ չեզոք սահմանազատիչ գիծ երկու կողմերի համար: Մայրուղու գրավմամբ Ադրբեջանը միաժամանակ տիրացավ և Սարսանգի ջրամբարին ու Թարթառ գետի ողջ հոսանքին՝ ռազմական, էներգետիկ և գյուղատնտեսական առումով իր համար այնքան կենսական կարևորություն ունեցող այս ջրային ավազանին:

Միաժամանակ ակնհայտ էր, որ չնայած իր տևական կայունությանը, Գանձասարից մինչև Ղազանչի ձգվող ռազմաճակատի գիծն էլ չէր կարող սահմանազատիչ դառնալ երկու կողմերի համար, որովհետև չկար բնական այն բաժանվածությունը, որը լեռնային երկրներում լեռնաշղթաներով ու գետերի հուներով պայմանավորում է սահմանները, և նվազագույնը կամ իրենք էին մինչև Խաչենագետ հասնելու, կամ էլ ազատագրվելու էր մինչև Թարթառ ընկած տարածքը:

Եղած գիծը ձևավորվել էր մի շարք քաղաքական գործոնների, մինչ այդ ծավալված մարտերի առաջ բերած ուժասպառության և վերահաս անբարենպաստ եղանակի պատճառով, ու պարզ էր, որ եղանակների տաքանալու դեպքում հակառակորդի ծանր տեխնիկան առաջ էր շարժվելու: Այս ընթացքում, չհաշված դիրքային փոխհրաձգությունը և հրետակոծությունը, Ադրբեջանի կողմից հարձակման թիրախ էր ընտրվել Կիչանը, իսկ Արցախի ուժերն էլ շարունակ փորձում էին ազատագրել Չլդրանը, և մարտական գործողությունների ամենասուր ծավալումը հենց այս հատվածում պատահական չէր: Եթե պաշտպանական բնագծերը ճեղքվեին այս հատվածում, ապա հակառակորդը կարող էր առաջ շարժվել միանգամից երեք ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրի համար էլ նոր պաշտպանական գիծ կազմելը գրեթե անհնարին կլիներ:

Կիչանը, փաստորեն, այն կետն էր, որից այն կողմ այլևս նահանջելու տեղ չկար, և այս գյուղի հանձնումը հավասարազոր էր Արցախի հանձնմանը: Բարեբախտաբար, Արցախի զինվորների անօրինակ նվիրման շնորհիվ տեղի ունեցավ հակառակը՝ պատասխան հակահարձակումը, և ազատագրվեց Չլդրանը: Ամրապնդվելով շրջակա բարձունքներին՝ այժմ էլ Արցախի ազգային բանակի մարտիկները, երեք ուղղությամբ առաջ շարժվելով, սկսում են հավաքել «քանդված» կծիկը: Դիրքավորվելով Մեհմանայի առջև ու փակելով այնտեղից աղեղնաձև հնարավոր հարձակումը Չլդրանի վրա՝ նրանք մոտեցան Դրմբոնին: Անհրաժեշտ էր նախ փակել ճանապարհը, որը կատարվեց Վաղուհասի ազատագրմամբ: Չլդրանից հետո, փաստորեն, ամենածանրը և վճռորոշը նրա ազատագրումն էր, որից հետո արդեն հնարավոր եղավ վերցնել և Դրմբոնը, ու հակառակորդը ինքնաբերաբար թողեց մայրուղու փակված այս ողջ հատվածի երկայնքով ընկած Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Պողոսագոմեր և Կոճողուտ գյուղերը: Այսինքն՝ ինչպես ժամանակին Վաղուհասի և Դրմբոնի հանձնմամբ վճռվեց նաև այս գյուղերի անկումը, այնպես էլ հիմա դրանց երկուսի ետ վերցմամբ էլ՝ թվարկվածների ազատագրումը:

Արցախում ընթացող մարտական գործողությունները ևս մեկ անգամ վկայում են, որ յուրաքանչյուր գյուղ սոսկ որոշակի տարածք ընդգրկող մեկ միավոր չէ: Այն մեր մնացյալ հայրենիքին կապվում է ոչ միայն այնտեղ ապրող ժողովրդով, եղած հուշարձաններով, այլև միահյուսված է բնական գոգավորությամբ և ջրային ցանցով, ու ամեն բնակավայրի պաշտպանությունը, առաջին հերթին, լինելով տեղացիների գործը, միաժամանակ մնացյալ ժողովրդի պարտքն է, որովհետև կորստյան դեպքում միայն ինքը չէ, որ ընկնում է, այլև իր հետ տանում է նաև շրջակա բնակավայրերը՝ առավել մեծացնելով հայոց պատմության կորուստների ժամանակագրության շղթան:

ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 1–8 ապրիլի, թիվ 1

ԳՐՈՀ ԵՎ ԽՈՒՃԱՊ
ԿԱՄ՝ ԹԱՆՁՐ ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Քելբաջարի գործողությունները այնպես էին ծրագրված, որ ծավալված հակահարձակման ավարտից հետո երեք ուղղությամբ առաջ շարժվող ջոկատներն իրար հանդիպեցին դեպի շրջկենտրոն տանող ավտոմայրուղուն մերձ գտնվող թունելի մոտ: Մարտական գործողությունների զարգացման ընթացքն իսկ վկայում է, որ մեր հանրապետության զինված ուժերը որևէ մասնակցություն չեն ունեցել այս մարտերին, որոնք, փաստորեն, սկսվեցին ԼՂ տարածքում գտնվող և թիկունքից պարբերաբար հակառակորդի զինական համալրումը ստացող Նարեշտար, Չարեքտար և Աղդաբան գյուղերում տեղակայված կրակակետերը ոչնչացնելով: Առաջին գրոհը ձեռնարկվեց Աղդաբանի ուղղությամբ, որը թիկունքից սեպի նման խրվել էր Մարտակերտի մեջ: Վերջին տարիներին այն պարզապես չարիք էր դարձել Հաթերքի ենթաշրջանի գյուղերի համար: Այստեղից տարբեր տրամաչափի հրետանուց պարբերաբար հրետակոծությունների էին ենթարկվում հայկական բնակավայրերը, ինչպես նաև այստեղից կատարված հարձակմամբ անցյալ տարի լիովին այրվեց հայկական Չափարը: Աղդաբանի կրակակետերի ոչնչացումն էլ ձեռնարկվեց հենց Չափարից ու Հաթերքից: Այս գործողությունը գլխավորում էր զինվորների շրջանում Մորուք մականվամբ հայտնի Վերին Հոռաթաղի գումարտակի հրամանատար Ռաֆայել Ղազարյանը:

Աղդաբանի գրավումը հնարավորություն ընձեռեց լռեցնել ԼՂՀ տարածքում գտնվող մեկ այլ ռազմականացված կետ՝ Չարեքտարը: Այստեղից էլ դարձյալ շարունակական կրակի տակ էին պահվում Գետավանը և Հաթերքի ենթաշրջանի մնացյալ գյուղերը: Անցյալ տարի հակառակորդը Գետավանը մոխրի վերածեց հենց Չարեքտարից կատարված հարձակմամբ: Հայկական բնակավայրերի համար մշտական սպառնալիքի վերածված այս ռազմակետի վերացումը կատարվեց երկու ուղղությամբ՝ Գետավանից Մարտակերտ–Քելբաջար ավտոմայրուղով և վերից՝ Աղդաբանից՝ լեռնային դժվարին տեղանքով: Այնուհետև սկսվեց Նարեշտարի վրա ձեռնարկված գրոհը: Այն ևս վերածվել էր սոսկ ռազմական հենակետի, որտեղից շարունակ հրետակոծվում էր Վանք գյուղը, ինչպես նաև հայկական և արևելաքրիստոնեական մշակույթի գոհարներից մեկը՝ Գանձասարը: Նարեշտարը արցախյան ուժերի վերահսկողության ներքո վերցնելը բացառեց նաև այստեղից ձգվող ճանապարհով հարձակումը Չարեքտարի վրա: Միմյանց հետ ներքին փոխկապակցվածության մեջ գտնվող ու Մարտակերտի շրջանի համար մեծ սպառնալիք եղող հիշյալ ռազմակետերի ճնշումը ԼՂՀ ուժերին հնարավորություն ընձեռեց զարգացնելու հակահարձակումը այս երեք գյուղերի ուղղությամբ:



Նարեշտարից գրոհ ձեռնարկվեց երկու ուղղությամբ՝ Մարջումայի և Թազաքենդի: Մարջումայի գրավումը ապահովեց Չարեքտարի թիկունքը, իսկ Թազաքենդն էլ՝ Նարեշտարի, ինչպես նաև հակառակորդին զրկեց ռազմաճակատի այս հատվածում մանևրե-

լու և ուժերը վերաբաշխելու հնարավորությունից: Չարեքտարից էլ դեպի Քելբաջար շրջկենտրոն ձգվող ավտոմայրուղով զարգացնելով հաջողությունը, ԼՂՀ ուժերը գրավեցին մայրուղու վրա գտնվող Բաղլիփայա և Վանք գյուղերը: Վերջինիս մոտ է գտնվում վաղ քրիստոնեական ամենանշանավոր կոթողներից մեկը՝ Դադիվանքը: Համաձայն եկեղեցական ավանդության՝ այն կառուցել է Թադեոս առաքյալի աշակերտ Դադին:

Երրորդ ուղղությամբ հարձակումն սկսվեց Աղդաբանից, ուր Չարեքտարի գրավումից հետո ետ էր վերադարձել Մորուքի գումարտակը և այստեղից գրոհել Բաղրլիի ուղղությամբ: Այս վերջին ու Յանշաղ գյուղերի մոտով է անցնում Քելբաջարը մնացյալ Ադրբեջանի հետ կապող և դեպի Կիրովաբադ տանող միակ ու ոչ այնքան բարեկարգ ճանապարհը:

Ողջ շրջանում երբ տարածվում է այն լուրը, թե ճանապարհը փակվում է և իրենք կմնան շրջափակման աքցանում, մի սոսկալի խուճապ է սկսվում թե՛ Վարդենիսի և թե՛ Լաչինի միջանցքի հյուսիսային ուղղությամբ տեղակայված ուժերի մեջ, և նրանք, թողնելով իրենց դիրքերը, փախչում են դեպի այն խաչմերուկը, որտեղից դեպի Մարտակերտ ձգվող ավտոմայրուղուց վեր ելնող ճանապարհը տանում է շրջանից դուրս: Համանման խուճապ է պատում նաև բնակչությանը: ԼՂՀ ուժերը տեսնելով, որ ճանապարհը փակելով սարսափի են մատնել շրջանում գտնվողներին, ստիպված ետ են քաշվում՝ նահանջի միջանցք թողնելով բնակչության և ադրբեջանական բանակի զինվորների համար: Միաժամանակ բարձրախոսներով շարունակ զգուշացվում է, թե Արցախի բանակի ստորաբաժանումները որևէ խոչընդոտ չեն լինի դուրս եկողների համար: Բայց քանի որ մինչև Քելբաջարը արդեն եղել էր Շահումյանի ու Մարտակերտի ողբերգությունը, գաղթն ու գազանաբար կատարված սպանությունները, որոնց մի մասի ականատեսն ու մասնակիցն էին եղել նաև Քելբաջարի շրջանից, այստեղի բնակչությունը, պատասխան հարվածի հնարավորության մտքից սարսափած, խուճապահար սկսում է փախչել՝ առանց լսելու բարձրախոսով շարունակ հնչող հավաստիացումները, թե իրենց ձեռք չեն տա և չեն վնասի:

Քելբաջարից դուրս եկող ճանապարհի ողջ երկայնքով թափված իրերը, անկողինները վկայում էին, թե իրենց տները ինչ սարսափով են թողել և հեռացել բնակիչները: Ի դեպ, նաև ասենք, որ այստեղի գյուղերում գտնվեց Մարտակերտի անասնագլխաքանակի մի մասը, շրջանի որոշ տրակտորներ և արցախյան ընտիր գորգեր, որոնք ոչ միայն Մարտակերտից էին, այլև Շահումյանից: Այս ամենը անցյալ տարվա ամռան գաղթի ծանր օրերին չէր հասցրել իր հետ վերցնել ժողովուրդը, և շուտով այդ բոլորը հայտնվել էր հարևան Քելբաջարի շրջանում: Զինվոր և բնակիչ իրար խառնած այս խուճապից հետո ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ինքնաբերաբար տիրեցին ողջ շրջանի տարածքին, և ռազմական գործողությունների ընթացքը, ու այս տեղանքի յուրահատկությունները ճիշտ հասկացող յուրաքանչյուր ռազմական անաչառ մասնագետ կվկայի, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ոչ միայն չեն միջամտել ծավալված մարտերին, այլև անգամ դրա անհրաժեշտությունն էլ չի եղել, քանի որ Վարդենիսի շրջանի հարևանությամբ գտնվող դիրքերը ադրբեջանական բանակի զինվորները պարզապես թողել և փախել են, որ շրջապատման մեջ չմնան և թիկունքից չխփվեն:

Աղդաբանի, Նարեշտարի և Չարեքտարի կրակակետերի ոչնչացմամբ ու Քելբաջարի շրջանի վրա վերահսկողության սահմանմամբ Մարտակերտի շրջանի ազատագրված տարածքներում՝ Չլդրանից մինչև Դրմբոն և այստեղից էլ մինչև Հաթերքի ենթաշրջան, մարդիկ մեկեն ապագայի հանդեպ հավատով լցվեցին:

ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 22 ապրիլ–2 մայիս, թիվ 2

«ԵՍ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՄ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԻՑ»

Ազգային–ազատագրական պայքար մղող ժողովուրդները, ազատության ճանապարհին կրելով ծանր ու թանկ կորուստներ, գտնում են նաև նվիրյալ բարեկամներ: 1990 թ. մայիսից մարտնչող արցախահայության համար նման նվիրյալ դարձավ բուլղար կինոլրագրող Ցվետանա Պասկալևան:

Լսելով գետաշենյան ողբերգության մասին՝ նա կարողանում է ճեղքել մեր ժողովրդին պարտադրված լրատվական շրջափակումը ևս ու հասնել հայկական հնավուրց այս գյուղն ու հայաթափված բնակավայրում հանդիսատեսն է դառնում արյունոտ այդ ողբերգության վերջին արարի: Լսելով, որ համանման ճակատագիր է սպասվում նաև Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերին, շտապում է այնտեղ, և 1990 թ. ամռանից Ցվետանայի ճակատագիրը կապվում է Արցախի հետ:

Այդ օրերին նա չերկնչեց ու հայ ազատամարտիկների հետ մնաց Էրքեջ գյուղում, թեև իրեն զգուշացրել էին, որ առաջիկա ժամերին սպասվում է ադրբեջանական ՕՄՕՆ–ի և խորհրդային բանակի ստորաբաժանումների համատեղ հարձակումը: Կարճ ժամանակ անց սկսված մարտը հակառակորդի կողմից զրահատեխնիկայի կիրառմամբ ընթացած առաջին կանոնավոր մեծ կռիվն էր, որին պատվով դիմակայեցին մեր ազատամատիկները, և ընթացած մարտական գործողությունների վավերագրողը դարձավ Ցվետանան: Նա էլ մի զինվոր էր, որ դիմացից եկող գնդացրային կրակի դեմ էր ուղղել իր տեսախցիկը՝ հավատալով, թե այն էլ արցախահայության ցավը աշխարհին հասցնող մի զենք է: Այդ օրվանից լեռնալանջերին պայթող արկերի հարվածից խուլ տնքացող հողի ձայնը սկսեց անցնել նրա սրտով, և ընթացող դեպքերի լուսաբանման համար եկած բուլղարուհին դարձավ երկրամասում իրար հաջորդող վշտի և ուրախության, տառապանքի ու բերկրանքի տարեգիրը:

Արդեն մոտ երեք տարի է անցել այդ օրերից: Պատերազմը դարձել է առավել դաժան և արյունալի, սակայն թե՛ գաղթի սրտամաշ ճանապարհներին, թե՛ ազատագրված գյուղերի մատույցներում, տեսախցիկն ուսին, նա անբաժան է իրեն հարազատ դարձած ժողովրդից:

Արցախի լեռները ներքին մի կորով ու անբեկանելի հավատ են ներշնչել Ցվետանային: Անցյալ ամռանը՝ Շահումյանի տեղահանության օրերին, Հաթերքում էր, ուր ապաստանել էր շրջանի ժողովուրդը, և ինքը դարձյալ մարդկային ողբերգությունն էր պահ տալիս ժապավենին: Հետո գնացինք Մարտակերտ: Արդեն գրավվել էին Թալիշը, Չայլուն, Մարգուշավանը: Ճակատի գիծը մոտեցել էր շրջկենտրոնին: Լուռ քայլում էինք դատարկվող քաղաքում՝ պատսպարվելով մերթընդմերթ պայթող արկերից: Հետո դուրս եկանք ու միացանք գաղթող ժողովրդին: Երբ ասացի՝ լավ նկարիր, մենք էլ չենք քայլելու այս ճանապարհով, ուր մի վերջին անգամ է հնչում հայոց լեզուն, որ շուտով ընդմիշտ կմարի այս լեռներում, ի պատասխան՝ հավատավոր մի ժպիտով ասաց, թե չանցած մի տարի, էլի անցնելու ենք այստեղով ու նորից հանդիպելու ենք այս ժողովրդին, և գաղթի սարսափից խամրած նրանց աչքերը փայլելու են հաղթանակի ցնծությամբ: Այն ժամանակ մտածեցի, որ դրանք ինձ ու մնացյալ ժողովրդին ուղղված սփոփանքի խոսքեր են լոկ, բայց իսկապես, չանցած մեկ տարի՝ եկավ այդ օրը:

Ժամանակին շրջանի գյուղերում գրեթե յուրաքանչյուր տան բակում գետնափոր մի կացարան էր փորված, ուր պատսպարվում էին բնակիչները հրետակոծությունից: Հիմա վերադարձողները մեծ մասամբ առժամանակ նման կացարաններում են ապրում, բայց արդեն ոչ թե հրետակոծության սարսափից, այլ որովհետև իրենց տները հիմնահատակ ավերված են: Նահանջելիս հակառակորդն

այնպես բարբարոսաբար է այրել դրանք, որ տների աղյուսից ու կրաքարից բարձրացված պատերը հրդեհից ընդհանրապես փոշիացել են՝ ավազահատիկի նման վայր թափվելով ու յուրօրինակ շիրմաթմբեր բարձրացնելով իրենց իսկ հիմքերին:

Գարունը բացվում է նաև փլատակների վրա ու այրված տների մոխիրը ծածկում է ծաղկող ծառերի ճերմակով, դեռևս օդում ծանրորեն կանգուն վառածահոտը ցրում ծառերից տարածվող բուրումնավետությամբ: Բացվող գարնանային բողբոջներն ասես վերադարձի հրավեր են կարդում ցիրուցանված ժողովրդին:

Մարտակերտի գաղթից հետո հիմա էլ գյուղերի վերակենդանացումն է նկարահանում Ցվետանան: Նրա հետ վերստին հանդիպեցինք Քելբաջարի երկայնքով ընթացող մարտական գործողությունների օրերին: Էլի նույն Ցվետանան էր՝ հրազենի նման առաջ պարզված իր տեսախցիկով:

Օրեր անց, երբ արդեն համեմատական խաղաղություն էր, վերադարձանք Գետավան: Մնացյալ գյուղերի նման այն ևս հակառակորդը փորձել էր բնակեցնել: Բոլոր տների պատերին մուգ կապույտով նոր համարներ էին գրված և նոր «տերերի» անունները: Նահանջելիս, սակայն, հակառակորդն այրել էր տները՝ իր ետևից թողնելով միայն մոխիր ու կապույտ ներկով գրված թվեր ու բառեր: Կանգուն մնացած երկու–երեք տներից մեկում տեղավորվել էր ինքնապաշտպանության ուժերի շտաբը՝ պատերազմական օրերի նոր գյուղամեջը:

Ցվետանայի հետ մինչ այդ որքան հանդիպել էինք, կամ խոսել էինք ընթացող դեպքերից, կամ էլ փորձել մեր մտքում ու ժապավենի վրա գրանցել անցնող պահը: Հիմա ներկա հաղթանակի ու ապագա անորոշության սահմանագծում ազատ էինք ու երկար երթից վերադարձածի հոգնածությամբ տեղավորվելով շտաբի մի անկյունում՝ սկսեցինք վերհիշել չար երազի նման անվերջանալի դարձող ավերի այս տարիները:

Պատերազմը խախտեց նաև նրա կյանքի բնականոն ընթացքը: Մոսկվայում ուսանող ասպիրանտուհին կապվեց այս երկրամասին:

Իր իսկ խոստովանությամբ՝ իրեն Արցախ է բերել որևէ ցնցող դեպք ու իրադարձություն լուսաբանելու մասնագետ–լրագրողին բնորոշ կիրքն ու մղումը, սակայն առաջին իսկ հաղորդումից հասկացել է, որ ինքը հարկավոր է տեղի ժողովրդին, որ շրջափակված երկրամասում ապրողները մեծ աշխարհում իրենց մասին ասվող ճշմարտության կարիքն ունեն: *Տարբեր հեռուստաընկերություններից* գրավիչ շատ առաջարկներ են եղել, սակայն ինքը բոլորն էլ մերժել է՝ բարոյական մի պարտավորվածություն զգալով արցախահայության հանդեպ: Մտավախություն ունի, որ եթե կտրվի արցախահայության հետ ունեցած իր կապը, ապա ժողովուրդը կմտածի, որ վիճակն այնքան է վատացել և անհուսալի դարձել, որ Պասկալևան էլ է դադարել այցելել իրենց:

Փաստորեն, լինելով միակ վավերագրողը, որ մասնագիտական բարձր վարպետությամբ և քաղաքական որևէ շարժառիթից զերծ ջերմ սիրով է լուսաբանում Արցախում ընթացող իրադարձությունները, որքան էլ տարօրինակ է, մինչև այժմ մեր հանրապետության իշխանությունների կողմից ոչ միայն չի արժանացել որևէ պետական վերաբերմունքի, այլև անգամ գոնե մեկ պաշտոնական հանդիպման, թեև ինքը դրան որևէ կարևորություն չի տալիս: Ավելին, ամենուր հպարտությամբ ասում է, թե ԼՂՀ–ն ոչ միայն կարողացավ դիմագրավել դաժան այս պատերազմին, այլև պետականության կայացման ճանապարհին ստեղծեց նաև հոգևոր–մշակութային արժեքների իր համակարգը, և ինքն էլ առաջինը արժանացավ Եղիշեի անվան մրցանակին:

Ի դեպ, այս ընթացքում հակառակորդի կրակից մնասվել և շարքից դուրս են եկել իր իսկ միջոցներով գնած երկու տեսախցիկները, իսկ ինքն էլ «պարգևատրվել է» ականանետի մեկ բեկորով:

Չբավարարվելով դրանով՝ հարևան հանրապետությունում նրան արդեն երրորդ անգամն են մահվան դատապարտում, սակայն ինքը գտնում է, որ իր ժապավենները ադրբեջանական ժողովրդի դեմ չեն, ավելին՝ ուղղված են նրա փրկությանը, որովհետև ադրբեջանցի մայրերին ցույց են տալիս ողջ ճշմարտությունը, թե ինչպես զեն-

քին չտիրապետող իրենց զավակներին ուղարկում են անիմաստ մահ գտնելու իր պայքարի անկոտրում վճռականությունը վաղուց հավաստած արցախյան հողում: Իր համոզմամբ՝ Ադրբեջանում որքան էլ հիմա դատապարտեն իրեն, երբ պատերազմն ավարտվի, միևնույն է, երախտապարտ են լինելու, որովհետև ճշմարտությունը մոտեցնում է խաղաղության օրը:

Պատերազմը ակամա դաժանացնում է մարդկանց՝ վերքն ու արյունը դարձնելով օրվա համապատկերի մի մասնիկը: Այն հարցիս, թե պատերազմական սարսափների այս նկարահանումը ինչ հեղաբեկումներ և ցնցումներ է առաջ բերել նրա հոգում, պատասխանում է, թե արդեն սովորել է տեսնել տղամարդկանց դիակները, բայց ոչ մի կերպ չի համակերպվում կանանց և երեխաների անկենդան մարմիններին, և ավելացնում է. «Ես նկարահանում եմ արցունքների միջից»:

Ցվետանայի զարմանալի նվիրումն արցախյան պայքարին ունի նաև բավականին ինքնատիպ մի դրսևորում: Շրջաններից վերադառնալով Ստեփանակերտ՝ այստեղ նա չի իջևանում ոչ հյուրանոցում, ոչ էլ զորանոցներում կամ էլ իր ծանոթների տներում, այլ մնում է միայն զինվորական հոսպիտալում՝ շրջապատված դեղորայքի ու վերքերի սուր հոտերով: Երբ հարցնում ես, թե իր բոլոր զրկանքներին ինչու՞ է գումարել նաև այս մի յուրօրինակ խաչելությունը, երբ մարտերի աղմուկից հետո քաղաքում գոնե մի փոքր հանգստանալու փոխարեն գիշերներն անցկացնում է վիրավորների խուլ տնքոցների ներքո, պատասխանում է, թե այս հոսպիտալն է Արցախի զարկերակը և այստեղ է ինքը շնչում պատերազմի օդը և թե հիվանդանոցում ապրելն իր յուրօրինակ կապն է Ղարաբաղի հետ, վիրավորների հետ հաղորդակցվելու կերպը: Նաև Ստեփանակերտում չցանկանալով անգործ մնալ և ձգտելով այստեղ ևս մի օգտակար գործ կատարել, երբ մեծ թվով վիրավորներ են բերում, ինքը բուժքույրերին օգնում է վիրակապելու թեթև վերք ունեցողներին:

Թե՛ հրետանային հարվածներից հետո վրայի փոշին թափ տալիս և թե՛ Ստեփանակերտի հիվանդանոցում վիրավորների շրջապատում, զգում ես, որ դիմացդ կանգնած է դերասանական կեցվածքով ու կիրթ շարժուձևերով մի կին, որ եկել է հեռու մի աշխարհից: Երբ նրան հարցնում եմ, թե Բուլղարիայից ու Մոսկվայից հետո արդյոք դժվար չէ՞ ապրել այստեղ, ասում է, որ կտրվելով արևմտյան քաղաքակրթության ընձեռած հարմարավետ միջավայրից՝ ինքն այստեղ արցախահայության տառապանքի ու անդավաճան պայքարի միջոցով կապվեց համամարդկային անանց արժեքներին:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ, 1993 թ., 4-ը մայիսի, թիվ 9

«ԲԵՐՔԸ ՀԱՎԱՔԵՆՔ, ԼՑՆԵՆՔ ԱՄԲԱՐԸ, ՈՐ ՀԱՎԵՐԺ ԱՊՐԻ ՄԵՐ ՂԱՐԱԲԱՂԸ»

Որքան հեշտ է պատերազմի ժամանակ մահանալը, այնքան դժվար է կռվից հետո ապրելը: Այս իրողությունը առավել սուր ես զգում Մարտակերտի ազատագրյալ բնակավայրերում, ուր առաջին մտահոգությունը ավերված բնակավայրերում բնակչությանը տեղավորելն է: Հայաստանի տարբեր շինարարական կազմակերպությունների օգնությամբ սկսվել են վերականգնման աշխատանքները, և խորհրդանշական է, որ բոլոր գյուղերում առաջինը նորոգում են դպրոցական շենքերը:

Կազմվում են գյուղերի բնակիչների ցուցակները՝ բազմաստիճան նշումներով, ովքեր են արդեն գյուղ վերադարձել կամ գտնվում ԼՂՀ տարածքում և ովքեր են ապաստանել Հայաստանում կամ էլ հեռացել ու ցրվել նախկին Խորհրդային Միությունով մեկ: Հայաստանում եղողների մեծագույն մասը, ամենայն հավանականությամբ, կվերադառնա, շրջանում վստահ են, որ կարոտը ետ է բերալու նաև օտար ափերում հանգրվանածների մեծ մասին: Տների վերականգնումից հետո երկրորդ դժվարությունը զբաղվածության հարցն է, թեև ասում են, որ աշխատող մարդը անգործ չի մնա:

Տների վերականգնման համար մեր հանրապետությունից տարվող շինանյութից բացի օգտագործվում է նաև տեղական հումքը: Բարեբախտաբար, լուսամուտների շրջանակների, դռների ու տանիքների համար անհրաժեշտ փայտանյութը այստեղ առատ է: Երբ Շուշին ազատագրվեց, քաղաքի տարբեր անկյուններում կիտված էին կրակված արկերի արկղերը, որոնք ստեփանակերտցիները տարան որպես պատրաստի վառելափայտ՝ դառը կատակով ասելով, թե՝ ափսոս, եթե քաղաքին ավելի խփած լինեին, հիմա վառելիքը ավելի շատ կլիներ: Նույն ձևով էլ Մարտակերտի

գրավյալ գյուղերում են բարձրանում կրակված արկերի արկղերի կույտերը, որոնց տախտակները բավականին հարմար են շինարարական–վերականգնման աշխատանքների համար, և տներն ավերած արկերի փայտյա պատյաններով էլ հիմա վերականգնում են այդ նույն տները:

Թեև տները դեռևս ավերակ են, սակայն դրանցում արդեն վառվում է լույսը: Մինչև վերջերս Արցախը էլեկտրականություն էր ստանում միայն Հայաստանից, հիմա աստիճանաբար օգտագործվում է հիդրոռեսուրսների անսպառ և էժան ուժը, ու սնուցող կայաններից դեպի գյուղերն են ձգվում էլեկտրագծերը: Լույսը կյանքի հաղթանակն է, որն առավել սուր ես զգում ռազմաճակատային գծում, ուր խավարը դարանակալ մահ է թվում: Գետավանի ճանապարհին գտնվող տրանսֆորմատորային ուժեղացուցիչ կայանում գիշեր ու ցերեկ վառվում է մի մեծ լամպ՝ գյուղերի անցնող ու դարձող բնակիչներին ասես հիշեցնելով, թե երբ ձեր էլեկտրագծերը հասնեն ինձ, դուք էլ կողողվեք լույսով: Մարտակերտի շրջխորհրդի նախագահ Վլադիմիր Սարգսյանի բնորոշմամբ՝ այս լամպերը կյանքի ճրագն են և լեռնաշխարհի կարոտից հետո դեպի ծննդավայրը ձգող երկրորդ ուժն են դառնալու: Կյանքի ճրագից իր հայրենի և շրջակա գյուղերը լույս հասցնելու գործով է օրնիբուն զբաղված Դրմբոնի գյուղխորհրդի նախագահ Սուրեն Շաբոյանը: Երեկոյան հոգնած, բայց վաստակած քայլերով նա իր բրիգադի անդամների հետ վերադառնում է գյուղ, հաշվում, թե էլի քանի մետրով առաջ ձգվեցին էլեկտրահաղորդման գծերը, ապա ձեռքն առնում իրենց տանը սերնդեսերունդ փոխանցվող հինավուրց սազը, և հոր ձայնակցմամբ հնչում է օրվա լարումից և շրջափակումից ու պատերազմական նեղություններից ծնված երգը.

Բերքը հավաքենք, լցնենք ամբարը,
Որ սովը չընկնի մեր Ղարաբաղը:

Առավոտյան մինչև կկարգավորի գյուղի ներքին աշխատանքները և կշարժվի դեպի բարձրացող էլեկտրասյուները, վերստին հնչում է հոգու ինքնաբուխ երգը.

Գործի գցենք սայլն ու արորը,
Որ չդադարի երեխայի օրորը:

Հերթական օրն է բացվում Արցախ աշխարհի վրա: Ջինվորները շտապում են փոխելու դիրքերը. նոր վերադարձողներն են հեկեկալով փլվում իրենց ավերակ տների առջև, ավելի շուտ վերադարձածները արդեն դաշտ են շտապում, որ ժամանակին հասցնեն ավարտել գյուղատնտեսական աշխատանքները, և Դրմբոնից մինչև Հաթերք ասես արձագանքվում է Սուրենի երգի կրկնակը.

Բերքը հավաքենք, լցնենք ամբարը,
Որ հավերժ ապրի մեր Ղարաբաղը...

ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 17–27 հունիսի, թիվ 6

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Որքան էլ տարօրինակ կարող է թվալ, սակայն պատերազմն առավել զգալի է խաղաղության, քան կռվի պահերին, երբ մտածում են կամ հաղթելու, կամ էլ հեռանալ–փրկվելու մասին: Գալիս է սակայն հրադադարը, և տեսնում ես արկի բացած ձագարաձև փոսը, պայթյունի սարսափը անցորդների հայացքում և քայլվածքում՝ պատճառած ցնցումը, հետո հանկարծ նկատում ես, որ անբնականորեն շատ են սևազգեստ կանայք, ուսումնական հաստատություններում գրեթե միայն աղջիկներ են սովորում, իսկ երեխաները խաղում են աշխարհի բոլոր խաղերը, բացի կռիվ–կռիվից, որովհետև զենքերի ձայնի արտաբերումն իսկ հիշեցնում է այդ զենքերի իրական ձայնը, և հասկանում ես, որ պատերազմը, այնուամենայնիվ, կռիվ–կռիվ չէ, և ամենամեծ մաղթանքը դառնում են «Խաղաղություն ամենեցուն» խոսքերը:

«Գրադի» արկերից մաղի նման ծակծկված մեքենաները, փողոցի ասֆալտը «հերկող» և իրենց հոնդյունով մնացյալ մեքենաների աղմուկը խլացնող զրահատեխնիկան, տների այրված տանիքները կամ էլ հրետանային հարվածներից շինարարական աղբի վերածված շենքերը պատերազմի նյութական արտացոլումն են լոկ: Հաճախ լռում է տանկերի հոնդյունը, այրված տանիքների տեղը նորերն են կապվում, վերաշարվելով «կարկատվում են» շենքերի պատերին բացված անցքերը, բայց այդ ամենը առայժմ սոսկ սվաղում են պատերազմի հետքերը, սակայն նրա ծավալած ուրվականով է պատված ողջ քաղաքը: Նա քեզ է նայում ամեն րոպե արկի պայթյունի սպասող երեխաների հայացքների միջից, նրա ձեռքն է ասես ուսիդ իջնում ամեն պահի, երբ մի ուժեղ աղմուկի ձայնից բնազդո-

րեն պատսպարվելու համար անկյուն ես որոնում: Չգիտես ինչ կերպարանք ունեցող այս ուրվականը երեկոները ելնում է բնակարանները և լուռ տեղավորվում վերջին լուրերի ու մարտական ամփոփագրերի հաղորդմանը սպասող մայրերի կողքին, որոնցից ամեն մեկին թվում է, թե Արցախում ընթացած յուրաքանչյուր մարտական գործողություն եկել և հարվածել է այն դիրքին և բարձունքին, որը պահում էր հենց իր տղան: Իսկ եթե մայրական կանխազգացումը չի խաբում, ապա ուրվականը փողոցի երկայնքով ձգված սև պաստառին անուն և երկնիշ թիվ է դառնում՝ իր նշած տարիքն ու թիվը միավորելով մեկ հավաքական հասկացության ներքո՝ պատերազմական տարիքում զոհված հայրենիքի զինվոր:

Դեռևս 1988 թ. հիշյալ ուրվականը եկավ և հաստատվեց Ստեփանակերտի նախկին հյուրանոցում՝ հանձինս Բաքվից, Սումգայիթից, ապա և Շուշիից այստեղ ապաստանած առաջին փախստականների, որոնք ասես առաջիկա արհավիրքների աղետաբերները լինեին: Այս հյուրանոցը վերջին մեկ տարում դարձավ ռազմաճակատային գծի զգայուն զարկերակ: Անցյալ ամռանը որքան հակառակորդի առաջխաղացումից սեղմվում էր Արցախը, այնքան երկրամասը թողնելու ճանապարհին միջանցիկ մի կետի վերածված այս հյուրանոցը նեղվածք էր դառնում: Հիմա էլ հակառակն է: Երևանից՝ փախստականների կոմիտեի առջևից Արցախ ճանապարհվող ավտոբուսները գալիս և հյուրանոցի մոտ են կանգնում, և այստեղից է սկսվում վերադարձի ճանապարհը: Հյուրանոցը նաև սպասումի մի վայր էր այն մարտակերտցիների համար, որոնց բնակավայրերը դեռևս չեն ազատագրվել: Նրանց համար հիմա տուն են դարձել եռանիշ համարներով սենյակները: Վերջերս հյուրանոցն էլ ունեցավ իր զոհը, և նման եռանիշ սենյակներից մեկից ծնողները դեպ հավերժություն ճանապարհեցին պաշտպանական մարտերում ընկած քսանմեկամյա Մհերին:

Պատերազմող հանրապետության մայրաքաղաքի փողոցները ակոսում են հեռահար հրետանու հարվածներից պատսպարվելու համար փորված խրամատները, որոնք ձգվում են մինչև շուկա, ուր երբ դադարում է ռմբակոծությունը, արագորեն նախկին հերթականությամբ ձևավորվում է հերթը: Հնուց եկող ավանդույթով այստեղ տղամարդիկ և կանայք առանձին են հերթ կանգնում, և երբ հերթական ռմբակոծությունից հետո զույգ հերթերն էլ ապաստանել էին միևնույն խրամատում, ծնվել էր պատերազմական ժամանակների հերթական կատակը՝ հարկավոր է երկրորդ խրամատն էլ փորել՝ «կանացի» մակագրությամբ:

Պատերազմի ուրվականը ներկա է նաև բոլոր հավաքներում և մշակութային ձեռնարկներում: Լինի թատրոնում բեմադրվող կատակերգություն թե հուշ–երեկո, կամ էլ որևէ ցերեկույթ, ծիծաղող հանդիսատեսի թե լուռ արտասվող ունկնդրի հայացքում շարունակ նկատելի է հարցական մի սպասում՝ տեսնես ինչ լուր կա դիրքերից:

Մեզ շարունակ սովորեցրել են, թե կապիտալը ազգություն չի ճանաչում: Նաև պարզվում է, որ միայն կապիտալը պատերազմ չի ճանաչում և եկել հաստատվել է նրա կողքին, բայց առայժմ մի տեսակ ամաչկոտ ձևով: Երբ անցյալ տարի Մայիսի ութին բոլորը սրտատրոփ սպասում էին մի քանի ժամը մեկ եթեր տրվող մարտական վերջին ամփոփագրերին, մեկը կատակով ասաց, թե հայերը արդեն գրավել են Շուշիի կենտրոնը և սեղանիկները դրել: Պատերազմը ձևախեղում է ամեն ինչ, և սեղանիկների արցախյան ձևախեղված տարբերակը դարձան Ստեփանակերտի գլխավոր փողոցում իրար հաջորդող փոքրիկ աթոռակները: Պատերազմը տարբեր հասկացությունների կողքին հավելում է ռազմաճակատային կամ դաշտային բառերը, անգամ հիվանդանոցները վերածելով դաշտային հոսպիտալների: Նույն կերպով էլ այս, առաջին ամաչկոտ և վախվորած աթոռակները Ստեփանակերտում կատակով անվանում են դաշտային սեղանիկներ:

Համաձայն ժողովրդական հավատալիքի՝ մետաղը հալածում է չարքերին, և այս պատճառով էլ աղեղնաձև պայտերը նաև չարխափան նշանակություն ունեն Արցախում: Ամենուր պատերազմի ուր-

վականին հալածող և նորաստեղծ հանրապետության սահմաններից դուրս քշող չարխափան մետաղն էլ ինքնապաշտպանության ուժերի մարտիկների զենքն է, որով մինչ խաղաղության երազյալ պահը գրվում է նաև լեռնաշխարհի մղած հերոսամարտի տարեգրությունը:

ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 17–27 հունիսի, թիվ 6

ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՎԵՐԱԴԱՐՁ

Մարտակերտի ազատագրված բնակավայրերը գտնվում են Ստեփանակերտից Առաջաձորի մոտով վեր ընթացող ճանապարհին, որը հասնելով Դրմբոն՝ ճյուղավորվում է երկու մասի. մեկը տանում է Հաթերք, մյուսը՝ շրջկենտրոն: Դեպի Հաթերք գնացող ճանապարհի երկայնքով տարածվող գյուղերը, անկախ ավերվածության և այրվածության աստիճանից, օրավուր կենդանանում են, իսկ շրջկենտրոնի ճանապարհին ընկած Մեծ Շեն, Մոխրաթաղ, Մաղավուզ, Կուսապատ և մյուս գյուղերը, որոնք թեև առավել լավ վիճակում են, քան լիովին մոխրափոշու վերածված Գետավանն ու Վաղուհասը, և ունեն անհամեմատ գերադասելի բնակլիմայական պայմաններ, գրեթե բնակեցված չէին, որովհետև Մարտակերտ շրջկենտրոնում հակառակորդի մեծ կուտակումները, ինչպես նաև այնտեղից հիշյալ բնակավայրերի վրա տեղացող պարբերական կրակը մարդկանց հնարավորություն չէին տալիս վերադառնալ իրենց տները:

Պաշտպանական հոծ ամրություններ կառուցելով շրջկենտրոնի մատույցներում և դիրքավորվելով նրա վրա իշխող կարևորագույն երկու կետերում՝ հեռուստաաշտարակում և «Պուշկի յալ» կոչվող բարձունքում, նրանք հրետանային կրակով կազմալուծում էին կյանքը ազատագրված տարածքներում և պարբերական հարձակումներով փորձում տիրանալ իրենց կողմից նախկինում զբաղեցրած դիրքերին:

ԼՂՀ Պաշտպանական բանակի զսպվածությունը և պատասխան քայլերի չդիմելը ասես ավելի էր ոգևորում նրանց: Եվ հունիսի լույս 26–ի գիշերվա հերթական հարձակումից հետո ԼՂՀ ուժերը հարկադրաբար դիմեցին պատասխան հարձակման, նուրբ ու փոխկապակցված գործողություններով առաջ շարժվեցին հիշյալ իշխող

երկու բարձունքների ուղղությամբ: Մինչև հեռուստաաշտարակը ընկած տարածքում գտնվում էին ռազմավարական կարևորություն ունեցող բարձունքներ, որոնց միջև բաց դաշտեր էին, և անօրինակ մի հերոսությամբ արցախցի զինվորներն անցան այդ բաց տարածությունը՝ միաժամանակ ընթացքից ականազերծելով տեղանքը:

Հեռուստաաշտարակը գտնվում է քաղաքը երիզող լեռնաշղթայի մի թևում, որի շարունակությունը Մարտակերտի նշանավոր բաց քարհանքն է: Հաղթահարելով հիշյալ միջանկյալ բարձունքները՝ ԼՂՀ մարտիկները նախ գրավեցին քարհանքը, ապա այնտեղից առաջ շարժվելով՝ թշնամու հետ մերձամարտի մտան հեռուստաաշտարակի մատույցներում՝ նրանց դուրս շպրտելով այնտեղից: Հեռուստաաշտարակի գրավումը, փաստորեն, վճռեց նաև «Պուշկի յալ» կոչվող բարձունքի ճակատագիրը, որտեղ դիմադրությունն ավելի շատ ոչ թե այն պահելու համար էր, այլ փախչելու և փրկվելու (բարձունքի նման անվանումը կապվում է խաղաղ տարիներին այստեղ տեղադրված կարկտացիր ոչ մեծ տրամաչափի հրանոթների հետ):

Կարկտացիրների փոխարեն հիմա այդ բարձունքներում գյուղեր քանդող մեծ տրամաչափի հրանոթներ էր տեղադրել թշնամին, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ այստեղ նրանք դիրքավորվել էին ոչ թե արդեն ձևավորված ճակատի գիծը պահելու, այլ հրետանային հեռահար հարվածներով հայկական բնակավայրերը ավերելու համար: Նրանք չէին էլ պատկերացնում, թե հնարավոր է այս երկու անառիկ կետերը գրավել, և իրենց խայտառակ փախուստից հետո զինական ողջ հարստությունը թողեցին ԼՂՀ ուժերին: Հրամանատարներից մեկը կատակով ասաց, որ եթե այսպես շարունակվի, հնարավոր է Ադրբեջանի դեմ ՄԱԿ-ը պատժամիջոցներ կիրառի՝ Արցախի բանակը զինելու համար:

Զույգ բարձունքների գրավումից հետո հակառակորդը, հասկանալով, որ շրջկենտրոնում մնալու դեպքում ինքը պարզապես կոչնչանա, խուճապահար լքեց քաղաքը՝ հասցնելով, սակայն, ականապատել այն: Հունիսի 27-ի կեսօրից սակրավորները սկսեցին ականազերծման աշխատանքները: Անվտանգության նկատառումներով

և դժբախտ պատահարներից խուսափելու համար այդ օրը տեխնիկայի մուտքը շրջկենտրոն արգելվեց: Ներքին Հոռաթաղից այստեղ հասնող ճանապարհի վերջում՝ քաղաքի մուտքի մոտ, հակառակորդը մետաղյա կոնստրուկցիաներով ամրություններ էր պատրաստել և դրանք պատել փշալարերի հոծ ցանցով՝ արգելակելով ավտոմայրուղով ԼՂՀ պաշտպանական բանակի հնարավոր առաջխաղացումը, սակայն իրենց խուճապահար փախուստից հետո հեռուստաաշտարակի բարձունքից վայր իջած սակրավորները և զինվորները դրանք ոչ թե ոչնչացրեցին ճակատային գրոհով, այլ ամայի քաղաքի ներսից՝ հանգիստ, առանց շտապելու, քայլ առ քայլ ականազերծելով եկան ու հանեցին:

Հավաքական մի մոխրի վերածված Վաղուհասից, Գետավանից, կիսավեր Դրմբոնից, Չլդրանից ու մնացյալ գյուղերից հետո թվում էր, թե նույն վիճակն է լինելու նաև այստեղ, բայց, բարեբախտաբար, այդպես չէր, որովհետև հակառակորդը ժամանակից մի փոքր շուտ էր տոնել իր հաղթանակը՝ շրջկենտրոնը համարելով Ադրբեջանի խոր թիկունքում գտնվող մի բնակավայր՝ վերանվանելով այն «Աղդարա» և սկսելով «նոր կյանքի կառուցումը»՝ ամենայն հայկականի ոչնչացմամբ: Քաղաքի եզրին գտնվող նոր շուկայի ցուցանակը ազդարարում էր, թե մենք հասել ենք «Աղդարայի» շուկային, որին այնուհետև հաջորդում էին «Աղդարայի» նորոգված հյուրանոցը և մյուս շինությունները:

Մարտակերտը, ի տարբերություն մյուս բնակավայրերի, անհամեմատ բարվոք վիճակում էր՝ շնորհիվ երեք հիմնական պատճառների: Առաջինն այն ինքնավստահությունն էր, թե իրենց հաղթական ընթացքը անկասելի է լինելու: Այս պատճառով էլ անցյալ տարվա անկումից հետո թալանի ծավալված ալիքին ըստ երևույթին շուտով փոխարինել էր բնակեցումը, և երկրորդ եկողը ստիպված փորձել էր կարգի բերել առաջինի ավերածը: Երկրորդ կարևոր հանգամանքը Մարտակերտի դաշտային հատվածի իրոք հեքիաթային հարստությունն ու գեղեցկությունն է, և նման հողն իսկապես հնարավոր չէր, որ անտեր ու անբնակ մնար: Բայց եկողները հաշվի չէին առել մեկ հանգամանք. այս հողը զարմանալի մի

խորհուրդ էլ ունի. դարերի ընթացքում այստեղ շատ «տերեր» են հայտնվել, բայց հողը երբեք չի հանդուրժել անգամ որևէ ժամանակավոր «տիրոջ»:

Երրորդ վճռորոշ գործոնն էլ, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, եղել է այն հանգամանքը, որ քաղաքը դարձել էր Արցախի դեմ ուղղված ադրբեջանական զինված ուժերի հարվածային մի բռունցք և վերածվել ռազմական բազաների ու զորանոցների խիտ ցանցի, ինչի շնորհիվ քաղաքը չէին մնասել, իսկ վերջին պահին էլ արդեն նրանց հոգսը դարձել էր ոչ թե այն այրելը, այլ փախչելով փրկվելը:

Շրջկենտրոն հասած զինվորները ներքին մի կարոտով ու վախով էին շտապում տեսնել իրենց հայրենի տները՝ զգուշությամբ շրջանցելով հնարավոր ականապատված կետերը: Աննկարագրելի է մեկ տարվա խզումից հետո վերստին իր տան շեմին հասնող և ներս մտնելուց առաջ ականի ձգվող դարանկալ քուղը որոնող մարդու հուզմունքը: Խեղդող հուզմունքին այնուհետև հաջորդում էր վերաբնակարանամուտը: Տեղի բակերում կրակ էին վառում՝ իրենց հետ բերած հացը տաքացնելու և թեյ պատրաստելու համար: Սեղաններ, ավելի ճիշտ՝ բակերում գետնին փռված ծածկոցներ կային, որոնք ավելի ճոխ էին հետևյալ պատճառով: Մարտակերտի գաղթը այնպես հապճեպ եղավ, որ շատերը չհասցրեցին փոխադրել իրենց ունեցվածքը և իրենց տնական այնքան հոչակավոր օղին ու կարմիր գինին մեծ տարաներով թաղեցին հողի մեջ այնպիսի մի զարմանալի վարպետությամբ, որ ադրբեջանցիները, իմանալով հանդերձ այդ մասին, չէին կարողացել գտնել: Տեսնելով այդ վարպետությունը՝ թե՛ զարմանում ես և թե՛ ցավով լցվում, որովհետև գաղթելու դարավոր դառը ավանդույթը, բայց և միաժամանակ իր ավերված օջախը վերստին շենացնելու հավատն ունեցող ժողովուրդը միայն կարող էր իրեն պահող հողին ի պահ տալ իր ստեղծած բարիքները:

Նախորդ օրերի ընդհանուր լարումից և հուզումներից հետո, երբ բացվեց հունիսի 29-ի առավոտը, ազատագրված քաղաքը մեկեն հառնեց իր ողջ գեղեցկությամբ: Տների բակերը ասես դրախտի

պարտեզի մանրակերտը լինեին՝ դեռևս մանրահատ, բայց արդեն հասունացող թզով, խաղողի կանաչ ողկույզներով, բացվող նռնենիների ծաղիկներով, հասած սալորի ճեղքվող դեղնությամբ: Ի տարբերություն լեռնային գոտու, ուր թութը ցրտահարվել էր, այստեղ զարմանալիորեն առատ էր և գետնին շերտ-շերտ նստել էր դեղնակարմրավուն ձյան փաթիլների նման:

Մարտակերտում գեղեցիկ սովորություն է՝ յուրաքանչյուր տուն զարդարել վարդի թփերով, որոնք ամեն տարի խնամվում էին ու ձևավորվում: Այս տարի դրանք թեև անմշակ, բայց էլի ծաղկել էին զարմանալի մի փարթամությամբ: Դրանք երիզող մարգերի փոխարեն հիմա վեր էր բարձրանում վայրի մացառը, բայց օտար քամիների բերած որոմը ի զորու չէր եղել խեղդելու հայրենի վարդին...

Այս պատերազմի ընթացքում գրեթե յուրաքանչյուր ղարաբաղցու կյանքը գրական մի գործի նյութ է դարձել: Այդպիսին է նաև կարմիրավանցի Ափյան Ալբերտի մորուքի պատմությունը: Պարետային բռնությունների օրոք գյուղում միաժամանակ բռնել են թե՛ իրեն և թե՛ տղային: Երկուսին էլ ուրիշ յոթ հոգու հետ պահել են մի մենախցում, ուր նստելն անգամ նեղվածք է եղել: Երբ իրեն բաց են թողել, երդվել է չսափրվել մինչև տղային էլ չազատի: Երկար չարչարանքներից հետո, մեծ գումարներ ծախսելով, երբ հաջողում է ազատել տղային, իր քեռու որդին է զոհվում գյուղի պաշտպանական մարտերում, և մտածում է, որ մինչ նրա քառասունքի չանցնելը ճիշտ չի լինի սափրվելը: Քառասունքը չլրացած էլ սկսում է Մարտակերտի մեծ գաղթը, և այդ ժամանակ էլ երդվում է, որ ինքը կսափրվի միայն այն ժամանակ, երբ նորից Մարտակերտ կմտնի:

Երբ հունիսի 30-ին Մարտակերտից Ներքին Հոռաթաղ էի գնում, հանդիպեցի Ալբերտին: Նա գնում էր շրջկենտրոն՝ մորուքը սափրելու, և ասաց, թե հավատացած է, թե էլ երբեք հարկ չի լինի այդքան երկար ժամանակ մորուք պահել...

ԵՐԿԻՐ, 1993 թ., 6-ը հուլիսի, թիվ 124

ՎԵՐԱԴԱՐՁ.
ՄԱՐՏԱԿԵՐՏԻՑ ՀԱԹԵՐՔ

Մարտակերտի ազատագրմամբ Հաթերքի ենթաշրջանի նման մեկեն սկսեցին կենդանանալ նաև դեպի շրջկենտրոն տանող ճանապարհին ընկած գյուղերը, որոնցից ամենամոտը Ներքին Հոռաթաղն է: Նահանջող հակառակորդը թեև դիրքավորվել էր շրջկենտրոնից ընդամենը մի քանի կիլոմետր այն կողմ, սակայն ԼՂՀ Պաշտպանական բանակի հանդեպ հավատը այնքան մեծ էր, որ մարդիկ ոչ միայն սկսեցին վերատնավորվել, այլև առանձին բնակիչներ իրենց հետ անգամ պոմիդորի սածիլներ էին բերել տնամերձերում տնկելու համար: Սակրավորներին խնդրելով շրջակայքը ստուգել՝ նրանք սկսեցին կարգի բերել նաև անխնամ մնացած լոբու շարքերը... Այս տարի ապրելու համար Արցախի գլխավոր հարստությունը, փաստորեն, ցորենն է, կարտոֆիլը և լոբին: Առաջին երկուսի մշակման ժամանակը, բնականաբար, արդեն անցել էր, և մնացել էր վերջինը, որը գյուղացիների հավաստմամբ էլի տուն կպահի, եթե այս օրերին հասցնեն մշակել. Հոռաթաղից մինչև Կուսապատ ձգվող մարգերում ամեն տարվա նման հիմա ևս, թեև առայժմ մի քիչ սակավաձայն, բայց հողը նետված հասկի նման վերստին արմատակալելով, հնչում են աշխատանքի երգերը:

Դրմբոնի ոլորապտույտ ճանապարհի յուրաքանչյուր ոլորանը գաղթի մի տխուր դրվագ ունի իրենում պահած, որոնց հետ է շարունակ հարաբերվում վերսկսվող կյանքը: Մարդիկ լիցքաթափվում են խոսելով ու երբ դատարկում են սրտներում կուտակածը, սկսում են ապրելու, կյանքը շարունակելու ելքեր որոնել: Կուսապատն էլ թեև Ներքին Հոռաթաղից ավելի վաղ էր ազատագրվել, սակայն ճակատի գիծ էր մնում մինչև վերջերս: Մեծ Շեն և Մոխրաթաղ գյուղերում ևս դեռ թարմ են ընթացած վերջին մարտական գործողությունների հետքերը, որոնց վերջին արձագանքն են նրանց շրջակայքի օրնիբուն շարունակվող ականազերծման աշխատանքները:

Մարտակերտի ազատագրումը վերադարձի ալիք բարձրացրեց նաև Մաղավուզում: Այս գյուղն իր հարստությամբ գրեթե չի զիջում շրջանի դաշտային գոտու բնակավայրերին: Հիմա ականազերծված ճանապարհով կյանքը հոսում է դեպի գյուղ, շուտով այստեղ կհասնի էլեկտրականությունը և կձգվի՝ լույսով լցնելու նաև շրջկենտրոնը: Հուրախություն բնակիչների, գրեթե անվնաս է մնացել գյուղի դպրոցը, որը հակառակորդը վերածել էր զորանոցի: Առանց շինարարական մեծածավալ աշխատանքների այն, կարգի բերելուց և ախտահանման ենթարկելուց հետո, սեպտեմբերի 1-ին իր դռները կբացի աշակերտների առջև: Մաղավուզով գնացող ճանապարհը տանում է իրենց գեղեցկությամբ և հարստությամբ հռչակված ենթաշրջանի գյուղերը: Այստեղ պատերազմը արձագանքվում է հեռվում պայթող արկերի որոտով և ճակատից շարունակ լուրերի սպասող մարդկանց հոգնած հայացքներով:

Շատերն էին հավատում, որ Հաթերքը վերստին կկենդանանա, բայց որ գյուղի անկումից մեկ տարի և ազատագրվելուց չորս ամիս հետո բնակչությունը կանցնի երկու հազարից՝ թերևս դժվար էր պատկերացնել:

Անցյալ տարվա բռնագաղթը մեկ անգամ ևս ցույց տվեց մեր ժողովրդի երկու՝ իրարից բխող զարմանալի հատկանիշները. գաղթելիս երեխաների փրկությունից հետո մտածել նրանց ուսման մասին, իսկ տնավորվելիս էլ առաջինը մտահոգվել դպրոցով: Այս պատճառով էլ բնակավայրերը թողնելիս գրեթե բոլոր ընտանիքներում էլ տնային անհրաժեշտ իրերից և սննդից առաջ վերցրել էին դասագրքերով ու տետրերով լեցուն պայուսակները: Հիմա էլ վերադարձից հետո առաջին հոգսը դարձել է դպրոցի շենքը կարգի բերելը:

Ազատագրվող գյուղերում վերականգնման աշխատանքները աշխուժացնելու համար յուրաքանչյուր բնակավայրի կցվել է Հայաստանի շինարարական մեկ տրեստ, որի խնդիրն է վերանորոգել

գյուղի կենսագործունեության համար անհրաժեշտ կարևորագույն կետերը:

Դպրոցի վիճակը համեմատաբար բարվոք է, որովհետև այստեղ ևս հակառակորդը այն զորանոցի էր վերածել: Թե դպրոցը ինչ կարևորություն ունի գյուղերը վերակենդանացնելու գործում՝ վկայում է հետևյալ փաստը: Ապրիլին, երբ հետ էին դառնում առաջին բնակիչները, նրանց ուժերով մի քանի դասարան կարգի բերվեց, ու մայիսի երեքին նորից հնչեց զանգը: Այդ օրը դպրոց եկան քառասուներկու աշակերտ: Երբ Ստեփանակերտ ու Երևան հայտնեցին, թե դպրոցն արդեն գործում է, մեկ շաբաթ չանցած՝ գյուղում աշակերտների թիվը հասավ ութսունհինգի: Օրերս ավարտվեց ուսումնական տարին. այստեղ սովորողների թիվը հասել էր հարյուր տասներկուսի:

Արդարև մեծ հավատ էր հարկավոր՝ մտածելու, թե արդեն հակառակորդի թիկունքի վերածված Հաթերքում կգա այն օրը, երբ վերստին հայոց լեզվի ավարտական քննություններ կհանձնեն:

Այս թելադրությունները, թերևս, աշխարհում գրված ամենադժվար գրավորներից են. նախորդել են գաղթի ճանապարհները, խրամատային օրերը, հակահարձակումները, մինչև ազատագրված գյուղի և դպրոցի նորից գրվող պատմության հետ սկսել են գրվել նաև այս գրավորները:

Դպրոցին զուգահեռ, չարենցավանցիների ջանքերով արդեն ավարտվում է նաև գյուղի խանութի նորոգումը: Հիվանդանոցի շենքը հակառակորդը հիմնահատակ քանդել և հետո էլ այրել է առանձնահատուկ չարությամբ՝ երևի մտածելով, որ այստեղ բուժել են նաև իրենց դեմ հանուն Արցախ աշխարհի պաշտպանության մարտնչող հայ ազատամարտիկներին, և հիմա համեմատաբար քիչ վնասված մանկապարտեզի մասնաշենքերից մեկը, ներքին հարդարումից և համապատասխան փոփոխություններից հետո, նախատեսված է դարձնել հիվանդանոց: Այն կսպասարկի նաև ենթաշրջանի մյուս գյուղերին:

Շարժման սկզբում Հաթերքի հին շիրմատնից մի խաչքար և տապանաքար էին բերել և իրար ագուցելով կանգնեցրել գյուղամի-

ջում: Հակառակորդը խաչքարը վար էր նետել և ավտոմատային կրակահերթով վնասել երեք պատկերաքանդակներով Սուրբ Երրորդությունը խորհրդանշող տապանաքարը: Չարենցավանի շինարարների հետ տեղացիները հունիսի երեսունին նորից կանգնեցրին խաչքարը, և մնացին միայն տապանաքարին հասցված վերքերը, որոնք, հավելվելով գյուղի ընդհանուր վերքերին, ասես գումարվեցին այսօր գրվող պատմության էջերին: Հիմա, սակայն, բացվում են նաև անցյալի էջերը: Չնայած ամենօրյա հոգսերին՝ հաթերքցիները վերադառնալուց հետո որոշել էին կարգի բերել վերջին տասնամյակներին մոռացության մատնված ու գրեթե կիսով չափ հողի մեջ թաղված եկեղեցին և երբ սկսել էին մաքրել հողե շերտերը, մի գեղեցիկ խաչքար է բացվել՝ ինքնատիպ զարդանախշերով՝ վրան՝ Տիրամայրը Մանկան հետ...

Եթե կենսապահովման օբյեկտները վերականգնվում են պետականորեն, ապա տները առայժմ նորոգվում են բնակիչների ուժերով և, փաստորեն, յուրաքանչյուր տղամարդու առջև երեք հոգս է ծառացած՝ մասնակցել ինքնապաշտպանությանը, զբաղվել հողի մշակմամբ և տունը կարգի բերել:

Անկախ ռազմական իրավիճակի սրման աստիճանից՝ սա երևի ամենածանր ձմեռն է լինելու ազատագրված, բայց և այրված ու ավերված Հաթերքում, և ոչ միայն այստեղ, սակայն Հաթերքից դեպի Գետավան իջնող ճանապարհը, որով անցյալ տարի գաղթեցին շահումյանցիները, Մաղավուզի, Զարդախաչի և Հաթերքի բնակիչները, հիմա տունդարձի ուղու է վերածվել՝ խորհրդանշելով, թե Մարտակերտում հավատում են, որ ձմեռվանից հետո, միևնույն է, էլի գարուն է գալու:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 7-ը հուլիսի, թիվ 125

ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՎԵՐԱԴԱՐՁ

«ԵՐՐՈՐԴ ԲՈՆԸ»

Մարտակերտի շրջանը ռազմատնտեսական առումով կարելի է բաժանել երեք մասի՝ բնակավայրեր, որտեղ հակառակորդն այնպես էլ չկարողացավ մուտք գործել, գրավված ու այնուհետև ազատագրված գյուղեր և վերջապես՝ դեռևս թշնամու ձեռքին գտնվող տարածք: Առաջինը ընդգրկում է Առաջաձորի ենթաշրջանի գյուղերը, որոնք վնասվել են միայն օդային և հեռահար հրետակոծությունից: Որ հակառակորդը այստեղ մուտք չի գործել, երևում է ոչ միայն տների համեմատական քիչ ավերվածությունից, այլև կյանքի և տնտեսության կարգավորվածությունից: Գարնանացանը հիմնականում կատարվել է. գրեթե անմշակ հող չի մնացել տնամերձերում:

Առաջաձորի ենթաշրջանից ճանապարհը տանում է Կիչան: Մի քանի անգամ ձեռքից ձեռք անցած այս գյուղին արդեն հաջորդում են այն բնակավայրերը, որոնց ազատագրումը սկսվել է գարնանից: Վերջիններս ևս բաժանվում են երեք խմբի. առաջինը Քելբաջար–Մարտակերտ ավտոմայրուղու Գետավան–Դրմբոն հատվածից այս կողմ ընկած գյուղերն են, որոնք ազատագրվեցին ավելի շուտ, և բնակչության վերադարձն ու գյուղատնտեսական աշխատանքները ավելի շուտ սկսվեցին: Հաջորդը Հաթերքի ենթաշրջանն է, ուր ևս մասնակիորեն կատարվեցին գյուղատնտեսական աշխատանքներ թե՛ պետական տնտեսություններում, թե՛ մասնավոր հողատարածություններում, և այս տարի սպասվող ընդհանուր առատ բերքը մասամբ կարող է բարելավել տնավեր դարձած ժողովրդի վիճակը: Եվ երկրորդ խումբը այն բնակավայրերն են, որ ազատագրվեցին վերջերս՝ ամռանը, և այստեղ հնարավոր կլինի հավաքել միայն

բնության պարգևած բարիքները. հիմա գլխավոր խնդիրը ձմռան համար գոնե նվազագույն տանելի պայմանների ստեղծումն է:

Ազատագրումը առաջին ընդհանուր ցնծությունից հետո միայն ռազմական առումով չէ, որ ծնում է բարդություններ, երբ ընդլայնվում է ճակատի գիծը, այլև տնտեսական՝ ավելացնելով լրացուցիչ վառելիքի անհրաժեշտություն՝ բնակավայրերի միջև կապը ապահովելու համար: Բնակչության ներհոսքն էլ մի շարք նոր հոգսեր է ծնում: Նույնը վերաբերում է գյուղատնտեսական աշխատանքներին: Անցյալ ամռանը տեխնիկայի մի մասը հնարավոր չեղավ փրկել: Մնացյալի մի որոշ քանակը ընդհանուր խառնաշփոթում «սեփականաշնորհվեց» մեր հանրապետությունից գնացած «գործարարներին» ու փոխադրվեց այստեղ, իսկ պետականորեն պահպանվածը տեղաբաշխվեց Արցախի գյուղերում կամ էլ ժամանակավորապես բերվեց մեր հանրապետության տարբեր շրջաններ և այժմ վերստին հետ է տարվում: Տարբեր վայրիվերումներից փրկված այդ տեխնիկայով կատարվեցին գարնանային աշխատանքները Առաջաձորի ենթաշրջանում, ապա՝ Չլդրանում և Դրմբոնում: Ռազմաճակատի գծի հետ առաջ է տարվում նաև գյուղատնտեսական տեխնիկան:

Համանման բախտի արժանացավ նաև անասնագլխաքանակը, որի մի մասին կարողացավ տիրանալ հակառակորդը: Մի որոշ քանակն էլ բերվեց և վաճառվեց Երևանում: Մնացյալը բաշխվեց Արցախի գյուղերում, անասնակերի պակասը, սակայն, ստիպեց փոխադրել մեր հանրապետություն, և հիմա հետ է տարվում: Ի դեպ, անասնապահները առանձնակի երախտագիտությամբ էին պատմում, թե ինչպես են իրենց ընդունել Սիսիանում և միաժամանակ օգնել անկորուստ պահելու հոտերը: Հիմա հետ են տարվում թե՛ ազատագրված տնտեսություններինը և թե՛ դեռևս թշնամական գերությունում գտնվող գյուղերինը:

...Երբ փետրվարի վերջին ազատագրվեց Դրմբոնը, այն ձեռքից ձեռք անցնելուց և հրետանային փոխադարձ կրակով ավերված, ապա հրդեհված մի գյուղ էր, ուր ավերակները առավել սև էին երևում տեղացած ձյան մեջ, իսկ Հաթերքի և Մարտակերտի կողմից

փչող քամիները, կոտրված պատուհանների ու փլված պատերի միջով տնետուն անցնելով, ասես շարունակ շեշտում էին գյուղի ամայությունը: Այն ժամանակ գյուղին կենդանության շունչ էին հաղորդում միայն դեպի ջրամբարը ձգվող դիրքերը պահող զինվորները: Երբ այստեղ առաջին զորանոցը հաստատվեց, երեկոյան զինվորներից մեկը, ցանկանալով ցրել ընդհանուր ճնշող տպավորությունը, տարբեր երգերի տողերը իրար կցելով, մի տարօրինակ երգ սկսեց երգել, ուր գերիշխողը «Զվարթ եղեք, հայեր» տողն էր: Երգի ավարտից հետո սկսեցին զվարթ լինելու պատճառներ որոնել և հիշեցին այստեղ տարածված այն սրամտությունը, թե աշխարհում երեք Բոն կա՝ Բոնը, Լիսաբոնը և Դրմբոնը: Այնուհետև սկսեցին հաշվել, թե քանի տարի է հարկավոր, որ վերջինս գերազանցի առաջին երկուսին: Այդ օրվանից արդեն անցել է չորս ամսից ավելի: Մյուս երկու Բոների նման այստեղ ևս արդեն մարդիկ են ապրում, այստեղ ևս հասավ էլեկտրականությունը, և ի տարբերություն մյուս երկու Բոների՝ այն անվճար է, քանի որ գալիս է Սարսանգի հիդրոէլեկտրակայանից, որի էլեկտրականությունը Մարտակերտի շրջանի բոլոր գյուղերին անվճար է տրվում: Դրմբոնցիները էլի առավելություններ են թվարկում, որոնցից զուրկ են մյուս երկու Բոները, և սպասում են պատերազմի ավարտին, որ աշխարհին ցույց տան, թե ինչպիսին է դառնալու իրենց Դրմբոնը:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 9-ը հուլիսի, թիվ 127

ՀՈԳԵՊԱՆ ԱՐԿԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՑԱԽ

Հայաստանում հաստատված տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները արդեն մի քանի տարի է, ինչ օգտվելով ընդհանուր անտերությունից և թողտվությունից, հետևողականորեն թունավորում են մեր ժողովրդին, Ավետարանի կամայական մեկնաբանություններով փորձում մարդկանց օտարացնել իրենց հայրենիքից, այն միտքը ներշնչել, թե դուք ժամանակավոր մի ստվեր եք այս աշխարհում, լսեք մեզ և ձեր տեղը կունենաք երկնքի արքայությունում... Որ նրանք մեր հայրենիք են եկել ոչ թե համաքրիստոնեական վեհ գաղափարները քարոզելու, այլ օտարերկրյա որոշակի ուժերի պատվերը կատարելով մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը ջնջելու և իրենց քարոզները լսող խոնարհ մի հոտի վերածելու՝ առավել ցայտուն երևաց Արցախում:

Երբ պարզ դարձավ, որ արցախահայությանը հնարավոր չէ զենքով ընկճել, անակնկալորեն Ստեփանակերտում հայտնված քարոզիչները, անկախ իրենց պատկանած կրոնական հոսանքից, մեկեն սկսեցին «մտահոգվել» մեր հայրենակիցների հոգիների փրկությամբ՝ միաբերան համոզելով, թե զենք կրելը մեղք է, որ զենքը սատանայի գործիքն է և այն վայր չդնողը կպատժվի այնպես, ինչպես չարն է պատժվելու Աստծո կողմից: Քրիստոնեությանը անծանոթ մեկը կարող էր կարծել, թե ավետարանական ուսմունքը սոսկ զենք կրելու դեմ ուղղված մի քարոզ է: Օտարերկրյա քարոզիչների և նրանց հայաստանյան սանիկների նման ջերմեռանդությունը պատահական չէ, և ոչ էլ առաջին փորձն է արցախահայության մարտական ոգին կոտրելու:

Այս տարածաշրջանում իրենց գերիշխանությունը հաստատել փորձող ուժերը արցախահայության հոգիների փրկությամբ «մտահոգվել» են դեռևս անցյալ դարասկզբից, և նրանց գործունեությու-

նը մեկ անգամ ևս վկայում է, թե ինչ կարևորություն ունի Արցախը՝ Կովկասը իրենց ազդեցության ոլորտում պահելու համար պայքարող ռուսական ու արևմտյան ուժերի համար:

1821 թվականին Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» միսիոներները ռուսական կառավարությանն են դիմում Կովկասի մահմեդականների մեջ քրիստոնեություն տարածելու խնդրանքով, սակայն ստանալով այդ իրավունքը՝ չգիտես ինչու՝ գալիս և հաստատվում են Արցախի սրտում՝ Շուշիում: Սկզբում, ինչպես մնացյալ բոլոր քարոզիչները, որոնք ճանապարհ են հարթում իրենց երկրների համար, նրանք ևս սկսում են շփվել մարդկանց հետ, մտահոգվել նրանց կարիքներով, հորդորում են վատ արարքներ չգործել: Միաժամանակ, իրենց բուն նպատակների իրագործման համար ցանկանալով նախ ներսից քանդել Հայ եկեղեցին, գրավում են երկու սարկավագների և նրանց միջոցով վարպետորեն այն միտքը ներշնչում, թե ազգային–եկեղեցական հանդեսները սուտ են և կապ չունեն Ավետարանի հետ: Նրանց ջերմությամբ ընդունած ժողովուրդը շուտով զգում է, որ սրանք իրենց ցավերը ամոքելու չեն եկել, այլ ազգային արմատներից կտրելու, և երեխաներին հանում են քարոզիչների բացած դպրոցից: Խնդիրն այնքան է լրջանում, որ վեճին միջամտում է նաև ռուսական կառավարությունը, և Կովկասի կառավարիչ բարոն Ռոզենը Ռուսաստանի լուսավորության նախարարին հղած զեկուցագրում գրում է, թե միսիոներները հայ երիտասարդներին շեղում են լուսավորչական հավատից և այլ գաղափարներ ներշնչում, ինչը նրանց միտքը կհակի դեպի արևմուտք՝ վնասակար հետևանքներ ունենալով նաև ռուսաց կառավարության համար: Այս պատճառով էլ միսիոներներին կարգադրվում է անհապաղ թողնել Շուշին և այլևս չհամարձակվել քարոզչական գործունեությամբ զբաղվել հայկական միջավայրում:

Հիմա մեր հանրապետությունում արմատ նետած աղանդները փորձում են վերընձյուղվել նաև Արցախում, ուր, ինչպես Երևանում, վերստին իրենց աշխուժությամբ առանձնանում են արտաքուստ իրար մերժող, սակայն ըստ էության միևնույն սև գործը կատարող

երեք տարբեր կրոնական հոսանքներ՝ Եհովայի վկաները, կրիշնայականները, հոգեգալստականները: Եհովայի վկաների գործունեությունը, ի դեպ, արգելված է անգամ արևմտյան շատ երկրներում, սակայն նրանք անարգել հաստատվելով մեր «դեմոկրատական» հանրապետությունում՝ այստեղից էլ անցել են ԼՂՀ, ուր, սակայն, բարեբախտաբար, առայժմ որևէ հաջողության չեն հասել, քանի որ հինկտակարանյան և մասնավորապես Եսայու մարգարեության տողերով ինչքան էլ սքողեն իրենց խոսքերը, միևնույն է՝ նրանց քարոզածի գլխավոր իմաստը պետության գաղափարի ժխտումն է և յուրաքանչյուր համայնք իր քարոզչին լսող կառավարելի հոտի վերածելը, ինչն այսօր անգամ նյութական ամենամեծ միջոցների ծախսման դեպքում էլ անհնար է իր պետականության կերտման բերկրանքը ապրող Արցախում:

Տապալվեցին նաև կրիշնայականների բոլոր ջանքերը՝ «Կրիշնա բարձր գիտակցությամբ» լցնելու արցախյան լեռնաշխարհը: Սկզբում նրանք որոշ հաջողություն ունեցան մարդկային փոխակերպումների ուսմունքը ներկայացնող գունազարդ շքեղ պատկերների տարածմամբ, ավելին, սակայն, չկարողացան անել:

Երևանում մենք երբեմն հետաքրքրությամբ, երբեմն էլ ժպիտով ենք նայում մինչև ծնկները մերկ և «հարե կրիշնա» կրկնելով փողոցներով անցնող տղամարդկանց փոքր խմբերին, Ստեփանակերտում, սակայն, նրանք միայն խղճահարություն և արհամարհանք էին առաջացնում, երբ ակամա համեմատում էիր նույն մայթով քայլող մարտիկների հետ, որոնց ոտքերն արդեն քանի տարի տորվում են զինվորական կոշիկներում, և ակամա մտածում ես՝ միթե նրանք բոլորն էլ զավակներն են նույն ժողովրդի: Արցախը սարսափեց այն մտքից, թե հայրենիքի զինվոր իր զավակները մի օր կարող են վերածվել նման ռոբոտների և իրենց հորովելը փոխարինել անհասկանալի քրթմնջոցներով: Ժողովուրդը պարզապես դուրս վռնդեց նրանց: Ճիշտ է, նախանձելի մի համառությամբ նրանք հիմա էլ բոբիկ ոտքերով և կիսախուզած գլուխներով մեկ–մեկ երևում են Ստեփանակերտի փողոցներում և փորձում մարդկանց «հասու

դարձնել բարձրագույն ճշմարտությանը», սակայն արհամարհանքից բացի ուրիշ ոչնչի չեն արժանանում:

Արցախում համեմատաբար հարուստ է հոգեգալստականների «հունձքը»: Նրանք Հայաստանում աշխուժացան հատկապես երկրաշարժից հետո, որովհետև իրենց շուրջն են հավաքում դժբախտներին: Արցախում էլ կարողացան գտնել համապատասխան սոցիալական միջավայր՝ ռմբակոծություններից տնավեր մարդկանց, պարբերական հրետակոծություններից սարսափահար եղողների, գաղթականների և ամենագլխավորը՝ որդեկորույս մայրերի ու ընդհանրապես զոհված հարազատի կսկիծն ունեցողների: Արցախյան իրենց «երթը» նրանք սկսեցին դիրքերն ու զորանոցները հասնելով և զինվորներին հավատքի բերելու փորձերով. այն է՝ զենքը վայր դնել և հակառակորդին չդիմադրել: Զինվորական միջավայրում ոչ մի հաջողություն չգտնելով՝ հիմա հաստատվել են Ստեփանակերտում և մարդորսությամբ են զբաղվում հնարավոր բոլոր ստոր միջոցներով:

Այս տարվա գարնանը իրենց առաջին քարոզներից մեկում քարոզիչն ասաց, թե երկու կողմերից էլ զենք վերցրածները չարի ծառաներն են և չարն ինքն իրեն կոչնչացնի երկու կողմերի զինվորների փոխադարձ կռվով: Այդ ժամանակ մի քանի կանայք, որոնց հարազատները զոհվել էին ինքնապաշտպանական կռիվներում, նետվեցին նրա վրա և պարզապես ցանկանում էին ծվատել՝ ասելով՝ մի՞թե մեր երեխաները չարի գործիքներն էին, որ զոհվեցին այս հողի համար: Դժբախտաբար, հոգեգալստականները, որոնք իրենց սաներին պարբերաբար ուղարկում են արևմուտք՝ խոսքի և հոգեբանության նրբություններին ծանոթանալու, հիմա արդեն տեղային յուրահատկությունների հաշվառմամբ տարածվելու և մեր ժողովրդին իր ազգային ակունքներից կտրելու այլ միջոցներ են ընտրել՝ գլխավոր թիրախը դարձնելով Հայ եկեղեցին վարկաբեկելը:

Արցախում հասկանում են, որ աղանդավորների պատճառած ավերները կարող են հեռահար հրետանու հարվածներից առավել հզոր լինել, և մտահոգված են համարժեք հակազդեցությամբ, որոնցից գլխավորը Արցախի թեմի ծավալած հոգևոր գործունեությունն է: Շուտով այստեղ կբացվի ճեմարան, որի սաները ավարտելուց հետո կսպասավորեն Արցախի եկեղեցիներին: Վերաբացվել է նաև Ստեփանակերտի եկեղեցին, ուր կանոնավոր կատարվում են ամենօրյա ժամերգությունն ու կիրակնօրյա պատարագը: Իր վերքերն է սկսել բուժել նաև Գանձասարի վանքը: Միաժամանակ այստեղ քաջ գիտակցում են, որ աղանդավորությունը միայն հավատի հարց չէ, և եկեղեցուց բացի մտահոգված է նաև զինվորական հրամանատարությունը. ձեռնարկում են պատերազմական ժամանակներին բնորոշ միջոցներ:

Այս ամենը, սակայն, անհրաժեշտ ցանկալի արդյունքը չեն տա, և աղանդավորները թե՛ Արցախում և թե՛ մեր հանրապետության սահմանամերձ շրջաններում կդառնան մեր հայրենիքի սահմանները ներսից թշնամու առջև բացող տրոյական մի ձի, եթե հանրապետության ղեկավարները ևս վերջապես չընմբռնեն, որ սա միայն հավատի հարց չէ և չի վերաբերում լոկ խղճի ազատությանը, այլ սպառնում է մեր ժողովրդի ազգային նկարագրին, պետության հիմքերին և երկրի պաշտպանունակությանը:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 16-ը հուլիսի, թիվ 132

ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԻՋԵՎ

Այսօր Հայաստանը վերածվել է այլազան աղանդների հավաքական մի խառնարանի, որտեղից հրաշեկ լավայի փոխարեն, սակայն, նորահայտ քարոզիչների «խոսքն» է տարածվում հանրապետության տարբեր անկյուններում: Նպատակն է, որ երկրաշարժից ցնցված և շրջափակումից ու պատերազմից հյուծվող մեր ժողովուրդը լսի իրենց՝ փոխարենը խոստանալով արքայություն երկնքում և հաց՝ երկրի վրա:

Տարբեր են մեզ ցույց տրվող «փրկության» ճանապարհները, բայց, դժբախտաբար, զարմանալիորեն ընդհանուր են նրանց հետապնդած նպատակները, որոնցից գլխավորը զինակրությունից հրաժարումը, պետության ժխտումը՝ համայնքի քարոզչին անվերապահ ենթարկմամբ, և բոլոր ուղղությունների կողմից Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանության և ազգային նվիրականության շարունակ շեշտվող մերժումն է:

Զենք չկրելու քարոզների վտանգավորությունն այնքան ակնհայտ է, որ համարժեք հակազդեցության արժանացավ մամուլով և հեռուստատեսությամբ, և խրատված քարոզիչները հիմա փորձում են ուրիշ նրբին միջոցներ գտնել մարդկանց հոգիները որսալու համար:

Պետության գաղափարը ժխտում, այսինքն՝ մեր հայրենիքում ազգային պետականություն ունենալն են մերժում թե՛ հինկտակարանյան ուղղությունները, թե՛ քրիստոնեական աղանդները, թե՛ կրիշնայականները և թե՛ քսաներորդ դարում քրիստոնեության և արևելյան կրոնների միախառնումից առաջացած տարբեր հոսանքների ներկայացուցիչները: Դրանցից յուրաքանչյուրը, գտնելով համապատասխան սոցիալական միջավայր մեր հանրապետությունում, յուրովի է մերժում հայրենիքի ու պետականության գաղափարը: Հինկտակարանյան աղանդները մինչև վերջին տարիները գոնե մեկ հետևորդ չունեին Հայաստանում, այսօր, սակայն, ընդլայնվում են օրեցօր: Միակողմանիորեն մեկնաբանելով Հին Կտակարանի տարբեր տողերը՝ այն միտքն են ներշնչում, որ ոչ թե պետք է ենթարկվել մարդկանց երկրային օրենքներին, այլ Եհովայի երկնային իշխանությանը՝ նշելով, որ նա վրիժառու Աստված է: Անցյալ դարում ստեղծված և ողջ աշխարհում հետևողականորեն տարածվող նման աղանդների քաղաքական ենթատեքստն այնքան ակնհայտ է, որ դրանց գործունեությունն արգելված կամ սահմանափակված է շատ երկրներում, և միայն զարմանալ կարելի է, թե մեր հանրապետությունում ինչու է նրանց թույլ տրվում բարեգործական տարբեր ձեռնարկների անվան ներքո իրենց սև գործը կատարել՝ ստեղծելով զորանոցային կարգապահությամբ և ներքին գաղտնիությամբ օժտված համապատասխան ենթակառուցվածքներ:

Ի տարբերություն Եհովայի հետևորդների, քրիստոնեական աղանդներն էլ հայրենիքն ու պետությունը ժխտում են՝ մարդկանց դարձնելով աշխարհաքաղաքացիներ (կոսմոպոլիտներ)՝ Նոր Կտակարանի կամայական ու հիվանդագին բացատրություններով: Նրանք քրիստոնեության համամարդկային գաղափարները և ավետարանական պատվիրանները, որոնք մեր եկեղեցու շնորհիվ դարձել են հայ ժողովրդի ազգային ներքին էության հոգևոր շաղախը, փոխարինում են կույր պաշտամունքով, որի ժամանակ Սուրբ Հոգու և Քրիստոսի երկրորդ գալստյանը արժանանալու շնորհը հանգում է հիվանդագին արարողությունների: Այս աղանդները հավաքական ժողովրդին վերածում են տրոհված համայնքների՝ շարունակ ներշնչելով երկրային դատապարտվածության միտքը:

Թեև թվական առումով անհամեմատ նվազ, բայց ոչ պակաս վտանգավոր են կրիշնայականները և տարբեր կրոնների համադրմամբ ստեղծվող նոր ուսմունքները, որոնց հետևորդները հիմնականում գիտնականները և ուսանողներն են: Եթե հինկտակարա-

նյան աղանդները ներշնչում են, թե այս աշխարհում անվերապահորեն պետք է կատարել Եհովա Աստծո կամքը, քրիստոնեական աղանդները վաղանցիկ ու ունայն են համարում երկրային կյանքը՝ կարևորելով սոսկ պատրաստությունը երկնային արքայությանը, իսկ կրիշնայականները երկիրը, բնականաբար և հայրենիքը, ներառում են տիեզերական անհունության մեջ: Այս ուսմունքները հիմնականում խարսխված են տարրական մասնիկներից մինչև համաստեղությունները եղած ներդաշնակության տեսության վրա՝ ընդհանուր այս համակարգում տարրալուծելով մարդկային միտքն ու մարմինը. սա է պատճառը, որ հիմնական հետևորդները ֆիզիկոսներն են և ընդհանրապես բնական գիտությունների ներկայացուցիչները: Ու դարձյալ միևնույն տխուր զուգահեռն է գծվում. առաջին դեպքում կույր վախ ու հնազանդություն Եհովայի հանդեպ, շնորհիվ որի ժողովրդի մի ստվար հատվածը համայնքի զորանալուն զուգընթաց կանջատվի ընդհանուր ազգային հյուսվածքից և կծառայի Եհովայի երկրային վկաների ծրագրերին... Այնուհետև՝ ազգային ոգու սպանում և հայրենիքի զավակների՝ աշխարհաքաղաքացիների վերածում և վերջապես, երրորդ դեպքում էլ ազգային ոգու սպանությունից ոչ պակաս վտանգավոր՝ գիտական մտքի հաշմում և ամլացում, երբ վաղը Հայաստանին ծառայող մտավոր ներուժի փոխարեն կձևավորվի տիեզերական անհունությունում բույսերից մինչև կենդանական աշխարհը մարդկային փոխակերպումների հավաստումը որոնող հիվանդագին ուրվականներ հիշեցնող մարդկանց մի բազմություն, որոնք այնինչ պետք է դառնային ստեղծագործ մտքի կրողները:

Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը և մեր մշակույթի մյուս մեծերը շարունակ շեշտել են այն իրողությունը, որ եթե Հայաստանը IV դարում քրիստոնեացավ, ապա V դարում էլ քրիստոնեությունը հայացավ: Տարբեր աղանդներ, սակայն, այսօր փորձում են անբարո մի հակադրություն ստեղծել Ավետարանի և Հայ եկեղեցու միջև՝ վերջինիս մերժմամբ ձգտելով քրիստոնեությունից հանել իրենց հանգիստ չտվող հայկականը՝ մեր ժողովրդին վերածելով

ազգային պատկանելությունից զուրկ կոսմոպոլիտների մի համայնքի, որի անդամների համար արդեն կարևոր չի լինի, թե որտեղ են նրանք պատրաստվում երկնային կյանքին՝ Հայոց աշխարհի սիրտ Արարատյան դաշտո՞ւմ, թե՞, ասենք, Չիկագոյի հետտոներում, Արցախի լեռներո՞ւմ, թե՞ Ավստրալիայի նոր յուրացվող հողերում: Հետևողականորեն ամեն ինչ արվում է՝ ջարդված այս ժողովրդին մինչև վերջ ստորացնելու նաև հոգեպես, որ նա այլևս չհավատա իր ազգային վերածնությանը, որ երկինքն անգամ փնտրի ոչ թե հայ երկրի վերևում, ինչպես ավանդեցին իրեն իր եկեղեցու երջանկահիշատակ հայրերը և եռամեծար վարդապետները, այլ անորոշ հեռուներում:

Առանձին ծավալուն մի ակնարկ է պետք՝ ցույց տալու, թե ինչպես է դարերի ընթացքում հայ մշակույթը ներառվել մեր եկեղեցու ընդհանուր արարողակարգում և թե, իր հերթին էլ, հայկական միջնադարյան մշակույթը՝ ճարտարապետությունից և մանրանկարչությունից մինչև գրականություն և երաժշտություն, կարող է ստուգաբանվել և բացատրվել բացառապես Հայ եկեղեցու ընդհանուր պատմության շրջանակներում: Եվ անկախ ունեցած հավատի աստիճանից, պետք է ըմբռնել, թե հեռացումը Հայ եկեղեցուց հեռացում է հայ մշակույթից ու տեղատվություն այս աշխարհի դոլարային հևքից ծնված այլ արժեքներին:

Քրիստոնեության ավելի քան 1700–ամյա ավանդներ ունեցող մեր ժողովրդին եթե ոչ քրիստոնեական աղանդները կասկած են ներշնչում և իրենց գործունեությունը կարողանում են առաջ տանել՝ բացառապես վարձու «քարոզիչների» և համայնքների անդամներին տարբեր կարգի օգնություններ ցույց տալու միջոցով, իսկ կրիշնայականությանն էլ հարում են այն գիտնականները, որոնք դեպ տիեզերքի անհունությունը մտովի հեռանալով են փորձում ազատվել մեզ տանջող և ալեկոծող բոլոր հարցերից, ապա քրիստոնեական աղանդների և մասնավորապես հոգեգալստականների պարագայում վիճակը միանգամայն այլ է: Քանի որ նախորդ տասնամյակների ընթացքում, փաստորեն, խզվեց սերնդեսերունդ փո-

խանցվող հոգևոր ժառանգորդությունը, եկեղեցին դուրս մղվեց ամենօրյա կյանքից, և մարդիկ հիմնականում միայն գիտեին, թե հայերը հնուց ի վեր քրիստոնյա են եղել: Այսօր շատերը, խաբվելով ամենուրեք փակցվող և ուշադրություն գրավող ծանուցումներից, սկսում են այցելել տարբեր ինքնակոչների աստվածաշնչյան դասերին, հավաքույթներին՝ միամտաբար կարծելով, թե որպես քրիստոնյա իրենք այդպիսով հաղորդակցվում են Աստծո հետ:

Յուրաքանչյուր հայ կամ կարող է լինել ջերմեռանդ հավատացյալ՝ իր ունեցած հավատով ձգտելով մեր եկեղեցու միջոցով հաղորդակցվել երկնքի հետ, կամ էլ, կապված իր աշխարհընկալման և համոզումների հետ, առանց հավատի դրսևորման պարզապես հարգանք տածել Էջմիածնի նվիրականության հանդեպ: Աղանդավորների համար, սակայն, արդեն ազգային արժեքներ չկան, որովհետև եկեղեցու միջոցով ժողովրդի հավատացյալ հատվածն է կապվում Աստծո հետ, իսկ աղանդավորների միջավայրում ազգային տարբերություններ չընդունող անհատը Ավետարանով ձգտում է Հիսուսին: Եկեղեցու հետևորդը ցանկանում է, որ ինքը և իր ժողովուրդը այնպես ապրեն այս աշխարհում, որ Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ արժանավոր կերպով ներկայանան աստվածային դատաստանին, իսկ աղանդավորը աշխատում է հնարավորին չափ մեկուսանալ աշխարհից, որ արժանանա երկնային շնորհներին: Նրա համար ժողովուրդ և հայրենիք չկան, այլ կա միայն իր անձը, որը պատրաստում է երկնքի համար: Մեր եկեղեցին իր կենտրոնագմբեթ տաճարներով դեպ երկնային ոլորտներն է տանում մարդկային միտքը, իսկ աղանդավորների ժողովարաններում հիվանդագին մի կոյր խոնարհում և սարսափ է իշխում Աստծո և Նրա դատաստանի առջև: Մեր եկեղեցին անհատականի, ազգայինի և երկնայինի եռամիասնությունն է՝ նվիրագործված ազգային ավանդույթով, աղանդավորների ժողովարանները՝ մարդու խոնարհումը և ստորացումը:

Վերստին առանձին մի ծավալուն նյութ է այն հարցը, թե ինչ միջոցներով են նրանք տարածվում ողջ հանրապետությունով մեկ և

թե մի արհավիրքի վերածվելու սպառնացող այս վտանգի դեմ պայքարում որն է լինելու եկեղեցու դերը և որը՝ պետական հակազդեցությունը: Այժմ միայն ավելացնենք, թե եկեղեցու և աղանդավորների ժողովարանների միջև ընտրությունը ընտրություն է Հայաստանում ապրելով քրիստոնեական պատվիրանների հետևողության միջոցով Լուսավորչի կանթեղի լույսի տեսությանն արժանանալու և աղանդավորական հիվանդագին մտագարություններով հայրենիքից կտրված և հեշտ կառավարելի մի հոտ դառնալու միջև:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 10-ը օգոստոսի, թիվ 149

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԹԵԼԱԴՐԱԾ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

Երբ ԼՂՀ–ից ստացվող մարտական ամփոփագրերում ասվում է, թե հակառակորդի կրակակետերը լռեցնելու համար արցախյան բանակի մարտիկները հարկադրաբար դիմել են համարժեք պատասխան գործողությունների, երբեմն շատերին թվում է՝ այս ամենը սոսկ քարոզչական նպատակ է հետապնդում, այնինչ այդ հարկադրական բառի ներքո խտացված է վերջին տարիների սրտամաշ տառապանքը՝ խեղված ու հաշմված բազում կյանքեր, հրետանային հարվածներին հաջորդող սարսափի ապրումներ և փլատակվող տներ, անմշակ մնալով խոպանացող դաշտեր ու այգիներ, և այսպես շարունակ: Հասկանալու համար՝ այսօր ինչ է կատարվում Մարտունու և Ֆիզուլու շրջանների երկայնքով, նախ պետք է վերհիշել, թե ինչ էր կատարվում ոչ հեռու անցյալում և ինչը ԼՂՀ ինքնապաշտպանության բանակին ստիպեց դիմել այժմ հարկադրական անվանվող այս քայլերին:

Եթե 1988 թ. փետրվարին սկզբնավորված քաղաքական դիմակայության հիմքում ընկած էր տասնամյակներ առաջ ընդունված չարաբաստիկ որոշումը՝ Արցախը հանձնել Ադրբեջանին, ապա հիմա ընթացող մարտական գործողությունների մի զգալի մասն էլ ածանցյալ է այդ որոշմամբ գծված ԼՂԻՄ–ի սահմանների, որոնցից ոչ միայն դուրս մնացին պատմական Գյուլիստանը և նրան հարող այժմյան Դաշքեսանի և Խանլարի հայկական բնակավայրերն ընդգրկող տարածքները, այլև ինքնավարություն ստացած երկրամասի շրջաններն էլ սեպաձև կտրտվեցին և սուր կորագծերով մարզի մեջ մխրճվող այս հատվածներում հիմնվեցին ադրբեջանական բնակավայրեր: Դրանք, փաստորեն, սկսեցին վերահսկել ներսի հայկական գյուղերը: Այնուհետև սկսվեց մարզի ներսում շրջաններն իրար

կապող խաչմերուկներին ադրբեջանական բնակավայրերի կառուցումը կամ եղածների արհեստական մեծացումը:

Այս քաղաքականությունը առավել սուր սկսեց իրագործվել Մարտունու շրջանում, որի կազմալուծումը մեխանիկորեն հանգեցնելու էր նաև կից Հադրութի անկմանը: Դրանից հետո թիկունքից անպաշտպան մնացած Ստեփանակերտը մարսելու և դեպի հյուսիս՝ Ադրբեջանի ներսը ձգվող Մարտակերտն ու Ասկերանը կլանելու համար կպահանջվեր բավական կարճ ժամանակ: Այսպիսով, Մարտունիում ռազմական գործողությունների զարգացման տրամաբանությունը հասկանալու համար նախ պետք է վերհիշել, թե ինչպես ընթացան դեպքերը շարժման առաջին իսկ օրերից, երբ արցախյան հարցը քաղաքականից աստիճանաբար վերածվեց զինված հակամարտության: Հակամարտության առաջին ոչ զինական դրսևորումը ճանապարհների շրջափակումն էր: Եթե մարզի սահմաններից դուրս այն դրսևորվեց Ադրբեջանից Հայաստան եկող երկաթուղու, Գորիս–Լաչին, ինչպես նաև Մարտունի–Աղդամ–Ստեփանակերտ և Մարտակերտ–Աղդամ–Ստեփանակերտ ճանապարհները փակելով, ապա Արցախի ներսում արտահայտվեց խաչմերուկներին ընկած հիշյալ ադրբեջանական գյուղերով անցնող ավտոճանապարհներին հայկական մեքենաների քարկոծմամբ, որի բնորոշ օրինակը Խոջալուի դեպքերն էին: Խորհրդային կայսրության քայքայմանը զուգընթաց՝ քարկոծումը վերածվեց հաշվեհարդարի սպառնալիքի, ապա՝ կրակահերթերի և հրետակոծության: Հրետանու կիրառումը ճանապարհների պատերազմը դարձրեց բարձունքների պատերազմ, իսկ մինչ այդ հայկական կողմը գործադրեց հնարավոր բոլոր միջոցները, նախքան վերջին քայլին՝ հակառակորդի կրակակետերի հարկադրական լռեցմանը դիմելը:

Արցախի ներսում Ստեփանակերտից Մարտունի տանող երկու ճանապարհ կար, մեկը, որ առավել կարճն էր, անցնում էր Ննգիի միջով և Սպիտակաշենի ներքևով, նախ մտնում էր Ստեփանակերտից վեր գտնվող Մալիբեյլի գյուղը: Այս պատճառով էլ բավական շուտ այն փակվեց, իսկ մյուսով Մարտունի հասնելու համար անհրաժեշտ էր բավական մեծ շրջան կատարել՝ անցնելով Կարմիր

Շուկայով: Վերջին ճանապարհով գնալը համընդհանուր դաժան շրջափակման պատճառով բենզինի սղության պայմաններում գործնականում անհնար դարձավ, իսկ Մալիբեյլիով անցնելու շուրջ տարվող բանակցությունները որևէ արդյունք չտվեցին, ինչն էլ պարտադրեց վերացնել Մարտունու և Ստեփանակերտի միջև ընկած այդ սեպը:

Նույնը վերաբերում է և Մարտունու ներսում գտնվող Ղարադաղլուին, որի կողքով էր անցնում շրջանի կեսը մնացյալ Արցախին կապող ճանապարհը: Դա էլ փակվեց այն ժամանակ, երբ քարկոծումներին փոխարինեցին ավտոմատային կրակահերթերը, և անհրաժեշտ էր ընտրություն կատարել այս գյուղին ձեռք չտալու և Մարտունու կեսը պահելու միջև: Կատարվեց այն, ինչը ռազմական սեղմ տերմինաբանությամբ կոչվում է հակառակորդի կրակակետերի ոչնչացում:

Առավել անմխիթար էր վիճակը Մարտունու սահմանի երկայնքով: Վերը նշված սահմանային կտրտվածությունը խոչընդոտում էր հաղորդակցությանը և տնտեսական աշխատանքներին: Պատերազմի ընդլայնումն էլ այդ բնակավայրերը վերածեց Մարտունու շրջանի հետագա գոյությունը վտանգող սպառնալիքի: Առավել մեծ չարիք դարձան Ղաջարը, Մարզիլին և Ղարաբաղի «կույրաղիք» անվանվող ու երկայն սեպի նման երկրամասի մեջ մխրճված Աբդալն ու Գյուլափլուն: Աղդամի շրջանում գտնվող այս երկու կից գյուղերից նախ գնդակոծվում և պարբերական հարձակումների էին ենթարկվում Մարտունու Աշանի ենթաշրջանի և Ասկերանի մի շարք գյուղեր, իսկ հեռահար հրետանու կիրառումը հնարավորություն ընձեռեց այդտեղից ավերիչ հարվածներ հասցնել նաև Ստեփանակերտին: Այդ երկու գյուղերի վրա վերահսկողություն սահմանելը պարզապես դարձավ հրամայական անհրաժեշտություն և ոչ թե արցախյան բանակի զավթողական նկրտումների դրսևորում: Արդեն մեկ տարի է, ինչ Ավդուռ, Մյուրիշեն, Աշան և մեծն Մաշտոցի ծննդավայրին համանուն հինավուրց Հացի գյուղերում Արցախի համար անսովոր խաղաղություն է տիրում. կենդանացել են դաշտերը, իսկ վերաշարվող փլատակները աստիճանաբար նորից տների են վերածվում:

Նույնը վերաբերում է և Աղդամի շրջանի մյուս գյուղին՝ Մարզիլիին: Այն ևս բնակավայրից դարձել էր հավաքական կրակակետ, որից փլատակների էին վերածվել երբեմնի ծաղկուն Բերդաշենը և հարևան գյուղերը: Այս տարվա ամռանը լռեցվեց նաև այդ որջը՝ խաղաղություն բերելով Արցախի մեկ հատվածի ևս:

Ոչ պակաս ծանր էր վիճակը նաև Ֆիզուլու սահմանում: Նախորդ ուսումնական տարում պատերազմական ամենադաժան օրերին իսկ գործել են Մարտունու շրջանի 37 դպրոցներից 35–ը: Պարապմունքներ չեն եղել միայն Կարմիր Շուկայում և Մաճկալաշենում: Այստեղ դպրոցները չեն գործել Ղաջարի «պատվին»: Այն իսկական չարիք էր դարձել Կարմիր Շուկայից մինչև Ճարտար ձգվող գծի ողջ երկայնքով: Այստեղից ևս սկզբում ավազակային հարձակումներ էին կատարվում հայկական գյուղերի վրա, որոնք այնուհետև սկսեցին ենթարկվել դաժան հրետակոծության: Առավել վտանգավոր էր Կարմիր Շուկայի վրա իշխող Խազազ կոչվող բարձունքը, որտեղից թե՛ հրետանին էր խփում և թե՛ հակառակորդի մասնագետները ճիշտ ուղղություն էին հաղորդում Ղաջարից հարվածող հրետանուն և «Գրադ» կայանքներին: Ինչպես նախորդ դեպքերում, ելքը մեկն էր՝ լռեցնել այնտեղ տեղակայված կրակակետերը, և հիմա շինարարական հևքն ընդգրկել է նաև հայկական այս երկու գյուղերը: Բացվել է նաև Մաճկալաշենից Ամարաս տանող ճանապարհը, ու թեև մի փոքր վիրավոր, բայց հպարտ ու անեղեր, խաղաղ մի վեհությամբ վերադարձողներին է սպասում հայոց այդ հինավուրց սրբավայրը:

Մաճկալաշենը, այսինքն՝ մաճկալների շենը, երկրամասի արցախաբույր անվանումներից մեկն է: Այս պատերազմը մաճկալներին դարձրեց հայրենիքի զինվորներ: Ոչ միայն գյուղի, այլև ողջ Արցախի համար ճակատագրական էր անցյալ տարվա հունիսի 27–ի հարձակումը, երբ հակառակորդն առաջ շարժվեց մոտ քսան միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ՝ մտովի վայելելով մոտալուտ հաղթանակը և պաշտպանական գիծը ճեղքելով մինչև Ստե-

փանակերտ հասնելու հաճույքը: Բայց աներեր էր արցախյան կամքը, և հակառակորդի խուճապային փախուստը Շահումյանի ու Մարտակերտի անկումից հետո հոգեբանական այն բեկումը դարձավ, որով սկզբնավորվելու էին մնացյալ բոլոր հաղթանակները: Ֆիզուլու կողմից տեղացող կրակի պատճառով, քանի որ անօգտագործելի էին մնացել մշակովի հողատարածությունները և որպեսզի մաճկալը չկտրվի հողից, իսկ գյուղի տնտեսությունն էլ որոշ եկամուտ ունենա, շրջկենտրոնի մոտ գտնվող հողատարածություններից 52 հեկտար հատկացվեց Մաճկալաշենին: Ֆիզուլու մոտ տեղի ունեցած վերջին գործողություններից հետո Մաճկալաշենը հիմա վերստին գարնանացանի է պատրաստվում իր դաշտերում: Իսկ ինչ վերաբերում է այն մտավախությանը, թե մարդիկ հնարավոր է հեռանան ավերված այս շենից, գյուղխորհրդում ցույց տվեցին քառասուն դիմում, որոնք գրողները խնդրել էին իրենց նոր հողամասեր հատկացնել՝ առանձին տնտեսություններ կազմելու համար, իսկ մի քանի օրից էլ կավարտվի դպրոցին հատկացված նոր շենքի ներքին կահավորումը...

ԵՐԿԻՐ, 1993 թ., 27-ը օգոստոսի, թիվ 162

ՄՈՄ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏ...

1988 թ. փետրվարին սկսված արցախյան շարժումը թե՛ Երևանում և թե՛ Ստեփանակերտում ընկալվեց որպես պատմական անարդարությունն ուղղելու մի փորձ, իսկ տասնամյակներ առաջ գործված այդ անարդարությանն էլ երբ գումարվեց նորօրյա Սումգայիթը, արագորեն ձևավորվեց զոհի ավանդական կերպարը, և հայության երկու հատվածների վերամիավորման քաղաքական պահանջը մեր գիտակցության մեջ արտացոլվեց մերկացած յաթաղանով ջարդարարից սարսափահար դեպ մոր գիրկը նետվող մանկան տեսքով: Մայրը ձեռքերը պարզել էր իր կողմը վազող մանկանը, իսկ աշխարհին ուղղված հայացքը գութ էր աղերսում: Մոր և մանկան այս պատկերն ենք գտնում այն օրերին ստեղծված բոլոր ժանրերում՝ հրապարակախոսական հոդվածներ և գծանկարներ, բանաստեղծություններ և երգեր: Մանկան ճիչը մոր միջոցով աշխարհին լսելի դարձնելը վերածվեց գործելակերպի, և մեծ տերություններին ու աշխարհում բարի կամքի տեր համարվող մարդկանց ուղղվեցին մեր ընդունած որոշումների և պատմական վավերագրերի պատճենները, բաց նամակները: Նման մտայնության վերջին հուսահատ փորձը դարձավ 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ նիստում Արցախի և Հայաստանի Հանրապետության վերամիավորման որոշումը:

Քաղաքական այս դեգերումներն ավարտվեցին 1991 թ. ամռանը, երբ դեպքերի սրընթաց զարգացումը վկայեց, թե երբեմնի հզոր տերության փլուզումից հետո Լաչինով կտրված Արցախը մնալու է Ադրբեջանի լիակատար շրջափակման մեջ՝ կանգնելով ճակատագրական երկընտրանքի առջև. կամ ընդունել խաղաղ համակերպումի և հնազանդության ճանապարհը՝ արժանանալով հայաթափման նախիջևանյան տարբերակին, կամ էլ սեփական արյամբ ջնջել

պատմական անարդարություն կոչվածի գծած սահմանները: Ժողովուրդն ընտրեց երկրորդ ճանապարհը՝ հավաստելով իր անկախ լինելիության աներեր կամքը, և 1991 թ. սեպտեմբերի երկուսին ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Այն ոչ միայն քաղաքական, այլև հոգեբանական առումով բեկումնային եղավ՝ արցախահայությանը պատմական զոհից վերածելով այսօր իր պատմությունը կերտող հավաքական միածույլ մի բանակի: Յաթաղանի առջևից փախչող երեկվա անօգնական մանուկը դարձավ հակատանկային նռնականետով թշնամու զրահատեխնիկային ընդառաջ գնացող հայրենիքի զինվոր: Մայրական ճիչի փոխարեն նա աշխարհին լսելի դարձրեց հակառակորդի յուրաքանչյուր հարվածին տված իր պատասխանի արձագանքը՝ հավաստելով այն իրողությունը, թե երկրամասի վրա բարձրացող յաթաղանը բումերանգի նման կհարվածի բարձրացնողի գլխին: Ջոհ լինելուց արդեն հոգնած ժողովուրդը զենք վերցրեց, որ էլ երբեք ակոսը նետվող ցորենի հատիկին չխառնվի հայ հողագործի թափվող արյունը, և սկսվեց պատերազմը...

1991 թ. աշնանը ժողովուրդն արդեն տարուբեր էր լինում հացի պակասության, սպասվող ծանր ձմռան հոգսերի և ծավալվող կռվի միջև: Անհատապես յուրաքանչյուրը մտածում էր ալյուրի մասին՝ աչքի առջև ունենալով մեր օրերում վերստին մարմնավորվող սովի սպառնալիքը, իսկ հավաքականորեն բոլորի մտահոգությունը փամփուշտն էր, որովհետև զգում էին հնարավոր մոտալուտ վերադարձը անցյալի խորշերից մեկում բանտված ջարդի ուրվականի: Թեև ամեն գյուղ արդեն ուներ իր ինքնապաշտպանական ջոկատը, իսկ երկրամասի սահմաններն էլ աստիճանաբար ճակատի գծի էին վերածվում, սակայն շատերի համար դեռևս անպատկերացնելի էր, թե վերջին օրերն է ապրում իր բոլոր քաղաքացիների կյանքի երաշխավոր համարվող երբեմնի հզոր կայսրությունը և թե շուտով իրենց կյանքի հետագա ընթացքը որոշվելու է ոչ թե միութենական օրենքներով և ընդունված միջազգային չափանիշներով, այլ համազգային ինքնապաշտպանությամբ: Դժվար, շատ դժվար էր միասնական մեծ երկրի քաղաքացուց դառնալ Լաչինով անջրպետված երկրամասում շրջափակման մեջ գտնվող զինվոր: Երբ զինվորներն են ընկնում թշնամու շրջապատման մեջ և չեն հանձնվում, նրանք պատվով մեռնում են, իսկ երբ ողջ ժողովուրդն է հայտնվում այդ նույն շրջապատման մեջ և չի հանձնվում, նա հաղթանակելով ապրում է՝ ճեղքելով պատմության գծած շրջափակումը, և ժողովուրդը նախ հոգեբանորեն պետք է պատրաստվեր գալիք փորձություններին:

Հնուց եկող իմաստությունն ասում է, որ սպասվող հոգեբանական մեծ հեղաբեկումները և ցնցումները նախ խենթերի ու խելագարների վրա են ազդում: Առաջինը նրանք են զգում և բոլորին լսելի դարձնում օրվա հրամայականից ծնվող ճշմարտությունները: Պատերազմի առաջին իսկ հարվածներից կյանքը հոգս դարձավ, իսկ ապրելը՝ կռվել, և երբ Գանձասարի հովանու ներքո տարածվող Խաչենագետի հովտում գտնվող գյուղերում իջնում էին ուղղաթիռները՝ կյանքի և ապավինումի մի բարակ կամուրջ կապելով Մայր երկրից դեպի Արցախ, ծանրածանր այդ օրերին մի կին էր շրջում այդ ձորակի գյուղերում: Ամիսներ առաջ հակառակորդը մոտակա դաշտից առևանգելով՝ անպատվել և տանջամահ էր արել նրա աղջկան: Որդին գնացել էր վրեժ լուծելու և ինքն էլ էր զոհվել, իսկ մայրը խելագարվել էր և, ցնորվածներին բնորոշ սևեռվածությամբ, մտածում էր միայն իր վերջին դստեր մասին և այդ մտածումը արտահայտում այնպիսի ընդհանրացված սեղմ մտքերով, որոնք արդեն միայն իր աղջկան չէ, որ վերաբերվում էին, այլև կապվում մի ողջ ժողովրդի ճակատագրի և արժանապատվության հետ: Որպես երկրամասի հյուսիս–արևմուտքը երիզող լեռների վրիժառու մի ոգի, կիսայրված և ժանգոտ մի շամփուր ձեռքին՝ նա ամբողջ օրը մտամոլոր քայլում էր Խաչենագետի երկայնքով և խոսում ջրից ողորկ դարձած քարերի հետ՝ ականջը երկնքից եկող ձայնին: Երբ լսում էր ծանոթ հոնդյունը, մեկեն լարվում էր, ձեռքի շամփուրը վեր պարզած որոնում, թե ուր է իջնելու ուղղաթիռը և, ողջ ուժերը լարելով, վազում թռիչքադաշտի վերածված այդ հանդամասը: Սովորաբար հևասպառ տեղ էր հասնում մինչ ուղղաթիռի վեր ելնելը և ձեռքի շամփուրով ծակծկում էր բերած պարկերն ու արկղերը: Փամ-

փուշտների ծանոթ մետաղյա ծանր խշշյունը լսելիս մեկեն պայծառանում էր և ասում՝ աղջիկս փրկվեց, իսկ եթե բերվածը ալյուր կամ շաքարավազ էր լինում, աչքերի խելագար մի փայլով լեցուն հայացքը դարձնում էր օդաչուներին և սպառնալից ու խեղճացած հարցնում. «Ախր ես հարձակվող թուրքերին հաց ու չայ տալո՞վ եմ աղջկաս ազատելու նրանց ձեռքից»: Ժողովրդի հավաքական բնազդով զգում էր, որ եթե այսօր փամփուշտը լինի, վաղը մնացածն էլ կունենանք, իսկ եթե փամփուշտը չլինի, այսօր կկորցնենք ամեն ինչ՝ վաղը, լավագույն դեպքում, շահելով սոսկ վայելքները օտար ափերի:

Այս կինը հասկացել էր, որ այսօրվա հայոց պատմությունը գրվում է «Կալաշնիկով» ավտոմատներով, և թե այդ գրվող պատմության թանաքն էլ ավտոմատի փամփուշտներն են: Նորօրյա պատմության հավաքական գրիչներն էլ, որպես հայրենիքի զինվորներ, դարձան երեկվա հողագործն ու բանվորը, կոմբայնավարը և ուսուցիչը, կոմերիտական հրահանգիչն ու կուսակցության պատասխանատու աշխատակիցը: Պատերազմը հեղաբեկեց բոլորի կյանքը, թույլերը հեռացան, իսկ ուժեղները առավել կապվեցին Արցախին: Մնացողները համախմբվեցին հայրենի հողի և պատմության շուրջը, և հողն ու պատմությունը սկսեցին մաքրել նրանց հոգիները հարկադրյալ օտարացումի շերտերից: Ավետարանական խոսքերի համաբանությամբ, վերջինները դարձան առաջիններ, և Բաքվի ու Սումգայիթի փախստականները համալրեցին ամենաանձնազոհ կռվողների շարքերը: Վերադարձան նրանք, վերագտան իրենց հողը, իսկ մի մասն էլ, դժբախտաբար, ամփոփվեց այդ հողում՝ ասես վախենալով կորցնել այն: Նրանցից էր և բաքվեցի Վլադիկը: «Ինտերնացիոնալ» քաղաքում դպրոցն ավարտելուց հետո գնացել էր Ռուսաստան, հետո՝ Միջին Ասիա, նորից ետ էր վերադարձել Բաքու, ապա 1988 թ. դեկտեմբերյան դեպքերից հետո եկել ապաստանել էր ծնողների ծննդավայրում՝ Մաղավուզում: Օրեցօր հարստացնում էր իմացած մի քիչ ղարաբաղերենը: Պատմությունից միայն գիտեր, որ հայերը մի ժամանակ թագավոր են ունեցել, որ «դաշնակներն» էլ եղել են նացիոնալիստ,

ժողովրդի թշնամիներ, իսկ Երևանն էլ Հայաստան անվանվող ԽՍՀՄ միութենական տասնհինգ հանրապետություններից մեկի մայրաքաղաքն էր:

Մաղավուզում, պապենական լքված տնից առավել, իր հոգու ներաշխարհն էր վերականգնել, իսկ երբ «պոստը» փոխելուց հետո զորանոց էր գալիս, ջոկատի մյուս մարտիկներից լսած հատուկտոր պատմություններն էր գումարում իր իմացածին: Ղարաբաղերենից բացի որոշել էր նաև հայերեն սովորել: Ասում էր, թե անցյալը մեռնելու է հաղթանակի հետ և այդ անցյալին է պահ տալու նաև իր անունը: Հետաքրքրվում էր նշանավոր հայերով, որ որոշի, թե ինչ անուն ընտրի իր համար: Երգը լեզվի խտացումն է և լեզվի հիշողությունը: Միջնադարում մայրենի լեզուն կորցրած հայերը դեռ երկար ժամանակ պահպանեցին և սերնդեսերունդ փոխանցեցին երգվող հայրենի շարականները: Դարերի ընթացքում մոռացվեցին կամ խաթարվեցին «Սասնա ծռերի» շատ դրվագներ, բայց անխաթար մնացին երգվող հատվածները: Երգը վերջինն է կորսվում և առաջինը գտնվում, ու պատահական չէ, որ Արցախում ապաստանած փախստականները նախ իրենց երգը գտան, ապա նոր՝ լեզուն: Նույնը վերաբերվում է և Վլադիկին: Դեռևս ռուսերենախառն ղարաբաղերենով էր խոսում, առանց գրական հայերենը հասկանալու, բայց արդեն երգում էր Արցախում հնչող անցյալ դարավերջի ֆիդայական երգերը: Մեղեդու ելևէջները, գումարվելով զարմանալիորեն կրկնվող պատմությանը, նրան իր երգած տողերի իմաստն էին թարգմանում: Դիրքերում կամացուկ երգող Վլադիկը այդ երգերում իր լեզուն էր որոնում, իսկ դիրքերից չնահանջելով, ձգտում էր ճակատագրից իր վրեժը լուծել և չկորցնել վերջին ապավենը՝ օտարության ճանապարհները մաշելուց հետո վերագտած հարազատ հողը:

Մարտակերտի գաղթի օրերին ինքը Մաղավուզի դիրքերում էր և պահում էր Հաթերք տանող ճանապարհը: Եկավ նաև Մաղավուզը թողնելու օրը: Նահանջը ապահովելու համար հարկավոր էր, որ մի քանի հոգի դիմացի կածանից փակեին զրահատեխնիկայի ճանապարհը, մինչ մնացածները կնահանջեին: Դժվար էր մարդկանց

ասել, թե ձեզ թողնում ենք մահվան բերանում: Մինչ հրամանատարը մտածում էր, նա առաջ եկավ և ասաց, թե ինքը կմնա, որովհետև Բաքվից գաղթելով՝ երդվել էր իր գյուղից էլ ուրիշ տեղ չգնալ: Չնայած քսանհինգ տարեկան է, բայց արդեն հոգնել է աշխարհը չափելուց և մնաց, որ իր վրա վերցնի թշնամու զրահատեխնիկայի կրակը: Հակառակորդի հետևակի մարտական մեքենաների վրա տեղադրված լուսարձակները հեռվից շերտ առ շերտ, ինչպես ընդունված է ասել, սանրում էին հողը՝ կենդանի մի շունչ գտնելու և ոչնչացնելու համար: Մի կերպ խուսափելով կրակին նախորդող այս լույսերից, երբ զինվորների հետ միասին նահանջում էինք, մեր թիկունքում լսվում էր նռնականետի հակատանկային լիցքերը խնամքով իրար կողքի շարող Վլադիկի երգը՝ «Մութ գիշերին մենակ էր ֆիդային»: Ինքն էլ էր մենակ մնացել իր վերագտած պատմության և այդ պատմությունը պաշտպանելու համար վերցրած զենքի հետ: Հեռվից դեռ լսելի էր նրա երգի ձայնը, երբ մեկեն օդը լցվեց տեխնիկայի հռնդյունով: Չսպասելով լույսը բացվելուն՝ շքերթային մի ինքնավստահությամբ թշնամին առաջ էր շարժվում: Եվս մի քանի րոպե, և լսելի եղավ զրահամեքենային «շամփրող» նռնականետի հարվածը: Շարասյունը, անակնկալի եկած, կանգ առավ, ասես կարկամելով, և տագնապալի սպասումի այդ միջոցին նորից լսվեց նրա երգը: Հաջորդ պահին, սակայն, երգն ու այրվող զրահամեքենայի խուլ ձայնը խլացան նռնականետի հարվածի ուղղությամբ եկած մի քանի գնդացիրների կրակահերթերից և երբ այն դադարեց, ընդհատվել էր նաև երգը... Մեկ տարի անց հայ ազատամարտիկների հարվածից թշնամին դուրս շպրտվեց նաև Մաղավուզից, բայց Վլադիկի մարմինը այդպես էլ չգտնվեց...

Պատերազմը միայն երգին չէ, որ մի նոր խորհուրդ հաղորդեց, այլև աղոթքին: Ստեղծեց «Հայր մեր»-ի արցախյան ընթերցումը: Ի տարբերություն երևանյան մեր ծեսերի, ուր այն ավելի շատ սկիզբն էր կատարվող հրապարակային միջոցառումների, Արցախում ներանձնական տառապանք և աղերս էր: «Եւ մի տար զմեզ ի փորձութիւն» խոսքերն արտասանելով՝ արցախցի մամիկը, կինը կամ էլ աղջիկը Աստծուց ասես խնդրում էր, որ դիրքային հերթապահությունը բարեհաջող ավարտվի և տուն գա որդին, եղբայրը, ամուսինը և ոչ թե նրանց մարմինը բերեն: «Փրկեա զմեզ ի չարէն» խոսքերն էլ համամարդկային ընդհանուր արժեքների հետ հարաբերվող մի հասկացություն չէր միայն, այլ սարսափը ռազմաճակատի գծի հնարավոր ճեղքման հանդեպ, որից հետո չարը արդեն կլցվեր իրենց տները: Սովորաբար շատ գտնում է շատ կորցնողը: Մեր ազգային, հոգևոր արժեքները բոլորից շատ այստեղ էին կորսվել և աստիճանաբար սկսեցին գտնվել երկրամասին վիճակված Գողգոթայի ճանապարհի յուրաքանչյուր ոլորանը հաղթահարելուց հետո:

Տառապալից այդ օրերին շրջափակման շունչը զգացվում էր անգամ... եկեղեցու ներսում: Օդային փխրուն կապի և Արցախում ճանապարհների գրեթե կազմալուծման պայմաններում դժվար էր մոմ հասցնել գործող և վերանորոգված եկեղեցիները, առավել ևս Շահումյանի շրջանում: Գյուլիստանի վեհաշուք եկեղեցին Շահեն Մեղրյանի ջանքերով նորոգվելուց և Պարգև սրբազանի կողմից վերաօծվելուց հետո հոգևոր մի ապավեն էր դարձել տեղի հայության համար: Մարդիկ գալիս լուռ կանգնում, երկար մտորում էին իրենց ապրած և ապրելիք կյանքի մասին: Շրջափակման պատճառով գրեթե մոմ չէր լինում, և եկեղեցում դրել էին մի քանի զույգ մոմակալներ, որոնց մեջ ստիպված վառում էին... գալարաձև փաթաթված թղթեր: Սահմանային այս գծում լույսը ցրում էր ոչ միայն խավարը, այլև որոշ չափով նաև թշնամու հանդեպ եղած վախը՝ կանգնեցնելով ծանր երկընտրանքի առջև. տանը եղած մոմը սենյակում վառել, թե՞ եկեղեցու գավթում: Այս երկընտրանքը երևի շատ էր տանջել մի կնոջ, որը եկեղեցու բեմի առջև, հայացքը վեր հառած, հանդարտ զրուցում էր Երկնայինի հետ, բացատրում, թե ինչու է եկեղեցի եկել՝ ունեցած հինգ մոմերը տանը թողած: Չէր շտապում: Հանդարտ պատմում էր, որ ուղղաթիռները շատ ուշ-ուշ են գալիս և ամեն անգամ հնարավոր չի լինում լամպի համար նավթ գտնել, իսկ թոռները մթից շատ են վախենում, և նրանց թվում է, թե սենյակի մի անկյունում թշնամին դարան է մտել: Արարչին ասում էր, թե՝ իր թոռներն էլ Քո ստեղծածն են և Դու էլ չէիր ցանկանա, որ ինքն այդ մոմերը բերեր ու վառեր՝ նրանց մթության մեջ թողնելով: Ասում էր.

«Քո ունեցած լույսը բավական է Քեզ և մեզ, իսկ մոմինը թող մնա թոռներիս»: Այսպես հանդարտ–անշտապ զրուցում էր նա՝ մոմակալում վառելով և Աստծուն նվիրելով... մի ողջ ընդհանուր տեսր:

Պատերազմը հաղթանակ կամ պարտություն, կորուստ կամ ռազմավար լինելուց առաջ մարդկային ողբերգություն է, որ հարվածեց բոլորին՝ առանց մեծ ու փոքր հարցնելու: Ծերերին ավելի ծերացրեց, երեխաներին ավելի անօգնական դարձրեց, ծնողների մտահոգությունն էլ բազմապատկեց: 1988 թվականից հետո հայրենի երկրամասին հավատարիմ մնացած յուրաքանչյուր արցախցու կյանքը մի–մի պատմվածք ու վեպ է դարձել՝ վերածվելով մի մասնիկի արցախյան ընդհանուր խճանկարի: Երբեմն մտածում ես, թե հանուն ակնկալվող հաղթանակի արժեր անցնել այս ճանապարհը, այսքան զոհ տալ և այսքան տառապանք կրել: Վերջերս, երբ Դրմբոնում հավաքված խոսում էինք այս մասին, զրույցին խառնվեց քառասնամյա սևազգեստ մի կին, որը շուտով երեխա էր ունենալու: Սկզբում թվաց, թե ամուսինն է մահացել, սակայն պարզվեց, որ տասնյոթամյա որդին է զոհվել անցյալ տարվա պաշտպանական մարտերում, երբ նահանջում էին հայրենի գյուղից՝ Չայլուից: Ամուսնու հետ որոշել էին էլի երեխա ունենալ, որ իրենց տղայի կյանքը շարունակվի նորածնի մեջ: Հիմա էլ ծննդավայրի մոտալուտ ազատագրման մեծ հավատով եկել հանգրվանել էին Դրմբոնում՝ աշխատելով տեղի տնտեսությունում: Այս կինը դաժան մի միտք հայտնեց, որ երևի միայն տևական պատերազմի ընթացքում կարող է հղացվել՝ մահվան ու ավերի միջավայրում: Իր խոսքը իր կրած անձնական կորստյամբ վերահիմաստավորելով ասաց, թե՝ ամեն զոհվող մարտիկի փոխարեն յուրաքանչյուր մայր կարող է մի նոր տղա ծնել, բայց ոչ մի մայրական արգանդ չի կարող կորցրած հողի փոխարեն նոր հող ծնել:

Բարձրաձայն ասեն թե չասեն, համակերպվեն թե չհամակերպվեն, Արցախում այս գիտակցությամբ են ապրում, այս գիտակցությամբ խեղդում իրենց վիշտը և իրենց տղաներով գրում նորօրյա հայոց պատմությունը...

ԱՐՑԱԽՅԱՆ ԿԱՄՔՈՎ

Վաղուհասը առանձնապես հայտնի չէր դառնա և կմնար Արցախի հարյուրից անցնող գյուղերից մեկը՝ ավանդական գյուղական առօրյայով, եթե չսկսվեր պատերազմը և շարունակ չհիշատակվեր մարտական ամենօրյա ամփոփագրերում՝ դառնալով հյուսիսարևելյան ռազմաճակատի բաժանարար գիծը: Անցյալ տարվա ամառային անկման ժամանակ Հաթերքն ու Գետավանը գրաված հակառակորդի առաջխաղացումը կասեցվեց հենց Վաղուհասի մատույցներում: Նաև այստեղից սկսվեց անցյալ տարվա օգոստոսին ԼՂՀ բանակի ընդհանուր հակահարձակումը, որի ժամանակ թեև ազատագրվեց գրավյալ տարածքների մի զգալի մասը, բայց, դժբախտաբար, կարճ ժամանակ անց նորից հանձնվեց, ու էլի գյուղը դարձավ ռազմաճակատի բաժանարար գիծը՝ մի քանի անգամ ձեռքից ձեռք անցնելով:

Այն ժամանակ, երբ Վաղուհասը գտնվել է հակառակորդի վերահսկողության ներքո, նա այնտեղ իրեն երբեք հանգիստ չի զգացել՝ շարունակ սպասելով Վանքի կողմից հնարավոր հարվածների, որոնք հայ ազատամարտիկները երբեք չէին ուշացնում: Սարսափը այնքան մեծ է եղել, որ, ի տարբերություն Հաթերքի և շրջակա մյուս բնակավայրերի, որոնք հիմնովին թալանվել են նկուղներից մինչև տների հատակը և տանիքի գերաններն ու թիթեղները, թալանի համար չեն համարձակվել Վաղուհաս մտնել, այլ փախչելուց առաջ լիովին այրել են, և վերադարձած բնակիչները տների ընդհանուր մոխրի մեջ գտել են իրենց երբեմնի կահկարասու կիսավառ բեկորները և հալված ու սևացած մետաղական մասերը:

Մինչ հակառակորդի՝ Հաթերքից այն կողմ շպրտվելը՝ Վաղուհասը շուրջ մեկ տարի Մարտակերտում դարձել էր մարտնչելու խորհրդանիշը: Գյուղի ընկնելուց հետո էլ չէր ցրվել տեղի ջոկատը՝

շարունակելով կռիվը հանուն ծննդավայրի և մնացյալ բնակավայրերի ազատագրման՝ իր անկոտրում կամքի համար վճարելով յոթանասունից ավելի զոհված երիտասարդների կյանքով: Այսքանը միայն մեկ գյուղից, որը վկայությունն է, թե ինչ ծանրագույն գնով են ձեռք բերվում հաղթանակները արցախյան ճակատում, և որ քաղաքական, դիվանագիտական ու որևէ այլ վրիպումով մենք այլևս իրավունք չունենք վերստին վտանգելու այնքան թանկ գնով վերագտածը:

Եթե մարտական գործողությունների ընթացքում Վաղուհասը դարձել էր պայքարի խորհրդանիշը, ազատագրվելուց հետո էլ դարձավ այրվածության և ավերածության խորհրդանիշը: Վառված տների մոխիրն այստեղ ասես ավելի սև լիներ, իսկ փլատակների փոշին՝ ավելի խեղդող: Ողջ գյուղում կանգուն են մնացել ընդամենը մի քանի տուն, որոնք դարձել են տեղի «նշանավոր» ուղեցույց կետերը: Երբ ճանապարհն ես հարցնում, ասում են՝ իջիր այս փողոցով ու երբ կհանդիպես մի չվառված տան, թեքվիր աջ:

Գյուղի ազատագրումից հետո դժվար էր պատկերացնել, թե այստեղ ընդհանրապես հնարավոր է, որ մարդկային շունչը վերստին թևածի, բայց Վաղուհասի բնակչությունը արդեն անցնում է վեց հարյուրից, իսկ մինչ գաղթելը եղել է 1300: Գյուղում օրը սկսվում և ավարտվում է շինարարությամբ: Իրենց իսկ ցանկությամբ, առանձին շինարարական բրիգադ է կազմվել նաև թոշակառուներից: Պատերազմը շրջեց նաև բնության օրենքները, և հիմա վաթսունն անց մարդիկ տների հիմքերի վրա կացարաններ են կառուցում երիտասարդների որբ մնացած երեխաների համար: Ինչպես այստեղ են անվանում, տարեցների բրիգադը ընտրել է մի յուրահատուկ, բայց բավականին արդյունավետ միջոց. ավերված ու այրված տնից ընտրվում է մեկ սենյակ, և հատակից մինչև առաստաղ նորոգվում՝ փակելով փլվածքներն ու ճեղքերը, առաստաղի վերևում էլ կարգի է բերվում տանիքի համապատասխան հատվածը, և մի նոր տնակ է առաջանում նախկին տան մեջ: Քանի որ այստեղ ևս հարցերի հարցը այս ձմեռը անցկացնելն է, բոլոր նորոգումները տարվում են մինչև գարուն դիմանալու հաշվարկով, որից հետո էլ

արդեն քաղաքական գործոնների ու տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ կսկսվի բուն շինարարությունը: Գյուղում մնացած հատուկենտ շինություններից է և գյուղխորհրդի շենքը, ուր այս տարի հարկադրված են անցկացնելու նաև դպրոցական պարապմունքները: Այստեղ է «ծվարել» նաև բուժկետը, որի հերթապահ բուժքույրն ասում է, թե հիմա հիմնականում դիմում են «շինարարական» ցավերով, քանի որ բոլոր բնակիչները շինարար են դարձել և անփորձությունից մեկը սղոցով ձեռքն է մնասում, մյուսի ոտքը մեխ է մտնում, և այսպես շարունակ:

Այսօր Վաղուհասի միակ հարստությունը փրկված անասնագլխաքանակն է, և որովհետև գարնանացանը հնարավոր չի եղել ոչ այնքան հեռվում ընթացող մարտերի և տեխնիկայի ու վառելիքի պակասի պատճառով, ապրուստի միակ աղբյուրը մնացել է անասնապահությունը: Հիմա այստեղ հաճախ են կրկնում թվում էր թե վաղուց արդեն մոռացված հին ասացվածքը՝ «Եկավ սովը, պահեց կովը»:

Գրեթե միևնույն պատկերն է նաև ազատագրված մյուս բնակավայրերում, որոնցում թեև տարբեր է մնասվածության աստիճանը, սակայն մեկն է հայրենի հողում գոյատևելու արցախյան կամքը: Կամք, որի առաջ անզոր է դառնում անգամ ժամանակակից զրահատեխնիկան: Կամք, որով վեր են բարձրացվում փլատակները: Այդ կամքի շնորհիվ է, որ ի տարբերություն մեր հանրապետության, ուր բնակչության մի որոշ մասը, դժբախտաբար, ոչ թե փորձում է առաջիկա ձմեռը հայրենի հողում անցկացնելու հնարը գտնել, այլ մտածում է, թե ինչպես դրսում եղող իր ազգականի մոտ ապաստանի, Արցախում հակառակն է. անհնարինը հնարավոր դարձնելով՝ ձգտում են, չնայած ընթացող պատերազմին, կյանքը այնպես կազմակերպել, որ դրսում գտնվող իրենց ազգականներն էլ մինչև ձմեռ վերադառնան իրենց հայրենի երկրամասը:

Այս պատճառով է, որ Ստեփանակերտի փոստից միջքաղաքային կապով խոսելիս հերթով թվարկում են, թե արդեն ֆերման վերականգնել են, լոյսը քաշում են, ցանքի են պատրաստվում... Բնակվելու նվազագույն պայմանները ստեղծելուն զուգընթաց, վե-

ռադարձի հաջորդ գլխավոր գործոնը, սակայն, դպրոցի հարցն է, և յուրաքանչյուր գյուղ մի հնար է գտել սեպտեմբերի 1–ից պարապմունքները վերսկսելու համար, որովհետև նախ՝ անթույլատրելի է երեխաներին, ինչպես այստեղ են ասում, առանց «կարդացնելու» թողնելը և ապա, եթե չգործի դպրոցը, ոչ միայն կդադարի վերադարձը, այլև եկածների մի զգալի մասը կհեռանա:

Այսօր ստեղծվող պատմությունը վաղն է իմաստավորվելու, և այդ իմաստավորվող պատմությունում առաջինը երևի կշեշտվի, թե կյանքի ու մահվան սահմանագծում, գաղթի ու ավերի միջև տարուբերվող վերադարձի պահերին էլ հայ մարդու առաջին հոգսը եղել է երեխաների կրթությունը, որն արտացոլվել է ամենահուզիչ օրինակներով: Այսպես, Ջարդախաչ գյուղում, որն էլի հիմնահատակ ավերված է, պահպանվել է մեկ տուն, նրա տերը այն զիջել է աշակերտներին՝ ասելով, թե մինչ դպրոցի վերաշինությունը ինքը կփորձի ապրել տանը կից գտնվող բաղնիքում: Նույնը Կոճողուտում, ուր այրված են դպրոցական երկու շենքերն էլ, պարապմունքների համար տրամադրվել է յոթ սենյակ ունեցող մի տուն: Տեղեր էլ կան, ուր, բարեբախտաբար, հակառակն է: Դպրոցները վերածված են եղել զորանոցների և չեն վնասվել, այստեղ էլ դասարաններն են խտացրել և ազատված մի քանի դասասենյակները տրամադրել տնավեր դարձած ընտանիքներից մի քանիսին. այսպես շարունակվում է կյանքը՝ տունը՝ դպրոց, իսկ դպրոցը՝ տուն դարձած:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 31–ը օգոստոսի, թիվ 164

«ՄԻ ԱՄԲՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՉՈՒՄ Է, ԻՍԿ ՄԵՆՔ...»

Ազգային–ազատագրական պայքարները ծնում են ոչ միայն ժողովրդական հերոսներ, այլև այդ հերոսներին անմահացնող ժողովրդական ստեղծագործություններ, որոնք հայրենիքի համար զենք վերցրած հերոսի ընկալման հավաքական խտացումներ են դառնում: Եվ քանի որ Հայկական լեռնաշխարհում ապրելու իրավունքի հավաստումը հայոց պատմությունը, Քրիստափոր Միքայելյանի խտացված բնորոշմամբ, վերածվել է «Յարատեւ Կռուի», ստեղծվող այս գործերն էլ, հավելվելով նորանոր դրվագներով, փոխանցվել են սերնդեսերունդ՝ կրելով անցյալի հերոսական շունչը և նորօրյա պայքարի ոգին: Այս ժառանգությունն ենք գտնում Հայկ Նահապետից մինչև Հայոց տան Մամիկոնյան սպարապետների ու Բագրատունյաց թագադիր ասպետների մասին հյուսված վիպասքը և «Սասնա Ծռերը», այնուհետև, նոր շրջանում, Ղարաբաղի անպարտելի մելիքների մասին պատմություններից մինչև Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուշին, Անդրանիկին նվիրված երգերը:

Արցախում մղվող ներկա դաժան պատերազմի ընթացքում ևս ժողովուրդը ոչ միայն ծնեց իրենց նահատակությանն ընդառաջ գնացող հերոսների, այլև նրանց նվիրեց սրտի իր խոսքը, որն անկեղծ պոռթկումով է հնչում երկրամասի գրեթե բոլոր բնակավայրերում, սակայն, դժբախտաբար, անուշադրության մատնված, դատապարտված է աստիճանական կորստյան ու մոռացումի: Մեզ կարծես մնում է միայն ցավով կրկնել «Խամսայի մելիքությունների» վերջաբանում՝ XVII–XVIII դարերում հանուն ազգային անկախ լինելիության արցախահայության պայքարի մասին Ռաֆֆու խոսքերը. «Մի ամբողջ պատմություն կորչում է, անհետանում, իսկ մենք դրա վրա ուշադրություն չենք դարձնում»:

Այսօրվա պատմությունը ևս հեշտությամբ չի ստեղծվել, այն գրվել է հայ ազատամարտիկների թափած արյամբ, և այս պատճառով է նաև, որ այժմյան երգերը թե՛ խոսքով ու երաժշտությամբ և թե՛ ընդհանրապես իրենց ողջ ներքին էությամբ կապված են անցյալ դարավերջին ստեղծված ֆիդայական երգերի հետ: Այսպես, երբ 1991 թ. օգոստոսին Հաթերքում պատանդ վերցվեց խորհրդային բանակի մի ողջ զորաջոկատ և սկսվեցին տևական սպասման օրերը, ընդհանուր լարվածության ու հերոսականության մթնոլորտում ծնվեց «Հաթերքցի քաջեր» երգը՝ «Հայ քաջերի» հետևողությամբ, ուր այդ ժամանակ վիրավորված հաթերքցի Սիրանուշը համեմատվում է Սոսեի հետ, և ողջ երգն ասես ընդհանուր Արցախին վերաբերող օգնության մի կոչ է, ինչպիսին արվում է Աղբյուր Սերոբին նվիրված երգի տողերում՝ դավադիր հարվածից ընկած հայդուկապետին օգնության հասնելու հորդոր:

Երբ 1991 թ. աշնանը սկսվեց իրական պատերազմը, անցյալ դարավերջին Արևմտյան Հայաստանի լեռներում ստեղծված երգերը մեկեն բոլորի համար էլ աննկատելի սկսեցին տեղայնանալ Արցախի լեռներում՝ ասես ոգեղեն կամուրջ գծելով Տալվորիկից մինչև Մռավի փեշերը և Առաքելոց վանքից դեպ Գանձասար: Հաջորդաբար ընկան ու գնացին մեր հերոսների պանթեոնում Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուշին միանալու արդեն լեգենդ դարձած նորերը, և հին երգերը հանկարծ մեկեն նորացան: Երգաստեղծման այս ընթացքը առավել նկատելի է ռազմաճակատի գծում. այսպես, զինվորը բարձունքից հեռադիտակով նայում է, թե ինչպես են դիմացի լեռնալանջից իջնում իրենց ընկերները՝ լռեցնելու թշնամու հերթական կրակակետը, լարված այդ պահն ասես միախառնվում է անցյալի դրվագներին, և նրա շուրթերին «Սարից իջան զույգ ձիավոր, նրանց մեջ էր քաջ Սերոբն ուխտավոր» տողերն արդեն հնչում են նորօրյա իմաստավորմամբ, ծնվում է մի նոր հին երգ:

Պատերազմում անգամ բառացի նույնությամբ հնչող երգերը ոչ թե սոսկ կատարումն են, այլ մեկնությունը նույն այդ երգերի, ու նրանց ելևէջները անբացատրելի ու անփոխանցելի ապրումներ են կրում: Այդ ամենը զգալու համար պետք էր, օրինակ, Մարտակերտի

գաղթի սրտամաշ օրերին լսել մաղավուզցի Վլադիկին, որն ընկերների նահանջը ապահովելու համար մնացել էր լեռնալանջին՝ կածանի վերևում, որպեսզի փակի զրահատեխնիկայի ճանապարհը, և կամացուկ երգում էր «Մութ գիշերին մենակ էր ֆիդային»: Հետո այդ երգը խլացավ հակատանկային լիցքի ու զրահատեխնիկայի իրար խառնված պայթյունում և դրանց հաջորդած՝ հակառակորդի գնդացրային կրակահերթում...

Հաճախ է ասվում, թե ժողովուրդը ծիծաղում է նաև արցունքների միջից և այս ծիծաղը պատերազմի սարսափի հոգեբանական հաղթահարումն է, որ արտացոլվում է հատկապես ամենակենցաղային բանահյուսական ժանրում՝ նորօրյա անեկդոտներում: Արցախում հրատարակվող պարբերականները մասնակիորեն ժողովում են դրանք, որոնք վաղը դառնալու են մեր օրերի մի յուրօրինակ կենցաղային ժամանակագրություն: Պատերազմի կնիքն ենք գտնում նաև բանահյուսական ամենասեղմ ու ամենակայուն ժանրերում՝ առած–ասացվածքներում և անեծք–օրհնանքներում: Հարաբերվելով ռմբակոծումների հետ՝ դրանցում ավանդական օրհնանք–մաղթանքները նուրբ մի ձևափոխմամբ արդեն սկսում են վերաբերել գնդակից ու արկի բեկորից անփորձանք մնալուն, իսկ անեծքներում էլ մարդու կամ բնության որևէ երևույթի փոխարեն չար ուժի մարմնավորումն են դառնում կիրառվող նորանոր զինատեսակները:

Փաստորեն այսօր Արցախում ստեղծվում է մի ողջ պատերազմական մշակույթ՝ արտացոլվելով բանահյուսությունում, ազգագրությունում և ավանդական ժողովրդական կենցաղում: Ցավոք, սակայն, ինչպես սկզբում ասացինք, ոչինչ չի արվում այս ամենը ուսումնասիրելու և գրառելու համար: Պատերազմի ու շրջափակման պատճառով ստեղծված ծանր վիճակը և նյութական միջոցների պակասը, կարծում ենք, այնուամենայնիվ, բավարար արդարացում չեն կարող լինել նման թերացման համար: Ժամանակին Ռաֆֆու և Լեոյի անօրինակ նվիրումով էր, որ մոռացումից փրկվեցին Խամսայի մելիքությունների պատմության հերոսական շատ դրվագներ, մեր ժողովրդի ապագայի հանդեպ ունեցած զարմանալի

հավատի շնորհիվ էր, որ Երվանդ Լալայանը եղեռնի սև օրերին ուժ գտավ Էջմիածնում ու մյուս վայրերում ապաստանած գաղթականների միջավայրում գրառելու 800 միավոր ժողովրդական ստեղծագործություն՝ փրկելով երկրի այդ ոգեղեն գանձերը: Եթե անկեղծ լինենք, պետք է խոստովանենք, որ այսօր ստեղծվող արժեքները փրկելու համար նյութական միջոցներից առավել մեզ պակասում է հայության այս մեծերի հավատն ու նվիրումը:

Միաժամանակ ասենք, որ հիշյալ գործը համահայկական կարևորություն ունի և վերաբերում է ոչ թե սոսկ համապատասխան պետական ու գիտական հաստատություններին, այլ ազգային բոլոր կազմակերպություններին: Այն նաև բարոյական պարտք է լինելու Հայ Յեղափոխական Դաշնակցության համար՝ պայմանավորված կուսակցության ավանդույթներով: Հիշենք, որ անցյալ դարավերջի ազատագրական պայքարը, սկսյալ Սասունի հերոսամարտից, փրկվեց և սերունդներին ավանդվեց Կարո Սասունու, Ռուբենի, Սիմոն Վրացյանի և մեր մյուս նվիրյալների կողմից. կարծում ենք՝ այսօր դաշնակցական նվիրումի դրսևորումներից մեկն էլ պետք է լինի այս գործին հնարավորին չափ աջակցելը:

Համապատասխան ոչ այնքան մեծ նյութական ու տեխնիկական միջոցների ձեռք բերումից հետո արդեն կարելի է կազմել բանագետներից ու ազգագրագետներից բաղկացած փոքր խմբեր՝ ներառելով նաև Արցախի մտավորականությանը և տեղի համալսարանի հումանիտար ֆակուլտետների ուսանողությանը:

Եթե հավաքվելիք ողջ նյութը գիտական առումով պետք է ենթարկվի տևական ուսումնասիրման ու արխիվային պահպանման, ապա դրա մի փոքրիկ ընտրանին էլ, ուր ի մի կբերվեն ազգային-հայրենասիրական շնչով ստեղծված գեղարվեստական առավել մեծ խտացումները, իր արժանի տեղը կգրավի անցյալ դարավերջին ստեղծված գործերի կողքին:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ամենօրյա մարտական ամփոփագրերը արցախյան պատերազմի պատմական փաստային ժամանակագրությունն են, իսկ այս տարիների մաքառման գեղարվեստական տարեգրությունը կստեղծվի միայն բոլոր մարտերի, ընկած ու ապրող հերոսների մասին ժողովրդական խոսքի գրառումից հետո: Այդ խոսքը աստիճանաբար պատմությունը վերածում է վիպասքի, և այդ վիպասքն է այն հիմքը, որի վրա բարձրանալու է այսօրն իմաստավորող վաղվա գեղարվեստական մեծ գրականությունը:

Հիշենք՝ եթե ժամանակին չգրվեին Կարո Սասունու «Սարերու Ասլանը» և հատկապես Ռուբենի «Հայ հեղափոխականի մը հուշերը», որոնցում պատմական փաստերի շարադրանքին ու գնահատումին գումարվում են իրենց ապրած ժամանակաշրջանի կենդանի նկարագրությունը, ապա ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ այսօր կամ չէին լինի Համաստեղի «Սպիտակ ձիավորը», Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» և Մուշեղ Գալշոյանի շատ պատմվածքներ, կամ էլ կլինեին անհամեմատ խամրած գույներով:

Արցախյան հերոսամարտի գրառումը վաղուց արդեն պետք է սկսված լիներ, և անցնող ժամանակը շուտով կարող է մոռացության ամենակուլ վիհին հանձնել ժողովրդի ապրումներից ծնված գործերը...

ԵՐԿԻՐ, 1993 թ., 10-ը սեպտեմբերի, թիվ 172

ՑԱՍՈՒՄՈՎ ԵՎ ՍՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ

Անեկդոտ հունարեն նշանակում է «չտպագրված»: Շարունակ ծնվող և նոր մոտիվներով հավելվող բանահյուսական ամենատարածուն այս ժանրի բազում սրամիտ նմուշներ են ստեղծվել նախորդ տասնամյակներում, որոնցում ասվել և տարածվել է անտպագրելին խորհրդային տարբեր ղեկավարների և ընդհանրապես երբեմնի հզոր մի կայսրության մասին: Միասնական երկրում այն տարիներին գրեթե նույն անեկդոտներն էին շրջում Մերձբալթիկայից մինչև Կամչատկա, և տարբեր հանրապետություններում ստեղծվողներն էլ միևնույն խորհրդային հիմքերն ունեին: ԽՍՀՄ–ի փլուզմանը զուգընթաց դրանք սկսեցին տեղայնանալ, բայց գերիշխում էր դարձյալ ընդհանուր մի մոտիվ՝ ներքին հուսախաբությունը, որ չիրականացան արտաքին աշխարհի աջակցությամբ մի կարճ ժամանակում իրենց հանրապետությունները դրախտի վերածելու ակնկալիքները: Այնուհետև նրանցից յուրաքանչյուրն ընտրեց զարգացման իր տարբերակը, և ըստ այդմ սկսեցին տարաբաժանվել նաև անեկդոտները, որպեսզի մի քանի տարի անց վերստին իրար հանդիպեն կարագա–երշիկային ժամանակների կարոտախտի խաչմերուկում:

Դեպքերի բնականոն զարգացման դեպքում նրանք այս ճանապարհը կանցնեին նաև սրամտության դարավոր ավանդներ ունեցող Արցախում, եթե չսկսվեր պատերազմը և կյանքն ու այդ կյանքն արտացոլող բանահյուսական ժանրերը չհարաբերվեին օրավուր ընդլայնվող մարտական գործողությունների հետ: Ավանդական բոլոր ժանրերը, որոնցից յուրաքանչյուրը ժողովրդի մտածողության և հոգեվիճակի մի–մի կերպ են ներկայացնում, պատերազմական երանգավորում ստացան: Անեծքում ավանդական արտահայտչամիջոցները փոխարինվեցին ռազմական նորագույն տեխնիկայի

«նմուշներով» և մարդկային հարաբերությունների ոլորտից ուղղվեցին հավաքական ընդհանուր չար ուժի՝ պատերազմի դեմ: Օրհնանքների գլխավոր կրողը դարձավ դիրքեր գնացող զինվորը: Անցյալ դարավերջի ազգային–ազատագրական պայքարի երգերը տեղայնացան Արցախի լեռներում՝ նվիրվելով նորօրյա հերոսներին ու ճակատամարտերին: Բայց քանի որ պատերազմի ընթացքում մարդիկ ոչ միայն պայքարում են և հերոսանում, ցնծում հաղթանակների և սգում պարտությունների համար, այլև ապրում են այդ պատերազմների ընթացքում, վերջինս, բնականաբար, պետք է արտացոլվեր նաև բանահյուսական ամենակենցաղային ժանրում՝ անեկդոտում:

ԼՂՀ բանակի օրգան «Մարտիկ» թերթը յուրաքանչյուր համարում տպագրում է դրանցից մի փունջ: Ինչպես այսօր ստեղծվող պատմության, այնպես էլ այս անեկդոտների գլխավոր հերոսը արցախցի հավաքական զինվորն է՝ Խաչին:

Ստեփանակերտի «Մաշտոց» հրատարակչությունը, որը նաև «Մարտիկի» հրատարակիչն է, որպես թերթի հավելված՝ առանձին մի գրքույկով օրերս հրատարակել է հիշյալ անեկդոտների նմուշներ՝ խոստանալով առաջիկայում ևս շարունակել այս ուրախ գործը՝ հավելվածը դարձնելով մատենաշար, մինչև... Արցախի համար ընդունելի խաղաղության հաստատումը:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 23–ը հոկտեմբերի, թիվ 201

ԱՊՐԵԼ ՀԱՂԹԵԼՈՎ

Այս տարվա փետրվարին, երբ ԼՂՀ բանակի ստորաբաժանումները ճեղքեցին հակառակորդի պաշտպանական գիծը Կիչան–Չլդրան հատվածում և սկսեցին Մարտակերտի շրջանի ազատագրումը, ներքին մի հուզում և սպասում կար՝ կվերադառնա՞ ժողովուրդը, արդյոք ապաստանելով մեր հանրապետությունում և նախկին ԽՍՀՄ–ի տարբեր բնակավայրերում՞ արդեն չի՞ օտարվել հայրենի երկրամասից ու համակերպվել նոր վիճակին: Բարեբախտաբար, շուտով ոչ միայն այդ մտավախությունը ցրվեց, այլև գերազանցվեցին բոլոր սպասելիքները: Թալանված, այրված և ավերված գյուղերի ընդհանուր համապատկերում արտաքուստ տարօրինակ թվացող վերադարձի ալիքն ու նվիրումը հայրենի օջախներին բացատրվում է ռազմագիտական, տնտեսական ու հոգեբանական մի քանի գործոններով, առանց որոնց հաշվառման հնարավոր չէ կազմել Արցախի զարգացման հետագա ծրագիրը:

Ռազմագիտական առումով բնակչությանն անհրաժեշտ էին անվտանգության երաշխիքներ, որ մի նոր գաղթ չի սպառնում: Չլդրանի գրավմամբ բնակչությունը վերադարձավ մինչ այդ մերձճակատային համարվող Առաջաձորի ենթաշրջան, բայց որպեսզի մարդիկ հաստատվեն նաև Չլդրանում, Դրմբոնում և ընդհանրապես Քելբաջար–Մարտակերտ ավտոմայրուղուց դեպի հարավ ընկած գյուղերում, անհրաժեշտ էր ազատագրել նաև Գետավանը և փակել մայրուղին, ինչի իրագործմանն իսկույն հաջորդեց վերադարձը հիշյալ բնակավայրեր: Հաթերքի ենթաշրջանին թիկունքից հարվածող շարունակական մի սպառնալիք էր դարձել Քելբաջարը, և երբ նույն այս համաբանությամբ ոչնչացվեցին այնտեղի հենակետերը, առաջին բնակիչները հաստատվեցին Հաթերքում: Այնտեղից ներքև՝ Մաղավուզով դեպի Մարտակերտ շրջկենտրոն տանող երկրորդ ճանապարհի երկայնքով ընկած գյուղերն էլ հարաբերվում էին Աղդամի շրջանին, և նրանցում էլ կյանքը նորոգվեց վաղուց արդեն ռազմական հենակետի վերածված Փափրավենդի և մի քանի այլ կրակակետերի ոչնչացումից հետո:

Մարտակերտի ազատագրված այժմյան տարածքը շրջկենտրոնը երիզող լեռնաշղթայով և իշխող երկու բարձունքներով ապահովության զգալի երաշխիքներ է ստեղծում վերադարձի համար:

Միայն ապահովության երաշխիքները, սակայն, բավական չէին այրված ավերակներում բնակվելու համար: Հիշենք, որ անցյալ ամռանը մի կարճ ժամանակով Մարտակերտի այժմյան ազատագրված այս նույն տարածքը գրեթե ամբողջությամբ վերստին հետ էր վերցվել, սակայն վերադարձողներ անհամեմատ քիչ եղան, թեև այն ժամանակ տները հիմնականում թալանել էին, բայց չէին հասցրել ավերել, ժողովուրդն էլ դեռևս չէր ցրվել Արցախից դուրս, այլ հիմնականում կենտրոնացած էր Ստեփանակերտում: Պատճառն այն էր, որ այդ օրերին վերադարձը դեռևս ավելի շատ ընկալվում էր որպես գաղափարականացված հայրենասիրական հասկացություն՝ նախնիների շիրիմներն անտեր չթողնելու և հայրենի հողը մշակելու պարտք ու կոչ, քան իրական կյանքից բխող անհրաժեշտություն ու պարտադրանք: Դժոխքի վերածված Արցախում այդ օրերին թվում էր, թե երկրամասից դուրս մնացյալ աշխարհը դրախտ է, և օտարության տառապագին ճանապարհների շուրջ մեկտարյա դեգերումներն ու այդ ընթացքում ծնված տանջող կարոտն էր պետք, որ ազատագրման առաջին իսկ օրերից մարտակերտցիներն առանց որևէ հայրենասիրական կոչ և քարոզի վերադարձի մղվեին: Ծանր այն օրերին, երբ երկու շրջանների անակնկալ անկման հարվածից դեռևս ուշքի չեկած ժողովուրդը զայրացած և անգամ չարացած բռնել էր Լաչինով սկզբնավորվող հեռացումի ճանապարհը, չէին էլ պատկերացնում, թե շուտով խեղդելու է կարոտը և ամեն ինչ հայրենի երկրամասն է հիշեցնելու, որ իրենք ամեն տեղ որոնելու են արցախյան բույրը, նախշն ու գույնը և չեն գտնելու:

Կարոտից բացի, դեպ ազատագրված բնակավայրերի իրենց օջախները տունդարձի ճանապարհը բռնելուն նպաստեցին նաև այսօրվա ընդհանուր սոցիալական վիճակի հետ հարաբերվող հետևյալ երեք գործոնները. Հայաստանի տնտեսական ծանր կացությունը, Ռուսաստանում գնալով ծավալվող անբարյացակամ վերաբերմունքը նորաբնակների ու մասնավորապես Կովկասից եկողների հանդեպ և վերջապես՝ արցախյան հողի ու ընդհանրապես այս հինավուրց երկրամասի անպատմելի բերրիությունն ու հարստությունը:

Մինչև Լաչինի ճանապարհի բացվելը, ուղղաթիռային թույլ կապի պայմաններում, յուրաքանչյուր եկողից հետաքրքրվում էին՝ ինչպիսին է վիճակը Հայաստանում, և երբ ասում էիր, թե կյանքն օրավուր դժվարանում է, ինչի մասին թեև իրենք էլ էին լսել ռուսական հեռուստատեսությամբ ու ռադիոյով, այնուամենայնիվ, չէին հավատում, ներքին մի կասկած ունեին, թե հայաստանցիներն են այդպես ասում, որ իրենք ստիպված մտածեն միայն Արցախում մնալու և կռվելու մասին: Ճանապարհի բացվելուց հետո մասամբ ցրվեց այս կարծիքը: Բոլոր գնացող–եկողները միաբերան ասում էին՝ «Երևանում սարսափելի թանկություն է ընկել»: Պայթող արկերից հեռու ապրելու բնականոն ձգտմամբ մարդիկ, այնուամենայնիվ, չէին ուզում հավատալ, որ Երևանում վիճակն այդքան վատ է: Խաղաղ հեռուներին ապավինելու ենթագիտակցական այս մղումը իրական մարմնավորում ստացավ ադրբեջանական բանակի մեծածավալ հարձակումից հետո, և այստեղ հարկ է նշել այդ օրերին Արցախից հեռանալուն նպաստող հոգեբանական մի շատ նուրբ, բայց կարևոր գործոն ևս՝ հայկական հեռուստատեսությունը: Անցյալ տարվա աշնանը, երբ դաժանագույն մարտեր էին մղվում Արցախում և մեր հանրապետության սահմանամերձ շրջաններում, հեռուստատեսությունը համազգային գաղափարների կրողն ու արտահայտողը լինելու փոխարեն եթերը լցրել էր գույնզգույն լույսերով ողողված փողոցային շոուներով ու «գործարար» հայտարարություններով. այս ամենը հուսալքող ազդեցություն էր թողնում: Յուրաքանչյուր կին,

որքան էլ սիրի հայրենի երկրամասը, որպես մայր չի ցանկանա, որ *իր որդին «փտի» դիրքերի ցեխում, իսկ նրա տարեկիցները ցուցադրվող գովազդներում վայելեն աշխարհի բարիքները: Հեռուս*տատեսությունը միայն հուսալքություն չէ, որ առաջացնում էր, այլև ավելի սարսափելին՝ նպաստում թողնել–հեռանալուն: Մի կերպ դիրքերը պահող զինվորները, նկուղներում պատսպարված մարդիկ, որոնց աչքերում հրետանային հարվածներից անգամ արեգակն էր խամրել, հեռուստացույցը միացնելով տեսնում էին շոուների, հրավառությունների և արտասահմանյան ապրանքների ծանրություններից ճկվող սեղանիկներով լեցուն մի քաղաք, և թվացյալ բարեկեցության ու առատության պատրանք էր ստեղծվում՝ առաջացնելով այնքան մարդկային մի ձգտում՝ փրկություն գտնել այստեղ: Դժվար էր նրանց համոզել, որ օրվա հացի կարոտ ժողովրդի համար չէ այս ամենը, այլ նորահայտ մի խումբ պարոնների ու նրանց հաճոյացողների: Իսկ մինչ այդ հարկավոր էր նախ Երևան գալ, ճաշակել ձմռան բոլոր տառապանքները և նոր հասկանալ, թե ինչ են թողել թշնամուն, և երազել որպե առաջ վերադառնալ հայրենի բնակավայրեր: Ի դեպ, թե՛ մարտակերտցիների և թե՛ հատկապես Արցախի մյուս շրջաններից հեռացածների մի մասը վերադարձավ մինչև գրավյալ տարածքների ազատագրումը՝ պատսպարվելով համեմատաբար ապահով այլ բնակավայրերում:

Նույնը վերաբերվում է նախկին ԽՍՀՄ–ի տարբեր քաղաքներ հեռացածներին: Մինչև շարժումը հատկապես Արցախից արտագնա աշխատանքի մեկնողները մեծ թիվ էին կազմում: Բավական շատ էին և ընդհանրապես հեռացածներն ու այնտեղ հաստատվածները: Այսինքն՝ գրեթե յուրաքանչյուր ընտանիք որևէ քաղաքում կամ ազգական ուներ, կամ էլ արտագնա աշխատանքի տարիներին որոշակի կապեր էր հաստատել, և դեպի հեռուները դիմողները մտածում էին, թե կտեղավորվեն հենց ազգականների ու ծանոթների մոտ, նախկինի նման տարբեր գործերով կզբաղվեն ու կապրեն: Մի մասը, իհարկե, բավական հաջող հաստատվեց, մեծ մասը, սակայն, զգաց, որ ժամանակները փոխվել են. կրճատվել են

թե՛ շինարարության և թե՛ արտադրության նախկին ծավալները, նոր պայմաններում արդեն այլ է նաև տեղի բնակիչների վերաբերմունքը: Ինչպես մի ղարաբաղցի փորձեց ընդհանրացնել՝ «Խոպանն էլ առաջվանը չի»: Այս դեպքում, բնականորեն, մի հարց է առաջանում. իսկ ինչպե՞ս են կարողանում տեղավորվել մեր հանրապետությունից հեռացածները, և պատասխանն էլի արցախյան յուրահատուկ ճակատագրից է բխում:

Քելբաջարից հետո, երբ մեկեն սկսեցին կենդանանալ ազատագրված բնակավայրերը, ուրախության հետ միաժամանակ զարմանքի զգացում էր առաջանում, թե ինչպես են, այնուամենայնիվ, խաղաղ կյանքը թողնում և գալիս այս ավերակներում ապրելու, երբ դեռ չգիտեն էլ՝ ինչ ճակատագիր է սպասում: Այս հարցիս մեկը պատասխանեց, որ երկար տարիներ ապրել է Սումգայիթում, դեռևս 1984 թ. դիմացինների պահվածքից ու նայվածքից զգացել, որ այդ քաղաքում ինքն ապագա չունի, որոշել է գնալ առավել «կենտրոն»՝ Բաքու, և 1988–ից հետո էլ վերադարձել ծննդավայր՝ Հաթերք: Մարտակերտի անկումից հետո հաստատվելով դրսում՝ բավական լավ գործ է գտել, տղայի հետ որոշել են նոր տուն կառուցել, բայց զգացել է, որ իրեն լավ կնայեն մինչև գործն ավարտի և հետո կհիշեցնեն, որ ինքն, այնուամենայնիվ, տեղացի չէ: Եվ չի սպասել մինչև այդ հիշեցումը ու Հաթերքի ազատագրման լուրն առնելով՝ իսկույն վերադարձել է: Մեկ ուրիշն էլ ասաց, թե ի տարբերություն Հայաստանի, որն անմիջապես կապված է եղել Մոսկվային, իրենք, տարիներ շարունակ ապրելով Բաքվի ճնշման ներքո, ձեռք են բերել պաշտպանական մի սուր զգացողություն, շնորհիվ որի հասկացել են՝ անհեռանկար է իրենց բարեկեցիկ կյանքը, և հետ են դարձել:

Եթե սոցիոլոգիական մի հարցում արվի ազատագրված բնակավայրերում, կստացվի հետևյալ գրեթե նույն պատասխանը. վերադարձել եմ՝ չդիմանալով կարոտին և անհեռանկար կյանքի պատճառով:

Վերջին մեկ տարվա դեգերումներն արցախցիներին հուշեցին, որ հեռանալը փրկություն չէ, որ փրկությունը հայրենիքում ապրելու կերպ որոնելն է, երկրի ներքին կյանքն ու պաշտպանունակությունը կազմակերպելը, հայրենի հողի զորությանը հաղորդվելը և մշակությամբ նրա գանձերը հանելը:

Արցախի այսօրվա սահմանները վկայում են, որ ժողովուրդը գաղթականի խարանի փոխարեն նախընտրեց հայրենիքի զինվորի խաչը և չսխալվեց իր ընտրության մեջ:

ԵՐԿԻՐ, 1993 թ., 5–ը նոյեմբերի, թիվ 209

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Խաղաղության կարճատև պահերին կամ էլ զինադադարից հետո պատերազմը ոչ միայն արձագանքում է զոհված ունեցողների հոգիներում և գնդակի ու բեկորի ցավն իրենց մեջ կրող վիրավորների քայլվածքում, այլև շարունակում որոտալ ազատագրված տարածքներում՝ ճանապարհներին, անտառային կածաններում և հերկվող դաշտերում, երբ մարդու ու տեխնիկայի առջև դարանակալ մահվան նման պայթյունով բացվում է հողը՝ նվաճած հաղթանակն ու խաղաղությունը վերածելով ստորգետնյա ականային պատերազմի:

Վառոդի գյուտից հետո մարդկային միտքը, չբավարարվելով միայն դիմահար կրակոցով խոցելուց, հրետանու կիրառմամբ աստիճանաբար ընդլայնեց պատճառվող մահվան շառավիղը, սակայն դեպի կյանք ընթացող մահը ասես քիչ էր, և հարկավոր էր, որ կյանքն էլ ընկներ մահվան ծուղակը, և ստեղծվեցին ականները, որոնք ոչ թե շրջում են աշխարհում, այլ օրերով, ամիսներով ու անգամ տարիներով սպասում են եկող զոհերին:

Մարտակերտի ազատագրված տարածքն էլ առաջ շարժվող զինվորի ու վերադարձող փախստականի առջև եթե բացվում է հակառակորդի ավերված դիրքերով, այրված զրահատեխնիկայով, պայթած այլազան արկերի սևացած բեկորներով, ապա իր խորքերում էլ, որպես շաղ եկած թշնամական հատիկներ, կրում է զսպանակված մահվան այս թակարդները, որոնց վնասազերծմամբ են օր ու գիշեր զբաղված սակրավորները: Նրանց մասին քիչ է գրվում և խոսվում, թեև զինվորները հերոսանում են հենց նրանց բացած ճանապարհներին:

Մարտերի ժամանակ նրանք ընթանում են տանկերի առջևից, իսկ խաղաղության պահերին էլ նախ իրենք են դաշտերը «հերկում»՝ հանելով թշնամու նետած մահվան սերմերը, որ վերստին կյանքը վերընձյուղվի հայրենի հողում: Հակառորդը ջանադիր մի «հոգածությամբ» մտածել է թե՛ մարդկանց և թե՛ տեխնիկայի մասին՝ նահանջելիս իր ճանապարհը մեկընդմիշտ պատելով հակահետևակային ու հակատանկային ականներով: Մարտակերտի գնդի սակրավորների վաշտի հրամանատար Վոլոդյա Ավանեսյանը պատմում է, թե միայն Զլդրան–Կիչան հատվածում, ուր մի քանի ամիս շարունակ ձգվում էր ռազմաճակատի գիծը, իրենք հանել են մոտ ութսուն հակահետևակային, իսկ ճանապարհների խաչմերուկում ընկած Դրմբոնից՝ տասներեք հակատանկային և երեսուներեք հակահետևակային ականներ: Մեր սակրավորների անձնուրաց ջանքերի շնորհիվ այս ամենի մեծագույն մասը համալրել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի զինանոցը, իսկ որոնք հանելը վտանգավոր է եղել, պայթեցնելով են վնասազերծել: Ինչպես շատ զինատեսակների ձեռք բերման, այնպես էլ կատարվող այս աշխատանքի համար «պարտական» են հակառակորդին, որից դեռևս մեկ տարի առաջ ձեռք բերած ռազմավարում եղել են նաև ժամանակակից ամենաարդիական արտադրության մի քանի ականորսիչներ:

Պատերազմում բախտդ ժպտում է ոչ միայն այն ժամանակ, երբ գնդակը կողքովդ է անցնում, այլև երբ ականի կողքին ես կանգնում և ոչ թե վրան: Հաճախ սակրավորները ականները հանել են առաջ շարժվելիս մի պահ կանգնած զրահատեխնիկայի հենց թրթուրների կամ մեքենաների անիվների տակից: Դժբախտաբար, երբեմն դարանակալ մահվան այդ օջախները թաքնված են մնում, և մինչև մանրակրկիտ մեկ այլ քննությունը, ժամանակավոր նոր ճանապարհներ են գցվում՝ հները երկու կողմից փակելով «Զգույշ, ականապատված տարածք է» ամեն ինչ ասող բառերով: Այդ տարածքում դանդաղորեն առաջ են շարժվում սակրավորները և ետ դառնալով բերում ու իրար կողքի շարում իրենց ավարը, որ հետո «նվիրեն» շաղ տվողներին:

Ականի պատճառած մահը մեկն է, սակայն տարբեր են պատճառվող ձևերը, որոնցից խուսափելու, ականի վրա «չնստելու» կամ դրանց ձգվող լարերին չդիպչելու և պայթյունից հնարավորին չափ խուսափելու համար ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի օրգան «Մարտիկ» թերթը յուրաքանչյուր համարում «Զգույշ, ականներ են» խորագրի ներքո շարունակաբար ներկայացնում է հակահետևակային ու հակատանկային տարբեր ականները ու թե ինչպես են դրանք սովորաբար տեղադրվում և ինչպես կարելի է նկատել ու խուսափել:

Պատերազմի զոհերը միայն մարդիկ չեն դառնում, այլև անգամ մարդուց փախչող և մարդկային հակամարտություններից այնքան հեռու և անհաղորդ կենդանիները: Դաշտերում և անտառներում իրենց վազքը ակամա մարմնավոր մի ականորսության է վերածվում, և հնչում է հերթական պայթյունը այնտեղ, ուր դեռևս չեն հասել սակրավորները ու չեն մտնում մարդիկ: Կենդանիների պայթյունին հաջորդում է և նրանց արյան հոտը առած գիշակերների վախճանը՝ մի նոր պայթյունով:

Ականին չի հետաքրքրում՝ դիմացից եկողը երեխա՞ է, թե՞ զինվոր: Նրա համար կարևորը եկողի ծանրությունն է կամ էլ իրեն հպվելու ուժը: Ով աշխատեցրեց իր զսպանակը, նրան էլ կպատժի իր բեկորներով: Ականապատված տարածքներն էլ յուրօրինակ մի աշխարհ են, ուր գործում և բեկվում են համընդհանուր հասկացություններն ու չափանիշները, անգամ կենդանական բնազդներն ու մարդկանց զարմացնող հավատարմությունը: Սակրավորները ոչ միայն տեղի ունեցած ողբերգական պատահարներն են թվում, այլև հուզիչ դեպքեր պատմում կենդանիների աշխարհից, որտեղ թաքծող սերն ու հավատարմությունը շարունակվում է անգամ մահվան այսպիսի գոտիներում:

Սակրավորների պատմածները միգուցե հետագայում գրառվելով՝ հոգևոր վերաիմաստավորումների և գրական մշակման ենթարկվեն ուրիշների կողմից, իսկ առայժմ մենք համառոտ ներկայացնենք դրանցից միայն մեկը. անտառապատ բացատում աղվեսը

պատահաբար պայթում է ականի վրա, և պայթյունի ալիքը նրա մարմինը շպրտում է մի քանի մետր այն կողմ՝ մեկ այլ ականի մոտ: Վերևում ճախրող արծիվը սլանում է ներքև՝ որսի տիրանալու ակնկալիքով, սակայն ինքն էլ է պայթում: Պայթյունի ձայնը լսած և այստեղ շտապած սակրավորները տեսնում են, թե ինչպես բզկտված արծվի զուգընկերը, վերևից տեսնելով այս երկու պայթյունները, բնազդային մի մղումով ասես հասկանալով, թե մահը գալիս է գետնի տակից, թափով վար է սլանում և ընկած արծվի կողքին վեր ու վար անելով, սկսում խփվել հողին, մինչև ինքն էլ պայթելով անշարժանում է նրանից մի քիչ այն կողմ:

Սակրավորների գործը միայն ականազերծելը չէ, այլև հողում խրված կամ ընկած և օդից վայր նետված գնդիկավոր ռումբերի տափօղակաձև չպայթած կասետները, որոնք մոտ երկու հարյուր բեկոր են պարունակում, հավաքելը և վնասազերծելն է: Արկերը պայթեցնում են ամայի ձորերում՝ բազմապատկելով Արցախ աշխարհը պատած բեկորների թիվը, իսկ գնդիկավոր ռումբերի չպայթած այս տափօղակները սակրավորների վաշտի հրամանատարը վնասազերծում է և յուրօրինակ մոխրամաններ պատրաստում: Կատակով ասում է, թե գնդիկավոր ռումբերը արցախյան կոնվերսիայի է ենթարկում:

Երբ ժամանակին Կարմիր բանակը նոր «կարմրած» Ադրբեջանին էր փորձում ենթարկեցնել Զանգեզուրը, Լեռնահայաստանի անպարտելի սպարապետ Գարեգին Նժդեհը ասում էր, թե կգա ժամանակը, երբ նրանց բարբարոսական հրետակոծության բոլոր բեկորները հավաքելով մեր հայրենիքի հանդերից ու ձորերից, կձուլվի ու կկանգնեցվի մեր հաղթանակի հուշարձանը, որի վրա գրված կլինի, թե «Կարմիր էին անվանում նրանք իրենց, բայց սև եղավ նրանց գործը, թող հավերժ անիծյալ լինեն նրանք»:

Եվ եթե Արցախում գա հաղթանակի այնքան երազած օրը, այրված բոլոր զրահամեքենաներից, «Ալազան» հրթիռներից մինչև հեռահար հրետանու արկերի և օդային կեստոնանոց ռումբերի բոլոր բեկորներից կձուլվի հավաքական մի բանակի վերածված ժողո-

վրդի հաղթանակի կոթողը, որն արդեն կդառնա ոչ թե քաղաքակիրթ աշխարհի աչքերի առջև դարասկզբին եղեռնված ժողովրդի հուշարձանը, այլ կխորհրդանշի անկոտրում այն կամքը, որի առջև այրված տեխնիկայի ու պայթած ռումբերի բեկորների վերածվեցին այդ քաղաքակիրթ աշխարհի բոլոր զինատեսակներն ու քաղաքական դավերը Թարթառի և Խաչենագետի հովիտներում:

ՀԱՅ ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 23–30 նոյեմբերի, թիվ 12

ՊԱԼԿՈՎՆԻԿԸ

ՀՀ նախագահի 1994 թ. մայիսի 28–ի հրամանագրով գնդապետ Ֆրունզե Նորիկի Ավագյանը պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Յուրաքանչյուր հրամանատար ունի իր ազդականչը (պագիվնոյ): Արցախի բոլոր ռազմաճակատներում գնդապետ Ֆրունզե Ավագյանը հայտնի է «Պալկովնիկ» անվամբ, որը նրան տրվել է նախ զինվորների կողմից, ապա ամրակայվել ազդականչային համակարգում: Այն սոսկական նշումը չէ հայկական բանակում ստացած իր աստիճանի, այլ այդ անվանումը ներառում է խորհրդային բանակից բերած փորձը, որին հայրենիքում գումարվեցին նաև անձնազոհ նվիրումն ու մարտական խիզախությունը:

Ծնվել է 1947 թ. Վայքի շրջանի Հորադիս գյուղում: 1964 թ. ընդունվում է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, որն ավարտելով՝ 1969 թ. ծառայության է անցնում Գերմանիայում տեղակայված խորհրդային զորքերում: Զինվորական կյանքն այնուհետև նրան տանում է Ուկրաինայի, Չեխոսլովակիայի, Ուրալի մեծ ու փոքր քաղաքները: Այս ընթացքում լեյտենանտից դառնում է փոխգնդապետ: Խորհրդային բանակի կադրային զինվորականին բնորոշ կենսագրությամբ էլ միգուցե կզորացրվեր նա և նախկին Միության որևէ անկյունում խաղաղ ու բարեկեցիկ կյանքով կշարունակեր ապրել, եթե չպայթեր 1988 թ. փետրվարը: Համազգային վերազարթոնքի ալիքը ալեկոծեց նաև նրա հոգին, թեև մինչ այդ էլ միշտ կապված էր Հայաստանին: Հարազատների վկայությամբ՝ հայ զինվորներին միշտ հորդորել է տիրապետել զինվորական գործին և ոչ թե մի կերպ անցկացնել բանակային կյանքի երկու տարին: Շարունակ

այն միտքը ներշնչել, որ այդ ամենը մի օր կարող է պետք գալ մեր ժողովրդին:

Սումգայիթը և ծավալվող հակահայ բռնությունները նրան հուշեցին, որ այդ օրն արդեն եկել է, և եթե նախորդ տարիներին ձգում էր հայրենիքի կարոտը, կապվածությունը հայրենի լեռնաշխարհին, ապա այժմ գումարվեց նաև պարտքի զգացումը: Դեռևս 1988 թ. դեկտեմբերին, առնելով երկրաշարժի լուրը՝ իսկույն արձակուրդ էր վերցրել և եկել Գյումրի, մեկ ամիս շարունակ կռիվ տվել փլատակների հետ: Նեղության մեջ գտնվողներին առաջիններից մեկը հասնելու այս պատասխանատվությամբ էլ նույն կերպ Չեռնոբիլ էր մեկնել վթարից անմիջապես հետո: Եվ երբ մեր հայրենիքում սկսեցին պայթել թշնամական առաջին արկերը, բնական և միջուկային աղետների դեմ մարտնչած Ֆրունզե Ավագյանը չկարողացավ անտարբեր դիտողի դերում մնալ և կամ էլ լրատվական միջոցներից տեղեկանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում, ու երբ շատերը, սարսափած մարմնավորվող պատերազմի ուրվականից և ապագայի անորոշությունից, սկսել էին հեռանալ Հայաստանից, նա, թողնելով ամեն ինչ, ընտանիքի հետ վերադարձավ հայրենիք: Ծառայության անցնելով Էջմիածնում դեռևս գործող խորհրդային բանակի զորամասերից մեկում՝ իր անմիջական մասնակցությունը բերեց հայկական բանակի կազմավորման գործին, այնուհետև կամավոր մեկնեց Արցախ՝ համաձայն զինվորական ասացվածքի, թե հրետանին պատերազմի աստվածն է: Մարտադաշտում նա հակառակորդին ցույց տվեց այդ աստծո ողջ ուժն ու զորությունը, միաժամանակ հենց մարտական գործողությունների ընթացքում զինվորներին սովորեցրեց հրետանային արվեստի նրբությունները:

Դպրոցն ավարտելուց հետո զինվորական ուսումնարան մեկնող ապագա գնդապետը իր ծննդավայր Հորադիսին հրաժեշտ տալիս երևի չգիտեր էլ, որ կա նաև այլ Հորադիս, և չէր էլ կարող պատկերացնել, թե երեք տասնամյակ անց ճակատագիրը իրեն տանելու է այնտեղ՝ ընթացող կատաղի կռիվների հորձանուտը, ուր հաղթականորեն պետք է լուծվեին Արցախի և ընդհանրապես մեր ժողովրդի համար կենսական կարևորություն ունեցող մի շարք ռազ-

մաստրատեգիական հարցեր, որոնցում իր ավանդն էր ունենալու նաև ինքը՝ վճարելով արկի ստացած բեկորներով: Այդ բեկորները, սակայն, նրան մարտադաշտից կարողացան հեռացնել ընդամենը մի քանի օրով, որից հետո վերստին իր զինակիցների կողքին էր և նրանց հետ էլ հաղթանակած վերադարձավ հաստատված հաղթական զինադադարից հետո: 1993 թ. վերջին, երբ ադրբեջանական բանակը նորից անցավ մեծածավալ հարձակման, նկատելի հաջողությունների հասնելով նաև Մարտակերտի հյուսիսում՝ գրավեց մի շարք բնակավայրեր՝ սպառնալով կրկնել 1992 թ. ամռան ողբերգությունը, Ֆրունզե Ավագյանը վերստին մեկնեց ռազմաճակատ:

Լինելով Արցախում համընդհանուր սիրո և փառքի արժանացած զորամասի շտաբի պետը՝ իր մեծ ավանդն ունեցավ նախ թշնամու առաջխաղացումը Մաղավուզի մատույցներում կանգնեցնելու և ապա ետ շպրտելու գործում: Ձմեռային սառնաշունչ օրերին նա շարունակ դիրքերում էր՝ ձգտելով առավել նպաստավոր դարձնել դրանք: Գիշեր ու զոր զբաղվում էր հակառակորդի կրակակետերը լռեցնելու ծրագրեր կազմելով: Նա անձամբ ղեկավարեց Տոնաշենի ազատագրման գործողությունը: Մատաղիսի և Թալիշի ազատագրումից առաջ հետախույզների հետ գնաց ճշտելու հակառակորդի ուժերի և տեխնիկայի տեղաբաշխվածությունը ռազմաճակատի այդ հատվածում:

Ի տարբերություն հակառակորդի, որի հրամանատարները հիմնականում այնքան հեռու են գտնվում անմիջական մարտական գործողություններից, որ անգամ կապի միջոցներով հազիվ են ձայները լսում, մեր հրամանատարները անձամբ են գլխավորում ծրագրված գործողությունները, և եթե մերոնց կարելի է մեղադրել, ապա պետք է մեղադրել հրամանատարի համար անթույլատրելիորեն առջևում լինելու համար, որը, միգուցե, երբեմն համաձայն ռազմական տեսության, գուցե ճիշտ չէ, սակայն մեծ ուժ և ոգի է ներշնչում զինվորներին: Մատաղիսի ազատագրումից հետո, երբ անհրաժեշտ էր վերցնել Թալիշ–Չայլու ճանապարհի վրա իշխող ռազմական կարևոր բարձունքներից մեկը, Ֆրունզե Ավագյանը անձամբ ղեկավարեց գրոհը՝ գրավման պահին վիրավորվելով ակա-

նանետի երեք բեկորներից: Մարտի ընթացքում վիրավորներին լեռնային նեղ կածանով իջեցնում էին ներքև, մինչև ճանապարհը, այնտեղից շտապօգնության մեքենաները հասցնում էին Մեծ Շենի հոսպիտալը: Հենված ուղեկցող զինվորին, հասնելով շտապօգնության մեքենային, որը լեցուն էր նստարաններին տեղավորված և գետնին պառկած տարբեր աստիճանի վիրավորներով, խեղդելով ցավը՝ նա սկսեց ազգային երգեր երգել և կատակելով ասաց, թե հիմա էլ վիրավորներին է ղեկավարում:

Այս պատերազմի ընթացքում մեր մարտիկները ասես գերազանցեցին և վերանայեցին մարդկային կամքի և մարմնի տոկունության մասին եղած բոլոր ըմբռնումները՝ ցույց տալով, թե ինչի է ընդունակ հայրենիքի զինվորը: Նույնը վերաբերում է նաև գնդապետ Ավագյանին: Վիրահատությունից մի քանի օր անց, երբ համաձայն բժշկական ընդունված կարգի, վիրահատվածին նոր-նոր թույլ է տրվում մահճակալից ելնել և մի քիչ քայլել, նա, պարզապես խեղդելով վերքերի ցավը, նորից մեկնեց ճակատային գիծ: Տարածվեց ուրախալի լուրը՝ Պալկովնիկը հոսպիտալից արդեն եկել է:

Նրա առաջին զինվորները մեր հայրենիքի տարբեր անկյուններից հավաքված նվիրյալներն էին: Մարտական գործողությունների ծավալմանը զուգընթաց առանձնակիորեն կարևորվեց կադրային զինվորականների դերը, և գնդապետ Ավագյանը, առաջիններից մեկը արձագանքելով զինվորական իր գիտելիքները հայրենիքի պաշտպանությանը ծառայեցնելու գործին, այսօր նորից Արցախում է՝ մարտական դիրքերում, որ իր և իր զինակիցների արյամբ նվաճված զինադադարը թշնամին չհանդգնի վերստին խախտել...

ՀԱՅ ՋԻՆՎՈՐ, 1994 թ., օգոստոս, թիվ 18

ԵԿԵՂԵՑԻՆ, ՋԻՆՎՈՐՆԵՐԸ, ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ...

Անցյալ տարվա հունվարին, երբ պաշտպանության գիծը Հյուսիսային Արցախում անցնում էր Մաղավուզի և Հակոբ Կամարիի մոտով, դիրքային հերթափոխից հետո վար իջնելով՝ շրջում էինք ամայի փողոցներով և կիսավեր տների շարքում մտովի փորձում վերստեղծել խաղաղ կյանքի պատրանքը:

Շարժման առաջին իսկ օրերից Արցախում ազգային վերազարթոնքն ուղեկցվում էր հոգևոր վերելքով, և յուրաքանչյուր տան մի անկյուն նվիրվում էր Տիրամորը և Հիսուսին: Եվ հիմա այստեղ՝ լքված, թալանված և հրետանային հարվածներից ավերված տներում, քամին էր շրջում, իսկ պատուհանի բաց խոռոչներից և փլված տանիքից՝ անձրևը և ձյունը, հատակին էլ ջարդված ամանեղենի և ապակու կտորտանքի մեջ մնացել էին միայն ընտանեկան լուսանկարներ և տարբեր փաստաթղթեր: Ավերակ տների պատերից, սակայն, սիրագորով ժպտում էր Տիրամայրը Մանկան հետ, և կամ էլ լուռ, խորհրդավոր նայում էր խաչյալ Հիսուսը: Շրջելով բակերում՝ մի քանի զարմանահրաշ իրողություններ նկատեցինք. հրետանային հարվածներից փլված մի քանի տներում կանգուն էին մնացել միայն այն պատերը, որոնցից կախված էր Խաչելությունը, իսկ մի քանիսում էլ հալոցքի ջրերը վար հոսելով՝ ոչ թե իջնում էին Տիրամոր պատկերի վրայով, այլ բոլոր օրենքներին հակառակ՝ կորագծով շրջանցում այն՝ ասես չհամարձակվելով խանգարել սրբապատկերի վեհաշուք անդորրը:

Գյուղն ուներ եկեղեցի, որն անցյալ տարի Զատկի նախօրեին կարգի բերեցին մեր զինվորները: Տարբեր տներից հավաքեցին Խաչելության բեկորներ, Տիրամոր պատկերը և նաև հոգևոր այն պատկերների ծվենները, որոնք կիսել էին ավերված տների ճակա-

տագիրը, և եկեղեցու սուրբ խորանին ի մի էին եկել տարբեր կողմերից խոցված Հիսուսի պատկերներ, և նրանց միջև խնամքով դրված էր Վազգեն Առաջինի վնասված, սակայն իր վեհությունը չկորցրած նկարը: Աշխարհի հետ միայն եկող զինական ու զինամթերքային համալրումով կապված մերձճակատային այս գյուղը հասնող հատուկենտ լուրերից մեկն էլ այն էր, թե Վեհափառի առողջական վիճակը լավ չէ, և բոլորաձև փաթաթված թուղթը մոմի տեղ վառող զինվորները, մոմաձև ծալված այս թղթերը դնելով մոմակալի տեղ օգտագործվող մեծ տրամաչափի գնդացրի կրակված պարկուճների մեջ, աղոթում էին նաև իրենց հայրապետի համար:

Երբ առաջին ծիծեռնակները երևացին Մաղավուզում, գյուղի սակավաթիվ բնակիչներից մեկը՝ մի կույր ծերունի, ասաց. «Եթե հաջողություն լինի, և գրավեք Մատաղիսը, կտեսնեք, թե որքան ծիծեռնակներ կան այնտեղ»: Ծերունու խոսքերը չէինք մոռացել, և երբ գյուղը գրավվեց, և տեղի յուրաքանչյուր տուն, քար ու թուփ դադարեցին հակառակորդի հավանական կրակակետ, թաքստոց ու դարան լինելուց, և ականազերծվող ճանապարհով քայլելով՝ մարդկային բնական հայացքով դիտեցինք շուրջներս, փարթամորեն աճած զմրուխտյա կանաչի մեջ զարմանալի անկենդանություն զգացինք: Մեկեն կայծակեց այն միտքը, թե ուր են ծիծեռնակները, որոնք այստեղ, ըստ ծերունու, բույն են հյուսում անգամ սենյակներում:

Մինչ այս խոհերով ներս էինք մտնում անկենդան տները, կարճ ժամանակ անց լսվում էր առաջին թևաբախումը, և հայտնվում էին պատից պատ շրջանաձև պտտվող ու մկրատաձև պոչով հային այնքան հարազատ ծիծեռնակները: Կտուցով բերված ցեխը խփում էին տան պատերի տարբեր կետերում, և որտեղ ցեխը չէր պոկվում, սկսում էին բույն հյուսել զարմանալի այն շաղախով, որի պատրաստման վարպետությունը նրանց տրված է ի վերուստ:

Առաջին օրերին տրտնջում էինք, թե ինչու հատկապես այն տներում են բույն դնում, ուր մնում ենք դիրքային հերթափոխից հետո: Սակայն շուտով ականատես դարձանք զարմանալի մի օրինաչափության. պարզվեց, որ ծիծեռնակները մտնում են միայն այն տները, որոնք արդեն վերաօծվել էին հայկական շնչով: Ամենուր երևում էին բների առանձին հետքեր, որոնք վկայում էին, թե վերջին երկու տարիներին այստեղ ծիծեռնակ չի բնավորվել, և հիմա բավական էր մտնել որևէ տուն, մի քիչ մնալ այնտեղ, և մեկեն հայտնվում էր ծիծեռնակների մի զույգ՝ կտուցներից անբաժան ցեխով, և որոնում այն կետը, որտեղ իր բույնն էր հյուսելու և գյուղի գաղթած բնակիչներին հիշեցնելու, թե եկել է նաև ձեր վերադարձի ժամանակը:

Մատաղիսում զինվորները, դեռ մի կարգին չտնավորված իրենց նոր հերթական ռազմակայանում, որոնեցին և գտան գյուղի եկեղեցին, որի շուրջ կուտակված էր չորացած մացառ, իսկ մուտքի առջև եղինջ էր աճել, և մի քանի օրվա հաղթական գրոհից դեռևս չհանգստացած և հաջորդ օրերին վերստին վերին դիրքերը ելնելուց առաջ նրանք հնձեցին և մաքրեցին տաճար տանող ճանապարհը, ապա ինքնաբուխ ներքին մղումով ամեն մեկը իր նպաստը բերեց եկեղեցու բարեզարդմանը այն պարզ հավատով, որը ձևավորել էր նրանց հոգիները սերնդեսերունդ փոխանցվող ժողովրդային բարեպաշտ ավանդույթով: Շուտով զինվորների ետևից եկեղեցի մտան նաև ծիծեռնակները: Նրանք ներս էին սլանում բեմի վրա բացվող նեղ ու երկայն լուսամուտից ներս թափանցող լույսի շողերի հետ և դուրս գալիս եկեղեցու դռնից: Տարբեր օրեր բազմիցս դիտել ենք նրանց թռիչքները և ոչ մի անգամ հակառակը չենք նկատել: Ծիծեռնակները մի քանի անգամ եկեղեցում պտտվելուց հետո խմբով դուրս եկան և շուտով վերադարձան մի-մի կտուց ցեխով, և մկրտության ավազանը վերից գոտևորող կամարի վրա սկսեց կերպավորվել հերթական բույնը, որի շաղախից վայր իջնող դեղնած հասկերը ոսկեզօծ բուրվառի նման հանդարտորեն օրորվում էին թռչունների՝ ասես «Փառք ի բարձունս» օրհներգության ներքո: Ծիծեռնակների բերած հարդի մի մասը, վայր թափվելով ոսկեգույն շղթայով, ձգվում էր մկրտության ավազանից մինչև բեմ, մինչև Սուրբ Սեղան, որը զինվորները զարդարեցին զույգ փամփուշտների միահյուսմամբ պատրաստված խաչերով: Դրանք արցախյան պատերազմի տարիներին ձևավորված յուրօրինակ զինական խաչարվեստի լավագույն նմուշներից էին:

Նախորդ ամիսներին արդեն շրջանառության մեջ էին մտել լուման և մետաղե դրամները: Նոր եկողներից դրանք վերցնում և պահում էինք՝ որպես հուշանշան և մի վկայություն, թե, այնուամենայնիվ, այս դիրքերից դուրս կյանքը շարունակվում է: Դրանք հատկապես գրավում էին իրենց երեսին դրոշմված հանրապետության զինանշանով: Դիրքերում այս մետաղադրամները հարգի էին ցանկացած տարադրամից, և շատերը հպարտանում էին, թե ունեն ողջ շարքը՝ տասը լումայից մինչև տասը դրամ: Մատաղիսում նրանք իրենց այս լումաները նվիրեցին եկեղեցուն: Մերձճակատային թոհուբոհում եկեղեցու բեմի խորհրդարանը՝ քարե պահարանը, դարձավ զինվորների ընծայարանը, և իրար վրա կուտակված լումաներին գումարվեցին նաև այլազան առարկաներ, որոնք կենսականորեն ամենից ավելի են անհրաժեշտ զինվորին: Նրանք ներքին անկեղծ մղումով այդ ամենը ընծայեցին եկեղեցուն, անկախ նրանից՝ դրանք ծիսական կամ խորհրդական որևէ նշանակություն ունեին, թե ոչ:

Ռազմական կենցաղին և հոգեբանությանը ծանոթ լինելիս սիրտդ հուզմունքով է լցվում ջերմեռանդ հավատից ծնված այն նվիրումից, որով ամբողջ օրը դիրքերի փոշին և ցեխը կրող զինվորը օճառի միակ կտորը դնում է բեմի այս խորհրդարանի անկյունում: Խրամատներում, ուր առաջին կպցված ծխախոտի կրակը դիրքից դիրք է փոխանցվում իրարից վառվող ծխախոտների միջոցով և լուցկու հատիկը ոսկու գին ունի, իսկապես անկեղծ մեծ հավատ է հարկավոր՝ մի տուփ լուցկի և անգամ տնից ստացված կրակվառիչը թողնել, որ բերված մոմը կամ նրա տեղ ծառայող թուղթը եկեղեցու մեջ եղող կրակով վառեն: Ակամա մի թաշկինակ, վարագույր, քշոց և կամ որևէ առարկա՝ ըստ իր կարողության ընծայելու մասին նվիրատվական արձանագրություններն ես հիշում զինական միջավայրից բերված և երկյուղածությամբ այստեղ դրված այս և համանման մյուս իրերը տեսնելիս: Եկեղեցու բոլոր անկյուններում էլ դրված էին արդեն ծաղկած և հասուն կարմրությամբ լցվող նռներ, և կենդանությամբ լցվող եկեղեցին ասես ծաղկել էր, ինչպես խաչափայտը Գողգոթայում Տիրոջ Հարությունից

հետո, իսկ վանդակապատ պատուհանների գոգերն էլ զարդարված էին կարմրիկ խնձորիկներով: Ներս թափանցող լույսի շողերի ներքո դեղին սրբատաշ քարից պատրաստված պատուհանի կիսամութ գոգին կարմրաթուշիկ ժպտացող այս խնձորիկներն իրենց գլխի զույգ կանաչ փոքրիկ տերևներով ասես մեր մագաղաթյա ձեռագրերի զարդագիր մի–մի Ծ լինեին:

Եկեղեցու մուտքի դռան վերևի արձանագրությունում ասված է. «Սկսուած է 1892 թ., աւարտուած է 1898 թ.: Շինուեցաւ սուրբ Եղիշէի եկեղեցիս արդեամբն Մատաղիսու միաբան ժողովրդականաց»: Այսինքն՝ երեք տարուց լրանում է եկեղեցու կառուցման հարյուր տարին, որը նա կդիմավորի արցախյան անճեղքելի սահմաններով և այդ սահմաններից ներս օրավուր տարածվող և զորացող հաստատակամ հավատով:

ԽՈՍՔ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի պաշտոնաթերթ, 1995 թ., ապրիլ, թիվ 2

ՆՐԱՆՔ ՉՏԵՍԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

(ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՋԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Հայկական բանակի առաջին նվիրյալ ռահվիրաներից էր Ջիվան Ջավենի Աբրահամյանը: 1988 թ. փետրվարյան փոթորկալից և ոգեշունչ օրերին իսկ նա արդեն գիտակցեց, որ Արցախյան շարժումն անխուսափելիորեն հանգելու է զինական պայքարի: Երկու տարի Աֆղանստանում ծառայած և մարտերում ցուցաբերած խիզախության համար «Արիության մեդալով» պարգևատրված Ջիվանը շատ լավ գիտեր, թե ինչ է պատերազմը, բայց նաև գիտեր, որ հայ ժողովրդի համար այնքան ճակատագրական ու վճռորոշ այս ժամանակահատվածում Հայաստանի և Արցախի վտանգված սահմանները առաջին հերթին իր նման հարուստ փորձ ու իմացություն ունեցող պաշտպանների կարիքն ունեն, և զինվորագրվեց նորանկախ հանրապետության նորակազմ հատուկ գնդին՝ դառնալով նրա առաջին զինվորներից մեկը:

Խորհրդայինից դեպի հայկական կանոնավոր բանակ անցումային այս շրջանում, ինչպես Աֆղանստանում, այնպես էլ այստեղ, նույնն էին ռազմական տեխնիկան ու հանդերձանքը, սակայն մեկ այլ առաքելություն էր վիճակված դրանք կրողներին, այդ թվում և՝ Ջիվանին: Ինչը ռազմատեխնիկական առումով կրկնություն էր իր համար, նորություն էր հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվածներից շատերի համար: Անասելի դժվարությամբ ձեռք բերված զինտեխնիկայի տարբեր տեսակների արկղերը բացելիս, հավաքելիս, տեղադրելիս ու լիցքավորելիս զինվորները հաճախ էին հարցական նայում, և նա ոչ միայն բացատրում էր՝ անձամբ ցույց տալով, այլև յուրաքանչյուրի տեխնիկական նրբությանը և գործնական կիրառությանը վերաբերող մի հուշ–օրինակ էր բերում աֆղանական պատերազմից:

Ամենավտանգավոր և կարևոր կետերում լինելու վճռականությամբ 1991 թ. ամառը նա գնաց Հյուսիսային Արցախ՝ Շահումյան: Վերջինս Ադրբեջանին հանձնելու և հայաթափելու քաղաքական գործարքը իրականացվել էր հարևան Գերանբոյի շրջանին միացնելու՝ այդ օրերին ընդունված գորբաչովյան հերթական որոշմամբ, որով Շահումյանին ևս սպառնում էր Գետաշենի և Բերդաձորի ճակատագիրը: Շրջանում նախ անջատվեցին լույսը, ապա կապի և հաղորդակցության մյուս միջոցները, այնուհետև ռազմական ստուգիչ նոր անցակետերի տեղադրմամբ Շահումյանը Հայաստանից հետո մեկուսացվեց նաև ամբողջ Արցախից՝ ենթարկվելով կրկնակի շրջափակման, որը ճեղքում էին միայն Մռավի անտառախիտ փեշերի վրայով թռչող ուղղաթիռները՝ բերելով այն ամենը, ինչը հարկավոր էր շրջանի պաշտպանությունը և կենսագործունեությունը ապահովելու համար:

Այդ ուղղաթիռներից մեկով եկավ նաև Ջիվանը: Լեռնային նման կիրճերով, ձորերով ու անտառային արահետներով նա քանիցս անցել էր մի քանի տարի առաջ, սակայն այդ ժամանակ դրանք թշնամու դարանակալ որոգայթներ ունեցող օտար տեղանք էին, իսկ հիմա՝ պատմության հերոսական դրվագների ու հիշատակների կենդանի արձագանքը պահող հայրենի լեռնաշխարհի մի հատվածը: Նա եկավ ու ևս մեկ դրվագով հարստացրեց նվիրական հիշատակները: Եթե ունեցած ռազմական փորձով վստահություն էր ներշնչում մարտական ընկերներին, ապա հաղթ կազմվածքով և վճռական կեցվածքով՝ հույս, հավատ՝ շրջակա գյուղերի բնակիչներին: Անունն այնքան համահունչ էր իրեն, և ինչպես տեղացիներն էին ասում՝ ջիվան Ջիվանն էր:

Տեղի զինվորական հրամանատարության հետ նա ձեռնամուխ եղավ առաջադրված պաշտպանական նոր խնդիրների իրագործ-

մանը, քանի որ քաղաքական զարգացումների ընթացքը վկայում էր, որ շուտով սկսվելու է շրջանը գյուղ առ գյուղ հայաթափելու ծրագրված գործողությունը: Նախ խորհրդային քարոզչության տարբեր միջոցներով հայտարարվեց, թե Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերում վաղուց արդեն խաղաղ բնակչություն չկա, մնում են միայն հայ գրոհայինները: Այնուհետև շրջանի բնակչությանը տեղեկացվեց, թե անձնագրերի ստուգման համար այս երեք գյուղերը պետք է մտնի ադրբեջանական ՕՄՕՆ–ը: Բերդաձորի և Հադրութի շրջանի՝ ընդամենը մի քանի ամիս առաջ տեղահանված գյուղերի օրինակով արդեն պարզ էր, թե ինչ է նշանակում նման ստուգումը:

Հուլիսի 24–ի առավոտյան Բուզլուխի, Մանաշիդի և Էրքեջի բնակիչները թողեցին իրենց գյուղերը: Կեսօրին խորհրդային բանակի աջակցությամբ ադրբեջանական ՕՄՕՆ–ը մտավ Բուզլուխ և Մանաշիդ, ծաղրուծանակի ենթարկեց այնտեղ մնացած հիվանդներին ու ծերերին: Բուզլուխում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին հավաքեցին և անհարգալից հարցաքննության ու խուզարկությունների ենթարկեցին հենց զոհերի հուշարձանի առջև: Այս ամենն առանց հեռադիտակի էլ պարզորոշ երևում էր Բուզլուխի վերջին տների մոտից վեր տարածվող անտառախիտ լեռնալանջից: Այս ամենը տեսնում էին Ջիվանը և նրա հետ լեռնաշխարհ կամավորաբար եկած հատուկ գնդի մյուս մարտիկները:

Չնայած ուժերի անհամեմատելի գերակշռությանը՝ ՕՄՕՆ–ը չհամարձակվեց Էրքեջ մտնել, որովհետև վախենում էր Բուզլուխի և Մանաշիդի անտառապատ փեշերից սպասվող հնարավոր հարվածներից: Թիկունքը ապահովելու համար նրանք մինչև երեկո շուտափույթ պահակակետեր դրեցին Էրքեջ մտնող ճանապարհներին: Տանջալիորեն երկար ձգվող ու ողբերգականությամբ լեցուն այդ օրվա երկրորդ կեսին արդեն ակնհայտ էր, որ հաջորդ առավոտյան հակառակորդը մտնելու է նաև Էրքեջ: Տևական քննարկումից հետո որոշվեց թույլ չտալ գյուղն անպատիժ գրավել:

Նման որոշումը պատճառաբանվում էր մի քանի նկատառումներով: Նախ, որ Էրքեջն անհամեմատ ավելի շատ բնակչություն ուներ, ինչպես նաև առավել մոտ էր շրջանի մյուս հայկական գյուղերին: Այլ

խոսքով՝ նրա անկումը մեծ սպառնալիք էր ստեղծում, և վերջապես՝ ռազմավարական հիմնավորումներից բացի, կար նաև բարոյահոգեբանական մեկ կարևոր գործոն, որը մատնանշում էին Ջիվանն ու ընկերները: Նրանք գտնում էին, որ անկախ ուժերի անհավասարությունից և գյուղը պաշտպանելու իրական հնարավորությունից՝ հարկավոր է մեկ կետում մարտի բռնվել հակառակորդի հետ, ցույց տալ, որ նա չի կարող անպատիժ առաջանալ մեր հայրենիքում:

Եվ երբ իջնող երեկոյի հետ նվազեց տեղահանված գյուղերից Վերի Շեն եկողների հոսքը, դեպ Էրքեջ սկսեցին շարժվել ինքնապաշտպանության ջոկատները՝ միանալու համար այնտեղ գտնվող Ջիվանի վաշտին և «Տիգրան Մեծ» կամավորական զորաջոկատին: Շուտով գյուղը երիզող տները վերածվեցին պաշտպանական դիրքերի, որից մի քանի հարյուր մետր այն կողմ կանգնած էին խորհրդային բանակի զրահամեքենաները: Լարված սպասման մեջ անցավ ողջ գիշերը, որևէ կրակոցով լռությունը չխախտվեց: Դիմացի զինվորական պահակակետերից լսվում էին միայն խոսակցությունների առանձին բեկորներ, և կայծկլտում էին զինվորների վառած ծխախոտները: Առավոտյան ժամերը ևս հանդարտ անցան: Մի պահ անգամ թվաց, թե հիշյալ երկու գյուղերի հայաթափումից հետո բանակը դիրքավորման իր այս կետերով նոր սահմանագիծ է ստեղծել: Նախորդ օրը շուտափույթ հեռացած գյուղացիների մեծ մասը ևս ետ վերադարձավ տանը մնացած առավել արժեքավոր իրերը տանելու համար:

Թվում էր, թե նման խաղաղ ձևով, դեմ հանդիման գտնվող ներքին լարվածությամբ կանցնի նաև այդ օրը: Կեսօրին, սակայն, մի քանի զրահամեքենաներից բացված համաժամանակյա կրակի աջակցությամբ դեպի դիրքերի վերածված գյուղավերջի տներն սկսեցին առաջանալ օմօնականները: Տանկային մեծ տրամաչափի գնդացիրների այրող բեկորային փամփուշտների կրակին շուտով գումարվեցին նաև արկերը: Նախ փշրվեցին ապակիները, ապա փլվեցին պատշգամբները և «նստեցին» տանիքներն, ու փլատակներից ելնող հրդեհի բոցին գումարվեց ֆուգասային արկերի խեղդող ծուխը:

Ի տարբերություն Ջիվանի և աֆղանական դպրոցն անցած էլի մի քանի մարտիկների՝ մյուսները մի պահ ընկրկեցին, սակայն շուտով Ջիվանի վճռական և գրագետ գործողությունների շնորհիվ վերագտան իրենց: Դիրքից դիրք և զինվորից զինվոր անցնելով՝ նա ոչ միայն ղեկավարում ու համակարգում էր մարտը, այլև հընթացս սովորեցնում քիչ փորձ ունեցողներին: Ընդմիջվող կրակահերթերի կարճատև լռության մեջ հնչում էր Ջիվանի հատու ձայնը և հրահանգ–հրամանները: Տեղացող կրակից փլատակների վերածվեցին նաև գյուղական տներին կից շինությունները: Ռազմագիտական ակնթարթային և ճշգրիտ կողմնորոշմամբ՝ Ջիվանը դրանք դարձրեց պաշտպանական կրակակետեր՝ փլված ու այրվող տների նկուղների և տանիքների փոխարեն:

Թե՛ ժողովրդի նախորդ օրերի գաղթը և թե՛ այդ օրվա մարտը զարմանալի արիությամբ տեսախցիկով մանրամասն նկարահանեց մեր ժողովրդին այնքան քաջածանոթ և հարազատացած լրագրող Ցվետանա Պասկալևան: Մարտի առաջին րոպեներին Ջիվանը հասցրեց անգամ մի քանի խորհուրդներ տալ Պասկալևային, թե ինչպես առավել արդյունավետ կերպով «որսա» կրակոցներն ու պայթյունները՝ մտքով հաշվելով, թե դիմացից երևացող ծուխը, որը ազդարարում էր հերթական արկի սլանալը, քանի վայրկյանից և որտեղ կընկնի: Տեսախցիկը պիտի հասցներ նկարահանել բուն պայթյունի պահը:

Նման կազմակերպված դիմադրությունը խուճապի մատնեց ադրբեջանական ՕՄՕՆ–ին, անակնկալի բերեց նաև խորհրդային բանակի զորամիավորմանը: Զրահամեքենաներն ընկրկեցին, իսկ երբ նրանցից մեկն անշարժացավ հակատանկային նռնականետի հարվածից, մյուսներն արդեն ետ քաշվեցին և համեմատաբար հեռվից սկսեցին խփել:

Կռվի խառն այս ընթացքում ևս ճիշտ կողմնորոշվելով՝ Ջիվանը շարունակ հրահանգում էր, որ կրակը ոչ թե բանակի զինվորների, այլ օմօնականների վրա ուղղվի, որովհետև լավ էր հասկանում, որ առճակատումը խորհրդային բանակի հետ կարող է հաջողություն բերել մեկ մարտում, իսկ ամբողջության մեջ անհեռանկարային է:

Նա անթույլատրելի էր համարում հայ և ռուս զինվորների՝ իրար վրա կրակելը, նրանց՝ հակադիր խրամատներում գտնվելը համարում էր գորբաչովյան դավաճանության արդյունք:

Ավարտված համարելով պաշտպանության այդ փուլում առաջադրված խնդիրը՝ հակառակորդին ցույց տալ հայկական ինքնապաշտպանական ջոկատների ուժը, զինական հագեցվածությունը, մարտունակությունը, նաև թշնամուն անպատիժ չթողնելու կամքը՝ Ջիվանը կազմակերպեց օղակված գյուղից դուրս գալը և Վերի Շենից դեպի Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը ձգվող ճանապարհների խաչմերուկին նոր դիրքեր գրավելը:

Գյուղը թողնելու գլխավոր դժվարությունը դարձավ մինչև անտառի փեշերը ընկած մի քանի հարյուր մետր բաց տարածությունը անցնելը: Բնակավայրի ներսում ընթացող փողոցային մարտերի վարպետ կիրառմամբ և շարունակ երթի ուղղությունը փոխելով, խուսափելով սպառնացող ավերիչ հրետանային հարվածներից, տնամերձ հողամասերի միջով տնից տուն և փողոցից փողոց անցնելով՝ Ջիվանի առաջնորդությամբ ջոկատները հասան գյուղի ծայրը:

Հայկական պաշտպանական խմբերի՝ շրջապատումից դուրս գալը տեսնելով՝ հակառակորդն սկսեց կույր հրետակոծության ու գնդակոծության ենթարկել լեռնաշղթայի անտառապատ փեշերը: Այստեղ ևս անգնահատելի դեր խաղաց Ջիվանի աֆղանական փորձը: Սառնասրտորեն հաշվելով հակառակորդի կրակակետերից եկող հարվածների հետագիծը, նա ընտրեց հատկապես այն կածանները, որոնք չէին մտնում այդ կրակակետերի ընդգրկած շառավղի մեջ:

Վերի Շեն հասնելու համար ընտրվեց լեռնային անտառապատ մի ճանապարհ: Ջիվանի հանձնարարությամբ տեղացիներից մի քանիսը, որոնք լավ գիտեին ճանապարհը, գնացին առջևից՝ տեղանքը հետախուզելու և ստուգելու, թե արդյոք դիմացի ոլորաններից մեկում չի՞ սպասում դարանակալ թշնամին:

Էրքեջից Վերի Շեն տանող լեռնային այս կածանի թեք լանջին, որի կողքով հոսում է Հայ Պարիս գյուղը սնուցող ջուրը, կա մի աղբյուր: Այն կոչվում է Աղջկա աղբյուր: Դեռևս հնուց նրա հողը և ջուրը հռչակ-

ված են եղել իրենց բուժիչ հատկությամբ: Դրանք խառնելով՝ քսել են վերքերին, և աստիճանաբար այնքան հող է վերցվել, որ գոյացել է մի ողջ քարանձավ: 1918 թ., երբ գյուղը վերստին հերոսական կռիվ էր մղում թշնամիների դեմ, վերջիններս հետապնդում են մի աղջկա: Նա, չցանկանալով ընկնել հետապնդողների ձեռքը, իրեն ժայռից ցած է նետում և ջախջախվում այս աղբյուրի մոտ: Այդ տեղում մեկ տարի անց գյուղի տեր Սարգիս քահանան կանգնեցնում է տապանաքար՝ այս դեպքը պատկերող եռակամար պատկերաքանդակներով, որի մյուս կողմում գրում է. «Այս է տապան Եպրաքսեայ կոյսին»: Ժողովուրդը սրբացրել է այս վայրը, և մինչև մեր օրերն էլ, հին հավատալիքներից եկող սովորությամբ, շորերի կտորներ էին կապում շրջակա ծառերի ճյուղերից, որ այստեղ մնան իրենց ցավերը:

Մի քանի ժամ տևած կռվի, ապա նրան հաջորդած տևական երթից հետո ուժերը մի քիչ վերականգնելու համար Ջիվանը հրամայեց՝ առանց շարքերը խառնելու ջուր խմելուց հետո աղբյուրի շուրջը շրջանաձև պաշտպանություն կազմած տեղավորվել և հանգստանալ: Դեռ բոլորը չէ, որ հասցրել էին ջուր խմել և այրվող ու չորացած դեմքերը լվանալ, երբ լեռնալանջի ներքևում առավել լայն արահետի մյուս կողմից մեքենաների լույսեր ուրվագծվեցին և տեխնիկայի խուլ բվվոց լսվեց: Հնչեց Ջիվանի հանդարտ ու վճռական ձայնը՝ հակատանկային նռնականետները և գնդացիրները առաջ բերել: Երբ անցան լարված սպասման մի քանի րոպեները, պարզվեց, որ անցնող տեխնիկան շրջանի պաշտպանական ուժերինն է, որոնք վերախմբավորվում էին տեղահանված երեք գյուղերից այն կողմ՝ Վերի Շենից էլ վեր գտնվող խաչմերուկում: Դեպ այնտեղ ուղղվեցին նաև Էրքեջից դուրս եկած ջոկատները: Մինչ անտառային բացատին հրաժեշտ տալը, վերը հիշված ժողովրդական հնավանդ սովորությամբ, շատերը իրենց զգեստներից մի-մի կտոր թողեցին աղբյուրի մոտի թփուտների ճյուղերին...

Շուտով երևաց Վերի Շենը: Կեսօրվա մարտերի լուրը արձագանքել էր ողջ շրջանում, և մանրամասներն իմանալու համար գյուղից բավական հեռու, ճանապարհի ոլորանում մեծ բազմություն էր հավաքվել: Նայելով անտառից դուրս եկողներին՝ նրանք տեսան ոչ

թե պարտված բանակի զինվորների, այլ առաջիկա մարտերին ընդառաջ գնացող մի ամբողջ զորաջոկատ: Չնայած օրվա լարվածությանն ու հոգնությանը՝ Ջիվանը քայլում էր հպարտ ու ձիգ: Իր զինակիցների հետ նա պատրաստվում էր հերթական մարտին, որը վերջինը դարձավ նրա համար...

Դեռևս գիշերը նա ընկերների հետ սկսեց դիրքավորվել Շամփրապտուկի բարձունքը տանող ճանապարհին, փակեց այն: Շամփրապտուկ նշանակում է շամփուրի պտուկ՝ շամփուրի սուր ծայրը: Այսինքն՝ շրջակա բլուրների միջից այդ բարձունքը վեր էր ցցվել շամփուրի սուր ծայրի նման, իսկ ներքևում փռված էր գյուղը: Նպատակ ունենալով գրավել բարձունքը՝ թշնամին հարձակման անցավ: Զուտ ռազմագիտական տեսանկյունից անիմաստ էր մարտն ընդունելը, քանի որ այդ պահին վճռորոշը ոչ թե մարտական վարպետությունն էր, խիզախությունը և անձնուրացությունը, այլ հակառակորդի ունեցած զինական տեխնիկայի բացարձակ գերազանցությունը: Չնայած այս իրողությանը՝ 1991 թ. հուլիսի 20-ին Ջիվան Աբրահամյանը, Նիկոլայ Հայրապետյանի և Վարդան Տերտերյանի հետ, ընդունեց իրենց կյանքի վերջին մարտը...

Գործնական մոտեցում ցուցաբերելու և ուժերը առաջիկա մարտերի համար պահելու փոխարեն նման գիտակցված նահատակության գնացին Ջիվանը և իր ընկերները, որովհետև ամոթալի համարեցին առանց կռվի երկրի խորքը տանող ճանապարհը թշնամու առջև բացելը: Խորհրդային երբեմնի հզոր կայսրության 1991 թ. ամառային հոգեվարքի այդ օրերին, երբ Մոսկվայում ընդունվող քաղաքական որոշումներին զուգահեռ, դրանից ավելի վճռորոշ դեր էր խաղում Ադրբեջանում տեղակայված խորհրդային բանակի զորամասերը կաշառքով արցախահայության դեմ հանելը, Ջիվանը և իր ընկերները զինական այս ընդվզումով ցույց տվեցին, որ խոստացված վճարով հայկական գյուղերի տեղահանությանը մասնակից լինելը չի կարելի շփոթել հատուկենտ կրակոցների, անվտանգ զորախաղերի հետ, և իրենց կյանքի գնով հավաստեցին այս իրողությունը...

ԱՎԵՏԱԲԵՐՆԵՐԸ (Դիմանկարների ժողովածու), «Հայ զինվոր», 1997 թ.

ԱՐՑԱԽԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԷՐ

Վարդան Բախշյանի նահատակությամբ մեկով էլ ավելացավ Արցախում ընկած հերոսների թիվը: Շատերի նման Վարդանը ևս 1988-ին հոգևոր մկրտություն ստացած սերնդից էր: Բայց այն քչերից էր, ովքեր անցնող չորս տարիների ընթացքում հավատարիմ մնացին 88-ին, չնահանջեցին, ոչ էլ շահարկեցին, այլ իրենց կյանքով պաշտպանեցին այն: Վարդանն առաջիններից էր, որ հասկացավ, թե արցախյան հարցը արդարության վերականգնման հարց չէ, այլ տևական ու ծանր ազգային-ազատագրական պայքար:

Համալսարանական ուսումնառության առաջին իսկ տարիներից, նվիրվելով հայոց պատմության ուսումնասիրմանը, մեր պատմության տրամաբանությամբ ասես կանխազգում էր դեպքերի զարգացման ընթացքը, ու իր մշտապայծառ ժպիտի միջից էլ նկատելի էր դիմագծերում գնալով կուտակվող մտահոգությունը, ու երբ վտանգվեցին մեր հայրենիքի սահմանները, նվիրվեց ինքնապաշտպանության գործին, մեկնեց Բերդաձոր: Նոր սերնդին ազգային ոգի և ռազմական գիտելիքներ հաղորդելու համար նրանց հետ էր սկաուտական բանակումներում ու այսքանի հետ միաժամանակ չէր կտրվում իր նախընտրած աշխատանքից՝ Հայաստանի տեղանունների ու տեղագրության ուսումնասիրությունից: Գիտական գրադարանների սրահներում նայելով տեղագրական ճշգրտումներում խորասուզված նրա դեմքին՝ դժվար էր պատկերացնել, որ Վարդանն ունի և իր երկրորդ կյանքը՝ հայ երկրի ինքնապաշտպանության գործը:

Այսօր առօրյա դժվարություններից գնալով խորացող նյութականության ու հուսալքության բարձրացող ալիքում ընկրկում են շատերը, բայց Վարդանը չնահանջեց իր ապրած երկու կյանքում էլ՝ ոչ գրքերի առջև և ոչ էլ դիրքերում:

Սարսափելի, անհեթեթ ու անբնական է մտածել, թե այսուհետև նրա մասին խոսելու ենք միայն անցյալ ժամանակով՝ մտովի փորձելով վերականգնել մարած ժպիտն ու հիշել ասածները: Դեռ երեկ նրա հետ քննում էինք հայոց պատմության ու մեր ժողովրդի ապագային վերաբերող հարցերը, իսկ այսօր արդեն ինքը դարձավ պատմություն, գնաց խառնվեց իր պաշտած հերոսներին:

Ուսանողական տարիներին, երբ շատ հասկացություններ ու անուններ կապանքի ներքո էին, կպատկերացներ նա, թե մի օր էլ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հաստատվելու է հայրենիքում, ինքն էլ դառնալու է զինվորը հայրենիքի ու մարտիկը իր դավանած կուսակցության գաղափարի:

Վարդանի կորուստը եռակի է: Կորուստ իր հարազատների, նրան ճանաչողների համար, որ էլ չկա նա, իր կենսախնդությամբ ու մեծ լիցքով, որով պատում էր անգամ գիտական սրահները, էլ չի հաղորդելու իր շրջապատին ու մտերիմներին:

Կորուստ էր մեր ազգային-ազատագրական պայքարի, իր զինակիցների ու Հայաստանում ծավալված մարմնակրթական շարժման համար:

Եվ վերջապես Վարդանի զոհվելը կորուստ էր հայագիտության համար: Արդեն ձևավորված գիտնական էր: Այն, ինչ տարիների ընթացքում հավաքել էր հատիկ-հատիկ, հիմա բուռ-բուռ շաղ էր տալիս իր գրածների էջերում, բայց չհասցրեց ամբողջը թղթին հանձնել: Հատիկի նման, նման այն հատիկին, որ իր մահով կյանք է տալիս ուրիշներին, ընկավ Արցախի հանդերում:

Երազում էր ճշգրտել հայոց պատմության մթին էջերը, բայց ճակատագիրը նրան վերապահել էր այդ պատմության այսօրվա պաշտպանությունը: Վարդանն ընկավ այն օրերին, երբ կերտվում էր հայոց երկրորդ նոր պետականությունը Մայր երկրից կտրված Արցախում, և սկսվել էր Հայաստանի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը: Միջնադարում ասվում էր, թե նահատակների արյունն է հիմքը եկեղեցու: Վարդանի ու այս երեք տարիների ընթացքում ընկած մարտիկների արյունն էլ դարձավ հայոց նորոգվող պետականության հիմքը: Նրանք դիրքերում աշ-

խարհին հարգել տվեցին մեր ժողովրդին: Երբ մենք մտածում ենք, թե ինչպես դիմավորենք անցնող յուրաքանչյուր օրը, Վարդանը զոհվեց մեր հայրենիքի ձմռան պաշտպանության համար, որ հայն իր հայրենիքում անցկացնի իր ձմեռը ու նրան հաջորդող գարունը:

Անցնող օրերը ծանր լուրեր են բերում Արցախից, գալիս է մի նոր բոթ, հեռախոսատետրում էլի մեկ ընկերոջ հեռախոսահամար սև շրջանակի մեջ է առնվում, ու էլ ոչ մի զանգ լսելի չի դարձնելու նրանց ձայնը:

Այն կարձագանքվի միայն իրենց ճանաչողների հոգիներում և կդրոշմվի հայոց այս վերջին՝ արցախյան տևական Ավարայրի պատմության էջերում:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1991 թ., 25-ը դեկտեմբերի, թիվ 24

ԱՐՑԱԽԻ ԵՐԿԻՆՔՆ ԱՉՔԵՐՈՒՄ

Դժվար է ասել՝ հայ ազատամարտիկներին վերապահված զենքը փախցրած վարձու մի մարդուկի ձեռքով դու գնացիր, թե օրեցօր ավերվող հայրենիքիդ ցավի կծկումից դողաց ձեռքիդ հրազենը, բայց արդեն խաղաղ ես դու: Ներսդ տանջող ու ալեկոծող տարիներիդ ցավը բացված մի վերք դարձավ մարմնիդ և գետնեց քեզ՝ հայրենի աշխարհիդ պատմությունը շարունակելու փոխարեն դարձնելով այդ պատմության մի արյունոտ էջը:

Կարճ ժամանակում հարազատացել էիր բոլորին: Քո խոսքերը մարդկանց ասես հաղորդակից էին դարձնում մեր ազգային շարժման կորած մաքրությանը, ու դու ոչ միայն հայոց երկրորդ հանրապետության նախագահն էիր, այլև ամեն ընտանիքում հարազատացած ազնիվ ու մաքուր մի տղա: Մեր ժողովուրդը քեզ ճանաչեց, հավատաց ու սիրեց հեռուստացույցով տեսնելով, ու հեռուստացույցին հառած հայացքով էլ հրաժեշտ է տալիս: Քո ծանոթներից ու մտերիմներից շատերը, որոնց հարազատացար անցնող այս տարիներին, չկարողացան քո կողքին լինել մի վերջին անգամ, որովհետև արկերով հոշոտվող մի երազ է դեռևս երազված միացումը: Փակ են Արցախ տանող ճանապարհները, կամ էլ յուրաքանչյուր կիլոգրամ ծանրությունը հաշվի մեջ է այդ ճանապարհին:

Երևանում քո ծանոթներն ու մտերիմները, մտովի քեզ ուղեկցելով դրամատիկական թատրոնի շենքից մինչև Հաղթանակի զբոսայգի, ուր հողին հանձնվեցիր, հիշել են նաև մի այլ կարճ ճանապարհ՝ Հադրութում ազգագրական թանգարանից մինչև ձեր տուն տանող ճանապարհը, որովհետև, եթե ծանոթներդ թանգարան էին գալիս, տուն էիր հրավիրում, հպարտանում երկու զավակներիդ ներարկած հայեցի ոգով և ուսումնական առաջադիմությամբ, իսկ եթե տուն էին գալիս, տանում էիր հոգևոր զավակիդ մոտ՝

Հադրութի թանգարանը, ուր ամեն ցուցանմուշ քո ձեռքերի ջերմությունն էր կրում: Ձեր նեղլիկ տունը ընտանիքիդ ջերմության ու երեխաների իրար հաջորդող խոսքի շնորհիվ անսահմանորեն մեծ էր թվում: Հետո պարետային ժամի սկսվելուց մի երկու ժամ առաջ, որպեսզի զինվորների ձեռքը չընկնեինք, բակերի միջով աննկատելի ճանապարհներով ուղեկցում էիր: Հերթական հրաժեշտից առաջ անցնում էինք շրջկենտրոնի երկու մասերը իրար կապող կամրջով, ու մի տեսակ կոտրված ժպիտով հրաժեշտ էիր տալիս նոր հանդիպման ակնկալիքով՝ չնայած սպասվող օրերը որևէ լավ բան չէին խոստանում:

Այդ օրերի պարտադրանքով ժողովուրդը զենք վերցրեց ու քեզ էլ ընտրեց իր հռչակած հանրապետության նախագահ: Անսովոր էր հանդիպելու համար նախ ընդունարանում նստող քարտուղարի միջոցով հեռախոսով կապվել և ապա նախկին տարիներից մնացած երկտակ ծանր դռների միջով ներս մտնել: Ավանդույթի ուժով մի պահ թվաց, թե թանգարանում ենք, և ասես ցանկանում էիր մի նոր ցուցանմուշ ցույց տալ, բայց շուրջդ էլի հնից մնացած ու արդեն չաշխատող հեռախոսներն էին, պաշտոնական գրություններ: Հին օրերի մի կարոտով իսկույն հարցրեցիր, թե Հադրութում եղել ես: Նկատելի էր, որ չնայած եկող ու գնացող միջազգային հյուրերին, հարգանքին և ուշադրությանը՝ դու գնալով կոտրվում էիր ավերվող հայրենիքիդ հետ միասին: Երբ հարցրեցի՝ ինչպես կարող եմ հասնել Նախիջևանիկ, շփոթված մի ժպիտով ասացիր, թե մի քանի լիտր բենզին է հարկավոր: Օրական մի քանի լիտր բենզին չգտնող զարմանալի մի նախագահ էիր դու, ինչպես զարմանալի է զրահամեքենաների դեմ այսօր անհավասար կռիվ մղող քո ժողովուրդը:

Վերջին անգամ եղերական մահիցդ մի քանի օր առաջ նախագահական ընդունարանից հեռախոսով խոսեցի քեզ հետ: Ներողություն խնդրեցիր, որ հիմա հնարավոր չէ հանդիպել ու էլի նույն հարցը տվեցիր. «Հադրութ արդեն գնացել ես»: Կատակով պայմանավորվեցինք հանդիպել Հադրութից գալուց հետո, սակայն երբ եկա, շատ կարճ եղավ մեր հանդիպումը, որովհետև Մարտակերտ

էիր գնալու, ուր Մարաղայի ողբերգությունն էր, ապա տեղի ունեցավ և քո ողբերգությունը:

Արթուր, դու մեր ազգային այն սակավաթիվ գործիչներից էիր, որ ոչ արցախյան տեղային շահերով էիր առաջնորդվում և ոչ էլ Արցախը մանրադրամի նման ցանկանում մսխել Հայաստանի քաղաքական ու էլի, չգիտեմ, ուրիշ ինչ շահերի համար, այլ շարունակ կրկնում էիր, թե Արցախը ռազմաճակատի առաջին գիծն է Հայաստանի համար, և Հայաստանը ավարտվում է Արցախում և Արցախով է սկսվում Հայաստանը: Տա Աստված, որ բոլորս էլ ապրենք այդ գիտակցությամբ ու համոզումով և դրանից ծնվող արցախյան նվիրումով և մտասևեռմամբ:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 1992 թ., 23-ը ապրիլի, թիվ 12

ՆՐԱ ՍԻՐՏԸ ՄՆԱՑ ՄՌԱՎԻ ՓԵՇԵՐԻՆ

Ազգային–ազատագրական պայքարներն ունենում են իրենց ղեկավարները, ժողովրդի ինքնապաշտպանությունը ապահովող հրամանատարները և ազգային անանց արժեքների վրա խարսխված ու օրվա պահանջներից բխող գաղափարախոսները: Առաջնորդներ, սակայն, դառնում են նրանք, ովքեր միաժամանակ լինում են թե՛ ղեկավար, թե՛ հրամանատար և թե՛ գաղափարախոս: Հյուսիսային Արցախում այս առաջնորդը դարձավ Շահեն Ջինավորի Մեղրյանը:

Երբ բարձրացավ Արցախյան շարժումը, Շահենն իր գործընկերների հետ միասին սկսեց կազմակերպել շրջանի ինքնապաշտպանությունը՝ ռազմականից բացի կարևորելով նաև ազգային–հոգևոր ու տնտեսական գործոնները: Նրա ջանքերով ստեղծվում է «Բերդ» (անվանումը՝ Գյուլիստանի նշանավոր բերդից) հայրենակցական–բարեգործական միությունը: Շահենը քաջ գիտակցում էր, որ ազգային ինքնապաշտպանությունը ոչ միայն զինական, այլև հոգևոր հասկացություն է, որ ունեցվածքի համար մարդը զենքը ձեռքին երկար չի կռվի, այլ կգնա ու մեկ այլ վայրում նոր ապրուստի տեր կդառնա, իսկ պայքարը տևական կարող է լինել այն ժամանակ, երբ հայրենական տունը ներառված է ընդհանուր հայրենիքի մեջ՝ դառնալով այդ հայրենիքի մեկ մասնիկը:

Հայրենի բնօրրանի հետ ժողովրդի կապվածությունն ավելի մեծացնելու համար ձեռնամուխ է լինում շրջանի եկեղեցիների նորոգմանը: 1989 թ. աշնանը լիովին կարգի բերվեց Գյուլիստանի վեհաշուք եկեղեցին, ուր տասնամյակների ընդմիջումից հետո Հյուսիսային Արցախում վերստին տեղի ունեցավ առաջին հավաքական մկրտությունը, ուր Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Պարգև սրբազանն առաջինը մկրտեց հենց նրան:

Էրքեջում նախնական մաքրումն ու ամրացումը կատարող վարպետները հարցրեցին, թե ինչու՞ եկեղեցու վեր բարձրացող շարվածքում դատարկ կարասներ են տեղադրված: Շահենը հարցական նայեց: Եվ երբ ասացի, թե համաձայն ժողովրդական տարածված ավանդության, կարասները մեծացնում են արձագանքը՝ բազմապատկելով ընթացող եկեղեցական արարողությունների ձայնը, Շահենն էլ իր հերթին արցախյան մի վերաիմաստավորմամբ ասաց, թե լավ պահպանեցեք այս կարասները և թող նրանք այնպես արձագանքեն, որ մեր մղած պայքարը թնդա ողջ աշխարհում:

Շրջանի պաշտպանունակության համար կարևորվում էր հատկապես ճանապարհային շինարարությունը, քանի որ այն, նպաստելով բնակչության հոգսերի թեթևացմանը, հնարավոր բախումների ժամանակ էլ առավել դյուրին էր դարձնելու բնակչության տեղաշարժը և օգնական ուժի տեղ հասցնելը: Այս նպատակով ձեռնարկեց Կարաչինար–Թալիշ մելիքական հին ճանապարհի վերանորոգումը, շնորհիվ որի, արդեն ուղիղ գծով և ոչ թե ադրբեջանական հարևան շրջաններով անցնելով, իրար կապվեցին Շահումյանն ու Մարտակերտը: Շուտով Հյուսիսային Արցախի համար կյանքի զարկերակի նման շարունակ տրոփող այս ճանապարհի կառուցմանը համաժողովրդական մի խանդավառությամբ մասնակցեց ողջ շրջանը:

Երբ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հաստատվեց հայրենիքում, Շահենը զինվորագրվեց կուսակցությանը: Շահումյանի զինվորական շտաբի հրամանատարական իր սենյակում խփված էր կուսակցության դրոշը՝ «Մահ կամ Ազատություն» կարգախոսով: Դաշնակցությունը, սակայն, կուսակցություն չեղավ նրա համար, այլ Արցախին անհրաժեշտ ազգային գաղափարախոսություն: Իր ընկալմամբ՝ պահանջատիրությունը տեսական դրույթ չէր, այլ ամենօրյա շարունակական պայքար Մռավի փեշերին, իսկ հարատև կռիվն էլ վերացական ներշնչող գաղափարի փոխարեն՝ կազմակերպված ինքնապաշտպանության կայուն համակարգ:

Հեռու լինելով քաղաքական պայքարից և շահարկումներից՝ դժբախտաբար, ինքը դրանց զոհը դարձավ Շահումյանի անկման

առաջին իսկ պահից, երբ ժողովրդի ցավից հեռու ու այդ ցավին անհաղորդ Երևանում հայրենիքի տարածքային անկումները երկկողմանի մեղադրանքի նյութ էին դարձել իշխանությունների ու ընդդիմության միջև: Օրհասական այն օրերին, երբ հակառակորդի զինտեխնիկան, Շահումյանից առաջ շարժվելով՝ մտավ Թալիշ, ապա՝ Չայլու, Լենինավան և մոտեցավ Մարտակերտ շրջկենտրոնին, այդ առաջխաղացումը կանգնեցնելու ռազմական և քաղաքական կերպերը որոնելու փոխարեն քավության նոխազ էր փնտրվում, և այն գտնվեց հանձինս Շահումյանի հրամանատարի:

Մտացրիվ էր այդ օրերին: Պատասխանելով արդարանալու որևէ տրամադրություն չուներ: Նրա հոգսը դեռևս ճանապարհին եղողներին, անտառում ուժասպառ մնացածներին Հաթերք հասցնելն էր: Տարածվող հերյուրանքներն ակամա իրենց ազդեցությունն էին թողնում, կասկածի որդով թունավորում:

Շրջանի ընկնելուց մի քանի օր անց՝ երեկոյան, նրան գտա Հաթերքի տներից մեկի բակում՝ կրակի մոտ նստած: Տանջող կասկածներից ազատվելու համար, երբ նրբորեն սկսեցի տարբեր հարցեր տալ, դառը մի ժպիտով ասաց, թե դո՞ւ էլ ես մտածում, որ շրջանը ես եմ ծախել: Մինչև հիմա էլ սիրտս կսկծում է, թե ինչո՞ւ այն օրերին համատարած զրպարտանքի ընդհանուր հեղեղում պաշտպանական մի խոսք չգրեցի, չնկարագրեցի, թե անցնող տարիների ընթացքում ինչ գործ է կատարել իբրև շրջանի ղեկավար և ինքնապաշտպանության ուժերի հրամանատար:

Նրա հոգսը, սակայն, ուրիշ էր: Մտածում էր ի մի հավաքել գաղթի ընթացքում իրենց հարազատների հետ Մարտակերտի տարբեր գյուղերում ցրված տղաներին և պատրաստվել հետ·բերելու կորցրածը: Մի մասին խելացնորություն էր թվում այս միտքը, մյուսները ոգևորությամբ համաձայնեցին: Երբեք չեմ մոռանա այն պահը, երբ տղաներից մեկը, ընդոստ վեր ելնելով, ասաց. «Եկեք երգենք ի նշան մեր տանելիք հաղթանակների»: Շահենը մեղմորեն նրան նստեցրեց՝ պատասխանելով, թե երգելու ժամանակը դեռ կգա, իսկ հիմա չի կարելի, որովհետև անտառում դեռևս անթաղ մեռելներ ունենք:

Շուտով անցած գաղթի ու հուսալքումի ճանապարհը իրենց համար դարձավ վերադարձի և վրեժի ճանապարհ, ու թերթերն սկսեցին գրել Շահումյանում ծավալված պարտիզանական պայքարի մասին: Դեռ ժամանակ է հարկավոր՝ իմաստավորելու սխրանքը այն նվիրյալների, ովքեր ձմեռային դաժան ցրտերին հակառակորդի թիկունքի վերածված իրենց հայրենիքի անտառներից վերսկսեցին մարտական գործողությունները: 6–7 հոգուց կազմված խմբերի առաջին հարվածները ռազմագիտական կարևորությունից առավել վրեժի պոռթկումներ էին, որոնք որոշ չափով թեթևացրեցին վիճակը Մարտակերտի ճակատում, իսկ երբ ազատագրվեց Հաթերքը, արդեն ուղիղ կապ ստեղծվեց պարտիզանների հետ, և սկսեց իրական թվալ Շահումյանի ազատագրումը, որի առաջին քայլը, բնականաբար, պետք է լիներ Գյուլիստանը:

Շրջանի անկումից հետո Շահենի օրերը անցել էին այս սպասումով: Երբ կազմվել էր գյուղը հետ վերցնելու ծրագիրը, ինքը երդվել էր չսափրվել այնքան ժամանակ, քանի դեռ նորից չի մտել Գյուլիստանի եկեղեցին: Եվ ապրիլի սկզբին կատարվեց նրա երազանքը: Նորից իր ծննդավայրում էր: Մարտական ընկերները բավական հուզիչ դրվագներ են պատմում նրա վերջին օրերի մասին: Գյուղի տներից հավաքել էր հակառակորդի ավարառությունից հետո տների բակում ցրված լուսանկարները և ուղարկել այստեղ: Միաժամանակ ուղարկել էր նահանջելուց առաջ գյուղում հողի մեջ տափաշշերով թաղված օղի և բացվող գարնան հետ հողից ելնող և շահումյանցիներին այնքան սիրելի կյուրմուզուկ (սինդրիկ) բույսը և մի երկտող. «Օգտվեցեք Շահումյանի բարիքներից»:

Գյուլիստանի բարձունքներից երևում էր Վերի Շենը, բայց չհաստատեց գյուղ մտնել: Իր մարտական ընկերների հետ ապրիլի քսանին Շահեն Մեղրյանը զոհ գնաց թշնամու դարանակալ հարվածներին: Նրանց հուղարկավորության ժամանակ զոհվածներից մեկի մայրը Եռաբլուրում հեկեկալով ասաց. «Միացում էինք ցանկանում, բայց մենք գաղթեցինք, դուք էլ բերվեցիք Հայաստանի հողում թաղվեցիք»:

Ապագայի անաչառ դատավորներն ու պատմաբանները թող քննեն՝ որքանով էր ճիշտ և ժամանակին արցախյան շարժումը, նրա զարգացումը, բայց այսօր արդեն կարելի է ասել, թե դու ամեն ինչ արեցիր, սիրելի՛ Շահեն, քո ժողովրդին Մռավի փեշերին պահելու համար, և եթե ժողովուրդդ տեղահան եղավ ու Երևանում դեպի հավիտենություն ուղեկցեց քեզ՝ իր ղեկավարին, մեղավորը դու չէիր: Դու Մռավը, ինչպես ինքդ էիր ասում՝ Արցախ աշխարհի Արարատը, այնպես էիր սիրում, ինչպես Գարեգին Նժդեհը՝ Խուստուփը, և քո սիրտը թափված արյանդ հետ միասին մնաց Մռավի փեշերին, մարմինդ բերվեց և ամփոփվեց Եռաբլուրում արդեն հանգչող այն տղաների կողքին, որոնց հայրություն էիր արել և ավագ եղբայր եղել Հյուսիսային Արցախի դիրքերում, իսկ հոգիդ էլ «Հայոց մթնած երկնքից» նայում է վար՝ մեր լեռնաշխարհին՝ Գանձասարից մինչև Էջմիածին և Գյուլիստանից մինչև Արծվաշեն:

ՋԻՆՎՈՐ, 1993 թ., 7–17 մայիսի, թիվ 3

ՄՈՆԹԵՆ

Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը:

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ճակատագիրը հաճախ է մեր հայրենիքի վրա տարածել պատմության վերջին էջի չարաշուք ստվերը, բայց այն միշտ էլ ցրվել է՝ շնորհիվ ժողովրդի նվիրյալ զավակների իմացյալ մահվան լույսի: Օտար ափերից հայրենիք վերադարձող և հայրենիքից էլ Արցախի լեռները սուրացող ասուպի նման իր կյանքի լույսը հարազատ ժողովրդի ինքնապաշտպանությանը նվիրաբերեց Մոնթե Մելքոնյանը, բայց, ի տարբերություն ասուպի, նրա կյանքի լույսը այրվելով չսպառվեց, այլ հուշ ու լեգենդ դարձավ ապրողների սրտում և հիշողության մեջ:

Նոյեմբերի քսանհինգը նրա ծննդյան օրն էր, և, դժբախտաբար, իր մասին ևս արդեն խոսելու ենք անցյալ ժամանակով: Ծնվել է 1957 թ. Կալիֆորնիայի նահանգում՝ Ֆրեզնոյի մոտ գտնվող Վայսիլիա քաղաքում: Ավարտել է Բըրքլիի «Կալիֆորնիա» համալսարանի հնագիտության բաժինը: Թվում էր, թե ստանալով դասական կրթություն և տիրապետելով մի քանի լեզուների՝ նրան ևս կվիճակվի ապրել սփյուռքահայային բնորոշ կյանքով. լինել բարձրակարգ մասնագետ օտար երկրում՝ սրտում կրելով պապերի երկրի կորստյան կսկիծը և ուժերի ներածին չափով էլ օգտակար լինել հայրենիքին: Սակայն տարիների ընթացքում հավելվող կարոտը և այդ կարոտից ծնված վրեժը ապագա հետազոտողի գրիչը ահաբեկչի զենքի վերածեց Մոնթե Մելքոնյանի ձեռքերում: Նա նախ մասնակցեց լիբանանահայ գաղութի ինքնապաշտպանության կազմակերպմանը, ապա զինվորագրվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին՝ դառնալով մասնակիցը աշխարհը ցնցած

ահաբեկչական մի քանի գործողությունների, որոնց համար էլ ձերբակալվելով, 1988 թ. փետրվարը դիմավորեց փարիզյան բանտի իր խցում՝ հասկանալով, որ ժամանակը պարտադրում է տարագրության վրեժի իր պոռթկումները փոխարինել հայրենիքում կազմակերպված տևական ազգային ինքնապաշտպանությամբ:

1989 թ. ազատվելով բանտից՝ գալիս է Հայաստան: Նախ մեկնում է սահմանամերձ շրջանները, ապա՝ Արցախ: Անպարտելի այս լեռնաշխարհը նրա համար սկսվեց Շահումյանով, ուր միանգամից նետվեց մարտական գործողությունների հորձանուտը: Ծավալվող պատերազմը արդեն վերածվել էր շրջակա բնակավայրերի վրա իշխող բարձունքների համար մղվող պայքարի՝ դեպի վեր, դեպի լեռնագագաթները տանող ճանապարհը դարձնելով հայրենիքի ազատագրման խորհրդանիշը, և այս լեռներում իրեն հարազատացած նվիրյալների հետ Ավոն սկսեց ելնել հայրենիքի զինվորին վիճակված Գողգոթայի ճանապարհը, որպես այս երկրային կյանքի անբաժան խաչափայտ՝ կրելով ինքնաձիգը: Նա նախ ուշադրություն գրավեց սփյուռքահայի իր խոսվածքով, ապա մարտական վարպետությամբ և բացառիկ համեստությամբ ու պարզությամբ՝ ասես մարմնավորելով հայրենիքի զինվորի հավաքական կերպարը: Հենց այսպես էլ նրան ընկալեց և սիրեց ժողովուրդը և սիրեց միայն ընտրյալներին ընծայվող մի ջերմությամբ: Այնուհետև Շահումյանից գնաց Մարտունի՝ իր հետ տանելով իր մասին հյուսվող և իրենից անբաժան լեգենդը:

Երբ ազատագրվեց Շուշին, թվում էր, թե հաղթական խաղաղություն է հաստատվելու Արցախի լեռներում: Համընդհանուր ցնծության այդ օրերին Մոնթեն այն սակավաթիվներից էր, որ հասկանում էր, թե առավել դաժան պատերազմը դեռ առջևում է, և զբաղված էր իրեն վստահված շրջանի պաշտպանական դիրքերի ամրացմամբ: Եվ, իսկապես, կարճ ժամանակ անց Ստեփանակերտի փողոցները լցվեցին նորօրյա փախստականներով: Համընդհանուր նահանջի ծանրագույն այդ օրերին երկրամասի հոգեբանական նեցուկը դարձավ Մարտունին, ուր հակառակորդին չհաջողվեց մեկ քայլ իսկ առաջանալ: Այս ընթացքում տենդագին լարման մեջ էր

Մոնթեն: Նա զգում էր, որ հաջորդ հարվածը իրենց դեմ էր ուղղվելու, և շուտով, քսան միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ, ադրբեջանական բանակը հարձակման անցավ Մաճկալաշենի ուղղությամբ: Իբրև թիրախ պատահական չէր ընտրված արցախաբույր անվանմամբ այս գյուղը, որի հարևանությամբ վեհորեն կանգնած է Ամարասը: Մաճկալաշենին տիրանալու դեպքում թշնամին ուղիղ գծով դուրս կգար Կարմիր Շուկա, իսկ այնտեղից էլ ավտոմայրուղին իջնում էր Ստեփանակերտ: Մաճկալաշենը դարձավ այն կետը, ուր մեծապես վճռվեց Արցախի հետագա ճակատագիրը: Հակառակորդը, որն արդեն մտովի Ստեփանակերտ էր մտնում, խուճապահար փախավ՝ մարտադաշտում թողնելով այրված զրահամեքենաները:

Շահումյանի ու Մարտակերտի ծանր պարտություններից հետո սկսվեց հոգեբանական բեկումը, և արցախյան բանակը վերստին հավատաց իր զորությանը:

Պաշտպանական մի շարք հաջող մարտեր մղելուց հետո Մարտունու ինքնապաշտպանական ուժերն այնուհետև սկսեցին ճնշել շրջանը կրակի տակ պահող կետերը: Վերջին գլխավոր փորձությունը դարձավ շրջկենտրոնը օղակած Ամիրանլար, Մուղանլու, Կուրոպատկինո գյուղերից հակառակորդին դուրս շպրտելը: Կամ թշնամու հավաքական այս որջը պետք է վերացվեր, կամ էլ Մարտունին ընկներ, և Ավոն իրեն բնորոշ ոճով, ճշգրիտ կազմված փայլուն ծրագրով և սրընթաց հարվածով կտրեց Մարտունու վրա կախված սպառնալիքը, և հաջորդ օրը այստեղ բացվեց անսովոր մի խաղաղությամբ: Երեխաներն ասես վերագտան իրենց մանկությունը՝ հիշելով, որ փողոցները վազվզելու համար են, իսկ տներն էլ միայն թաքստարան ծառայող նկուղներ չունեն, այլև բակեր, ուր կարելի է խաղալ:

Ավոյի ջանքերի և արցախյան կամքի շնորհիվ, իրար հաջորդող ամիսների ընթացքում, Մարտունու շրջանում հետևողականորեն ամրացվեցին պաշտպանական դիրքերը՝ վաղվա հաղթանակների և կորցրածը ետ բերելու հավատը բազմապատկելով ողջ Արցախում:

Շուտով եկավ այդ օրը, և վերստին իր անվեհերությամբ ու ռազմագիտական տաղանդով փայլեց Ավոն: Քելբաջարի կրակակետերի լռեցման ժամանակ նրան վստահվեց ամենապատասխանատու ուղղությունը՝ առաջ շարժվելով Գետավան–Չարեքտար ավտոմայրուղով՝ հասնել խաչմերուկ և ելնել վեր՝ դեպի Օմարի լեռնանցքը: Այս գործողությունում ևս նա փայլեց իր ռազմագիտական հանճարով, անօրինակ համարձակությամբ ու անձնազոհությամբ, և եթե մինչ այդ իր մասին լեգենդներ էին հյուսում, ապա այժմ ինքը դարձավ հավաքական կենդանի մի լեգենդ, և, ինչպես ժամանակին զինվորները հպարտացել են, թե իրենք կռվել են Դրոյի, Նժդեհի ու Անդրանիկի կողքին, ապա այսօրվա զինվորների մեծագույն հպարտությունը դարձավ Ավոյի հետ միասին մարտնչելը:

Անտարբեր փառքի բոլոր դափնիներին՝ նա, սակայն, մի սևեռուն նպատակ ուներ՝ լիովին ազատագրված տեսնել Արցախը, որովհետև ոչ միայն տեսականորեն՝ սփյուռքահայի իր ճակատագրով, այլև հենց այս լեռներում էր համոզվել, որ Արցախն է մեր ազգային բոլոր երազների իրագործման նախադուռը:

Նա ոչ թե մեծ քաղաքների աղմկոտ միտինգներում, այլ հրետանային հարվածները տասնապատիկ արձագանքող լեռներում էր գծել Արցախի իրական անվտանգությունն ապահովող սահմանները և իր բոցավառվող կյանքով Մարտունուց մինչև Մարտակերտ ձգվող երկայն աղեղով շարժվեց առաջ, բոցավառվեց այդ ճանապարհին՝ չհասցնելով անցնել այն վերջին լեռնաշղթան, որից հետո երևում էր Արցախի գրավյալ վերջին հատվածը:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐ, 1993 թ., դեկտեմբեր, թիվ 13

ՆՈՐԻԿԸ ԵՎ ԻՐԵՆՑ ԳՅՈՒՂԸ

Արցախում գրեթե յուրաքանչյուր գյուղ կապվում է մի նշանավոր զորականի, մշակույթի գործչի կամ սրբի անվան հետ: Այս վերջին պատերազմում էլ այդ ցանկը հավելվեց հայրենիքի համար ընկած հերոսների նորանոր անուններով, ու այս տխուր համաբանությամբ էլ այսուհետև Նորիկ Դանիելյանին հիշելիս միշտ հիշելու ենք Գյուլաթաղը, իսկ վերջինիս մասին խոսելիս ակամա մտաբերելու ենք Նորիկին:

Մինչև 1988 թվականը պարզապես երկրամասի հեռավոր գյուղերից մեկն էր Գյուլաթաղը, որի հնության վկայությունն էր տեղի գերեզմանոցում գտնվող «գյուղի սուրփը»՝ XIII դարի գեղաքանդակ մի խաչքար: Այն զարմացնում է ոչ միայն նախշազարդերի հյուսվածքի նրբությամբ, այլև զարմանահրաշ մի իրողությամբ. կանգնած է իր հարևանությամբ աճած ծառի հետ, և վերջինս դարերի ընթացքում մեծացել, եկել–դիպել է խաչքարին: Աճող ծառը նախ վերք է բացել իր բնին, ապա բացված այդ վերքից կեղևն սկսել է աճել խաչքարի վրա և պատվել ծառի կեղևի շապիկով: Գյուղում ով աչք է բացել, կեղևապատ խաչքարն է տեսել, ով աչք է փակել՝ նրա մոտ է ամփոփվել, և մարդիկ հասկացել են, որ խաչն ու ծառը՝ լեռնաշխարհի ոգին ու բնությունը, իրար են ձուլվել իրենց կանգուն պահող մայր հողի շնորհիվ:

1988 թ. փոթորկուն օրերը վկայեցին, որ խաչի և ծառի նման մայր հողի միջոցով իրենց լեռնաշխարհին են կապված նաև գյուղի մարդիկ: Քանի որ Գյուլաթաղը սահմանակից էր Աղդամի շրջանի մի քանի գյուղերի, որոնք շարժման ծավալմանը զուգընթաց՝ գնալով ավելի ավազակաբարո էին դառնում, մի խումբ տղաներ իրենց գյուղի և Աղդամի միջև ընկած հատվածում հիմնեցին մի նոր բնակավայր՝ Քաջավանը, որպեսզի գյուղին սպառնացող որևէ հարված նախ իրենց բախվի: Քաջերի ավանը հիմնելու ոգեշնչողներից էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանող Նորիկ Դանիելյանը: Զինվորագրվելով Հայ Յեղափոխական Դաշնակցությանը՝ նա վերադարձավ հայրենի գյուղ և անասելի ծանր պայմաններում իր ընկերների հետ հսկայական աշխատանք կատարեց, որն աննկատ չմնաց սաֆոնովյան դահիճների աչքից: Նրանք, ձերբակալելով Նորիկին, տմարդորեն տարան Շուշիի բանտը: Այնտեղ նրան հարցաքննող քննիչը կատաղած ասել էր, թե մեր նպատակը Ղարաբաղի բոլոր հայկական գյուղերը վերացնելն է, իսկ դու ցանկանում ես նոր բնակավայրեր հիմնել: Պատանդների փոխանակման ժամանակ ազատվելով Շուշիի բանտից՝ ոչ թե որևէ խաղաղ վայր է մեկնում՝ վերականգնելու տանջանքներից քայքայված առողջությունը, այլ վերադառնում է գյուղ՝ կազմակերպելու ինքնապաշտպանությունը: 1992 թ. ամռանը ադրբեջանական բանակի հարձակումից հետո ծավալված կատաղի մարտերում վիրավորվում է, բերում են Երևան բուժելու:

Ծանր այդ օրերին, երբ թշնամին շարունակ առաջ շարժվելով արդեն գրեթե հասել էր Խաչենագետ և Գանձասար, Նորիկ Դանիելյանը հիվանդանոցում իմանում է, որ իրեն նշանակել են Մարտակերտի գնդի հրամանատար: 1992 թ. նոյեմբերին, երբ նրան վստահվեց շրջանի պաշտպանությունը, բավական էր, որ Կիչանի հատվածում հակառակորդը կարողանար ճեղքել պաշտպանությունը և գոնե մի քանի կիլոմետրով առաջ շարժվել, ապա թե՛ Գանձասարին կտիրանար, թե՛ դուրս կգար դեպի Ստեփանակերտ տանող ճանապարհը: Հետևակի և տեխնիկայի անասելի գերակշռություն ունեցող ադրբեջանական բանակը, որ չկարողացավ առաջ շարժվել, մեծապես պարտական ենք նաև դեռևս չսպիացած վերքերի ցավը խեղդելով ռազմաճակատի ողջ երկայնքով պաշտպանությունն անձամբ ղեկավարող Նորիկին: Ինքը, սակայն, ասում էր, թե վերքերի ցավից առավել կսկծալին ծննդավայրի և մնացյալ Մարտակերտի կորստյան ցավն է:

Նա անբեկանելի մի հավատ ուներ, թե կվերականգնվի ԼՂՀ ամբողջական սահմանը: Հաթերքից և Քելբաջարից հետո իր հոգնած, սակայն հավատավոր ժպիտով ասաց, թե տեսնում ես՝ մեր ու մեր պապերի սահմանը միանգամից ենք վերականգնում:

Մտավորական զինվորի նրա նկարագիրն ամբողջացնող բազմաթիվ դրվագներ հիշելը հեշտ է, դժվարը նրա մասին արդեն անցյալ ժամանակով խոսելն է: Թե՛ դժվար, թե՛ դաժան ու անհեթեթ է ոչ միայն այն պատճառով, որ նա ընդամենը մի տասը օր առաջ Աղդամին սահմանակից դիրքերում քեզ հետ խոսելիս փորձում էր հայոց պատմության ընդհանուր շղթայում իմաստավորել վերջին ամիսների հաղթանակների կարևորությունը, այլև գլխավորաբար այն պատճառով, որ դիմանալով բանտային տանջանքներին, ստացած վերքերին, անցնելով մարտական գործողությունների թոհուբոհով՝ դառնալով անխոցելի մի սարսափ հակառակորդի համար, օրերս ընկնելու էր... տմարդի ձեռքով արձակված դավադիր գնդակից: Ներքին մի վախով մտածում ես. միթե մենք անբուժելիորեն տառապում ենք հին ցավով՝ կռվում հաղթել թշնամուն և ապա պարտվել ինքներս մեզ...

ԵՐԿԻՐ, 1993 թ., 22-ը հոկտեմբերի, թիվ 200

ՄԵԽԱԿԸ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մարտերում ցուցաբերած արիության, խիզախության և հերոսության համար N զորամասի հրամանատարի տեղակալ, մայոր Մեխակ Վալենտինի Մեխակյանին շնորհել հերթական զինվորական կոչում փոխգնդապետ (հետմահու):

2. «Մարտական խաչի» առաջին աստիճանի ասպետ, փոխգնդապետ Մեխակ Վալենտինի Մեխակյանի անունը հավերժ ընդգրկել զորամասի ցուցակներում:

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Ա. Սարգսյան

24.01.1995 թ., ք. Երևան

Ուսուցիչ լինելն էր նրա կոչումը, սակայն ճակատագրի պարտադրանքով դարձավ հայրենիքի զինվոր, գրիչը և կավիճը փոխարինեց զենքով, ուսումնական մատյանը՝ հրամանատարական ռազմական օրագրով, գրատախտակն էլ՝ մարտական քարտեզով, որի վրա վերջին հաղթական նշումները կատարեցին ընկերները՝ նրան դեպ Հայաստան և հավերժություն ճանապարհելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: Արցախյան ռազմաճակատի տարբեր հատվածներում յոթ տարի որոնելուց հետո միայն դարանակալ մահը կարողացավ գտնել նրան և այն էլ՝ զինադադարի հաստատումից յոթ օր առաջ: Սակայն եթե չլիներ Մեխակ Մեխակյանի հաստատակամությունը և անձնազոհ նվիրումը, թերևս հնարավոր չլիներ պահել Թալիշի վերին բարձունքից մինչև Մարտակերտի դաշտային հատվածը ձգվող լեռնաշղթան, իսկ եթե այն գրավվեր, ապա յոթ օրից հետո կամ զինադադար չէր հաստատվի, կամ էլ կհաստատվեր Արցախի հյուսիսային սահմաններից ներս խորացած ռազմաճակատի բոլորովին այլ գծով...

Մեխակ Մեխակյանը ծնվել է 1961 թ. մայիսին և երեսուներեք տարի անց իմացյալ մահով կյանքը ավարտեց վերստին մայիսին:

Մեխակն ապրում էր պատմությամբ: Վերջինս, սակայն, նրա համար միայն անցյալ չէր, այլև հոգևոր այն Կաթնաղբյուրը, որից են իր նման խենթերը ստանում իրենց զորությունը:

Ծնողների վկայությամբ՝ 9–10–րդ դասարաններում պարապելով գիշերներ էր լուսացնում: Հայրը ամռանը, երբ նրան տանում էր Արագածի փեշերը, ուր իրենց մեղվափեթակներն էին, օրը մթնեցնում էր պատմավեպեր ընթերցելով: Ընդունվելով մանկավարժական ինստիտուտի պատմաիրավաբանական բաժինը, այն ավարտում է 1983 թ.՝ աշխատանքի անցնելով հայրենի՝ Էջմիածնի շրջանի Արագած գյուղում, սակայն չթուլացող հետաքրքրությամբ շարունակում է ուսումնասիրել հայոց պատմությունը և լույս տեսած նոր գրքերով հարստացնել ընտանեկան գրադարանը: Տնեցիները պատմում են, թե ողջ գրադարանը ինչպես է Արցախ մեկնելուց առաջ վերջին անգամ կարգի բերել և դասավորել՝ ըստ թեմատիկ ընդհանրության և իր նախասիրությունների, որոնց մեջ գլխավոր տեղը գրավում էին պատմավեպերը:

Ռազմական թոհուբոհի մեջ էլ նա չմոռացավ ուսուցչի իր կոչումը: Մեխակի ջանքերի շնորհիվ 1990 թ. սեպտեմբերը գյուղի երեխաները դիմավորեցին նոր դասագրքերով և գրենական պիտույքներով: Բերվող այս օգնությունը կարևորվում էր ոչ միայն կրթական ու նյութական առումով, այլև տեղացիներին շարունակ հավատ ներշնչում, թե մենակ չեն և Հայաստանը կանգնած է իրենց թիկունքին: Սաֆոնովյան բռնությունների շրջանում, երբ անձնագրային կարգի պահպանության պատրվակով պարբերական շուրջկալներ և խուզարկություններ էին կատարվում, հարկադրված փոխեց գրանցումը՝ դառնալով Հադրութի շրջանի բնակիչ: Ընկերների վկայությամբ՝ Մեխակը արագորեն մերվեց ջոկատային–պարտիզանական կյանքին՝ առանձնանալով ոչ միայն իր գիտելիքներով, այլև մարտական վարպետությամբ:

1991 թ. ամռանը՝ գարնանային տեղահանություններից հետո, բռնությունների ալիքը տեղափոխվել էր Մարտակերտ, և սպասվող հարվածն ուղղված էր Հաթերքին, և Մեխակը Մանվել Գրիգորյանի ղեկավարած ջոկատի հետ եկավ այստեղ, ուր առավել մեծ էր

վտանգը: Որևէ ցուցադրականություն չսիրող Մեխակը, որպեսզի տնեցիներին գոնե մեկ անքուն և լարված գիշեր պակաս պատճառի, մեկնելու նախորդ գիշերը տանն ասում է, թե գնում է հողամասը ջրելու և բահը ուսին, ռեզինե կոշիկներով՝ գիշերը բախում է ընկերոջ դուռը, այնտեղ թողնում բահը, փոխվում ու հաջորդ օրը դիմավորում Հյուսիսային Արցախի անտառներում, որ այնքան հարուստ են պատմական հիշատակներով՝ Հոռեկ, Եղիշե առաքյալի վանք, Երեք մանկունք, ուր դեռևս արձագանքում էին անցյալի հերոսական դրվագները, որոնց գումարվելու էին մերօրյա քաջագործությունները, և դրանց մասնակիցն էր դառնալու նաև ինքը: Նա մասնակցում է թե՛ շրջակա հայկական գյուղերն ադրբեջանական օմօնի ոտնձգություններից պաշտպանելուն և թե՛ խորհրդային բանակի քառասուն զինծառայողներին պատանդ վերցնելով՝ Արցախում ծավալված բռնություններին վերջ տալու պահանջով կատարված անակնկալ և հանդուգն գործողությանը, որով կանխվեցին ծրագրված շատ չարիքներ:

Այնուհետև Հաթերքից ճանապարհը վերստին տանում է Հադրութ: Այստեղ մասնակցում է 91-ի գարնանը տեղահանված գյուղերի ազատագրմանը, ապա նրան վստահվում է Ակնաղբյուրի և գյուղի վրա իշխող Խրմնջուկի բարձունքի պաշտպանությունը: Մեխակի խնդիրն էր հետ մղել հետևակի հարձակումները և պատասխան կրակ բացել հակառակորդի հրետանային հարվածների ուղղությամբ: Ավերիչ այս հարվածները հաճախ էին կրկնվում, որոնցից մեկի ժամանակ գրադի արկը ընկնում է տասը երեխա ունեցող Պավելի տան վրա, և զոհվում է նրա մեծ աղջիկը: Մեխակը Պավելի երեխաների քավորն էր, ու ենթաշրջանում առաջին այս մկրտությունը կատարվել էր նրա շնորհիվ: Հետևելով կնքահոր՝ սանիկների նկատմամբ ունեցած պատասխանատվության սովորությանը, Պավելի երեխաներից չորսին բերում է Էջմիածին՝ իրենց տուն, ասելով, թե չորս երեխաներիս թող գումարվեն այս չորսն էլ, և նորից մեկնում է Հադրութ:

1992 թ. մայիսի կեսերին թշնամին Շուշիում և Լաչինում կրած պարտություններից հետո փորձում է պատասխան հակահարձակման անցնել Էդիլլուի ենթաշրջանի ուղղությամբ: Ծավալված մարտերից մեկի ժամանակ Խրմնջուկի բարձունքում վիրավորվում է նաև Մեխակը: Արկի բեկորը փշրել էր սրունքի ոսկորը: Վիրավորվելուց երեք օր անց, երբ լրացել էր ծննդյան երեսունմեկ տարին, իմանալով, որ հարազատներն արդեն առել են իր վիրավորվելու լուրը, խնդրում է պատգարակով կապի հանգույց տանեն և այնտեղից հոր հետ խոսելով հանգստացնում է՝ ասելով, թե վտանգավոր ոչինչ չկա և հիմա իր ծննդյան օրն են նշում:

1992 թ. ամռանը, երբ ծանրագույն վիճակ էր Մարտակերտի ճակատում, ցանկանում է զինվորագրվել Վազգեն Սարգսյանի կոչով ստեղծված «Արծիվ» գումարտակին, սակայն ընկերները մի կերպ ետ են պահում՝ ասելով, թե՝ սպասիր, վերքդ թող գոնե մասամբ փակվի: Կամքի ապշեցուցիչ ուժով, ցավը սեղմած շարունակ քայլելով՝ վերականգնում է ոտքի շարժունակությունը և վերադառնալով Հադրութ՝ գործուն մասնակցություն ունենում Ֆիզուլու կրակակետերի ոչնչացմանը: Սկսված հակահարձակման ժամանակ նրա խնդիրն էր իր պաշտպանած բարձունքից առաջ շարժվել և գրավել Ջվարլուի մոտի դիմահայաց այն բարձունքը, ուր տեղադրված էր հակառակորդի զենիթային հրանոթը: Գրավելով այս բարձունքը և հուսալի պաշտպանական ամրություններ ստեղծելով՝ գիշերը փոքրիկ մի խմբով շրջանցում է հակառակորդի դիրքերը, ամրանում նրանց թիկունքում, և առավոտյան երկկողմանի խաչաձև կրակի տակ ընկած հակառակորդը թողնում է դիրքերը՝ բացելով Ֆիզուլի տանող ճանապարհը:

Թշնամու թիկունք անցնելը և առջևից հարձակվող յուրայինների հետ միասին հակառակորդին կրակե օղակի մեջ առնելը Մեխակի մարտական գործելակերպն էր: Ճշգրիտ հետախուզության տվյալների վրա հիմնված և բացառիկ համարձակություն, վարպետություն և անձնազոհություն պահանջող հարձակման այս եղանակով Մեխակը վերջին անգամ փայլեց 1994 թ. գարնանը՝ Թալիշ-Մատաղիսյան գործողության ժամանակ: Անձամբ անցավ բոլոր արահետներով և լեռնային կածաններով, հետևեց հակառակորդի ամենօրյա տեղաշարժերին: Վերադառնում էր հոգնաբեկ մարդու վաս-

տակած ժպիտով, հանում մարտաբաճկոնը, իր դիտարկումները քարտեզի վրա համադրում եղած փաստերի հետ և մտովի պատկերացնում սպասվող գործողությունը:

Ապրիլի ինի վաղ առավոտյան, երբ արևի ճառագայթները նոր-նոր էին թափանցում արդեն տերևակալած անտառի ճյուղերի միջով, Մեխակ Մեխակյանն իր ընկերների հետ միասին, ուսերին կրելով առաջիկա օրերի մարտերի ողջ զինամթերքը, Հյուսիսային Արցախի անտառապատ լանջերից մեկով մտավ անտառի խորքը, որպեսզի շրջանցելով հակառակորդի դիրքերը՝ Մատաղիսի դիմաց ամրացած հակառակորդին հարվածի թիկունքից, երբ մյուս ստորաբաժանումները գյուղի վրա հարձակվեն ճակատային՝ Հակոբ Կամարիի ուղղությամբ:

Գրոհի այդ և անցնող մյուս քսան օրերի ընթացքում հնարավորություն ունեցա առավել մոտիկից ճանաչելու Մեխակին: Ինչպես միշտ՝ գնում էր առջևից: Նրանից հետո մեկ գծով իրար հետևից մի քանի մետր հեռավորություն պահպանելով և դուրս չգալով ստուգված պարզապես մեկ ոտնատեղի լայնություն ունեցող արահետներից, որոնք ճանապարհի մի քանի կեռմաններում ուղղակի կախվում էին ճանապարհի հզոր ընթացքը իրենց փեշերի մեջ օղակած ձորերի վրա՝ շարժվում էր մնացյալ զորաջոկատը: Վարարած Թարթառի աղմուկի մեջ խլանում էին ոտնաձայները, դադարի պահին վայր դրվող և վերցվող զենքերի աղմուկը: Երկու օր շարունակ զորաջոկատը խորանում էր թշնամու թիկունքը, և յուրաքանչյուր քայլը ավելի էր հեռացնում մեր դիրքերից և տանում դեպի անհայտություն: Շրջանցելով թշնամու հերթական պահակակետը՝ մեզնից ոչ մեկը չգիտեր՝ արդյոք աննկատ անցավ, թե թշնամին նկատել է և պարզապես ցանկանում է, որ առավել խորանանք իր թիկունքը, որպեսզի ավելի հեշտ լինի շրջապատելը և ոչնչացնելը: Երթի այս ծանրությանը և հոգեմաշ անորոշությանը գումարվեց նաև հարձակմանը նախորդող ողջ գիշերը տեղացած անձրևը, որի ընթացքում հնարավոր չէր վրան խփել կամ որևէ պատսպարիչ հարմարություն պատրաստել, քանի որ թշնամու ռազմակայանն ընդամենը մի քանի հարյուր մետր այն կողմ էր՝

բացատում, և բավական էր անզգույշ մի քայլ, աղմուկ, և տանկային ու ձեռքի գնդացիրները մաղի կվերածեին անտառը, սակայն լույսը բացվեց Մեխակի ազդականչով, և թշնամին այնպես էլ չհասցրեց գոնե մեկ անգամ կրակել այդ գնդացիրներից: Առաջին հատու և անակնկալ հարվածից հետո ապահովելով թիկունքը՝ նա Արեգասարից մարտերով շարժվեց առաջ՝ թշնամուն հնարավորություն չտալով նորից դիրքավորվել և պաշտպանական նոր գիծ ստեղծել: Հակառակորդի թիկունքում օղակված նրա աջ և ձախ թևերով, վարպետորեն մշակված ընդհանուր գործողությունում շրջապատման մեջ ինքը մասնակցում էր այդ թևերը կտրելով հակառակորդի կենտրոնը շրջափակելուն, և հաջորդ առավոտյան նրա զորաջոկատի մարտիկները, կոտրելով թշնամու դիմադրությունը, միացան հիմնական ուժերին:

Մատաղիսն ազատագրված էր, և Մեխակը շարժվեց առաջ՝ դեպի Թալիշ: Նրա անկասելի երթը չկասեցրեց նույնիսկ թշնամու արկի հերթական բեկորը: Հոսպիտալում ընդամենը երկու օր կարողացան պահել նրան, որից հետո հնարավոր չէր իջեցնել այն լեռնաշղթայից, որով անցնում էր ճակատի նոր գիծը: Պահպանել այս դիրքերը՝ նշանակում էր մեծ շառավիղ ընդգրկող հրետանային վերահսկողությամբ թշնամուն սեփական կամքը պարտադրել և մեզ ընդունելի խաղաղություն հաստատել: Հակառակորդը չէր հաշտվում այս մտքի հետ, և ապրիլի քսաներկուսից սկսած՝ ամեն օրը անցնում էր հրետանային կրակի ներքո, երբ գրեթե հնարավոր չէր լինում տեղաշարժը, իսկ սնունդն էլ ձեռքով էին հասցնում դիրքերը, հասցնելուց հետո էլ այն ուտում էին ոչ թե ըստ օրվա ժամերի, այլ այն սակավ պահերին, երբ նվազում էր հրետանային կրակը: Ծանրագույն այս օրերին, երբ թվում էր, թե երկինքն էլ է պատռվել հրետանային հարվածներից, և մեկ շաբաթ շարունակ եկող անձրևը վերածվել էր գարնանային վարար հեղեղների, թշնամին անընդհատ ուժերը թարմացնելով հարձակում հարձակման հետևից էր կազմակերպում՝ ձգտելով ուժասպառ անել մեր զինվորներին: Եղան օրեր, երբ թշնամին մինչև ութ անգամ գրոհեց, և ամեն ան-

գամ նահանջող թշնամու հետևից տղաները հոգնած կատակում էին, թե այս մի ռաունդն էլ վերջացավ:

Ռազմաճակատի այս հատվածում մարտական գործողությունները իրենց գագաթնակետին հասան մայիսի մեկին, երբ հրետանային կենտրոնացված կրակով Մռավի փեշերից, Ինջա գետի հունից մինչև Չայլուի ջրանցքի մոտ ձգվող դիրքերի ողջ երկայնքով թշնամին անցավ ընդհանուր հարձակման: Մեխակը դիրքից դիրք էր անցնում, կապի ազդանշերով համակարգում գործողությունները: Իր կյանքի վերջին օրը նա արեց հնարավորն ու անհնարինը՝ պահելու լեռնաշղթան, բայց հենց այդտեղ էլ ականանետի հարվածից ընկավ:

Մի քանի ժամից մառախլապատ գիշերը իր թևերը փռեց Մռավի փեշերին՝ անտեսանելի դարձնելով անգամ հորդ անձրևը, և դադարեց մարտը, ու մինչ այն կվերսկսվեր առավոտյան, դիրքերից վար իջեցրին և Մատաղիս բերեցին Մեխակին: Լուսաքողարկված տան ընդհանուր սենյակում, թրթռացող մոմի լույսի ներքո թվում էր, թե Մեխակը ննջում է՝ օրվա հարձակումներից հոգնած: Եվ մինչ լույսը կբացվեր, հրամանատար Մանվել Գրիգորյանը և մարտական ընկերները համբուրելով դեպի հավերժություն ճանապարհեցին նրան և հոգնածությունից ու անքնությունից օրորվելով՝ շտապեցին վեր՝ դիրքերում դիմավորելու բացվող լույսի հետ առաջացող թշնամուն:

Եվ երբ հայրենի Արագած գյուղում հարազատները կատարում էին նրա յոթը, թշնամին հաշտվեց պարտության մտքի հետ, հաստատված զինադադարը սկսեց կենդանացնել ազատագրված Թալիշը, Մատաղիսը և արդեն թիկունք դարձած մյուս գյուղերը, որոնք այդպիսին դարձան և վերստին հայկական շնչով լցվեցին նաև Մեխակ Մեխակյանի նվիրաբերած կյանքի շնորհիվ:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐ, 1995 թ., 4–11 մարտ, թիվ 8

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Վ.Գ.ԴԵՎՐԻԿՅԱՆԻՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 83-րդ մոտո-հրաձգային բրիգադի մարտիկ /եռամյա վարժական հավաքի կանչ-ված/, շարքային Վարդան Գևորգի Դեվրիկյանին պարգևատրել 2-րդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Լ.ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևան
28 մայիսի 1994թ.
ՆՀ-307

«ԻՆՉՔԱՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԹՈՂ ԽՈՍԵՆ, ՄԻԱՅՆ ԹԵ ՎՐԱՍ ՉԼԱՑԵՆ»

«Ես չեմ ուզում Մանվել Գրիգորյանին որևէ բնորոշում տալ՝ ոչ գովական, ոչ ժխտական... Եկ փաստերի լեզվով խոսենք, համեմատենք դեպքերի զարգացման ընթացքը 88–ից սկսած և դրանցում՝ Մանվելի դերն ու տեղը...»,— այսպես սկսվեց լրագրող և ազատամարտիկ Վարդան Դևրիկյանի հետ մեր զրույցը Մատաղիսում այս տարվա հունիսի վերջերին, երբ խոսք բացվեց «Էջմիածնի Մանվելի»՝ հանրահայտ հրամանատարի մասին:

Հրամանատարի համբավը՝ թե՛ դրական, թե՛ բացասական առումով, դուրս էր եկել Ղարաբաղի սահմաններից և հասել Երևան, հասել նույնիսկ Թատերական հրապարակի «բարձր ամբիոնին»:

Այս երգը «նույն» շարքից էր, որ հյուսվել և հյուսվում է՝ Վազգեն Սարգսյան, Վանո Սիրադեղյան... Շշարունակեմ:

Հունիսին՝ Մատաղիսում, մենք որոշեցինք զրույցը շարունակել Երևանում, երբ Վարդանը վերադառնա:

Այդպես էլ արեցինք:

— Մանվել Գրիգորյանին առաջին անգամ Հադրութի շրջանի Էդիլլու գյուղում հանդիպեցի: Ծանր օրեր էին: Դու, որքան գիտեմ, նրան վաղուց ես ճանաչում, վեց ամիս իր զինվորն էիր նաև:

— 1988–89–ին, երբ փաստորեն մենք դեռ չէինք ճշտել մեր տեղը Թատերական հրապարակում, այդ ժամանակ արդեն Մանվել Գրիգորյանն իր ընտրությունն արել էր: 1989–ին նա գնաց Արցախ՝ Հադրութի շրջան, և նվիրվեց Էդիլլուի ձորակի պաշտպանության գործին: Էդիլլուն այն կետն էր, որ եթե, Աստված մի արասցե, ընկներ, փաստորեն, բացվում էր թե՛ Հադրութ տանող ճանապարհը և թե՛ Ստեփանակերտ: Սաֆոնովյան բռնությունների շրջանում Մանվելը ձերբակալվեց, ենթարկվեց տարբեր կտտանքների, բանտարկ-

վեց... Դրանից հետո գուցե ուրիշը իր պարտքը կատարած համարեր ու հերոսի կեցվածք ընդունած՝ վերադառնար Հայաստան, մասնակցեր քաղաքական կյանքին...

— Այս ամենը ես էլ գիտեմ: Մանվելը չեկավ, հերոսի կեցվածք չընդունեց, իր առողջությունը չփորձեց վերականգնել...

1992-ի ամռանը, ծանրագույն օրերին, երբ ճակատի գիծը հասել էր մինչև Գանձասար, Հադրութում և Մարտունիում նույնպես խուճապ էր սկսվել:

— Այդ ժամանակ,— շարունակում է Վարդանը,— Մանվել Գրիգորյանը ոչ միայն ռազմաճակատի իրեն վստահված հատվածի պաշտպանությամբ էր զբաղվում, այլև ճանապարհներ էր գցում: Շատերը հեգնանքով ասում էին, թե ում համար ես լեռները ճեղքում ու ճանապարհ պատրաստում: Թուրքերի համար: Եվ ինքը միշտ համառորեն ասում էր, որ Մարտակերտի ճակատագրին Հադրութը չի արժանանալու և կորցրածն անպայման ետ ենք բերելու: 1992-ի ամառը ոչ միայն մեր դժբախտությունների և պարտությունների, այլև մեր պատմության, արցախյան շարժման ամենահերոսական և ամենաամոթալի շրջանն էր:

...Այդ ժամանակ էր, որ Վարդան Դևրիկյանի հետ հանդիպեցինք Ղարաբաղում: Նույնն էր ասում, ինչ որ հիմա՝ երկու տարի անց: Ասում էր մամուլում և բանավոր՝ այն, ինչ տեսել էր, ինչը չէր կարող զայրույթ չառաջացնել:

— Մարտակերտի գաղթից տիրող խառնաշփոթ վիճակից օգտվելով՝ ոմանք աշխատում էին Արցախի եղած հարստությունը հանել՝ Մարտակերտի տեխնիկան, անասունները, կոնյակը և այլն: Մանվել Գրիգորյանը Հադրութում ամեն ինչ անում էր շրջանի ամրապնդման և նման երևույթների բացառման համար:

— Ես գիտեմ, որ այդպես էր Հադրութում, բայց, այնուամենայնիվ, Մանվելը կարծես ըստ արժանվույն չի գնահատվում: Ընդհակառակը, իր մասին...

— Իր դժբախտությունը, իմ կարծիքով, այն է, որ ինքը լուռ աշխատել է և երբեք արածով չի պարծեցել: Մի փաստ բերեմ միայն:

Ողջ ռազմական գործողությունների ժամանակ իրենից անբաժան է եղել իր 15-ամյա տղան՝ Կարենը:

Այսօր շատերն են աշխատում իրենց տղաներին ինչ-որ ձևով առժամանակ Հայաստանից դուրս բերել, ամեն գնով բարձրագույն կրթության տալ: Նա իր ունեցած հնարավորություններով նույնը կարող էր անել... Մինչդեռ հրամանատարը, Կարենին դպրոցից կտրելով, բերեց առաջին գիծ, որ եթե սխալվի, առաջին հերթին ինքը վճարի իր այդ սխալի համար: Կարծում եմ, քիչ հրամանատարներ կարող են այդպիսի բացառիկ քայլի գնալ:

— Անցյալ տարի Էդիլլուի բնակիչները, ում հետ որ խոսում էի, մի խնդրանք ունեին, որ՝ «Էս կռիվը պրծնի, ու Մանվելը մեր շրջանի մեծը դառնա»: Այսօր իր մասին մարտակերտցիները ինչ կարծիքի են:

— Սիրով ու ջերմությամբ են խոսում թե՛ Հադրութում, թե՛ Մարտակերտի գյուղերում, Մեծշենից ու Մաղավուզից մինչև Մատաղիս ու Թալիշ, որոնք ինքն է ազատագրել, և որտեղ նա ոչ միայն պաշտպանությունն իրականացնում է, այլ նաև ծավալել է որոշակի շինարարական գործունեություն: Վերջերս, երբ Մատաղիս վերադարձած մի գյուղացու հարցրի, թե ինչպիսի՞ տնտեսական լծակներ են պետք, որպեսզի Մատաղիսն ու Թալիշը վերստին շենանան, ասաց. «Մեր հողն այնքան հարուստ է, որ ամենամեծ լծակը հենց ինքն է, մեզ հարկավոր է, որ ռազմաճակատում Մանվելը կանգնած լինի, որպեսզի մենք ապահովության երաշխիք ունենանք»:

Հունիսին, երբ անցնում էինք Մաղավուզ, Մեծշեն գյուղերով ու հանդիպում ծերերին ու երեխաներին, Մանվելի դեմքը պայծառանում, բարիանում էր. «Սա է երջանկությունը, որ էս մարդիկ գալիս են, դրանից ավել ինձ ոչինչ պետք չի»: Նա ասում էր, որ օգնում են վերադարձողներին, որ նոր ճանապարհներ պիտի գցեն: Իսկ ես, իր մասին երևանյան չարախոսությունները հիշելով, այնուամենայնիվ, ասացի նրան. «Քո մասին ինչ ասես խոսում են Երևանում»: Նա մի տեսակ թախծոտ ասաց. «Թող վրաս չլացեն, ինչքան ուզում են թող խոսեն»:

— Վարդան, Մանվելի մասին Երևանում ինչ ասես՝ խոսում են, ինչո՞ւ:

— Ես նոր եմ եկել ու այնքան էլ ծանոթ չեմ Երևանի անցուդարձին, բայց հասցրել եմ լսել ամենաանհավանական, ամենազզրելի մեղադրանքները, որ հնչում են Մանվել Գրիգորյանի հասցեին: Ես դա բացատրում եմ հրամանատարի ընդգծված, վառ անհատականություն լինելու հանգամանքով...

— Ասում են՝ շատ կորուստներ է տալիս...

— Դժբախտաբար, այս ձմեռվանից սկսած շատ ծանր կորուստներ ունեցանք թե՛ Ֆիզուլիում, թե՛ Քելբաջարում, թե՛ Օմարի լեռնանցքում...

Եթե համեմատենք մեր բրիգադի գրաված տարածքն ու մեր կորուստները և մյուս զորամիավորումների գործունեությունը, կարող ենք ասել, որ... թեև յուրաքանչյուր հայի կորուստ մեծ ցավ է... Մենք ավելի մեծ գործ ենք կատարել մեր կորուստներով, քան ուրիշները:

Անհեթեթությունն այնտեղ է հասնում, որ ես դեպքեր գիտեմ, որ մյուս ճակատներում զոհված տղաների ծնողներն ասում էին՝ Մանվելը տարավ, երեխայիս գլուխը կերավ:

— Ուրեմն՝ մի բան կա, որ հատկապես Մանվելի անունն է «դուրս եկել»: Օմարում, Հորադիսում, այո՛, շատ զոհեր տվեցինք, բայց ոչ մի հրամանատարի անուն չիմացանք: Ասում են նորակոչիկներին...

Սպասի՛ր, նորակոչիկների մասին...

— Ինչ-որ տեղում տեսել եմ հունվարից սկսած և որքան գիտեմ վիճակագրությունը, ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ մեր բրիգադում այս ընթացքում նորակոչիկ երկու զինվոր է զոհվել. մեկը՝ դժբախտաբար, ականի պայթյունից, մյուսը՝ պարզապես դժբախտ պատահարի հետևանքով: Ուրիշ նորակոչիկների զոհվելու ոչ մի դեպք չի եղել: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ նաև, որ մեր բրիգադում նորակոչիկները մարտական գործողությունների չեն մասնակցում: Սա նաև հերթափոխը ժամանակին իրականացնելու պատճառներից մեկն է: Մանվելը երբեք նորակոչիկներին դիրքեր չի ուղարկում: Նորակոչիկները մեզ մոտ զբաղվում էին թիկունքային աշխատանքներով, զինամթերքի տեղափոխմամբ և այլ հարցերով... Կգա ժամանակ, երբ արցա-

խյան շարժումը, պատերազմը պատմություն կդառնան, և ես, որպես ականատես, երևի թե կգրեմ այդ ամենը: Այն ժամանակ հնարավոր կլինի ասել՝ ով ով էր, ռազմաճակատում ով որտեղ և ինչքան կորուստ է տվել: Եվ ինչու են այս կամ այն անհատի մասին հերյուրանք տարածում: Տարբեր հրամանատարների մասին այսօր զազրելի խոսակցություններ տարածողները մի մեծ առավելություն ունեն՝ շատ հարցերի մասին դիվանագիտական և պաշտպանական առումով այսօր հնարավոր չէ խոսել:

...Բայց խոսում ենք, անվերջ բամբասում... Վարդանի կարծիքով՝ Մանվել Գրիգորյանի մասին հիմնականում դասալիքներն են, մեղմ ասած, վատ արտահայտվում՝ ռազմաճակատից իրենց փախուստը արդարացնելու համար: «Հայաստանը լքողներն էլ են նույն պատճառաբանությունը բերում՝ Հայաստանը դժոխք է: Այս դրախտի մանրակերտը ոնց կարելի է թողնել»,— հունիսյան մեր խոսակցությունը հիշեցի: Նռնենին, թզենին ծաղկել էին, ընկուզենին ու թթենին ծանրացել պտղի ծանրության տակ: Ջուր էին ծանրացել՝ ամայի էր Մատաղիսը: Մանվելի զինվորներն էին միայն այդ գեղեցկությունը վայելում:

Մատաղիսում հարցրի նրան. «Ճի՞շտ է, որ Մանվելը մի քանի դասալիք է գնդակահարել»: Ծիծաղեց. «Պատժում է դրանց»,— ասաց: «Ո՞նց»: «Պատժում է, բայց ոչ գնդակահարությամբ»,— կրկնեց Վարդանը:

Երևանում այդ հարցին կրկին անդրադարձանք:

— Հայաստանում գիտե՞ս որևէ մեկին, որին դատել են դիրքերը թողնելու համար: Ես էլ չգիտեմ: Եթե յուրաքանչյուր փախչողի հրամանատարն իմանար, որ դասալիքը կանգնելու է դատարանի առաջ, այդ հրամանատարը փախչողին պատժելն ինքնադատաստանի իր խնդիրը չէր դարձնի:

Մի դաժան իրողություն կա, եթե զինվորի սխալը հրամանատարը անտեսեց, հաջորդ թերացումի համար արդեն թշնամին հարյուրապատիկ կպատժի: Ես այդպես եմ մտածում:

1994–ի ապրիլի սկզբին վերսկսվեցին մարտական գործողությունները Մարտակերտի դաշտային հատվածի և Հյուսիսային Ար-

ցախի գյուղերի ազատագրման համար: Կրկին վիրավորներ բերվեցին Ստեփանակերտ ու Երևան՝ վիրավորներ ու դագաղներ: Թալիշը, Մաղավուզն ու Մատաղիսը ազատագրվեցին մեծապես Մանվել Գրիգորյանի բրիգադի շնորհիվ: Այդ ժամանակ սկսվեց...

Ասում են, որ Մանվելը վիրավորներին թողնում էր դիրքերում, հոսպիտալ չէր բերում, ասում եմ Վարդանին:

— Դա անբարո սուտ է: Ես՝ որպես վերջին իրադարձությունների ականատես, կարող եմ վկայել, որ յուրաքանչյուր հարկադիր ռազմական քայլին նախապատրաստվելուն նախորդել են դաշտային հոսպիտալի տեղադրման աշխատանքները, առանձնացվել են մարդիկ, որոնք պետք է բերեին սպասվող վիրավորներին և զոհվածներին: Երբ սկսվեց պատմական գրոհը Թալիշի և Մատաղիսի ազատագրման համար և թիկունքից մեր ուժերը պետք է մտնեին Արեգասարով, այդ ժամանակ դաշտային հոսպիտալը բերվեց ռազմաճակատի գծին հնարավորին չափ մոտ, այնտեղ առաջին օգնությունն էր ցույց տրվում, որից հետո վիրավորներին մեքենաներով հասցրին Մեծշեն: Այլ հարց է, որ ապրիլի երկրորդ կեսին, երբ առանձնակի թափով վերսկսվեցին մարտական գործողությունները, հորդառատ անձրևներ սկսվեցին, և այդ ընթացքում, դժբախտաբար, մի քանի հերոս նվիրական տղաներ զոհվեցին, որոնք կփրկվեին, եթե անձրևների պատճառով ճանապարհներն անանցանելի չդառնային: Շտապօգնության մեքենաները պարզապես չէին կարող հասնել Մեծշեն...

Շարժման սկզբին մենք մեր լավագույնը ուղարկում էինք Արցախ, հիմա, դժբախտաբար, երբեմն՝ ինչ պիտանի չէ, այդ ենք ուղարկում: Օրինակ, եկած շտապօգնությունների մեծագույն մասը անսարք են: Հաճախ բեռնատարներ են ուղարկվում, որոնք արագ շարքից դուրս են գալիս: Այդ պատճառով հաճախ փողոցներից զենքի ուժով բեռնատարներ են կանգնեցվում և բերվում ռազմաճակատ:

Երեք ամսվա զորակոչի մասին: Դժբախտաբար, գնալով փոխվում է զորակոչի որակական կազմը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ բանակ են կանչում միայն աղքատների, հաշմանդամների: Խայտառակ փաստեր կան, թե զինկոմիսարիատներն ինչպիսի

մարդկանց ուղարկեցին ռազմաճակատ: Մեր հանրապետությունում ոչ ոք դրա համար չպատժվեց: Մեզանում զինկոմներ պիտի դատվեին: Բայց փոխարենը ռազմաճակատի հրամանատարությունը կրկին դարձավ քավության նոխազ: Այս ամենը վարկաբեկում է մեր հանրապետությունը, ոմանք անիծում են բանակը, արցախյան պայքարը:

Հիմա Արցախում խաղաղ է, բայց հակառակորդը տենդագին պատրաստվում է, և եթե, Աստված մի՛ արասցե, գործողություններն սկսվեն, մեզ ունակ, մարտական գործողությունների վարժ զինվորներ պետք կգան:

...Գրեթե երեք ամիս է, ինչ կարծես խաղաղություն է հաստատվել Ղարաբաղում, բայց Մարտակերտի հյուսիսը, ցավոք, դեռ ամայի է...

— Տուն վերադառնալու միտումը կա: Հայրենիքի, հողի կարոտը ստիպում է մարդկանց վերադառնալ: Խաղաղության ամեն օրը փոխում է մարդկանց դիմագիծը: Այս ընթացքում սահման պահող զինվորները Մարտակերտի հյուսիսում զբաղված են նաև ներքին շինարարությամբ: Ամբողջովին վերականգնվել է Մեծշենի դպրոցը, շուտով կավարտվեն նաև Մաղավուզի դպրոցի վերականգնողական աշխատանքները: Մեծ ռազմավարական նշանակություն ունեցող Մեծշեն–Թալիշ ճանապարհը բարեկարգվում է: Այս ամենը կատարում է Մանվել Գրիգորյանի գլխավորած զորամասը:

...Հունիսին Մատաղիսում Վարդանի հետ եկեղեցի մտանք. երկու երիտասարդ ավտոմատները պատին հենել ու Աստծո խորհուրդն էին փորձում իրար բացատրել: Մուտքի դռնով մի թռչուն մտավ, պտտվեց ու փոքրիկ լուսամուտով դուրս թռավ: Վարդանը մտահոգված էր իր կիսատ թողած գործերով. «Էջմիածին» հանդեսի և «Բեմ եկեղեցվո» լրագրի խմբագրի տեղակալն է: Մատենադարանում իր գիտական աշխատություններն էլ անավարտ էին մնում: Աղանդներից խոսեցինք, որոնք, դժբախտաբար, թափանցեցին նաև բանակ:

— Մի ցավալի հարցի էլ եմ ուզում անդրադառնալ՝ աղանդավորների մասին:

— Բանակը մեր կյանքի արտացոլումն է, աղանդները ներթափանցել են նաև բանակ: Հոգեգալստականների հետ շփվելով

զգում ես, թե ինչպիսի հեռահար նպատակներ ունեն նրանց քարոզիչները: Անգամ այն գաղափարը, որ դրախտի դռները նեղ են և չպիտի մեղքեր գործես, որ կարողանաս ներս մտնել, առանց ամաչելու նենգափոխել են. եթե զենք ես վերցրել, այդ նեղ դռնից արքայության դռներով չես կարող մտնել:

Հայաստան եկող քարոզիչները ոչ թե գալիս են հոգիների փրկության համար, մեր ժողովրդին այս ծանր վիճակում համամարդկային գաղափարներ ներշնչելու, այլ ենթարկելի, կառավարելի մի հոտ դարձնելու համար:

Ուրիշ վտանգ էլ կա: Հայաստանի ծանր վիճակից ելնելով՝ մարդիկ ընկնում են մոլորության մեջ, մի մասն էլ վախկոտությունից են դառնում աղանդավորներ, որ զենք չկրեն:

Հոգեգալստականները ներքին խիստ կազմակերպվածություն ունեցող աղանդավորներ են, և զենք չկրելու ու քարոզչություն անելու համար պիտի պատժվեն:

Երևանում միացնում էի ձայնագրիչս, լսում Վարդանին, լսում Մեծշենում ձայնագրած երգը.

Զարգեք, զարգեք, Մանվելի քաջեր,
Կռվել դուք գիտեք, ինչպես հերոսներ,
Կռվել դուք գիտեք, ինչպես հերոսներ...

— Մենք հակադիր բևեռների ժողովուրդ ենք, և եթե մի կողմից կարելի էր հանդիպել աղանդավորներին, որոնց համար այլևս, դժբախտաբար, գոյություն չունեն ազգ, հայրենիք հասկացությունները, մյուս կողմից կարելի էր մեր ազգային ջերմեռանդության դրսևորումների հանդիպել, երբ հոգնատանջ մեր զինվորները, գյուղն ազատագրելուց հետո, կարգի էին բերում կիսավեր եկեղեցիները: Մաղավուզի եկեղեցին նորոգվեց Թալիշի ազատագրումից առաջ, երբ ոչ ոք չէր կարող ասել՝ վաղը ինքը կենդանի կմնա, թե՝ ոչ: Մաղավուզի ազատագրումից հետո 20–30 կիլոմետր զենք ու զինամթերքով ծանրաբեռնված տղաները անցան Արեգասարով, հսկայական աղեղով մտան Մատաղիս և հանգստանալու փոխարեն կարգի բերեցին գյուղի եկեղեցին, հնձեցին խոտն ու մացառները՝ մտածելով, որ մեր ժողովրդին վայել չէ, որ իր եկեղեցին այդպիսի վիճակում մնա: Եկեղեցիների նորոգումից բացի, մեր բրիգադում յուրաքանչյուր զոհվածի հիշատակի համար մտահոգություն կար: Եթե, դժբախտաբար, Հայաստանում այսօր մեր զոհված հերոսներից շատերի շիրմաքարերն անգամ կարգին վիճակում չեն, մեզ մոտ, երբ ընդհատվում էին մարտական գործողությունները, յուրաքանչյուր ճակատամարտի տեղում, յուրաքանչյուր նվիրական դարձած նահատակի համար խաչքար, հուշարձան էր պատրաստվում և, փաստորեն, Մաղավուզից մինչև Թալիշի բարձունքները, մինչև Միրբաշիրի շրջան ձգվող լեռնաշղթայում բարձրացել են խաչքարեր՝ քարե էջեր դարձած, որոնք թերթելով կարելի է ամբողջ մարտական գործողությունների ընթացքը կարդալ՝ Մաղավուզում զոհված տանկիստներից մինչև Մատաղիսի վերին լեռնաշղթայում գործողությունների ճգնաժամային պահին զոհված Մեխակ Մեխակյանը...

...Մաղավուզի եկեղեցու մոտ Մանվելի տղաները խաչքար էին կանգնեցրել իրենց զոհված ընկերների հիշատակին: Մաղավուզի եկեղեցին մաքուր, զարդարված էր այնքան, որքան որ դա կարող էին անել հայ զինվորի ձեռքերը: Մաղավուզի եկեղեցու շեմին տղաների ձեռքով կերտած խաչքարեր են՝ «Վանքին՝ 45–ից», «Վանքին՝ Ջերմուկի ջոկատից»... Վանքին... Վանքին: Հանկարծ քարանում եմ՝ փոքրիկ սև խաչքարի գրությունը նկատելով. «Վանքին՝ Մեխակից»...

Մեխակ Մեխակյանը Էջմիածնի շրջանի Արագած գյուղից էր: Պատմության ուսուցիչ: 1989–ից Մանվել Գրիգորյանի բրիգադում էր: Բառիս ամենալայն, ամենաճշգրիտ իմաստով՝ մտավորական: Անցյալ տարի, օգոստոսյան մի տապ օր, նա ինձ ու ամերիկացի լրագրողուհի Անուշ Տեր–Թալյանին տարավ դիրքեր:

— Տեսնում ես էս խրամատները,— խոտերով ծածկված ու հազիվ երևացող խորդուբորդները ցուց տալով ասաց նա,— Նժդեհի դիրքերն էին:— Իսկ այն գիծը տեսնում ես,— սարերի հեռվում փայլող ժապավենը մատնացույց արեց Մեխակը,— Իրանի սահմանն է՝ քսան կիլոմետր է ընդամենը...

Այս տարվա ապրիլին Թալիշի օպերացիայի հրամանատար Մեխակ Մեխակյանը Թալիշի օպերացիայի ժամանակ զոհվեց...

...Ինչի մասին որ խոսում էինք Վարդանի հետ, ինչ էլ որ հիշում էր այս երկու տարվա ընթացքում Ղարաբաղում մեր տեսածից՝ վերջում դառնում էինք մեր զրույցի առանցքին՝ զորավար Մանվել Գրիգորյանի կերպարին:

— Գիտե՞ս՝ պատմությունը հետաքրքիր է նրանով, որ իր էջերում ընթացքի միայն արդյունքն է հիշատակում: Թե ժողովուրդներն այդ արդյունքին ինչ գնով են հասնում, սերունդները չգիտեն:

1918–1920 թվականների Հայաստանի Հանրապետության մասին խոսելիս մենք չենք հիշում, թե այդ տարիներին ցրտից, սովից, համաճարակներից քանի մարդ մահացավ: Մենք ասում էինք միայն, որ պետականություն էին ստեղծել այդ տարիներին: Եթե Աստված տա ու ամեն ինչ հաջող լինի, չեն հիշվելու մեր այսօրվա կյանքի դժվարությունները, մեր այսօրվա դժգոհությունները: Մեր սերունդները հպարտությամբ ասելու են, որ այս ընթացքում մենք բանակ ենք ստեղծել, վերականգնել մեր խորհրդանիշները... Պետություն ենք ստեղծել: Տառապանքը, դժվարությունները չեն հիշատակվելու...

Հիշենք Դրոյին ու գեներալ Նազարբեկովին: Վերջինս ցարական բանակի դասական գեներալներից մեկն էր՝ զինվորական դասական կրթություն ստացած, հայտնի՝ զինվորների հետ իր մարդկային վերաբերմունքով... Դրոն ավելի կոպիտ զինվորական էր: Բայց այսօր մեր պատմության մեջ Դրոն հիշվում է որպես մի զինվորական, որը երբեք մեր հայրենիքի ոչ մի տարածք չհանձնեց: Գեներալ Նազարբեկովն էլ մնաց պատմության մեջ՝ իբրև մի պատկառելի գեներալ, որը հեծեծալով նայում էր, թե ինչպես է հայկական բանակը հանձնում Ալեքսանդրապոլը...

Ես գիտեմ, թե իմ խոսքերը ինչպես կմեկնաբանվեն ի վերջո... Մանվել Գրիգորյանի մոտ երեք ամսվա փոխարեն ես վեց ամիս մնացի և կարող էի ամենաէժան շահարկումների առարկա դարձնել այս հանգամանքը և փորձել դրա հիման վրա հեղինակություն ձեռք բերել: Ես համոզված եմ, որ բոլոր այդպիսի հեղինակությունները, թվացյալ հաղթանակները վերջնական արդյունքում վերածվում են ազգային պարտության: Այնպես որ, պետք է ճշմարտությունն ասել: Երբ ինձ մայիսին խնդրեցին նույն հարցերի շուրջ խոսել, ես հրաժարվեցի: Ես դեռ չէի զորացրվել ու երկու–երեք օրով էի եկել Հայաստան:

Եթե այն ժամանակ այս նույն բաները ասեի, կարող էր որպես երեսպաշտություն գնահատվել...

Այսօր ես բանակի հետ որևէ կապ չունեմ և, եթե Աստված տա, խաղաղություն լինի, որևէ կապ չեմ ունենա: Հայագիտությունն ու ռազմական գործը որևէ ընդհանուր եզր չունեն, և իմ խոսքերը, կարծում եմ, որպես ականատեսի խոսքեր կընկալվեն՝ առանց որևէ երեսպաշտության, որովհետև դրա համար որևէ ակնկալիք պիտի ունենաս, իսկ ես Մանվել Գրիգորյանից, բանակից որևէ անձնական ակնկալիք չունեմ...

Այսպես ավարտվեց Վարդանի հետ Երևանում կայացած մեր զրույցը: Ես բոլորովին նպատակ չունեի մրցել հերյուրանքներ տարածելու մեջ փորձ և հմտություն ունեցողների հետ, հատկապես նրանց, ովքեր մեր դժվարին պատմության մեջ որոշակի դեր խաղացող անհատներին իրենց թիրախն են դարձրել այսօր: Հայտնի է նրանց դերը պատմության մեջ: Մեր նպատակը Ղարաբաղյան պատերազմի զինվոր՝ մեր ժամանակակցի խոսքերը գրի առնելն էր:

Այսքանը միայն:

ԱԼՎԱՐԴ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 1994 թ.,
10-ը սեպտեմբերի, թիվ 175

ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

ԱՅՍ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉԻ ՇՔԱՆՇԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

(30 դեկտեմբերի, 1996 թ.)

Վարդանի մասին չեմ կարող իմ խոսքը չասել: Վարդանը մեր մտավորականության, գրական աշխարհի ամենախելոք ներկայացուցիչներից մեկն է: Ես մի դեպք պիտի պատմեմ. ամբողջ տարուց ավել ինքը գտնվում էր Հինգերորդ բրիգադայի հետ՝ պայմանագրայինների, և մեկ օր նույնիսկ լուր եկավ, որ Վարդանը զոհվել է, փառք Աստծո, դա ճիշտ չէր:

Վարդանի հայրը էն ժամանակ նաև մեր գրական ավագներից էր, շատ լավ գրող, ու ինքը մինչ այդ չէր ասել, որ Վարդանը ծառայում է պայմանագրայինների հետ: Ես գիտեի արդեն, ես հանդիպել էի էնտեղ: Եվ անընդհատ Գրիգորյան Մանվելը բողոքում էր, թե Վարդանին ինչքան առաջին գծից հետ ենք ուղարկում, էնքան հայտնվում է առաջին գծում: Եվ մի կերպ իրեն դրանից հետո, էդ «զոհվելու» լուրից հետո հետ բերեցինք:

Սկսվեց առաջին եռամսյա հավաքը: Առաջին եռամսյակայիններին Հինգերորդ բրիգադայի տարածքում, ԴՕՍԱԱՖ-ի դիմաց հավաքել էինք, փախչողները շատ են. ես կանգնած խոսք եմ ասում, ու կրկին, շարքի ծայրում կանգնած է նորից Վարդանը: Ընդամենը տասը օր առաջ էր հետ եկել:

Վարդանը այն մարդն էր, որ ինչքան ֆրոնտից հետ քշեցինք, ինքը էնքան հայտնվեց ֆրոնտի առաջին գծում, ու շատ լավ է գրում մեր ֆրոնտի մասին, զորքերի մասին: Իսկապես, մտավորականի հերոսական կերպար ասելով՝ ես ի նկատի ունեմ Վարդանին:

Վարդան ջան, իրոք, շնորհավորում եմ:

ԵՎ ՆՈՐԻՑ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՆ Է

Մեծ խորհուրդ կա այն իրողությունում, որ Երկրապահի օրը նշվում է Շուշիի ազատագրման օրը:

Շուշին մեր բոլոր հաղթանակների բարձրակետն է, մեր հաղթանակների բարձունքը:

Շուշին, սակայն, ոչ միայն մեր հաղթանակների, այլև պարտությունների սկիզբն էր: Մեր երջանկահիշատակ Սպարապետը՝ մեր անկրկնելի Վազգենը, սիրում էր ասել, որ հաղթանակները բազում տերեր են ունենում, իսկ պարտությունները տեր չեն ունենում, պարտությունները որբերի նման անտեր են:

Եվ երկրապահներին էր վիճակված տեր կանգնել մեր պարտություններին և տիրոջ իրավունքով քշել նրանց մեր երկրից:

Երկրապահ հասկացությունը լավագույնս բնորոշվում է «Երկրապահ կամավորականների միություն» անվանմամբ: Երկրապահի առաջին բնորոշ հատկանիշը կամավոր լինելն է: Կամավորները չեն զորակոչվում, կամավորները կամավոր են գալիս: Կամավորները նաև չեն զորացրվում, զինադադարից հետո էլ Հայրենիքին նրանք նայում են այն հայացքով, ինչ հայացքով որ նայել են դիրքային հերթապահության ժամանակ:

Երկրապահ հասկացությունը ծնվեց այն ժամանակ, երբ սկսեցին դիրքերի վերածվել Արցախի և Հայաստանի Հանրապետության սահմանները և պարզվեց, որ ինչպես ամեն բան ունի իր գինը, այնպես էլ իր գինը ունի և Ազատ ու Անկախ Հայրենիք ունենալը և այդ Հայրենիքում ապրելը:

Երկրապահ հասկացությունը կարող էր և չլինել, եթե մենք մինչ այդ ունենայինք բանակ: Եվ երկրապահը եկավ իրենով լցնելու այն ժամանակահատվածը, որը հարկավոր էր Հայկական բանակի՝ ՀՀ Զինված ուժերի ստեղծման համար: Եվ երկրապահի պատմությու-

նը մեր բոլոր կամավորական առաջին ջոկատների պատմությունն է: Այն նաև պատմությունն է ինքնապաշտպանական առաջին մարտերի, ինչպես նաև որսորդական հրացան, կարաբին ու Կալաշնիկովի ավտոմատ վերցնելու ու բռնելու պատմությունն է:

Երկրապահի պատմությունը չհամակերպվողների պատմությունն է, ովքեր չհամակերպվեցին մեր ժողովրդին պարտադրվելիք որոշումներին:

Երկրապահը Հայոց պատմության այն եզակի հասկացություններից է, որը ստեղծվեց ոչ թե ուշացած, այլ ճիշտ ժամանակին և անգամ ժամանակից մի քիչ շուտ, շնորհիվ որի մենք մեր նոր և հավաքական Սարդարապատը այս անգամ չտվեցինք Արարատյան դաշտում ու Երևանի մատույցներում, այլ մեր երկիրը հասցրեցինք պաշտպանել, պահել մեր երկրի սահմաններում: Այս իրողությունը գալիս է արդարացնելու Երկրապահին տրված երկրապահ անվանումը:

Երկրապահ բառը պատվի և պատասխանատվության բացառիկ զգացում է առաջացնում:

Երկիրը պահողը լինելուց մեծ պատիվ և պատասխանատվություն չկա, երբ պատերազմի ժամանակ հեռվից քեզ են հառնված քեզ չճանաչող բազմահազարների հայացքները, հույսերն ու սպասումները, և ինքդ էլ այն պատասխանատվությամբ, որը քեզ կամավոր բերել է ռազմաճակատ, նույն այդ պատասխանատվությամբ քեզ պատասխանատու ես զգում ռազմաճակատի գծում, ուր առջևում հակառակորդն է, իսկ թիկունքում՝ մեր ժողովուրդը:

Երկրապահ լինելը պատիվ և պատասխանատվություն է նաև այսօր, երբ ոչ պատերազմ է, և ոչ խաղաղություն, երբ հակառակորդի դավադիր գնդակները ավելի նենգ են խոցում, քան դիրքերի վրա տեղացող կրակը:

Այսօր ապրել երկրապահ լինելու գիտակցությամբ, նշանակում է ապրել երկրի պատերազմի ու խաղաղության հոգսով:

Երկրապահ բառը թե՛ շարժման սկզբում և թե՛ այսօր անսովորության մի զգացում է առաջ բերում: Այն ժամանակ անսովոր էր ինքնին զենքի, ինքնապաշտպանության գաղափարը: Այսօրվա նյութականության, քաղաքական կարիերիզմի և երկիրը թողնելու տխուր իրականությունում, դժբախտաբար, սկսել է ինքնին անսովոր դառնալ երկիրը պահելու գաղափարը, և այդ գաղափարի դրոշակակիրներից մեկը լինելու պատիվը երկրապահին է վիճակված: Եվ այսօր ևս հաղթել երկրաքանդության մտայնությանը ու հոգեբանությանը պակաս դժվար չէ, ինչքան այն ժամանակ ռազմաճակատում:

Երկրապահը կենդանի հիշեցումն է Հայրենիքը՝ մեր երկիրը պահելու գաղափարի ու հրամայականի:

Նայելով այս դահլիճում հավաքված մեր մարտական ընկերների դեմքերին, մտքիդ մեջ ակամա գծագրվում է 1988–ի փետրվարից մինչև 1994 թ. մայիս ձգվող պատերազմական իրադարձությունների ժամանակագրությունը:

Մեր ընկերներից յուրաքանչյուրի հայացքը մի պատառիկ է պահել այս կամ այն մարտական գործողությունից, արկերի բեկորներից, սլացած գնդակներից և դարանակալ ականների պայթյուններից: Ամեն մի հայացք, ասես, դեռ կրում է դիրքերը պահելու և դիրքերից առաջ գնալու հոգնությունը:

Մեր երկրի պաշտպանությանը իր բաժինը բերած ամեն մի երկրապահի և, ընդհանրապես, հայրենիքի զինվորի հայացքի այդ հոգնությունը և լարվածությունը չի ցրվում, որովհետև շուտով քսան տարին բոլորող այս զինադադարը ավելի շատ հարաբերվում է պատերազմի, քան թե խաղաղության հետ:

Զինադադարը քանի դեռ չի շրջվել դեպի խաղաղությունը, մեզնից յուրաքանչյուրը կիսով չափ կամ մտովին դեռևս դիրքերում է լինելու:

Ավետարանում ասվում է. «Որտեղ ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սիրտն է»: Այսօր մեր գանձը դիրքերում գտնվող մեր զինվորներն են, և մի փոքր վերախմբագրելով Վիլյամ Սարոյանի խոսքերը՝ կարող ենք ասել. «Մեր սրտերը լեռներում են»: Եվ մեր սրտերը մեզ պետք է թելադրեն շարունակական կապի մեջ լինել մեր դիրքերի և սահմանամերձ շրջանների ժողովրդի հետ՝ ամենատարբեր միջոցառումների և ծրագրերի իրականացմամբ:

Այսօր թե՛ այս հարցերով և թե՛ պատերազմում զոհված, անհայտ կորած մեր ընկերների ընտանիքների, հաշմանդամ դարձած, ինչպես նաև սոցիալական ամենատարբեր խնդիրներ ունեցող ազա-

տամարտիկների հոգսերով զբաղվում է Երկրապահ կամավորականների միությունը՝ գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Մանվել Գրիգորյանի գլխավորությամբ, կատարելով հնարավոր առավելագույնը:

Սոցիալական խնդիրների կողքին զինադադարից քսան տարի անց առաջնային հարցերից մեկն է մնում պատերազմի մասնակիցների ինտեգրման հարցը: Այս առումով անընդունելի է «արտոնությունների սահմանում» արտահայտությունը, որովհետև պարտքի փոխհատուցումը արտոնություն չէ:

Նրանք, ովքեր մինչև հայկական բանակի կազմավորումը և կազմավորումից հետո էլ նրա կազմում մարտնչեցին մեր երկրի համար, այսօր անհավասար պայմաններում են նրանց հետ, ովքեր այդ տարիներին սկսեցին իրենց կարիերան, բիզնեսը կամ գնացին տարբեր երկրներում սովորելու: Ուստի, այսօր եթե օրենսդրորեն հնարավոր չէ, ապա գոնե որպես բարոյական պարտավորություն պետական հաստատություններում մի շարք աշխատանքներում, որտեղ հնարավոր է, գործի ընդունելիս նախընտրությունը պետք է տալ պատերազմի մասնակիցներին:

Բոլոր նրանք, ովքեր եղել են Արցախյան շարժման և մեր հայրենիքի պաշտպանության ակունքներում, անցնող ամեն տարում ժամանակային չորս հաշվարկներ են պահում. հունվարի 28-ին ասում են, որ Հայկական բանակը հասակ առավ ևս մեկ տարով, նույն ձևով մայիսը ևս մեկ տարի է գումարում հաստատված զինադադարին և, վերջապես, սեպտեմբերի 2-ին և 21-ին մեկական տարիներով ավելանում է Արցախի և Հայաստանի հանրապետությունների միացյալ տարեգրությունը:

Հաղորդակից անոթները թեև երկուսն են լինում, սակայն, այս չորս ժամանակային հաշվարկները, հաղորդակից անոթների նման, մի ամբողջություն են կազմում, և նրանցից յուրաքանչյուրում իր անուրանալի և մեծ դերն է ունեցել, ունի և ունենալու է Երկարապահ կամավորականների միությունը:

ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍՊԱՐԱՊԵ՛Տ

Այսօր Սպարապետի ծննդյան օրն է, ու ևս մեկ տարի անցավ, որ Վազգենը և՛ մեզ հետ է, և՛ մեզ հետ չէ:

Նա մեզ հետ չէ՝ որպես մեր երկրի այսօրվա պետական-քաղաքական կյանքի անմիջական ղեկավարներից մեկը, սակայն դժվարին ու խռովահույզ մեր օրերում մեզ հետ է՝ մեր մտածումներում և ճիշտ վճիռներ ընդունելու պահերին:

Այսօր, երբ այնքան մեծ է ժողովրդի աչքին ընդդիմադիր երևալու ու որևէ անվտանգ հարթակում և հրապարակում հերոսանալու ցանկությունն ու գայթակղությունը, և մյուս կողմից էլ առկա է ամոթալի համակերպման և մեր երկրին սպառնացող ներքին քայքայման դեմ պայքարելուց դասալիք դառնալու վտանգը, Դու կենդանիորեն ներկա ես մեր կյանքում, Սպարապետ: Մտովի ամեն անգամ մենք Քեզ և Եռաբլուրում հանգչող մեր ընկերներին ենք դիմում՝ կողմնորոշվելու մի կողմից պետական անվտանգության և երկրի կայունության, և մյուս կողմից ժողովրդին տանջող խնդիրների իրար միահյուսված բարդ հանգույցը ճիշտ հանգուցալուծելու հարցում: Նույն ձևով Դու էիր ժամանակին դեմ հանդիման գտնվում մի կողմից պատերազմական ճամփաներով անցած քո ընկերների ու մեր զինվորների և նրանց ընտանիքների հոգսերի ու սոցիալական արդարության մարդկային պահանջների և մյուս կողմից՝ մեր ազգային-պետական գլխավոր հիմնախնդրի՝ Հայաստանի և Լեռնային Արցախի հանրապետությունների անվտանգության և հզոր ու մարտունակ բանակ ունենալու հրամայական անհրաժեշտության միջև:

Դու շարունակ շեշտում էիր, որ հերոսական պարտությունների պատմությունը իրական հաղթանակներով փոխարինելու ժամանակն է եկել, և որ մեծ հաղթանակները ծնվում են փոքր քայլերից: Այս

պատճառով էր, որ երբ 1988–ին պոռթկացին ու հորդացին ազգային մեր բանտված զգացումները՝ իրենց հորձանքի մեջ առնելով Հայաշխարհի բոլոր պատմական կորուստները, Երասխավանից մինչև 1994–ի մայիսյան զինադադարը, Քո զինակիցների հետ Դու ընթացար իրական հնարավորը հետ բերելու դժվարին ճանապարհով:

Մարդկային կյանքն ունի սկիզբ և վախճան: Վախճանման օրը խոնարհվում ենք հեռացողի հիշատակի առջև, իսկ ծննդյան օրը՝ հիշում նրա կատարած գործերը, ասես զգում նրա կենդանի ներկայությունը մեր կյանքում: Սպարապետի դեպքում, սակայն, կորստյան կսկիծն իսկ թույլ չի տալիս խոնարհվելու Վազգենի հիշատակի առջև, որովհետև նա կենդանիորեն ներկա է մեր կյանքում: Ո՛չ նրա ժպիտն ու վճռական և հատու կեցվածքն են ջնջվել մեր հիշողությունից և ո՛չ էլ որքան խիստ, նույնքան էլ հոգատար ու կենսախինդ ձայնը:

Սպարապետի կենդանի ներկայությունը Հայկական բանակի հրամանատարական անձնակազմի միջոցով փոխանցվում է մեր զինվորներին: Վազգենն այսօր մեր զինվորներին է նայում զորամասերի իր նկարներից ու դիմաքանդակներից, իր հոգածու ժպիտով ուղեկցում զորամասից մինչև դիրքային հերթապահություն ձգվող ճանապարհին:

Հոկտեմբերի 27–ի կորստյան ցավը մեր սրտերում՝ ամեն տարվա բացվող գարնանը՝ մարտի հինգին, Քո բազմահազար ընկերները, ովքեր Քեզ հետ անցել են ազատության և տառապանքի ճամփաներով, անկախ նրանից՝ թե որտեղ են այսօր՝ դիրքային հերթապահությունն ու զինվորական ծառայությունն են շարունակում, տարբեր բնագավառներում են աշխատում, կյանքի մեր իրողություններից դառնացած՝ հեռացել են իրենց իսկ պաշտպանած հայրենիքից և կամ էլ պատերազմից հետո իրենց տեղը չգտնելով իրենց խորտակված կյանքերի գնով պահված Հայրենիքում՝ այսօր գտնվում են տարբեր ուղղիչ հաստատություններում, բոլորով առանձնաբար և իրար միացնող անտեսանելի հավաքականությամբ, մի պահ վեր կանգնելով առօրյա կյանքից, լինի Եռաբլուրում՝ Քո շիրմի առջև, զինծառայության վայրերում, օտար երկրներում թե այլուր, մի պահ ձգվում են Քո կենդանի ներկայության առջև և ասում.

— Ծունդդ շնորհավո՛ր, Սպարապե՛տ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ 5
ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ 11
ԱՐՑԱԽԸ ՊԱՇՏՊԱՆԱՇ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ
ԵՎ ՀՀ ԶԻՆՎԱՇ ՈՒԺԵՐԸ 15
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ 21
ԱՌԱՋԻՆ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՏԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՄԲ 25
ԱՐՑԱԽԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՑԱՆԸ 29
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ 34
ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 39
«ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՋՈՒՐԸ» 42
ԱՐՑԱԽԻ «ՏԱՏԻԿՆ ՈՒ ՊԱՊԻԿԸ» 46
ԹԻԿՈՒՆՔ ԵՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ 50
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 54
ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՐՕՐՅԱ ԳԱՐԻԲԱԼԴԻԱԿԱՆՆԵՐԸ 58
ԳԱՆՁԱՍԱՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԴԱՎԱՌՆԵՐԸ 62
ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՉՏԵՍԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ 67
ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍԵՐՆԴԻՆ 71
ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ 75
ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՆՑ 80
ՔՍԱՆԱՄՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ 90
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ 97
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽՆ ԱՆՆԿՈՒՆ Է 110
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՀՈԳՍԵՐԸ 117
ԱՐՑԱԽՅԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ 121
ԿՅԱՆՔԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ 128
ԱՐՑԱԽՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 136
ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 143
ԵՐԱՍԽԱՎԱՆԻՑ ԵՌԱԲԼՈՒՐ 156
ՄԵՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԸ 160
ԱՐՑԱԽԸ ԾՆԿԻ ՉԻ ԳԱ 164
ԱՐՑԱԽԻ ԱՐՑՈՒՆՈՏ ԳԱՐՈՒՆԸ 170
1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 170
2. ՄԱՐՏՈՒՆԻ, ՀԱԴՐՈՒԹ 176
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ 182
ԲԱՑՎՈՂ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ 188
ԱՌԱՋԻՆ ԳԾԻՑ ԱՌԱՋ 194
ՈՐ ՀԱՍՑՆԵՄ «ԵՐԿԻՐ» 198
ԹԱՐԹԱՌԸ ՓՈԽԵԼ ԷՐ ՀՈՒՆԸ 201
ՎԱՐԴԱՎԱՌԸ ԱՐՑԱԽՈՒՄ 205
ՌՈՒՄԲԵՐԻ ՏԱԿ 208
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ 214
ԱՐՑԱԽԻ ԵՌԱԳՈՒՅՆԸ 217
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 221
ՀԱՐԿԱՎՈՐ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ 227

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲԻՉ ԴԵՐՆ Է 233
ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ 239
ՄԱՐՏՈՒՆԻՆ ՄԻ ՔԻՉ ՇՈՒՆՉ ԿՔԱՇԻ 243
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՔԱՀԱՆԱՆ 248
ՄԱՀՎԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ 253
ԱՌԱՋԻՆ ԳԾՈՒՄ ԳԱՆՁԱՍԱՐՆ Է 256
ԴԱՍ... «ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ» ԾՐԱԳՐԵՐՈՎ 260
ԵՂԵՎՆԻՆԵՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ 266
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ 271
ՆՈՐԻՑ ՉԼԴՐԱՆՈՒՄ 276
«ՊՈՍՏԵՐԸ ԴԵՌ ՊԱՀՈՒՄ ԵՆՔ» 281
ԳԵՏԱՇԵՆ ԲԱՆԱԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՇԵՆՔԸ 286
ԳՐՈՀ ԵՎ ԽՈՒՃԱՊ ԿԱՄ՝ ԹԱՆՁՐ ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ 292
«ԵՍ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՄ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԻՑ» 296
«ԲԵՐՔԸ ՀԱՎԱՔԵՆՔ, ԼՑՆԵՆՔ ԱՄԲԱՐԸ,
ՈՐ ՀԱՎԵՐԺ ԱՊՐԻ ՄԵՐ ՂԱՐԱԲԱՂԸ» 302
ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 305
ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՎԵՐԱԴԱՐՁ 309
ՎԵՐԱԴԱՐՁ. ՄԱՐՏԱԿԵՐՏԻՑ ՀԱԹԵՐՔ 314
ՄԱՐՏԱԿԵՐՏ. ՎԵՐԱԴԱՐՁ 318
ՀՈԳԵՍՊԱՆ ԱՐԿԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՑԱԽ 321
ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 326
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԹԵԼԱԴՐԱՇ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ 332
ՄՈՄ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏ 337
ԱՐՑԱԽՅԱՆ ԿԱՄՔՈՎ 345
«ՄԻ ԱՄԲՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՉՈՒՄ Է, ԻՍԿ ՄԵՆՔ...» 349
ՑԱՍՈՒՄՈՎ ԵՎ ՍՐԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ 354
ԱՊՐԵԼ ՀԱՂԹԵԼՈՎ 356
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ 362
ՊԱԼԿՈՎՆԻԿԸ 367
ԵԿԵՂԵՑԻՆ, ՋԻՆՎՈՐՆԵՐԸ, ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ 371

ՆՐԱՆՔ ՉՏԵՍԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 376
ԱՐՑԱԽԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԷՐ 384
ԱՐՑԱԽԻ ԵՐԿԻՆՔՆ ԱՉՔԵՐՈՒՄ 387
ՆՐԱ ՍԻՐՏԸ ՄՆԱՑ ՄՌԱՎԻ ՓԵՇԵՐԻՆ 390
ՄՈՆԹԵՆ 395
ՆՈՐԻԿԸ ԵՎ ԻՐԵՆՑ ԳՑՈՒՂԸ 399
ՄԵԽԱԿԸ 402

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ 410
«ԻՆՉՔԱՆ ՈՒՋՈՒՄ ԵՆ ԹՈՂ ԽՈՍԵՆ, ՄԻԱՅՆ ԹԵ ՎՐԱՍ ՉԼԱՅԵՆ» 411
ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ 422
ԵՎ ՆՈՐԻՑ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՆ Է 423
ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍՊԱՐԱՊԵՏ 427

Վարդան Գևորգի Դևրիկյան

ՉՍԿՍՎԱԾ ԵՎ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկրորդ՝ լրացված հրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Է. Ս. Մկրտչյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 27 տպ. մամուլ:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am



Ախր ձաք է տալիս սրբատունս...
Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

9 789939 682747

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ